[illegible]

ՀԱՅԵՐԵՆ
[illegible]

ՀԱՏՈՐ

Բ

19 - ԵՐԵՎԱՆ - 64

ՀԱՅԵՐԵՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

13

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

ВАРАГ АРАКЕЛЯН

СИНТАКСИС АРМЯНСКОГО ЯЗЫКА

Том II

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1964

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Հատոր II

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1964

«Հայերենի շարահյուսության» երկրորդ հատորը նվիրված է հայերենի միակազմ պարզ նախադասության և բարդ նախադասության ուսումնասիրությանը: Ինչպես նախորդ, այնպես էլ այս հատորը կազմված է արևելահայ գրական լեզվի բոլոր շրջաններից քաղված փաստական հարուստ նյութի հիման վրա:

Այս հատորով ավարտվում է հայերենի շարահյուսության, հատկապես նախադասության շարահյուսության դասընթացը: Այստեղ քննված են նաև ուրիշի խոսքը, կոչականը, միջանկյալ և ներդրյալ բառերը, բառակապակցություններն ու նախադասությունները, թերի նախադասությունը, որոնք սերտորեն առնչվում են նախադասության ընդհանուր տեսությանը:

«ՀԱՅԵՐԵՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Ա. Ա. Մուրվալյան, *Հայոց լեզվի բառային կազմը (1955)*

Ա. Ա. Մուրվալյան, *Հայոց լեզվի դարձվածաբանություն և բառակազմություն (1959)*

Ս. Գ. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը (1959)*

Հ. Զ. Պետրոսյան, *Գոյականի առումները հայերենում (1960)*

Ն. Ա. Պառնասյան, *Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում (1961)*

Ս. Գ. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր (1962)*

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այժմյան ըմբռնումով քերականությունը բաժանվում է երկու մասի՝ ձևաբանության և շարահյուսության, ըստ որում քերականության ուսումնասիրության ոլորտից դուրս են մնում հնչյունաբանությունն ու բառագիտությունը, առանց որոնց անկարելի է որևէ առանձին լեզվի իրողությունների ամբողջական ուսումնասիրությունը: Կամ հիշյալ երկու բաժինները պետք է ուսումնասիրվեն մի որևէ անվան տակ և կամ պետք է առնվեն քերականության մեջ իբրև առանձին բաժիններ, ինչպես դրանք եղել են քերականության սկզբնավորման օրից:

Ժամանակակից քերականությունները ինչքան էլ ձգտում են հիմնավորել հնչյունաբանության ու բառագիտության մեկուսացումը քերականությունից՝ չի ստացվում: Մի շարք տեսական, բայց ոչ վճռական և այս կամ այն հարցում զիջող բացատրություններից հետո գործնականում այդ երկու բաժիններն էլ առնվում են քերականության մեջ իբրև նրա բաղկացուցիչ մասերը: Այս հարցի առթիվ բերենք վերջերս լույս տեսած երկու աշխատությունների մեջ արտահայտված կարծիքները:

Ռուսերենի ակադեմիական քերականության մեջ կարդում ենք. «Լեզվական միավորների ամբողջ հնչյունական կազմը, որն ուսումնասիրվում է և՛ բառագիտության, և՛ շարահյուսության, և՛ ձևաբանության մեջ, առանձին լեզվաբանական գիտակարգի (դիսցիպլինայի)՝ հնչյունաբանության առարկան է կազմում: Այդ բոլոր միավորների հիմնական բաղկացուցիչ մասը առանձին հընչյուններ են, որոնք միմյանց հետ սերտ կապված լինելով, նույնպես կազմում են մի միասնական համակարգ, բայց որոնք չեն ուսումնասիրվում ոչ շարահյուսության և ոչ էլ ձևաբանության մեջ»[1]:

---

[1] „Грамматика русского языка", т. I, М., 1953, стр. 13—14.

Հնչյունները լեզվական ձևի այն հիմնական բաղկացուցիչ տարրերն են, որոնցով ձևավորվում է բառը, խոսքը և առհասարակ քերականության ուսումնասիրության ամբողջ նյութը. ըստ այդմ հնչյունային օրենքները, այսինքն՝ փոփոխությունները, զարգացումը, ձևավորումը, ֆիզիկական ու ֆիզիոլոգիական հատկությունները չեն կարող չուսումնասիրվել որևէ առանձին լեզվի քերականության մեջ: Ի՞նչ է նշանակում լեզվաբանական դիսցիպլինա: Ընդհանուր լեզվաբանական դիսցիպլինա չի կարող լինել առանց առանձին լեզուների դիսցիպլինայի: Վերջապես առանձին լեզվի դպրոցական կամ գիտական քերականությունը այս դեպքում կապ չունի լեզվաբանության հետ, նրան հետաքրքրում են տվյալ առանձին լեզվի իրողությունները:

Տեսակետի այս ոչ բավարար փաստարկումը ժխտվում է արդեն գործնական նպատակադրումներով. սա ինքնըստինքյան հասկանալի է, որովհետև ակադեմիական քերականությունից հնչյունաբանությունը դուրս թողնել հնարավոր չէ: Վերջիվերջո քերականությունը որևէ լեզվի ներքին օրինաչափությունների ու այդ օրինաչափությունները դրսևորող ձևերի և նրանց կապակցման ուսմունքն է, իսկ հիշյալ ձևերը կազմվում են հնչյուններից կամ հենց իրենք հնչյուններն են: «Սակայն հնչյունաբանությունը ուսումնասիրելով լեզվի հնչյունական կառուցվածքը, առանձնապես սերտ կապված է քերականության հետ և սովորաբար քննվում է նրա կազմի մեջ իբրև առանձին բաժին»[1]:

Այս անորոշությունը նույնությամբ անցել է նաև մեր քերականությանը Այստեղ էլ հնչյունաբանությունը քերականությունից մեկուսացվում է մի և նույն նկատառումներով. «Ձևաբանությունը և շարահյուսությունը սովորաբար առնվում են իբրև լեզվական մի ինքնուրույն ամբողջություն՝ քերականություն անվան տակ: Վերջինս հաճախ իր մեջ է ընդգրկում նաև հնչյունաբանության ու բառագիտության որոշ տարրեր որպես լեզվական իրողությունների նախագիտելիք»[2]: Պարզ երևում է, որ հնչյունաբանությունը քերականությունից մեկուսացված ուսումնասիրելը անհնար է և՛ տեսական, և՛ գործնական նկատառումներով: Այդ նույնը պետք է ասել նաև բառագիտության մասին:

---

[1] „Грамматика русского языка", т. I, М., 1959, стр. 13—14.

[2] Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, Երևան, 1955, էջ 19։

Ձևաբանությունը ուսումնասիրում է խոսքի մասերը, սրանց յուրաքանչյուրի առանձնահատկություններն ու տարբերությունները միմյանցից, կրած փոփոխություններն ու այդ փոփոխությունները արտահայտող ձևերը, այսինքն՝ հոլովումն ու խոնարհումը և սրանց վերջավորությունները. ձևաբանության ուսումնասիրության ծիրի մեջ է մտնում նաև բառակազմությունը, որը լեզվի բառապաշարի հարստացման սեփական և հիմնական աղբյուրն է

Շարահյուսությունը խոսքի մասերի առանձին համակարգի բառեր լինելու և սրանց ներքին էության ու կրած փոփոխությունների, միմյանց հետ ունեցած առնչությունների ու տարբերությունների հարցով չի զբաղվում: Խոսքի մասերը այստեղ հիշատակվում են այնքանով, որքանով դրանցից յուրաքանչյուրը իբրև այս կամ այն համակարգի պատկանող բառ՝ նախադասության մեջ որևէ պաշտոն է կատարում: Բառերի այս կամ այն համակարգին պատկանելը շարահյուսության մեջ չէր հիշատակվի, եթե լեզվի բոլոր բառերը նախադասության մեջ համահավասար կերպով հանդես գային տարբեր պաշտոններով: Որքան էլ իբրև նախադասության անդամ որոշ խոսքի մասեր փոխարինեն իրենց պաշտոնները, այնուամենայնիվ ընդհանուր օրինաչափությունը այն է, որ նախադասության մեջ որոշ համակարգի բառեր հիմնականում կատարում են այս կամ այն պաշտոնը, և մի սահման կա, որից այն կողմ չեն անցնում. օրինակ՝ հայերենում մի շարք գոյականներ կարող են իբրև որոշիչ գործածվել, սակայն ամեն գոյական որոշիչ չի դառնում. բացահայտիչը կամ գոյական է, կամ այնպիսի խոսքի մաս, որ գոյականաբար է կիրառվում. կարող է պատահել, որ որևէ մակբայ հատուկ ձևափոխությամբ խնդրի պաշտոնով կիրառվի, սակայն մակբայների հիմնական պաշտոնը պարագա լինելն է: Ուրեմն շարահյուսության խոսքի մասերը հետաքրքրում են այնքանով, որքանով դրանք նախադասության մեջ հանդես են գալիս իրենց հատուկ այս կամ այն հիմնական պաշտոնով:

Շարահյուսությունը ուսումնասիրում է նաև բառակապակցությունը: Բառակապակցությունները երկու կամ ավելի բառերի այնպիսի միացություններ են, որոնք առանձին հասկացողություններ են և կապված են միմյանց հետ ոչ թե իմաստային սերտությամբ, այլ քերականական հարաբերությամբ: Եվ քանի

որ բառակապակցության առանձին անդամները միմյանց հետ միավորվում են քերականական առնչություններով, ուստի հեշտությամբ անդամազատվում են իբրև տարբեր նշանակության բառեր՝ չնայած որ դրանք կարող են նախադասության անդամ դառնալ իբրև միասնական ամբողջություն: Բառակապակցությունները կարող են ուսումնասիրվել և՛ նախադասության մեջ իբրև նրա կառուցվածքի այս կամ այն մասը, և՛ առանձին՝ իբրև քերականական այս կամ այն կարգի կապակցություն, որոնք ի վերջո խոսքի մեջ են մտնում նախադասության միջոցով: Բառակապակցությունների մեջ բառերից մեկը գլխավոր առանցքն է, որի շուրջը խմբավորվում են մյուս բառերը և սրանք իրենց առանցք հանդիսացող բառի նկատմամբ երբեմն արտահայտում են քերականական այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք գոյություն ունեն նախադասության մեջ: Բառակապակցության մեջ կախյալ բառը գլխավոր բառի նկատմամբ արտահայտում է որոշիչային հարաբերություն, ըստ որում կախյալ բառը կարող է լինել ածական, անորոշ և ցուցական դերանուն, թվական, գոյական և այլն, իսկ գլխավոր բառը լինում է գոյական կամ գոյականաբար արտահայտված որևէ բառ: Կախյալ բառը արտահայտում է հատկացուցիչային հարաբերություն, ըստ որում գլխավոր բառը գոյական է, իսկ առաջինը սեռական հոլովով գործածված որևէ բառ: Կախյալ բառը բառակապակցության մեջ հանդես է գալիս նաև խնդրի պաշտոնով, որտեղ գլխավոր բառը որևէ դերբայ է, իսկ կախյալը հայցական, տրական, բացառական, գործիական հոլովով կամ կապով որևէ գոյական, դերանուն, գոյականաբար գործածվող ուրիշ խոսքի մաս: Վերջապես բառակապակցության մեջ դրսևորվում են նաև պարագայական հարաբերություններ:

Քերականական այսպիսի կապը կոչվում է ստորադասական և կարող է հանդես գալ նաև նախադասության մեջ, բայց նախադասության մեջ սրա հետ միասին գոյություն ունեն նաև բացահայտչի ու բացահայտյալի կապակցում, համադասական կապի այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են ենթակայի և ստորոգյալի կապակցումն ու համաձայնությունը, բազմակի անդամների միավորումը և, վերջապես, տրոհվող լրացումներն ու հնչերանգը, որոնցից զուրկ է բառակապակցությունը:

Ուրեմն՝ շարահյուսությունը ուսումնասիրում է նաև բառակապակցությունները ըստ իրենց կապակցման ու դերի իբրև

բառակաճ բաղադրյալ միավորներ, որոնք նյութ են հանդիսանում նախադասության կառուցվածքի մեջ և երբեմն դառնում են նախադասության ամբողջական անդամներ:

Անցյալում արդեն հայերենի շարահյուսության հիմնական առարկան բառակապակցությունն էր, որ կոչվում էր համաձայնություն և խնդրառություն. Նախադասությունը նույնացվում էր բառակապակցության հետ, և այս նույնացման մեջ նախադասությունը իբրև շարահյուսության հիմնական առարկա անհետանում էր:

Ուրեմն՝ շարահյուսության առարկան ոչ թե բառերն են, նրանց ձևերն ու փոփոխությունները, այլ բառերի կապակցման միջոցներն ու հնարները բառակապակցությունների ու նախադասությունների մեջ և նրանց գործառնություններն ու բաղհյուսումը: Եթե խոսվում է նաև բառերի փոփոխությունների մասին, ապա այդ փոփոխությունները դիտվում են միմյանց հետ բաղհյուսվելու տեսանկյունից: Շարահյուսությունը միաժամանակ ուսումնասիրում է նաև նախադասության կառուցվածքը, տիպերը, գործառնությունները և միմյանց հետ կապակցվելու կանոններն ու օրինաչափությունները:

Այս հատորը նվիրված է միակազմ պարզ նախադասության և բարդ նախադասության շարահյուսությանը: Նույն երկրորդ և սրան նախորդող առաջին հատորներով հեղինակը նպատակադրվել էր շարադրել հայերենի շարահյուսության դասընթացն ամբողջապես, սակայն աշխատանքի ծավալն ընդարձակվելու պատճառով հնարավոր չեղավ ներառնել նաև բառակապակցության մասը, որով կամբողջանար հայերենի շարահյուսությունը: Չնայած այս պակասին, մեր աշխատանքը նախադասության ուսմունքն ընդգրկում է լրիվ և այդ կողմից գրեթե դառնում է ամբողջական:

Ամբողջական դասընթացի մեջ շարահյուսության բոլոր խնդրական հարցերը ընդարձակ ծավալով ու խորությամբ լուծելը շատ դժվար, նույնիսկ անկարելի է, երբ չկան այդ հարցերի վերաբերյալ մասնակի ուսումնասիրություններ: Այժմ լեզվի ինստիտուտը առանձին ուշադրություն է բևեռել շարահյուսության մասնակի երևույթների մենրակրկիտ ուսումնասիրությունների վրա, որոնց հրապարակումից հետո միայն հնարավոր կլինի լրացնել շարահյուսության ամբողջական դասընթացը, կատարելագործել և զերծել անխուսափելի թերություններից:

Մենք շարահյուսության մի առանձին բաժին ենք համարում պարբերույթը, որը վերաբերում է միաժամանակ ոճաքանությանը: Իբրև շարահյուսության առարկա այն յուրահատուկ տիպի նախադասություն է, որն ըստ կառուցվածքի տարբերվում է շարահյուսության մեջ ուսումնասիրվող նախադասությունների բոլոր տեսակներից: Այն կարող է լինել պարզ, բարդ նախադասություն, սակայն ո՛չ իր պարզությամբ և ո՛չ էլ բարդությամբ չի նմանվում սովորական նախադասություններին: Պարբերույթի և սովորական նախադասության տարբերությունները և՛ կառուցվածքային են, և՛ ոճաբանական ու սրանց հետ միաժամանակ հնչերանգային: Սույն աշխատության* հեղինակը ուսումնասիրել է նաև հայերենի պարբերույթը, որ առաջիկայում կհրապարակվի առանձին գրքով:

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ

** Օգտվելով առիթից՝ հեղինակը շնորհակալություն է հայտնում իր աշակերտ և մտերիմ բարեկամ Վրույր Ասլանյանին, որն ամենայն ուշադրությամբ ու սիրով կարգում է հեղինակի ձեռագիր աշխատանքները և նշում իր արժեքավոր դիտողությունները:*

VIII

ՄԻԱԿԱԶՄ ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Միակազմ պարզ նախադասությունները կազմված են միայն մի գլխավոր անդամից. այդ գլխավոր անդամը կարող է լինել բայ կամ մի այլ խոսքի մաս, որ միակազմ նախադասության մեջ կամ ստորոգյալի կամ ենթակայի դեր է կատարում: Միակազմ նախադասությունները չպետք է շփոթել զեղչված ենթակայով կամ զեղչված ստորոգյալով նախադասությունների հետ. զեղչումը կատարվում է ոճաբանական նկատառումներով, իսկ միակազմ նախադասությունը իր բնույթով, էությամբ ունի միայն մի գլխավոր անդամ: Այդպիսի նախադասության համար արհեստականորեն ենթակա կամ ստորոգյալ վերականգնելը նշանակում է անտես առնել և ուսումնասիրության ծիրից դուրս նետել տվյալ նախադասությունը իբրև լեզվի դարավոր զարգացման արդյունք, իբրև շարահյուսության ինքնուրույն միավոր, իբրև այնպիսի նախադասություն, որի առանձնահատկությունը միակազմ լինելն է, նշանակում է փոխել նրա էությունը, բնույթը և լեզվական որևէ իրողություն ուսումնասիրել մի այլ իրողության փոխարեն:

Միայն ստորոգյալ ունեցող միակազմ նախադասությունները հիմնականում գործողություն արտահայտող շարահյուսական այնպիսի միավորներ են, որոնք լեզվի մեջ հանդես են գալիս առանց գործողի՝ ենթակայի. օրինակ՝ Մեր աշխարհքում ղարիբից հացի փող չեն առնիլ (Թումանյան): Այս նախադասությունը ենթակա չունի և անկարելի է ու ոչ գիտական տվյալ նախադասության մեջ են-

թակա որոնել կամ արհեստականորեն ենթակա դնել. եթե այդպիսի փորձ անենք, նշանակում է, որ մենք ոչ թե տվյալ նախադասությունն ենք ուսումնասիրում, որը լեզվի այս շրջանում նախադասության մի առանձնահատուկ տեսակ է իր ինքնուրույն հատկանիշներով, այլ ջնջում ենք հիշյալ բոլոր հատկանիշները, որոնք դրսևորվում են նախադասության միակազմությամբ, անենթակայությամբ: Իբրև ցուցադրություն այս նախադասությունը բերենք ենթակայով. Մեր աշխարհքում մենք ղարիբից հացի փող չենք առնի. *արհեստականորեն փոխված այս օրինակը արդեն իբրև շարահյուսական միավոր հիմնովին տարբերվում է մյուսից. նախորդի մեջ կարևորը գործողությունն է, որը մի անձի կամ անձանց որևէ խմբի չի վերաբերում, այլ վերաբերում է բոլորին:* Մենք *ենթակայով արտահայտված նախադասության մեջ* մենք-*ը որոշակի ցույց է տալիս, թե ովքեր են դրանք.* մենք *ենթակայով առաջանում է հակադրություն* դուք-*ի և* նրանք-*ի միջև և այդ հակադրությունը տարածվում է նաև նախադասության երկրորդական անդամների վրա: Իսկ առանց ենթակայի արտահայտված վերոհիշյալ միակազմ նախադասությունը ժողովրդի դարավոր կենսափորձի, հազարավոր անգամ կրկնված դեպքերի ու երևույթների արդյունքն է, որ առանձնացել, ձևավորվել է իբրև ուրույն տեսակի շարահյուսական միավոր, ձեռք է բերել ձևական և իմաստային անկախություն և արտահայտվել է անորոշ-դիմավոր նախադասությամբ:*

Միակազմ նախադասությունները լինում են՝ բայական, անվանական *և* բառական *(այս վերջինը կոչվում է նաև բառ-նախադասություն):*

Բայական նախադասությունները իրենց հերթին բաժանվում են ենթատեսակների՝ անորոշ-դիմավոր, ընդհանրացնող-դիմավոր, անդեմ:

1. ԲԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ԱՆՈՐՈՇ-ԴԻՄԱՎՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Անորոշ-դիմավոր է կոչվում անենթակա այնպիսի նախադասությունը, որի ստորոգյալը արտահայտվում է բայի բոլոր եղանակների ու ժամանակների հոգնակի երրորդ դեմքով, բացի հրամայականից. չնայած տվյալ նախադասությունը ենթակա չունի,

բայց ստորոգյալի գործողությունը ցույց է տալիս, որ դա կատարվում է անորոշ անձերի կամ անձի կողմից: Ըստ ձևի գործողություն կատարող անորոշ անձերի մեջ առաջին և երկրորդ դեմքերի անձեր չպետք է լինեն, սակայն ըստ էության, իբրև անորոշ անձեր, ստորոգյալի գործողությունը սրանց ևս կարող է վերաբերել: Զննայած ստորոգյալը հոգնակի երրորդ դեմքով է կիրառվում, սակայն դա կարող է վերաբերել նաև մի անձի:

Անորոշ-դիմավոր նախադասություն կիրառվում է հատկապես այն դեպքում, երբ խոսողը կամենում է նշել միայն գործողությունը և ուշադրություն հրավիրել դրա վրա. գործողություն կատարողը տվյալ դեպքում կարևոր չէ. օրինակ՝ Ես փոքր էի, շատ փոքր, երբ առաջին անգամ մեր գյուղում ուսումնարան հիմնեցին (*ՊՊԵԺ*, III, *7*): Մինչև օրս էլ մի անհուն վախով ու պատկառանքով են խոսում այն անձնավորության մասին *(ԵՉԵ, 300)*:

Երբեմն խոսողը նույնիսկ մեկի կողմից և մի անգամ ասվածը անորոշ-դիմավոր նախադասությամբ է արտահայտում. այս դեպքում կամ չի կամենում ենթական հայտնի դարձնել և կամ մեկի կողմից և մի անգամ ասվածը ընդհանրացնում է իբրև արդեն տարածված, հայտնի գործողություն. այսպես՝ մեկի մասին լսելով որևէ բան միայն մի մարդուց, հայտնում ենք նրան, թե՝ գիտես՝ քո մասին այս տեսակ բան են ասում:

Հաճախ խոսողը չգիտե, թե ովքեր են գործողություն կատարողները, ուստի արտահայտվում է անորոշ դիմավոր նախադասությամբ. օրինակ՝ Ինչո՞ւ են փակել շիրմի դուռը. և հետո, ի՞նչ մտքով են դրել դրան վրա այնպիսի մեծ կողպեք *(Փափ., 244)*:

Երբեմն խոսողը կամ գրողը ենթական չի արտահայտում, որովհետև խոսքի ընթացքից հասկացվում է, թե ում է վերաբերում խոսքը, և հետո այդ ձևով դարձյալ ընդհանրացում է կատարվում. օրինակ՝ Հեքիաթի մասին ոչ միայն մեր «երջանիկ» աշխարհքում՝ ավելի լավ երկրներում էլ դեռ պարզ հասկացողություն չունեն: Կարծում են դա հեշտ ու հանաք բան է *(Թումանյան)*: *Թումանյանի խոսքը վերաբերում է գրողներին ու գիտնականներին, բայց չեն նշվում, որովհետև նախ՝ հասկանալի է, և երկրորդ՝ հեղինակը չի ցանկանում մասնավորել իր խոսքը, այլ արտահայտում է անորոշ-դիմավոր ձևով. համեմատիր նաև հետևյալ օրինակը.* բայց ինչո՞ւ էին լաց լինում մեր տանը *(Թ.,* III, *66)*:

Անորոշ-դիմավոր նախադասությունը չի սահմանափակվում որևէ ժամանակով կամ եղանակով․ նա կարող է կիրառվել բոլոր եղանակներով ու ժամանակներով, և ըստ այդմ ստորոգյալը հանդես է գալիս բոլոր ձևերով․ օրինակ՝ Իր երկրում մի այսպիսի անձին զուգե ժամերով սպասել կտային մի որևիցե իշխանի կամ հասարակ ազնվականի նախասենյակում *(ՐԵԺ,* V, *61)*։ Պատմում են նրա զարմանալի քաջագործությունները, նկարագրում են նրա անհռելի կերպարանքը *(Թ.,* III, *192)*։ Մեծ հանդեսներով, հաղթական ու ծաղկեպսակ կամարների տակով տարան Աղա Նազարին քյոշք ու սարայը *(ԱԻԵ, 337)*։ Բոլորիս ստիպում են մոխիր պաշտենք *(ՍԶՊԹ, 12)*։ Այստեղ անպայման խիստ կլինեն *(Նույն տեղում, 15)*։ *Ինչպես երևում է օրինակներից, անորոշ-դիմավոր նախադասությունը կարող է լինել թե՛ համառոտ և թե՛ ընդարձակ ու կարող է դառնալ բարդ նախադասության բաղադրիչներից մեկը։ Համեմատիր․* Մի՛ անիր մերձավորիդ այն, ինչ որ դու չես ուզում նույնը քեզ անեն *(ԱԻԵ, 34)*։

Երբեմն ինքը խոսողը փոխանակ առաջին դեմքով արտահայտելու իր միտքը, փոխում է հոգնակի երրորդ դեմքի, որով ասվածը դառնում է կտրուկ, անառարկելի, վերջնական․ օրինակ՝ —Վա՜ն, չկա, քեռի Խեչան, տերտերը գրել չի, չկա։ —Է դե ասում ես, էլի։ —Ի՞նչպես թե ասում ես, էլի․ քեզ ասում են չկա *(Թ.,* III, *85)*։ Քեզ հարցնում են տա՞նն է, թե չէ *(Թ.,* III, *40)*։

Հաճախ այսպիսի ստորոգյալների գործողություն կատարողները մտածվում են իբրև անթիվ անորոշ անձեր․ օրինակ՝ Սրան Թիֆլիս կասեն *(Թումանյան)*։ Սրան Ստամբոլ կասեն *(Փափ., 14)*։ *Իսկ հաճախ էլ գործողություն կատարողը գրողի կամ խոսողի համար մի անորոշ անձ է, որը տվյալ դեպքում կարևոր չէ, ուստի և չի նշվում․ գրողի և խոսողի համար այս դեպքում էականը գործողության անվանումն է․ օրինակ՝* ինչո՞ւ բերեցին այս թերթն այսօր ինձ, ինչո՞ւ հուզեցին հոգին իմ խաղաղ *(Կոմունի)*։ *Այս օրինակի մեջ գործածված ստորոգյալի գործողությունը կատարել է միայն մի անձ։ Համեմատիր նաև հետևյալ օրինակը։* Ոնց որ թե մարդի երեխեն թշնամու ձեռին քրքրելիս ըլեն *(Թ.,* III, *63)*։

Անորոշ-դիմավոր նախադասություններ շատ են գործածվում առածների, հեքիաթների, ավանդությունների մեջ, որոնք դարավոր մշակության խտացված ընդհանրացումներ են․ օրինակ՝ Հաբըստի հազին շոր տեսան, ասացին՝ շնորհավոր, աղքատի հազին որ տեսան, հարցրին՝ ո՞րտեղից է։ Տավարը կապով կկապեն,

մարդը՝ լեզվով[1] *(Առած., 5, 18)*։ Ասում են՝ ունին Աղջիկ էր ինձ պես *(Թումանյան)*։

Անորոշ-դիմավոր նախադասությունները ունեցել են նաև իրենց ենթական մարդ *կամ* մարդիկ *ձևերով, որոնք այս դեպքում կորցրել են իրենց իրացի նշանակությունը և ստացել անորոշ դերանվան նշանակություն. օրինակ՝* Մարդիկ ուրախ, թոն ու ձյունով ձի են խաղում, չափ տալի *(Թումանյան)*։ *Սա ոչնչով չէր տարբերվի, եթե բանաստեղծը նախադասությունը գործածեր առանց* մարդիկ *բառի, միայն այս վերջին դեպքում կունենայինք անորոշ-դիմավոր միակազմ նախադասություն, իսկ առաջին դեպքում նախադասությունը երկկազմ է, որ նույնպես պետք է համարվի անորոշ-դիմավոր նախադասություն։ Երկու նախադասությունների մեջ տարբերությունը միայն ձևական-քերականական է։*

Այդպիսի երկկազմ անորոշ-դիմավոր նախադասություն է մարդ *ենթակայով արտահայտված ձևը. օրինակ՝* Առանց մեծի հրամանի մարդ չի կարող մի քայլ անի *(Թումանյան, «Անբուն կկուն»)*։ Վ,եր կացեք, վեր, ամբողջ գիշերը մարդ է գնում ու գալի *(Նույնը, «Թմկաբերդի առումը»)*։ *Հոգնակի ենթակայով արտահայտված ձևի և այս վերջինի տարբերությունը դարձյալ ձևական է, միայն եզակին առանց ենթակայի բարբառային է. իսկ հոգնակիում կենդանի են երկկազմ և միակազմ ձևերը համահավասար (տե՛ս «Հայերենի շարահյուսություն», հ. I, 55)։ Սակայն երկկազմ ձևերի մեջ կա այն տարբերությունը նաև, որ երկկազմ ձևերը կարող են որոշակի դիմավոր լինել, իսկ միակազմ ձևերը միայն անորոշ են։*

Անորոշ-դիմավոր նախադասությունը եզակի երրորդ դեմքով, ինչպես ավելի վերևում, բարբառային է և կամ հազվադեպ. օրինակ՝ Ասում ա՝ խերն ու շառը ախպեր են: Ասում ա՝ երևել արեգ, կորնչեն աստեղք *(ՊՊԵԺ, II, 27, 28)*։ Զարկեց լոռուն, կպավ ջորուն *(Առած)*։

Անորոշ-դիմավոր նախադասության հետ սերտ առնչություն ունի ընդհանրացնող դիմավոր նախադասությունը։ Ըստ էության երկուսն էլ անենթակա նախադասություններ են, սակայն այս վերջինի մեջ առանձնապես ընդգծվում է ընդհանրացնող նշանակությունը։ Ընդհանրացնող դիմավոր նախադասությունը և նախորդը հատկապես տարբերվում են ստորոգյալի արտահայտման ձևով։

[1] *Առածները բերված են լեզվական որոշ փոփոխություններով։*

Բ. ԸՆԴՀԱՆՐԱՑՆՈՂ-ԴԻՄԱՎՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ընդհանրացնող-դիմավոր նախադասություն է կոչվում ենթակա չունեցող միակազմ այնպիսի նախադասությունը, որ սովորաբար արտահայտվում է եզակի երկրորդ դեմքով, և ստորոգյալը ցույց է տալիս ընդհանրացող այնպիսի գործողություն, որ հավասարապես վերաբերում է նաև մյուս դեմքերին. օրինակ՝ Թոնիրն ածես, մշաճոտ չի գա *(առած) բարդ նախադասության մեջ* թոնիրն ածես *նախադասության ստորոգյալն արտահայտված է եզակի երկրորդ դեմքով, բայց դա չի նշանակում, թե գործողությունը կատարում է երկրորդ դեմքի մի անձնավորություն, այդ գործողությունը վերաբերում է նաև թե՛ առաջին, թե՛ երրորդ դեմքերին համահավասար կերպով, այսինքն՝ ստորոգյալը իր իրացի նշանակությունից վերացել և ստացել է ընդհանրացնող նշանակություն, այդպիսի ստորոգյալի գործողությունը կարող է հավասարապես վերաբերել երեք դեմքին էլ. օրինակ՝* Ինչ որ ցանես, այն էլ կհնձես *նախադասությունը կարելի է բոլոր դեմքերով էլ արտահայտել.* ինչ որ ցանենք, այն էլ կհնձենք. մարդ ինչ որ ցանի, այն էլ կհնձի: *Բերված փոփոխակների մեջ իմաստային տարբերություն չկա, միայն ավանդաբար առաջին փոփոխակը (երկրորդ դեմքով) ավելի հաճախ է կիրառվում:*

Ընդհանրացնող-դիմավոր նախադասությունը արտահայտվում է նաև մյուս դեմքերով, բայց շատ ավելի ընդարձակ գործածություն ունի երկրորդ դեմքով արտահայտվածը, որի ստորոգյալը գերազանցապես կիրառվում է ըղձական եղանակով. մյուս եղանակները նույնպես չեն բացառվում. օրինակ՝ Մեկ էլ, ասենք, մտքումդ դրիր մի ձի առնես, քո բերքն ու մասիլը բարձես վրեն, տանես քո ձեռքովը սաղացնես, օգուտը ուրիշին չուտացնես: Մեկ էլ գիշերը պառկել ես, ողջ օրը եզի պես բանել, չարչարվել ես, վեր ես ընկել, ոտներդ ձգել, որ մի քիչ հանգստանաս, էգուց գիշերվանից աքլորականչին վեր կենաս մութ-մութ գնաս քո աշխատանքին: Մեկ էլ տեսար խանումդ եկավ... *(ՊՊԵԺ,* II, *33):* Հրաշք է, չես հասկանում, զարմանում ես միայն *(ՁԸԵ, 300):* Նայում ես և չես կարողանում որոշել ծեր է, թե երիտասարդ *(ԱԲԵ, 7):* Հայ գործիչին ինչ էլ անես, Լավ տեղ կտաս, պատիվ, թե սեր... *(Թումանյան, «Հայի տրտունջը»):*

Ընդհանրացնող-դիմավոր նախադասության ստորոգյալը կարող է արտահայտել այնպիսի գործողություն, որ անմիջապես վերաբերում է խոսողին և հաճախ ցույց է տալիս անելանելի վիճակ, որևէ բան վճռելու անկարելիություն, անհնարին լինելը, ելք գտնելու դժվարություն և այլն. օրինակ՝ Մարգարի՞տ կոչես սպիտակ քիշմիշի ասված խաղողին, շողա՞կն անվանես թափանցիկ շողշողուն ակյարուն, զմրու՞թ ասես մեծապտուղ ծիրանագույն հալաղուն, հակինթի՞ նմանեցնես եզան աչքի խոշորություն ունեցող եզնաչքին, դեղին ու սև սաթի՞ հետ համեմատես սև ու սպիտակ, արևից դեղնած խարջունին կամ կանչկենուն, ո՞ր մեկը համարես *(ՊՊԵԺ,* II, *30)։* Բայց ի՞նչ կանես, անցածը չէր կարելի հետ դարձնել *(ՌՊԵ, 337)։ Համեմատիր հաճախ գործածվող այսպիսի նախադասությունները.* Չգիտես ի՞նչ անես, ո՞ր ջուրն ընկնես: Ախպեր, տանդ էլ հանգիստ չես կարողանում նստել, դեռ մի կտոր հաց բերանդ չես տարել, ձայն են տալիս...

Եզակի երկրորդ դեմքով կիրառվող ընդհանրացնող դիմավոր նախադասությունները ավելի ուժեղ են արտահայտում ընդհանրացումը, երբ առածներ ու ընդհանուրի կողմից ընդունված և հաճախ գործածվող ասույթներ ու կայուն արտահայտություններ են. օրինակ՝ Չգայուն ես, շուտ կմաշվես, իսկ թե քար ես, վնաս չունի *(Զիվանի)։* Ասած է, որ հոտավետ մի հատ խնձորը թեկուզ դնես կոշտ քարերի մեջ, հոտիցը նրանց էլ կկպչի *(Փափ., 113)։* Հազածներն էլ, որ մի կտոր թել քաշես, ինն հարիր կարկատան վեր կընկնի *(ՊՊԵԺ,* I, *304)։* Ծանր նստես, լիտր կգաս *(առած)։* Որ մատդ էլ կտրես, արյուն կգա *(առած)։*

Եզակի երկրորդ դեմքի հետ համեմատած ավելի քիչ է գործածվում հոգնակի երկրորդ դեմքը, որը որոշ չափով թուլացնում է ստորոգյալի ընդհանրացնող նշանակությունը։ Այս դեպքում կարծես խոսողը դիմում է որոշ խումբ մարդկանց, նկատի է առնում որոշ միջավայր և այլն։ Օրինակ՝ Սրան մտիկ տվեք, տո՜ *(ՊՊԵԺ,* II, *13)։* Ախպեր, էսպես բան եք տեսել *(Թումանյան, «Անբախտ վաճառականներ»)։* Ինչպես գիտեք, չղջիկը մկան մարմին ունի, թռչունի թևեր *(ՍԶԵԺ,* V, *349)։*

Երբ ընդհանրացնող-դիմավոր նախադասությունը արտահայտվում է հրամայական եղանակով, ապա այդպիսի հրամայականը

ոչ հրաման է ցույց տալիս և ոչ էլ խնդրանք ու չի վերաբերում մի որոշակի երկրորդ դեմքի, անձի, այլ առնչվում է բոլոր դեմքերին։ Ինչպես մյուս եղանակների մեջ, այստեղ էլ երբեմն խոսողը դիմում է իրեն, որ նույնպես ընդհանրացնող արժեք ունի։ Հրամայականով արտահայտված ընդհանրացնող-դիմավոր նախադասությունները ընդհանուր ճանաչում գտած խորհուրդներ ու պնդումներ են, որոնք ձևավորվում են առածներով ու ասույթներով. օրինակ՝ Մայրը տես, աղջիկն առ *(Առած., 33)*։ Այնտեղ որ չես կարող համոզել խոսքով, լռիր խոհեմության ոսկով *(ՍՁՀԲ, 29)*։ Տանուտերի հետ առաջ տեսնվիր, հետո գյուղը կողոպտիր *(ԲԵԺ, III, 22)*։ Փող ունես, տար քեզ բարեբար մարդոց հետ գործ արա *(ԱԲԵ, 480)*։ Գնա մեռիր, արի սիրեմ *(առած)*։ Մի լինի ուրագի պես Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ, Այլ եղիր սղոցի պես, Մին դեպի քեզ, մին դեպի մեզ *(Թումանյան)*։ Մի անիր մերձավորիդ այն, ինչ որ դու չես ուզում նույնը քեզ անեն *(ԱԻԵ, 321)*։

Հրամայականով ընդհանրացնող-դիմավոր նախադասությունը արտահայտում է հնարավորություն, անհնարինություն, գիտակցություն, հարկադրանք, անխուսափելիություն և այլ եղանակավորող նշանակություններ. օրինակ՝ Գնա մինչև հին Բաբելոն, եկամների աշխարհը, մինչև Ագի լիճը և Միջագետքի խանձված դաշտերը, ամեն տեղ կտեսնես այս խանձված կավը *(ԱԲԵ, 238)*։ Հա կանչի, հա սպասի։ Մեկ էլ լուսաբացին գալիս էր բեզարած, ջարդված, ցեխոտ *(Նույն տեղում, 454)*։ Ինչ ուզում ես մտքումդ դիր... գլուխ չի գալ *(ՊՊԵԺ, II, 33)*։ Գնա կուզես Ֆրանգստան, ամենամեծ քուչեքը տես՝ Սրտիդ ուզած տեղը միակ սիրեկանի թաղն է էլի *(ԵՁԵ, 158)*։ Սրանից հետո դե արի դու Ու ձեռ մեկնի աղքատ մարդու *(Թումանյան, «Անբախտ վաճառականներ»)*։

Ընդհանրացնող-դիմավոր միակազմ նախադասությունն արտահայտվում է նաև հոգնակի առաջին դեմքով. օրինակ՝ Երբ կեղծիքների մեծ մասը ճշմարտության տեղ չընդունենք, այն ժամանակ կյանքը դժոխք կդառնա մեզ համար *(Մուր., IV, 118)*։ Սիրո խաղաղության համար կապած արեգակը տեսնենք *(Չիման.)*։ Լավ, ինչ անենք, ինչ եղավ այգին մտնելով *(ԴԴԵԺ, I, 93)*։ Ով իմանա՝ ուր ընկանք, քանի օրվա հյուր ընկանք, Սերն ու սիրտն էլ երբ չկա՝ Կրակ ընկանք, զուր ընկանք *(Թումանյան, «Քառյակներ»)*։

Համեմատիր նաև եզակի առաջին դեմքով արտահայտված հետևյալ ընդհանրացնող-դիմավոր նախադասությունները, որոնք առած են դարձել. օրինակ՝ Զանեմ, չհավանեմ *(Առած., 64)։* Չեմ ուտի ձեր վռիկ, չեմ քշի ձեր խոռիկ։ Ոչ կուտեմ ձեր վռիկ, ոչ էլ կքշեմ ձեր խոռիկ։

Ընդհանրացնող-դիմավոր նախադասությունները երբեմն իրենց դեմքի համապատասխան մի դերանուն-ենթակա են ունենում, ուր դերանունը ստացել է ձևական արժեք. այդպիսի դերանունները չեն վերաբերում որևէ անհատի կամ անհատների որոշակի խմբի. դրանք ավանդաբար մնացած թարմատարներ են, որոնց գործածությունը նախադասության էությունը չի փոխում, նախադասությունը պահպանում է իր ընդհանրացնող նշանակությունը, սակայն միակազմ նախադասությունը ձևականորեն վերածվում է երկկազմի, ուր ենթական միայն ձևական արժեք է ստանում. օրինակ՝ Վաղի առածի նման՝ Ճաշ ուտելուց հետո դու արի ձեռին ջուր ածա *(ՊՊԵԺ, I, 296)։* Մի անիր մերձավորիդ այն, ինչ որ դ ո ւ չես ուզում նույնը քեզ անեն *(ԱԻԵ, 321)։* Հե՜յ, ջա՜ն, Մ ե ն ք էլ զգույշ անցնենք, ով իմանա, թե Տիմի էն սիրունու բի՞բն ենք կոխում, թե հուր լեզուն խայամի *(Թումանյան, «Քառյակներ»)։ Հոգուդ հավքը* հանկարծ թռավ՝ ինչ ես դ ո ւ. Ճամփիդ կիսում ձիդ որ կորավ՝ ինչ ես դ ո ւ *(Նույն տեղում)։* Երբ իմացար, թե էս ընչից էս ինչ բանն է դուրս գալի, կարող ես դ ո ւ առաջ բերես և հետևանք ցանկալի *(Նույնը, «Հազարան բլբուլ»)։*

Գ. ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Անդեմ է կոչվում այնպիսի նախադասությունը, որի ստորոգյալը արտահայտվելով եզակի երրորդ դեմքով՝ ցույց է տալիս առանց ենթակայի կատարվող գործողություն կամ դրություն։

Ճիշտ է, անդեմ նախադասությունը երրորդ դեմքով է արտահայտվում, բայց այն իր նշանակությամբ միայն գործողություն է առանց ենթակայի. այս դեպքում ոչ թե ենթական անորոշ անձ է, իր կամ առարկա, այլ այդպիսին գոյություն չունի, գործողությունը պայմանավորված է ինքն իրենով, ենթակայի կարիք չի զգացվում, կա միայն սոսկ գործողությունը կամ դրությունը. օրինակ՝ Լուսանում է, մթնում է, անձրևում է, ձյունում է, ցրտում է, մաղում է, երեկոյանում է *և այլ նախադասությունները գործող անդամներ չունեն, սրանց երրորդ դեմքը դեմքի*

արժեք չունի, որովհետև չի հարաբերում առաջին և երկրորդ դեմքերին. սրանք միայն ստորոգյալից են կազմված, այսինքն՝ անենթակա, անդեմ նախադասություններ են։

Անդեմ նախադասություններն ըստ իրենց ստորոգյալի նշանակության բաժանվում են երկու խմբի. առաջին խմբի մեջ մտնող նախադասությունների ստորոգյալները արտահայտում են միայն բնության երևույթներ, իսկ երկրորդ խմբի մեջ մտնող նախադասությունների ստորոգյալները տարբեր նշանակության բայեր են։ Թե բնության երևույթներ արտահայտող նախադասությունները և թե մյուսները ըստ իրենց կառուցվածքի բաժանվում են նույնպես երկու տարբեր խմբերի. նախ՝ զուտ բայական ստորոգյալով անդեմ նախադասություններ և երկրորդ՝ ստորոգելիական վերադիր ունեցող անդեմ նախադասություններ։

Ա) ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՅԵՐՈՎ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բնության երևույթներ արտահայտող բայական անդեմ նախադասությունները կազմվում են սահմանափակ թվով այնպիսի ստորոգյալներից, որոնք ցույց են տալիս ժամանակի փոփոխություն. օրինակ՝ Մթնեց: Ծերունին լուռ չարչարանքով Մի քանի կոճղեր դրեց կրակին *(Թումանյան, «Հառաչանք»)։* Երեկոյանում էր, ստվերները սողացին *(ԴԴԵԺ,* IV, *239)։* Երեկոյացել էր. ապարանքը, այգու կավաշեն պարիսպը, ծառերը, առուն ողողվել էին մայր մտնող արևի նարինջով *(Նույն տեղում, 388)։* Մթնել է, տուն գնալու ժամանակն է *(Թումանյան, «Տերն ու ծառան»)։* Աչքերի առջևը ավելի և ավելի մթնանում էր *(ՐԵԺ,* VII, *546)։* Երբ փոքր ինչ կլուսանա, այն ժամանակ մենք դուրս կգանք կռվելու *(Նույն տեղում, 300)։* Երբ պետք է ծեգի, Երբ պետք է մթնի *(Թ., 1, 524)։* Ուշ լուսանում էր, ուշ մթնում *(ՎՓԵԺ,* I, *480)։* Առավոտ կանուխ բարձրացի՛ր, Երբ նոր, դեռ նոր մարմանդ լուսանում է *(ԵՉԵ, 292)։*

Անդեմ նախադասություններ են կազմում նաև այնպիսի միադիմի բայերը, որոնք ցույց են տալիս օդերևութաբանական կամ մթնոլորտային երևույթներ. օրինակ՝ Ամպել է, ձուն չի գալի *(ժողովրդական երգ)։* Կանձրևե, տղաս... Աշունը թաց է... Լռության մեջ...: Կանձրևե, տղաս... Կանձրևե երբեմն հոգիիդ մեջ ալ *(Թեքեյան, 25)։ Այդպես ասվում է.* ձնում է, ցըր-

տում է: Լեռների վրա ձյունել է բարակ (*ԱԻԵ, 76*)։ Մի՞թե անձրևում է։— Անձրևում է (*ԱԲԵ, 634*)։

Երբեմն վերևում հիշատակված երկու տիպի անդեմ նախադասությունները կազմում են եղանակավոր սկսել, շարունակել *բայերով. այսպես ասվում է.* սկսում է ձնել, շարունակում է անձրևել, սկսում է մթնել՝ ցրտել՝ տաքանալ՝ լուսանալ *և այլն*։ Մին էլ էն է տեսնում մի սպիտակ ձիավոր ցոլաց ու անցավ... ու սկսեց ծեգել (*Թ.*, III, *260*)։

Երբեմն այսպիսի անդեմ նախադասությունները կազմվում են կայուն կապակցություններով. այսպես ասվում է. կայծակին է տալիս, անձրև է մաղում, շաղ է դնում, ցող է դրել, ձյուն է դնում, կամ կարկուտ է տեղում, ձյուն է տեղում, անձրև է տեղում *և այլն, ուր գոյականները խնդիրներ են և ոչ թե ենթականեր*։ Տեղալ *բայի հետ կապակցվող խնդիրները այժմ կարող են իբրև ենթակա մտածվել, սակայն ծագումով դրանք նույնպես խնդիր են, այդ բանը չի գիտակցվում այն պատճառով, քանի որ* տեղալ *ներգործական բայի սեռը մթագնվել է*։

Շատ հաճախ այսպիսի անդեմ նախադասությունները գործածվում են ենթակայով. բնության որևէ երևույթ հանդես է գալիս իբրև ենթակա, և անդեմ բայի գործողությունը իբրև ստորոգյալ վերաբերում է նրան. այսպիսով, բնության երևույթները շնչավորվում են, նախադասությունը դառնում է զարդարուն, ըստ այդմ և արտահայտիչ. օրինակ՝ Ամբողջ գիշերներ լուսանում էին ուրախ, անհոգ, աղմկալի խրախության մեջ (*ԲԵԺ*, VII, *495*)։ Դեռ առավոտը նոր էր լուսանում (*Նույն տեղում, 74*)։ Լուսը լուսացավ, բարին շատացավ (*Թումանյան, «Գութան»*)։ Օդը գնալով խտանում էր, ցրտում (*ԱՍԾ, 103*)։ Օրերը ցրտում են (*ՏԵԺ*, I, *216*)։

Հաճախ այսպիսի ենթակայով նախադասություններն արտահայտվում են կայուն դարձվածային կապակցություններով, ենթակաները լինում են սովորաբար մի այնպիսի գոյական, որից կազմվում են վերևում հիշատակված անդեմ բայերը, իսկ ստորոգյալները փոխաբերական նշանակությամբ կիրառվող բայեր են, որ միասին ունեն հիշյալ անդեմ բայերի նշանակությունը. օրինակ՝ ընկավ, մռայլվեց Ավարայրի դաշտավայրը (*ԴԴՎ,·692*)։ Իրիկունը Մութն որ ընկնում է... (*Թ.*, III, *233*)։ Լույսը բացվում է, շուտ արտը գնամ (*Հովհաննիսյան*)։ Լուսը, լուսը բացվի ձեզ վրա, Արևի լուսը բացվեց սև աշխարհի վրա (*ՍԶԵԺ*, V, *380*)։ Լույսը շո-

դալուն քիչ մնաց *(Զիլանի)*։ Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ Աշխարհքի վրա, Ջավախքի վրա *(Թումանյան)*։ Կբացվի լույս առավոտ *(ՏԵԺ*, I, *268)*։ Մութը կոխեց ակնակիր *(Թումանյան)*։ Մութն ընկնում էր *(ՍԶԳԹ, 525)*։

Փոխաբերական նշանակությամբ գործածվող այս դիմավոր բայերը սակավ գործածվում են նաև իբրև անդեմ. օրինակ, փոխանակ ասելու եղանակը տաքանում է, օրը բացվում է, քամի է փչում, *պարզապես ասվում է՝* տաքանում է, բացվում է, փչում է։ *Համեմատիր՝* Այստեղ փչում է, չեմ կարող նստել: Դուրսը տաքանում է *և այլն։ Սակայն պետք է նշել, որ այդպիսի կիրառությունները հազվադեպ են։*

Այդպես էլ Կարմրին է տալիս, սպիտակին է տալիս, կանաչին է տալիս *կայուն կապակցությունները հազվադեպ կազմում են անդեմ նախադասություններ և արտահայտում են բնության մեջ կատարվող կամ տեղի ունեցող որոշ փոփոխություններ։ Այս կապակցությունները ուղեկցվում են* ամենուրեք, շուրջս, չորս կողմս *բառերով, որտեղ հիշյալ բառերը պետք է ոչ թե ենթակա դիտել, այլ տեղի պարագա։*

Այս կայուն կապակցությունները կարող են նաև մի բայով արտահայտվել. Կանաչկտում է՝ կարմրկտում է. *բայց հայերենում, ինչպես ասվեց, այսպիսի բայական անդեմ նախադասությունները անսովոր են։ Համեմատիր Տերյանի հետևյալ բանաստեղծությունը.* Հեկեկում է անվերջ, հեկեկում, Մենավոր ու վհատ Իմ հոգուն հարազատ — Անհատնում, անպատում. Կսկիծով հեկեկում է տրտում, Հեկեկում... *(ՏԵԺ*, I, *125)*։ *Այսպիսի բայական նախադասությունները շատ հաճախ ենթակայով են կազմվում։ Ասվում է.* Քամին ոռնում է, բուքը մրրկում է, եղանակը փոխվում է, Երկինքը լալիս է: Աշխարհքն արդեն պատած ողջ սև, լացով, թացով սուգ է անում, դողում, պաղում ու դալկանում *(Թումանյան, «Մոծակն ու մրջյունը»)*։

Ինչպես արդեն ասացինք, բնության երևույթներ ցույց տվող անդեմ նախադասությունները ըստ ստորոգյալի ձևի բաժանվում են բայական և ստորոգելիական վերադիրով արտահայտվող նախադասությունների։ Մինչև այժմ քննվեցին բայական նախադասությունները, իսկ հիմա տեսնենք վերադիր ունեցող նախադասությունները։

Բնության երևույթներ արտահայտող գոյականները բայական հանգույցի հետ կազմում են անդեմ նախադասություն, ուր սկզբնապես գոյականը ենթակա է եղել, իսկ բայը էական նշանա-

կությամբ՝ ստորոգյալ։ Հետագայում էական նշանակությամբ բայը մթագնվել է ու վերածվել հանգույցի, իսկ երկկազմ նախադասությունը դարձել է միակազմ անդեմ նախադասություն։ Այսպես ասվում է. ամպ է, ձյուն է, անձրև է դրսում, դրսում կարկուտ է, մառախուղ է, մշուշ է, մեգ է *և այլն։ Սրանք սկզբնապես նշանակել են* ամպ կա, ձյուն կա *և այլն, իսկ այժմ* ամպ է, *նշանակում է ամպամած է։ Համեմատիր հետևյալ օրինակները.* Մեգ է, անձրև ու մշուշ իմ այգում մերկ *(ՏԵԺ, I, 93)։* Համր է չորս դիս, մութ ու մշուշ *(Նույն տեղում)։* Երեկ ամպ էր, էսօր պարզ արև *(ԱԲԵ, 110)։* Անձրև է, անձրև մեղմ ու քաղցրաշիթ՝ անտառի վրա *(ԳՄԵՍ, 104)։* Էլի քամի էր փողոցում *(ԱԲԵ, 404)։* Դուրսը ցուրտ է հիմա եվ խավար է, մրրիկ *(ՏԵԺ, I, 180)։*

Նույն ձևով անդեմ նախադասություններ են կազմում ժամանակ արտահայտող բազմաթիվ գոյականներ, որոնք դառնում են ստորոգելիական վերադիր և՛ է *հանգույցին, և՛* լինել *ու* դառնալ *բայերին. օրինակ՝* Բարեկենդան էր *(ԽԱՎՀ, 9)։* Աման է, աշուն, մի խոսքով մրգի ժամանակ *(ԵՉԵ, 318)։* Առավոտ էր, Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտներից մեկը *(ՐԵԺ, VII, 437)։* Աշուն է, օրերը ցրտում են *(ՏԵԺ I, 216)։* Իմ գլխի վերև կեսօր է արդեն *(ԵՉԵ, 178)։* Գարուն է, ձյունհալ ու այրիլ *(ԳՄԵՍ, 62)։* Մի Մթնաշիշեր էր *(Թ., III, 69)։* Գիշեր է մռայլ, ամպամած գիշեր *(ԱԻԵ, 86)։* Եվ երբ երեկո էր դարձել *(Փափ., 309)։ Այսպես ասվում է.* Երբ վերադառնում են, գիշեր է լինում, մինչև հասնում են, առավոտ է դառնում։

Բնության երևույթներ ու ժամանակ ցույց տվող գոյականներից բացի նույն ձևով անդեմ նախադասություններ են կազմում նաև դրանց վերաբերող կամ դրանց այս կամ այն հատկանիշը բնորոշող մի շարք ածականներ ու մակբայներ. օրինակ՝ Համր է չորս դիս, հանգիստ է իմ շուրջը *(ՏԵԺ, I, 173)։* Այսօր... շատ տխուր է *(Նույն տեղում, 132)։* Շուրջս մռայլ էր *(ՏԵԺ, I, 140)։* Բայց լուռ է շուրջս *(ԱԻԵ, 40)։* Այլևս ուշ է մայրիկ *(ԴԴԵԺ, IV, 294)։* Ինչքան ցուրտ է պառավի համար *(ԱԲԵ, 194)։* Հով էր քարափի գլխին *(Նույն տեղում, 51)։* Զով է լինում *(ԱԲԵ, 237)։* Որքան էլ ուշ լինի, կաշխատենք մի բան անել *(Նար., VI, 82)։ Այսպես ասվում է.* տաք է դրսում, հանելի է, հիանալի է, տխուր է, ամպամած է, պարզ է. Ցուրտ է դրսում, մարդ է մրսում *և այլն։*

Նույնիսկ երբ այսպիսի ածականները, գոյականներն ու մակբայները մի որևէ բայական հանգույցով անդեմ նախադասություն կազմելիս իրենց հետ ունենն որևէ ուղիղ հոլովաձև ժամանակային գոյական, այս վերջինները չպետք է դիտել ենթականեր. դրանք ժամանակի պարագաներ են տվյալ անդեմ նախադասության համար. օրինակ, ասում ենք. Ձմեռը ցուրտ էր. այս ամառ զով էր. ցերեկը շոգ է լինում, իսկ գիշերը ցրտում է: *Այս նախադասությունների մեջ* ձմեռը, ցերեկը, գիշերը, այս ամառ *ենթականեր չեն: Համեմատիր.* Մի օր ցուրտ է, մի օր տաք *(Թ., I, 417):* Սաստիկ ցուրտ է այս ձմեռ *(Նույն տեղում, 64):* Էսօր ուրախ օր կանի, Առավոտուն պայծառ օդ, կեսօրին մութ ու ամպոտ *(Թ., I, 417):*

Երբեմն այսպիսի անենթակա նախադասությունները շաղկապով կամ առանց շաղկապի կապակցվում են մի երկրորդականի նախադասության հետ, որ դառնում է դրանց համար ենթակա-երկրորդական նախադասություն. օրինակ՝ Վաղուց էր, որ սուր հայացքը նետել էր դեպի հարավ-արևմուտք *(Փափ., 30):* (Էն) Երբ էր՝ Անուշն իր կուժը առավ, Աղբյուրը գնաց ու էտ չդառավ *(Թումանյան, «Անուշ»):* Քանի օր էր՝ նա չէր եկել զրույցի: Երեք օր էր՝ չէր գալիս զրույցի *(ՍԶՀԲ, 250, 251):* Վաղուց է, որ քեզ չեմ տեսել: Երկուշաբթի էր, երբ դու եկար:

բ) ԿՐԱՎՈՐԱԿԵՐՊ ԲԱՅԵՐՈՎ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Առավելապես խոսակցական լեզվում մի քանի չեզոք բայեր ստանալով կրավորականի վ *մասնիկը, եզակի երրորդ դեմքով անդեմ նախադասություններ են կազմում, որի ստորոգյալը մի որևէ վայրում կամ ժամանակում արտահայտում է տվյալ վիճակի կամ շարժման հնարավորություն կամ անհնարինություն: Հիշյալ չեզոք բայերի այդպիսի կիրառությունը լրիվ բացառում է ենթակայի առկայությունը, և այդպիսով ձևավորվում է մի յուրահատուկ անդեմ նախադասություն, որը գերազանցապես ունենում է որևէ տեղի պարագա: Ասվում է.* Այստեղ չի նստվում: Այս ճանապարհով չի գնացվի: Այս մահճակալի վրա լավ կքնվի՞: Յոլա չի գնացվում *և այլն: Համեմատիր.* կան այս տեսակ օտար մարդիկ, նրանց հետ չի ապրվի *(Ջիվանի, 150):* Այդ ոտքի ամաններով վեր կելնվի՞ *(ՀՊԸԵ, I, 385):* Էլ բան չի ասվում, ճար չի խոսվում *(Թ., VI, 39):* Այս սարը կելնվի՞:

Եզակի երրորդ դեմքով անդեմ նախադասություն են կազմում նաև մի շարք ներգործական բայերի կրավորակերպները.

միայն սրանք չեզոքներից տարբերվում են նրանով, որ կարող են նաև ենթակայով կիրառվել. օրինակ՝ գիրքը չի կարդացվում *նախադասության մեջ* չի կարդացվում *ստորոգյալը ունի ենթակա և գործածված է դիմավոր նշանակությամբ, իսկ՝* Այստեղ չի կարդացվում *նախադասության մեջ ենթակա չկա։* Ուզում էր ինքն իրեն հանգստացնել Հրայրը, բայց չէր ստացվում *(ԲՎԻԳԵ, 99)։* Ինչո՞ւ, ինչո՞ւ է այդպես ստացվում *(նույն տեղում, 131)։* Ինչ անում եմ, մի տեսակ չի ստացվում: Այսօր չի գրվում *և այլ նախադասությունների ստորոգյալները ենթակա չունեն, և ենթականեր չեն ենթադրվում. դրանց ստորոգյալները ցույց են տալիս տվյալ պայմաններում գործողության հնարավոր կամ անհնար լինելը անորոշ պատճառներով։*

Ինչպես ասվեց, այս կարգի կրավորակերպ անդեմները գրականության մեջ հազվադեպ են, սրանց համեմատությամբ բազմաթիվ ներգործական և չեզոք բայերի անորոշ դերբայները կապակցվելով լինել *բայի ներկայի, ըղձականի եզակի երրորդ դեմքի ժխտականի կամ գործողության կատարման անհնարինությունը արտահայտող* որ *շաղկապով գործածվող դրականի հետ, կազմում են անդեմ նախադասություններ։ Այսպես ասվում է.* Հետը խոսել լինո՞ւմ է որ: Հետը խոսել չի լինում: Այստեղ կարդալ լինո՞ւմ է որ: Այստեղ կարդալ չի լինում։ Գրել լինո՞ւմ է որ: Գրել չի լինում *և այլն։* Քամին քաղաքի կողմից երբեմն բերում էր այնպիսի խուլ աղմուկ, որ չէր լինում ջոկել ոչ մի ձայն *(ԱԲԵ, 647)։* Ապրիլ չի լինիլ էսպես ամեն օր *(Թումանյան, «Հառաչանք»)։* Աղջիկը որ կա, անկտրիլ ձմերուկ է *(ա)*, ձեռք տալ չի լինի *(ընկել)* *(ՊՊԵԺ,* II, *163)։* Ո՛չ, հավատալ չի լինի հիմիկվա բարեկամին *(Զիվանի, 160)։* Էնպես ուրախանում են, որ էլ լեզվով ասել չի լինի *(Թ.,* III, *324)։* Երբեք նրա սրտի հետ խաղալ չի լինի *(Զիվանի, 362)։*

Թվում է, թե վերոհիշյալ կապակցությունների մեջ անորոշ դերբայը լինում է, լինի *երրորդ դեմքով գործածվող ձևի համար ենթակա է, սակայն դա միայն կարող է թվալ. իրողության մեջ երկուսը մի միասնական ստորոգյալ են կազմում անդեմ գործածությամբ։*

Ծանոթություն.— Ինչպես երևում է օրինակներից, ժխտականով արտահայտված անդեմ նախադասությունները շատ են տարածված, իսկ դրականով ձևերը ավելի խոսակցական են և գրականության մեջ հազվադեպ։

Ասացական ասել, խոսել, հրամայել *բայերի կրավորակերպ եզակի երրորդ դեմքը հաճախ կիրառվում է անդեմ նշանակությամբ և գրեթե համապատասխանում է դրանց ներգործաձև հոգնակի երրորդ դեմքի անդեմ ձևերին, միայն կրավորակերպ եզակի ստորոգյալների գործողությունը ենթակա չի ենթադրում, իսկ հոգնակի երրորդ դեմքով ներգործաձև ստորոգյալների գործողությունը կատարում են անորոշ անձեր, որոնք չեն նշվում նախադասության մեջ։ Ասացական եզակի կրավորաձև բայերի անդեմ ստորոգյալների գործողությունը կատարվում է ընդհանրապես առանց գործողի. օրինակ՝* Բայց վայ ինձ, որ Վարդան Մամիկոնյանի անվան վրա այդպես խոսվեց *(ԴԴԵԺ,* IV, *88)։ (Պապը)* ոչնչացրեց այն բոլոր հիմնարկությունները, որ կառուցել էր մեծ հայրապետը, և որոնց մասին խոսվեցավ վերևում *(ՐԵԺ,* VII, *192)։* Ճշմարիտ է ասված *(ԴԴԵԺ,* III, *330)։* Բայց այժմ համառորեն խոսվում է Ամերիկայի հետ Ռուսաստանի առևտրական պայմանագիրն ընդհատելու մասին *(ԱՍԾ)։*

Հաճախ այդպիսի անդեմ նախադասությունները կապակցվում են մի այնպիսի երկրորդական նախադասության հետ, որ պարզում-բացահայտում է դրանց բովանդակությունը և դիտվում է դրանց համար իբրև ենթակա-երկրորդական նախադասություն. օրինակ՝ Այնտեղ ասված չէ, որ ես իրավունք չունեմ *(ՂԱԸե, 416)։* Ասված է՝ բոլոր հայոց աշխարհի կանայք պիտի դառնան հայրենիքի զինվորյալներ *(ԴԴԵԺ,* IV, *413)։* Եվ սակայն չի ասված՝ ինչու համար և ինչ նպատակով է հրավիրում մեզ *(ՍՉՀԲ, 7)։* Հրամայված է, որ մնաք այստեղ։

Անդեմ նախադասություններ են կազմում ներել, թույլատրել, թույլ տալ *ներգործական բայերի կրավորաձևերը (ներվել, թույլատրվել, թույլ տրվել), երբ խոսողը ընդհանուր կերպով թույլտվություն է խնդրում լսողներից իր որևէ արտահայտության համար։ Սովորաբար այդպիսի անդեմ նախադասությունները կազմվում են* թող *եղանակավորիչով և ըղձականի եզակի երրորդ դեմքով.* թող թույլ տրվի, թող թույլատրվի, թող ներվի *ձևերով։ Իսկ երբ խոսքը ասված է, կամ հետո պետք է ասվի, և խոսողը կամենում է հաղորդել այդ թույլտվության կամ ներումի մասին, ստորոգյալը դրվում է անցյալ ժամանակի եզակի երրորդ դեմքով՝ առանց* թող *եղանակիչի.* ինձ թույլատրվեց, ինձ ներվում է, ինձ թույլատրվել է, ինձ թույլ կտրվի, երանի ինձ թույլ տրվեր *և այլն։ Բայց այս և նախորդ դեպքում հիշյալ անդեմ նախա-*

դասությունները հակված են ստանալու որևէ ենթակա, որը լինում է անորոշ դերբայ, կամ այդ, բանը *բառերը: Օրինակ՝ Ինձ թույլ տրվեց գնալ,* Նրան թույլատրվում է ուտել, թող թույլ տրվի ասել, ձեզ կներվի այդ բանը, *ուր անորոշ դերբայները արդեն հարում են կրավորաձև անդեմ բայերին իբրև մի ամբողջական ստորոգյալ և դրանց ենթակա լինելը համարյա չի զգացվում, իսկ* այդ, բանը *բառերը ընդհանուր և անորոշ բառեր են, բայց ձևականորեն պահպանվում են իբրև ենթակա. օրինակ՝* Ոչ ոքի էլ թույլատրված չէր այդ *(ՎԹԵ, 16): Համեմատիր նաև՝* Հիմարները միայն կարող են չզարմանալ այդ բերդի վրա. և այդպիսի հիմարներից է, թող թույլ տրվի ասեմ, պ. Մարուքեն *(ԵՉԵ, 300): Սրա հետ համեմատիր հետևյալ նախադասությունը.* Ճշմարտության շավիղի վրա կանգնած հանցավորին պետք է ներվեր *(ՐԵԺ,* II, *536):* Այդ, թ ո ղ թ ու յ լ տ ր վ ի ա ս ե լ, գործիչը թույլ տվեց պառլամենտի արձակումը *(ՍՀ, № 41, 1961 թ.):* Ձայն քեզի տալ թույլատրված չէ ինձի *(Մեծարենց):*

Որոշել, արգելել, սահմանել, վճռել, առաջարկել, խնդրել, ընդունել *ներգործական բայերի կրավորաձև եզակի երրորդ դեմքով կազմվում են անդեմ նախադասություններ, սակայն այսպիսի անդեմ նախադասությունների ենթական արտահայտվում է մի որևէ բայի անորոշ դերբայով, որ պարզելով տվյալ կրավորաձև անդեմ բայի գործողության իմաստը՝ աստիճանաբար այս վերջինի հետ սերտ կապակցվելով դադարում է ենթակա լինելուց, և կամ հիշյալ կրավորաձև անդեմ նախադասությունները ունենում են մի ենթակա երկրորդական նախադասություն, որը բացահայտում է ընդհանուր անորոշ ասված այդպիսի անդեմ ստորոգյալների նշանակությունը. օրինակ՝* Եվ եթե առաջարկվեր բնակիչներին ձեռք քաշել քաղաքի հրաշալիքներից մեկն ու մեկից *(ԵՉԵ, 302):* Այդ մասին խստիվ արգելվեցավ նրանց անցաթուղթ տալ *(ՐԵԺ,* II, *311):* Ուրախ մարդուն խաղալ, խնդալ, զվարճանալ է սահմանված *(Ջիվանի, 346):* Այո, որոշված է, ես կերթամ *(Մուրացան):* Վճռված է, որ դուք հեռանաք այստեղից: Առաջարկվում է ձեզ, որ հետևեք զինվորներին: Խնդրվում է չծխել:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.— Ընդունել *բայի կրավորաձևը իբրև անդեմ հաճախ կիրառվում է* ընդունված է ասել, ինչպես ընդունված է, ինչպես ընդունված է ասել *արտահայտություններով, որոնք գործ են ածվում ընդհանուրի կողմից ճանաչված երևույթները հիշատակելիս. օրինակ՝* Ինքնասպանություն էր գործել ոչ թե ատրճանակի, կամ ինչպես

նման դեպքերում ընդունված է, որևէ թույնի օգնությամբ *(ԵՉԵ, 308)*։ Ներկայումս ընդունված չէ սիրուհու հետ մի տան մեջ ապրել *(Շիրվ., «Քաոս», 365)*։

Այս վերջին բայերի նման անդեմ նախադասություններ են կազմում կրավորաձև ստացվել, հաջողվել *բայերը, որոնք ցույց են տալիս մի որևէ անորոշ դերբայի կամ երկրորդական-ենթակա նախադասության ստորոգյալի գործողության կատարման կամ տեղի չունենալու պայման. օրինակ՝* Այնքան անկեղծ ձևով ինձ հետ խոսող ծերունուն պատասխանել չհաջողվեց ինձ *(Փափ., 113)*։ Այնպես է ստացվում, որ մենք պետք է հեռանանք այստեղից:

Նույնպես անդեմ նախադասություններ են կազմում պահանջել, հանձնարարել, առաջարկել, խորհուրդ տալ *բայերի կրավորակերպ եզակի երրորդ դեմքերը, որոնք ցույց են տալիս պահանջմունք կամ դրդում որևէ գործողության կատարման համար. օրինակ՝* Առաջարկվում է թողնել դահլիճը: Պահանջվում է կատարել բոլոր առաջադրանքները։ Ձեզ հանձնարարվում է շտապ վերջացնել այս գործը։

Անդեմ նախադասություն է կազմում նաև սկսել *բայի կրավորակերպը, որ ցույց է տալիս որևէ երևույթի կատարման սկըսումը, սակայն այդ երևույթի անունը տվյալ դեպքում չի տըրվում, որովհետև դա ընդհանուր, անորոշ մի իրողություն է, որ փաստացի անուն չունի. օրինակ՝* Նրանք հիմա լուրը տարան Հայաստան,— ասաց սարսափին աչքերին Վարդանը,— կսկսվի այնտեղ...— թող սկսվի... *(ԴԴՎ, 315)*։

Գ) ՉԵԶՈՔ ԲԱՅԵՐՈՎ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պատահել, մնալ, լինել, դուրս գալ, գալ *չեզոք բայերը արտահայտում են որևէ գործողության տեղի ունենալը, դրա հնարավորություն, կարելիություն, առկայություն կամ ընդհակառակը և կազմում են այնպիսի անդեմ նախադասություններ, որոնց ստորոգյալը արտահայտում է ընդհանուր, առանց ենթակայի տեղի ունեցող լինելիություն, պատահմունք. օրինակ՝* Չի լինելու որ չի լինելու *(Թ., III, 299)*։ Թող լինի այդպես, լինի այդպես *(ՍՉՀԲ, 35)*։ Կպատահի,— պատասխանում է թագավորը *(Թ., III, 143)*։ Տեսնում եմ, որ ուրիշ կերպ չի լինի *(Նար., VI, 69)*։ Ես ձիու վրա, իսկ Նեսոն իր ցնցոտիներով ու պճեղները դուրս պրծած տրեխներով ոտով՝ ձիու ետևից—ինձ սաստիկ ծանր եկավ

(Թ., III, 119)։ Լեղապատառ փայտահատին մնում էր կամ փախչել, կամ օձի պես ծռմռատել Պանինի մորակի հարվածների տակ *(ԱԲԵ, 4)։* Եվ նրան այնպես եկավ, որպես թե մեկը կիսեց իր ուսերը փշրող ծանր բեռը *(ԱԻԵ, 277)։* Ոնց է եղել ընկել է ափի ծանծաղուտը *(Թ., III, 335)։* Ինչպես որ լինի, մենք կզտնենք ճանապարհը *(Նույն տեղում, 315)։* Չլինի՝ օձին լավություն անես *(Զիվանի, 361)։*

Ինչպես վերևում ասվեց, վերոհիշյալ բայերն իրենց անդեմ գործածությամբ արտահայտում են նաև այլ բայերի գործողության հնարավոր լինելը, ահդի ունենալը, հնարավորություն, կարելիություն, ռակայություն կամ ընդհակառակը, ուստի հաճախ այդպիսի անդեմ նախադասությունները կապակցվում են մի ենթակա-երկրորդական նախադասության հետ, որ ընդհանուր կերպով ասված այդ անդեմ նախադասությունների ստորոգյալների նշանակությունը բացահայտում է. օրինակ՝ Էնպես պատահեց, որ մեր գյուղում ուսումնարան բաց արին *(Թ., III, 117)։* Եղավ՝ մի անգամ անտառի միջին Արծիվն ու կաղնին էսպես վիճեցին *(Թումանյան)։* Լինում է, որ ես թերթ եմ կարդում *(ԵՉԵ, 298)։* Կարո՞ղ է պատահել, որ շրջապատեն անտառը *(ՍՉՀԲ, 57)։*

Հաճախ այս տեսակ բարդ նախադասությունների մեջ անդամ ենթակա-երկրորդական նախադասությունը իբրև այդպիսին բնավ չի բացահայտում անդեմ նախադասության ստորոգյալի իմաստը, այսինքն՝ ենթակա նախադասությունը սկսում է իբրև այդպիսին չգիտակցվել և կամ փոխում է իր բնույթը, իսկ անդեմ նախադասությունը նույնիսկ բարդության կազմում դառնում է իսկական անդեմ նախադասություն. օրինակ՝ Բանից դուրս եկավ, որ ցորենի օղի էր այդ *(Փափ., 111)։* Չլինի՞ թե դու էլ աղջիկ ես ուզել *(Թ., II, 253)։* Չլինի՞ թե հաղթահարված, հարը հատած թշնամին Դավ է դնում մութ ու մնացած կես գիշերվա էս ժամին *(Թ., II, 148)։* Եղավ որ կինը մեռավ *(ԱԻԵ, 265)։* Էնքան լինի՝ Սամփսոնը փոքր կասկածանքի տակ ընկնի *(ՊՊԵԺ, II, 173)։*

Բանից դուրս է գալիս, պարզվում է, ստացվում է *անդեմ նախադասությունների նշանակությամբ երբեմն կիրառվում է՝* ասել է *(ա) անդեմ նախադասությունը. օրինակ՝* Ասել ա՝ դուքանբազարը վերջանում ա *(ԴԴԵԺ, VII, 269)։*

Ծանոթություն,— Այս կարգի անդեմ նախադասությունների հետ երկրորդական նախադասության փոխարեն անորոշ դեր-

բայ գործածելը այժմ անսովոր է և խորթ։ Դրանք կազմըված են գրաբարի այն դերբայական դարձվածի պատճենումով, ուր անորոշ դերբայի հետ կիրառվում է տրական հոլովով ենթակա։ Երբ կպատահի քեզ մի անգամ ևս անցնել այդ *քաղաքով, չմոռանաս խեղճ Լիզային։* Մեզ պատահեց տեսնել հայ բոշաների մի բանակ *(ԲԵԺ,* III, *440, 451)։* Ինչո՞ւ չլինել մեզ մի զույգ անտառային եղջերուներից և բնակվել միշտ այդ սարերի, այդ ձորերի և այդ ծառերի լռության մեջ *(Նույն տեղում,* I, *380)։ Տվյալ նախադասությունները այժմ այսպես են գործածվում. Երբ պատահի, որ դու մի անգամ ևս անցնես այդ քաղաքով... Ինչո՞ւ մենք էլ չլինենք և այլն։*

Ուզել *բայը պայմանական եղանակի եզակի երրորդ դեմքով որևէ բայի անորոշ դերբայի հետ կիրառվում է իբրև անդեմ նախադասություն, որ ցույց է տալիս, թե անորոշ դերբայի գործողությունը պետք է կամ չպետք է կատարվի, անհրաժեշտ է, որ այդպես լինի. օրինակ՝* Ինչ ասել կուզի, գալիս է վրեն էլ ինչ մղկտոց, էլ ինչ սուգ ու լաց *(Թ.,* I, *251)։* Էլ հարցնել չի ուզիլ *(ՊՊԵԺ,* I, *303)։* Քրդի հետ քրդի նման վարվել կուզե *(Զիվանի)։ Այսպիսի անդեմ նախադասությունների գործածությունը սահմանափակ է եղել և այժմ պետք է արդեն հնացած համարել։*

Անորոշ դերբայի հետ անդեմ նախադասություն է կազմում նաև արժել *բայի եզակի երրորդ դեմքը. օրինակ՝* Արժե, մանավանդ սաստիկ մութ գիշեր ժամանակը՝ խաղաղ եղանակին, նստել մեր անբախտ Արտեմ Սերգեյիչի պատշգամբի վրա և դիտել հեռվից կայծերի բազմությունը *(ՊՊԵԺ,* II, *168)։* Արժե տխրել դրա համար *(ՍՋՀԲ, 68)։* Անին հիշատակ է մեր վեհ հնության, Արժե նրան տեսնել՝ թեև անկենդան *(Զիվանի)։* Ո՛չ, ո՛չ, չարժե մեռնել նրա համար *(ԲԵԺ,* VI, *318)։*

Երբեմն արժել *բայի այս անդեմ ձևի համար ենթակա է դառնում մի շաղկապավոր կամ անշաղկապ երկրորդական նախադասություն. օրինակ՝* —Ապրես, ապրես, քաջ Կոզբադին Արժե՝ կախեմ ես քու նախին Մեր դուզդունի մեծ նշանը *(Թումանյան)։* Արժե, որ քեզ մի լավ դաս տան:

Կամ *բայի առանձնապես ժխտական եզակի երրորդ դեմքը մի շարք բայերի անորոշ դերբայների հետ կազմում է անդեմ նախադասություն, որ ցույց է տալիս, թե անորոշ դերբայի գործողության կատարումը օրենք չէ, չպետք է տեղի ունենա կամ*

կատարվի. օրինակ՝ —Խնայել չկա,— ասում էր մեկը (*Լեռ, 14*): —Չեմ մեռցնի ...մինչև ոտներս լիզել չտամ՝ մեռնել չկա,— չարաշունչ թույնով սպառնաց Արտակ Ոշտունին (*ԴԴԵԺ*, IV, *365*):

Գնալ բայի եղակի երրորդ դեմքը քանի, որքան, ինչքան *բառերի հետ կազմում է անդեմ նախադասություն և ցույց է տալիս ժամանակի ընթացքը. օրինակ՝* քանի գնում, այնքան սիրունանում է: *Բայց այս տիպի անդեմ նախադասությունն արդեն մակբայական արժեք է ստացել, այսինքն նշանակում է* գնալով, հետզհետե:

Եզակի երրորդ դեմքով անդեմ նախադասություններ են կազմում թվալ, երևալ *բայերը, որոնք ցույց են տալիս, թե իրականության մեջ կատարվող այս կամ այն գործողությունը խոսողի կողմից չի դիտվում իբրև կատարվող, կատարված կամ կատարելի ստույգ երևույթ, այլ խոսողին թվում է, թե տեղի է ունեցել մի բան, որ ինքը հաստատ չգիտի: Սովորաբար այս բայերով կազմվող անդեմ նախադասությունները ունենում են մի ենթակա-երկրորդական նախադասություն, որը ցույց է տալիս, թե ինչ է այդ թվացող կամ երևացող գործողությունը, որով հենց բացահայտվում են հիշյալ անդեմ նախադասությունների ստորոգյալները:* Թվալ *բայը իբրև անդեմ նախադասության ստորոգյալ, հաճախ տրական հոլովով անձի անուղղակի խնդիր է առնում. օրինակ՝* Ես կանչում եմ նորից նոր, ինձ թվում է, թե՝ կգա (*Թ.*, I, *193*): Նրան այնպես թվաց, թե գրկել է իր սիրածին (*ԱԻԵ, 274*): Նրան թվում էր, թե մարդը բարի նպատակով չի հետաքրքրվում (*ՍԶՀԲ, 88*): Երևում է, որ բոլորի զգայարանները այնքան էին սրված (*նույն տեղում, 57*): Ինչպես երևում է, իմ նամակը ազդել էր նրա վրա (*ՐԵԺ*, V, *419*): Երևաց, որ Ատոմի դիրքը շատ էլ ամուր չէր (*ԴԴԵԺ*, IV, *312*):

Երբ թվալ *բայը իբրև անդեմ ստորոգյալ անձի խնդիր չի առնում, ավելի ևս որոշակի է դառնում անդիմությունը. օրինակ՝* Այնպես էր թվում՝ երազում էի (*Թ.*, I, *75*): Երևի աչքիս թվաց, մտածում է աղջիկն ու մտքից հանում էս բանը (*նույն տեղում*, III, *290*):

Անդեմ նախադասություն է կազմում հազվադեպ նաև վերջանալ *բայը, որ անորոշ ու ընդհանուր կերպով ցույց է տալիս որևէ դրությունից դուրս գալու անելանելիությունը. օրինակ՝* Վերջացավ,— անցավ Գիքորի մտքովը: Բայց ի՞նչ շուտ վերջացավ... Ինչ վատ վերջացավ (*Թ.*, III, *38*):

դ) *Ի*-ՈՎ ՎԵՐՋԱՎՈՐՎՈՂ ՀԻՆ ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅՈՎ ԱՆԴԱՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Մի շարք չեզոք և ներգործական բայերի ի-*ով վերջավորվող հին ապառնի դերբայները իբրև ստորոգելիական վերադիր* է *բայի հետ կազմում են անդեմ նախադասություններ և ցույց են տալիս կարելիություն, անհրաժեշտություն կամ արժանավորություն, խոսողի վերաբերմունքը այն գործողության նկատմամբ, որի մասին խոսվում է։ Այսպիսի անդեմ նախադասությունները սովորաբար կապակցվում են ենթակա-երկրորդական նախադասության և կամ անորոշ դերբայի հետ, որոնք պարզում, բացահայտում են այդպիսի անդեմ նախադասությունների ստորոգյալների բովանդակությունը. օրինակ՝* Բայց ամենքը երանի էին տալիս նրան: Եվ հասկանալի է, թե ինչու *(Լեո, 16)։* Նկատելի է, որ մինչև այժմ ռուսաց հասարակ ժողովուրդը անխտիր նեմեց է կոչում ամեն մի եվրոպացու *(ՌՊԵ, 248)* Մի՞թե ներելի է, մտածեցի, այսպիսի հանդիսավոր ժամանակ իմ անտեղի և աըխմար հետաքրքրությունը լցնելու *(Նույն տեղում, 320)։* Սիրելի էր տեսնել, թե ինչպես երեկվան խաղի գնդակով զվարճացող պատանին այսօր մի երկու տարեկան գոտկածայում ամրացված, հսկում է *(ՊՊԵԺ,* II, *387)։* Հուսալի է՝ հսկա Վարդանները դուրս գան *(Ջիվանի, 127)։* Զարմանալի է, թե որքան վայրենանում է մարդը լեռների և անտառների առանձնության մեջ *(ՐԵԺ,* III, *473)։*

Երբեմն այդպիսի նախադասությունները գործածվում են առանց երկրորդական նախադասության և անորոշ դերբայի հետ կապակցվելու. պարզապես ասվում է խոսողի կամ խոսակցի վերաբերմունքը արտահայտելու համար. օրինակ՝ Հասկանալի է: Հույժ զարմանալի է *(ՍԶՀԲ)։ Բայց շատ հաճախ էլ դրանք կիրառվում են* այդ, այդ բանը, դա *ենթականերով.* այդ ինձ հասկանալի չէ: Դա շատ հուսալի է: Այդ բանը ներելի չէ *և այլն։*

Նույն ձևով հաճախ է կիրառվում կարելի *հին ապառնի դերբայը (կարեմ բայից = կարողանալ), որ այժմ իր դերբայական նշանակությունը կորցրել է և* է *հանգույցի հետ կիրառվում է իբրև ստորոգելիական վերադիր՝ ցույց տալով կարելիություն, թույլտվություն։* Է *բայական հանգույցով հանդերձ կազմում է անդեմ նախադասություն և գերազանցապես կապակցվում է որևէ բայի անորոշ դերբայի հետ, որի գործողության կատարման կարելիությունն ու թույլտվությունն էլ հենց արտահայտում է։ Թվում է,*

Թե հիշյալ անորոշ դերբայը այդպիսի անդեմ նախադասության ենթական է, սակայն այդպիսի միասնությունը պետք է դիտել իբրև մի ամբողջական անդեմ նախադասության ստորոգյալ: Հաճախ հենց առանց այդ անորոշ դերբայի ասվում է. —Կարելի՞ է: —Խնդրեմ, ինչո՞ւ չի կարելի, *կամ՝* —ոչ, չի կարելի: *Սակայն դեպքերում անորոշ դերբայի փոխարեն* կարելի է *անդեմ նախադասության հետ կապակցվում է մի երկրորդական նախադասություն, որի մեջ* կարելի է *նշանակում է* հավանորեն, հնարավոր է, կարող է պատահել: *Ահա մի քանի օրինակներ.* Կարելի է ազնիվ իշխաններ դուրս գան *(Ջիվանի, 127):* Կարելի է, որ դու չես հիշում: *Բայց այդպիսի կապակցությունները արդեն հնացած կամ խոսակցական են, ուղիղը և սովորականը հետևյալ օրինակներն են.* Եվ այդ կարելի էր տեսնել առավելապես Բագրևանդի գավառում *(ՐԵԺ,* III, *217):* Կարելի է հուսալ կամ թե որքան դեռ պետք է տանջվել *(Լեո, 22):* Մեղադրել չէր կարելի *(ՊՊԵԺ,* III, *253):* Լսվեց մի նուրբ ձայն, որ ասում էր հունարեն, կարելի է, բազիլևս *(ՍԶՀԲ, 115):* Դիմադրել նրա հմայքին չի* կարելի *(Լեո, 28):* Ոչինչ օգնել չի* կարելի ձեր ցավերին *(ՌՊԵ, 323):*

Ծանոթություն.— Երբեմն ժխտական ձևը կապակցվում է լինել *բայի հետ. օրինակ՝* Կարելի չի լինում արտահայտել *(Նար.,* IV, *8):*

Մեր գրական լեզվի զարգացման սկզբնական շրջաններում անդեմ նախադասություններ էր կազմում նաև ու-ով վերջացող ապառնի դերբայը՝ դարձյալ է *բայի հետ կապակցվելով: Այս դերբայը արտահայտում է անհրաժեշտություն, հարկադրվածություն որևէ գործողության կատարման համար. օրինակ՝* Աշխատելու է որպես և իցե Դոնդարենց Ասոյի ապանությունը Դվակորենց Հայրոյից հեռացնել *(ՊՊԵԺ,* II, *173):* Ջախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան, վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան *(Ջիվանի, 35):* Այստեղ Համլետի նման գոչելու է *(Թումանյան):*

Ծանոթություն.— Այժմ վերոհիշյալ ապառնի դերբայի և է *բայի կապակցությունը բոլորովին այլ կերպ է ըմբռնվում.* Ուտելու է, խմելու է, վճարվելու է, պատրաստելու է *և այլ ձևերը արդեն մտածվում են ոչ թե՝* պետք է խմել, պետք է ուտել, պետք է պատրաստվել *և այլն, այլ նշանակում են*

---

* *Բնագրում՝ չէ:*

ուտելու բան է, խմելու բան է, վճարվելու բան է, նույնիսկ աշխատելու բան է, *կամ* դա ուտելի է, այդ խմելու է *և այլն*։

Այդ նույն ձևով կարել *հին բայի ենթակայական դերբայը իբրև այսպիսին այլևս չի գիտակցվում, այլ դիտվում է իբրև ածական և կամ դարձյալ մի քարացած ստորոգելիական վերադիր, որ է բայի հետ կազմում է անդեմ նախադասություն և ցույց է տալիս գործողության կատարման հնարավորություն՝* կարող է *ձևով։ Սա կապակցվում է որևէ բայի անորոշ դերբայի հետ, որը և դրա համար դառնում է ձևական ենթակա. օրինակ՝* կարող է նույնպես պատահել հանկարծ, որ մեկի դեզը, արդյունքը հնձի Գիշերվա ժամին հրով բռնկած, երկնահաս բոցով աստղերը խանձի *(Թումանյան)*։ Բայց ի՞նչպես կարող է լինել *(Շեքս.,* I, *89)*։

Մի քանի եղանակավորիչ կապակցություններ, ինչպես պետք է, հարկավոր է, անհրաժեշտ է, հնարավոր է, անհնար է, *կապակցվելով մի որևէ բայի անորոշ դերբայի կամ երկրորդական նախադասության հետ՝ կազմում են անդեմ նախադասություններ՝ ցույց տալով գործողության կատարման անհրաժեշտություն, հարկավորություն, պետքականություն. օրինակ՝* Չպետք է քնել, չպետք է խեղճ մնալ... Խիստ ու անողոք պետք է լինել, ապրել ժողովրդի հետ և ժողովրդի համար *(ԼԵՈ, 38)*։ Այնուհետև պետք էր երկար ու բարակ բազար անել, երդվել, ազատախոսել, գովաբանել վաճառքը *և այլն (ՐԵԺ,* II, *399)*։ Եվ այդ խորհուրդը կատարելու համար անհրաժեշտ էր, որ նա յուր հավատարիմ մարդիկն ունենա *(Նույն տեղում,* VII, *123)*։ Պետք էր և անհրաժեշտ էր խորտակել այդ պատվանդանը *(Նույն տեղում, 460)*։ Բայց այդ սխալներն ու թերությունները շտկելու համար հարկավոր էր թերևս նորից գրել այդ վեպը *(ԵՉԵ, 297)*։ Պետք էր կես ժամ սպասել *(ՌՊԵ, 316)*։ Անհնար է այդ ամենը հաշվել։

Այժմ պատմական վեպերում իբրև հնաբանություն հիշյալ պետք է, հարկավոր է, անհրաժեշտ է, պիտի *եղանակավորիչների փոխարեն երբեմն կիրառվում են* հարկ է, պարտ է *եղանակավորիչները միևնույն նշանակություններով. օրինակ՝* Պարտ է այնպես անել, որ մինչև մեր վերադարձը չլինի և ոչ մի փախուստ *(ՍՁՀԲ, 40)*։ Մեզ հարկ է միաբանել և ցույց տալ Արշակին... *(Նույն տեղում, 25)*։ Հարկ էր, որ Վասակը իր ուժերը հավաքեր և վերցներ իշխանությունը *(Նույն տեղում, 385)*։ Հարկ է հոգին տալ *(Փափ., 278)*։

Ծանոթություն.— Պետք է *եղանակավորիչի հետ հարակատար դերբայ գործածելը անորոշի փոխարեն այժմ հնացած է։ Հարակատար դերբայի այդպիսի կիրառություն նկատվում է մեր գրական լեզվի կազմավորման սկզբնական և դրան հաջորդող որոշ շրջանում. օրինակ՝* Ամա այսպես բանի վրա խոսողի ատամները պետք է ջարդած *(ԽԱԵԺ,* II, *15)։* Պետք է ասած, որ մեր երիտասարդները լավ անուն թողեցին *(ՐԵԺ,* V, *451)։ Համեմատիր.* Եվ շատերը, պետք է ասած, մխիթարանքի խոսքեր էին ասում *(ՍՋՀԲ, 240)։*

Կարգ, սովորույթ, օրենք *գոյականները կապակցվելով* է *բայական հանգույցի հետ արտահայտում են ավանդական հիմունք, օրինակական կարգ մի որևէ գործողության համար և այդ ձևով կազմում են անդեմ նախադասություններ. օրինակ՝* Օրենք է, որ ուրախություն անենք *(ԴԴԵԺ,* IV, *293)։* Կանչիր ընկերներիդ, գնանք իշխանի մոտ։ Կարգ է *(ՍՋՀԲ, 84)։* Էսօր մեզանում սովորություն է, անասունների միս ենք ուտում *(Թ.,* III, *124)։* Ինչ որ աներ ու կամենար, օրենք էր էն երկրի համար *(Նույն տեղում,* I, *313)։* Բայց ինչպես կարգն ու օրենքն է, մեռելը դեռ հողավորած, թաղած չեն լինում *(Նույնը,* III, *275)։*

Հաճախ դեռևս այս դեպքում է *հանգույցը դիտվում է իբրև էական բայ և այդպիսի կապակցությունները չեն կարող համարվել անդեմ միակազմ նախադասություններ. օրինակ՝* Մեր հովիվների մեջ սովորություն է հաճախ իրենց հոտը թողնել շների հսկողությանը *(Թ.,* III, *126)։ Այս նախադասության մեջ* է-*ն էական բայ է* կա *նշանակությամբ, իսկ* սովորություն *ենթակա է, այսինքն ամբողջը նշանակում է՝* մեր հովիվների մեջ սովորություն կա... *Համեմատիր նաև հետևյալ օրինակը.* Կարգ էր, որ փեսան իր աներոջը մի հայտնի տուրք պիտի տար *(Լեռ, 55)։ Իսկ ավելի վերև բերված օրինակների մեջ ավելի կամ պակաս չափով* է *բայը դադարել է էական բայ լինելուց՝ վերածվելով հանգույցի։*

Վայել, պատշաճ, հարմար, արժան, ամոթ, խայտառակություն *(անվայել, անպատշաճ, անհարմար, անարժան, անտեղի) բառերը կապակցվելով* է *բայական հանգույցի հետ կազմում են անդեմ նախադասություններ և ցույց են տալիս որևէ գործողության գնահատություն ընդունված կարգի, սովորության կամ օրինականության սահմաններում։ Սովորաբար այսպիսի անդեմ նա-*

խաղասությունների ուղեկցում է մի որևէ բայի անորոշ դերբայ և կամ մի երկրորդական նախադասություն, որոնց ստորոգյալի գործողության գնահատությունն է հիշյալ անդեմ նախադասությունը։ Այսպիսի անդեմ նախադասության ստորոգյալը սովորաբար առնում է տրական հոլովով խնդիր. օրինակ՝ Վայել չէր թագավորին այցի ժամանակ ներկա լինել *(ԱՋՀԲ, 209)*։ Քեզ վայել չէ այդպիսի արարք թույլ տալ։ Համաձայներ՝ հարմար չէր, առարկեր՝ անվայել էր *(Նույն տեղում, 132)*։ Սպարապետը պատերազմ է գնում, անպատշաճ է *(ԴԴԵԺ,* IV, *294)*։ Քեզ տալ չէ արժան *(Ջիվանի, 156)*։ Որքան վայել էր սուգի մեջ ուրախանալ նվերով *(ԱՋՀԲ, 110)*։ Հասել էին նույն բարձրության, որից շատ հարմար էր դիտել իրերն ու դեպքերի ընթացքը *(ԱԲԵ, 455)*։ Գիտեմ, պատշաճ չէ և ոչ էլ հնարավոր, որ թագավորը գնա ամենայն տեղ *(ԱՋՀԲ, 132)*։ Պարկեշտ կաց, աղջի, ամոթ է, ամոթ *(Թումանյան, «Անուշ»)*։

Լավ, գեղեցիկ, դժվար, ծանր, այդպես, պարզ, շփոթ, վատ *և այս կարգի այլ բառեր է բայական հանգույցով կազմում են անդեմ նախադասություններ, որոնցով արտահայտում ենք մեզ շրջապատող միջավայրի, կատարվող եղելությունների, որակական գնահատականը մեր անձնական պատկերացումներով ու ընկալումներով։ Սրանք հաճախ ուղեկցվում են որևէ բայի անորոշ դերբայով կամ մի որևէ երկրորդական նախադասությամբ, որոնց ցույց տված գործողության որակական գնահատականն են արտահայտում հաճախ. օրինակ՝* Ինչ լավ է՝ նստել այստեղ, Լսել քո խոսքին սեթևեթ... *(Տերյան)*։ Լավ է, որ դու չհրապուրվեցար Օսմանլվի փայլուն շքանշաններով *(ՐԵԺ,* V, *318)*։ Գեղեցիկ է նայել ճանապարհորդներին *(ՊՊԵԺ,* II, *168)*։ Այսուհետև դժվար չէ դու, Աննա, սովորում ես *(ԼԵՈ, 45)*։ Լավագույն էր լռել *(ԱՋՀԲ, 205)*։ Ծանր էր գալ և խոսել Փառանձեմի հետ *(Նույն տեղում, 193)*։ Զուր է, ճգնաժամ է *(ԴԴՎ, 702)*։ Ավելի լավ է հեռու կանգնենք *(Փափ., 309)*։ Ահա այդպես էր, որ վիշապի գոյության միտքը ծագեց նրանց մեջ *(Նույն տեղում, 308)*։ Միևնույն է, չէր տարբանա *(ԴԴԵԺ,* IV, *293)*։ Օ՜, ծանր է լինել հրամայողի կամակատար *(ԱՋՀԲ, 156)*։ Շփոթ է, պարզում ենք, սպասիր *(ԴԴՎ, 710)*։ Խլոց-խլոցի է, տարան-տարան է *(Ջիվանի, 364)*։ Դժվար էր տեսնել ծերուկ վիպասանին և հոգու խորքից չխղճալ *(ԱԲԵ, 355)*։

Անդեմ նախադասություններ են կազմում նաև ճերիք, բավական, նեղ, լայն *և այս կարգի այլ բառեր, որոնք խոսողի անձնական գնահատությունն են հանդիսանում տարածական ու քանակական տեսանկյունով. օրինակ՝* Բավական է ասել *(ԵՉԵ, 309)*: Նեղ է, նեղ է... խեղդվում եմ *(ՐԵԺ,* VII, *485)*: —Հերիք է, Անուշ, ներս արի դագեն *(Թումանյան, «Անուշ»)*: *Մի որևէ բայական հանգույցով անդեմ նախադասություններ են կազմում* պարզ, ճոզ, ակներև, ճայտնի, իրավ, վենս *(վենք, վեճն)* *կամ* վեչս *(վեչք, վեչն)*, ճիշտ, տեղին, ժամանակին *և այս կարգի այլ բառեր, որոնցով խոսողը իր վերաբերմունքն է արտահայտում իր շրջապատում կատարվող երևույթների նկատմամբ. օրինակ՝* Ակներև է, գետի ջրերը պակասում են *(Փափ., 506)*: Իրավ է, ներկը ավելի թանկ արժեց *(ՐԵԺ,* II, *475)*: Հայտնի չէ, թե ոպես կգնա Հայաստանում ուրացության գործը *(ԴԴՎ, 314)*: Ինչպես ճայտնի է ձեզ... *(ԱԲԵ, 686)*: Հոգ չէր, եթե նրա ապրանած մի մասքը փոխնարինեն առուծուծ ձին տասնյակ անձնքները *(Լեո, 47)*: Շատ վենս ա *(ԴԴԵԺ,* VII, *269)*:

Բերված բոլոր անդեմ նախադասությունները կարող են է հանգույցի փոխարեն կազմվել լինել *բայով, որը տվյալ դեպքում հանգույցի դեր է կատարում և ավելի լայն հնարներ է ընձեռում ժամանակների ու եղանակների փոփոխության համար. օրինակ՝* Ես որ չգամ, լավ կլինի *(Նար.,* VI, *171)*: Մի տեղ էլ ոնց է լինում, ինչ է լինում, թոկի ծերը ձեռքիցը դուրս է պըրծնում *(Թ.,* III, *111)*: Հարկ ու պատշաճ կլիներ խնչույքը սարքել նվագներով ու պարերով *(ԴԴԵԺ,* IV, *519)*: Որ էկել ես վերմակ ուզել, այն ժամանակ վատ կլինի *(Թ.,* III, *369)*: Բարի լինի, ինչ կա *(Ր.,* III, *239)*: Հանո կլինի, եթե յուրաքանչյուրը նոցանից լինի ինքնազլուխ և մերժի քո կամքը *(ԱՋՀԲ, 293)*: Անպատշաճ կլինի քեզ մի որևէ տեղ երևալ *(Ր.,* III, *487)*: Հայտնի լինի մեր տերության *(Թումանյան, «Մի կաթիլ մեղրը»)*: Տեղն է, տեղն եղավ, բոլ եղավ *(բարբառային)*: *Այս անդեմ նախադասություններով խոսողը արտահայտում է իր ներքին գոհունակությունը կատարված գործողության կամ տեղի ունեցած որևէ երևույթի առիթով. օրինակ՝* Արի վերջացրու, բոլ էլավ, ճերիք *(Թումանյան, «Հառաչանք»)*: Տեղն է ճիմարին, թող քաղցած մնա *(ԱԻԵ, 159)*: *Այսպես ասվում է.* Տեղն է, լավ եղավ, ի՛նչ լավ եղավ, շա՛տ լավ եղավ, այդպես էլ պետք է լիներ *և այլն*:

ե) ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅՈՎ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Վերևում մի շարք անդեմ նախադասություններ քննելիս նկատեցինք, որ հաճախ այդպիսի նախադասությունները ունենում են մի անորոշ դերբայ, որը ըստ էության ձուլվելով դրանց հետ, կազմում է մի ամբողջություն. օրինակ՝ Անհրաժեշտ է գնալ, հարկավոր է աշխատել *և այլն։ Այսպիսի նախադասությունների մեջ անորոշ դերբայը կախված է* անհրաժեշտ է, հարկավոր է *ստորոգյալներից։ Անորոշ դերբայը կարող է կախված լինել նաև եղանակավորող բայերից, որոնց հետ այն դարձյալ մի ստորոգյալ է կազմում. օրինակ՝* Ուզում եմ գնալ, սիրում եմ պարապել, ցանկանում եմ զբոսնել *և այլն։*

Այս երկու դեպքում էլ անորոշ դերբայը ինքնուրույն չէ և առանձին նախադասություն չի կազմում. մի դեպքում մտնում է անդեմ նախադասության ստորոգյալի կազմի մեջ, մյուս դեպքում էլ եղանակավորող բայերի հետ կազմում է բաղադրյալ ստորոգյալ։

Անորոշ դերբայը առանձին նախադասություն է կազմում, երբ հանդես է գալիս անկախ, առանձին, իբրև միակազմ նախադասության գլխավոր անդամ. օրինակ՝ Առավոտ վաղ կոշիկներ սրբել, թեյ պատրաստել, գնալ հացի հերթ, գնալ գյուղկոոպ պանրի, յուղի, մեղրի, շուկա՝ մթերքի *(ԴԴԵԺ,* I, *250)։ Ուրեմն անորոշ դերբայով անդեմ է կոչվում այնպիսի միակազմ նախադասությունը, որը ենթակա չունի, իսկ ստորոգյալը արտահայտվում է միմիայն անորոշ դերբայով։*

*Հայերենում անորոշ դերբայով անդեմ նախադասությունների գործածությունը շատ տարածված չէ. այսպիսի նախադասությունները հիմնականում եղանակավորող նշանակություն ունեն, իսկ հայերենի եղանակավորումները կազմվում են կամ յուրահատուկ եղանակավոր ստորոգելիական վերադիրներով (*հարկավոր, պետք, անհրաժեշտ *և այլն) և կամ եղանակավորող բայերով։*

Երբ այս երկու պայմանները գոյություն չունեն և անորոշ դերբայը առանձին ինքն է այդ եղանակավորումն արտահայտում, կազմում է միակազմ նախադասություն, որ լինում է թե՛ համառոտ և թե՛ ընդարձակ։

Անորոշ դերբայով անդեմ նախադասությունը արտահայտում է ապառնի ժամանակ, իսկ նշանակության տարբերությունները պայմանավորվում են հնչերանգությամբ։

Հայերենի անորոշ դերբայով անդեմ նախադասության հիմնական նշանակությունը այն է, որ ցույց է տալիս գործողության կատարման անհրաժեշտություն, ցանկալիություն. օրինակ՝ Մոռանա՜լ, մոռանա՜լ ամեն ինչ, Ամենին մոռանալ. Չսիրել, չխորհել, չափսոսալ — Հեռանա՜լ... Մի վայրկյան ամենից հեռանալ, Ամենին մոռանալ.— Խավարում, ցավերում, քարանալ Մեն-միայն *(Տ., I, 64)։*

Բերված օրինակը արտահայտում է և ցանկություն, և անհրաժեշտություն։ Մոռանալ *նախադասությունը ընդարձակ է, այսինքն՝ ունի ուղիղ խնդիր, իսկ* չսիրել, չխորհել, չափսոսալ, հեռանալ *նախադասությունները համառոտ են, այսինքն՝ կազմված են միայն գլխավոր անդամից։ Հաջորդ նախադասությունը (հեռանալ) դարձյալ ընդարձակ է՝ ունի չափի պարագա և անջատման անուղղակի խնդիր։ Ընդարձակ են և վերջին երկու նախադասությունները։*

Առանց անհրաժեշտության միայն ցանկություն ու ըղձանք են արտահայտում անորոշ դերբայով կազմված հետևյալ նախադասությունները. Ա՜հ, այս ցուրտ երկրի անհայտում անհուն Ընկնել և կորչել և ննջել հավետ, Ոչնչանալ ու մոռացվել քեզ հետ, Ավերված երազ՝ հայրենական տո՛ւն.,. *(Նույն տեղում, 124)։*

Անորոշ դերբայով արտահայտված անդեմ նախադասությունները լինում են պատմողական և հարցական, որոնք իրենց հերթին բաժանվում են երկու տեսակի՝ հաստատական կամ դրական, ժխտական կամ բացասական. Ա՜հ, ունել, ունել, միայն ունել... *(Փափ., 380)։* Ինչո՞ւ հազար ու մի միտք անել *(Լեո, 79)։* Օլիմպիան կանգ առավ. մտնե՞լ, թե չմտնել *(ՍԶՀԲ, 231)։*

Անորոշ դերբայով կազմված անդեմ նախադասություններն արտահայտում են անհրաժեշտություն, պետք ու հարկավորություն, իսկ եթե ժխտական են, ապա դրսևորում են դրանց հակադիր հարաբերություններ. օրինակ՝ Թեկուզ այս ժամին կա՛մ մի ժամ հետո Սյունիի զորքը հասնելուն պես գործադրել մտադրությունը՝ ոչնչացնել կամ կալանել Վարդանանց և ճնշել ապստամբությունը *(ԴԴԵԺ, IV, 155)։* Այդ բոլորից հետո գնա՞լ և օսմանլըվի ոտները լիզե՞լ,—քավ լիցի։

Վերջին նախադասությունը հռետորական հարցական նախադասություն է, որ ունի ժխտական նշանակություն։ Համեմատիր. Ինչո՞ւ վարդը հոտոտելիս խորհել նրա վաղանցուկ շնորհի մասին *(ԱԻԵ, 288)։*

Անորոշ դերբայով կազմված անդեմ նախադասությունը արտահայտում է խոսողի ներքին կասկածները, երկմտությունները, տատանումները, անվճռականությունը, անվստահությունը, անկարելիության կասկածը և այլ նրբություններ. օրինակ՝ Թողնել, բարձրանալ... Բայց չէ որ... ստամոքսը ցած է քաշում *(Փափ., 380)*։ Լինել թե չլինել, այս է խնդիրը. ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ. տանել զոռ բախտի պարսաքարերը և սլաքները, թե զենք վերցրնել ցավ ու վշտերի մի ծովի ընդդեմ, եվ դիմադրելով վերջ տալ բոլորին: Մեռնել, քնանալ, ոչինչ ավելի... Մեռնել, ննջել, ննջե՞լ ...գուցե երազել *(Շեքս., I, 49—50)*։ Հայրենին ուրանա՜լ *(ԴԴԵԺ, IV, 99)*։ Օգնել նրան, թե խեղկատակի դեր խաղալ ու թույլ տալ, որ նա ոչնչանա *(ԴԴԵԺ, IV, 169)*։ Նորից գնալ հրավիրել իշխանաժողո՞վ... Թե գնալ խորհուրդ անել իշխաններից մեկ-երկուսի հետ *(Նույն տեղում, 299)*։

Անորոշ դերբայով արտահայտված նախադասությունը շատ հաճախ կիրառվում է հրամայական նշանակությամբ, որ իր մեջ ունի դրդում, պահանջ, արգելք, ցուցում և այլն։ Իբրև հրամայական անորոշը ավելի կտրուկ է, անառարկելի, քան դիմավոր բայով արտահայտված հրամայականը. օրինակ՝ —Կանչել իսկույն հաջի Մուհամմեդ Հասան Թաջիր բաշուն, պատժել նրան... աքսորել նրան *(Փափ., 543)*։ Այսօր իսկ վերջ տալ բոլորին, ապա թե ոչ՝ բոլորդ պաշտոններից կզրկվեք *(Նույն տեղում, 552)*։ Եվ խստիվ հրաման՝ պահել այս ռազմակարգը. չշփոթվել իր՝ Վարդանի շարժումներից,— *հրամայեց Վարդանը (ԴԴՎ., 704)*։ Կարգի բերել պալատը, պահած տեղերից հանել պալատի թանկարժեք իրերն ու փռվածքները և զարդարել թագավորի հարկաբաժինը *(ՍԶՊԹ, 56)*։ Լռել — *հրամայեց Ալեքսիանոս ավագը (ԴԴԵԺ,* IV, *580)*։ Սակայն մինչև հրաման՝ չարձակել ոչ մի նետ *(ՍԶՀԲ, 540)*։ Զթողնել մեկին ողջ հեռանա... Ողջ չթողնել մեկին *(ՍԶՊԹ, 628)*։

Այս կարգի հրամայական անորոշը շատ հաճախ գործածվում է կոչերում, լոզունգներում, այս ու այն արարքը արգելող կամ խրախուսող գրությունների մեջ. օրինակ՝ Աչքի լույսի պես պահպանել հասարակական սեփականությունը: Ծաղիկները չպոկել: Կանաչը չտրորել: Չծխել: Հատակը չկեղտոտել: Խմելու ջուրը և էլեկտրականությունը խնայել *և այլն։*

Հաճախ անորոշ դերբայով կազմված անդեմ նախադասությունը ընդհանուր կերպով ասված որևէ գործողության մանրա-

մասնումն ու մեկնաբանությունն է, որով խոսողը իր ըմբռնումով ճշտում, բացահայտում և միաժամանակ իր վերաբերմունքն է ցույց տալիս այդ ընդհանուր կարգով ասված գործողության հանդեպ. օրինակ՝ Ոչնչացնել հայրենի աշխարհը, ոչնչացնել հայրենի կրոնը... և Հայաստանի ավերակների վրա հիմնել պարսկական թագավորություն, ահա այս է այն գործը *(Ր, 3, 547)*։ Միայն մի իրավունք ուներ հիմա. նայել սիրած էակին, սպասել նրան ծառայելու որևէ առիթի և այնուհետև մեռնել *(ԴԴԵԺ,* IV, *311)*։ Եվ ինչ է սիրո իմաստը վերին, ինչ երջանկության խորհուրդը խորին. հալվել, միանալ, իրեն մոռանալ *(Թումանյան, «Դեպի անհունը»)*։ Ի՞նչ էր նրա արածը՝ նստել հիվանդի կողքին, լուռ ու մունջ նայել, դրստել նրա բարձը, ծածկել ճակատը, զարմանալի տոկունությամբ քշել ճանճերը, ցավալի ձայնով շշնջալ տանեցիների հետ... ախ ու վախ անել *(Լեո, 64)*։ Մի փրկություն կա միայն՝ սիրել, այրվել հավիտյան (*Տ.*, I, *259)*։ Կամենալ ապրել,— խոսեց նա յուրովի,— ահա չարիքի հավերժական արգանդը *(ԱԻԵ, 322)*։ Վեր կենալ և հեռանալ՝ այդ նշանակում է պարզապես փախչել *(Նար.,* II, *528)*։

Երբեմն անորոշ դերբայը կրկնվում է այդպես, այդքան, այդչափ *բառերով. կրկնության առաջին եզրը նշանակում է, թե գործողությունը (անորոշի արտահայտած) կարելի է կատարել կամ հաստատում է, որ կատարված է, իսկ երկրորդ եզրը ցույց է տալիս այդ գործողության արտակարգ լինելը. օրինակ՝* Ծեծել, բայց այդպես ծեծել: Լավ. վազել, բայց այդպես վազել: Խոսել խոսել, այդքան էլ խոսել *և այլն*։

Ծանոթություն.— Հնացած և գեղջկումի հետևանք է առածական հետևյալ դարձվածը. Բանը բանելով, նամփան քայլելով, որ նշանակում է բանը բանելով կվերջանա, ճամփան՝ քայլելով, կամ՝ բանը բանելով, էշը քշելով *(«Առածանի», 105)*։ *Համեմատիր նաև՝* Քավորը փոխել, մեռոնը կոխել:

Հազվադեպ անդեմ նախադասություն է կազմում հարակատար դերբայը. անորոշ դերբայը արտահայտում է ներկա կամ ապառնի ժամանակ, հարակատարը ցույց է տալիս անցյալ. օրինակ՝ Թքած, թքած նրա վրա։ —Թքած,— ասաց նույն համարձակ լեյտենանտը *(ԱՍԾՀ, 53)*։ Թքած փողի վրա. դու մարդու լավությունն ասա *(ԱԲԵ, 464)*։

2. ԱՆՎԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Միակազմ նախադասությունների մեջ առանձին տեղ է բռնում, այսպես կոչված, անվանական նախադասությունը, որ կազմված է մեկ գլխավոր անդամից. այդ գլխավոր անդամը գոյական է, կամ իբրև գոյական գործածվող խոսքի մաս, և կամ որևէ բառակապակցություն, որոնք կիրառվում են ուղղական հոլովով. օրինակ՝ Ամառ: Շոգ: Արև: Հրդեհ *և այլն: Այս նախադասություններն արտաբերվում են ձայնի հանգիստ իջեցումով և ոչ միայն անվանում են առարկան, այլև ցույց են տալիս, որ այն գոյություն ունի խոսելու պահին:*

Անվանական նախադասությունների հիմնական առանձնահատկությունն է, ուրեմն, որ ցույց են տալիս լինելիություն, գոյություն, որևէ բանի առկա լինելը և անվանում են առարկան: Երբ ասում ենք՝ Հրդեհ, *նշանակում է հրդեհ կա և դրանով հաստատվում է հրդեհ լինելու փաստը, նրա գոյությունը ներկա ժամանակի մեջ: Անվանական նախադասության կազմում որևէ ժամանակ չի նշվում, և, այսպես՝ կոչված, ներկա ժամանակը, որ նըշվեց իբրև անվանական նախադասության ժամանակ, պայմանական է և չպետք է ընդունել քերականական ժամանակի ըմբռնումով. հաճախ այդպիսի նախադասությունը ըմբռնվում է ժամանակից դուրս:*

Կան նախադասություններ էլ, որոնք նույնպես ցույց են տալիս լինելիություն, սակայն դրանք լինելիության հետ արտահայտում են համեմատություն, պնդում, սահմանում այս կամ այն քերականական ժամանակի մեջ, իսկ անվանական նախադասությունները սոսկ միայն լինելիություն են արտահայտում. տըրվյալ պահին, ուր միայն առկա է դատողության առարկան, իսկ դատողության ենթական չկա, որևէ բառով այն չի արտահայտված, կամ եթե քերականորեն ասենք, կա միայն մի գլխավոր անդամ, որ և ենթակա է, և ստորոգյալ:

Անվանական նախադասությունները ըստ իրենց բովանդակության բաժանվում են մի քանի տեսակների. դրանք արտահայտում են բնության երևույթներ, ժամանակի միավորներ՝ օրինակ՝ Առավոտ, գորշ, մռայլ երկինք *(ՎԹԵ, 132):* Փետրվար, մարտ, մայիս *(ԵՉԵ, 399):* Թիփի, բուք-բորան *(ՎԹԵ, 117):*

Անվանական նախադասություններ կարող են կազմել մեզ շրջապատող առարկաներ, ներքին հոգեկան ապրումներ և առ-

համարակ տարբեր երևույթներ. օրինակ՝ փոքրիկ մի նախախըրճիր, մի դույլ, մի քանի պղինձ և մի քանի կավե ամաններ *(ԳՄԵ, 429)*։ Տխրություն, ահ *(ԱԲԵ, 275)*։ Ձոր, վերելք, ոլորք *(ԴԴԵԺ,* VII, *7)*։ *Այս կարգի անվանական նախադասություններ առանձնապես շատ են գործածվում բեմերի ու զանազան հանդեսների նկարագրության մեջ. օրինակ՝* Հայելիներ, թղթախաղի ծալովի սեղաններ, հանգած լապտերներ, հանգած մոմերով կանդելաբրներ ու աշտանակներ, կենդանի ծաղիկներ *(ԳՍԵԺ,* I, *179)*։

Անվանական նախադասությունները արտահայտում են նաև խոսողի զգացումները, վերաբերմունքը անվանվող առարկայի հանդեպ. օրինակ՝ Այ գործ *(ԴԴԵԺ,* VII, *262)*։ Այ քեզ մեծ ժամ, լավ ժողովուրդ, փառքթամ քելեխ, հարգ, մեծարանք, հարըստություն, հանգիստ, հեշտ կյանք *(Թումանյան, «Պոետն ու մուսան»)*։

Անվանական նախադասությունը արտահայտում է նաև ցուցականություն. խոսողը տալով առարկայի անունը, միաժամանակ մատնանշում, ցույց է տալիս, ուշադրություն է հրավիրում։ Ցուցականություն արտահայտող նախադասությունները ուղեկցվում են ահա, ահա և *ցուցական բառերով. օրինակ՝* Ահա քաղաքը *(Հակոբյան)*։ Բայց ահա Կուզման *(ԴԴԵԺ,* I, *78)*։ Ահա բեմը, խորանը ահա, վարագույրն ահա *(ԵՉԵ, 303)*։ Եվ ահա հունիս, հուլիս... Եվ ահա սեպտեմբեր, հոկտեմբեր *(Նույն տեղում, 49)*։

Երբեմն իբրև ցուցական բառեր գործածվում են այ, այ տես, ահա քեզ, այ քեզ *բառերն ու կապակցությունները, ուր* քեզ, տես *կորցրել են իրենց բառական նշանակությունը և դարձել ձևական եղանակավորիչ բառեր. օրինակ՝* Ահա քեզ բախտ, ահա քեզ գեղեցկություն *(ՌՊԵ, 447)*։ Այ քաջին վայել մահ *(ՎԱՍԱ, 191)*։ Այ բան,— ասաց ծիծաղելով Ասատուր աղան *(Նույն տեղում, 445)*։ Այ քեզ ջրամբար,— իր հիացմունքը չկարողացավ պահել Կամոն *(ՎԱՍԱ, 532)*։ Այ քեզ բան: Այ գործ *(ԴԴԵԺ, 7, 262)*։ Ահա և ձեզ մատանու տերը *(ՎԱՍԱ, 190)*։ *Այս վերջին կապակցություններն անվանական նախադասությանը ոչ միայն ցուցականություն են հաղորդում, այլև խոսողի վերաբերմունքը, գնահատականը տվյալ անվանվող առարկայի վերաբերմամբ։*

Ահա, ահա և *ցուցական բառերով անվանական նախադասություններ են կազմում ոչ միայն գոյականները, այլև անձնական դերանունների ուղղական հոլովները. օրինակ՝* Ահա մենք, ահա

դուք *(ԴԴԵԺ,* III, *443)։* Ահա դու, ահա արքան *(Նույն տեղում,* *188)։* Ահա ես *(ԵՉԵ, 129)։*

Անվանական նախադասությունը արտահայտում է վտանգ և այդ վտանգից զգուշացում. օրինակ՝ Հեղե՜ղ։ Երկրաշա՜րժ։ Հրդե՜հ *և այլն։ Համեմատիր.* Ի՞նչ ես անելու, ինձ սպանե՞լ ես ուզում. օգնությո՜ւն, էհե՜յ, օգնություն *(Շեքս.,* I, *67)։* Մարդասպանություն, մարդասպանություն *(Նույն տեղում, 204)։*

Անվանական նախադասությունը արտահայտում է ցնծություն, հրճվանք այն դեպքում, երբ որևէ ուրախառիթ երևույթ, կատարված իրողություն է հաղորդվում. օրինակ՝ Ազատություն։ Ներում։ Վերադարձ։ Հաղթանակ *և այլն։*

Անվանական նախադասությունները լինում են համառոտ և ընդարձակ. համառոտ նախադասություն կազմվում է մի գլխավոր անդամից. օրինակ՝ Ձմեռ։ Ցուրտ։ Ձյուն։ *Համառոտ նախադասությունը իր հետ կարող է մի որևէ ցուցական բառ ունենալ. օրինակ՝* Այ մարդիկ։ Ահա քաղաքը։

Ընդարձակ նախադասությունը բացի գլխավոր անդամից ունենում է նաև սրան հարող որևէ լրացում. օրինակ՝ Անվերջ, անվերջ մարդիկ... Ու Բզնունյաց ծովը, ալիքների արծաթը *(ԴԴԵԺ,* IV, *563)։* Շանհայի փողոց *(Վշտունի)։*

Համառոտ անվանական նախադասությունները կազմվում են այնպիսի գոյականներից, որոնք առանձնապես արտահայտում են եղանակ, ժամանակ, բնության երևույթներ, վայրեր, առանձին առարկաներ. օրինակ՝ Ծառեր, երկինք, մշուշ *(ԴԴԵԺ,* IV, *563)։* Ամառ։ Կեսօր։ Գործադուլ։ Ցնցում *(Վշտունի)։* Շոգ։ Փոշի։ Խաղաղություն *(ԵՉԵ, 201)։* Փետրվար, մարտ, մայիս *(Նույն տեղում, 51)։* Շոգ։ Փոշի։ Կեղտոտություն *(ԳՄԵ, 399)։ Այսպիսի նախադասությունները հատուկ են նկարագրական ոճին և կիրառվում են պատմողական բնույթի գեղարվեստական նկարագրությունների մեջ։*

Ընդարձակ անվանական նախադասություններն ունենում են որևէ լրացում, այսինքն՝ որոշիչ, հատկացուցիչ կամ բացահայտիչ, որոնք կարող են լինել այլևայլ խոսքի մասեր. օրինակ՝ Խիստ կծու կատակ... *(Ր.,* III, *251)։* Անհույս հեռաստաններ, ձյունի անհուն ծով, ամայություն սրտամաշ *(ԴԴԵԺ,* IV, *469)։* Ամայի գյուղ... Գանգերի պես պարապ խրճիթներ *(Նույն տեղում,* I, *70)։* Փոքրիկ մի նախախրճիթ, մի դույլ, մի քանի պղինձ և մի քանի կավե ամաններ *(ԳՄԵ, 429)։* Անտառային լուսնահար գիշեր,

խորունկ վիթխարի գիշեր (*Նույն տեղում, 430*)։ Խաղացող բազմաթիվ կանայք, օրիորդներ (*ԳՍԵԺ*, II, *109*)։ Զինվորներ կարմիր։ Ծանր ու անձրևոտ օր (*ԳՄԵ, 372*)։

Հատկացուցիչ լրացում ունեցող, ընդարձակ անվանական նախադասությունները նույնպես սովորական են. մանավանդ հաճախ դրանք ուղեկցվում են նաև որոշիչներով, ըստ որում որոշիչը ոչ միայն կարող է վերաբերել գլխավոր անդամին, այլև հատկացուցիչին. օրինակ՝ Լեռնային երկրի երկար ձմեռ (*ԱԲԵ, 275*)։ Ամառվա փոշի (*ԵՉԵ, 37*)։ Բարդիների փոքրիկ պուրակ (*ԳՄԵ, 394*)։

Անվանական նախադասությունները ունենում են նաև բացահայտիչ լրացումներ, որոնք կարող են ուղեկցվել նաև բացահայտող հատուկ բառերով. օրինակ՝ Երևան։ Այսինքն՝ Նաիրի (*ԵՉԵ, 40*)։ Մարգարտի և Հեղինեի կացարանը՝ հասարակ սենյակ (*ԳՍԵԺ*, II, *303*)։ Տասնութ։ Թվական կյանքի։ Տասնութ։ Թվական *արի* (*ԵՉԵ, 49*)։

Վերոհիշյալ բոլոր նախադասությունները գերազանցապես դրական պատմողական նախադասություններ են, անվանական նախադասությունները միայն դրական են. բացի սրանցից լինում են նաև բացականչական ու հարցական անվանական նախադասություններ. օրինակ՝ Ճա՜ա՜ա՜շ (*ԴԴԵԺ*, I, *106*)։ Ճառե՞ր, հեռագի՞ր. Սո՞ւգ գուցե (*Նույն տեղում, 103*)։ *Բացականչական նախադասությունները արտաբերվում են բացականչական հնչերանգությամբ. ոչ միայն ցույց են տալիս լինելիություն, այլև արտահայտում են խոսողի վերաբերմունքը առարկայի կամ երևույթի նկատմամբ. օրինակ՝* Ի՜նչ մոնումենտալ (*գործածված է գոյականաբար*), հիացքով բացականչեց նա և գլուխը շարժեց (*ԴԴԵԺ*, VII, *8*)։

Անվանական նախադասությունը կրկնվելով ցույց է տալիս տվյալ անվանվող առարկայի շատությունը, անչափությունը, երևույթի խտությունը, զորությունը. օրինակ՝ Դեմքեր, դեմքեր, դեմքեր (*ԴԴԵԺ*, I, *85*)։ Կայարան։ Զորքեր։ Զորքեր (*ԵՉԵ, 50*)։ Բլուրներ, բլուրներ, մշուշ (*ԴԴԵԺ*, I, *77*)։ Պատերա՜զմ։ Պատերա՜զմ։ Պատերա՜զմ (*ԵՉԵ, 38*)։ Մահ։ Մահ։ Մահ։ Ընդհանուր, հանուր (*ԵՉԵ, 47*)։

Կրկնությունը հրավիրում է նաև լսողների ուշադրությունը անվանվող առարկայի վրա. օրինակ՝ Նվագողներ, նվագողներ,— բացականչեցին նրանք զվարթ ժպիտներով (*ԱԶՊԹ, 16*)։ Լա-

լազա՞րը, Լալազա՞րը,— ճրճվանքից կանչում էր Համիկը (ՎԱՍԱ, 532)։

Անվանական նախադասությունները հատուկ են միայն գեղարվեստական խոսքին, մինչդեռ գիտական ու հրապարակախոսական խոսքը պահանջում է մանրամասն վերլուծումներ, սահմանում, պատճառաբանություն, հիմնավորում և վերջապես պատճառա-հետևանքային տրամաբանական շղթայավորումներ, որոնք հատուկ չեն անվանական նախադասությանը։ Նույնիսկ գեղարվեստական խոսքի հեղինակներն անվանական նախադասության գործածության մեջ տարբերվում են, կան հեղինակներ, որոնք հաճախ են դիմում դրան և կան խույս տվողներ ևս. բոլոր դեպքերում անվանական նախադասությունների չափավոր կիրառությունը աշխուժություն ու բազմազանություն է բերում խոսքին, հնարավորություն է ստեղծում արագ անցումների՝ ընձեռելով նոր թեմատիկ հնարավորություններ, մանավանդ որ սովորաբար կիրառվում են պարբերությունների սկզբում։ Իսկ եթե դրանք չարաշահվում են, այսինքն՝ տեղի-անտեղի հեղինակը դիմում է անվանական նախադասության, խոսքը զրկվում է ամբողջական շարահյուսական միահյուսումից, առաջանում է կտրտվածություն, թուլանում է տրամաբանական կապը։

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՁԿԱԶՄՈՂ ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ ԴՐՎԱԾ ԲԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ

Մի շարք բառեր կապակցություններից դուրս գտնվելով, գործածվում են ուղղական հոլովով, սակայն չեն համարվում անվանական նախադասություն, որովհետև դրանց մեջ ներքին ստորոգում չկա, այլ առարկան հիշատակվում է իբրև թեմատիկ հիմք, որպեսզի հետո դրա մասին խոսվի և կամ թերի նախադասության մի որևէ անդամ է, որ կտրվել է բուն նախադասության շրջապատից և հաճախ անկախ կիրառություն է ձեռք բերել։ Այդպիսի բառեր են, այսպես կոչված, պատկերացման ուղղականը, ողջույնի արտահայտությունները, ծախու ապրանքների անվանումը՝ ծախելու նպատակով ձեռնարկությունների անուններ, գրքերի, նկարների ու այլ վերնագրեր, և այլ կարգի բառեր, որոնց մասին առանձին-առանձին խոսվում է ստորև։

Անվանական նախադասություն չի համարվում, այսպես կոչված, պատկերացման ուղղականով գործածված բառը, որը խոսողը

առաջ է բերում նախադասության սկզբում կամ վերջում, որպեսզի խնքը և խոսակիցը մի պահ պատկերացնեն իրենց մտքում տվյալ առարկան կամ երևույթը՝ դրական կամ բացասական առանձնահատկություններով, և կամ առաջ է բերվում, որպեսզի դրա մասին դատողություն արվի։ Պատկերացման ուղղականով գործածված գոյականը շարահյուսորեն չի կապակցվում նախադասության հետ, այլ տրվում է իբրև պատկերացման նյութ և արտաբերվում է բացականչական հնչերանգությամբ. օրինակ՝ ի դ ե ա՛ լ, ե ր ա՛ զ,— Բայց բնության ռեալականությունները գերազանցում են մարդկային ամենահամարձակ երազները *(Շիրվ.,* IX, *488)։* Քվինչի: Տարօրինակ մարդ է եղել այդ հույնը *(Նույն տեղում, 451)։* Գ ե ր ն ի կ ա յ ի ն վ ի ր ա կ ա ն կ ա ղ ն ի ն: Դուք գիտե՞ք նրա մասին արդյոք, լսա՞ծ չեք նրա անունը *(ԱԻԵ, 261)։* Միսաք Մեծարենց... մեղմ, անուշ բանաստեղծ է *(ԳՄԵՍ, 252)։*

Տ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Ժողովրդական խոսքի մեջ պատկերացման ուղղականի կիրառությունը շատ տարածված է հետևյալ ձևերով Ծով, մեկ էլ սաս ծով: Քաղաք, քո տիրոջ տունը չքանդվի, ոչ տակ ունի, ոչ ծեր: Շոզ, շոզ սաիր, պրծար *և այլն։*

Ինչպես երևում է օրինակներից, պատկերացման ուղղականը կիրառվում է նախադասության սկզբում, սակայն բացառված չէ նաև այդպիսի ուղղականը նախադասության վերջում. օրինակ՝ Եվ կարդում էի ապազայի ոսկետառ գիրքը, որ էջ առ էջ բացվում էր հիացմունքով վառված աչքերիս առաջ: Ապագա — չըքնաղ սպասելիքների, ադամանդյա հույսերի անծայր Ծիր-կաթին (*ԱԻԵ, 223)։*

Պատկերացման ուղղականը կարող է կապակցվել նախորդ նախադասությանը բայց, իսկ *շաղկապների միջոցով. օրինակ՝* Նրանց դեռահաս որդիները կսկսեն ավել ածել պարսից արքունիքի մարմարյա սալահատակի վրա... բայց իմ կինը... իմ որդին *(ՐԵԺ,* VII, *236)։* Օհանեսը՝ ոնց որ ջուր և օդ պառավի համար, Մխոն օր ու արև... իսկ Գևորգը... *(ԳՄԵՍ, 428)։*

Անվանական նախադասություն չեն նաև այն գոյականները, որոնք հայտարարվում են իբրև վաճառվող ապրանքների անուններ։ Սրանք կարելի կլինի դիտել իբրև թերի նախադասություններ, որոնք ոչ թե ուղղական հոլովով են գործածված, այլ ավելի շուտ

հայցական։ Երբ մածուն վաճառողը կանչում է մածուն, մածուն, *այդ նշանակում է, թե՝* մածուն եմ ծախում, *և կամ* մածուն գնեցեք: *Բայց անվանվող գոյականը իբրև խնդիր այնպես է անջատվել իր բառական միջավայրից, որ բոլորովին մթագնվել է։ Համեմատիր՝ Թումանյանի հետևյալ օրինակը.* Հե՜յ, լավ մանրունք, Ասեղ, հուլունք, Մատնիք, մարջան, Ապարանջան *(«Թագավորն ու չարչին»)։* Կամ՝ Թամամշևի քարվանսարան է, որի առաջ աղմկում են կոշիկ մաքրողներն ու թերթ վաճառողները: «Մշակ»..., «Վան-Տոսպ», «Հորիզոն»... *(ԳՄԵՍ, 209)։*

Անվանական նախադասություններ չեն կարող համարվել նաև ողջույնի փոխադարձ արտահայտությունները, որոնք նույնպես հին նախադասությունների թերի մնացած անդամներ են, որոնց կապերն ու շղթայակցումները դարձյալ խիստ մթագնված են. այսպես, օրինակ, մեկը գալիս և ասում է՝ ողջույն, *դա նշանակում է կամ՝* թող ողջույն լինի կամ ողջույն եմ տալիս. *այս առավել զգալի է, երբ հաճախ ողջույնի բառերի հետ կիրառվում են երկրորդ դեմքի անձնական դերանուններ. օրինակ՝*

Բարև ձեզ *կապակցությունը սկզբնապես եղել է՝* բարիով տեսանք ձեզ, կամ բարիով հանդիպեցինք ձեզ։ *Այսպես էլ ողջույնի մյուս արտահայտությունները։ Համեմատիր հետևյալ նախադասությունները.* Ողջույն, սիրելի Համազասպունի... ես կարծում էի, որ դու քնած կլինես *(ՐԵԺ,* VII, *290)։* Բարի օր, Հաքամի աղջիկ... *(ԱԲԵ, 13)։* Բարաջողում, ուստա Փիտ *(Թումանյան, «Շունն ու կատուն»)։* Բարով, Դավիթ, հոգնած ես դեռ *(Թումանյան, «Սասունցի Դավիթ»)։* Ցտեսություն,— ասացին նրանք: Ցըտեսություն,— արձագանքեցի ես *(ԳՄԵՍ; 387)։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. — Թերևս նախադասություն համարվեն ցտեսություն *և* ներողություն *բառերը, որոնք ավելի մոտ են բառ-նախադասություններին։ Այս երկու բառերը շատ են հեռացել իրենց բառական միջավայրից և ձեռք են բերել անկախ գործածություն։*

Անվանական նախադասություն չեն համարվում նաև ուղղական հոլովով կիրառվող այնպիսի գոյականները, որոնք հաղորդում կամ հաստատում են նախընթաց պնդումը։ Դրանք լրացուցիչ մեկնաբանություններ են, որոնք նախադասությունից դուրս են գտնվում. օրինակ՝ Պա՜հ, չես ճանաչում,—բացականչեց նա անկեղծ զարմանքով,— Թույանը չե՞մ, Ռուբեն Թույանը...

—Հա, հա. հենց ինքը Սատանի հուտը *(Նար., II, 463)։ Այստեղ* հենց ինքը սատանի հուտը *պնդում կամ հաստատում է նախորդ հարցումը և կամ պատասխանի համար լրացուցիչ մեկնաբանություն է։* Անճավասիկ քեզ մի ուրիշ ապացույց, որ ես ընկել եմ մեռելների աշխարհը… Ռեստորան, գիշեր և տորիչելյան դատարկություն *(Նույն տեղում, 466)։ Այս նախադասության մեջ* ռեստորան, գիշեր *բառերը անվանական նախադասություններ են, որով-հետև արտահայտում են լինելիություն անկախ որևէ բանից, իսկ* տորիչելյան դատարկություն *անվանական նախադասություն չէ հետևյալ երկու պատճառով. նախ այդ կարող է լինել լրացուցիչ մեկնաբանություն* մեռելների աշխարհը *կապակցության և երկրորդ՝ պնդում է, սահմանում, այսինքն՝* կա ռեստորան, *բայց դա տորիչելյան դատարկություն է։*

Երբեմն նկարագրված նախորդ երևույթներն ու դեպքերը գնահատվում են ուղղական հոլովով դրված մի բառով կամ բառակապակցությամբ, որ նույնպես անվանական նախադասություն չէ. օրինակ՝ Սողոմոնս էլ մոռանում է աղա, պարտք, անճարություն, արյունը գլխին է խփում և այնպիսի հարված հասցնում աղային, որ սա ետ-ետ է գնում ու խանութի գետինը չափելու պառկում… մի խառնաշփոթ, մի աղաղակ *(Փափ., 102)։* Վաշխառուն ուզեց գոռալ, բայց դաշույնը մոռեցավ կոկորդին. նա լռեց և սկսեց արտասվել: —Հրեշային արցունքներ *(Նույն տեղում)։* Ճչաց ու վեր թռավ: Այս անգամ զարթնեց, վեր կացավ ու նստեց: —Ո՜հ, սոսկալի երազ *(Փափ., 18)։* Իրեր, խլված մի հեքիաթային վայրենի, հարուստ, առելի երկրի բնակիչներից՝ տարհանակների, գնդացիրների, հրդեհների: Ճարճատյունների մեջ… Երջանիկ կողոպուտ *(ԴԴԵԺ,* II, *453)։* Ութսուն ռուբլի, ճրի բնակարան, ավելի մաքուր օդ անդամալույծ եղբոր համար և որ ամենագլխավորն է, հեռու Միքայելից. Ահա անսպասելի բախտ *(ՇԵԺ,* III, *111)։* Հետո՝ տատիկն էլ համարյա կույր էր, բավական խուլ, բավական խարխուլ մի շինվածք: Կզար՝ կմնար ճանապարհին… սոսկալի տեսարան *(ԴԴԵԺ,* II, *454)։*

Երբեմն ավյալ անվանվող առարկան դառնալով ասվելիքի կամ ասվածի ընդհանուր գնահատականը, ինքն էլ իր հերթին դիտվում է դրական կամ հեգնական առումով, հաճախ ուղեկցելով այ, այ ինչ եմ ասել, այ քեզ *եղանակավորիչներով. օրինակ՝* Այ ընտիր հեծելազոր,— մտածեց Սրտակը շոյող հայացքը պառեցնելով տղաների վրա *(ԴԴԵԺ,* III, *137)։* Օ՜, երկիր, երկիր… կանչիր,

գլխին տուր, առ կեր... Այ քեզ բարքեր *(ԵՉԵ, 76)։* Գործ է, այ ինչ եմ ասել։ Վա՜հ, սա որտեղից դուրս եկավ, այ լավ նախանաշիկ,— մտածեց աղվեսը ու վազեց *(Թ.,* III, *141)։* Այ երկիր... Ապրանքդ ազատ բաց թող ու հանգիստ գնա քու գործին *(Նույն տեղում, 112)։* Բանաստե՞ղծ, տո բանաստեղծը ես եմ, ես *(ԱԻԵ, 216)։ Այսպիսի բառերը նույնպես անվանական նախադասություններ չեն։*

Երբեմն ուղղական հոլովով գործածվող բառերը ընդհանուր կերպով ասված որևէ գոյականի մանրամասնումն են՝ թվարկված իբրև այդ ընդհանուրի առանձին մասեր. օրինակ՝ Գիտե՞ք, սիրելի ընկեր, ես շատ եմ սիրում ձմեռային տեսարաններ... Ձմեռ... ձյուն... մի փոքրիկ խրճիթ... խարույկ... լուսին... *(ԵՉԵ, 411)։ Այսպիսի թվարկումները նույնպես անվանական նախադասություններ չեն։* Եվ պատմությունը նույնն է լինում՝ կոտրած, կոտրած, կոտրած։ Բռնաբարված կին, կոտրած երեխաներ ու փախուստ, օտարություն, մուրացկանի վիճակ *(Նույն տեղում, 303)։*

Անվանական նախադասություն չեն համարվում նաև ուղղական հոլովով կիրառվող այնպիսի բառերը, որոնք խոսակցի կողմից հարցվում են իբրև խոսողի կողմից թվարկվող նույնատիպ գոյականներին համազոր՝ իմանալու համար, թե պատկանու՞մ է արդյոք սա էլ նրանց շարքին, նմա՞ն է նրանց թե ոչ, կամ ուզում է իմանալ, թե այդ շարքում գտնվող մի այլը ինչ եղավ, ինչպես է և այլն. օրինակ՝ Ժամանակակից երկու մեծ բանաստեղծներ՝ Վահան Տերյանը և Չարենցը *բոլշևիկներ են։* —Իսկ Թումանյա՞նը,— հարցրի ես *(ԳՄԵՍ, 302)։* Իսկ Զիբուխլո՞ւն, Սևա՞նը—նրանք դարձյալ մնացին իրենց տեղն անշարժ, անփոփոխ *(Մուր.,* V, *177)։* Նա այն խեղճ մարդուն՝ Զաքարին կթշվառացնի... Իսկ Արամի՞կը *(Նար.,* III, *326)։*

Անվանական նախադասությունների հետ չպետք է շփոթել ուղղական հոլովով գործածվող անուն-ազգանունները, որոնցով մեկը ներկայանում կամ ներկայացվում է մեկ ուրիշին ծանոթանալու կամ ծանոթացվելու նպատակով։ Սրանք թերի նախադասություններ են ստորոգյալի համարժեքով. երբ մեկը իր ազգանունը տալիս է, ուզում է ասել՝ ես այսինչն եմ։ *Ուրեմն այդպիսի բառերը ստորոգյալներ են՝ կրճատված ենթակայով, որոնք են* ես, դու, սա, այս, անուն. *օրինակ՝* Ընկեր Բելոգուրով և ընկեր Եֆիմ Բրավելման,— ներկայացնում է իմ անփոխարինելի չիչերոնեն՝

թենժամենը *(ԵՉԵ, 411)*։ Հայ ե՞ս... Սարգիս, ներկայացավ նա։ Ես ուրախացած սեղմեցի նրա ձեռքը,— հայ եմ, Գուրգեն *(ԳՄԵՍ, 271)*։ Ծանյան... Լևո՞ն,— բացականչեց նա... հա՜, հա՜, Բազենյան, վրա զցեց նրան իր անակնկալ բարեկամը *(Նար., III, 215)*։

Անվանական նախադասություն չեն համարվում ուղղական հոլովով կիրառվող այնպիսի գոյականները, որոնք բացականչական հնչերանգությամբ նախադասության սկզբում դառնում են հետագա ասվելիքի համար իբրև թեմա, նյութ. օրինակ՝ Թագավո՛ր, ես երկար մտածում եմ, թե ինչ բան է թագավորը *(ՍԶՄԿՊ, 28)*։ Քաղա՜ք... մի հարցնող լինի, թե ինչ կա էդ պրիշշակում *(ԱԲԵ, 481)*։ Մի խավար ներքնատուն. դա էր նրա խանութը *(ԴԴԵԺ, I, 61)*։ Ան միամիտ հիմարություններ և մարդկային անհատական կեղծություն, *որ մի անգամով փշրել է նրա մեջ և հավատք, և սեր (Փափ., 411)*։ Նվիրական վայրե՜ր, ուր անցան իմ մանկությունը և պատանեկության առաջին տարիները *(ԱԻԵ, 248)*։

Հաճախ որևէ առարկա բնութագրող կամ հատկանշող այնպիսի բառեր են գործածվում նախադասությունից հետո, որոնք պետք է որևէ շաղկապով կամ ստորոգումով կապակցվեին նախորդ նախադասության հետ իբրև նրան համազոր և կամ իբրև լրացուցիչ երկրորդական նախադասություններ, սակայն ուղղական հոլովով դրված այդպիսի բառերը նույնպես անվանական նախադասություններ չեն, ավելի շուտ դրանք ստորոգյալ են զեղչված հանգույցով. օրինակ՝ Բայց ի՞նչ ներքնատուն. ծակուռ, մկան բույն *(ԴԴԵԺ, I, 61)*։ Ցերեկը դռնից դեպի ցած նայողը մթան մեջ հազիվ կնշմարեր իրեն՝ խանութպանին... Դեղնած մումիա, չոր տառեխ *(նույն տեղում)*։ Ա՜յ աղջիկներ, թամամ հրեշտակ *(ԱԲԵ, 495)*։

Անվանական նախադասություններ չեն համարվում նաև ձեռնարկությունների անվանումները, գրքերի, նկարների և այլ առարկաների վերնագրերը, աշխարհագրական անունները և այլն։ Դրանք պարզ անվանումներ են և չունեն ստորոգում. օրինակ՝ Ես կառքի լապտերի աղոտ լույսի ներքո կարդացի ձախ կողմից փակցրած ցուցանակը. —ՆԳԺԿ Հանրապետական ուղղիչ տուն *(ԵՉԵ, 397)*։ «Ղարաքիլիսա» կայարան *(ԳՄԵ, 418)*։ Գիլանենց Պետրոս դի Սարգիս: Ժամանակագրութիւն *1722—1723 (ՐԵԺ,* X. *384)*։ «Լա-

գիժնի սառը ջրեր»... «Լիմոնադ» *(ԳՄԵ, 210)*։ Թատրոնի ռեպերտուարը ուշադրություն էր գրավում իր խայտաճամուկությամբ։ «Արշին-մալ-ալան», «Տրիլբի», «Ուշ լինի, նուշ լինի» *և* «Քին», «Թաքոս Իվանիչ» *և Արցիբաշևի՝* «Խանդը», «Աշուղ Ղարիբ» *և* «Դավաճանություն» *(նույն տեղում, 297)*։

3. ԲԱՌ-ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բառ-նախադասություն են կոչվում այնպիսի բառերը կամ առանձին մասերի չբաժանվող ամբողջական բառակապակցությունները, որոնք լրացումներ չեն ընդունում և արտահայտում են ժխտում կամ հաստատում, համաձայնություն ու անհամաձայնություն, դրդում, եղանակային ու արտահայտչական գնահատություն ամբողջ նախորդ ասվածի։ Այդպիսի բառ-նախադասություններ են պատասխանական բառերը՝ այո, ոչ, հա, չէ, *եղանակավորիչ որոշ բառեր ու ձայնարկություններ կամ սրանց դերը կատարող այլ բառեր։ Ուրեմն բառ-նախադասությունները լրացումներ չեն ընդունում, այլ նախադասության անդամ չեն դառնում և բաղկացուցիչ մասերի չեն բաժանվում։ Բառ-նախադասությունները կիրառվում են հատկապես հարց ու պատասխանական երկխոսությունների մեջ։*

Բառ-նախադասություններն ըստ իրենց բնույթի բաժանվում են չորս խմբի. հաստատական, ժխտական. *սրանք կիրառվում են հարց ու պատասխան երկխոսությունների մեջ և ցույց են տալիս հաստատում կամ ժխտում, համաձայնություն կամ անհամաձայնություն ասվածի նկատմամբ։ Հաստատական և ժխտական բառ-նախադասությունները արտահայտվում են դրական ու ժխտական եղանակավորիչ բառերով կամ* ոչինչ *ոչ-լիակատար համաձայնություն արտահայտող եղանակավորիչ բառերով։ Երկրորդ խմբի մեջ մտնում են* հարցական *բառ-նախադասությունները, որոնք արտաբերվում են որոշակի հարցական հնչերանգությամբ, երրորդ խմբին պատկանում են* հորդորական, *իսկ չորրորդին՝* արտահայտչական *բառ-նախադասությունները։ Այժմ սրանք քննենք առանձին-առանձին։*

Ա. ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԲԱՌ-ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հաստատական բառ-նախադասությունը կամ հարցի դրական պատասխանն է և կամ համաձայնություն է ասվածի նկատմամբ։ Հաստատական բառ-նախադասություններն ունեն երեք ենթատե-

ռակ՝ բուն հաստատական, համաձայնության և մերժողական *բառ-նախադասություն։*

Բուն հաստատական *նախադասությունը դրված հարցի ուղղակի հաստատական պատասխանն է, որն արտահայտվում է* այո, հա, ինչպես չէ, իհարկե, անշուշտ, լավ, հապա (բա) ինչպես (ոնց), հարկավ, այն էլ ինչպես, այն էլ ոնց, ոնց չէ *և այլ եղանակավորիչ բառերով. օրինակ՝* Քնում ես: —Հա *(Թ., III, 85)։* Սիմոն, թղթերը դու տեսա՞ր... Բա ոնց *(ԱԲԵ, 532)։* Ջայ չունե՞ք,— հարցրեց մորը... —Հա, ոնց չէ,— հեզնեց պառավը *(Նար., I, 80)։* Ձեր տունն այդքան մո՞տ է: —Հա. ես երկրորդ եղբորս՝ Հարեթին ա, հետո մերը *(Փափ., 123)։* Իսկ դուք սիրո՞ւմ եք բանաստեղծություններ,— հարցրեց ինձ բանաստեղծի ընկերը: —Այո: Գրո՞ւմ եք: —Այո *(ԳՄԵՄ, 304—305)։* —Շա՞տ երեխա ունես: —Ինչպես չէ *(Թ., III, 244)։*

Տ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Երբեմն դրական պատասխանը ուղղակի այո *կամ* հա *բառով չի արտահայտվում, այլ մի երևույթ ժխտում է, որ իբրև հակադրություն նախորդին հաստատում է այդ նախորդը կամ ժխտական հարցով է արտահայտվում. օրինակ՝* Է՞դ է երջանկությունը: —Ուրիշ ոչինչ *(Թ.,* III, *228)։* —Կարող ես այդ նամակը ինձ մոտ թողնել: —Ինչո՞ւ չէ *(Ր.,* VII, *132)։*

Համաձայնության *բառ-նախադասությունը չի հանդիսանում հարցի ուղղակի դրական պատասխանը, այլ արտահայտում է ասվածի նկատմամբ խոսակցի համաձայնությունը, այսինքն՝ խոսակիցը բառ-նախադասությամբ ընդունում է ասվածի ճշմարտությունը և կամ տալիս է իր համաձայնությունը։ Համաձայնության բառ-նախադասություններ են դառնում* լավ, անշուշտ, շատ լավ, հա, այո, հա է, իհարկե *և այլն։ Օրինակ՝* —Թույլ չենք տա, որ մեզ ածուխի պես սևացնեն: —Ա ն շ ու շ տ, թե չէ ածխագործ կդառնանք *(Շեքս.,* I, *411)։* —Կանցիլարը շուտկի տեղ չի, —զայրացած պատասխանեց Անտոնը: —Հ ա, լ ա վ... ռապորտը գրի *(ԱԲԵ, 543)։* Երեկոյան եղա Թումանյանի մոտ և հիացմունքս հայտնեցի Վահանի բանաստեղծությունների նկատմամբ: —Հ ա՛ է՜, շատ դրուստ ես ասում: *(ԱԻԵ, 392)։* Հ ա, քո ասածն է, Ավան ամի *(ԱԲԵ, 489)։* —Հ ա, որ եդպես ես ասում, ոչինչ, կգընանք, ինչ ես վռազում *(Թ.,* III, *153)։* Լ ա վ, որ գնաք թաղեք, ետ կգա՞ք գործը շարունակելու... *(Նար.,* I, *273)։* Շ ա տ լ ա վ:

Չի՞ լինի, որ ամենքդ չգնաք *(նույն տեղում)*։ Բարությո՞ւնը... Հա, եդ ճարցում Հենց ես էլ եմ եդպես կարծում *(Թումանյան, «Անբուն կկուն»)*։ Այո, ճիշտ ես ասում, ամեն ինչ լավ կգնա։

Համաձայնության բառ-նախադասությունը, ինչպես երևում է օրինակներից, կարող է արտահայտվել ոչ միայն մի բառով, այլև մեկից ավելի բառերով, կամ միևնույն բառի կրկնությամբ, որոնք համաձայնությունը ավելի որոշակի են դարձնում. համեմատիր՝ Չէ՞ որ ես կարող եմ քաշ ընկնել ու խեղդվել։ —Այո, իհարկե։ *(ՇԵԺ,* VII, *387)*։ Եվ լեզուդ էլ կարող է այսչափ դուրս ընկնել, այ։ —Իհարկե, իհարկե *(նույն տեղում)*։ Լավ չի, մի սպասացնիլ. կեսօր կդառնա, մարդիկ խեղճ են, գործեր ունին։ —Բաս լավ. գնա օթախս տար՝ գալիս եմ *(Փափ., 598)*։ Շատ սիրուն աղջիկ է... —Այո, այո, ճռճռաց գեներալը *(ՌՊԵ, 412)*։

Մեծախոսական *հաստատական բառ-նախադասությունը, որ հեղինակը կամ գործող անձինք կիրառում են իրենց խոսքի մեջ, ունի հուզարտահայտչական նշանակություն, որով խոսողը իր խոսքին երկախոսության բնույթ է տալիս և հենց դրանով կենդանացնում է այն, միաժամանակ խոսքի մեջ դնելով համոզչություն, վճռականություն. օրինակ՝* —Այո... Դա մի փոքր պատահմունք էր, բայց ուժգին ցնցեց ինձ։ Այո, այո, նա իր ներքին կյանքն ունի, խորհում է, իսկ մենք անցնում ենք կողքից *(ԴԴԵԺ,* II, *273)*։ Այո, ճորս հետ գալիս են Ձիկ և Կարեն զորապետները *(ՐԵԺ,* VII, *119)*։ Անտեղյակներին կշշմեցներ, այո և նույնիսկ աչք ու ականջի ունակությունը կխառնաշփոթեր *(Շեքս.,* I, *46)*։

Բ. ԺԽՏԱԿԱՆ ԲԱՌ-ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ժխտական բառ-նախադասությունը ի հակադրություն հաստատականի, ցույց է տալիս խոսակցի ժխտական պատասխանը խոսողի հարցումին, անհամաձայնությունը նրա խոսքի նկատմամբ և ժխտում կամ անհամաձայնություն է հենց իր՝ խոսողի մենախոսության մեջ արտահայտված մտքերի ու ասվածի։ Հաստատական բառ-նախադասության նման ժխտական բառ-նախադասությունը նույնպես բաժանվում է երեք ենթատեսակի՝ բուն ժխտական բառ-նախադասություն, որ ուղղակի բացասական պատասխան է դիմացինի հարցումին, անհամաձայնության բառ-նա-

խադասություն, որ արտահայտում է անհամաձայնություն խոսողի ասվածի նկատմամբ և վերջապես մենախոսական ժխտական բառ-նախադասություն, որ բացասում է հենց իր խոսողի ասածը։

Բուն ժխտական *բառ-նախադասությունը, ինչպես ասվեց, դիմացի կամ խոսակցի հարցի բացասական պատասխանն է, որ արտահայտվում է* ոչ, չէ *բառերով. օրինակ՝* Ու կամաց հարցրեց,— հո քեզ չտեսա՞ն... —Չէ *(ԱԲԵ, 521)։* —Դո՞ւ ես հիվանդը։ —Չէ, էնտեղ սարը մի սրտակից ունեմ *(ԴԴԵԺ,* I, *286)* —Դուք ուրեմն ժողովրդի թշնամի՞ն եք։ —Ոչ, բարեկամը *(Մուր.,* V, *255)։* Հա, ի՞նչ ես որոշում, համաձայնո՞ւմ ես թե ոչ։ Նա գլուխը բարձրացնելով վճռաբար պատասխանեց։ —Ոչ *(Նույն տեղում, 256)։* Մերոնք տա՞նն են։ —Տղամարդիկ՝ ոչ *(Շիրվանզադե,* VII, *287)։*

Անհամաձայնության *բառ-նախադասությունը հարցի բացասական պատասխանը չէ, այլ խոսողներից մեկի բացասումն է կամ մերժումը մյուսի խոսքի բովանդակության, պնդման ճշտության, որ արտահայտվում է պատմողական բնույթի խոսքի մեջ։ Անհամաձայնության բառ-նախադասություն են կազմում* ոչ, չէ *ժխտականները. օրինակ՝* Ապա, տանուտեր, առ մեկ այս... շնորհավորիր, աչքալուսանք արա... —Չէ, շնորհակալ եմ *(Փափ., 572)։* —Այո, ես բժիշկ չեմ՝ ուզում եք ասել, այսինքն՝ պետքական բժիշկ։ —Ոչ, ինչո՞ւ այդպես *(ԴԴԵԺ,* II, *240)։* Եթե հիվանդ ես, պիտի բժիշկ հրավիրել։ —Ոչ, հարկավոր չէ *(ՇԵԺ,* VI, *131)։* Գիտեմ՝ որն է այդ ուժը։ Բռնությունը, որի օգնության արդեն սկսել եք դիմել։ —Ոչ, դեռ չեմ սկսել *(Նույն տեղում, 195)։* —Մարի, ես քեզ շատ եմ սիրում... —Չէ, Միքայել, եթե դու ինձ սիրեիր, ինձ տիրելու համար չարագործություն ևս հանձն կառնեիր *(ՌԳԵ, 367)։*

Անհամաձայնության ժխտական բառ-նախադասություն են նաև հազիվ թե, դժվար թե, քավ լիցի, *որոնք արտահայտում են կասկած, անվճռականություն ժխտման և ընդունման նկատմամբ։* Քավ լիցի։ Չեմ ուզում ձեզ մյուս ծառաներիս կարգում դասել *(Շեքս.,* I, *39)։* Իսկ նա իրենից բացի կյանքում սիրե՞լ է որևէ մեկին. հ ա զ ի վ թ ե *(ԲՎԻԳԵ, 51)։*

Մենախոսության *ժխտական բառ-նախադասությունը արտահայտում է խոսողի առարկությունը իր սեփական մտածումների ու խոսքերի նկատմամբ. օրինակ՝ Նա դեռ նայում էր արձանի վրա։* Նա դեռ մաքառում էր, մաքառում էր յուր սրտի ու զգացմունքների հետ։ —Ոչ... հազար անգամ ո չ... ես մեղավոր չեմ...—

բացագանչեց նա... *(Ր., III, 253)*։ Բ ա յ ց ո չ. ինչ էլ լինի, այնուամենայնիվ նա չի՞ ստում կարկաչն այս բարբառի *(ԵՉԵ, 248)*։ Ո չ, չի ստում բարբառը.— անավասիկ զարնան հեղեղների նման որոտում է իր դեմ *(Նույն տեղում)*։ Ո չ, ո չ, դու փրկիչ չես, ով դժնատեսիլ մահ, ես քեզ ատում եմ *(ԱԻԵ, 306)*։ Մարդը չէ հիացնում ինձ. ո չ, ոչ էլ կինը *(Շեքս., I, 40)*։

Բացի վերևում նշված երեք ենթատեսակ բառ-նախադասություններից կա բառ-նախադասության մի տեսակ ևս, որ արտահայտում է անորոշ պատասխան և կամ ցույց է տալիս, որ պատասխանողը չունի հարցման և կամ խոսքի բովանդակության վերաբերյալ որևէ հաստատական կամ ժխտական հիմունք. և կամ խուսափում է որոշակի պատասխանից։ Այսպիսի բառ-նախադասությունները գրսևորվում են եսիմ *(բարբառային),* ոչինչ *բառերով. օրինակ՝* —Սիմոն, բա լսում չե՞ս... Քեզ եմ ասում... գլխի չե՞ս... —Ե ս ի մ... նրեն ասում է էլի *(ԱԲԵ, 489)*։ —Ի՞նչ... Սրբաշենցիք... Չէ. ինչի՞ որ... —Ո չ ի ն չ *(Փափ., 598)*։ —Ո՞ւր է է՛ էն նարսը։ —Ե ս ի մ։ Կնանոնց ժողով ա *(ԱԲԵ, 89)*։

Երբեմն հաստատական կամ համաձայնության բառ-նախադասությունը արտահայտվում է չէ, ոչ *ժխտականներով, իսկ ընդհակառակը ժխտական բառ-նախադասությունները՝* հա, այո *հաստատականներով.* —Թե որ սուտ եմ ասում, թագավորությանդ կեսը տուր։ —Չէ, չ է, ճշմարիտ ես ասում,— խոսքը փոխում է թագավորը *(Թ., III, 143)*։ —Չ է, ես անգամ մը լավ ես, խելոքանում ես... դե գնա, բեզարած կլինես *(ԱԲԵ, 482)*։ —Դու չե՞ս ուզում, որ քեզ համբուրեմ։ —Ա յ ո, չեմ ուզում *(ՇԵԺ, VI, 130)*։

Գ. ՀԱՐՑԱԿԱՆ ԲԱՌ-ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հարցական բառ-նախադասությունը արտահայտվում է այո՞, ո՞չ, չէ՞, մի՞թե, հա՞, ոչի՞նչ, ճի՞շտ *և այլ բառերով, որոնք ցույց են տալիս խոսողի կամ խոսակցի ցանկությունը լրացուցիչ կերպով իմանալու ասվածի վերաբերյալ մյուսի վերաբերմունքը, լրացուցիչ հավաստիացում, զարմացում և այլն, օրինակ՝* Հը՞, գող անիծած, դու ես կերել իմ պանիրն ու բաղարջը, հ ա՞ *(Թ., III, 144)*։ Բաս մեկ լավ քեֆ ենք անում այս երեկո, հ ա՞, Հոռոմսիմ *(Փափ., 573)*։ Քո տղեդ էլ հետները եկած կլինի։ Հ ա՞, եկա՞ծ կլինի *(ԴԴԵԺ, I, 216)*։ Գիտե՞ս, Վարսիկ, քույրդ շատ խելացի աղջիկ է։ —Այո՞ *(Նույն տեղում, II, 334)*։ Լավ բան է, չ է՞, միլիարդատերի

քրոջ աղջկա սկեսուրը լինել, չէ՞ (*ՇԵԺ*, VII, *415*)։ Մի՞թե: Ես այդ չգիտեի (*Նույն տեղում*, *407*)։ Ղազարոսը Օդեսայից եկել է,— ասում է,— հետն էլ աղջիկը,— ասում է: «Ի, ճի՞շտ,— ասում եմ» (*ՌԳԵ*, *607*)։ Կատարը մեռավ, հա՞ (*Նույն տեղում*, *601*)։

Դ. ՀՈՐԴՈՐԱԿԱՆ ԲԱՌ-ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հորդորական բառ-նախադասությունը արտահայտվում է այնպիսի եղանակավորիչ բառերով ու ձայնարկություններով, որոնք դրդում, հորդորում են որևէ գործողության. օրինակ՝ Է, հերիք է, դադար (*ԴԴԵԺ*, II, *189*)։ Ապա, ապա: Երգիր դա (*Նույն տեղում*, *202*)։ Դե, բալիկ ջան, գնանք (*Նույն տեղում*, *258*)։ Ապա, քեզ հետ մեկ խմենք, շնորհավորենք (*Փափ.*, *569*), դե լավ, հոգս մի՛ անիլ, ես քեզ նեղություն տվողը չեմ (*Նույն տեղում*, *574*)։ Օն ուրեմն, հառաջ, նետաձիգ քաջեր: Օ՜ն անդր, ի զե՜ն, գոռաց խռպոտ ձայնով և սուրը հանելով վազեց դեպի առաջ (*Մուր.*, III, *329*)։ Դե, հայդե, գնաս բարով (*Թ.*, III, *208*)։ Դե շուտ, հայդե (*ՉԸԵ*, *66*)։ Հայդե, դուրս կորիր (*Շեքս.*, I, *184*)։ Դեհ, կորիր, քանի որ սատանան ինձ չի հաղթել (*ՇԵԺ*, VI, *304*)։

Ե. ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ԲԱՌ-ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Արտահայտչական բառ-նախադասությունը արտահայտում է տվյալ ասածի նկատմամբ խոսողի կամ խոսակցի արտահայտչական վերաբերմունքը կամ հուզարտահայտչական գնահատությունը։ Արտահայտչական բառ-նախադասությունը ձևավորվում է ձայնարկություններով կամ դրանց մոտիկ բառերով. օրինակ՝ բայց որ շներ դուրս գան հանկա՞րծ: Շնե՞ր... հը, հը... Դու անհոգ կաց (*Թումանյան, «Անբան կկուն»*)։ Բա անտեր ես թողնում, գնում: —Վահ, ինչո՞ւ ես անտեր մնում (*Նույն տեղում*)։ —Էհ, ինչ որ է: Աստված խնայել է՝ սպանել չեն... (*ՍԶԵԺ*, II, *479*)։ —Ա՛յ, էդ խոսք է (*Թումանյան*)։ Օհ, թուհ: Ամուր կաց, ամուր կաց, սիրտ իմ (*Շեքս.*, I, *25*)։ Էդպես... տղադ էլ եկավ (*Փափ.*, *574*)։ —Ուրախությամբ կերթամ... տեսնելու մեր թշվառ ու հնշված գյուղացիների աշխատանքը: —Հը՛մ... լավ թշվառներ ես գտել (*Նույն տեղում*, *568*)։ Ապրել չգիտեք: Ա՛յ, մեծ աղջիկդ, քեֆս է գալիս... Մախլաս, դու իսկի նման չես միլիոնատերի կնոջ: Է՛հ, թողենք (*ՇԵԺ*, VI, *235*)։ Թաջիրներին տուր թե կտաս, են օրն է զգում, որ եկած ճանապարհը մոռանում են: —Այ թե հա՜ (*ԱԲԵ*, *366*)։

IX

ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Թերի նախադասություն ասելով հասկանում ենք այնպիսի նախադասությունը, որի այս կամ այն անդամը պակասում է։ Նախադասության բնույթը չի փոխվում պակասող անդամների քերականական դերի կարևորությամբ ու պակաս կարևորությամբ, այսինքն՝ նախադասությունը թերի է համարվում նույնիսկ այն դեպքում, երբ որևէ լրացում է պակասում. օրինակ՝ ո՞վ կարող էր ջնջել Մարդպետական իշխանությունը: —Ի մ թ ա գ ա վ ո ր ա մ ո ւ ս ի ն ը *(Ր., III, 459)։ Այս վերջինը թերի նախադասություն է՝ կազմված ենթակայից և լրացումներից։* Հայաստանը այն ժամանակ միայն հանգստություն կվայելե... —Պ ա ր ս ի ց լ ծ ի տ ա՞ կ: —Այո, պարսից լծի տակ *(Նույն տեղում, 46)։ Ընդգծված մասը, որ խոսակցի առարկն է, միայն պարագա է (վիճակի) և թերի նախադասություն։*

Բանավոր խոսքի մեջ ամենից շատ են տարածված թերի նախադասությունները, որ մարդկային խոսքի զարգացման լիակատար օրինաչափությունն են հանդիսանում. երբ մարդիկ միմյանց հետ խոսում են, մի ակնարկով, երբեմն մի բառով կամ խոսակցի խոսքից վերցրած արտահայտությամբ, մի առարկով իրար հասկանում են. և որպեսզի ժամանակ և ավելորդ ուժ չկորցնեն նախադասությունը իր ամբողջ ձևավորվածությամբ, բոլոր անդամներով ասելու, արտահայտում են նախադասության միայն այն մասը կամ բառը, որ տվյալ դեպքում հասկանալի է դարձնում ամբողջ նախադասությունը։

Բացի այս՝ կա մի այլ պարագա ևս, որ չպետք է անտես առվի. եթե մենք ամեն դեպքում նախադասությունը իր բոլոր անդամներով լրիվ արտահայտենք, խոսքը կդառնա ճապաղ, կկորցնի դիպուկությունն ու սրությունը, կդառնա դանդաղընթաց, ձգձգված, ճոռոմ, ձանձրալի, և կենդանի աշխույժ խոսքը կծանրաբեռնվի

ավելորդաբանությամբ։ Այս է պատճառը, որ դրամատիկ գործերը, գեղարվեստական գրվածքի երկախոսությունները մեծ մասամբ առաջ են տարվում թերի նախադասություններով։ Այս դեպքում բոլոր անհրաժեշտ տվյալները կան, որպեսզի խոսողները խույս տան նախադասության «ծանրաբեռնումից»։ Երկախոսության մասնակիցները միմյանց խոսքին ծանոթ լինելով, երբեմն մեկը մյուսի բերանից խլում է մի բառ կամ արտահայտություն, իմաստավորում է այնպես, որ դիմացինն անմիջապես հասկանում է։

Թերի նախադասությունների առաջացման համար կան մի շարք պատճառներ, որոնց հիման վրա թերի նախադասությունները կազմում են կենդանի խոսքի անհրաժեշտ բաղկացուցիչ մասը։ Ամենից առաջ խոսակիցը մյուսի խոսքից վերցնում է մի որևէ բառ կամ արտահայտություն, իբրև առարկ, և որովհետև մյուսը արդեն լրիվ նախադասությամբ արտահայտել է, հիշյալ առարկը լսողների մոտ զուգորդվում է լրիվ նախադասության չասված բառերին և դառնում է լիովին հասկանալի. օրինակ՝ —Դու այնտեղ կտեսնես տեղական ինտելիգենցիայի ընտիր մասը։ —Ինչո՞ւ ընտիր (Շիրվ., VI, 287)։ Ինչո՞ւ ընտիր, որ արտահայտվում է խոսակցի կողմից, մի թերի նախադասություն է, որը մտքով լրացվում է նախորդ նախադասությամբ։

Թերի նախադասություններն առաջանում են խոսքի զարգացման դարավոր փորձից, այսինքն՝ լրիվ նախադասության որոշ անդամներ դարավոր գործածությամբ սղվում են իբրև տվյալ խոսքային իրավիճակի համար միանգամայն ավելորդ, և մնում են այնպիսի բառեր կամ բառերի կապակցություններ, որոնք լիակատար կերպով հասկացվում են խոսողների կողմից. օրինակ՝ Ողջույն քեզ, կյանք և Երևան. բանաստեղծը պետք չուներ ասելու ողջույն լինի քեզ, կամ իմ ողջույնը լինի քեզ. մենք էլ բարևելիս չենք ասում Ես բարևում եմ ձեզ կամ Ես բարով տեսա ձեզ, այլ պարզապես ասվում է բարև ձեզ կամ բարև, որով լրիվ հասկանում ենք միմյանց։

Թերի նախադասությունը պայմանավորվում է նաև տվյալ խոսքի ընդհանուր կառուցվածքով։ Եթե խոսքի նախորդ մասերում գործածվում են այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնք պետք են գալիս հաջորդ մասերում, այլևս այս վերջինները կրկնելու կարիք չի զգացվում, որովհետև ընդհանուր բնագրից արդեն հասկացվում են դրանք և բարդ նախադասության մի բաղադրիչի որևէ անդամ գտնվում է մյուս բաղադրիչի մեջ կամ հենց այդ

բաղադրիչն է. օրինակ՝ Անահիտ, այստեղ մոտիկ փոստարկղ կա՞:
Այո, ուղիղ մեր տան դեմ ու դեմ:

Հաճախ բառերի նշանակությունները և նրանց քերականական առնչությունները այնքան խտացած և բացահայտ են լինում, որ պակասող անդամը անմիջապես ըմբռնվում է լսողի կամ ընթերցողի կողմից. օրինակ՝ Սենյակ է մտնում նախ մի եսաուլ. ձեռքին մի մեծ ծրար, ետևից երևում են երկու-երեք եսաուլներ, հետո Սահակի, տիկին Մանուկյանի, Մարգոյի ու Կիրակոսի վախեցած դեմքերը *(Փափ., 622)։* Ձեռքին մի մեծ ծրար *թերի նախադասությունը հուշում է* կա *կամ* բռնած է *ստորոգյալները, որոնք պակասում են,* իսկ հետո Սահակի, տիկին Մանուկյանի, Մարգոյի և Կիրակոսի վախեցած դեմքերը *թերի նախադասության մեջ պակասում է* երևում են *ստորոգյալը, որ հուշվում է նախորդ նախադասությամբ։*

Թերի նախադասությունները առաջանում են նաև հնչերանգային հողի վրա, այսինքն՝ խոսողը որևէ բառ արտաբերում է այնպիսի հնչերանգությամբ, որ լսողը անմիջապես ըմբռնում է մի ամբողջ նախադասություն. օրինակ՝ —Դու բացատրություն պահանջե՞լ ես իրանից... —Այո, պահանջեցի:

Ե՞ վ:—

Զխոստովանեց *(Շիրվ., V, 76)։*

Դուրս, անհամեստներ, դուրս, ի՞նչ իրավունքով եք հետաքրքրվում ուրիշների ընտանեկան գաղտնիքներով (*նույն տեղում, 144)։ Բերված օրինակների մեջ* Ե՞վ *հարցական հնչերանգությամբ նշանակում է* եվ նա ի՞նչ ասաց, *իսկ* դուրս, դուրս *հրամայական հնչերանգությամբ նշանակում է* դուրս գնացեք դուք, դուրս կորեք դուք:

Թերի նախադասություններ են լինում հաճախ դարձվածային կապակցություններ, ասացվածներ, առածներ, որոնց պակասող անդամները ոչ միայն հնարավոր չէ լրացնել, այլև լրացնելիս նախադասությունը կարող է իմաստազրկվել, կորցնել իր սրությունը, նպատակայնությունը, փոխաբերական հարուստ նշանակությունն ու արտահայտչությունը. օրինակ՝ Էն տեսակ կին, ես իմ հոգին, թե աշուղն էլ ունենար... *այստեղ* ես իմ հոգին *դարձվածային նախադասությունը մի թերի նախադասություն է, որ ոչ միայն չի կարելի լրացնել, այլև հնարավոր էլ չէ։* Ու՞ր առաջ բարի *հարցումը, որն ուղղվում է ճանապարհորդին, նույնպես մի թերի նախադասություն է, որ ոչ մի ձևով հնարավոր չէ լրացնել։ Ուրեմն թերի նախադա-*

սությունների հատկանիշը միայն այն չէ, որ պակասող անդամը հեշտությամբ կարող ենք վերականգնել, այլ թերի նախադասությունը իր բնույթով՝ ծագման ու գործածության զարգացման մեջ խոսքի ընդհանուր շղթայում ձևավորվել է իբրև այդպիսին, իբրև խոսքի անհրաժեշտ միավոր, իբրև նախադասության մի տեսակը, որ պետք է առանձին ուշադրության արժանանա և ուսումնասիրվի իր բազմաթիվ ձևերով ու արտահայտություններով։

Թերի նախադասությունները բաժանվում են հետևյալ ենթատեսակների. ա) երկխոսության մեջ միմյանց հետ փոխադարձորեն կապված թերի նախադասություն. բ) ինքնուրույն թերի նախադասություն. գ) բարդ նախադասության կազմի մեջ մտնող թերի նախադասություն։

1. ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երկախոսության ժամանակ հաճախ խոսակիցները միմյանց խոսքից փոխ են առնում բառեր, արտահայտություններ, որոնք կամ իբրև առարկ և կամ իբրև հարց ու պատասխան ուղղում են միմյանց՝ խոսքի այս կամ այն մասը լրիվ հասկանալու, լրացնելու, ճշտելու և կամ առարկելու համար։ Երկախոսության մեջ այդպիսի բառերը գերազանցապես թերի նախադասություններ են և կապված են նախորդ խոսքի հետ, ուստի և որքան էլ համառոտ լինեն, անմիջապես հասկացվում են։ Երկախոսությունների մեջ գործածվող այդպիսի թերի նախադասությունները սովորաբար այնպիսի բառեր են, որոնք նոր բան են ավելացնում նախորդ ասվածին և կապված են նրա հետ։

Երկախոսության թերի նախադասությունները երկու տեսակի են բաժանվում. 1. թերի նախադասությունը կազմում է նախորդ ասվածի մի մասը և 2. թերի նախադասությունը պատասխան է։

Ա. ՆԱԽՈՐԴ ԱՍՎԱԾԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Նախորդ ասվածի մաս կազմող թերի նախադասությունը կարող է կազմված լինել՝

ա) Ենթակայից կամ ենթակայից և իր լրացումներից. օրինակ՝ —Երկուսը կսատկի: Երկո՞ւսը *(ԴԴԵԺ, I, 297)*։ (Սուրեն*)* ինչո՞ւ: Որովհետև ապրել եմ ուզում: Այնպես, ինչպես ապրում են իմ բոլոր ընկերները: (Սաղաթել). Այսինքն՝ բոլոր անառակ զավակները *(ՇԵԺ, VI, 233)*։ Հարցրի՝ ով է ուղեկցել, ասաց՝ նախարարը. —Ո՞ր իշխանը, տեսնես *(ԴԴՎ, 229)*։ —Մատվեյը

կլինի, ուրիշներն էլ: —Իսկ Գրիգոր աղան ու տիկինը (*Փափ., 576*)։

բ) Ընթակայից և ստորոգյալի լրացումներից, բայց *առանց ստորոգյալի. օրինակ՝* —Ուրեմն դու քո շահին ես ծառայում։ —Ինչպես դու՝ քո շահին,— հակահարված տվեց Կողակը (*ԴԴՎ, 221*)։ Բաղս խլում են, Ալեքսան բեկ... (Ալեքսանդր) Դարձյա՞լ Գրիգոր աղան (*Փափ., 582*)։ Ի՞նչ է պատահել: Առանձնապես ոչինչ (*Զորյան*)։

գ) Միայն որոշիչից. օրինակ՝ —Մեր մհալի ժողովուրդը հազար մարդ կտա: —Հազար: Էլ տակին ի՞նչ կմնա (*ԱԲԵ, 533*)։ —Նա քոնն էլ չէ, էֆենդի, նա նշանած աղջիկ է: Նշանա՞ծ,— կրկնեց նա (*ԼԳԵ, 209*)։ —Դու թշնամացնում ես քեզ ամբողջ հոգևորականությունը: —Ոչ ամբողջը, սպարապետ (*ՍԶԴԹ, 437*)։

դ) Միայն ստորոգյալից և կամ ստորոգյալից ու իր լրացումներից առանց ենթակայի. օրինակ՝ Արշինը տասը դուրուշ... հինգով տուր,— առաջարկում էր թուրքը (*ՎԹԵ, 138*)։ Ուհ, ինչքան մեծ ես դու: Մեծ (*Թ., 59*)։ Ասի՝ Ավազ, էս օքմին չի, արջ է: Թե՝ բո, չէ չէ պոզեր (*Նույն տեղում, 52*)։ —Ժամանակը ամենաէժան բանն է Երևանում: —Դեռ ինչ էժան, ձրի է (*ԴԴԵԺ*, VII, *585*)։ Ես փող եմ կտրո՞ւմ —փող ես կըտրում, պետք է տաս (*Նար.*, I, *146*)։

ե) Ստորոգյալի լրացումներից առանց ենթակայի ու ստորոգյալի. օրինակ՝ (Օթարյան) Շատ լավ, ես կբերեմ: *(Մարգարիտ)* Հենց այսօր (*ՇԵԺ*, VI, *271*)։ *(Սուրեն)* Ես ուղղակի ձանձրացել եմ կյանքից: *(Մարգարիտ)*։ Քսանուերեք տարեկան հասակո՞ւմ (*Նույն տեղում, 272*)։ Էդքան ե՛լ խեղճ մի զիտենալ դրանց: —Դրա՞նց (*Թ.*, III, *69*)։ —Շահին ինքս խորհուրդ տվի Ազուլիս գնալու: —Անպատճառ նորին վեհափառության նորագույն հանույք պատճառելու նպատակով (*Մուր.*, V, *192*)։ Ես եկել եմ խնդրելու ձեզ, որ ինձ որևէ աշխատանք տաք, որևէ պաշտոն ձեր բանկում կամ գործարանում: —Գործարանո՞ւմ (*Նար.*, I, *253*)։ Մի են Սայաթ-Նովան վեր քաշի,— պատվիրեց Արութը,— —Սայաթ-Նովա,— թեթև դժգոհեց Աղասյանը (*ԴԴԵԺ*, VII, *221*)։ Ես գնում եմ Թիֆլիս: —Թիֆլի՞ս, ինչո՞ւ (*Նույն տեղում, 158*)։ Կանգնեցեք, ես ձեզ կպատմեմ իմ մտածությունները: —Եվ ձեր վշտե՞րը (*Փափ., 410*)։

Բ. ՊԱՏԱՍԽԱՆ ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Երկախոսության թերի նախադասությունները շատ սովորական են հարց ու պատասխանի մեջ, ուր լրիվ նախադասության բոլոր անդամները առանձին կամ իրենց լրացումներով կարող են դառնալ թերի նախադասություն իբրև երկախոսության պատասխան։

Հաճախ հարց ու պատասխան նախադասություններից հարցը գլխավոր նախադասությունն է, իսկ պատասխանը երկրորդական. այս դեպքում, ըստ էության, երկուսն էլ թերի են և հարց ու պատասխանի ձևով լրացնում են միմյանց. օրինակ՝ Ինձ ինչո՞ւ պարոն ես ասում,— սրտնեղեց Արմենիերը: —Ինչո՞ւ,— նավավարը դառն ծպտաց,— որովհետև այդպես է *(ԱԲԵ, 657)։ Անշուշտ լիակատար պատասխանը կլիներ։* Ես քեզ պարոն եմ ասում, որովհետև այդպես է: —Ինչո՞վ եք բնասեր: —Նրանով, որ ուսումնասիրում ենք Գիլլի լճի գաղտնիքները *(ՎԱՍԱ, 78)։* —Ինչո՞ւ պիտի մերժեր: —Որովհետև ոտիցս դեռ թույլ եմ *(Նար., I, 90—91)։* —Համբերությունս հատավ, Սարգիս: —Որ նրազ չկա՞ վառած: —Ո՛չ, թե ինչ լուր ես բերում ինձ համար *(Նույն տեղում, 456)։*

Պատասխան թերի նախադասությունները լինում են հարցական նախադասության այն բառերը, որոնց վրա սովորաբար ընկնում է տրամաբանական շեշտը, այսինքն՝ որոնք հարցի համար էական նշանակություն ունեն. օրինակ՝ —Դու չլսեցի՞ր, որ գնում ենք Պարսկաստան:—Լսեցի,—պատասխանեց Բաբիկը խոժոռ ու հանգիստ *(ԴԴՎ, 263)։* —Իսկ մերձակա քաղաքներում հաց գտնվո՞ւմ է —Գտնվում է *(ՐԵԺ,* II, *446)։* —Մի՞թե, իսկապես այնքան սիրահարված ես, որ չես կարող։ —Այո՛, չեմ կարող, ուղղակի չեմ կարող *(Նար.,* II, *445)։* —Դու իրականության թագավորին ի՞նչ վատություն ես արել: —Ոչ մի վատություն *(Թ.,* III, *351)։* —Հը, ամեն բան պատրա՞ստ է, թե չէ: —Պատրաստ է, նանի ջան *(Նույն տեղում, 263)։*

Այսպիսի պատասխան նախադասությունները սովորաբար ուղեկցվում են այո, ոչ, իհարկե, ինչպես չէ *բառ նախադասություններով։*

Պատասխան թերի նախադասությունը բնութագրում է կամ ճշտում է այն բառը, որ հարցի համար էական նշանակություն ունի, այսինքն՝ դրանով պարզվում է իրողությունը, պատասխանի

մեջ նշվում է մի ուրիշ բառ հարցի մեջ եղած կարևոր բառի դիմաց կամ որևէ ձևով ճշտվում է. օրինակ՝ փոստարկղն է գցել,— ծիծաղեց ուսուցիչը, Ոչ, Կարապը *(ՎԱՍԱ, 228)։* —Դու իմ պապի պապին էլ ես տեսե՞լ: —Հա՜, հա՜, հա՜... Դեռ նրանց պապերի պապերին էլ *(Թ., III, 58)։* —Շատ է սիրում իր որդուն: —Այո, որդուն և հարսին *(Լեո, 234)։*

Պատասխան թերի նախադասությունը հաճախ ուղղակի հարցի պատասխանն է՝ առանց հաշվի առնելու հարցի մեջ եղած որևէ բառ. օրինակ՝ —Բա ո՞նց ես սպանել,— հարցրեց Գրիգորը: Տղամարդի պես *(ՎԱՍԱ, 306)։* —Էս հիանալի ստեպիքները որտե՞ղ եք առել, վարպետ: —Էստեղ, որտեղ ծախում են, շուկայում *(Թ., III, 246)։* —Էն ո՞ր օրվանից,— հարցրեց Ավան ամին: —Էս օրվանից,— կտրուկ պատասխանեց դարբինը —Ձեզ ի՞նչ պիտի անի արքան: —Վառելիք ատրուշանների համար *(ԴԴՎ, 365)։* —Ո՞ր հիվանդի մասին եք հարցնում: —Իմ եղբոր: Որտեղի՞ց են արդյոք այդ անիրավ, չար մտքերը: —Երևի հեթանոս հույն մատենագիրներից *(ՍՁՊԹ, 311)։*

Պատասխան թերի նախադասություն լինում է նաև փոխադարձ հարցումը, որով պատասխանողը մինչև դրական կամ բացասական պատասխան տալը ցանկանում է ճշտել հարցի նյութը, ինչպես վերաբերելը, նպատակը, որպեսզի պատասխանը ճիշտ լինի. օրինակ. —Քանի՞ երեխա ունես: —Ե՞ս,— ասում է, մտքերը ժողովում, ասես նոր է իր երեխաների համրանքն անում *(ԱԲԵ, 58)։* Պապի ի՞նչ ոչխարներ են դրանք. որ դմակ չունեին: —Դմա՞կ *(ՎԱՍԱ, 306)։* Կարո՞ղ ես տասը կիլոմետր թունել անցկացնել Գիժ սարի սրտի միջով: —Թունե՞լ, ինչի՞ համար *(Նույն տեղում, 300)։* Բաս ես որ հիմի գնամ՝ քեռեկնկանդ ի՞նչ ասեմ: —Ընչի՞ համար *(Թ., III, 84)։* —Ի՞նչ երգ էր այդ,— հարցրի ավագ թաթին: —Էդ ե՞րգը... կարծես հարցս լավ չլսելով կրկնեց նա,— էդ ե՞րգը *(ԱԻԵ, 25)։* —Նամակս ստացա՞ք: —Ի՞նչ նամակ... որտեղի՞ց *(ԴԴԵԺ, III, 350)։*

Երբեմն թերի պատասխան նախադասությունը այնպիսի հարց է, որ կամ դրական պատասխան է, կամ բացասական։ Այդպիսի պատասխանը իր մեջ պարունակում է զարմանք, հարցի անտեղիության նշում, անկարելիություն և այլն. օրինակ՝ Որ ձին քշեմ, կհասնե՞մ: —Որտեղի՞ց կհասնես, դու ձիով, նա ոտով *(Թ., III, 173)։* Դու վախենո՞ւմ ես,— սառն լրջությամբ հարցրեց Գա-

յանեն: Վախե՞լ, ինչո՞ւ վախել (*Լեռ, 117*)։ —Նոր բան կա՞: —Ինչպե՞ս չէ (*ԴԴԵԺ*, VII, *363*)։

Երբեմն թերի պատասխան նախադասությունը արտահայտվում է (առանց ժխտական ու դրական բառերի) այնպիսի բառերով, որոնք դրական կամ ժխտական պատասխանը որևէ առնչությամբ սահմանափակում են. օրինակ՝ —Մի՞թե մարդ չկա, Զաքարե,— հարցրեց երիտասարդը —Համարյա,— հառաչեց ծերունին (*ՍԶՊԹ, 17*)։ —Ի՞նչ է պատահել: —Առանձնապես ոչինչ (*ՍԶԵԺ*, II, *230*)։ —Եվ դա բավականանո՞ւմ է: —Որտեղի՞ց (*Նար.*, I, *191*)։

Երբեմն պատասխան թերի նախադասությունը ընտրություն է հարցի մեջ նշված տարբերակներից որևէ մեկի, այսինքն՝ հարցնողը առաջարկում է մի քանի բան այնպես, որ պատասխանողը դրանցից ընտրի մեկնումեկը. օրինակ՝ —Թե՞յ կխմեք, թե սուրճ, հարցրի: —Սուրճ, եթե կարելի է,— ասաց Մարին (*ՌՊԵ, 359*)։

Երկխոսության մեջ պատասխան թերի նախադասությունը կարող է լինել ենթակա, ստորոգյալ և կամ լրիվ նախադասության մի որևէ այլ անդամ։

Գ. ԵՆԹԱԿԱ-ԹԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Երկխոսության մեջ հարցին իբրև պատասխան խոսակիցը փոխանակ ամբողջ պատասխանը կրկնելու, տալիս է միայն ենթակայի անունը իր կողմից ավելացրած լրացումներով կամ առանց դրանց. օրինակ՝ —Ո՞վ է այդ սրիկան,— ծառացավ զայրացած Փառանձեմը: —Քո այդ սպարապետ ասած արարածը (*ԴԴՎ, 269*)։ —Դո՞ւք եք նկարել դեկորները և ներկել դահլիճը: —Այո, ես և Բրավելմանը (*ԵԶԵ, 412*)։ Ի՞նչն է ստիպում ձեզ վատ բաներ անել,— հարցրեց Արմենը: Ի՞նչը... ձեզ հակառակ գնալու ցանկությունը (*ՎԱՍԱ, 265*)։ —Դուռն ո՞վ բաց արեց,— հարցրի: —Ծառան (*Նար.*, II, *485*)։ —Դուռը ինքդ բաց արի՞ր: —Ինքս անձամբ: Եվ ոչ ոք չկա՞ր: —Ոչ ոք (*նույն տեղում*)։ Ո՞վ է (ա) զեկուցում,— հարցրին բանվորները —Ընկեր Աղասյանը և Մանուկյանը (*ԴԴԵԺ*, VII, *246*)։

Դ. ՍՏՈՐՈԳՅԱԼ-ԹԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պատասխան նախադասությունը լինում է միայն ստորոգյալը, հաճախ ոչ ամբողջ բաղադրյալ ստորոգյալը, այլ բաղադրիչներից

միայն մեկը։ Երբեմն էլ իբրև պատասխան թերի ստորոգյալ նախադասությունից զեղչվում է օժանդակ բայը, բայական հանգույցը և այլն. օրինակ՝ —Մենք մի որևիցե բանով քեզ խո չե՞նք վիրավորել։ —Վիրավորե՞լ... ինչ բանով *(Նար.,* II, *60)*։ Ո՞վ է,— հարցնում եմ *իմ* չիչերոնին։ —Հեչ։ Նախկին խորհրդային ծառայող *(ԵՉԵ, 412)*։ —Դու ինքդ աչքովդ տեսա՞ր այդ թըղթերը։ —Տեսա, բաս չէ՞ *(ՇԵԺ,* VII, *278)*։ —Չէ, չէ, դուն ու քու աստվածդ, ի՞նչ ես։ —Մինիստր *(ԴԴԵԺ,* VII, *263)*։ —Իսկ ի՞նչ մարդ է այդ հարևանը։ —Գյուղատնտես. մի բարի մարդ *(ՍՉԵԺ,* II, *187)*։ —Դու ո՞վ ես։ —Քաղաքացի։ —Անունդ ի՞նչ է։ —Դերենիկ Դեմիրճյան *(ԴԴԵԺ,* II, *409)*։

Ե. ԽՆԴԻՐ-ԹԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պատասխան նախադասությունը կարող է լինել լրիվ նախադասության որևէ խնդիրը, ուղիղ կամ անուղղակի. օրինակ՝ —Դուք պիտի ընդունեք փրկության այն միջոցը, որ ես եմ առաջարկում ձեզ։ —Այսի՞նքն։ Մի անմեղ միջոց. մի անվնաս ճանապարհ *(Մուր.,* V, *250)*, —Դու բոլորին դիմե՞լ ես դրա համար։ —Բոլորին։ —Իսկ ինձ դիմե՞լ ես։ —Քե՞զ։ Հենց ինձ, ինչի՞ ես զարմանում *(Նար.,* I, *367—368)*։ Ո՞ւմ ուղարկենք նվերներ գնելու։ —Սերոյին,— կտրուկ պատասխանեց պարտկազմակերպիչը *(ՎԱՍԱ, 275)*։ —Ի՞նչ լեզվով են խոսում։ —Ոչ մի լեզվով *(ԴԴՎ, 189)*։ Նա ինչո՞վ կարող է արգելք լինել մեզ։ —Ամեն բանով *(ՐԵԺ,* II, *458)*։ —Ո՞ւմ է գրկել նա։ Մի անտեր և անօգնական մնացած ընտանիք։ Իր հավատարիմ ընկերոջ որբ զավակներին։ —Քե՞զ, —ինձ, *մորս, քույրերիս (ՇԵԺ,* VI, *248)*։ *Ի՞նչ եք կամենում։* —Փող *(ԴԴԵԺ,* VII, *326)*։

Զ. ՊԱՐԱԳԱ-ԹԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պատասխան նախադասությունը կարող է լինել միայն լրիվ նախադասության որևէ պարագա իր լրացումներով, այսինքն՝ ձևի, չափ ու քանակի, նպատակի, հիմունքի, պատճառի և այլն. օրինակ՝ —Ինչքա՞ն եք վնոված։ —Ութ տարի,— ասում է նա, ժպտում *(ԵՉԵ, 410)*։ —Որտե՞ղ է Թոզալիան։ —Իր սենյակում *(ՇԵԺ,* VI, *272)*։ —Այժմ ո՞ւր ես գնում,— հարցրեց նրան աղա Գրիգոր Մոսեիչը։ —Զբոսնելու *(Նար.,* I, *427)*։ —Եվ դուք կոլխոզի

դրամը վստահո՞ւմ եք ինձ...,— հարցրեց նա: —Լիովին —հաստատուն կերպով պատասխանեց նախագահը *(ՎԱՍԱ, 276)*։ —Ո՞ւր Գրիգոր: Քարայր,— լուրջ պատասխանեց տղան *(Նույն տեղում, 376)*։ —Կարո՞ղ եք ներկայացնել մանրամասն տեղեկագիր: —Վաղը ևեթ *(ԴԴԵԺ,* VII, *247)*։ —Հիմա ի՞նչ ես կամենում, ինչո՞ւ ես եկել մոտս: Քեզ ծառայելու *(ԴԴՎ, 210)*։ —Ինչի՞ց ես եզրակացնում: —Ցիլինդրից, հագուստից *(Նար.,* II, *233)*։ —Ե՞րբ է նշանակված դատը: Երեք շաբաթից հետո *(Նույն տեղում, 237)*։ —Որքա՞ն գնեցիր: —Շատ աժան: Հինգ հարյուր ռուբլիով *(ՐԵԺ,* II, *292)*։

է. ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ-ԹԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Թերի նախադասությունը կարող է լինել լրիվ նախադասության միայն հատկացուցիչը իր լրացումներով, կամ առանց դրանց. օրինակ՝ —Էս ո՞ւմ նախիրն է,— հարցնում են ձիավորները: —Ձախչախ թագավորինը,— պատասխանում են նախրապանները: —Էս ո՞ւմ արտերն են: —Շահմարինը *(Թ.,* III, *147)*։ Անունդ ի՞նչ է,— հարցնում է դատավորը: —Ի՞մ,— պատասխանում է *(չոբանը)* ծոր տալով *(ԱԲԵ, 58)*։ —Ո՞ւմ աղջիկն է: —Շալունց Սիմոնի *(Նույն տեղում, 482)*։ —Ի՞նչ փող: —Դռների և լուսամուտների նորոգության: —Ո՞ր դռների և լուսամուտների: —Դպրոցի *(ԴԴԵԺ,* VII, *362)*։ —Եվ հիմա կծեծենք: —Ո՞ւմ ձեռքով: —Մերոնց *(ԴԴՎ, 342)*։

ը. ՈՐՈՇԻՉ-ԹԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Երբեմն թերի պատասխան նախադասությունը լրիվ նախադասության որևէ գոյական անդամի որոշիչն է. օրինակ՝ —Որքա՞ն մարդու կյանք արժեց այդ պատերազմը: —Մոտ քսան միլիոն *(ԴԴԵԺ,* VII, *304)*։ Ի՞նչ ես կարծում, նա ինչպիսի՞ տղա է: —Շատ օրինավոր, համեստ, խելոք *(ՇԵԺ,* VI, *237)*։

Ծանոթություն.— Թերի նախադասություն չի համարվում այնպիսի նախադասությունը, որը մնում է չվերջացած. խոսողը զանազան պատճառներով չի կամենում մինչև վերջ արտահայտել նախադասությունը և թողնում է կիսատ. օրինակ՝

-Լսո՞ւմ ես, երբեք և ոչ մի պայմանով: Ինչո՞ւ Բագրատ: Որովհետև... *Մարգարիտ.* ի՞նչ, ուրեմն դու պահանջում ես, որ ես... *Բագրատ. (սառը)* Որ դու այդ թղթերը չտաս *Օթարյանին (ՇԵԺ,* VI, *280)*։

2. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Մինչև այժմ մենք տեսանք, որ թերի նախադասությունները երկախոսության մեջ պայմանավորված են միմյանցով, այսինքն՝ խոսակցության մեջ ստեղծվում են այնպիսի հանգամանքներ, որոնք բացառում են նախադասությունը ծանրաբեռնելը։ Բավական է մի երկու բառ, որպեսզի մտքով շղթայվի արդեն նախապես ասված ուրիշ բառերի հետ և հուշի ամբողջ միտքը հասկանալիորեն։ Ինքնուրույն թերի նախադասությունը այդպես չէ, թերի նախադասության պակասող անդամները չեն հուշվում նախորդ կամ հաջորդ լրիվ կամ այլ թերի նախադասություններով, պարզապես պատմողական ոճին հատուկ է երբեմն գործածել թերի նախադասություններ, որոնցով պատումը աշխուժանում է, անցումները մի թեմայից մյուսը արագանում են, խոսքը օժտվում է հուզարտահայտչական նոր երանգներով։

Պատմողական ոճի մեջ երբեմն գործածվում են այնպիսի թերի նախադասություններ, որոնց մեջ բացակայում է բայ-ստորոգյալը, այսպիսի նախադասությունները հատկապես հաղորդում են որևէ առարկայի գոյության, լինելիության, գտնվելու, ժամանելու մասին. հիշյալ առարկան ենթակա է, իսկ սրա գոյության, լինելիության հաղորդումը լինում է հատկապես ժամանակային և տարածական հանգամանքներում. եթե այսպիսի նախադասությունները չունեն խնդիր, տեղի կամ ժամանակի պարագա, գերազանցապես անվանական նախադասություններ են։ Ուրեմն մինչդեռ անվանական նախադասությունը զուրկ է ստորոգյալի լրացումներից, թերի (ստորոգյալը բացակայող) նախադասությունը պայմանավորվում է հատկապես այդպիսի լրացումների առկայությամբ։ Եվ քանի որ թերի նախադասության մեջ առկա է ենթական, ուստի այսպիսի ենթական կարող է ունենալ նաև իր լրացումները։ Ինչ վերաբերում է այսպիսի նախադասությունների ժամանակին, ապա սրանց ժամանակը պայմանավորվում է տվյալ խոսքի մեջ գործածվող ընդհանուր ժամանակով, այսինքն՝ եթե ընդհանուր խոսքը առաջ է տարվում ներկայով, թերի նախադասությունների ժամանակը ներկա է կամ՝ ընդհակառակը, եթե ընդհանուր ժամանակը անցյալ է կամ ապառնի, նշանակում է թերի նախադասության ժամանակը անցյալ է կամ ապառնի։

Պակասող ստորոգյալով թերի նախադասությունները հայերենում գերազանցապես հատուկ են բեմական հանգամանքների,

հանդեսների նկարագրության, մասամբ էլ կիրառվում են գեղարվեստական պատմողական խոսքի մեջ. օրինակ՝ Աջ պատի մեջ դեպի փողոց երկու մեծ լուսամուտներ... սեղանի քով, պատի կողմում մի մեծ բազկաթոռ, մյուս կողմում մի հասարակ աթոռ: Խորքի պատի մեջ երկու դռներ, մեկը կենտրոնական ուղղությամբ. դեպի զրասենյակ, մյուսը բոլորովին ձախ, գրեթե անկյունում դեպի նախասենյակ: Ձախ պատի մեջ ևս դռներ... Այս դռների մոտ դեպի ավանսցենա Բագրատի գրասեղանը, վրան, բացի սովորական պարագաներից, գրելու գործիքներ, գծագրություններ և մի քանի մասնագիտական գրքեր՝ ինժեների համար: Սեղանի հետևում երկաթե դրամարկղ: Խորքում դեպի աջ վառարան *(ՇԵԺ,* VI, *227): Այսպիսի նկարագրությունների ժամանակ նախադասությունների երկրորդական անդամները գլխավորապես զանազան տիպերի տեղի պարագաներ են, իսկ գլխավոր անդամը, այսինքն՝ ենթական գլխավորապես գոյական է, որ գործածվում է միայն ուղղական հոլովով և կարող է ունենալ նաև իր լրացումները. համեմատիր՝* Իսկ դիմացը, պատին օդային Պարթենոնը՝ գծերի հաղթական հազեցած ներդաշնակություն *(ԴԴԵԺ,* VII, *18):* Քաղաքից հյուրեր եկան վանքը, բարեկամներ ու բարեկամներ. նրանց մեջ Մարմարը, բարձրահասակ ու հսկա մի աղջիկ, մուգ կապույտ աչքերով, երկար թարթիչներով, աջ այտի վրա մի փոքրիկ սև խալ *(ԴՄԵՍ, 30):*

Ավելի սակավ են ժամանակի պարագա ունեցող այնպիսի թերի նախադասությունները, որոնց մեջ բացակայում է ստորոգյալը. օրինակ՝ Եվ վերջապես Մասիսը *(ԴԴԵԺ,* VII, *288):* Հանկարծ նամակ *(նույն տեղում, 296): Ինչպես* միշտ գորշ, փոշոտ փողոց *(ԵՉԵ, 36):* Հիմա ամեն տեղ զնգոց... երկաթի զրգիռ *(նույն տեղում, 43):* Այս անգամ պրոլետարականը *(ԴԴԵԺ,* VII, *196):* Ամառը՝ հասարակական աշխատանք *(ԱԲԵ, 20):* Նախ և առաջ *գրականության շահերը (ՍԳ, 57, 9): Ինչպես երևում է օրինակներից, այս կարգի նախադասությունների մեջ ենթական ետադաս է. բայց չի բացառված նաև նախադաս ենթական, որ սովորական չէ. օրինակ՝* Անի քաղաքի պարիսպը ներսից *(Թ.,* III, *453):* Խաղաղ երեկոն Թիֆլիսի վրա *(ՍԳ, 57, 9, 132):* Ննջարանը խմբագրատանը, թե խմբագրատունը ննջարանում *(նույն տեղում, 133):* Տունը գյուղի ծայրին *(ԱԲԵ, 54):* Անախորժություններ վերից, անախորժություններ ձախից, աջից *(նույն տեղում):* Միտքը՝ հազար տեղ, աչքը՝ մի կետի *(ՊՍԱՁ, 12):* Եվ առաջին ժպի-

որ՝ միակ նորությունը նրա կյանքի վերջին տարիներում *(ԴԴԵԺ, I, 65)*։

Ծանոթություն.— Այս կարգի ձևերը չպետք է շփոթել վերջերս տարածվել միտող այնպիսի կապակցությունների հետ, որոնք խորթ ու անհասկանալի են հայերենում. փոխանակ ասելու Բոմբեյցի աղջիկը, մեր տան տղամարդը, գնացքի մարդը *և այլն, ասվում կամ գրվում է. Աղջիկը Բոմբեյից, Տղամարդը մեր տանից, Մարդը գնացքից, որոնք մերժելով պետք է մերժել։ Ավելի սակավ են պակասող ստորոգյալով այնպիսի թերի նախադասություններ, որոնք ենթակայի հետ ունեն խնդիրներ և այլ կարգի պարագաներ և որոնք դարձյալ արտահայտում են լինելիություն, գտնվելը, ժամանում և այլն. օրինակ՝* Էլի լռություն *(ՎԹԵ, 342)*։ Կրակ՝ Տերյանի և սալոնական կանանց վրա *(ՍԳ, 57, 9, էջ 128)*։ Երկարող ընկեր Քուչուբեկյանին *(ԴԴԵԺ, VII, 267)*։ *Տիկին Սոնիչկայի քաղաքային նամակը իր ընկերուհի* Վարինկային *(Նույն տեղում, 268)*։ Էլի ժողով, Էլի աղմուկ քարի գլխին ցինի բնի պես թառած Դրմբոնում *(ԱԲԵ, 56)*։ Ահա մի պլակատ կաթնարտելի մասին *(Նույն տեղում, 57)*։ Զորակների մասին ավանդություն հին օրերից *(Նույն տեղում, 49)*։ Մեղմ լույս լուսնյակից և թղթե լապտերներից *(ԳՍԵԺ, I, 213)*։ Վեճ շինանյութի շուրջը *(ԴԴԵԺ, VII, 223)*։

Շարժում արտահայտող բայերով ստորոգյալ ունեցող լրիվ նախադասություններին համապատասխանում են այնպիսի թերի նախադասությունները, որոնց մեջ չի արտահայտված նույն իմաստը կրող բայ-ստորոգյալը։ Սրանք կիրառվում են պատմողական խոսքի մեջ իբրև խոսակցական ոճին հատուկ մի եղանակ, որ ընդհանուր պատումին հաղորդում են արագ թափ, շարժունություն. Տնից մեյդան, մեյդանից տուն: Ահա նրա ամենօրյա մարզը, որ նա չափում է առավոտից մինչև իրկուն *(ԴԴԵԺ, I, 53)*։ Ես վազում եմ, ի ն ք ն ի մ հ ե տ և ի ց *(ԱԲԵ, 95)*։ Ո ր տ ե ղ ի՞ց ա յ ս պ ա տ ո ւ հ ա ս ը *(ԱԱՇՀ, 197)*։ Եվ ահա ընկերներ նոր նոր՝ Նյու-Յորքից, Բասենից, Պոլսից *(ԵՉԵ, 17)*։ Նամակ Փարիզից *(ՍԳ, 57, 9, 123)*։ Ամեն մեկը մի գավառից *(ՊՍԱՉ)*։ Այնտեղից ուղիղ դեպի Արաս-թումանի *(Թ., VI, 425)*։ Ու բաժանվեցին. Ն ի ն ա կ ա ն ը դ ե պ ի գ յ ո ւ ղ ը, Պ ո ւ ղ ա ն ը՝ Կ ա ղ ն ո ւ տ ի ձ ո ր *(ԱԲԵ, 560)*։

Պատկանել, հասնել, ընկնել *և այս նշանակությամբ բայերով ստորոգյալներ ունեցող լրիվ նախադասություններին համապատասխան կան (հատկապես խոսակցական ոճի մեջ) ենթակայով թերի նախադասություններ, ուր վերոհիշյալ ստորոգյալները պակասում են. օրինակ՝* Ուրիշն՝ ուրիշին *(ՊՍԱՁ, 76)*։ Ձեզ՝ խոտի լավը, Մեզ էլ փլավը *(Նույն տեղում, 68)*։ Եվ այդ անսպառ բարիքից, այդ խնկազույն խաղողներից, երկնաբույս եմիշներից, յուղալի պանիրներից ոչ մի պատառ, ոչ մի հատիկ, ոչ մի ծեղ *(ԴԴԵԺ, I, 55)*։ Հողն աշխատավորին *(ԱԲԵ, 46)*։ Ինձ արմատը հողումը— Քեզ փրերն ու ցողունը *(Խնկո-Ապեր)*։ *Այս քեզի,— շշնջաց նա (ԴԴԵԺ, I, 37)*։

Մնալ, երևալ, լսվել *և այս կարգի բայերով ստորոգյալ ունեցող լրիվ նախադասություններին համապատասխանում են թերի նախադասություններ, ուր կա ենթական զանազան պարագայական լրացումներով, իսկ հիշյալ բայերով ստորոգյալները պակասում են. օրինակ՝* Ծառում մռայլ տարիներ *(ԵՉԵ, 49)*։ Վրան հատիկ-հատիկ գնդակների տեղերը *(Նույն տեղում, 90)*։ *Հեռվում* մորմոքը զանգի *(Նույն տեղում, 45)*։ Աչքերի դեմ, քուն թե արթուն, Զըվերծանված խազեր, խազեր *(ՊՍԱՁ, 28)*։ Հանկարծ մի ձայն *(Թ., III, 78)*։ *Աջ կողմում երևաց մի ջուր* և նրա կողքին էլ մի արնարան *(Փափազյան)*։

Լրիվ նախադասության մեջ գործածվող ասացական բայեր հանդիսացող ստորոգյալները երբեմն թերի նախադասության մեջ պակասում են, և մնում են միայն ենթական ու ասացական բայ-ստորոգյալի խնդիրը։ Այսպիսի թերի նախադասությունները սովորաբար մտնում են ուղղակի խոսքի մեջ և հատուկ են խոսակցական ոճին. օրինակ՝ Մարդը կնկան է ասում հիմար, կնիկը՝ մարգուն *(Թ., III, 172)*։ Մինչև օրս էլ էս մարդ ու կնիկը կռվում են դեռ: Սա նրան է ասում հիմար, Նա՝ սրան *(Նույն տեղում, 173)*։ Առաջին հյուր, փոքր ժամանակից հետո Եվայլնին *(ԳՍԵԺ, I, 218)*։ Ես իմ մասիս— հաշիվս փակել եմ *(ԱԻԵ, 221)*։ Ժամի կես տեղում, մեկ էլ տեսար սա նրան, նա սրան. էլ բան չի մնալ, որ չասեն *(ՎՓԵԺ, II, 456)*։ Ես՝ հա, սա՝ չէ, ես՝ հա, սա՝ չէ *(Թ., III, 52)*։

Երբեմն խոսակցական ոճով այդպիսի պակասող ստորոգյալի տեղը բռնում է անուղղակի խոսքի թե *շաղկապը, որ կապակցվելով հեղինակային խոսքի հետ, անուղղակի խոսքը դարձնում է ուղղակի. օրինակ՝* Զորանչը թե.— Այ որդի, քեզնից ինչ

թաքցնեմ... (*Թ.*, III, *178*)։ Կնիկը թե.— Ձենդ կտրի, տեղդ նստի, քարվան կտրողիս մտիկ արա... Նազարը թե.— Ա՜րզ-զամ կնիկ, ինչո՞ւ չես թող անում ես գնամ քարվան կտրեմ բե-րեմ տունը լցնեմ (*Նույն տեղում, 188*)։

Թերի նախադասությունները լինում են նաև ըղձական, հրամայական, հորդորական, որոնք համապատասխանում են լրիվ հրամայական նախադասություններին։ Այսպիսի թերի նախադասությունների մեջ ոչ միայն ստորոգյալն է պակասում, այլև հաճախ չի լինում նաև ենթական։ Սրանց փոխարեն նախադասություն են կազմում տարբեր հոլովներով ու կապերով բառեր, որոնք լրիվ նախադասությունների մեջ խնդիրներ են կամ պարագաներ։ Թերի նախադասությունների մեջ դրանք հանդես են գալիս լրացումներով կամ առանց դրանց և փաստորեն ձևավորում են տվյալ թերի նախադասությունը՝ ցույց տալով հրաման, հորդոր, իղձ։ Այսինքն՝ այն, ինչ որ լրիվ նախադասությունների մեջ արտահայտում են ստորոգյալները, թերի նախադասությունների մեջ փոխանցվում է վերոհիշյալ բառերին. օրինակ՝ Կնիկ, ժամկոչ ախպորը մեկ օղի (*ՎՓԵԺ*, II, *454*)։ Մի կաթիլ ջուր... Լսվում էին զանազան դառն հառաչանքներ (*ՐԵԺ*, III, *75*)։ Հաց, ջուր,— կրկին լսելի եղան օրհասական հառաչանքներ (*Նույն տեղում*)։ —Աստծու սիրուն... Մի բուռ հող (*ԴԴԵԺ*, I, *47*)։ Մարալին, Մարալին (*ԱԲԵ, 187*), նշանակում է՝ Մարալին քշիր, Մարալին քշիր։ Մսագործ Աստուրին աղջիկը (*այսինքն՝ ուզենք*) (*ՎԹԵ, 363*)։ Էս մինն իմ բախտից (*այսինքն՝ թող ուրկանը իմ բախտի համար գցի*) (*Թ.*, III, *43*)։ Դեսը նա, դեսը։ Ժողովուրդ... թագավորի հրամանով առավոտը կանուխ ձիատերը ձիով քաղաք, հեյ, հեյ (*ԱԲԵ, 187, 199*)։ Վերցրեց նազանը և դարձավ խմբապետին ու կապիտանին,— մի կողմ (*ԴԴԵԺ*, I, *142*)։ —Դե, իմ հետևից (*ԴԴՎ, 706*)։ Դեպի ձախ,— կարգադրեց միլիցիապետը (*ԵՉԵ, 397*)։ *Այսպես ասվում է՝* դեպի աջ։ Դեպի դահլիճ *կամ՝* բոլորդ դահլիճ *կամ ուղղակի ասվում է՝* աջ, աջ։ Ձախ, ձախ։ Հառաջ *և այլն։*

Երբեմն այս կարգի թերի նախադասությունների պակասող ստորոգյալները դժվար է ստույգ որոշել՝ համապատասխան լրիվ նախադասությունների մեջ հրամայական եղանակո՞վ են արտահայտված, թե ըղձական, կամ թե մի այլ եղանակով, այսինքն՝ երբ ասում ենք ջուր, *պարզ չէ՝ դա նշանակում է* ջուր տուր, *թե* ջուր եմ ուզում. *այդպես էլ հետևյալ օրինակները, որոնք արդեն*

մի տեսակ կայուն կապակցության արժեք են ստացել. Էս էլ իմ կողմից *(ԱԻԵ, 242)*։ Ոչ մի թիզ հող թշնամուն *(ԱԱՇՀ, 50)*։ Շնորհակալություն Մնոյին Եվ այն հիվանդանոցային ծառայողին *(ԵՉԵ, 399)*։ Զավողին Սիբիր *(ԱԲԵ, 183)*։

Թերի նախադասություններ են համարվում նաև կայուն դարձվածները, որոնք իրենցից ներկայացնում են անեծքներ, հայհոյանքներ, սպառնալիքներ, ողջույններ, զանազան հարցումներ ու պատասխաններ, առածներ և այլն. օրինակ՝ Ո՞ւմ ինչ, որ միևնույն թվին «Պրոգրես» տպարանը Թիֆլիսում Ավետեց իմ կոտրած թևի արնոտած անկումի մասին *(ԵՉԵ, 47)*։ Էլ ի՞նչ *(նույն տեղում, 221)*։ Տանից օջախից հեռու *(ԴԴԵԺ, II, 473)*։ Քեզ էլ, քո թագավորին էլ *(ՎԹԵ, 236)*։ Հողս նրա գլխին *(ՎՓԵԺ, II, 91)*։ Ողջույն անկյալ վեհափառության *(նույն տեղում, 456)*։ Առաջ բարի, մարդ ախպեր *(Թ., III, 131)*։ Հանաքը դեն *(ԱԲԵ, 39)*։ Որտեղից որտեղ *(նույն տեղում, 295)*։ Չէ մի, պոզեր *(Նար., II, 490)*։ Որ ի՞նչ *(նույն տեղում, 514)*։ Թե ի՞նչ *(նույն տեղում)*։ Ազնիվ խոսք, Բաղդասար *(ԵՉԵ, 466)*։ Ակն ընդական, ատամն ընդ ատաման *(ՇԵԺ, III, 378)*։ Վայ քո գլխին *(ԱԻԵ, 349)*։

3. ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ՄՏՆՈՂ ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Եթե ինքնուրույն թերի նախադասության անդամները չեն հաշվվում նախորդ կամ հաջորդ լրիվ նախադասություններով, ապա բարդ նախադասության կազմում թերի նախադասությունները կախվածություն են արտահայտում։ Փաստորեն թերի նախադասությունը այս դեպքում բարդության մաս է դառնում։ Եթե նույնիսկ թերի նախադասությունը առանձին դադարով տրոհվում է, դարձյալ կախված է դադարից առաջ գտնվող մասից։ Այսպիսով, բարդ նախադասության կազմը մտնող թերի նախադասությունները լինում են. ա) դադարով բաժանված, բ) անշաղկապ բարդ նախադասության կազմը մտնող, գ) բարդ համադասական նախադասության կազմը մտնող, դ) բարդ ստորադասական նախադասության կազմը մտնող, ե) կրկնվող, զ) զեղչված բառերով ու բառակապակցություններով թերի նախադասություն։

Ա. ԴԱԴԱՐՈՎ ԲԱԺԱՆՎԱԾ ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Դադարով բաժանվող թերի նախադասություն է պակասող ենթակայով այնպիսի նախադասությունը, որ արտահայտվում է գոյականով և հանդես է գալիս իբրև պնդում կամ ամփոփում նախորդ մասում ասվածի։ Լրիվ նախադասության մեջ այդպիսի գոյականները ստորոգյալ են, իսկ ենթական որևէ ցուցական դերանուն. օրինակ՝ Այդպիսի չնաշխարհիկ բան ոչ տեսիլքում, ոչ էլ երազումս տեսած չէի. ժամի միջի... սուրբ աստվածամոր պատկերը տեսե՞լ ես. իսկը նրա պատկերը *(ՌԳԵ, 590)։* Նա քիչ էր փոխվել. նույն նեգրուհու թուխ դեմքը, սև մազերն ու սև աչքերը, խոշոր սպիտակ ատամները, նույն նրան քույրիկը *(ԳՄԵՍ, 292)։ Այդպիսի նախադասությունները չպետք է շփոթել անվանական նախադասությունների հետ։*

Այս կարգի այլ թերի նախադասություններն արտահայտում են գնահատական և ուղեկցվում են այ, ահ, ինչ *եղանակավորող բառերով. օրինակ՝* Կողբա՞ն արդյոք իր մահն այդպիսի կսկիծով նրա հարազատները. Ահ, ինչ սիրող դուստր, ինչ զգայուն սիրտ *(ՇԵԺ,* III, *412)։* Ապտակն այրում էր երեսը որպես շիկացած երկաթի հպում։ Ի՜նչ ամոթ, ի՜նչ խայտառակություն և ո՛րտեղ *(Նույն տեղում, 196)։* Գնաց հասավ Սպիտակ թագավորի ամրոցը։ Ի՜նչ ամրոց, ի՜նչ ապարանք *(ՍՉ,* V, *385)։* Համրելով բոլոր դրամները նա ձեռը դրեց ճակատին, նայեց թոնրատան առաստաղին. ի՜նչ սքանչելի նյութ ժամանակակից նկարչի կամ արձանագործի համար *(ՇԵԺ,* III, *441)։*

Երբեմն միևնույն բնագրում, ուր նախադասությունները մըտքով ու տրամաբանական կապերով են կապված միմյանց հետ և շատ հաճախ մինչև անգամ հեռու են ընկած միմյանցից, կարող է այս կամ այն նախադասության որևէ անդամ չկրկնվել, երբ այս վերջինը նախորդ մասում արդեն հիշատակված է. օրինակ՝ Գիշերը շատ անհանգիստ անցկացրեց։ Հետևյալ օրը նույնպես *(Նար.,* II, *348)։* Անշուշտ կատարվել էր հայերի մի ընդհանուր գաղթականություն այս գավառից։ Բայց դեպի ո՞ր կողմը և ի՞նչ պատճառով *(ՐԵԺ,* III, *312)։* Տարերքների անթափանցելի քաոսը կանգնած էր նրա աչքերի առջև։ Այնտեղ թանձր ծխի մեջ անօգնական մերձավորները, այստեղ մոր ու հորաքրոջ հուսահատ պատկեր-

ները: Այնտեղ բոսորագույն կրակն իր բյուրավոր ճյուղերով ու ահարկու լեզուներով, այստեղ և ուրվականներ, ինչ որ վայրենի ճիչեր, ինչ-որ գոռում-գոչյուններ, հինգ կիսով չափ այրըված դիակներ, մուր, ցեխ, նավթ, կեղտի ու խավարի, կյանքի ու մահվան մի զանգված: Եվ այդ քաոսի մեջ երկու տարբեր պատկերներ *(ՇԵԺ,* III, *401—402)։* Այն րոպեներին մահն այնքան ահարկու չէր, որքան այժմ: Այժմ մերձավորի մահճակալի քով *(Նույն տեղում, 409)։* Մյուս օրը նորից քնեց էնտեղ, նորից նույն երազը տեսավ, ու երբ զարթնեց, դարձյալ կողքին վարդեր էին թափած: Էսպես շարունակ մի ամբողջ շաբաթ *(Թ.,* III, *350)։*

Բ. ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ՄՏՆՈՂ ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Անշաղկապ բարդ նախադասության մեջ նախադասություններից մեկը թերի է դառնում, երբ պակասում է ստորոգյալը, որ առկա է նախորդ նախադասության մեջ և ընդհանուր է երկուսի կամ երկուսից ավելի նախադասությունների համար. օրինակ՝ Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը նոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան *(ԱԲԵ, 189)։ Երկրորդ մասում պակասում է* թվում է *ստորոգյալը. այդպես էլ՝ մյուս օրինակների մեջ.* Լուսը կգա՝ բարին հետը *(Թ.,* III, *263)։* Ետո մենք ճամփա ընկանք, սրանք էլ մեզ հետ *(Նույն տեղում, 109)։* Զարզանդ կար դեմքին, աչքերի մեջ՝ մի անիմաստ փայլ *(ԱԲԵ, 405)։* Մայրը գնացել էր աշխատանքի, Արմիկը՝ դպրոց *(ԲՎԻԳԵ, 75)։* Սանդրոն ու Լևոնը ներս ընկան, նրանց հետևից՝ Վազգենը, Սուրիկը, գեոլոգը և մյուս ընկերները *(ԴԴԵԺ,* II, *45)։* Ծառաները փախչում, մտնում են պալատ, մարդիկ նրանց ետևից *(ՍԶ,* V, *341)։* Սարգիսը հետևեց նրան, ես՝ Սարգսին *(ԳՄԵՍ, 281)։* Կառքերին թիվ չկար, հարսանքավորներին՝ համարք *(Նույն տեղում, 345)։*

Երբեմն անշաղկապ բարդ նախադասության կազմում մի լրիվ նախադասության ենթական ընդհանուր բնույթ է կրում, իսկ թերի նախադասությունների ենթակաները ընդհանուր կերպով սա-

վածի բովանդակությունը մասնավորում, թվարկում են, թե ովքեր կամ ինչերն են պարունակվում ընդհանուրի մեջ․ օրինակ՝ Նորից սկսում են կռվել․ մարդը եղ ու բրնձի համար, կնիկը՝ ձիու *(Թ․,* III, *173)։* Երկու գյուղն էլ գետի ձախ ափին են ընկած․ Մրոցը վերև, իսկ Միրը՝ ներքև *(ԱԲԵ, 42)։ Երբեմն այս կարգի թերի նախադասությունները հաջորդում են ոչ թե մի ընդհանուր ենթակա ունեցող նախադասության, այլ անջատվում են մեծ դադարով՝ խոսքի ընդհանուր բովանդակությունը մասնավորելով․ բայց այդ դեպքում առաջին նախադասությունը լրիվ է լինում․ օրինակ՝* Հայրը որդուն կորցրեց, քույրը՝ եղբորը, կինը՝ իրա մարդին, աղջիկը՝ հորը *(«Հայ աշուղներ»)։* Մոտակա թփից մի ծիտ ճչաց, մի ուրիշը՝ մյուս թփից, մեկն էլ՝ հեռվից *(Թ․,* III, *78)։ Երբեմն այս կարգի թերի նախադասությունները կարող են ընդմիջվել այլ նախադասություններով։ Համեմատիր՝* Մառանի անկյունում սառած ընկած էր Իվան բեյը, մատները արնոտ, չռած աչքերով: Բռունցքի մեջ սեղմել էր պղնձե երկու կոճակ, կողքին՝ ջարդված կնունքի փշրանքներ, թղթի կտորներ, հին թղթադրամ *(ԱԲԵ, 407)։ Այս թերի նախադասությունների ստորոգյալն է* ընկած էր:

Գ. ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ՄՏՆՈՂ ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բարդ համադասական նախադասության մեջ երբ երկու կամ ավելի նախադասությունների համար անհրաժեշտ է միևնույն ստորոգյալը, հաճախ հաջորդող նախադասությունների մեջ պակասում է հիշյալ ստորոգյալը և դրանք բարդ համադասական նախադասության կազմում ձևավորվում են իբրև թերի նախադասություններ․ օրինակ՝ Էմման շարունակ նայում էր դեպի դուրս, իսկ Աննան՝ նրա ծոծրակին *(Նար․,* II, *343)։* Էդ պատճառով էլ բոլորն էլ էստեղ տխուր են, ու ամենից ավելի ինքը՝ իշխանը *(ՍՉ,* V, *411)։* Եվ ամեն դուռն ուներ իր ուրույն ձայնը, և ամեն խփողը՝ իր ուրույն ձևը *(ԳՄԵՍ, 326)։* Քամանչի ձայնը գալիս էր հենց դիմացի պատուհանից, առաջին հարկից, իսկ մյուս ձայները՝ երկրորդ հարկից *(ԵՉԵ, 398)։* Նա գործում է խելքով, իսկ Շուշանիկը՝ զգացումներով *(ՇԵԺ,* III, *363)։* Այնտեղ գործում է փողը, իսկ այստեղ՝ վախը *(ՎՓԵԺ,* II, *116)։*

Ծանոթություն.— Սովորաբար թերի նախադասությունը հաջորդում է լրիվ նախադասությանը, բայց բացառություններ նույնպես կարող են լինել։ Համեմատիր՝ Թխկենիների ու լորենիների վրա տեղ-տեղ դեղնել էին, իսկ բարդիների տակ թափված էին արդեն արտասև խամրած տերևները *(ԲՎԻԵԳ, 14)։*

Դ. ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ՄՏՆՈՂ ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բարդ ստորադասական նախադասության կազմում գտնվող ամենասովորական թերի նախադասությունը այն է, ուր բացակայում է ենթական. ենթական ընդհանուր է ամբողջ բարդ նախադասության համար. օրինակ՝ Նա որքան աշխատում էր որևէ բացատրություն տալ այդ երևույթին, մնում էր տարակուսած *(Նար., II, 264)։* Երբ բռնողը Մրոցից էր, Ծիրանի տափն իրենց գյուղի համար էր խնդրում *(ԱԲԵ, 47)։* Այդ մասին Միրի երեխաները պիտի իմանային, երբ չափահաս դառնային *(Նույն տեղում, 43)։* Թե ինչպես Աշոտը հասավ այն բանին, ինչին ձգտում էր *(ՎԱՀԳ, 162)։* Հենց որ պապս կնունքը տեսավ, ուրախությունից ուշաթափվեց *(ՎԹԵ, 31)։* Նա թողել էր երկիրը... որովհետև իր նշանածին էր որոնում *(ՎՓԵԺ, II, 291)։*

Պակասող ենթակայով թերի նախադասությունը կարող է լինել թե՛ երկրորդական նախադասությունը և թե՛ գլխավորը, նայած ինչպես են շարադասված. սովորաբար թերի նախադասությունը ետադաս է։

Ծանոթություն.— Ենթական կարող է երկու նախադասությունների մեջ էլ լինել, երբ հարկավոր է շեշտել այն. օրինակ՝ Սակայն նրանք չեն քաշվում միշտ պարծենալու, որ իրանք սկզբունքների զինվորներ են *(Թ., VI, 69)։* Այժմ թող դառնի ամեն մարդ, քանզի ամեն մարդ այսքան տեղը դառնելու ընդունակություն պիտի ունենա *(Նույն տեղում, 118)։*

Բարդ ստորադասական նախադասության կազմում երբ ենթական ընդհանուր է, թերի նախադասությունը կարող է արտահայտվել փոխանուն սեռական ենթակայով, բայց այս դեպքում

թերի նախադասության մեջ բացակայում է նաև ընդհանուր ստորոգյալը. օրինակ՝ Եվ ոչ ոքի կարծիքը նրան չէր վախեցնում այնքան, որքան Շուշանիկինը *(ՇԵԺ, III, 222)*: Չնայելով նորթեղենի երկու խանութ կար գյուղական հրապարակում, բայց Կիրակոսենց Գալոյինն անհամեմատ ավելի լավն էր *(Փափ., 106)*:

Եթե բարդ ստորադասական նախադասության կազմում ստորոգյալը ընդհանուր է, ապա երկրորդական նախադասության մեջ կարող է ստորոգյալը բացակայել և ըստ այդմ երկրորդական նախադասությունը դառնալ թերի. օրինակ՝ Ցուրտը և արևը խանձել են նրանց կուրծքը, ինչպես լեռան լանջը *(ԱԲԵ, 112)*: Միքայելը բարոյապես տանջվում էր ոչ պակաս, քան իր հոմանին *(ՇԵԺ, III, 171)*: Ծափահարում էր ոչ թե մի կամերայի բնակչություն, այլ շատ ավելի հոծ բազմամարդ հասարակություն *(ԵՉԵ, 398)*: Ինչպես դու, ես էլ մտքերով իմ ապրում եմ գալիքում դեռ չեկած *(Նույն տեղում, 253)*: Իսկ խաղաղ ժողովուրդը դատարանից նույնքան է վախենում, որքան հանցավորներից *(Թ., VI, 75)*: Ուրեմն դու ծախում ես քեզ վախին և հասարակաց կարծիքի համար այնպես, որ *(պես)* մի պոռնիկ կին՝ փողի համար *(ՎՓԵԺ, II, 116)*: Պատանին էլ նույնքան գիտեր, որքան ինքը *(ՇԵԺ, III, 470)*:

Ծանոթություն.— Եթե բարդ ստորադասական նախադասության կազմում ընդհանուր են նաև այլ անդամներ, թերի նախադասության մեջ կարող են դրանք բացակայել: Համեմատիր՝ նրանց թվում է՝ թագավորի այգում երգող թռչունները, սարից իջնող աղբյուրներն ու ջրերն էլ այն կլկլոցն ու մրմունջը չեն հանում, ինչ տղայի սրինգը *(ՍՉ, V, 408)*: Ինչ տղայի սրինգը *թերի նախադասության մեջ ստորոգյալի հետ պակասում են նաև ուղիղ խնդիրները (կլկլոցն ու մրմունջը), որոնք ընդհանուր են ամբողջ բարդության համար:*

Թերի նախադասությունները շատ սովորական են նաև միավորյալ նախադասությունների մեջ. երբ ստորոգյալը ընդհանուր է, գերազանցապես հաջորդող միավորյալ նախադասությունների մեջ բացակայում է. օրինակ՝ Գլխավոր փողոցից մենք թեքվեցինք դեպի ձախ, ապա՝ դեպի աջ, հետո ուրիշ մի խուլ փողոց *(ԳՄԵՍ, 280)*: Էս գործը տանք սրան, թող կեսը տակը զցի, կեսը վրան *(ՍՉ, V, 337)*:

Ե. ԿՐԿՆՎՈՂ ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Երբեմն նախորդ նախադասության մի որևէ անդամ կամ մաս կրկնվում է նախադասությունից դուրս, որպեսզի ցույց տրվի նախադասության մեջ այդ անդամի կամ մասի կարևորությունը. այսպիսի առանձնացումը և նախադասությունից դուրս կրկնությունը հուզարտահայտչականորեն ուժեղացնում է հիշյալ անդամը կամ մասը, որը գերազանցապես բացականչական բնույթի է և հաճախ էլ ունենում է բացականչական բառեր. օրինակ՝ երկրորդ նորությունը... հինգ հարկանի այն հսկա շինությունն է, որ կանգնած է քաղաքի մեջտեղում, որպես ահռելի մի վեհություն, քարե ակնածանք: Այո, Քարե ակնածանք *(ԵՁԵ, 305)*: Այս աշխարհում փողն է ամեն բանից բարձր: Փող, փող, փող. ոչ ազգական, ոչ բարեկամ, ոչ եղբայր, ոչ քույր, ոչ մարդկանց պատիվ, ոչ սեր, ոչ քահանայի օրհնություն, ոչ ծնողների համբույր, փող, փող, փող *(ՇԵԺ,* III, *437)*: *Երբեմն էլ որևէ անդամի կամ մասի առանձնացումը ուղեկցվում է առանձին լրացումներով, ճշտումներով, խնդիրներով, կամ այդպիսի մասերը դուրս են բերվում նախադասությունից՝ կապակցելու որևէ նախադասության կամ ուրիշ անդամների հետ և այլն. օրինակ՝* Եվ նա պիտի այրվեր, նա՝ այդ զմայլելի էակը մի անդամալույծի, մի մահամերձի համար *(ՇԵԺ,* III; *404)*: Իջնում է նորից գիշերը, խաղաղ-զովագին և աստղասարսուռ, անհուն մի գիշեր *(ՎԹԵ, 28)*: Նայում եմ թթենուն, աչքերս խորասուզվում են նրա արմատները: Թթենին նա իմ հայրն է ճյուղավորված և կանաչած *(Նույն տեղում, 171)*: Ես լսել եմ քամու այդ երգը... դա քո արյան երգն է, որ արևն է երգում...: Երգ, երգ անվերջանալի և հավիտենապես սարսուռ, երգ, որ կաթում է երկնքի մանիշակների բաժակներից... երգ, որ վազում է գարնան հեղեղների հետ, գետի ալիքներով, երգ, որ փոխվում է անսահման ծովերի վրա իբրև կապույտ անդորրը *(Նույն տեղում, 171—172)*: Ընտանիքի մեջ գործածական լեզուն վրացերենն էր,— թիֆլիսեցի հայոց յուրահատուկ վրացերենն՝ աղճատված և ամեն ազգի բառերով խճողված *(Նար.,* II, *549)*: Ընդհակառակն, նրա քույրը տեղն ու տեղը կրակ էր,— կրակ շարժումների մեջ, կրակ քայլվածքի մեջ, կրակ խոսակցության մեջ *(Նույն տեղում, 551)*:

Երբեմն կրկնվող բառը ուղեկցվում է մի անորոշ դերանվանական որոշիչով, երբ հարկավոր է այն բացահայտել որևէ որոշիչ երկրորդական նախադասությամբ. օրինակ՝ Լուրջ ժամանակ ժպիտը անպակաս էր նրա դեմքից, մի ժպիտ, որ հիանալի մատնեհարներ էր գոյացնում նրա թշերի վրա *(Նար., II, 551)*։

Զ. ԶԵՂՉՎԱԾ ԲԱՌԵՐՈՎ ՈՒ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Երբեմն նախադասության սկզբում գործածվող բաղադրյալ բառակապակցության անդամներից մեկը հաջորդ մասում այլևս չի կրկնվում. դրանցից մեկի հիշատակումը արդեն հուշում է ամբողջ կապակցությունը, որ լրիվ գոյություն ուներ նախորդ մասում։ Այսպիսով՝ մի լրիվ նախադասության կազմում առաջանում են թերի բառեր ու բառակապակցություններ։ Այդպիսի կապակցություններից թերի են մնում ստորոգելիական վերադիրներն ու հանգույցները, այսինքն, հաջորդ մասում կամ մեկն է մնում, կամ մյուսը. օրինակ՝ Հիմի թե իրեն գտնեմ էլ ոչ, էս հո որս է ու որս *(Թ., III, 55)*։ Ես մի դեռափթիթ աղջիկ էի, իսկ դու մետաքսավարս այծերի հովիվ *(ԱԻԵ, 283)*։ Նրանք շատվոր էին՝ տաս հոգու չափ, իսկ մենք՝ երկուս *(ՍԶՀԲ, 67)*։ Ես մեղավոր չեմ, չեմ, չեմ, չեմ *(Նար., II, 541)*։ Տղի անունը Հենզել էր, աղջկանը՝ Գրետել *(Թ., III, 312)*։ Գլխի մազերը կես առ կես սև ու ճերմակ էին, աչքերը կայծով էին, ձայնը՝ ուժով, ողնաշարը շիտակ *(ԱԻԵ, 265)*, Ես պոետ էի, նա արի զինկոմ *(ԵՉԵ, 213)*։ Եվ ինչ է սիրո իմաստը վերին, ի՞նչ երջանկության խորհուրդը խորին *(Թումանյան, «Դեպի անհունը», VI)*։ Այդ լեզու չէր, այլ կարոտ, տխրություն, զայրույթ *(ԱԲԵ, 357)*։

Երբեմն եղանակավորող բայը կամ դրան ուղեկցող անորոշ դերբայն են պակասում նախադասության հաջորդ մասում. օրինակ՝ Ավազակը սիրտ չուներ նրա հոտի շուրջը ման գալ և ոչ իսկ գայլը ոչխարի կողքին քաշ գալ *(ՎՓԵԺ, II, 339)*։ Ես չեմ ուզում գնալ, իսկ նա ուզում է: Ես կարող եմ գնալ, իսկ դու չես կարող:

Բաղադրյալ ժամանակների օժանդակ բայը կարող է բացակայել նախադասության հաջորդ մասերում. օրինակ՝ ընկած էին տներն իրարից հեռու, գործարանները մեջընդմեջ կե-

ցած *(ՆՉՆ, 211)*։ Հնչում էր փրփրուն վտակն արծաթի, Արևը խաղում պայծառ կապույտում *(Թումանյան, «Դեպի անհունը»)*։ Վիշտը հանգչում է նրա մեջ, Ապրում սերը անապական *(Նույն տեղում)*։ Խրճիթի մեջ ամեն բան տակն ու վրա էր. մահիճը քանդված, աթոռները ջարդուփշուր խառնված պղնձեղենների և կոտրտված ամանների հետ *(ՎՓԵԺ, Ա, 201)*։ Այլևս չէին դողում նրա ձեռքերը և ոչ իսկ այնպես վախ ազդում նրա ակնարկը *(Նույն տեղում, 202)*։

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

X

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բարդ է կոչվում այնպիսի նախադասությունը, որը կազմված է երկու կամ ավելի պարզ նախադասություններից։ Այս պարզ նախադասությունները բարդության մեջ միասնաբար կազմում են իմաստային ու հնչերանգային ամբողջություն և որոշ կողմերով այլևս այն չեն, ինչ դրանք ներկայացնում են բարդությունից դուրս։

Պարզ նախադասությունը ունի մի ստորոգվող միավոր, իսկ բարդը կազմված է երկու կամ ավելի այդպիսի միավորներից, որոնք բարդության մեջ միասնաբար են հանդես գալիս։ Պարզ նախադասությունները բարդության մեջ, ինչպես ակնարկվեց, միևնույն անփոփոխ ձևով չեն մտնում. դրանք դառնում են բարդ ամբողջության միավորներ։ Պարզ նախադասությունը կազմված լինելով բառերից ու բառակապակցություններից, ինքնին մի իմաստային ու հնչերանգային ամբողջություն է ներկայացնում իր երկու գլխավոր անդամներով կամ այդպիսի մեկ անդամով (միակազմ նախադասության դեպքում)։ Այս ամբողջականությունը առանձնապես ընդգծվում է իր ինքնուրույն իմաստով և արտաբերական կամ հնչերանգային ավարտվածությամբ։ Մտնելով բարդ նախադասության կազմի մեջ՝ այդպիսի պարզ նախադասությունը ավելի կամ պակաս չափով զրկվում է իմաստային ինքնուրույնությունից (հատկապես ստորադասական կապակցության մեջ), իսկ ամենագլխավորը, որ տվյալ դեպքում նշանակալից դեր է կատարում բարդության համար, կորցնում է իր արտաբերական կամ հնչերանգային ավարտվածությունը և ենթարկվում է մի ընդհանուր հնչերանգային վերջացածության, որը ոչ թե պատկանում է բարդության առանձին մասերին, այլ ամբողջ բարդությանը։ Սրանով էլ հենց բարդության առանձին նախադասությունները միասնանում և դառնում են լեզվական հաղորդակցման յուրահատուկ միավոր և ըստ այդմ քերականական ուսումնասիրության առանձնակի նյութ։

Բարդ նախադասության կազմի մեջ մտնող սկզբի պարզ նախադասությունները արտաբերվում են հնչերանգային այնպիսի ելևէջներով, որոնք ցույց են տալիս, որ նախադասությունը չի վերջացել։ Ինքնուրույն պարզ նախադասությունն ունի իր սեփական արտաբերման սկիզբն ու վերջը, մտնելով բարդ նախադասության կազմի մեջ ամբողջովին կորցնում է իր ավարտունությունը։ Նույնիսկ պարզ նախադասությունը սկսման այնպիսի երանգ չունի, ինչպես նույնը բարդ նախադասության կազմում։ Բարդությունը ձեռք է բերում նոր արտաբերական ավարտունություն։ Նույնիսկ բարդության վերջին նախադասությունը չունենալով ինքնուրույն սկզբնավորում, հնչերանգությամբ չի վերջավորվում այնպես, ինչպես կվերջավորվեր ինքնուրույն լինելու դեպքում։

Բարդ նախադասությունը ձևավորվում է շարահյուսական մի շարք միջոցներով․ այս միջոցներն են հնչերանգությունը, շաղկապները, հարաբերական դերանունները ու շաղկապային բառերը, հարաբերյալ բառերը, նախադասությունների շարադասությունը, եղանակների ու ժամանակների կիրառությունը։

Հնչերանգության մասին արդեն խոսվեց․ այժմ համառոտակի բացատրենք մյուս միջոցների դերը բարդ նախադասության կառուցվածքի մեջ։

Դրանցից ամենակարևորը շաղկապներն են, որոնք բարդ նախադասության առանձին մասերի կապակցման, փոխհարաբերության ձևավորման, դրանց բնույթի բացահայտման մեջ նշանակալից դեր են կատարում։ Շաղկապների նշանակությունը այնքան մեծ է, որ միևնույն նախադասությունները մի բարդության մեջ կապակցվելով այս կամ այն շաղկապով տարբեր բնույթի բարդություն են կազմում․ օրինակ՝ Մի կին ջուր էր առնում, քանի մարդիկ չէին զարթնել։ Մի կին ջուր էր առնում, թեև մարդիկ չէին զարթնել։ Մի կին ջուր էր առնում, իսկ մարդիկ դեռ չէին զարթնել։ Միևնույն բառերով արտահայտված այս երեք բարդ նախադասությունները տարբեր շաղկապներով տարբեր բնույթ են ստանում։ Առաջինը ժամանակի երկրորդական նախադասությամբ բարդ է, երկրորդը ունի զիջական երկրորդական նախադասություն, իսկ երրորդը այս կամ այն չափով հակադրություն է արտահայտում և համադասական կապակցություն է։ Շաղկապների դերը բարդ նախադասության կազմության մեջ այնքան կարևոր է, որ շաղկապները տեսակավորում են ըստ իրենց հիշյալ պաշտոնների։

Հարաբերական դերանունները կամ շաղկապային բառերը

բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ երկու դեր են կատարում. դրանք երբեմն հանդես են գալիս իբրև շաղկապներ և կապում են գլխավոր ու երկրորդական նախադասությունները միմյանց հետ. օրինակ՝ Որ նայեցի, սաս մեծ Սալոր բաղում թուր էինք ուտում *(ԱԲԵ, 148): Այս նախադասության մեջ* որ *շաղկապ է և նույն դերն է կատարում, ինչ* որ երբ *շաղկապը: Դրանք հաճախ կատարում են նախադասության անդամների դեր և դառնում են ենթակա կամ խնդիր, այսինքն՝ ստանում են նյութական նշանակություն արտահայտող բառերի պաշտոն. օրինակ՝* Նա էր խանգարում ծիրանի ծառը, որ բուսել էր մեր դասարանի միակ պատուհանի առաջ *(Նույն տեղում, 149): Այս նախադասության մեջ արդեն* որ *կապակցական դերի հետ կատարում է նաև ենթակայի պաշտոն:*

Հարաբերյալ բառերը կիրառվում են գլխավոր նախադասության մեջ և ցույց են տալիս ընդհանուր առարկա կամ երևույթ, որ բացահայտվում ու թանձրացական է դառնում երկրորդական նախադասությամբ կամ նրա մեջ. օրինակ՝ Գարուն էր: Մեկը այն անհամար գարուններից, որ զարդարել են երկիրը *(ԱԻԵ, 286):*

Այստեղ այն *հարաբերյալ բառը ընդհանուր կերպով արտահայտում է* զարդարել են երկիրը, *որ պարզաբանված ու թանձրացական կերպով արտահայտվում է երկրորդական նախադասությամբ: Մի ուրիշ ավելի ցայտուն օրինակ.* Մի անիր մերձավորիդ այն, ինչ որ դու չես ուզում նույնը քեզ անեն *(ԱԻԵ, 321): Հարաբերյալ բառերը նույնպես հանդես են գալիս այլևայլ պաշտոններով. այսպես՝* գնա այնտեղ, ուր կանգնած է ընկերդ. այնտեղ *հարաբերյալ բառ է տվյալ նախադասության մեջ, սակայն* այնտեղ թափված են զանազան իրեր, որոնք արդեն փչացել են. *նախադասության մեջ* այնտեղ *միայն տեղի պարագա է:*

Բարդ նախադասության կառուցվածքում առանձնակի դեր ունի նաև առանձին նախադասությունների շարադասությունը: Այդ հատկապես զգալի է հետևանքի երկրորդական նախադասությամբ բարդության մեջ, ուր երկրորդական նախադասությունները ետադաս են լինում, իսկ շարադասական փոփոխությունը քանդում է ողջ կառուցվածքը: Օրինակ՝ Բայց զգացմունքների հոսանքը տարավ ինձ այլ կողմ, ուստի մտադրյալ նյութից հեռացա *(Մուր., 2, 148): Այս նախադասության առանձին մասերի շարադասությունը անկարելի է փոփոխել: Համեմատիր՝* Թեև շա՛տ էր ծերացել Սաադին, սակայն նրա հոգին երազի աչքերով և ականջով երազի՝ տես-

նում էր ու լսում աշխարհի չքնաղ իրերն ու ձևերը *(ԱԻՆ, 286)*։ *Այս կարգի զիջական երկրորդական նախադասությամբ բարդ նախադասության մասերի շարադասությունը նույնպես կայուն է։ Բավական է գլխավոր նախադասության եզրում* սակայն *շաղկապը զեղչենք, շարադասությունը կդառնա ազատ։*

Որոշ բարդ նախադասության առանձին մասերի կապակցության մեջ դեր են կատարում նաև բայերի եղանակներն ու ժամանակները. այսպես՝ նպատակի պարագայական նախադասությունները կիրառվում են ըղձական եղանակով։ Որ *շաղկապով կապակցվող որոշ երկրորդական նախադասությունների ստորոգյալը կիրառվելով պայմանական ու ըղձական եղանակներով, այդպիսի նախադասությունները դարձնում են պայմանի երկրորդական նախադասություններ, իսկ եթե ստորոգյալները դրվում են այլ եղանակներով ու ժամանակներով, պայմանականությունը հաճախ մթագնվում է, և բարդությունը արտահայտում է այլ հարաբերություններ. օրինակ՝* Նա որ սկսի նվագել իր բյուրաղի քնարը, իսկույն կլռեն մյուսները: Նա որ սկսում էր նվագել իր բյուրաղի քնարը, իսկույն լռում էին մյուսները: *Վերջին նախադասության մեջ ցայտուն է ժամանակային հարաբերությունը, մինչդեռ պայմանականությունը գրեթե մթագնվել է. իսկ առաջին նախադասությունն արտահայտում է պայմանի հարաբերություն։ Այդպես էլ այլ կարգի բարդությունների մեջ առանձին մասերը իրար նկատմամբ որոշ եղանակային ու ժամանակային կայունությամբ են կապակցվում։*

Բարդ ստորադասական նախադասության և համադասականի միջև որոշ ընդհանրություններ կան, որոնք առիթ են ծառայել մի շարք լեզվաբանների համար ժխտելու բարդ նախադասության բաժանումը երկու հիմնական խմբի. նրանք գտնում են, որ քերականական հիմքեր չկան բարդ նախադասության այդպիսի բաժանման համար, ուստի քերականությունից պետք է դուրս նետել համադասական ու ստորադասական կարգերը։

Հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բարդ նախադասության այդպիսի բաժանումը շարահյուսորեն հիմնավորվում է։ Ռուս լեզվաբան Պեշկովսկին բացահայտեց տվյալ բաժանման համար հիմք ծառայող մի շարք առանձնահատկություններ, որոնք բերվում են ստորև։

1. Ամենից առաջ համադասական կապակցության շաղկապները համադրական, հակադրական և տրոհական շաղկապներ են, որոնք գործածվում են նաև պարզ նախադասության առանձին ան-

դամների կապակցության համար, իսկ բարդ ստորադասական նախադասության շաղկապները պարզ նախադասության մեջ չեն կիրառվում, այսինքն՝ դրանք հիմնականում չեն կապում նախադասության առանձին անդամներ։

2. Համադասական շաղկապները ծառայում են միայն իբրև երկու համազոր նախադասության համար կապակցման միջոց և կիրառվում են այդ երկու նախադասության միջև՝ առանց հարելու մեկին կամ մյուսին. ճիշտ է, արտաբերական առումով շաղկապը առնչվում է երկրորդ նախադասությանը, բայց դա զուտ արտաքին և հնչերանգային արժեք ունի։ Եթե տվյալ կապակցության շարադասությունը փոխենք, շաղկապը անմիջապես կանջատվի տվյալ վերջադաս նախադասությունից և կհարի մյուս վերջադասին. օրինակ՝ Գետի երեսով արդեն փչում է սառը հոսանքը, և խոնավանում է գետինը (ԱԲԵ, 219)։ Այստեղ և շաղկապը արտաբերությամբ առնչվում է վերջին նախադասությանը։ Խոնավանում է գետինը, և գետի երեսով արդեն փչում է սառը հոսանքը։ Այս դեպքում էլ է առնչվում վերջինին. այդ նշանակում է, որ համադասական և շաղկապը շարահյուսորեն ոչ մեկի հետ առանձնակի ամբողջություն չի կազմում, այլ կատարում է միայն կապակցման պաշտոն։ Իսկ բարդ ստորադասական նախադասությունը ինչպես էլ փոխենք, շաղկապը միշտ առնչվում է երկրորդական նախադասությանը, որովհետև շարահյուսորեն կապված է նրա հետ. օրինակ՝ Նա աշխատում էր ինձ մի քանի հազար ռուբլիով կաշառել, որպեսզի ես հրաժարվեմ իմ արդար պահանջից։ Որպեսզի ես հրաժարվեմ իմ արդար պահանջից, նա աշխատում էր ինձ մի քանի հազար ռուբլիով կաշառել։

Զույգ շաղկապների դեպքում մեկը հարում է երկրորդական նախադասությանը, մյուսը՝ գլխավորին. բայց այստեղ կարևորը երկրորդական նախադասությանը հարող շաղկապն է, իսկ մյուսը հաճախ իբրև թարմատար է կիրառվում և կարող է դուրս ընկնել. օրինակ՝ Եթե դու չգաս, ապա ես մենակ կգնամ։ Ապա շաղկապը, որ հարում է գլխավոր նախադասությանը, կարող է չլինել. եթե մասերի շարադասությունը փոխենք, ապա շաղկապի գործածությունը անկարելի է. օրինակ՝ Ես մենակ կգնամ, եթե դու չգաս։

3. Ինչ վերաբերում է հարաբերական ու շաղկապային բառերին, ապա սրանք բացարձակորեն կիրառվում են երկրորդական նախադասության մեջ և ըստ իրենց բնույթի հաճախ նրա այս կամ այն անդամն են հանդիսանում. օրինակ՝ Այդ բոլորը, ինչ որ աս-

ցիր, դատարկ բաներ են (*ՇԵԺ, 6, 244*)։ Բայց մի՞թե պիտի խոսեիք, որ զգայի իմ ողորմելի դրությունը (*նույն տեղում, 242*)։ Ինչ(որ) *հարաբերականը առաջին օրինակի մեջ երկրորդական նախադասության համար խնդիր է, իսկ* որ-*ը շաղկապ է, որ դարձյալ հարում է երկրորդական նախադասությունը։*

4. Հարաբերյալ բառերն են միայն, որ գլխավոր նախադասությանն են հարում, որոնք սակայն մատնացույց են անում, որ այդպիսի հարաբերյալները կիրառված են, որպեսզի բացահայտվեն, թանձրացական դառնան մի երկրորդական նախադասությամբ. օրինակ՝ Բանն այն էր, որ մերկ կնոջ անհետանալովը գժտություն սկսվեց ժողովրդյան մեջ (*ՓԱՓ, 292*)։ *Այն հարաբերյալը կամ ցուցական դերանունը գլխավոր նախադասության ստորոգելիական վերադիրն է, բայց առանց հաջորդող երկրորդական նախադասության ոչինչ չի ասում և հենց կիրառված է նրա համար, որ նախապատրաստի երկրորդական նախադասության շարակցումը։*

5. Համադասական նախադասության առանձին մասերի ժամանակների գործածությունը չի պայմանավորվում մեկը մյուսով, այլ առնչվում է խոսակցության պահի հետ. օրինակ՝ Զգայախաբության ենթակա չեմ եղել ես,... բայց այդ րոպեին կատարելապես այն աղջիկը երևաց ինձ (*ՓԱՓ, 393*)։ *Այս բարդության առանձին մասերի ժամանակները բացարձակ են և խոսակցության պահի նկատմամբ մեկը վաղակատարով է արտահայտված, իսկ մյուսը՝ անցյալ կատարյալով։ Սովորաբար համադասական կապակցության մեջ կիրառվում է միևնույն ժամանակը, որով առաջանում է ժամանակների միասնությունը։*

Բարդ ստորադասական նախադասության մեջ երկու նախադասությունների ստորոգյալների ժամանակները իրար նկատմամբ կախվածության հարաբերության մեջ են գտնվում որոշ սահմաններում՝ նայած որ մեկն է նախադաս. այսինքն մեկի ժամանակը որոշվում է մյուսի ստորոգյալի ժամանակի հարաբերությամբ և ոչ թե խոսակցության պահի հարաբերությամբ. օրինակ՝ Եթե հարյուրավոր աչքեր ունենար մարդը, դարձյալ անկարող կլիներ նկատել (*Ր., 3, 275*)։ *Պետք է նկատի առնել, որ այս դեպքում ժամանակների կախվածությունը կապվում է նաև բարդ նախադասության առանձին մասերի շարադասության հետ։*

6. Բարդ համադասական նախադասության յուրաքանչյուր մաս հաջորդում է մեկը մյուսին՝ առանց մեկը մյուսի մեջ մտնելու. դրանց ամբողջականությունը երբեք չի քանդվում. օրինակ՝

Ոսկի մազերը ծփում էին ուսերի վրա, և երեսի գույնը սպիտակ էր աղջկա պես. քիթը արծվենի էր ***(ԱԻԵ, 212):*** *Իսկ բարդ ստորադասական նախադասության մեջ երկրորդական նախադասությունը կարող է դասավորվել գլխավոր նախադասության մեջ, որ նշանակում է, թե այն անկախ նախադասություն չէ.* Էսօրվան կուլտուրական ժողովուրդները, ինչքան էլ հարկադրված լինեն պատերազմ գնալու, այնուամենայնիվ պատերազմ չեն սիրում ***(Թ., 4, 305):***

7. Բարդ համադասության մեջ կարող է թերի նախադասություն դառնալ հաջորդող նախադասությունը, որի պակասող անդամը ըմբռնվում է նախորդի մեջ. օրինակ՝ Նա աճապարում էր տուն, իսկ ընկերը՝ դպրոց: *Բարդ ստորադասական նախադասության մեջ կարող է գլխավոր նախադասության որևէ անդամ պակասել, իսկ այդ պակասած անդամը դառնալ հենց երկրորդական նախադասությունը ամբողջապես. օրինակ՝* Գնա, ուր քեզ թելադրում է քաղաքացիական պարտքդ: *Գլխավոր նախադասությունը չունի տեղի պարագա, երկրորդականը ամբողջովին նրա տեղի պարագան է:*

8. Համադասական նախադասությունը կարող է կազմված լինել միմյանց հետ համազոր շղթայված մի շարք նախադասություններից (բացառություն են կազմում հակադրական և զուգադրական բարդությունները), իսկ ստորադասական նախադասության մեջ գլխավորը և երկրորդականը զույգ ամբողջություն են կազմում. եթե մի գլխավոր նախադասություն ունի երկու կամ ավելի երկրորդական նախադասություն, դրանք իբրև լրացնող նախադասություններ գլխավորի հետ առանձին զույգեր են կազմում, այսինքն՝ եթե երկրորդականներից մեկը որոշիչ երկրորդական է, ապա գլխավորի հետ զույգ է կազմում իբրև այդպիսին, իսկ մյուսն էլ իր հերթին իբրև այլ կարգի լրացուցիչ նախադասություն, մի այլ կարգի զույգ է կազմում:

9. Վերջապես նշվում է նաև հնչերանգային տարբերությունը. համադասական նախադասությունն ունի հակադրական, թվարկման հնչերանգություն, իսկ ստորադասականը՝ ստորադասման և պարզաբանման[1]*:*

Այս տարբերությունները սահմանազատում են վերոհիշյալ երկու քերականական կարգերը, որոնք դիտվում են իբրև շարա-

---

[1] ***Տե՛ս*** *А. Н. Гвоздев*, Современный русский лит. язык, II, стр. 179—184.

հյուսական տարանձնակի երևույթներ։ Այս պատճառով, ինչքան էլ դրանք քննադատվել և համարվել են ավանդական քերականության սխալ ժառանգություն, ժամանակակից քերականագիտությունը նկատի ունենալով այդ հիմունքները, բարդ նախադասության երկու հիմնական խմբի բաժանումը ընդհանուր գծերով համարում է ճիշտ և ընդունելի։

Սակայն այս երկու բաժանումների շրջանակներում ամփոփվող քերականական տարբերությունների կողքին կան նաև համընկնող երևույթներ, որոնք հիմք են ծառայել քննադատության համար։ Իմաստային կողմով երբեմն համադասական և ստորադասական կապակցությունները շատ են մոտենում միմյանց և տարակուսանք են առաջ բերում ուսումնասիրողի մեջ։ Այսպես, օրինակ, զիջական նախադասությունները երբեմն համընկնում են հակադրական նախադասությունների հետ, մանավանդ երբ գլխավոր նախադասության եզրում լինում են հակադրական բայց, սակայն *շաղկապները. օրինակ՝* Թեպետ այստեղ Երևանում շոգ է, սակայն մի յոթ-ութ կմ վերև՝ Քանաքեռում զով է: *Նախ պետք է ասենք, որ այս կարգի կառուցվածքների մեջ նույնիսկ շեշտվում է ոչ թե հակադրությունը, այլ հակառակ հիմունքը, այսինքն՝ որ այնտեղ Քանաքեռում էլ շոգ պետք է լիներ, սակայն շոգ չէ։ Այսպես նաև հետևանքային երկրորդական նախադասությունները դառնում են գլխավոր, երբ սկսվում են որևէ պատճառական շաղկապով. օրինակ՝* Պետք էր գնալ իշխանների մոտ, ուստի Արտակը վեր կացավ *(ԴՏԵԺ, 3, 83)։* Որովհետև պետք էր գնալ իշխանների մոտ, ուստի Արտակը վեր կացավ: *Այս վերջին օրինակում ի հակադրություն նախորդի առաջինն է երկրորդական։ Նույնիսկ ոմանք (օրինակ Մ. Աբեղյանը)* ուստի *շաղկապով կապակցվող առաջին օրինակին համապատասխան նախադասությունը համարում են համադասական։ Դրա համար անշուշտ կան հիմքեր. ըստ այն փաստարկման, որ երկրորդական նախադասությունը կարող է շարադասվել գլխավոր նախադասության ներսում։ Իրոք,* ուստի *շաղկապով կապվող երկրորդական նախադասությունը չի ենթարկվում այդ օրենքին, սակայն ըստ այն կանոնի, որ ստորադասական շաղկապները սերտ հարում են երկրորդական նախադասությանը և ինչպես էլ շարադասենք, դրանք այս վերջինից չեն զատվում,* ուստի *շաղկապի նկատմամբ լրիվին արդարանում է, դեռ չենք նշում այն ուժեղ հետևանքային հարաբերությունը, որ արտահայտում է* ուստի *շաղկապը։*

Ինչպես նկատելի է, առկա են նաև այնպիսի երևույթներ, որոնք ընդհանուր են երկու բաժանումների համար, սակայն այդ ընդհանրությունները այն ակնհայտ յուրահատկությունների համեմատությամբ, որոնք առանձնացնում են ստորադասական ու համադասական կապակցությունները իբրև առանձին շարահյուսական կարգեր, սակավ են և ամեն կարգի նախադասությունների համար ընդհանուր չեն: Նախադասությունները իբրև խոսքի հաղորդման միավորներ ինչքան էլ տարատեսակ լինեն, վերջիվերջո ունեն միմյանց հետ առնչվող ընդհանրություններ. այդպես չե՞ն արդյոք գիտության այլ բնագավառների ուսումնասիրության առարկաներից շատ շատերը: Այս դեպքում դրանք արդեն ուսումնասիրվում են իրենց կարևոր տարբերակիչ հատկանիշներով, որոնք էլ հենց հիմք են ծառայում դրանց ստորաբաժանման:

1. ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բարդ ստորադասական է կոչվում երկու ոչ համազոր նախադասությունների այնպիսի միասնությունը, ուր առանձին նախադասությունները միմյանց հետ կապակցվում են ստորադասական շաղկապներով, հարաբերական դերանուններով ու շաղկապային բառերով և ուր նախադասություններից մեկը ստորադասվում է մյուսին: Ստորադասվող նախադասությունը կոչվում է երկրորդական, իսկ մյուսը, որին ստորադասվում է մի այլ նախադասություն, կոչվում է գլխավոր: Գլխավոր և երկրորդական նախադասությունը միասնական ամբողջություն են կազմում ըստ իմաստի և հնչերանգության և միմյանցից տարբերվում են ձևով ու կատարած պաշտոնով: Երկրորդական նախադասությունները իրենց եզրում սովորաբար ունենում են ստորադասական շաղկապներ, հարաբերական ու շաղկապային բառեր, որոնք հարում են նրանց՝ կազմելով անքակտելի միասնություն. գլխավոր նախադասությունը ինչ դիրքում էլ լինի, այդպիսի բառեր չի ստանում, եթե հաշվի չառնենք ստորադասական շաղկապների հետ երբեմն կիրառվող զուգադիր համադասական շաղկապները, որոնք հարում են գլխավոր նախադասությանը. օրինակ՝ թեպետ... այնուամենայնիվ, որովհետև... ուստի *և այլն: Երկրորդական նախադասությունը ձևավորվելով հիշյալ սպասարկու բառերով, բարդության մեջ միայն լրացական պաշտոն է կատարում, այսինքն՝ լրացնում, պարզաբանում է իր հետ կապակցվող մյուս նախադասությունը, որն ըստ այդմ կոչվում է գլխավոր:*

Գլխավոր և երկրորդական հասկացությունները սոսկ կառուցվածքային և գործառական արժեք ունեն: Շարահյուսական տեսանկյունից ոչ մի նշանակություն չունի, թե բարդության հիմնական իմաստը կամ միտքը մասերից որի մեջ է ամփոփված: Երբեմն գլխավոր նախադասությունը ստորոգում ունեցող մի այնպիսի բառ է կամ արտահայտություն, որ առանց երկրորդական նախադասության գրեթե անիմաստ է. օրինակ՝ Էնպես պատահեց, որ մեր գյուղում ուսումնարան բաց արին (Թ., 3, 117): Էնպես պատահեց գլխավոր նախադասությունը առանց երկրորդականի անիմաստ է, որովհետև նախադասության հիմնական միտքը կամ իմաստը ամփոփված է երկրորդական (որ մեր գյուղում ուսումնարան բաց արին) նախադասության մեջ: Ուրեմն գլխավոր անվանումը դարձյալ կապված է տվյալ նախադասության ձևի ու կատարած պաշտոնի հետ. ըստ ձևի այն զուրկ է շաղկապներից ու շաղկապային բառերից, իսկ ըստ պաշտոնի բարդության մեջ լրացվող, պարզաբանվող նախադասություն է:

Ա. ՈՐ ԲԱՌԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԴԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է զանազան շաղկապներով ու հարաբերական բառերով: Այս շաղկապներից ու հարաբերական բառերից շատերը նեղ, յուրահատուկ կիրառություն ունեն, այսինքն՝ որոշակիորեն վերաբերում են այս կամ այն բնույթի երկրորդական նախադասությանը. կան նաև այնպիսիները, որոնք ընդարձակ կիրառություն ունեն և իբրև կապակցող միջոց գրեթե բոլոր կարգի երկրորդական նախադասությունները կապում են գլխավորի հետ: Այդպիսի ընդհանուր կիրառություն ունի որ հարաբերական դերանունը կամ շաղկապը: Այս դերանունը կամ շաղկապը ոչ միայն ընդհանրական կիրառություն ունի, այլև իբրև կապակցման միջոց հանդես է գալիս քերականական տարբեր ձևերով: Ելակետ ունենալով հիշյալ հանգամանքները, իբրև նախապատրաստական նյութ, այստեղ առանձին քննվում են այդ դերանվան կամ շաղկապի գործածության առանձնահատկությունները:

Դասական գրաբարում որ հարաբերականը շաղկապային կիրառությամբ խիստ հազվադեպ է. բոլոր դեպքերում անհոդ և մեծ մասամբ եզակի է կիրառվում, մանավանդ, երբ հարաբերում է

ամբողջ նախադասությանը: Աշխարհաբարում՝ եզակի և անհոդ կիրառությունը սկսում է ավելի ընդարձակվել շնորհիվ այն բանի, որ հարաբերականը փոխարկվում է նաև շաղկապի: Այս ընթացքը տեղի է ունենում մի քանի ճանապարհով, որ արդեն գրաբարում էլ նկատվում է: Ամենից առաջ որ *հարաբերականը հարաբերում է մի ամբողջ նախադասության, որտեղ որոշակի հարաբերյալ չկա. այստեղից սկսվում է* որ *հարաբերականի շաղկապային կիրառության սկզբնավորումը: Ապա հաճախ նախադասության հարաբերյալը զեղչվում է, և* որ-*ը հարաբերում է մի չեղած հարաբերյալի: Երրորդ ուղին այն է, երբ* որ-*ը հարաբերում է առաջին և երկրորդ դեմք արտահայտող բառերի և զրկվում է երկրորդական նախադասության մեջ որևէ պաշտոն կատարելուց, այսինքն՝ վերածվում է շաղկապի: Շաղկապանալուն նպաստում են նաև* այն, նրան, մի բան *և այլ կարգի ոչ նյութական նշանակություն ունեցող բառերը, որոնք անջատվում են գլխավոր նախադասությունից և ծառայում են իբրև կապակցող հարաբերյալներ: Ահա օրինակներ այս բոլոր երևույթների համար:* Նախ աղջիկ էիր դու մի հասարակ, որ դեմս ելար օրերում դժնի *(Զե, 128):* Մի երևույթ առանձնապես ուշադրությունս գրավեց, այն էր, որ Գեղենջիքում շատ հազիվ կարելի էր հանդիպել սիրունատես կնոջ *(Փափ., 398):* Հանգիստ կսիրես և Թմուկ բերդին, որ չես կարենում էսքան ժամանակ *(Թ., 2, 143):* Ասա, զարշելի միրուք, երկու փութ ցորենի եղածն ինչ է, որ ախպորդ երեխին կխնայես *(ԱՇ, 25):*

ա) *ՈՐ* ԲԱՌԻ ԹՎԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Հարաբերական որ *դերանվան և այս վերջինիս հարաբերյալի թվական համաձայնությունը հաճախ չի ենթարկվում քերականական օրինաչափությունների: Այս դեպքում էլ դեր են կատարում հաճախ ոճաբանական երևույթները, որոնք երբեմն շրջանցում են քերականական օրինաչափությունները:*

Երկրորդական նախադասությունները գլխավորի հետ գերազանցապես կապակցվում են որ *հարաբերական դերանունով, կամ շաղկապով, որ առավելապես եզակի է կիրառվում՝ անկախ գլխավոր նախադասության մեջ գանվող նրա հարաբերյալի թվից: Այս երևույթը հատուկ է ոչ միայն աշխարհաբարին, այլև գրաբարին:*

Հարաբերական որ *դերանվան և վերջինիս հարաբերյալի այդ տեսակ անհամաձայնությունը պետք է բացատրել մի քանի հան-*

գամանքներով: Ամենից առաջ նշենք, որ հիշյալ հարաբերականը աստիճանաբար փոխում է իր ձևաբանական հատկանիշները, այսինքն՝ սկսում է վերածվել այնպիսի խոսքի մասի, որը թվի ձևաբանական կարգից զուրկ է. պարզապես դառնում է շաղկապ կամ շաղկապային բառ: Բառի հոգնակի թվի կարգը պահպանում է նրա այսպես ասած հոլովվող խոսքի մասային առանձնահատկությունները. հոգնակիությունն ավելի թանձրացական է դարձնում բառը և պահպանում է հետագա փոփոխություններից:

Այնուհետև հաճախ որ հարաբերականը չի վերաբերում որևէ առանձին բառի. դրա հարաբերյալը կամ ամբողջ նախադասություն է, կամ հենց հարաբերականն ստանում է ընդհանրացնող նշանակություն: Թիվը ընդհանրացման մեջ հաշվի չի առնվում, ուստի և ուժեղանում է եզակիության միտումը: Հաճախ հարաբերականը և հարաբերյալը բաժանվում են միմյանցից նախադասության այլ անդամներով, որի պատճառով համաձայնության քերականական կապերը թուլանում են:

Այս ընդհանուր դրույթներից բացի կան բազմապիսի իրացի պայմաններ, որոնք պատճառ են դառնում որ հարաբերականի և նրա հարաբերյալի անհամաձայնությանը:

Որ հարաբերականի և վերջինիս հարաբերյալի թվական համաձայնության խնդիրը քննելիս պետք է հաշվի առնել գրվածքի բնույթը, բանաստեղծական և արձակ խոսքի առանձնահատկությունները: Գեղարվեստական խոսքը հաճախ քերականական ճշտությունը զոհում է ոճաբանական, տաղաչափական պահանջներին, որոնք անտես առնել չի կարելի. մինչդեռ հրապարակախոսական և գիտական գրվածքներում քերականական օրինաչափությունները նպաստում են տրամաբանական ճշտությանը:

Եթե բանաստեղծության մեջ անհրաժեշտ է մի վանկ ավելացնել, բնականորեն եզակի որ հարաբերյալի եզրում այդպիսի հնարավորություն կա. իսկ եթե, ընդհակառակը, անհրաժեշտ է մի վանկ կրճատել, կկրճատվի հարաբերական բառերից, որքան էլ հարաբերյալը հոգնակի լինի, քանի որ այդպիսի կրճատումով չի խախտվում լեզվի բնականությունը, լեզվի բառերը չեն անդամահատվում հօգուտ ձևի: Համեմատիր՝ Խմում են կռվող քաջերի փառքին, Որ կռվի դաշտում կյանք չեն խնայում: Եվ ընկածների սուրբ հիշատակին, Որ երկնքից են այժմ իրենց նայում (Թ., 2, 146):

Հակառակ սրան, երբ հարկը պահանջում է, հարաբերյալը ինչպիսի բառ էլ լինի, հոգնակի է կիրառվում. օրինակ՝ Նզովում եմ

ձեզ, հեռավոր մարդիկ, ձեր չարն ու բարին, կրոնները ձեր. Որոնք միմիայն շղթա են կռում և ստրկության կոփում զնդաններ *(Իսահակյան)։*

Համաձայնության մեջ նշանակություն է ստանում նաև հարաբերականի հոլովը. եթե հարաբերականը թեք հոլովով է կիրառվում, իր հարաբերյալի հետ անհամաձայնությունը նկատելի օրինազանցություն է։ Համեմատիր՝ Ես սովորեցրել եմ այնպիսի հնարքներ, որով նրանք հաջողեին հետ դարձնել *(Ր., 2, 145)։*

Ենթակա հարաբերականի թվական համաձայնությունը իր հարաբերյալի հետ պետք է պարտադիր օրենք համարել։ Բնականորեն եզակի հարաբերյալը չի կարող հոգնակի հարաբերական ունենալ։ Եղածները պետք է համարել անհետևողություն (անակոլութ) կամ բացառություն։

Հոգնակի հարաբերյալի և նրա հարաբերականի անհամաձայնության ընթացքում, երբ հարաբերականը ենթակայի պաշտոն ունի, դեր են կատարում խոսակցական ոճը և անհետևողությունը, որոնց համաբանությամբ այդպիսի անհամաձայնությունը ծավալվում է։ «Սովետական Հայաստան» թերթը հոգնակի հարաբերյալի ենթակա հարաբերականը գրեթե առանց բացառության հոգնակի է կիրառում։ Այս օրենքը մեր լեզվի տրամաբանական և քերականական ճշտության պահանջն է։ Մուրացանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի և այլ գրողների գրվածքներում բացառությունները, մանավանդ եթե հոգնակի հարաբերյալները անձեր, հատ-հատ իրեր, որոշակի առարկաներ են արտահայտում, պետք է համարել անհետևողություն։ Այդպիսի անհամաձայնության դեպքերը մեզ անսովոր չեն թվում ոչ թե նրա համար, որ կանոնազանց չեն, այլ նրա համար, որ հարաբերականը հաճախ իբրև շաղկապ կիրառվելով և ավելի հաճախ վերացական բառերի (թեկուզ հոգնակի) եզակի ձևով հարաբերելով՝ եզակին սովորական է դարձել, օրինակ՝ Ծառերի տակ նկատեց թիկնապահը զնդի զինվորներին, որ խումբ-խումբ նստոտած ու պառկած զրուցում էին հանգիստ *(ՍՉ, ԳԹ)։* Նա նմանում էր այն նախնական մարդիկներին, որ մի ժամանակ քարից իրենց համար զենք էին պատրաստում *(Ր., 3, 228)։* Լալիս էինք մենք ու հեկեկում, ինչպես երկու հարազատ եղբայրներ, որ կորցրել են իրենց սիրած, պաշտած մի հատիկ քրոջը *(Իս., 3, 48)։*

Անհամաձայնության այս օրինակները այնքան են արդեն տարածված, որ դժվար է դրանք բացառություններ համարել։ Հոդա-

ության անհամաձայնությունը իր հերթին նպաստում է թվական-անհամաձայնության, և աստիճանաբար որ *հարաբերականը մղվում է շաղկապային կիրառության:*

Առաջին և երկրորդ դեմքի հոգնակի հարաբերյալներին միշտ հարաբերում է եզակի հարաբերական, ընդ որում երկրորդական նախադասության ստորոգյալը դեմքով (նաև թվով) համաձայնում է հարաբերյալի հետ: Սակայն այսպիսի հարաբերականները արդեն շաղկապային բառեր են: Համեմատիր՝ Եվ ով եք դուք, որ տանջում եք անօրինակ ինձ այսպես *(Թ., 2, 164)*: Ու մենք, որ տարիներով հավի միս երես չենք տեսնում, լուռ հետաքրքրությամբ հեռվից դիտում ենք *(ԱՇ, 100)*: Մենք որ մի նոր կյանք ենք կանգնել *(ՁԸ, 114)*:

Որ *հարաբերականը, ունենալով հոգնակի հարաբերյալ, եզակի է կիրառվում շատ հաճախ, երբ երկրորդական նախադասության մեջ հանդես է գալիս իբրև ուղիղ խնդիր: Սրա պատճառը այն է, որ* որոնք *ձևը իբրև հայցական չի կիրառվում, այսինքն՝ չի ասվում.* Մի քանի տղաներ, որոնք ես տեսա, գալիս էին: *Մնում է, որ այդպիսի հարաբերականը կիրառվի հոգնակի տրականաձև հայցականով, այսինքն՝ գործածվի այսպես՝* Մի քանի տղաներ, որոնց ես տեսա, գալիս էին: *Սակայն հայցականի այս վերջին ձևն էլ չի կիրառվում այնպիսի հարաբերյալների համար, որոնք իրեր են արտահայտում. համեմատիր հետևյալ նախադասության մեջ այսպիսի հայցականը, որից այժմ պետք է խուսափել.* Մի համառոտ նամակ գրեց Սարգիս Մովսիսյանին և հայտնելով նրան այն հոգեկան տանջանքները, որոնց կրել էր ինքը յուր հեռանալուց ի վեր *(Մուր., 2, 357)*:

Այս պատճառով «Սովետական Հայաստան» թերթը, որ ուղղականով հարաբերականը գրեթե միշտ համաձայնեցնում է հոգնակի հարաբերյալի հետ, հայցական հարաբերականը, ընդհակառակը, թողնում է եզակի՝ խույս տալու համար որոնք, որոնց *ձևերից. օրինակ՝* Կենդանի և վառ օրինակներով ցույց տալ այն հաջողությունները, որ սովետական ժողովուրդը ձեռք է բերել տնտեսական և կուլտուրական շինարարության ասպարեզում *(ՍՀ, № 6, 55)*: *Համեմատիր նաև հետևյալ օրինակները.* Այնքան գոհարներ, որ դու ես ինձնից առել, բավական էին մի ուխտյալ միանձնուհի գլխից հանելու *(Շեքս., 1, 190)*: Մոռացնել է տալիս ինձ այն բոլոր վշտերն ու նեղությունները, որ երբևիցե կրել եմ կյանքում *(Մուր., 2. 147)*: Ու թվում էր նրանք այլևս չէին վախենում ոչ

սրից, ոչ նիզակներից, ոչ տապարից, որ գործադրում էին ինքնապաշտպանության մոլուցքով բռնված հոռոմները *(«Ընտիր էջեր», 976)։ Այս դեպքում կարող է թյուրիմացություն առաջանալ, բայց գրողը այն անտես է արել.* որ *հարաբերականը վերաբերում է բազմակի խնդիրներին, սակայն ստացվում է այնպես, որ կարծես միայն վերջին անդամին է վերաբերում։*

Որ *հարաբերականի հոգնակի հայցականը* որոնց *ձևով կիրառվում է միայն այն պարագայում, երբ հարաբերյալը անձեր է արտահայտում, իսկ եթե խոսքը իրերին է վերաբերում, ապա* որոնց*-ին փոխարինում է* որոնք. Սրա օրհնությունը լինի իր որդու, իր հարսի ու թոռների վրա, որոնց մենք անտեր թողել ենք կողինքի մեջ *(ՊՊԵ, 3, 18)։* Հեռվում երևում էին ծառերը, որոնք քամին մեղմորեն օրորում էր:

Ենթակա հարաբերականը գերազանցապես համաձայնում է իր հոգնակի հարաբերյալի հետ գիտական, հրապարակախոսական լեզվում. իսկ գեղարվեստական գրվածքներում, մանավանդ ժողովրդական ոճով մշակված երկերում ու բանաստեղծությունների մեջ համաձայնությունը պարտադիր օրենք չէ։ Համեմատիր՝ Ձեռքեր էին, որ բարձրանում էին և իջնում շրմփոցով, քիթ ու պռունկ էր, որ ջարդվում էր, սուր-սուր եղունգներ էին, որ ցցվում էին մարմինների մեջ, շորեր էին, որ ծվիկ-ծվիկ էին լինում, գլխի փաթաթաններ էին, որ տրորվում էին ոտների տակ, մազեր էին, որ փունջ-փունջ պոկվում էին գլխներից և ցրիվ գալիս գետնին *(Նար., 2, 119)։* Այսպես նրանք, որ սրբազան արշավանք են քարոզում ընդդեմ երկրի մեր հոյաշեն, դառնում են հոն ու գազան *(«Ընտիր էջեր», 982)։* Սիրում եմ ես նրանց, որոնք խենթ են ու անտուն, նրանց, որոնք կայան չունեն և չունեն խնդում: Կորածներին, շրջիկներին, մանուկներին որբ: Եվ այն կանանց, որ նայում են անամոթ ու ցոփ: Նրանք, որոնք մահն աչքերում՝ գիշերում խավար թափառում են զաղտագողի և փնտրում ավար: Ախ, կուզեի ես հարազատ և ընկեր լինել նրանց, որոնք մոռացված են բանտերում անել: Եվ կուզեի եղբայր լինել նրանց, որ մթին չարչարանքներում կորցրել են կրակը հետին *(Տ., 1, 256)։*

Այստեղ բանաստեղծը անհրաժեշտության դեպքում հարաբերականը թե եզակի, թե հոգնակի է գործածել, մինչդեռ բոլոր դեպքերում հարաբերյալները հոգնակի են։

Ծանոթություն.— Քիչ է պատահում, որ եզակի ենթակա հարաբերականի հետ կիրառվող երկրորդական նախադասության ստորոգյալը եզակի կիրառվի, երբ հարաբերյալը հոգնակի անձեր և առանձին առարկաներ են. օրինակ՝ Եվ արդեն բոլորովին ուրիշ աշխարհք էր: Տները սպիտակ, կարմիր տանիքներով, ժողովուրդը զուգված ու մաքուր. ուսումնարանն էլ մեծ ու գեղեցիկ, ու ոչ թե մի վարժապետ, ինչպես մեր գյուղումն էր, այլ մի քանի վարժապետ ու մինչև անգամ վարժուհիներ, որ նորություն էր ինձ համար ու զարմանալի *(Թ., 3, 118)։ Այստեղ գուցե երկրորդական նախադասությունը վերաբերում է ոչ թե վարժուհիներին, այլ նրանց լինելու փաստին։*

Հոգնակի հարաբերյալի հետ եզակի հարաբերական է կիրառվում, երբ հարաբերյալը կոչական է. օրինակ՝ Այ պաղ ջրեր, զուլալ ջրեր, որ գալիս եք սարերից *(Թ., 2, 51)։* Ձեզ եմ հիշում անս և ձեզ մտաբերում: Ձեզ, խոյակներ կանգուն, ձեզ, վիշապներ հզոր, ձեզ, ողկույզներ քարե, ձեզ, երիզներ ճարտար, Ձեզ, կամարներ կապույտ՝ օծված երկնի լույսով, որ հավերժ եք դարձել մեր վաստակով արդար *(Բորյան)։*

Այս կարգի կապակցությունների մեջ էլ որ-*ը արդեն շաղկապային բառ է դառնում։*

Սեռական, տրական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով կիրառվող հարաբերականները գերազանցապես թվով համաձայնում են իրենց հարաբերյալի հետ։ Հոլովված հարաբերականը դադարում է շաղկապի դեր կատարելուց և կիրառվում է իբրև նախադասության որևէ անդամ, ենթարկվելով քերականական համաձայնության. օրինակ՝ Մեկը չէ, կան ուրիշ չորս խմորակերներ, որոնցից առաջնեկ քույր Լուսանուշը հինգ տարեկան է *(ՊՊԵժ, 3, 304)։* Էս պատճառով էլ գյուղի երեխաներից շատերը, որոնց ծնողները չէին կարող տարեկան երեք ռուբլի տան, մնացին դուրս *(Թ., 3, 117)։* Փիրուզյանը պատկանում էր ժամանակակից այն երիտասարդների շարքին, որոնց աշխարհայացքը զերծ է ազգակցական կամ բարեկամական կապերի նախապաշարումներից *(Շիրվ., 3, 373)։* Կհալածվեն ազնվությունը և այն շահագործող պաշտոնյաները, որոնց շնորհիվ շատ ջերմ սրտեր են սառել *(Մուր., 2, 147)։*

Նույնիսկ մասնական նշանակությամբ հոլովված հարաբերականը ունենալով եզակի հարաբերյալ, հոգնակի է կիրառված. օրի-

նակ՝ Սակայն ով էր նա, իհարկե, ինչ-որ վախկոտ թշնամի, որոնցից ունեմ անթիվ անհամար *(Լերմոնտով, «Դիմակահանդես», 37)*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն— Հարաբերականի և հարաբերյալի թվական համաձայնությունը հաճախ պարզում է երկուսի կապը, մանավանդ այն դեպքում, երբ հարաբերյալի եզրում կան նաև այլ գոյականներ. օրինակ՝ Իսկ ձկնորսները այնպիսի խոշոր եղջյուրներ են հանում լճի հատակից, որոնց կրող եղջերվի տեսակները բոլորովին անհետացել են երկրի երեսից *(ՎԱՍԱ, 6)*։

բ) *ՈՐ* ԲԱՌԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Հարաբերականի և հարաբերյալի հոլովական նույնությունը պատահական բնույթ է կրում. սովորաբար հարաբերյալը գլխավոր նախադասության մեջ լինում է ենթակա, ուղիղ խնդիր, անուղղակի խնդիր և այլն։ Եթե հարաբերականը երկրորդական նախադասության մեջ միևնույն պաշտոնն է կատարում, ինչ որ հարաբերյալը՝ գլխավոր նախադասության մեջ, ապա հոլովները կարող են համընկնել, իսկ եթե չկա պաշտոնների այդպիսի համապատասխանություն, հոլովները նույնպես չեն համընկնում։ Ուրեմն՝ յուրաքանչյուր հոլով որոշվում է ըստ հարաբերականի և հարաբերյալի պաշտոնի, ուստի և չկա հոլովական կախվածություն։ Համեմատիր՝ Այո, քաջ մարդ, որ հանդգնում է նայել մի բանի, որից դևն անգամ պիտի զարհուրեր *(Շեքս., 1, 249)*։ Վերջին բարևն էի մղկտում հեռվից այն պաշտելի էակին, որին այնպես, այնպես մոտիկ էի *(Իս., 3, 48)*։ Այն ճանապարհով, որով մի օր անցար արտաքեկ ու գնացիր *(Չե, 185)*։ Բոլոր այս խուցերը, կացարանները, ամբարներն ու միջանցքները ծածկված էին մի ընդհանուր միապաղաղ կտուրով, որով և բոլորը միասին կազմում էին մի ծածկված ամբողջություն *(Մուր., 5, 119)*։ Ադամի սիրելի կինը, ո ր ի խոսքը մարդու համար օրենք էր, ո ր ի խորհրդին միշտ կարոտում և լսում էր Ադամը. ո ր ի սնդուկում կողպած էր Ադամի տնտեսած արծաթը... *(ՊՊԵժ, 3, 187)*։

գ) *ՈՐ* ԲԱՌԻ ՀՈԴԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Երբ որ *հարաբերականը հոգնակի է, երբեք հոդով չի կիրառվում, իսկ հայերենի այն բառերը, որոնք հոդ չեն առնում, ինքնին որոշ են։ Ուրեմն* որ *դերանվան հոգնակին առանց հոդի հարաբե-*

բում է և՛ անորոշ, և՛ որոշյալ գոյականների. օրինակ՝ Ռուստոմը տաք մոխրի մեջ թաղել էր շագանակներ, որոնք երբեմն պայթում էին և դուրս էին թռչում՝ բարձրացնելով իրենց հետ մոխրի թանձր տարափ ***(Ր., 3, 238)***։ Քեզ մեռած են միշտ կարծել նրանք, այն մարդիկ, որոնք իրենց օրում ոչ մաքառել են, որ բարձրանան, ոչ տեսել սարսափ ու հոգնություն ***(ՁԸ, 100)***։ Կյորեսցիներից նրանք, որոնց կալերը ջրաղացների մոտ էին, այդ փողոցով էին խուրձ կրում ***(ԲԵԺ, 344)***։

Որ *հարաբերականը հոդ չի առնում նաև եզակիում, երբ կիրառվում է սեռական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներով. օրինակ՝* Նա նայեց սառը հայացքով աջ ու ձախ, ըստ երևույթին, փնտրելով մեկին, որից տեղեկություններ կարողանար ստանալ այդ տան մասին ***(Շիրվ., 5, 349)***։ Գործում էր այն անձը, որի մասին խոսում էին երկու երիտասարդները ***(Ր., 3, 233)***։ Զգում էր կլանելու այն անհուն տարածությունը, որով անցել էր տիեզերքի լուսատուն ***(Ր., 3, 235)***։ Որքան աշխատանք ու խոհ կա այստեղ, երկաթավորվող իմ հայրենիքում, որի վրայով հողմեր են անցել ***(ՁԸ, 104)***։

Որոշիչ հոդով կարող են կիրառվել որ *հարաբերականի եզակի ուղղականը, հայցականը և տրականը (վերջինը միշտ որոշյալ է)։ Եթե հայցականը միշտ որոշյալ է, մեծ մասամբ տրականաձև (որին) հայցականով է կիրառվում. այս երևույթը հատկապես նկատվում է կրկնակի հայցականի դեպքում, երբ* որ *հարաբերականը բուն ուղիղ խնդիր է։ Ահա տրականի և հայցականի օրինակներ՝* Մի անծանոթ բան, մի անախորժ զգացում, որին նա փորձում էր ուժով վանել ***(ՎԱՍԱ, 533)***։ Այն մտածողը վեհ ու հանճարեղ, որին Մարքսն է մի օր անվանել մեծ ***(ՁԸ, 433)***։ Նա եկավ նստեց առաջինի մոտ, որին կոչում էին Տիրե ***(Ր., 3, 299)***։

Ինչպես ասվեց, եզակի ուղղականը կարող է նաև հոդով կիրառվել, բայց ինչքան լեզուն զարգանում է, այնքան գերակշռում է որ *հարաբերականի անհոդ կիրառությունը։ Թե երբ է* որ *հարաբերականի ուղղականը հոդ ստանում, դժվար է որոշակի սահման դնել։ Այստեղ միայն կարելի է որոշ երևույթներ նկատել, որոնք այս կամ այն պարագայում նպաստում են հոդառությանը, կամ ընդհակառակը, պատճառ են դառնում* որ *հարաբերականի անհոդ կիրառությանը։*

Որ *հարաբերականը անհոդ է կիրառվում այն պարագայում, երբ վերաբերում է ոչ թե նախադասության մի որոշակի անդամի, այլ ամբողջ նախադասությանը կամ նրա մի մասին. օրինակ՝* Բացի այդ՝ նա ինձ հրավիրեց յուր բանակը՝ բարեկամության դաշն կռելու, ո ր իրանց լեզվով կնշանակե՝ գերության շղթայով կապվելու *(«Ընտիր էջեր», 603)*։ Պատասխանեցի որքան կարելի է հանգիստ ձայնով, որ, սակայն, չհաջողվեց ինձ *(Նար., 4, 32)*։ *Սակայն այս դեպքում հոդով գործածությունը նույնպես օրինաչափական է։*

Որ *հարաբերականը եզակի ուղղականում անհոդ է կիրառվում այն պարագայում, երբ հարաբերում է հոգնակի հարաբերյալների և սկսում է ձեռք բերել շաղկապային կիրառություն։ Համեմատիր հետևյալ օրինակները.* Կեռ-կեռ պոզավոր մալերը, որ կան, խելոք են *(Թ., 2, 399)*։ Իմ բոլոր, բոլոր նյարդերով, որ կան, ես կապված եմ իմ վիթխարի դարին *(Չարենց)*։

Որ *հարաբերականն առավելապես անհոդ է կիրառվում նաև այն պարագայում, երբ երկրորդական նախադասության մեջ հանդես է գալիս իբրև ուղիղ խնդիր (ոչ կրկնակի հայցականի բուն ուղիղ խնդիրը). օրինակ՝* Այն ինչ նոր հնչյուններ են, որ իր ձեռքի շարժումից զեղում է ջութակը այնքան տիրականորեն *(Ընտիր էջեր, 720)*։ Աստված պահանջում է ձեզանից այն անթիվ զոհերի արյունը, որ թափել եք դուք *(Ր., III, 460)*։ Նա աշտանակեց իսկույն յուր ամենի նժույգը, ո ր բերավ նրան թիկնապահներից մեկը *(«Ընտիր էջեր», 605)*։ Աչքի էին ընկնում մանավանդ հաստ ու խոշոր ձեռները, որ բռունցք շինած կախել էր կողքերին *(ՍԶ, 5, 85)*։

Որ *հարաբերականը բացարձակորեն անհոդ է կիրառվում, երբ հարաբերում է առաջին և երկրորդ դեմք արտահայտող հարաբերյալների։ Պետք է նշել, որ ինչքան հարաբերականը և հարաբերյալը իրար չեն համաձայնում, այսինքն՝ քանդվում են նրանց քերականական կապերը, այնքան հարաբերականը դադարում է դերանուն լինելուց և վերածվում է շաղկապի։ Երրորդ դեմքով կիրառված հարաբերյալի մոտ հարաբերականը թվում է իբրև երկրորդական նախադասության ենթակա. երբ չկա թվի համաձայնություն, և սրան էլ միանում է դեմքերի անհամաձայնությունը, այսինքն՝ երկրորդական նախադասության ստորոգյալը չի համաձայնում հարաբերականի հետ, ապա հարաբերականը դադարում է նախադասության անդամ լինելուց և վերածվում է զուտ կապակցական ձևական բառի՝ շաղկապի. օրինակ՝* Եվ ե ս, ո ր այն ժամանակ շատ անհամատ

էի, հիմա եմ սկսել լամձեռիս հավատալ *(«Ընտիր էջեր», 439)*։ Մ ե ն ք, ո ր մի նոր կյանք ենք կանգնել, չունենք երգեր հատու ու խոր *(ՉԸԵ, 114)*։ Մ ե ն ք, ո ր կելնենք անեղ մարտի, թե դ ո ւ ք, ո ր մեզ արիք դուշման *(Թ., 2, 135)*։ *Այստեղ, ինչպես տեսնում ենք, երկրորդական նախադասության ստորոգյալը համաձայնում է հարաբերյալի հետ թվով ու դեմքով, իսկ հարաբերականը պարզապես շաղկապի դեր է կատարում։*

Որ *հարաբերականը անհոդ է կիրառվում* այն, նույն, մի, այնպիսի, ինչ *և այս կարգի այլ ձևական որոշիչներով հարաբերյալների հետ, երբ դրանք արտահայտվում են երկրորդական նախադասության ամբողջական բովանդակությամբ և չեն ընդգծում հարաբերականի որոշակիությունը իբրև նախադասության ինքնուրույն անդամի. օրինակ՝* Մի մարդու կողմից, ո ր մեր քաղաքայա ծանոթությամբ և այնքան հաճախ, հանդիպումների ընթացքում երբեք չէր խոսել սիրո մասին *(Շիր., 5, 345)*։ Ուզեցի ընտրել սիրունի մի սառ, ո ր ինձ երկաթե երազներ երգեր *(ՉԸ, 130)*։ Մենք նմանում էինք ծառի այն պտուղին, ո ր ճյուղի վրա իսկ թառամած է *(Փափ., 372)*։

Որ *հարաբերականը, ինչպես տեսնում ենք, եզակի ուղղականում և հայցականում (եթե կրկնակի հայցականի բուն ուղիղ խնդիրը հայցականը չէ) գերազանցապես կիրառվում է առանց որոշիչ հոդի։ Գեղարվեստական գրականության մեջ հոդով կիրառությունը հազվադեպ երևույթ է։ Այդ բանը առավել նկատելի է մանավանդ ժողովրդական խոսքի մեջ։ Թումանյանի հեքիաթներում հարաբերականը համարյա անհոդ է, նույնն է նաև Իսահակյանի ժողովրդական բնույթի արձակում։ Շիրվանզադեի «Քաոսի» մի մեծ հատվածում (ապված «Ընտիր էջերում»)* որ *հարաբերականը եզակի ուղղական և հայցական հոլովներով կիրառված է ավելի քան քսան անգամ (որոշիչ երկրորդական նախադասության մեջ), սակայն հոդով կիրառված է միայն մի անգամ. օրինակ՝* Նա, որքան հուսախաբ արավ նրան այդ սիրված որդին և որքան տանջանքներ պատճառեց. որպիսի մորմոք, որը թշնամիներից և նախանձոտներից զաղելու համար հարկավոր էր վերբնական կամքի զորություն *(«Ընտիր էջեր», 642)*։ *Նույնչափ մի հատվածում Մուրացանը որոշիչ հոդով ոչ մի հարաբերական չի կիրառել։*

Ինչպես նկատել է Մ. Աբեղյանը, որ *հարաբերականը հոդով է կիրառվում հատկապես հետևյալ դեպքերում.*

ա) Երբ հարաբերականից առաջ կամ հետո ընկնում է մի հա-

մադասական շաղկապ կամ նախադասություն. օրինակ՝ Մուգ կապտագույն մի սփռոց, որ բավական մաքուր էր, բայց որն յուր գույնի ու հնության պատճառով կեղտոտ երևաց հյուրին: Նրան ակոսում է մի փոքրիկ գետակ, որը սակայն ահարկու և անանցանելի է դառնում գարնան վերջերում: Սպասում էին տեսնել նրան բարձրացած վեհապետական այն գահին, դեպի որը ամեն հայ հառում է յուր աչքը: Ես ցանկանում էի մի քանի խոսք ասել նկատմամբ մի հանգամանքի, որին անծանոթ եք դուք և որը վերաբերում է...: *Համեմատիր նաև՝* Կատարելու մի գործ, որը միայն ինքը կարող է կատարել, և որը այնքան պատիվ է բերում ամբողջ մարդկությանը *(ԼԹԿ, 259)*:

բ) Երբ որ *հարաբերականը խնդիր է դառնում մի անորոշ դերբայի. օրինակ՝* Մի մտածիր այն ցավի մասին, որը դարմանելը վեր է քո ուժից: Այս ամենը կատարելու հետ միասին զգալի էր լինում միշտ մի կարիք, որը ցուցանելու համար ես բավական պատրաստություն չունեի:

գ) Երբ անհրաժեշտ է որ *հարաբերականը* որ *շաղկապից տարբերել, օրինակ՝* Պատահել է ձեզ երբևիցե գրավվիլ այնպիսի երգով, որը ցանկանայիք շարունակ ու անվերջ լսել: Եվ մի՞թե առ կայծի հարված չի լինիլ իմ պատվասեր հոր համար, որն այնքան բարի և ազնիվ սրտով ընդունեց յուր տան մեջ օտար երիտասարդին:

Մ. Աբեղյանի այս նուրբ դիտողությունները վերաբերում են իր ժամանակին և այժմ էլ մասամբ ուժի մեջ են, բայց դրանք բացարձակ օրինաչափություններ չեն:

2. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բարդ ստորադասական նախադասության կազմը մտնող երկրորդական նախադասությունները քննվում են ըստ նրանց կիրառական պաշտոնի, այսինքն՝ թե դրանք գլխավոր նախադասության, նրա այս կամ այն անդամի նկատմամբ շարահյուսական ինչ դեր են կատարում: Նկատի ունենալով այս կարևոր հանգամանքը, որ տվյալ դեպքում բնորոշիչ արժեք ունի երկրորդական նախադասությունների համար, այս վերջինները անվանվում են ըստ այդ կատարած պաշտոնների: Պարզ նախադասության յուրաքանչյուր անդամ ըստ իր պաշտոնի անվանվում է ենթակա, ստորոգյալ, որոշիչ, բացահայտիչ, հատկացուցիչ, խնդիրներ ու պարա-

դաներ։ Որովհետև երկրորդական նախադասությունները բարդ նախադասության կազմում հանդես են գալիս գլխավոր նախադասության համար իբրև ենթակա, ստորոգյալ, որոշիչ, հատկացուցիչ, խնդիրներ ու պարագաներ, ապա ըստ իրենց կատարած այս պաշտոնների էլ ստանում են իրենց անվանումը։ Ուրեմն՝ երկրորդական նախադասությունները ոչ միայն գլխավոր նախադասության այս կամ այն անդամի համար լրացուցիչ պաշտոն են կատարում, այլև փոխարինում են գլխավոր նախադասության այս կամ այն պակասող կամ ձևական անդամին։

Բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ մտնող երկրորդական նախադասությունները բաժանվում են երեք հիմնական խմբի։ Առաջին խմբի մեջ մտնում են այնպիսի երկրորդական նախադասությունները, որոնք լրացական բնույթ չունեն և հանդես են գալիս գլխավոր նախադասության մեջ պակասող կամ ձևական ենթակայի ու ստորոգյալի փոխարեն։ Սրանք կոչվում են ենթակա և վերադիր երկրորդական նախադասություններ. ավելի ճիշտ կլինի այս վերջինը կոչել ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասություն։

Երկրորդ խմբին են պատկանում այնպիսի երկրորդական նախադասությունները, որոնք գլխավոր նախադասության ենթակայի կամ որևէ գոյական անդամի համար լրացական պաշտոն են կատարում. դրանք որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ երկրորդական նախադասություններն են։

Վերջապես երրորդ խմբի նախադասությունները նույնպես լրացական պաշտոն ունեն, բայց ոչ թե լրացնում են գլխավոր նախադասության որևէ գոյական անդամ, այլ լրացում են ստորոգյալի և որևէ բայական անդամի համար։ Դրանք խնդիր և պարագա երկրորդական նախադասություններն են, որոնք բազմապիսի և բազմաբնույթ են։

Այս երկրորդական նախադասությունները քննենք ըստ վերոհիշյալ խմբավորման՝ պարզաբանելով դրանց առանձնահատկությունները ու բնույթը։

Ա. ԵՆԹԱԿԱ ԵՎ ՎԵՐԱԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձևական ենթակայի և վերադիրի փոխարինող երկրորդական նախադասությունները կոչվում են ենթակա և վերադիր երկրորդական նախադասություններ։ Սրանց պաշտոնը այն է, որ

կամ արտահայտում են ա) գլխավոր նախադասության մեջ պակասող կամ ձևական ենթական, բ) պակասող կամ ձևական ստորոգյալը (վերադիրը)։ Այս երկրորդական նախադասությունները ոչ միայն այն առանձնահատկությունն ունեն, որ ընդարձակ ստորոգումով արտահայտում են գլխավոր նախադասության ենթական ու ստորոգելիական վերադիրը, այլև տարբերվում են երկրորդական նախադասությունների մյուս երկու խմբերից նրանով, որ ոչ մեկը լրացական բնույթ չունի։ Սրանք ինքնուրույն նախադասություններ են, բայց այնքանով, որքանով դրանք կազմելով մի առանձին նախադասություն և ունենալով ինքնուրույն ձևավորվածություն, մի այլ նախադասության պակասող անդամների պաշտոն են կատարում, դառնում են երկրորդական ճիշտ այնպես, ինչպես մյուս երկու խմբերի նախադասությունները։

ա) ԵՆԹԱԿԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ենթակա երկրորդական նախադասությունը հայերենում արտահայտվում է երկու ձևով. առաջինը այն է, երբ գլխավոր նախադասությունը չունի որևէ ենթակա, իսկ այդ ենթական մատնանշվում է երկրորդական նախադասությամբ։ Այս կարգի ենթակա երկրորդական նախադասությունները բացահայտ և ստույգ են ու ոչ մի այլ երկրորդական նախադասության հետ չեն կարող շփոթվել. օրինակ՝ Ինչ նրանց ցավն էր, որ գնան արյուն թափեն *(ԱՇ, 120)։* Գնալ արյուն թափելը ինչ նրանց ցավն էր: Ում ձեռքն ընկավ, վիզը դնելու է տակը *(ԱԲԵ, 488)։*

Ենթակա երկրորդական նախադասությունների դրսևորման մյուս եղանակն էլ այն է, որ գլխավոր նախադասությունը ունենում է որևէ դերանուն ենթակա, որը ավելի կամ պակաս չափով ձևական բնույթ է կրում և ժամանակավորապես գլխավոր նախադասության մեջ ենթակայի դեր է կատարում, իսկ բուն ենթական արտահայտվում է երկրորդական նախադասությամբ։ Վերջինս ցույց է տալիս, թե ինչ է այդ ձևական ենթական, ինչ բովանդակություն ունի, ինչ գործողություն է կատարում և այլն։ Կրճատելու դեպքում նա բռնում է ձևական ենթակայի տեղը, այսինքն՝ դառնում է գլխավոր նախադասության ենթակա։ Այս կարգի ենթակա երկրորդական նախադասությունները երկու միտում են հանդես բերում. մի կողմից ենթակա են, մյուս կողմից էլ ուժեղ ընդհանրություն ունեն բացահայտիչ երկրորդական նախադասությունների

հետ, որովհետև գլխավոր նախադասության ձևական ենթական ինչքան էլ որ ձևական է, այնուամենայնիվ դերանուն են (հաճախ՝ նա, նրանք, ով), որոնք պարզ նախադասության մեջ անկասկած ենթակա են. այսինքն՝ երբ ասում ենք՝ Նա, գալիս է, երբեք չենք մտածում, որ Նա ձևական ենթակա է։ Ուրեմն այս տիպի ենթակա երկրորդական նախադասությունները տատանվում են. օրինակ՝ Թող դա Նա, ով ցանկանում է. Թող դա ցանկացողը. բայց չի կարող բացառվել, որ այսպես լինի. Թող դա Նա, այսինքն՝ ցանկացողը։

Ուրեմն ենթակա երկրորդական նախադասություն է կոչվում բարդ նախադասության այնպիսի լրացական նախադասությունը, որ կատարում է գլխավոր նախադասության բաց թողված ենթակայի պաշտոնը և կամ բովանդակությամբ օժտում է այնտեղ գտնվող ձևական դերանուն-ենթական։ Կան բազմաթիվ այնպիսի գլխավոր նախադասություններ, որոնք ենթակա չունեն. ահա երկրորդական նախադասությունները դառնում են ենթակա նաև այդպիսի նախադասությունների համար։

Առանց ենթակայի գլխավոր նախադասությունները բազմաթիվ են և բազմապիսի։ Սրանց մեջ կան այնպիսի ստորոգյալներ, որոնք ենթակա ընդհանրապես չունեն, կան և միադիմի բայ-ստորոգյալով նախադասություններ, որոնց հետ հազվադեպ է ենթակա կիրառվում, կամ ենթակայով այլ բան են նշանակում, իսկ առանց ենթակայի՝ այլ. կան և այնպիսի ստորոգյալներ, որոնք ուղղակի գլխավոր նախադասության մեջ ենթակա չեն առնում, որովհետև ենթական արտահայտվում է երկրորդական նախադասությամբ։

Բարդ ստորադասական նախադասության երկրորդական նախադասությունը ենթակա է, երբ գլխավոր նախադասության համար ստորոգյալներ են երևալ, թվալ, արժել, պատահել, լինել, մնալ, դուրս գալ չեզոք բայերը, որոնք տվյալ դեպքում ոչ թե առանձին առարկաների գործողություններ կամ դրություններ են արտահայտում, այլ բնության մեջ, կյանքում տեղի ունեցած տարբեր երևույթների, գործողությունների համար են ստորոգյալներ, որոնցով խոսողը արտահայտում է իր պատկերացումը, ըմբռնումը և կամ ուղղակի հաղորդում է այդ գործողությունների տեղի ունենալը, լինելը։ Այսպիսի բայ-ստորոգյալները կամ լրիվ անենթակա են և կամ այս կիրառությամբ ստանում են անենթակա ստորոգյալի նշանակություն. օրինակ՝ Որից երևում էր, թե ինքը ևս հիասթափված էր իր կարդալու կարողությունից (Նար., IV, 76)։ Պատահում էր, որ էստեղ էին գալիս և ուրիշ արծիվներ ու

հետը կռվի էին բռնվում որսի համար (*Թ.*, III, *127*): Ինձ թվում է, որ այդ լավ նշան էր (*Շիրվ.*, V, *147*): Ինչպես եղավ, որ մի անգամ արջն ու օձը դարձան ընկեր (*Իս.*, II, *172*): Եվ արժե, որ հայ ժողովուրդը երբեմն-երբեմն էս հարազատ, գեղեցիկ ու մեծ անունները հանդես բերի ու ջերմանա նրանց մշտավառ հոգիների անշեջ կրակով (*Թ.*, IV, *221*): Բայց եղավ մի օր, որ շատ հեռավոր, անհայտ լեռներից եկավ մի առվակ (*Փափ.*, *303*): Չեղավ, որ նա մի անգամ ավարի գնար և արյունլվա ու ծեծված չվերադառնար (*ԳՄԵ*, *410*): Եղավ, որ յուր աշխարհի մի կարևոր գործի համար եղավ նա Բյուզանդիա (*Ր.*, III, *236*): Մնում է, որ դու վերջացնես քո խոսքը (*ԳՄԵ*, *369*): Բանից դուրս եկավ, որ այնքան էլ անհայտ մարդ չեմ (*Թ.*, V, *186*):

Այս կարգի բարդ ստորադասական նախադասությունների մեջ ենթակա երկրորդական նախադասությունները կապակցվում են գլխավորապես որ *և մասամբ* թե *շաղկապներով:* Որ *շաղկապը կիրառվում է այն պարագայում, երբ երկրորդական նախադասությունը իր մեջ չունի հարցական-հարաբերական* ինչ, որ, ինչպիսի, որպիսի, ինչու, ինչքան, երբ, երբևիցե, որքան, որտեղ, ուր *բառերից որևէ մեկը: Իսկ եթե այսպիսի բառեր կան, ապա երկրորդական նախադասությունները կապակցվում են* թե *շաղկապով. օրինակ՝* Բայց և այնպես մնաց անհասկանալի, թե Եփրեմ Նազանյանը ինչու այսքան աղքատ է ապրում (*ՆԶՀ*, *283*):

Երկրորդական նախադասությունը թե-*ով կարող է կապակցվել նաև այն դեպքում, երբ գլխավոր նախադասության որևէ անդամ արտահայտված է* որ *հարաբերական դերանունով: Համեմատիր՝* Որից երևում էր, թե ինքը ևս հիասթափված էր իր կարդալու կարողությունից (*Նար.*, IV, *76*): *Համեմատիր՝* Որ նշան էր, թե բարկանում է (*ՔԹՈՀ*, *491*): *Այս երևույթը առաջացել է նույնաբանությունից խուսափելու պատճառով:*

Ծանոթություն.— Հաճախ թե *շաղկապով է կապակցվում այն ենթակա երկրորդական նախադասությունը, որի գլխավոր նախադասության ստորոգյալն է* թվալ *բայը. օրինակ՝* Թվում էր, թե հաղթանդամ հեծյալը նստած էր մի սև մորուկի (*ՔԹՈՀ*, *108*): Թվում էր, թե ժամացույցը կոլտնտեսության նոր նախագահի փառքի հիմն էր հնչեցնում (*Նույն տեղում*): Որ թվում էր, թե մի մոլեռանդ հավատացյալ է (*ՔԹՈՀ*, *482*):

Այս տեսակի բարդության մեջ երկրորդական նախադասությունը միայն ետադաս է. այն չի կարող միջադաս լինել, որովհետև հաջորդում է գլխավոր նախադասության այնպիսի մի ստորոգյալի, որը գլխավորապես առանձին է կիրառվում և ամենաէականը՝ ենթակա չունի, այսինքն՝ այլևայլ անդամներով չի ծանրաբեռնված, որպեսզի երկրորդական նախադասությունը դառնի այդ անդամների միջև. իսկ առաջադաս սակավ է լինում, որովհետև այս դեպքում կապակցությունը քանդվում է. առաջանում են երկու առանձին նախադասություններ. օրինակ՝ Որ դու լավ ես աշխատել, երևում է ամեն բանից: *Երբ երկրորդական նախադասությունը առաջ է շարադասվում, ապա գլխավոր նախադասությունը գերազանցապես ստանում է* այդ *ձևական ենթական՝ կապը սերտ դարձնելու համար։* Որ ես չեմ ուզում, այդ պարզ երևում է:

Ծանոթություն։— Երկրորդական նախադասությունը դարձվածային ենթակա է դառնում շաղկապի անկումով և ստորոգյալը անորոշ դերբայի վերածվելով, որն անխախտ կերպով որոշիչ հոդ է առնում, իսկ ենթական դառնում է ենթակայական սեռական։ Դարձվածային այսպիսի ենթականերն առհասարակ անգործածական են։

Բարդ նախադասության մեջ երկրորդական նախադասությունը ենթակա է, երբ գլխավոր նախադասության ստորոգյալը մի կրավորական կամ կրավորաձև չեզոք բայ է և ենթակա չունի։ Այս կարգի բայերը նույնպես միադիմի են և գլխավորապես ստորոգյալ են դառնում առանց ենթակայի։ Օրինակ՝ Այսօր Փիլոյի համար պարզվեց, որ բյուրոյի բոլոր անդամները էլ պարտավոր են տեսակետ ունենալ *(ՆԶՀ, 140)։* Ենթադրվում է, որ շատ զարգացած էր և նկարչական արվեստի մի այլ նյութը *(Լեո, ՀՊ,* II. *299)։* Արդյոք իմացվե՞ց, թե այն սովկալի արյունոտ գործը ո՛րի արածն էր *(Շեքս.,* I, *239)։* Մտածվում է, որ գործակատարների համար ևս մի կլուբ հիմնվի *(Ր.,* II, *406)։* Կարգադրվեց, որ այդ էլ կատարվի *(ՆԶՀ, 283)։* Պարզվեց, որ նա մայրաքաղաքի լրագրերով է հետևում ներքին և արտաքին քաղաքականություններին *(Շիրվ.,* V, *145)։* Ահա Պրիստավի և բոլոր ժողովրդի ներկայությամբ հաստատվեց, որ դու պարապում ես անխիղճ վաշխառությամբ *(Մուր.,* V, *149)։* Բայց շուտով պարզվեց, որ եկողներից մեկը Ավագյանն էր *(ՆԶՀ, 68)։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.— Շարադասությամբ այսպիսի նախադասությունները մյուսներից չեն տարբերվում, այսինքն՝ երկրորդական նախադասությունը ետադաս է. իսկ ինչ վերաբերում է շաղկապների կիրառությանը, ապա, ինչպես նկատելի է, գերադասությունը պատկանում է որ *շաղկապին, եթե երկրորդական նախադասության մեջ չկան* որ, որքան, որպիսի, որտեղ, ուր *և այլ հարցական-հարաբերական դերանունները։*

Ասում են, գրում են, խոսում են, պատմում են, համարում են *և այս կարգի բայ-ստորոգյալների հետ կապակցվում է մի խնդիր երկրորդական նախադասություն. օրինակ՝* Ասում են, թե էն Փարվանա ջահիլներն են սիրավառ *(Թ., II, 296)։ Երբ գլխավոր նախադասության հոգնակի ստորոգյալը վերածենք կրավորական սեռի եզակի ստորոգյալի, որոնց մեջ իմաստային առնչությամբ ոչ մի տարբերություն չկա, խնդիր երկրորդական նախադասությունը կվերածվի ենթակա երկրորդական նախադասության.* Ասվում է, թե էն Փարվանա ջահիլներն են սիրավառ: Մի ժամանակ գրեցին, թե Սունդուկյանը մեռավ *(Թ., V, 184)։* Մի ժամանակ գրվեց, թե Սունդուկյանը մեռավ:

Երկրորդական նախադասությունը ենթակա է, երբ գլխավոր նախադասությունը արտահայտվում է կարելի է, պետք է, անհրաժեշտ է, հարկավոր է *և այս կարգի այլ ստորոգյալներով։*

Սրանք երկրորդական նախադասության հետ կապակցվում են միայն որ *շաղկապով և միշտ առաջադաս են լինում։ Երկրորդական նախադասությունը ցույց է տալիս այն գործողությունը, դրությունը, որը դիտվում է իբրև հնարավոր, անհրաժեշտ, բավական և դառնում է այդպիսի ստորոգյալների ենթական. օրինակ՝* Պետք է, որ շատ մազալու տեսարան լիներ *(Նար., IV, 79)։* Անկարելի էր, որ այդ դեպքը չշոյեր նրա պատվասիրությունը:

Բավական էր, որ նրանցից մեկը նկատեր օձին, իսկույն կբռներ պոչից և գլուխը ներս քաշելով ետ յուր փշալից պատյանի մեջ, զուգդ կկազմեր *(Ր., III, 240)։* Արդյոք չէ՞ր կարելի, որ հիշեցնեիք իմ խնդիրը *(Թ., V, 148)։* Խիստ անհրաժեշտ էր, որ բոլորին էլ շոյեր և հարված ուղղեր առաջին հերթին Տիգրանի դեմ *(ՔԹՈՀ, 502)։* Խոռոմ խաչոյին հարկավոր է, որ նրա երեխաները ուսում ստանան *(ՆԶՀ, 227)։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.— Այսպիսի բարդությունների գլխավոր մասը աստիճանաբար մթագնվում է. պետք է *ստորոգյալը առաջին*

օրինակում իբրև անկախ ստորոգյալ այլևս չի գիտակցվում։ Համեմատիր նաև. Իմ կարծիքով այդ գումարն էլ պետք է, որ ձեզ թողնի *(Թ.,* V, *160)։*

Ենթակա են դառնում այն երկրորդական նախադասությունները, որոնք կապակցվում են ճիշտ է, պարզ է, հասկանալի է, ցավալի է, լավ է, վատ է, ցավ է, հայտնի է, բնական է, զարմանալի է *և այս կարգի այլ անենթակա անվանական ստորոգյալների հետ, որոնց ցույց տված վիճակի, գործողության տերը դառնում են հիշյալ նախադասությունները. օրինակ՝* Շատ բնական է, որ մեկ րոպեից հետո խոսակցությունը բացվեց ռևոլյուցիայի մասին *(Դերենց,* II, *11),* Ճիշտ է, սակայն, որ այժմյան մեր ազգային-կուլտուրական ավտոնոմիստները հին տեսակի նախիվ ու աշկարա նացիոնալիստներ չեն *(ՄՇԸԵ, 389)։* Պարզ էր, որ ինձ չէին վստահում *(ՉԸԵ, 398)։* Եվ լավ է, որ չիմանաս և չխոսես *այդ մասին (Տերյ.,* VI, *12)։ Բայց աստծուն հայտնի է, որ ես հա*զիվ եմ տանում նույնիսկ լավերի ու մերձավորների լավությունը *(Թ.,* V. *160)։* Ցավալի է, որ ելույթ ունեցողներից *(ոչ մեկը)* պետական մտածողություն, կոմունիստի իսկական դեմք ցույց չտվեց *(ՔԹՈՀ, 502)։* Նրա համար ցավ է, որ ես գնում եմ պարտիական ղեկավարի տուն *(Նույն տեղում, 503)։* Մեզ համար ավելի լավ է, որ այժմ խանը մի շաբաթով որսի է գնացած *(Ր.,* I, *53)։* Զարմանալի չէ, որ մարդու մահից հետո մնում է անեյանելի դրության մեջ *(Նար.,* VII, *252)։*

Ցավալի, պարզ, հասկանալի *և այս կարգի մի քանի ուրիշ ածականների հետ երբեմն կապակցվում է* բան *ձևական բառը, որ դառնում է ստորոգելիական վերադիր գլխավոր նախադասության ստորոգյալի համար. օրինակ՝* Պարզ բան է, որ ապրանքատերն իրավունք ուներ յուր ապրանքի հետ գնալ *(ՊՊԵԺ,* III. *453)։* Կարելի՞ բան է, որ մի մատղահաս աղջկա խելքը մի պևորի ծյուրված կյանքի պես դյուրամեռ լինի *(Շեքս.,* I, *85)։*

Այսպես ասվում է՝ Մեր գործը չէ, մեր բանը չէ: Մեր գործը չէ, թե ինչպես և ինչ նպատակով են եկել *(ՊՊԵԺ,* III, *485)։* Մեր բանը չէ, թե դուք ինչ կանեք: Հասկանալի բան է, որ այդ այդպես չի կարող մնալ:

Եմ *բայի համար անենթակա ստորոգելիական վերադիր են դառնում գոյականներ, դերանուններ ուղղական և թեք հոլովներով, կապեր և այլն, որոնց համար իբրև ենթակա ծառայում է* որ *շաղ-*

կապով կապակցվող մի երկրորդական նախադասություն. այս վերջինը ցույց է տալիս մի գործողություն, որ դառնում է տերը այդ ստորոգման և բացահայտում է, թե ինչ է տվյալ ստորոգումը, ինչ է ներկայացնում իրենից։ Այդպիսի ստորոգելիական վերադիր կարող է դառնալ ամեն խոսքի մաս՝ ամեն հոլովով. օրինակ՝ Այդ էր, որ հետաքրքրում էր նրան *(Ր., III, 36)*։ Սա է, որ կա *(«Մարգարիտներ», 188)*։ Անհերքելի փաստ էր, որ կալանավորական մասսան ծայր աստիճան չէր սիրում ինտելիգենտներին *(Զե, 409)*։ Քարեր է, որ ամեն կողմից գալիս են կարկտի պես, լուսամուտների ապակիներ են, որ փշրտվում են *(ՊՊԵԺ, III, 448)*։ Մարզպետունուց ջարդ ուտելու պատճառով է, որ Բեշիրը հարձակվել է մեզ վրա *(Մուր., ԴՄ)*։ Այստեղից է սկսվում, որ Հերակլի կյանքի մեջ սկսվում է մի փայլուն տասնամյակ *(Լեո, ՀՊ, II, 25)*։ Նրա հորդորներով էր, որ կայսրը թողեց Կարթագեն փոխադրվելու միտքը *(Լեո, ՀՊ, II, 250)*։ Ժամը համարյա երկուսն էր, որ ժողովը վերջացավ *(Նար., VII, 248)*։

Առանձնապես հաճախ գլխավոր նախադասության համար ստորոգյալ են դառնում ժամանակ արտահայտող բառերը, որոնք ստորոգվելով ցույց են տալիս, թե դրանց ենթակա երկրորդական նախադասության գործողությունը երբ է կատարվել, ինչքան ժամանակ է տևել և այլն. օրինակ՝ Այդ առաջին ամզամն էր, որ յուր տիրոջ մազերը սանդրելուց հետո, նա պետք է թողներ առանց օծելու *(Ր., III, 37)*։ Մի քանի օր էր, ինչ այդտեղ սկսվել էր տագնապալից շարժում *(Մուր., III, 396)*։ Մի գարնան իրիկուն էր, որ էս դեպքը պատահեց *(Թ., III, 73)*։ Հեռագրասյուները կանգնեցնելու օրն էր հենց, որ Մազութի Համոն անսպասելի կերպով վերադարձավ քաղաք *(Զե, 245)*։ Քանի տարի է, որ քսան մանեթ ես տվել սրան *(Մուր., V, 144)*։

Ինչպես նկատելի է, այս դեպքում հաճախ գլխավոր նախադասությունը երկրորդականի հետ կապակցվում է ինչ *շաղկապով. ահա մի քանի օրինակներ ևս.* Արդեն մոտ մի ամիս է, ինչ Փարիզում ռեսպուբլիկա է հռչակված *(Պերճեն, II, 18)*։ Հերիք էր, ինչ որ առանձնության մեջ տանջվեցի *(Թ., II, 29)*։ Կյանքում առաջին անգամն էր, ինչ նրան այդպիսի խրատներ էի տալիս *(ՍՀ, № 37, 55)*։

Ենթակա երկրորդական նախադասությունը այսպիսի գլխավոր նախադասությունների հետ որքան *հարաբերական դերանունով է կապակցվում, երբ գլխավոր նախադասության ստորոգելիական*

վերադիրը քանակական հատկանիշ է արտահայտում. օրինակ՝ Բավական է, որքան զգույշ եղա *(Շիրվ.,* VI, *21)։*

Տ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Վերոհիշյալ շարքի բարդ ստորադասական նախադասության երկու մասերը միմյանց հետ թե *շաղկապով են կապակցվում, երբ գլխավոր նախադասության մեջ որևէ ասացական բայ զեղչված է. օրինակ՝* Սուտ է, թե հրեաները հարստահարիչներ են *(Շիրվ.,* V, *165)։ Նախապես տվյալ նախադասությունը եղել է.* Սուտ է, երբ ասում են, թե հրեաները հարստահարիչներ են: *Փաստորեն ասացական բայի անկումով ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունը դառնում է ենթակա։ Համեմատիր՝* Դժվար է ասել, թե քանի անգամ Մուշեղը զանգահարել էր *(ՔԹՈՀ, 486)։*

Թե *շաղկապով կապակցվում են նաև այն ենթակա երկրորդական նախադասությունները, որոնք ունեն որևէ հարցական կամ հարաբերական դերանուն. օրինակ՝* Միևնույն չէ քեզ համար, թե ով ումն է գրգռել *(Մուր.,* III, *110)։* Ինձ համար պարզ է, թե ում ագիտպրոպն է Յոթծովիմերանը *(ՆՋՀ, 386)։* Մինչև հիմա էլ նրա համար խրթին հանելուկի պես անլուծելի էին մնում, թե ինչ եղավ Արևիկը, ինչու նա այդպես հանկարծակի դադարեց գրելուց *(ՍԽՀ,* I, *8)։*

Թե *շաղկապով կապակցվում է* չլինի՞ *ստորոգյալով արտահայտված գլխավոր նախադասությունը, որն արդեն* թե *շաղկապի հետ դարձվածային ամբողջություն է կազմել. օրինակ,* Չլինի՞ թե դև կա կանգնած դռան ետևը *(Թ.,* III, *309)։* Չլինի՞ թե հաղթահարված, ճարը հատած թշնամին Դավ է դնում մութն ու մեռած Կես գիշերվա էս ժամին *(Թ.,* II, *148)։ Համեմատիր՝* Այնպես չլինի՞, որ վեր կենաս այնտեղ գաս:

Եթե բարդ նախադասության մեջ գլխավոր նախադասությունը ենթակա չունի, երկրորդական նախադասությունը չի կարող որոշիչ և բացահայտիչ լինել։ Այդ ոչ միայն լինում է անվանական ստորոգյալներով գլխավոր նախադասությունների հետ, այլև բայական. օրինակ՝ Պատուհաններից և պատշգամբից դիտողների մեջ կային, որոնք դժգոհում էին այդ աղմուկից, կային, որոնք միայն դիտում էին, բայց և կային, որոնք հիանում էին *(ԱԲԵ, 583)։ Այս նախադասության մեջ, ինչպես տեսնում ենք, զեղչված է հարաբերյալ* մարդիկ, այնպիսիները *և այլն. Նայած հարաբերյալը ինչ-*

պիսի բառ է, ըստ այդմ էլ որոշվում է երկրորդական նախադասության բնույթը. իսկ եթե հարաբերյալ չկա, ապա երկրորդական նախադասությունը անպայման ենթակա է։ Այսպիսի զեղչումները հազվագյուտ են, բայց և այնպես կան. կարծեք հարաբերյալը արտահայտվում է հարաբերականի միջոցով։ Համեմատիր՝ Թող լռե մունջը, անդամալույծը, կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը, բայց մենք որ ունինք հոգի ու սիրտ քաջ, եկ անվախ ելնենք թշնամու առաջ *(ՌՊԵ, 109)։ Պետք է լիներ* կամ՝ նրանք, որոց քաղցր է թշնամու լուծը:

Ենթակա երկրորդական նախադասությունները դարձվածային ենթակա են դառնում երկու ձևով. մեկն այն է, երբ երկրորդական նախադասության ստորոգյալը վերածվում է անորոշ դերբայի և որոշիչ հոդով ու իր լրացումներով դառնում է գլխավոր նախադասության ենթակա. օրինակ՝ Բանից երևում է, որ ես կեսն եմ ստացել *(Թ.,* V. *150)։* Բանից երևում է իմ՝ կեսը ստացած լինելը: Ավելի լավ է, որ այստեղ կտրեմ *(Թ.,* V, *176)։* Ավելի լավ է իմ այստեղ կտրելը: Կային, որոնք դժգոհում էին այդ աղմուկից: Կային այդ աղմուկից դժգոհողներ: *Երբ գլխավոր նախադասությունը անենթակա նախադասություն է, նրա ենթական միայն երկրորդական նախադասության գործողությամբ է արտահայտվում, երկրորդական նախադասության ստորոգյալը վերածվում է անորոշ դերբայի և դառնում է գլխավոր նախադասության ենթական, իսկ երբ գլխավոր նախադասությունը ունի որևէ ձևական ենթակա, երկրորդական նախադասությունը լրիվ կերպով արտահայտում է նրա բովանդակությունը և փաստորեն բռնում է նրա տեղը իբրև գլխավոր նախադասության ենթակա։ Ձևական ենթական տվյալ դեպքում սպասարկու բառի պաշտոն է կատարում և երկրորդական նախադասությունը դերբայական դարձվածով արտահայտելիս դուրս է ընկնում. օրինակ՝* Նա, ով որ մեզ հետ համաձայն չէ, մեր թշնամին է *(Ր.,* III, *317)։* Մեզ հետ համաձայն չեղողը մեր թշնամին է:

Մինչև այստեղ մենք քննեցինք ենթակա երկրորդական նախադասությամբ այն բարդ ստորադասական նախադասությունները, որոնց գլխավոր նախադասությունները անենթակա են։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Ենթակա չունենալը չպետք է շփոթել զեղչված ենթակայով նախադասության հետ։ Այստեղ խոսքը վերաբերում է միակազմ նախադասություններին։

Բացի սրանցից կան այնպիսի բարդ կապակցություններ, որտեղ գլխավոր նախադասությունը ունենում է որևէ ձևական ենթակա, որ հարաբերյալի դեր է կատարում, և որի ինչ լինելը հայտնի չէ. ենթակա երկրորդական նախադասությունը բացահայտում է այն և փաստորեն փոխարինում է նրան։ Այդպիսի ձևական ենթականեր են այն, դա, նա, բոլորը, յուրաքանչյուրը, ամենքը, այդպիսին, այնպիսին *դերանունները։*

Երբ գլխավոր նախադասության ձևական ենթական է այն *ցուցական դերանունը, երկրորդական ենթակա նախադասությունը կապակցվում է* որ, ինչ *շաղկապային բառերով. օրինակ՝* Հերակլի նախապաշարված մտքի վրա ազդեցություն արավ և այն, որ գանձերով բեռնավորված նավերը խորտակվեցին *(Լեո, ՀԳ, II, 250)։* Գլուխ եկավ այն, ինչ որ մասնագետների կարծիքով երեք—չորս տարվա աշխատանք էր *(ՆԶՀ, 321)։* Թող պատահի այն, ինչ որ պատահելու է *(Նույն տեղում, 342)։*

Ինչ *հաճախ կիրառվում է* որ *թարմատարի հետ, որն առաջինի նյութական նշանակությունը մասամբ մեղմում է։* Ինչ *և* որ *ունենալով միևնույն շաղկապային պաշտոնը, այս դեպքում ճիշտ միևնույն նշանակությամբ հանդես չեն գալիս.* ինչ *դերը պահպանում է իր նյութական նշանակությունը՝ դառնալով միայն հարաբերական դերանուն, իսկ* որ-*ը այս դեպքում գրեթե կորցրել է իր հարաբերականի դերը և շաղկապի արժեք է ստացել. հարաբերականի դերով* որ-*ը սակավ է հանդես գալիս. օրինակ՝* Արդյունքը եղավ այն, որ շրջանի կոլտնտեսություններում անասնապահական ֆերմաների մսուրային շրջանն սկսեցին լրիվ նախապատրաստված *(ՍՀ, № 7, 55)։* Բայց ինձ համար միանգամայն անհասկանալի էր այն, որ նա մի ակնարկ անգամ չարավ իր Քութայիսիի կալվածքի մասին *(Շիրվ.,* V, *176)։*

Այս օրինակների մեջ արտահայտված որ-*ի շաղկապային նշանակությամբ* ինչ-*ը երբեք չի կիրառվում. երկրորդական նախադասության մեջ* ինչ *հարաբերականը կամ ենթակա է, կամ խնդիր, այսինքն՝ հարաբերում է գլխավոր նախադասության ձևական* այն *դերանվանը. օրինակ՝* Այն, ինչ որ նրանց զինվացրեց, սրտապնդեց ինձ: Այն, ինչ որ մարեց նրանց կրակը, ինձ կրակ տվավ *(Շեքս.,* I, *231)։* Արդեն այն էլ, ինչ որ իմացա, քիչ էր մնում ինձ խելքահան աներ *(Նար.,* IV, *115)։*

Այս կարգի բարդ ստորադասական նախադասությունների մեջ

սովորաբար գլխավոր նախադասությունը լինում է առաջադաս, իսկ ենթակա երկրորդական նախադասությունը՝ վերջադաս։

Երբ ձևական այն *ենթական գլխավոր նախադասության սկզբի մասում է, իսկ նրանից հետո կան նախադասության այլ անդամներ, ենթակա երկրորդական նախադասությունը կարող է նաև միջադաս լինել. օրինակ՝* Այն, ինչ եղբայրդ է արել, գծվելու բան է *(ՔԹՈՀ, 505)։* Արդեն այն էլ, ինչ որ իմացա, քիչ էր մնում ինձ խելքահան աներ *(Նար., IV, 115)։* Կարծես այն, որ ժամանակ կար, ավելի հաշտ դարձրեց իրեն *(ԱԲՍՅՍ, 98)։*

Երբ միջադաս երկրորդական ենթակա նախադասությունը մեկից ավելի է, գլխավոր նախադասության երկրորդ եզրում այդ, դա, այդ բոլորը, այդ ամենը *դերանունները դրվում են դարձյալ իբրև ձևական ենթականեր՝ կապը գլխավոր նախադասության նախորդ եզրի հետ սերտ դարձնելու համար. օրինակ՝* Իսկ այն, որ տան ամբողջ հոգսն ինձ վրա էր, որ եփող թափողն ես էի, որ լվացող-կարկատողն ես էի, որ նրա հիվանդ մոր խնամողն ես էի,— այդ բոլորը ոչինչ, այդ բոլորը չէր երևում նրա աչքին *(Նար., VII, 210)։*

Ինչպես նշել ենք, գլխավոր նախադասության մեջ ենթակա կարող է լինել նաև այդ *ցուցականը, որ* այն*-ից տվյալ դեպքում իր պաշտոնով չի տարբերվում։ Այդպես են նաև* այս, սա, դա. *օրինակ՝* Այդ վատ է, որ ուսածներին սկսել են ծաղրել *(Փափ., 104)։* Այս ինչպես է, որ այսքան ժամանակ նամակ չունեմ ձեզանից *(Թ., V, 190)։*

Որ *հարաբերականով ենթակա երկրորդական նախադասությունը կարող է նախադաս դրվել, երբ հարկավոր է ուշադրությունը բևեռել դրա վրա, երբ դրան հաջորդում է նույնատիպ մի այլ համազոր ենթակա նախադասություն. այս դեպքում էլ ետադաս գլխավոր նախադասությունը սկզբում անփոփոխ ընդունում է* այս, այդ, դա, սա, այն *ցուցական ենթակաները, որոնց միջոցով էլ երկու նախադասությունների կապը սերտանում է։ Այսպիսի առաջադաս երկրորդական նախադասությունները առանձնապես ընդգծվում են իբրև համոզմունք, իբրև փաստարկում և կրում են ուժեղ տրամաբանական շեշտ. օրինակ՝* Որ այդ ամուսնության մեջ մեղավոր էին Քալիի ծնողները, որ նրա կամքի և զգացումների վրա ամենաանխիղճ բռնությունն էր կատարված ծնողների կողմից, այդ լույսի պես պարզ էր ինձ համար *(Նար., IV, 118)։* Որ ես անմասն եմ քո հոր մահվան մեջ, դա այնպես ուղիղ կցայտի

խելքից, ինչպես լույսն աչքից *(Շեքս.,* I, *84)։* Որ իր միջավայրի համար Վահանյանը այլանդակություն էր, դա պարզ էր *(Փափ., 374)։ Համեմատիր՝* Բայց մի բան, որ չկարողացա ձեռք բերել, դա էր վարժապետիս խորին գիտությունը *(Ր., 40)։*

Ենթակա երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է նաև ով *հարաբերականով։ Այս պարագայում գլխավոր նախադասության ձևական ենթական է* նա *դերանունը, որ անպայման անձ է ցույց տալիս։* Ով *հարաբերականը շաղկապային դեր չունի. սրանով կապակցվող երկրորդական նախադասությունները կարող են լինել երեք դիրքով՝ նախադաս, միջադաս և ետադաս. օրինակ՝* Ով որ հանդգնի ավելին անել, նա մարդ չէ այլևս *(Շեքս.,* I, *227)։* Սրիկա է նա, ով հայր է լինում *(Իսահակյան)։* Սրիկա է նա, ով հայր չի լինում *(Շիրազ, Հատընտիր, 116)։* Ով որ կմնա, թող նա պարծենա *(Թ.,* II, *78)։* Մեր գյուղում վանառական համարվում է նա, ով իր սենյակներից մեկի փողոցի կողմի պատը ծակել էր *(ՊՊԵԺ,* III, *185),* Ով ինչ երազ տեսել էր, նա իսկույն շտապում էր Մարթայի մոտ (*նույն տեղում, 213)։* Ով քաղաքից էր հեռացել, նա թողել էր մշուշը ծեր... Ով եկել էր գյուղից հեռու, նա թողել էր հողը խոնավ... Ով եկել էր ստեպներից, նա թողել էր անծայրածիր լայնությունը հորիզոնի... Ով քաղաքից էր հեռավոր, ուր մառախուղ էր անորոշ, նա բերել էր թոքախտավոր սիրտը որպես կարմիր դրոշ *(ՉԸ, 250)։*

Ով *հարաբերականը նույնպես կարող է* ·*հարաբերյալ չունենալ. օրինակ՝* Ով կարող է, թող ուրախանա *(Թ.,* III, *181)։* Ով որ ձեզանից արհեստ գիտե, կապրի մինչև մեռնելը *(«Ընտիր էջեր», 492)։* Ով որ ձեզանից կարող է այդ հինավուրց ջրանցքը գտնել, թող շտապե *(«Ընտիր էջեր», 600)։* Ով որ ազգի հացն ուտում է, ազգի համար էլ կարող է կռվել *(«Ընտիր էջեր», 601)։* Ում խելքին ինչ փչում է, իմ յախիցն է բռնում *(ՎԱՍԱ, 534)։*

Ով *հարաբերականի հետ երբեմն լինում է* որ *թարմատարը, մանավանդ երբ ենթակա նախադասությունը նախադաս է։ Պետք է ենթադրել, որ այդ թարմատարը նախապես եղել է* ով *դերանվան հարաբերականը։ Համեմատիր՝* Ով էր կարող ինքն իրեն զըսպել, ով որ սիրազգաց մի սիրտ ունենար *(Շեքս.,* I, *237)։*

Ով *հարաբերականի համար իբրև հարաբերյալ գլխավոր նախադասության սկզբում կարող է հանդես գալ* այդպիսին-այսպիսին, այնպիսին: *Համեմատիր՝* Բայց ով տարիներով ապրել է մեծ քաղաքում, միշտ միևնույն նեղ փողոցի վրա, նույն ապականված

մթնոլորտի մեջ և գործել է շարունակ լույսից ու օդից զուրկ գրասենյակում... այդպիսին, հարկավ, կարոտելով կկարոտի այն ամենին... *(«Ընտիր էջեր», 582)*։

բ) ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասությունը ցույց է տալիս այնպիսի գործողություն, դրություն, որ իբրև հատկանիշ, ստորոգելիական վերադիրի պաշտոնով վերագրվում է գլխավոր նախադասության ենթակային և բռնում է այդ ենթակայի նախապես ունեցած ձևական արժեք ներկայացնող վերադիրի տեղը կամ պարզաբանում է ձևական ստորոգելիական վերադիրի նշանակությունը։

Գլխավոր նախադասության մեջ ձևական վերադիրների առկայությունը պարտադիր է, այլապես ստորոգում չի կատարվի, և բարդ կապակցություն չի կարող ստեղծվել։

Հաճախ բաղադրյալ անվանական ստորոգյալը կազմված է լինում ձևական բառից ու բայական հանգույցից։ Հասկանալի է, որ այդ ձևական բառի բովանդակությունը մեզ համար մնում է անհայտ. բացի այս՝ այդ վերջինը այնպիսի բառ է, որը ոչ որոշիչ է ընդունում և ոչ բացահայտիչ։ Այս դեպքում կարիք է զգացվում ցույց տալ, թե ինչ բովանդակություն ունի, ինչ է այդ ձևական բառը. օրինակ՝ Այս այն էր, որ Տեր-Կիրակոսը վաշխառությամբ է պարապում *(ՊՊԵԺ, 3, 217)։ Այս բարդ ստորադասական նախադասության գլխավոր նախադասությունն է* այս այն էր, *իսկ երկրորդական նախադասությունն է ամբողջ շարունակությունը, որ վերաբերում է* այն *ձևական ստորոգելիական վերադիրին։*

Գլխավոր նախադասության համար իբրև ձևական վերադիրներ հանդես են գալիս՝ այս, այն, նույն, նա, այնպես, այնքան, այդպիսին, այսպիսին *և այլն, որոնք համապատասխան հարաբերականներ են ունենում երկրորդական նախադասության եզրում։*

Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասությունը կապակցվում է որ, թե, ինչ, ով, որպես, ինչպես, որպիսի *հարաբերական բառերով ու շաղկապներով, որոնք ավելի կամ պակաս սահմանափակությամբ գլխավոր նախադասության եզրում ունեն իրենց համապատասխան հարաբերյալները։*

Հարաբերյալ ձևական բառերից ամենից հաճախ կիրառվում է այն *ցուցականը, որը տվյալ կարգի բարդ նախադասությունների*

մեջ յուրահատուկ կապակցական պաշտոն է ձեռք բերել և կիրառվում է գրեթե բոլոր դեմքերի համար. կարելի է ասել՝ Ես այն եմ, դու այն ես, այս այն է, այդ այն է, այս մարդը այն է *և այլն։*

Այդ այն է, որ մի օր հայտնվեցան մարդիկ *(Փափ., 311)։* Ցավը այն է, որ ես սիստեմատիկ կրթություն չեմ ստացել *(Նար., 7, 253)։* Այս արշավանքի հետևանքը այն եղավ, որ ամբողջ Փոքր Ասիան մաքրվեց արաբական զորքերից *(Լեո, ՀՊ, 2, 251)։* Բանն այն է, որ անկոչ հյուրն սկսեց քիչ-քիչ մեծանալ *(Փափ., 393)։* Ասելս էն է, որ կուլտուրական մաքառումից փախչելը ապարդյուն բան է *(Թ., VI, 188)։*

Երկրորդական նախադասությունը դարձվածային վերադիր է դառնում հարաբերյալ և հարաբերական բառերի անկումով, երկրորդական նախադասության ստորոգյալը վերածվում է որոշիչ հոդով անորոշ դերբայի, որ դրվում է բայական հանգույցից անմիջապես առաջ, ենթական փոխվում է սեռականի. օրինակ՝ Այդ բոլորի հետևանքը եղավ այն, որ երկիրը լցվեց անտառն ու անտեր, գոյության ամեն աղբյուրից զրկված բշվառ բազմություններով *(ՍՇԸԵ, 37)։* Այդ բոլորի հետևանքը երկրի՝ անտառն, անտեր, գոյության ամեն աղբյուրից զրկված թշվառ բազմություններով լցվելը եղավ: *Երբ երկրորդական նախադասության վերադիրը գլխավոր նախադասության համար ենթակա է կամ խնդիր, երկրորդական նախադասության ստորոգյալը վերածվում է հոդով հարակատար դերբայի. օրինակ՝* Միայն Միքայելը լինի այն, ինչ որ երևակայել եմ *(Շիրվ., 6, 24)։* Նա այն է, ինչ որ երևացել է մինչև հիմա *(ՆՋՀ, 342)։* Միայն Միքայելը լինի իմ երևակայածը: Նա մինչև հիմա երևացածն է: *Երբ երկրորդական նախադասության ստորոգելիական վերադիրը անուն է (ածական, գոյական, դերանուն), նում է նույնությամբ և բռնում է ձևական հարաբերյալի տեղը. օրինակ՝* Վասակը Հասմիկի համար նույնն է, ինչ որ Հացավանը *(ՆՋՀ, 337)։* Վասակը Հասմիկի համար Հացավանն է:

Իբրև գլխավոր նախադասության ստորոգյալ սակավ կիրառվում է նաև այս *ցուցականը, որ տվյալ դեպքում բոլորովին չի տարբերվում նախորդից. միայն այս դեպքում պետք է երկրորդական նախադասությունը ցույց տա այնպիսի գործողություն, որ մոտ լինի խոսողին, կամ ամբողջ նախադասության գործողությունը կատարվում է խոսողին մոտիկ պարագաներում. պետք է նշել նաև, որ այսպիսի տարբերությունն այժմ չի զգացվում, իսկ* այս-*ով ձևը գրեթե դուրս է գալիս գործածությունից։ Համեմատիր*

հետևյալ օրինակները՝ Իմ հանցանքը էս է, ավաղ, որ սիրուն եմ ես եսքան (*Թ., 3, 404*)։ Զարմանալին այս էր, որ աստված Արամի սրտովն էլ իրան ավել էր (*ՊՊԵԺ, 3, 188*)։

Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասությունը գլխավորի հետ գերազանցապես կապակցվում է որ *հարաբերականով, որն այս կարգի նախադասությունների մեջ մեծ մասամբ հանդես է գալիս իբրև շաղկապ, այսինքն՝ երկրորդական նախադասության մեջ* որ-*ը այս դեպքում սկսում է իբրև նախադասության անդամ այլևս չգիտակցվել. օրինակ՝* Հետաքրքիրն այն էր, որ նա իմ մասին խոսում էր երրորդ դեմքով (*ԳՄԵ, 316*)։ Պրոլետարիատի դասակարգային հատկանիշն այն է, որ նա սեփականություն չունի (*ՄՇԸԵ, 39*)։ Այսպիսի հոբելյանների նպատակը այն չէ, որ մարդիկ հավաքվեն և աշխատեն ուրախ ժամանակ անցկացնել հոբելյարի հետ (*ՄՇԸԵ, 79*)։ Այդ կնշանակե այն, որ ես դողդողում եմ քո անձի համար (*Մուր., 3, 25*)։

Երբ անհրաժեշտ է ցույց տալ գլխավոր նախադասության ստորոգելիական վերադիրի և երկրորդական նախադասության արտահայտած իմաստի նույնը լինելը, ապա այս դեպքում որ-*ի փոխարեն կիրառվում է* ինչ որ, *եթե հարաբերյալը անձ չի ցույց տալիս. օրինակ՝* Ոսկու դեզը նույնն էր, ինչ-որ թագավորը ավել էր կախարդ հեքիմին (*Թ.,* III, *256*)։

Երբ հարաբերյալը անձ է ցույց տալիս, այսինքն՝ գլխավոր նախադասության ստորոգելիական վերադիրը վերաբերում է անձի և ոչ թե իրի, ապա կիրառվում է նա *ցուցականը, որին երկրորդական նախադասության եզրում հարաբերում է* որ. *այս դեպքում* ինչ *չի կարող կիրառվել, իսկ* որ-*ը արդեն շաղկապ չէ, այլ հարաբերական դերանուն. օրինակ՝* Ես նա եմ, որին ամենքն են նայում, ինքը ոչ ոքի. ես նա եմ, որին ամենքն են հարցնում, ինքը ոչ ոքի (*Թ.,* II, *165*)։

Ծանոթություն.— Այս պարագայում հազվադեպ կիրառվում է նաև ով *հարաբերական դերանունը. օրինակ՝* Նա՞ չէ, ով մի քանի շաբաթ առաջ թևանցուկ անցնում էր Կարինեի հետ (*ԲՎԻԳԵ, 84*)։

Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է նաև թե *շաղկապով, որը կիրառվում է այն պարագայում, երբ երկրորդական նախադասությունից առաջ գործածված են լինում* որ, որովհետև, որպիսի *ու այս կարգի այլ*

բառեր, և կամ երկրորդական նախադասության մեջ կա որևէ հարցական դերանուն. օրինակ՝ Առաջին լուրը, որ լսեցի դարձիս, այն էր, թե Երվանդը երկու օր առաջ նշանվել է Անահիտի հետ *(Իս., III, 46)։* Առաջին հարցը, որ ծագում է հասարակական գործիչին գնահատելու ժամանակ, այդ այն է, թե ինչ դավանանքի տեր է եղել նա *(ՍՇԸԵ, 10)։*

Գլխավոր նախադասության մեջ ստորոգելիական վերադիրներ են լինում նաև այնպիսի դերանուններ, որոնք որակական, քանակական հատկանիշներ են արտահայտում. այդ դերանուն հարաբերյալներն են այնպես, այնպիսին, այնքան: *Սրանց համապատասխան հարաբերականներ են* որպես, որպիսին, ինչպես, ինչպիսին, որքան, որչափ:

Երբ գլխավոր նախադասության ստորոգելիական վերադիրը որակական հատկանիշ է արտահայտում (այնպես), երկրորդական նախադասությունը վերադիր է դառնում նման, պես *բառերի միջոցով. օրինակ՝* Բայց այնպես չէ, ինչպես դուք եք ասում *(ՆԶՀ, 63)։* Բայց ձեր ասածի նման չէ: Թող էնպես լինի, ինչպես դու ես կամենում *(Թ., III, 353)։* Թող լինի քո կամեցածի պես (նման):

Իսկ եթե գլխավոր նախադասության վերադիրը քանակական հատկանիշ է արտահայտում (այնքան), ապա երկրորդական նախադասությունը ստորոգելիական վերադիր է դառնում չափ *բառի միջնորդությամբ. օրինակ՝* Թող լինի այնքան, ինչքան պետք է: Թող լինի պետք եղածի չափ։ Այնքան է, ինչքան որ դու պահանջեցիր։ Քո պահանջածի չափ է:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.— *Երբ գլխավոր նախադասության հանգույցի հետ կապակցվում են* այստեղ, այնտեղ *բառերը, իսկ երկրորդական նախադասության հարաբերական բառերն են* ուր, որտեղ, *այս դեպքում* այստեղ, այնտեղ *չպետք է դիտել իբրև վերադիր։ Դրանք տեղի պարագաներ են, իսկ երկրորդական նախադասությունները որոշիչ են. օրինակ՝* Դու այնտեղ եղիր, որտեղ քո պարտքը պահանջում է: Դու եղիր քո պարտքի պահանջած տեղում: Բարեբախտաբար ես միշտ այնտեղ եմ, ուր ինձ չեն սպասում,—ժպտալով պատասխանեց իշխանը *(Մուր., III, 157)։*

Եթե գլխավոր նախադասության ստորոգելիական ձևական վերադիրը որևէ թեք հոլովով է, ապա երկրորդական նախադասու-

թյան ստորոգյալը վերածվում է դարձվածային վերադիրի միևնույն հոլովով. օրինակ՝ Եվ եթե մենք այսօր կոտրատում ենք այն մերթ, այդ նրանից է, որ ուզում ենք մեր նոր խոհերի վրա ժանգ չչոքի *(ՉԸ, 137)։*

Երբ նա *դերանունը ներգոյական հոլովով է կիրառվում, դրա հետ դրված հանգույցը էական բայի նշանակություն է ստանում։ Այդ երկուսը միասին ստանում են դարձվածային նշանակություն, որը իբրև այդպիսին մտել է մեր լեզվի մեջ պատճենման ձևով. ճիշտ կլինի գործածել բանն այն է, որ , ... և այլն. օրինակ՝* Այդ ուժի առավելությունը նրանումն է, որ փողը և զենքի ուժը ամեն մարդ ձեռք բերել չի կարող *(Մուր.,* II, *29)։ (Ճիշտը կլիներ այսպես.* Այդ ուժի առավելությունը այն է, որ...)։ *Համեմատիր՝* Բանը նրանում է, որ գյուղացին հենց պարտքի վճարելու ժամանակն էլ «նաղդ» փող չի տա *(Ր.,* II, *506)։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.— Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասությունը հազվագյուտ դեպքում է նախադաս դըրվում. այդ արդեն շրջում պետք է համարել։ Համեմատիր՝ Ես այն էի, որ ձայն էի ես. Ինչ ձայն էի, այն էի ես *(Դեմիրճյան, «Մեսրոպ Մաշտոց»)։*

Երբեմն հանգույց թվացող եմ *բայը ձևական ստորոգյալ է կապակցական նշանակությամբ. իսկ երկրորդական նախադասությունը փոխարինում է հենց այդ ձևական ստորոգյալին. օրինակ՝* Միայն Վասիլիսային էր, որ ոչինչ չէր պատահել *(Թ.,* III, *265)։*

Բ. ԸՆԹԱԿԱՅԻ ԿԱՄ ՈՐԵՎԷ ԳՈՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երկրորդական նախադասության կիրառական պաշտոնը հաճախ հավասարեցվել է պարզ նախադասության առանձին անդամների դերին։ Այդ հավասարեցման համար ամենակարևոր հիմունքը անշուշտ այն է, որ հաճախ պարզ նախադասություններն ունենում են այս կամ այն չափով ընդարձակ դերբայական լրացումներ, որոնք մոտենում են երկրորդական նախադասություններին. իսկ այս վերջինները մեծ մասամբ կարելի է վերածել դերբայական լրացումների։ Ենթակայի կամ նախադասության որևէ գոյական անդամի լրացում են դառնում որոշիչ, հատկացուցիչ *և* բացահայտիչ *երկրորդական նախադասությունները, որոնք պարզ նախադասության նույնանուն*

լրացումներից տարբերվում են իրենց ընդարձակությամբ և առանձնապես ստորոգված լինելու հանգամանքով, որ հնարավորություն է ընձեռում առանձին նախադասությամբ բնութագրելու գլխավոր նախադասության ենթական կամ որևէ գոյական անդամը։

1. ՈՐՈՇԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Նախադասության ենթական կամ որևէ գոյական անդամ կարող է ունենալ իր որոշիչը, որը բնութագրում է ենթական կամ նախադասության այլ գոյական անդամը ըստ որակական, քանակական, տարածական ու այլ հատկանիշների, այսինքն՝ որոշիչը արտահայտում է գոյականի որպիսությունը, քանակական առանձնահատկությունը, նրա տարածական առնչակցությունը ուրիշ գոյականների հարաբերությամբ։ Երբեմն անհրաժեշտ է լինում գոյականների այդպիսի բնութագրությունը արտահայտել ավելի մանրամասն ու հանգամանորեն. ահա այս դեպքում դժվար կամ անհնարին է լինում այդ բնութագրությունը գոյականի հետ կապակցել վերադիրի կամ որոշիչի ձևով։ Այդպիսի փորձը հասցնում է խճողման, իսկ երբեմն էլ պարզապես անհնարին է։ Ուստի այդ կարգի մանրամասն բնութագրությունները արտահայտվում են առանձին նախադասություններով, որոնք հատուկ շաղկապների կամ բառերի միջոցով կապակցվում են իրենց որոշյալի հետ։

Առանձին նախադասություններով արտահայտված որոշիչը ավելի լայն հնարներ է ստեղծում որոշյալը բազմակողմանի և լրիվ բնութագրելու համար։

Հաճախ գլխավոր նախադասության գոյական որոշյալը ունենում է մի ձևական որոշիչ, որի բովանդակությունը արտահայտվում է երկրորդական նախադասությամբ։ Այդ ձևական որոշիչները կապակցման դեր են կատարում, այսինքն՝ դրվելով գլխավոր նախադասության որևէ գոյական անդամի վրա, փաստորեն մատնացույց են անում երկրորդական նախադասության անհրաժեշտ հաջորդումը։ Այդպիսի ձևական որոշիչներ են՝ այնինչ, մի, նույն, այդպիսի, այնպիսի, այսպիսի, նույնպիսի, այսքան, այդքան, այնքան և այլ դերանունները, որոնց փոխարինելու է գալիս ամբողջ երկրորդական նախադասությունը, և երբ այս վերջինը վերածվում է դերբայական դարձվածի, բռնում է այդ ձևական որոշիչների տեղը։

Երբ ընդհանրապես առարկային վերագրվող որակը, որպիսությունը, այն վիճակը, որի մեջ գտնվում է առարկան, այս վերջի-

նիս կատարած գործողությունը և այդ առարկայի հետ առնչվող այլ առարկաների նման հատկանիշները առանձնացվում և առանձին նախադասությամբ հաղորդվում են. իբրև առարկայի մշտական կամ ժամանակավոր, իրական կամ ենթադրական հատկանիշներ, ստացվում է որոշիչ երկրորդական նախադասություն:

Որոշիչ երկրորդական նախադասության առավելությունը սովորական որոշիչի համեմատությամբ այն է, որ այս դեպքում հնարավորություն է ստեղծվում ավելի մանրամասնորեն, բազմակողմանի արտահայտելու առարկայի ամեն կարգի հատկանիշները:

Երկրորդական նախադասությամբ հնարավոր է լինում բնութագրել գլխավոր նախադասության գոյական կամ գոյականաբար գործածվող որևէ անդամը անմիջականորեն, ինչպես և միջնորդաբար, այսինքն՝ նրա հետ ժամանակով, տարածականությամբ մոտ գտնվող և այլ հարաբերություններով առնչվող ուրիշ առարկաների գործողություններով, դրությամբ, հատկանիշներով:

Որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է որ, ինչ, ինչ որ, ուր, որտեղ, ով, ուստի, ուսկից, ինչտեղ, երբ, որպես, որպիսի, որքան, ինչպես, ինչպիսի, այն է, թե հարաբերական բառերով ու շաղկապներով: Այս շաղկապները և վերևում բերված ձևական որոշիչները միասին կազմում են որոշիչ երկրորդական նախադասության համար կապակցման մի համակարգ:

ա) ՈՐ-ՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՈՐՈՇԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Որ-ը թե իբրև հարաբերական դերանուն և թե իբրև շաղկապ ընդհանուր նշանակություն ունի, այսինքն՝ ինչպիսիք էլ լինեն որոշվող նախադասության հարաբերյալները (անձ, իր, վերացական, թանձրացական բառեր, երևույթներ և այլն), կարող են որ-ով կապակցվող երկրորդական նախադասությամբ լրացում ունենալ:

Որ հարաբերականը հարաբերում է ամբողջ նախադասությանը կամ նրա մի մասին, նախադասության որևէ գոյական անդամին, որևէ գոյական անդամի ձևական որոշիչին, որ կիրառվելով իբրև որոշիչ, մատնացույց է անում որոշիչ երկրորդական նախադասությունը:

Երբ որ հարաբերականով երկրորդական նախադասությունը հարաբերում է ամբողջ գլխավոր նախադասությանը, որևէ առանձին հարաբերյալ գլխավոր նախադասության մեջ չի լինում: Այս

պարզագույն գլխավոր նախադասությունը բնութագրվում է որ *հարաբերականի միջնորդությամբ՝ ենթակա դառնալով երկրորդական նախադասության ստորոգյալի համար։ Սրա շնորհիվ էլ հենց որոշվում է նրա այս կամ այն առանձնահատկությունը։ Գլխավոր նախադասությունը երկրորդականի համար դառնում է նաև խնդիր (*որ *դերանվան միջնորդությամբ), պարագա և հենց դրանով էլ բնութագրվում է, այսինքն՝ գլխավոր նախադասությունը երկրորդական նախադասության որևէ անդամը դառնալով՝ բացատրվում, որոշվում է երկրորդական նախադասության գործողությամբ, կամ դրությամբ։*

Այս կարգի երկրորդական նախադասությունները կարելի է կոչել լրացուցիչ հաղորդման կամ հարակցական, որտեղ տրվում է խոսողի գնահատությունը գլխավոր նախադասության մեջ հաղորդվածի նկատմամբ, եզրակացությունը՝ հանված այդ հաղորդվածից, այլևայլ լրացուցիչ հաղորդումներ, բացատրություններ, որոնք միշտ ետադաս են լինում. օրինակ՝ Հանգիստ կտիրես և Թմուկ բերդին, որ չես կարենում էսքան ժամանակ *(Թ.,* II, *143)։* Գետի մեջ իրանց լվացքն էին անում, որ շատ մեծ հարմարություն էր նրանց համար *(Թ.,* III, *350)։* Ինչպես ամբողջ օրը, նույնպես և այժմ ամպերը շարունակ բացխփուկ էին անում երկնքի երեսին, որից լուսինը մերթ պայծառ բացվում, լուսավորում էր աղքատիկ գյուղն ու նրա խղճուկ տները *(Մուր.,* V, *152)։* Այդպիսով, կարծես, հայտնում էին իրենց գոհությունն ու դժգոհությունը, որից և ողջ հորիզոնը ստանում էր մերթ վեհ, մերթ ակնապարար տեսք *(Մուր.,* V, *116)։* Վանահոր սենյակը ոչնչով չէր տարբերվում մյուս միաբանների խուցերից, որ ապացուցանում էր, թե հավասարության սկզբունքը հնուց անտի հարգված է եղել այդտեղ *(Մուր.,* V, *119)։*

Եթե ցանկանանք այս կարգի որոշիչ նախադասությունները վերածել դերբայական դարձվածի և ձուլել գլխավոր նախադասության մեջ իբրև որևէ լրացուցիչ անդամ, անհնար կլինի։ Այդ նախադասությունները ոչ թե որևէ բառի լրացում են, այլ ամբողջ գլխավոր նախադասության կամ նրա մի մասի բովանդակությանն են վերաբերում, մի նախադասություն, ուր կատարվող այս կամ այն երևույթը, գործողությունը կապվում են ուրիշ կողմնակի գործողությունների, երևույթների հետ և հենց դրանով էլ բնութակրվում են։ Այսպիսի երկրորդական նախադասությունները երկրորդական են միայն ձևականորեն, նրանց կապակցող հարաբե-

րական բառերը կարելի է փոխարինել և, ու համադասական շաղկապներով կամ ցուցական դերանուններով (սա, դա և այլն), և այդ դեպքում ամբողջ նախադասությունը կվերածվի համադասության։

Որ հարաբերականով որոշիչ երկրորդական նախադասությունը կարող է վերաբերել նախադասության որևէ գոյական անդամի (ենթակա, խնդիրներ, գոյական պարագաներ, ստորոգելիական վերադիրներ) և վեր հանել նրա հատկանիշները տարբեր տեսանկյուններից՝ որակական, քանակական, ծավալային և այլն. օրինակ՝ Մանավանդ միայն լսում է այն մարդուն, որն ուժեղ է (ՔԹՈՀ, 521)։ Այդ երիտասարդը, որն այնքան ընդունակ է, ամեն ինչից ձեռք է քաշել (Նույն տեղում, 536)։ Սահակն ունի ընդամենը մի հագուստ, որը և բանվորական էր, և տոնական (ԼԹԿ, 216)։ Հագարացի բռնավորները ամեն ժամանակ կարող էին հարձակվել այդ քաղաքի վրա, որ ժամանակի կռվածաղիկն էր (Մուր., III, 10)։

Ծանոթություն 1.— Այս կարգի երկրորդական նախադասությունները գերազանցապես անվանական ստորոգյալով նախադասություններ են, որի անվանական մասը մեծ մասամբ ածական կամ հատկանիշ արտահայտող այլ անվանական բառ է, որով հենց բնութագրվում է գլխավոր նախադասության որոշյալը։ Այսպիսի երկրորդական նախադասությունները հեշտությամբ դառնում են դերբայական դարձված որոշիչներ և տեղադրվում գլխավոր նախադասության մեջ գտնվող որոշյալից առաջ. օրինակ՝ Համբուրեցի այն կնոջ ձեռքը, որն ինձ երկրորդ մայր է եղել (Մուր., III, 33)։ Համբուրեցի ինձ երկրորդ մայր եղած կնոջ ձեռքը։

Ծանոթություն 2.— Եթե երկրորդական նախադասության ստորոգելիական վերադիրը գոյական է, և բռնազբոսիկ է այդ նախադասությունը որոշիչ դարձնելը, պետք է այդպիսի երկրորդական նախադասությունը համարել բացահայտիչ։ Երբ երկրորդական նախադասության ստորոգյալը անցյալ ժամանակով է արտահայտված, ապա գլխավորին ձուլելու համար ստորոգյալը վերածվում է հարակատար դերբայի. եթե ներկայով է՝ դառնում է ենթակայական դերբայ։ Իսկ եթե ապառնի է, պետք է վերածվի հին ապառնի դերբայի իք-ով ձևին, չնայած այս դեպքում էլ մեծ մասամբ դարձյալ ենթակայական դերբայով է արտահայտվում։

Ծանոթություն 3.— Իմ հանգույցի դիմաց կարելի է օգտագործել հանդիսանալ բայը. օրինակ՝ Հանեցին նախ թագուհու

սովորական զարդերը, որոնք էին յուր բյուզանդական ծանրագին ապարանջաններն ու գինդերը (*Մուր.*, III, *29*)։ Հանեցին նախ թագուհու բյուզանդական ծանրագին ապարանջաններն ու գինդերը հանդիսացած (հանդիսացող) սովորական զարդերը։ *Հենց այս կարգի նախադասությունները պետք է համարել բացահայտիչ։*

Ծանոթություն 4.— Եթե երկրորդական նախադասության ստորոգելիական վերադիրը ածական է, կարելի է առանց դերբայի, ուղղակի ածականը դնել գլխավոր նախադասության այն անդամի վրա, որի լրացումն է երկրորդական նախադասությունը. օրինակ՝ Այն աղջիկը, որ իր ընկերների համեմատությամբ ավելի գեղեցիկ է, եկավ։ Իր ընկերուհիների համեմատությամբ ավելի գեղեցիկ աղջիկը եկավ։ Այն աշակերտը, որ ջանասեր է, լավ է սովորում. ջանասեր աշակերտը լավ է սովորում։

Ծանոթություն 5.— Այս կարգի երկրորդական նախադասությունները դերբայական դարձվածի, կամ դարձվածային որոշիչի վերածելիս պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները։

Գլխավոր նախադասությունը հիմնականում մնում է անփոփոխ. գլխավոր նախադասությունից վերցվում են այն ձևական բառերը, որոնք ժամանակավորապես բռնում են որոշիչ երկրորդական նախադասության տեղը իբրև ձևական որոշիչներ։ Եթե գլխավոր նախադասության որոշյալը ունի նաև ուրիշ որոշիչներ, որոնք անմիջապես հարում են նրան, ապա դրանք ըստ շարադասության կարող են և մնալ իրենց տեղում կամ փոխել տեղը՝ առաջ ընկնելով՝ իրենց տեղը զիջելու դարձվածային որոշիչին, եթե այդ է պահանջում աներկդիմությունը։

Ծանոթություն 6.— Եթե երկրորդական նախադասության ստորոգյալը բաղադրյալ է, կրճատման ժամանակ վերադիրը պահպանվում է, իսկ եմ *բայով արտահայտված հանգույցը կամ վերացվում է և կամ վերածվում* լինել *բայի դերբայական ձևերի. օրինակ՝* Ես ներում եմ նրան յուր թուլությունները, որոնք ներելի չէին իբրև թագավորի։ Ես ներում եմ նրան իբրև թագավորի յուր աններելի թուլությունները, կամ՝ ներելի չեղող թուլությունները։ Գալիս էր մի երիտասարդ, որ զինվոր էր։ Գալիս էր զինվոր մի երիտասարդ։

Ծանոթություն 7.— Այս տիպի որոշիչ նախադասությունները, մանավանդ ածական վերադիրով, համեմատաբար սակավ են, որովհետև փոխանակ ասելու՝ մի տուն, որ գեղեցիկ է, *պարզապես ասվում է՝* մի գեղեցիկ տուն:

Ծանոթություն 8.— «Եմ» *բայը, որ սովորաբար դուրս է ընկնում, ներգոյական, բացառական հոլովների և կապական բառերի հետ դառնում է* եղող, եղած *դերբայ, կամ թե բայը դուրս է ընկնում, բայց հոլովներով խնդիրները դառնում են սեռականով վերադիր. օրինակ՝* Այն մարդիկը, որ մեզ հետ էին, չէին վերադարձել. մեր հետի մարդիկը: Այն մարդիկը, որ ազնվական ծագումից են: Ազնվական ծագումի մարդիկ, ազնվական ծագումից եղած մարդիկ... *(Աբեղյան)։*

Որոշիչ երկրորդական նախադասությունը՝ որ *հարաբերականով արտահայտում է գլխավոր նախադասության որևէ գոյականական անդամի այս կամ այն գործողությունն ու դրությունը, որոնցով էլ բնութագրվում է առարկան. այսինքն՝ առարկան բնորոշվում է իր որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու ունակությամբ, հատկանիշով. օրինակ՝* Հրեղեն սյունը երբեմն դուրս է թողնում թոնրի միջից, տարածում է մի պայծառ լուսավորություն, որ բաց է անում այսպիսի տեսարան *(«Ընտիր էջեր», 658)։* Առաջին բանը, որ աչքի զարկավ, աթարի դեզն էր *(Մուր.,* V, *158)։* Կանաչ ծառերի խումբը, որ երևում էր մասամբ եզերքին և մասամբ անշուք շինությունների ետևում, այլև բարդիների շարքը, որ պատում էր կզզու ճյուսիսային ջրափը, չէին մեղմում նրա կոշտացած պատկերը *(Մուր.,* V, *106)։* Մենք նմանում էինք ծառի այն պտուղին, որ ճյուղի վրա իսկ թառամած է *(Փափ., 372)։* Երգում եմ քո երգը էն մեծ, որ սրտիս ավեց տառապանքը քո *(ՉԸ, 268)։*

Այս տիպի որոշիչ երկրորդական նախադասությունները դերբայական դարձվածով որոշիչ են դառնում նույն կանոններով, որպիսիք տեսանք վերևում, միայն երբ երկրորդական նախադասության ստորոգյալը հարակատարով է արտահայտված, օժանդակ բայը ընկնում է, իսկ հարակատար դերբայը մնում է նույնությամբ. օրինակ՝ Մենք նմանում ենք ծառի ճյուղի վրա թառամած պտուղին։ *Երկրորդական նախադասությունների ստորոգյալները այս դեպքում դառնում են ներգործական կամ ներգործաձև դերբայներ, որոնք զանազանվում են ըստ ստորոգյալների ժամանակների. ներ-*

կալով ստորոգյալը առաջացնում է ենթակայական դերբայ, անցյալով ստորոգյալները՝ հարակատար, իսկ ապառնիով ստորոգյալները վեր են ածվում հին ապառնի դերբայի (իք-ով)։ Անցյալ անկատարը մեծ մասամբ արտահայտվում է ենթակայական դերբայով։

Որոշիչ երկրորդական նախադասությունը հաճախ ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ կատարվում է գլխավոր նախադասության մեջ գտնվող որևէ գոյականի նկատմամբ։ Այդ գոյականը երկրորդական նախադասության մեջ կատարում է զանազան պաշտոններ, որով և բնութագրվում, որոշվում է նա։ Երկրորդական նախադասության մեջ այդ գոյականները կարող են լինել խնդիր կամ հատկացուցիչ՝ Ուղղեց օրիորդը յուր սխալը, որից նրա այտերը թեթև շառագունեցան *(Մուր., V, 165)*։ Էս պատճառով էլ գյուղի երեխաներից շատերը, որոնց ծնողները չէին կարող տարեկան երեք ռուբլի տան, մնացին դուրս *(Թ., III, 117)*։ Սարսափեց, բայց չփախավ դիվային մարդից, որ ընդամենը մի շաբաթ էր, որ հղացել էր *(Շիրվ., III, 406)*։ Հետո դիմեց դեպի աղբյուրը, որ մի հրաշքով բխեցրեց *(Ր., III, 230)*։ Մոռացնել է տալիս ինձ այն բոլոր վշտերն ու նեղությունները, որ երբևիցե կրել եմ իմ կյանքում *(Մուր., II, 147)*։

Որոշիչ երկրորդական նախադասությունը որոշիչ է դառնում (առանձին կամ կապի միջոցով) գլխավոր նախադասության այնպիսի անդամի, որ երկրորդական նախադասության համար պարագա է. հենց դրանով էլ լրացվող այդ անդամը որոշվում է մյուս անդամներից. օրինակ՝ Այն ճանապարհով, որով մի օր անցար սրտաբեկ ու գնացիր *(ՉԸ, 185)*։ Պատշգամբում դրված էր լիմոնի մի մեծ թուփ, որի վրա պտուղները դեղնին էին տալիս *(ՔԹՈՀ, 384)*։ Վիլլայի առաջ կանգ առավ Մարկոսյանների կառքը, որից տիկինն իջավ նազելով *(Մուր., V, 164)*։ Կհալածվեն տգիտությունը և այն շահագործող պաշտոնյաները, որոնց շնորհիվ շատ ջերմ սրտեր են սառել *(Մուր., II, 147)*։

Որոշիչ երկրորդական նախադասությունը հաճախ որևէ ժամանակային բառի համար դառնում է լրացում. այս դեպքում էլ այդ ժամանակային բառը դառնում է երկրորդական նախադասության ստորոգյալի ժամանակի պարագան, որ միաժամանակ պարագա է գլխավոր նախադասության ստորոգյալի. այսինքն՝ տվյալ ժամանակում կատարված գործողությամբ որոշվում է ժամանակային բառը. օրինակ՝ Այն միջոցին, որ արքաեղբայրն ու

Մարզպետունին ոտք էին կոխում Սյունաց նահանգի հյուսիսային սահմանածայրը, նույն նահանգի հարավային մասում ուրիշ գործ էր կատարվում (*Մուր.*, III, *378*)։ Այն օրից, որ Շապուհ արքան այնպիսի չարաչար մահով սպանել տվեց ձեր հորեղբորը, ձեր հայրը հետամուտ եղավ ստանալ հայոց սպարապետությունը (*Ր.*, III, *26*)։ Սկսած այն օրից, որ կույսը մեր գյուղումն է, գրեթե ոչ մի տան, կամ ընտանիքում խռովություն կամ դժգոհություն չէ պատահել (*Մուր.*, III, *29*)։

Ծանոթություն.— Այս դեպքում որ-ը *համանիշ է դառնում* երբ *բառին, և թուլանում է նրա նյութական նշանակությունը, այսինքն՝ գտնվում է շաղկապացման ընթացքի մեջ։*

Որոշիչ երկրորդական նախադասությունները գլխավոր նախադասության որևէ գոյական որոշում են նաև այդ գոյականի հետ առնչվող այլ առարկաների գործողությունների ու դրությունների միջոցով, ըստ որում առնչվողները կարող են լինել գոյականի մոտ, կից կամ նրա մի մասը, հատկանիշը լինելով. օրինակ՝ Բիլբաոյից քիչ հեռու գտնվում է մեր սրբազան քաղաքը՝ Գերնիկա, հնադարյան մի ավան, որի շուրջն է ապրում մեր ժողովրդի տարերքը (*ԱԻԵ, 261*)։ Ինչպես առհասարակ հատուկ է սնափառ մարդուն, որի ուժը որտեղ պատում է, այնտեղ հանդես է գալիս որպես բռնակալ (*ՔԹՈՀ, 521*)։ Կամսարյանը բարձրացավ յուր նստարանից և կառքի մեջ կանգնելով, սկսավ դիտել ծովակի սիրուն մակերևույթը, որի կապուտակը շարունակ փոխվում էր (*Մուր.*, V, *61*)։ Շուտով երևաց և Սևանի կղզին, որի տեսքը հեռվից Կամսարյանին հետաքրքրեց հուզվելու չափ (*Նույն տեղում*)։

Այսպիսի որոշիչ երկրորդական նախադասությունները դարձվածային որոշիչ դարձնելը բռնազբոսիկ է և երբեմն ոչ վայելուչ. կողմնակի առարկաների գործողությունները, մանավանդ երբ առկա են կապական բառեր, դժվարությամբ են տեղադրվում իբրև դարձվածային որոշիչ։ Համեմատիր՝ Շուտով երևաց և Սևանի՝ տեսքը հեռվից Կամսարյանին հուզելու չափ հետաքրքրած կղզին:

Որոշիչ երկրորդական նախադասությունը լրացնում է գլխավոր նախադասության որևէ գոյական անդամ համեմատության, նմանեցման միջոցով, այսինքն՝ գոյականը համեմատության, նմանեցման մեջ է դրվում երկրորդական նախադասության մեջ

Հանդես եկող ուրիշ մի գոյականի հետ, որով էլ որոշվում է գլխավոր նախադասության գոյականը. օրինակ՝ Հարթ ու ողորկ խճուղին, որի նմանը չկար Կովկասի ոչ մի կողմը, ախորժելի դարձնում նաև այս ուղևորությունը *(Մուր., V, 162)։* Փիրուզյանը պատկանում էր ժամանակակից այն երիտասարդների շարքին, որոնց աշխարհայացքը զերծ է ազգակցական կամ բարեկամական կապերի նախապաշարումներից *(Շիրվ., III, 373)։*

Որոշիչ երկրորդական նախադասությունը հաճախ որոշվում է մի գործողությամբ, որ արդյունք է գլխավոր նախադասության այնպիսի մի անդամի, որ ունակ է առաջացնել հոգեկան որևէ տրամադրություն, տպավորություն կամ արտաքին որևէ վիճակ, գործողություն և այլն։ Այսպիսի որոշիչ նախադասությունները կոչվում են հետևանքի. օրինակ՝ Իշխանն այնպիսի ճառ խոսեց մեր առաջ, որ զարդմանացի հայրենասերները բոլորովին խելագարվեցան *(Մուր., III, 102)։* Բայց այդտեղից բացվում էր այնպիսի մի սիրուն ու գրավիչ տեսարան, որ փոքր ինչ ավելի այնտեղ չկանգնելն ու այդ տեսարանով չհիանալը՝ հանցանք գործել կընշանակեր *(Մուր., V, 115)։* Եղբոր մթագնած հայացքում այնպիսի վճռականություն, այնպիսի դաժանություն կար, որ Սուրիային մի պահ թվաց, թե նա հոգեկան լուրջ հիվանդ է *(ԳՍԹ, I, 141)։*

Այսպիսի որոշիչ նախադասությունները մյուսներից տարբերվում են մի շարք հատկանիշներով։ Ամենից առաջ որ *հարաբերականը իբրև այդպիսին շատ թույլ է. այն ավելի շաղկապ է. որոշիչ երկրորդական նախադասությունը ամբողջ նախադասությանն է կարծես վերաբերում, քան թե նրա որևէ անդամին։ Որևէ անդամին վերաբերելը զգացվում է միայն այն բանից, որ գլխավոր նախադասության մեջ լրացյալ անդամը գերազանցապես ունենում է* մի այնպեսի *կամ* այնպիսի, մի, այնպիսի *ձևական որոշիչներ, որոնք կապակցող բառի դեր են կատարում ավելի, քան որոշիչի։ Եվ, վերջապես, այս կարգի նախադասությունները գրեթե դարձվածային որոշիչ չեն դառնում, որովհետև հետևանքային հարաբերությունը դրանց մեջ շատ ուժեղ է։*

Որոշիչ երկրորդական նախադասությունները որոշում են գլխավոր նախադասության մեջ այնպիսի գոյականներ, որոնք ասացական, իմացական բայերի արմատներ են, բայանուններ, գործողության անուններ։ Երկրորդական նախադասությունը իրենից ներկայացնում է այդ ասացական, իմացական ընդհանուր նշանակություն արտահայտող գոյականների թանձրացական բովանդակու-

թյունը, որ է որևէ խոսք, կարծիք, ենթադրություն, եզրակացություն և այլն՝ արտահայտված երկրորդական նախադասությամբ: Այս երկրորդական նախադասությունը իսկապես այդ գործողությունն արտահայտող գոյականների ներքին բովանդակությունն է պարզաբանում, որով էլ հենց բնութագրվում, որոշվում են հիշյալ գոյականները. օրինակ՝ Եվ այն միտքը հայտնեց, որ նա դեռ շատ առաջ կգնա *(ՔԹՈՀ, 422):* Արդեն լուր է ստացել, որ շուտով Վաղարշակը գալու է *(ՔԹՈՀ, 423):* Հետևյալ առավոտ արթնանալիս ես այն զգացումն ունեի, որ մի լավ բան կար երեկ գիշեր քնելուս վայրկյանին *(ԵՉԵ, 399):*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Այս կարգի երկրորդական նախադասությունները գերազանցապես թե *շաղկապով են կապված և դարձվածային որոշիչի չեն վերածվում: Այս դեպքում էլ* որ-*ը դադարում է հարաբերական լինելուց: Հիշյալ նախադասությունները երկակի բնույթ ունեն. գլխավոր նախադասության հարաբերյալ բառերը (այն) իսկապես հուշում են, որ երկրորդական նախադասությունները պետք է որ որոշիչ լինեն, սակայն իրականում դրանք վերաբերության հասկացողություն են արտահայտում և դրանց դերբայական դարձվածը հաճախ սեռական հոլովով է արտահայտվում, երբեմն էլ* վերաբերող *կապական բառով:*

Որոշիչ երկրորդական նախադասությունները դառնում են պատճառ *բառի համար լրացում և վերածվում են դերբայական դարձվածի, այսինքն՝ հարակատար, ենթակայական, ապառնի դերբայների ձևերով, այլև անորոշ դերբայի սեռականով. օրինակ՝* Ինչն էր ուրեմն պատճառը, որ նա այս անգամ բացառություն էր արել *(Մուր.,* V, *162):* Ինչն էր նրա այս անգամ բացառություն անելու պատճառը: Ես տխուր եմ այն պատճառով, որ կենդանի վերադարձա այստեղ *(«Ընտիր էջեր», 607):* Ես տխուր եմ այստեղ կենդանի վերադարձած լինելու պատճառով: Պատճառ *բառի սույն պաշտոնով հանդես են գալիս նաև* նպատակով, հաշվով *և այլն:*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Այս պարագայում էլ որ-*ը շաղկապային կիրառությամբ է հանդես գալիս:* Պատճառ, նպատակ *և այս կարգի բառերը հաճախ ունենում են* այն *ձևական որոշիչը:*

Որոշիչ երկրորդական նախադասությունը կապակցվում է ոչ միայն մի գլխավոր նախադասության հետ, այսինքն՝ դառնում է լրացում ամբողջ այդ նախադասության կամ նրա որևէ գոյական անդամի համար, այլև լրացնում է որևէ կապակցություն, կոչական, նախադասությունից դուրս կրկնված որևէ բառ և այլն. օրինակ՝ Ով ունայն գաղտնիք, առեղծող անգութ, որ շինում ես միշտ քանդելու նորից Ծիր-կաթինները, անհունները մութ *(Իսահակյան, «Պոմպեի մեջ»):* Մի մարդ, որ դյուրավ խանդոտացող չէր, մի մարդ, որ նվաստ հնդիկի նման իր ձեռքով նետեց մի նոխ մարգարիտ *(Շեքս., I, 209):* Բարով, պապի, որ կանգնած ես անհունորեն այդպես վեհ *(Թումանյան, «Հազարան Բլբուլ»):*

Որոշիչ երկրորդական նախադասությունը կարող է դառնալ պարզապես կոչական արտահայտություն, երբ լրացում է դառնում ով (դու) *կոչական կապակցությանը. օրինակ՝* Ով, որ կանչում ես գիշեր ու ցերեկ *(Թ., II, 33):* Ով գիշեր ու ցերեկ կանչող: Ով, որ գալիս ես նստած ամպերին: Ով, որ փայլում ես մաքրությամբ վերին *(Նույն տեղում, 263):*

Ծանոթություն.— Լրացյալ ով *կոչականը պետք է լիներ* ով դու *ձևով. կապակցության վերջին մասը զեղչվել է չափի համար:*

Պատճառով, նպատակով *և այս կարգի բառերը վերածվելով կապական բառերի, դեռևս որոշ չափով պահպանում են իրենց նյութական նշանակությունը: Սակայն, երկրորդական նախադասությունները լրացնում են նաև այլ կարգի կապերի խնդիրներ, որոնք գլխավոր նախադասության մեջ հանդես են գալիս* նրա, այն *ձևերով:*

Այսպիսի երկրորդական նախադասությունը պետք է կոչել կապի խնդիր երկրորդական նախադասություն, որը կարելի է ուսումնասիրել նաև խնդիր և պարագա երկրորդական նախադասությունների բաժնում՝ նայած թե ինչ պաշտոն է կատարում կապի խնդիրը իր կապով հանդերձ: Փաստորեն երկրորդական նախադասությունը ոչ թե լրացնում է կապի խնդիրը, այլ հանդես է գալիս իբրև այդպիսին. օրինակ՝ Այդ բացականչությունն ակամա դուրս թռավ բերնիցս ոչ այնքան նրա համար, որ այդ հայտնությունն անակնկալ ազդեցություն գործեց ինձ վրա, որքան նրա համար, որ իմ կարծած բթամիտ տերտերացու աշակերտս այդ բանը նը-

կտրել էր (*Նար.*, IV, *98*)։ Որքան կարողացա հասկանալ՝ նրա ցասմնալից ճառը այն մասին էր, թե ինչպես ես, քնձռոտ «ուչիտելս», համարձակվում էի աչք ունենալ իրենց աղջկա վրա (*Նույն տեղում, 112*)։ Էլ չեմ խոսում այն մասին, թե ինչ է կատարվում այստեղ՝ տանը (*Նար.*, VII, *264*)։ Նա մի վայրկյան մտածեց այն մասին, թե երբ կառքը կմոտենա Թարսաչային... (*Մուր.*, V, *161*)։ Այդ նրա համար էր, որ նա պատերազմի արհավիրքներով չահաբեկի ամրոցաբնակ տիկնանց... (*Նույն տեղում*, III, *153*)։ Պայմանագրում հատուկ կետ կա այն մասին, որ հանքավարչությունը պարտավորվում է սկսել շենքի կառուցումը (*ՍՀ, № 6, 55*)։

Երբ գլխավոր նախադասության լրացյալը անծանոթ բառ է կամ անհրաժեշտ է լրացուցիչ բացատրություն, ապա մի այլ բառով ճշտվում, ծանոթացվում է։ Այս պարագայում այդ ճշտող, բացատրող բառը առնում է այն, նույն այն, մի *կամ մի որևէ ձևական որոշիչ և ուժեղ շեշտվում ու ընդգծվում է ընդհանուր շղթայի մեջ՝ դառնալով երկրորդական նախադասության համար իսկական որոշյալ. օրինակ՝* Սեթոն ու Արտուշը մի-մի կարճ ու թեթև լինգ ձեռքներին մտան «Դժոխքի դուռը»՝ այն քարայրը, որի մանրամասն նկարագիրը տրված է այս գրքի սկզբում (*ՎԱՍԱ, 483*)։ Այդպիսի հուսահատական դրության մեջ մի կատարյալ սփոփանք էր ինձ համար Քալիի ինձ նվիրած թաշկինակը՝ միակ առարկան, որին նայելով, որը համբուրելով թե կարոտս էր ավելի վառվում և թե, միևնույն ժամանակ, սիրտս հովանում (*Նար.*, IV, *95—96*)։ Այդ նոր *տներից ու խանութներից մի քանիսը նույնիսկ թիթեղե կարմիր կամ կանաչագույն կտուրներ ունեն,* մի հանգամանք, *որ քսաներորդ դարից է գալիս* (*ԵՋԵ, 229*)։ *Այս վերջին օրինակում հարաբերականը և լրացյալ կամ ավելի ճիշտ հիմք հանդիսացող հարաբերյալը (մի հանգամանք) վերաբերում են ամբողջ գլխավոր նախադասությանը և ոչ թե մի փաստացի անդամի։*

Ճշտելու, ընդգծելու համար՝ հարաբերյալը ոչ միայն մեկնաբանվում, ճշտվում է այլևայլ բառերով, այլև միևնույն հարաբերյալը կրկնվում է, մանավանդ եթե հարաբերականից հեռու է ընկած լինում, կամ հարկավոր է նորից որոշել. օրինակ՝ Պարզ էր, որ մի միտք տանջում էր նրան, մի միտք, որից կկամենար ազատվել (*Շիրվ.*, V, *79*)։ Աղայանը էդ նյութն առել է մեր ժողովրդական հեքիաթից, որ ջատագովում է արհեստը։ Մի հե-

քիաթ, որ ունեն բոլոր ժողովուրդները *(Թ.,* IV, *208)*։ Եվ այդ ձևակերպումը իմ ներկայությամբ տվեց կալանավոր Միսակը, **այն Միսակը**, որ առանց այդ էլ սրախոսի հռչակ էր վայելում *(ՉՆ, 399)*։ Եվ եթե կարողանար խոսել, որքան հիշատակաց արժանի դեպքեր կպատմեր մեզ, **դեպքեր**, որոնց հիշատակն այսօր կորել անհետացել է *(Մուր.,* II, *22)*։

Ծանոթություն.— Երբ կրկնվում է հարաբերյալը, այս վերջինս երբեմն ընդունում է մի, այն *ձևական որոշիչները, որոնք նպաստում են շեշտմանն ու ընդգծմանը։*

Երբ որոշիչ երկրորդական նախադասությունը վերաբերում է նախադաս հատկացուցչին, հատկացյալը և հատկացուցիչը կրկնվում են, կամ փոխարենը որևէ հոմանիշ է կիրառվում, միայն հատկացուցիչը կրկնության եզրում ետադաս է դրվում, որպեսզի երկրորդական նախադասությունը անմիջականորեն առնչվի հատկացուցչին և ոչ թե հատկացյալին. օրինակ՝ Նա զգում էր մահամերձի անհուն տանջանքը, հոգեկան տրագիզմը. **տրագիզմը հիվանդի**, որ փիլիսոփայում էր մի մարդի մասին, որ իրականացնում էր անձամբ *(ԴԴ,* I, *422)*։ Զգաց մի տեսակ առելություն դեպի սպասուհին... **առելություն ամուլ կնոջ**, որ շատ էր տառապել մի այդպիսի գանձ ունենալու տենչանքից *(Շիրվ.,* V, *79)*։

Ծանոթություն 1.— Հարաբերյալ բառը կարող է կրկնվել նաև երկրորդական նախադասության մեջ հարաբերականից հետո. օրինակ՝ Նրանք են դարձնում մի ազգի կառավարության սանձը դեպի ամեն կողմ, որ **կողմը** որ իրանց հաճելի է *(ՐԿ, 202)*։

Ծանոթություն 2.— Որոշիչ երկրորդական նախադասությանը իբրև հոմանիշ արտահայտություն ավելի մոտ է տրոհվող դերբայական լրացումը. Համեմատիր՝ Կոմիտասը... ապացուցեց հայ երաժշտության ինքնուրույն գոյությունը՝ բխած հայ ժողովրդի հոգուց և դարերի միջով մեզ հասած *(ԱԻԵ, 371)*։ *Սրան համապատասխանում է* որ բխել է հայ ժողովրդի հոգուց և դարերի միջով մեզ է հասել: Նրա ծոցագրպանից հանեց խնայողական դրամարկղի երեք գրքույկ՝ ամեն մեկի մեջ նոր մուծած քսանհինգ, երեսուն հազար ռուբլի *(ՔԹՈՀ, 521)*։

Որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է նաև ինչ հարաբերական բառով, որ հարաբերում է միայն իրերի և վերացական անունների։ Անձերը և շնչավորները ինչ հարաբերականով չեն հարաբերվում։ Ինչ-ը միշտ եզակի է կիրառվում և հարաբերում է թե՛ եզակի և թե՛ հոգնակի գոյականների. հոդ չի առնում և գլխավորապես վերցվում է անորոշ նշանակությամբ։ Սրա դերանուն հարաբերյալներն են այս, այդ, այն, բոլորը, ամենը, այն բոլորը, այն ամենը և այլն։

Ինչ-ը հաճախ կիրառվում է որ հարաբերական թարմատարով, որ ավելի անորոշ, ընդհանուր է դարձնում նախորդի նշանակությունը։ Երբ ինչ-ը համեմատում ենք որ հարաբերականի հետ, նկատում ենք, որ ինչ-ն ավելի է պահպանել իր նյութական նշանակությունը, քան որ-ը, այսինքն՝ այս վերջինը մի շարք պարագաներում վերածվել է շաղկապի, իսկ ինչ-ը պահպանել է իր նյութական նշանակությունը։ Այս երևույթը հաստատվում է հենց այն հանգամանքով, որ ինչ-ը հոդ չի ստանում, մինչդեռ որ դերանունը ավելի նյութական նշանակությունը շեշտելու համար՝ երբեմն հոդ է առնում և հոգնակի է կիրառվում, որպեսզի որոշակի և ճիշտ դրսևորի հարաբերությունները, այսինքն՝ տարբերվի շաղկապային կիրառությունից։

Մինչդեռ որպեսզի ինչ դերանունը մոտենա շաղկապային կիրառության, վերջից ստանում է որ թարմատարը, որոնք այս դեպքում արդեն մի ամբողջություն են կազմում։

Ինչ դերանվան նյութական նշանակության պահպանման օգտին է խոսում նաև այն երևույթը, որ ինչ դերանունը տարբերակում է իր հարաբերյալները, այսինքն՝ անձերի և շնչավորների չի հարաբերում, մինչդեռ որ-ը ընդհանուր է։

Այն բոլոր նշանակությունները, որ քննվեցին որ հարաբերականով կապակցվող երկրորդական նախադասությունների վերլուծությամբ, չեն կարող արտահայտվել ինչ-ով կապակցվող երկրորդական նախադասություններով։

Անհրաժեշտ է նշել նաև այն, որ ինչ հարաբերականը կարծես թե մի տեսակ հարաբերյալ լինի. այս երևույթը առավել զգալի է որ թարմատարից առաջ։ Թվում է, թե գլխավոր նախադասության բուն հարաբերյալը ուժեղացնելու նպատակով, նրանից հետո դրվել է ինչ՝ հար և նման այն բանին, որ կամ հարաբերա-

կանը կրկնվում է, կամ կիրառվում է մի բան, այն ամենը *և այլն՝ շեշտելու համար հարաբերյալը. հավանաբար* ինչ-ը *առանձին չի կիրառվել, այլ եղել է* այն ինչ, *հետո* այն *ցուցականը ընկնում է,* ինչ-ը *միանում է բուն* որ *հարաբերականին և դիտվում իբրև հարաբերական. օրինակ՝* Տեր իմ, ձեզ ասեմ պատասխանները, ինչ որ չեք իմանում *(Շեքս., I, 208)։ Պետք է լիներ՝* Տեր իմ, ձեզ ասեմ պատասխանները, այն ինչ, որ դեռ չեք իմանում:

Ինչ *հարաբերականով կապակցվում են այնպիսի երկրորդական նախադասություններ, ուր* ինչ-ը *հարաբերելով գլխավոր նախադասության հարաբերյալներին, ենթակայի, խնդրի դեր է կատարում այդ հարաբերյալների փոխարեն, որով և որոշվում են այս վերջինները։*

Ուրիշ խոսքով՝ գլխավոր նախադասության հարաբերյալները ինչ *հարաբերականի միջոցով դառնում են երկրորդական նախադասության մեջ ենթակա ու խնդիրներ, ուր իրենց գործողություններով կամ իրենց նկատմամբ կատարված գործողություններով որոշվում են. օրինակ՝* Այն բոլորը, ինչ մենք տեսնում ենք, զգում ենք, կամ լսում, ծնունդ է տիեզերական մայր պատճառի *(Իս., III, 203)։* Բայց ով տարիներով ապրել է մեծ քաղաքում... Այդպիսին կարոտելով կկարոտի այն ամենին, ինչ որ անարժեք է բնության զավակի համար *(Մուրացան)։* Խոստացիր նրան ամեն, ամեն բան, ինչ որ կարող է խոստանալ շահը *(Թ., II, 144)։* Ծառերը ձեռներին բռնած ունեին ամեն տեսակ լավ բաներ, ինչ որ միայն կարող է ուզել մարդու սիրտը *(Թ., III, 353)։* Ձեր շրջանը չէր կարող այն ազդեցությունը գործել նրա վրա, ինչ որ կարող ես դու ունենալ *(Ր., II, 413)։* Ամենքը, ամենքը էստեղ ինչ որ կան, էսօր թե էգուց ամենքը կերթան *(Թ., II, 78)։* Նրա դեմքը թուխ էր, ոչ մսոտ և փոքր ինչ ձիգ, ինչ հետևանք էր թերևս սև մորուքի, որն այնքան էլ երկար չէր *(ՍՉՀԲ, 107)։*

Ծանոթություն.— Նկատելի է, որ ինչ *դերանունը գլխավորապես հարաբերում է* ամենը, բոլորը, ամեն բան *բառերին, որոնք իբրև հարաբերյալներ շատ թույլ են։ Այդպիսի հարաբերյալ ունեցող որոշիչ երկրորդական նախադասությունները սովորաբար դադարում են որոշիչ լինելուց և վեր են ածվում այնպիսի նախադասությունների, ինչպիսի պաշտոն կատարում են վերոհիշյալ հարաբերյալները։ Նկատենք նաև, որ* ինչ *դերանվան հարաբերյալները ունենում են* այն *ձևական որոշիչը։*

Ինչ *հարաբերականը հարաբերում է նաև ժամանակային բառերին (գերազանցապես բացառական հոլովով) և ցույց է տալիս այն ժամանակը, երբ կատարվում է երկրորդական նախադասության գործողությունը, որ միաժամանակյա է գլխավոր նախադասության գործողության հետ. օրինակ՝* Այն օրից, ինչ Գարեգինը գյուղ էր եկել, անցել էր մեկ ամիս *(ՍԽՀ, I, 143)։* Այն օրվանից, ինչ մեր կոլտնտեսության դաշտերով սկսեցին գրաղվել պրոֆ. Կարապետյանը և նրա օգնականները, պատկերը փոխվեց *(ՍԽՀ, I, 177)։*

գ) *ՈՎ-ՈՎ* ԿԱՊԱԿՑՎՈՂ ՈՐՈՇԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ով *դերանունով որոշիչ երկրորդական նախադասություն կազմելը այժմ հատուկ չէ գրական լեզվին։* Ով *հարաբերականի հարաբերյալները անձեր են, բայց հայերենում չի ասվում՝* այն տղջիկը, այն տղան, այն կինը, ով գեղեցիկ է, ով խոսում էր *և այլն։ Ծայրահեղ դեպքում* ով *հարաբերականը հարաբերում է նա (նրան) դերանվան և ոչ թե գոյականների. եթե գոյականների չի հարաբերում, ուստի նրանով կապակցվող նախադասությունը չի կարող որոշիչ նախադասություն լինել, քանի որ* նա *դերանունը որոշիչ չի առնում։ Այդպիսի նախադասությունը կարող է լինել ենթակա, ուղիղ, անուղղակի խնդիրներ, ծայրահեղ դեպքում բացահայտիչ, բայց ոչ երբեք որոշիչ. օրինակ՝* Երանի նրան, ով հայրենական խաղաղ հարկի տակ հանգչում է հիմա *(Տ., I, 279)։* Ով քաղաքից էր հեռացել, նա թողել էր մշուշը ծեր *(ԶԸ, 250)։* *Այս նախադասություններից առաջինի երկրորդական նախադասությունը անուղղակի խնդիր է, իսկ երկրորդինը՝ ենթակա։ Համեմատիր նաև հետևյալ օրինակը.* Ընտրի միայն նրան, ով իր կյանքում գոնե մի անգամ եղած կլինի Ոսկի քաղաքում *(Թ., III, 224)։*

Ուրեմն այս պարագայում երկրորդական նախադասության բնույթը պայմանավորվում է հարաբերյալներով։

Մ. Աբեղյանը իր «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ ով *հարաբերականով որոշիչ նախադասությունների հետևյալ օրինակներն է բերում, որոնք հնացած լինելուց բացի, ունեն բարբառային բնույթ։* Այն մարդը մարդ չէ, ով որ կեղծավորությամբ խոսի: Սուրբ Գևորգն ամեն մարդկանց էլ, ով նրա դուրը գա, օգնություն կհասնի: Ջալալեդդինը երազ է տեսել, որ աստված կպատժի այն քրդին, ով որ յուր մաքիներից ամենալավերը՝ հնգից մեկը չուղարկի շեյխի տունը: *Համեմատիր նաև հետևյալ օրինակները.*

Այն գրողի մասին է սա գրված, ով կարդալիս իմ դեմ հուզվի ու փրփրի *(ՆՋԵ,* III, *33)։* Պարապում էր նա մի տեսակ վաճառականությամբ, ով ավելի կանանց հատուկ է *(Ր., I, 257)։ Այս վերջին նախադասության մեջ* ով *բոլորովին սխալ է կիրառված։*

Ծանոթություն.— Ով *հարաբերականը հոդ չի առնում. կիրառվում է եզակի բոլոր հոլովներով, իսկ հոգնակին միայն ուղղական է. Թեք հոլովները չեն տարբերվում* որ *հարաբերականի հոլովներից։*

դ) *ՈՒՐ ԵՎ ՈՐՏԵՂ* ԲԱՌԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՈՐՈՇԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է նաև տարածական ուր, որտեղ *դերանուններով, որոնք այս դեպքում հանդես են գալիս իբրև հարաբերական բառեր։ Երկու հարաբերական բառերն էլ հարաբերում են տարածականություն արտահայտող բառերի՝ գրեթե միևնույն նշանակությամբ։ Սպասվում էր, որ իրենց հարաբերյալի նկատմամբ տարբեր առնչակցություն հանդես բերեին սրանք, ավելի ճիշտ մեկի կամ մյուսի կիրառությունը պետք է կախված լիներ ոչ թե իրենց հարաբերյալի բնույթից, այլ երկրորդական նախադասության ստորոգյալից։ Եթե երկրորդական նախադասության ստորոգյալը ցույց է տալիս այնպիսի գործողություն, կամ շարժում, որն ուղղվում է դեպի մի որևէ տեղ, ապա պետք է կիրառվեր* ուր *հարաբերականը, իսկ երբ այդ ստորոգյալը արտահայտում է մի տեղում կատարվող գործողություն, պետք է կիրառվեր* որտեղ, *սակայն այս տարբերակումը համարյա չի զգացվում։ Առհասարակ այդ տարբերությունը, ինչպես նկատվում է, վերանում է, իսկ ինչ վերաբերում է առանձնապես այս խնդրին, դա պետք է բացատրել այսպես.* ուր*-ը աստիճանաբար կորցնում է իր նյութական նշանակությունը և վերածվում շաղկապի։ Երբ այս ընթացքը արդեն կա, հարաբերության այն իմաստային նրբությունները, որոնք կապվում են բառիմաստի հետ, վերանում են և իշխում է միայն կապակցական պաշտոնը։ Երկու հարաբերական բառերից ավելի հաճախ կիրառվում է* ուր*-ը։* Որտեղ*-ը իր նյութական նշանակությունը դեռևս ավելի ուժեղ է պահպանում։*

Ուր *և* որտեղ *բառերը հարաբերում են տարածություն արտահայտող բառերի, տարածական կապով կազմված կապակցությունների, մասամբ տարածություն և մասամբ ժամանակ արտա-*

հայտող բառերի։ Ուր և որտեղ *բառերը կարող են կիրառվել նաև առանց հարաբերյալների*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Երբ գլխավոր նախադասությունը հարաբերյալ չունի, կամ հարաբերյալներ են այստեղ, այդտեղ, այնտեղ *բառերը, երկրորդական նախադասությունը ոչ թե որոշիչ նախադասություն է, այլ տեղի պարագա. օրինակ՝* Երբ հասանք էնտեղ, որտեղ ամպերը գետնին են առնում, թագավորը մի թփուտում ծածկված դուռ ցույց տվեց *(Թ., III, 352)*։ Եվ ուր առաջ բանտ էր խավար, ճորտություններ էր ուր լուռ քնել, Ալեկոծվում են հողմավար անծայրածիր բազմություններ *(ՉԸ, 115)*։ Ուր ահեղ կռվով չի մտնիլ արքան, ղոնաղ է աշուղն իրեն սազի հետ *(Թ., II, 144)*։ Էնտեղ ես դու, ուր հողեղեն ոտք չի կոխել, ուր անհայտ են երկրավորի չնչին կիրքը, վիշտն ու ցավ *(Թ., II, 164)*։

Երբ ուր, որտեղ *հարաբերական բառերի հարաբերյալները նյութական նշանակություն արտահայտող տարբեր հոլովներով տարածական բառեր են, ապա այս վերջինները* ուր, որտեղ *հարաբերական բառերի միջոցով դառնում են երկրորդական նախադասության համար տեղի պարագա, այսինքն՝ ցույց են տալիս այն տեղը, դեպի ուր ուղղվում է երկրորդական նախադասության գործողությունը, որտեղ կատարվում է այս վերջինը, կամ որի հետ որևէ ձևով առնչվում է, որտեղ գտնվում, գործում են երկրորդական նախադասության անդամները և այլն։ Հենց այն հանգամանքը, որ գլխավոր նախադասության հարաբերյալները այս կամ այն կողմով առնչվում են երկրորդական նախադասության հետ իբրև նրա համար տեղի պարագա, որոշում է այդ հարաբերյալները, այսինքն՝ երկրորդական նախադասությունը ծառայում է իբրև որոշիչ իր տեղի պարագայի համար. օրինակ՝* Առաջին անգամ իմ հայրենիքում, ուր հոսում էին արնահուն գետեր, Այս այգաբացի երգը զրնգուն իմ բարձրաշառաչ երգն է ավետել *(ՉԸ, 105)*։ Քեզ համար չկա ասպարեզ, որտեղ դու անդորրության հասած չլինես *(Նույն տեղում, 110)*։ Ու հայացքս դարձյալ դեպի էն հորիզոնն էր ոստնում, ուր երկինքը արդեն մթագնում էր և որտեղից դարձյալ զինվում էին արշավանքներ *(Փափ., 403)*։ Այդ հոյակապ տունը, ուր միշտ ուրախ, ուր միշտ երջանիկ լինելու համար ոչինչ թերություն չկար... *(«Ընտիր էջեր», 504)*։ Սրճարանը, ուր մենք նստած էինք, լի էր հաճախորդներով *(Շիրվ.,* V, *344)*։ Գարեգի-

նի առաջ փռվում էր լայն բացատը, որտեղ խոտն այնքան խիտ ու բարձր էր *(Սխհ, I, 158)*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Ուր, որտեղ *հարաբերականներով կապակցվող որոշիչ երկրորդական նախադասությունները դարձվածային որոշման են ենթարկվում նույն ձևով, ինչ որ տեսանք* որ-*ով կապակցվող նախադասությունները քննելիս։ Ընկնում է հարաբերական բառը, երկրորդական նախադասության ենթական դառնում է ենթակայական սեռական, իսկ ստորոգյալը գերազանցապես փոխվում է համապատասխան դերբայի։ Եթե կամենում ենք ստորոգյալի ժամանակները ճշգրիտ կերպով արտահայտել դերբայական դարձվածի մեջ, ապա պետք է նկատի առնենք որոշյալը և ըստ այնմ համարեցնենք այս կամ այն դերբայը։*

Ինչպես ասվեց, ուր, որտեղ *հարաբերականները հարաբերում են նաև կապով արտահայտվող կապակցությունների. այդպիսի դեպքում այս կապերը գերազանցապես տարածական հարաբերություններ են դրսևորում, իսկ կապի խնդիրները երբեմն լինում են նվազ տարածական բառեր։ Ինչպիսի բառեր էլ լինեն հարաբերյալի կապի խնդիրները, որոշիչ երկրորդական նախադասությունները լրացում են հենց դրանց համար. օրինակ՝* Արեգակի ճառագայթները բոլորովին անզոր էին թափանցելու նրա սաղարթախիտ թանձրության մեջ, ուր պահպանվում էր խիստ ախորժելի զովություն *(Ր., III, 228)*։

Եթե կապը տարածական հասկացողություն չի արտահայտում, դարձյալ որոշիչ նախադասությունը վերաբերում է կապի խնդրին. օրինակ՝ Բայց ինչ էր, որ կապում էր հայերին մի այնպիսի երկրի հետ, ուր նրա կյանքը հանապազօրյա վտանգի մեջ էր, ուր նրա կյանքը ապահովված չէր, ուր նրա ապրուստը խառն էր արյան ու քրտինքի մեջ, ուր նրա ընտանեկան սրբությունը արատավորվում էր, ուր նրա կրոնքը և ամեն ինչ, որ նվիրական էր նրա համար, սրբապղծվում էր *(Րկ, 134)*։

Երբեմն ուր *(որտեղ) հարաբերում է այնպիսի բառերի, որոնց տարածական հասկացողությունը շատ թույլ է. դրանք կարող են երկրորդական նախադասությանը մասամբ ժամանակի պարագայի նշանակություն տալ. օրինակ՝* Մի փոքր անց հասարակական մի փոքր խնդրի շուրջ վեճ բարձրացավ, ուր ամենքս խթանված օրիորդի ներկայությամբ մրցում էինք իրար հետ *(Իս., III, 36)*։

Պայթեց ռազմական պարը, ուր սրերը շողացին և շաչեցին մարտիկների ձեռին *(ԴԴՎ, 409)։ Այս նախադասությունների մեջ հարաբերյալներ են* վեճ *և* պար *բառերը, որոնց հենց տվյալ նախադասությունների մեջ կարող են հարաբերել նաև* երբ*։ Այս դեպքում երկրորդական նախադասությունը դժվարությամբ է վերածվում դարձվածային որոշիչի։*

Ուր*-ը (որտեղ) այսպիսի բառերի հարաբերելով, ավելի առաջ է գնում և սկսում է հարաբերել լրիվ ժամանակային բառերի, այսինքն՝ ստանձնում է* երբ *հարաբերականի պաշտոնը, և ժամանակային հարաբերություն արտահայտող հարաբերյալը ոչ թե* ուր *հարաբերականի միջոցով դառնում է երկրորդական նախադասության տեղի պարագա, այլ՝ ժամանակի պարագա։ Հենց այստեղ* ուր*-ը սահմանազծվում է* որտեղ *հարաբերականից և կորցնում է իր տարածական նշանակությունը. մինչդեռ* որտեղ*-ը չի կարող ժամանակային բառեր հարաբերել։ Համեմատիր՝* Մարգարիտ մոքիրը միևնույն ժամանակ պատկերացնում էր ճակատը, ուր կամ հրաձգություն էր, զենքերի շաչյուն, վիրավոր ձիերի խրխինջ, կամ խավար-խավար գիշեր, ո ւ ր և ո չ մ ի ա ս տ ղ չ է ր փ ա յ լ ու մ, և ո ւ ր ա մ ե ն ի ն չ թ վ ու մ է ր չ ա ր ու դ ա վ ա դ ի ր, վ տ ա ն գ ու թ շ ն ա մ ի *(ՍԶ,* V*, 9)։*

Երբեմն հարաբերյալը ճշտելու նպատակով, նրա վերաբերյալ լրացուցիչ տվյալներ հաղորդելու համար, կամ երբ հարաբերյալը այնպիսի մի ձևով է դրված, որ որոշիչ երկրորդական նախադասությունը չի հարմարվում, նրանից հետո դրվում է այնտեղ *հարաբերյալը. այս դեպքում արդեն որոշիչ երկրորդական նախադասությունը դառնում է բուն հարաբերյալը ճշտող, բացահայտող մի դարձվածային արտահայտություն, որ դրվում է հարաբերյալից հետո. օրինակ՝* Ախուրյան գետի արևմտյան ափի վրա, այնտեղ, ուր Տեկորի վանքը խառնվելով գործում էր ջրապարփակ մի եռանկյուն, կառուցած էր հինավուրց մի քաղաք *(Մուր.,* III*, 354)։* Ախուրյան գետի արևմտյան ափի վրա՝ Տեկորի վանքի խառնվելով մի ջրապարփակ եռանկյուն գործած տեղում կառուցած էր հինավուրց մի քաղաք։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.— Երբեմն ուր, որտեղ *հարաբերականներից հետո կիրառվում է* որ *թարմատարը. օրինակ՝* Ապրում ենք այն կանաչազարդ գյուղում, ուր որ մարդիկ աշխատանքը սուրբ են համարում։

Ուր, որտեղ *հարաբերականով կապակցվող որոշիչ երկրորդական նախադասությունները գլխավորից առաջ չեն կարող դրվել։ Այդպիսի նախադասությունները դառնում են տեղի պարագա։ Համեմատիր՝* Ուր ուզում ես, գնա. *կամ՝* ուր որ ուզում ես, գնա։ *Դրանք լինում են միջադաս և եռադաս։ Միջադաս է լինում, երբ գլխավոր նախադասության տեղի պարագա հարաբերյալը նախադասության սկզբի մասում է գտնվում, իսկ երբ դա նախադասության վերջում է, բնականաբար, երկրորդական որոշիչ նախադասությունը եռադաս է. օրինակ՝* Մի քանի տարի սրանից առաջ, երբ որ հայրենիք էի ես գնում, Այն մթին ձորում, ուր որ քաղցրավաչ Մեղեդու ձայնով Դեբեդն է վազում, ժայռերի գլխին, ուր բազկատարած Աղոթք են անում Հաղբատ-Սանահին, Գիշերը հասավ, ու ես դադարած «Ղոնաղ» մնացի ծեր այգեպանին *(Թ., II, 34)։* Երևում էին միայն մի քանի պահապաններ, որոնք երկաթե գլխանոցներով, ծանր սրերը ձեռքներին՝ անցուդարձ էին անում, ոմանք ամրոցի դռների մոտ կամ պահականոցների առաջ, և ոմանք դղյակի շուրջը, ուր այդ ժամանակ ապրում էր Աշոտ Երկաթի ամուսինը՝ Սահականույշ թագուհին *(Մուր., III, 9)։*

XIX *դարի մի քանի գրողներ՝ իբրև որոշիչ նախադասության կապակցող հարաբերականներ կիրառել են նաև* ուստի, ուսկից *բառերը, որոնք հենց այդ ժամանակ սակավ կիրառվելով և հին լինելով՝ աստիճանաբար դադարել են գործածվելուց։ Համեմատիր՝* Դեռ բոլորովին չէին անհետացել բերդերի, ամրոցների փլատակները, ուսկից մի ժամանակ նրա ազգի պետերը տարածում էին իրենց իշխանությունը *(«Ընտիր էջեր», 501)։*

Բարբառային է տարածական ինչտեղ *հարաբերականը, որ այլևս չի կիրառվում։ Համեմատիր՝* Էլ երբ կտեսնեմ ես ձեզման գալիս բաղ ու բաղչայում սեյրան անելիս, ինչտեղ ամոթից վարդն էլ է դեղնում, երբ որ ձեր կարմիր թշերը տեսնում *(«Ընտիր էջեր», 394)։*

ե) *ԵՐԲ-ՈՎ* ԿԱՊԱԿՑՎՈՂ ՈՐՈՇԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Որոշիչ երկրորդական նախադասությունը կապակցվում է նաև երբ *հարաբերական բառով։ Այս պարագայում գլխավոր նախադասության մեջ հարաբերյալներ են դառնում ժամանակ արտահայտող բառեր, որոնք հաճախ ունենում են* այն, մի *ձևական որոշիչները։ Գլխավոր նախադասության եզրում գտնվող ժամանա-*

կային հարաբերյալները կարող են լինել ենթակա, խնդիր, ժամանակի պարագա և այլն: Ինչ որ էլ լինեն դրանք, Երբ *հարաբերական բառի միջոցով վերջիվերջո հանդիսանում են երկրորդական նախադասության համար ժամանակի պարագա, այսինքն՝ ցույց են տալիս այն ժամանակը, որի ընթացքում կատարվում է երկրորդական նախադասության գործողությունը, որով էլ բնորոշվում է այդ հարաբերյալը: Եթե ժամանակ ցույց տվող բառը նաև գլխավոր նախադասության ժամանակի պարագան է, ապա այն՝ ժամանակի պարագա է զուգահեռ երկու գործողությունների համար, որոնք գրեթե միաժամանակյա են:*

Հարաբերյալ են դառնում ժամանակ, տարի, օր, ամիս, ժամ, միջոց, վայրկյան և այլ ժամանակային ու կողմնակի կերպով ժամանակ արտահայտող բառեր ու կապակցություններ. օրինակ՝ Եվ մարդիկ էլ դեռ այն ժամանակ են սկսել թագավոր ունենալ, երբ նրանց խելքը անասունների խելքից բարձր չի եղել *(ՂԱ, «Անահիտ»)*: Նա խոսում էր այն ժամանակ միայն, երբ սկեսուրը խոսեցնում էր *(«Ընտիր էջեր», 504)*: Նա մռայլվում էր մանավանդ այն ժամանակ, երբ հիշում էր իր առաջին սերը *(ՄԽՀ,* I, *7)*: Եվ մի գիշեր, երբ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի նոճիածածկ ափերի վրա, գաղտնի հեռացավ քաղաքից *(Իս.,* II, *59)*: Եվ էս ամենը էն ժամանակ, երբ դեռ նոր էր բացվել ընկերությունը, և տակավին չէին վերջացել բացման շնորհավորությունները *(Թ.,* IV, *217)*: Հիշեք ձեր թիկնազեղ նախնյաց ամպրոպաշունչ ուղին այն օրերից, երբ նոր էր Հայկը դեռ լարում իր լայնալիճ աղեղը *(ՆԶԵ,* III, *264)*:

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Երբ *հարաբերականով կապակցվող երկրորդական նախադասությունները նույն եղանակով են վերածվում դարձվածային լրացուցիչի, ինչ եղանակով* որ *հարաբերականով երկրորդական նախադասությունները. այսինքն՝ երկրորդական նախադասության հարաբերականը ընկնում է, ստորոգյալը վերածվում է համապատասխան դերբայի, եթե կա ենթակա, փոխվում է ենթակայական սեռականի: Գլխավոր նախադասության միջից դուրս են ընկնում ժամանակային բառերի ձևական որոշիչները. օրինակ՝* Եվ Տիգրիսի նոճիածածկ ափերի վրա Բաղդադի քուն մտած գիշերը գաղտնի հեռացավ քաղաքից: *Նկատելի է նաև, որ անորոշ հարաբերյալը դարձվածային որոշիչ ստանալով՝ կարող է հոդ առնել, այսինքն՝ որոշվել:*

Ինչպես տեսանք, երբ հարաբերականի համար կարող են հարաբերյալ լինել նաև այնպիսի բառեր, որոնք կողմնակի կերպով են ժամանակ արտահայտում, այսինքն՝ գործողության անուն են, վիճակ և դրություն են ցույց տալիս, որոնք մի ժամանակի մեջ են կատարվում և հետո իբրև փոխանունություն ստանում են ժամանակի իմաստ։ Այդպիսի բառերից պետք է հիշատակել դեպք, պայման, միջոց, հանգամանք, դրություն *և այլն. օրինակ՝* Այսպիսի դեպքերում, երբ կարող էինք մի փոքր ազատ շունչ քաշել, ավելի դառն էր լինում *(Ր., «Կայծեր»)*։ Նա մի վտանգավոր զաղտնիք էր ենթադրում Ռուստամի պատկը արգելելու մեջ և քննության անունով պատկը մի քանի օր հետաձգելու պատճառը մի միջոց էր համարում, երբ ով գիտե ինչ սատանայական որոգայթներ պիտի լարվեին *(Ր., II, 167)*։ Մի այդպիսի հանգամանքներին, երբ կռտորում, գերի էին վարում նրանց *(Ր., II. 211)*։ Ջղայնանում էր նամանավանդ այն դեպքում, երբ հարևան պատշգամբում պարապելիս էր լինում ծանոթ ուսանողը *(ՆԶՀ, 35)*։

Երբ *հարաբերականով երկրորդական նախադասությունը վերաբերում է նաև այնպիսի բառերի, որոնք իրենց հետ ունեն ժամանակային կապեր. թե՛ կապերը և թե՛ կապի խնդիրները (երբ այս վերջինները ժամանակային բառեր չեն) չեն կարող երկրորդական նախադասությունը իբրև դարձվածային որոշիչ ընդունել. այս դեպքում որոշիչ նախադասությունը վերաբերում է թե՛ կապին և թե՛ վերջինիս խնդրին. օրինակ՝* Տևեցին մինչև 1931 թվի զարնանացանի վերջը, երբ Լևոնին շրջանային կոմիտեն տեղափոխեց արոտների խոզաբուծական սովխոզը *(ՆԶՀ, 157)*։ Այն բանից հետո, երբ նա տեսավ Համմիկի հանցավոր սերը *(Նույն տեղում, 255)*։ *Իսկ եթե կապի խնդիրը ժամանակային բառ է, ապա որոշիչ երկրորդական նախադասությունը վերաբերում է խնդրին և կարող է վերածվել դարձվածային որոշիչի. օրինակ՝* Նա երազում էր այն օրվա մասին, երբ նորից կվերադառնա աշխատանքի *(ՆԶՀ, 417)*։ Նա երազում էր նորից աշխատանքի վերադառնալիք օրվա մասին:

Երբ հարաբերյալ բառերը ժամանակային մակբայներ են, երկրորդական նախադասությունը վերածվում է ճշտող, ժամանակի մասին լրացուցիչ տեղեկություն արտահայտող դերբայական դարձվածի, որ ավելի բացահայտիչի նշանակություն է ստանում. օրինակ՝ Այժմ, երբ Լևոնի փոխարեն զալիս էր Լիպարիտը, Համիկը անկամա հիասթափվեց *(ՆԶՀ, 414)*։

Երբ հարաբերյալ մակբայը իր մոտ ունի լրացուցիչ ճշտող, մեկնաբանող բառ, որից հետո գալիս է երկրորդական նախադասությունը, ապա այս վերջինը դառնում է այդ ճշտող, մեկնաբանող ժամանակային բառի համար որոշիչ. օրինակ՝ Անցքը պատահել է վաղուց, այն ժամանակ, երբ ես հազիվ տասնութը տարեկան էի *(Շիրվ., V, 345)։* Ուռկանի ժողովելը տեղի էր ունենում առավոտը շատ շուտ, յուսադեմին, երբ արշալույսը գունավորում էր ծովի հորիզոնը և լեռների գագաթները *(Փափ., 415)։*

Ծանոթություն 1.—Առհասարակ որոշիչ երկրորդական նախադասությունը սահմանափակում է հարաբերյալի ցույց տված ժամանակի տևողությունը, ուստի այնպես պետք է կառուցվի բարդ նախադասությունը, որպեսզի անմիտ կապակցություն չառաջանա. օրինակ՝ Շրջում էր դաշտերով առհավետ, երբ երգում են փոքրիկ կեռնեխներ *(Վեսպեր)։ Երբ առհավետ շրջում է, այլևս չի կարելի սահմանափակել՝ կեռնեխների երգով։*

Ծանոթություն 2.—Եթե հարաբերյալ բառերը ձևական որոշիչ չունեն, կարող են կրկնվել՝ շեշտելու, ընդգծելու համար. օրինակ՝ Եղել էին օրեր, երջանիկ օրեր, երբ նա հաղթական փառքով վերադառնում էր պատերազմից *(«Ընտիր էջեր», 509)։ Երբ չկան այդ կարգի կրկնություն և ձևական* այն, մի *բառերը, կապակցությունը շատ թույլ է զգացվում. օրինակ՝* Իսկ այն հոյակապ տաճարը շատ հին ժամանակների գործ էր, երբ գյուղի ժողովուրդը բազմաթիվ էր ու հարուստ *(«Ընտիր էջեր», 50)։* Դեռ նոր էր նա եկել հանգստանալու մի քանի ժամանակ յուր ընտանեկան հարկի տակ, երբ առաջին անգամ մտան գյուղական ինքնավարությունները *(ՊՊԵ,* II, *18)։*

*Ծանոթություն 3.—*Երբ *հարաբերականը հոդ չի առնում, թիվ չունի. հազվադեպ կարող է բացառական հոլովով կիրառվել, երբ իր ժամանակային հարաբերյալը այդ միևնույն հոլովով է դրված։*

գ) ՈՐՊԵՍ ԹԵ, ԻԲՐ (ԵՎ) ԹԵ, ԻԲՐ ԲԱՌԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՈՐՈՇԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Որոշիչ երկրորդական նախադասությունները կապակցվում են նաև թե, որպես թե, իբր թե, իբր *շաղկապներով։ Սրանցով կապակցվող հարաբերյալ բառերը տարբերվում են սովորական հա-*

րաբերյալներից։ Այս հարաբերյալները զգացական և իմացական բայերի գործողության անուններ են, իսկ երկրորդական նախադասությունը դրանց բովանդակությունն է։ Երբ մի բան ենք ասում, այդ ասվածը անվանում ենք միտք, խոսք, կարծիք և այլն։ Ահա հենց այդ հաղորդված միտքը, խոսքը, կարծիքը իբրև ձևավորված նախադասություն դառնում է հիշյալ բառերի համար որոշիչ երկրորդական նախադասություն և բնութագրում է դրանք իբրև այդպիսիք. օրինակ՝ Նա դեռ երեկ այն կարծիքին էր, թե ոչինչ չէ կարելի անել գյուղում, թե ամեն բան այնպես սառած ու քարացած է այստեղ (*Մուր.*, V, *152*)։ Երիտասարդը եկավ այն եզրակացության, թե անհրաժեշտ է աշխատել հնարավոր դարձնել գյուղում ապրելն ու գործելը (*Մուր.*, V, *153*)։ Այն միտքը, թե նա հաջողել է արդեն վտանգի առաջն առնել և այդպիսով հարյուրավոր մանուկներ անխուսափելի կորստից ազատել, նրա հոգին լցրել էր անպատում ցնծությամբ (*Մուր.*, V, *229*)։ Միայն մեր քաղաքում որսորդի մասին խոսում էին շատ զարմանալի պատմություններ, իբր թե նա տաճկական Հայաստանի արևելյան կողմերիցն էր, թե նա իր հայրենիքում մի շատ նշանավոր մարդ է եղել, թե նա շատ կռիվներ է ունեցել քրդերի հետ (*Րֆ.*, *27*)։ Այն հարցին, թե այդ ինչ օրն է ընկել, նա քախծոտ ժպտում և ասում էր (*ՔԹՈՀ*, *440*)։ Միթե արգո հեղինակը կարող է հավատալ միսիոնարների ասածին, որպես թե այդ էր խղճի ազատության երևույթը (*ՄՆԸԵ*, *549*)։ Տեր հոր այն խոստովանությունը, թե այդքան տարիների ընթացքում չէ հետաքրքրվել այդ կնոջ ով լինելն իմանալու, ինձ անկեղծ էր թվում (*Մուր.*, II, *30*)։ Եվ այդ ասում էր ապահով համոզմամբ, թե ընթերցողը չի պիտի համեմատե յուր գրածը բնագրի հետ (*Մուր.*, V, *366*)։

Ծանոթություն.— Այս կարգի նախադասությունների արտահայտած որոշիչային հարաբերությունը երևում է նաև դրանց որոշյալի այն ձևական որոշիչից, առանց որի կապակցությունը թուլանում է։ Համեմատիր Րաֆֆուց բերված օրինակը։ Լրացյալ բառեր են դառնում զգացմունք, հայացք, լուր, հասկացողություն, համոզմունք, եզրակացություն, միտք, որոշում, կասկած, պնդում, հաղորդում, հանդիմանություն *և այլն, որոնց հետ կապակցվող երկրորդական նախադասությունները համարվում են նաև խնդիր նախա-*

դասությունները։ Այսպիսի՝ եզրակացության ենք հանգում, որովհետև հիշյալ գոյականները լինելով գործողության անուններ, խնդրառության ունակություն ունեն։ Երբ ասում ենք՝ այն խոստովանությունը...այստեղ այն-*ը չապես նույնն է, եթե ասեինք՝ ես խոստովանում եմ այն... Սակայն քանի որ այդպիսի նախադասությունները փաստորեն գոյականի լրացում են, մենք դրանք համարում ենք որոշիչ երկրորդական նախադասություններ։*

է) ՈՐՊԻՍԻ ԲԱՌՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՈՐՈՇԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է որպիսի *հարաբերական բառով։ Գլխավոր նախադասության հարաբերյալը ունենում է* այնպիսի *և* մի *ձևական որոշիչները, որոնք նպաստում են կապակցման սերտությանը և յուրահատուկ արտաբերման կազմավորմանը։* Որպիսի *հարաբերական բառով կապակցվող երկրորդական նախադասությամբ գլխավոր նախադասության հարաբերյալը նմանեցվում, նույնացվում է այնպիսի երևույթի հետ, որը բացահայտվում է երկրորդական նախադասությամբ տարբեր հանգամանքներում ու ժամանակներում, տարբեր պայմաններում. դրանով էլ հենց բնութագրվում է հարաբերյալը.* Մի քանիսը մեր ընկերներից առաջարկեցին, որ քաղաքից դուրս «անտառում» հանդես-խնջույք կազմենք, մի երևույթ, որպիսին ամառը երկու-երկու անգամ երիտասարդությունը ձեռնարկում էր *(Իս.,* III, *43—43)։* Մի անգամ, զարնանային մի սքանչելի երեկո, որպիսին միայն Ադրիատիկի ափերումն է լինում, դրսից ինչ-որ նվագածության ձայն լսվեց *(Նար.,* VII, *121)։* Այսպիսի մի լուրջ, խելոք, թափանցող, ճաստատակամ և որոշ բնավորության տեր երիտասարդի առաջ, որպիսին Սարյանն էր *(Մուր.,* II, *401)։*

Ծանոթություն 1.—Որպիսի *հարաբերականը եզակիում հոդ է ընդունում և թվով համաձայնում է իր հարաբերյալի հետ։ Օրինակ՝* Աչքերը կուրացնելը նույնպիսի հանցանք է, որպիսին է և սպանությունը *(ՄԳՄ, 467)։* Ծածկած էր լայնաքղանցք վերարկու... և գլխին դրած ճասարակ խույր, որպիսին ծածկում էին անապատականները *(Նույն տեղում, 289)։ Եթե հարաբերյալը հոգնակի է և բազմակի, հարաբե-*

բակը անպատճառ հոգնակի է. օրինակ՝ Ուրեմն մենք պետք է ընդունենք մեր կրոնքի երկրորդ, երրորդ և այլն և այլն հեղինակներ, որպիսիքն են հայրապետ հեղինակները *(Ր.,* II, *171)։* Բոշայի համար դրանք սովորական բառեր են, որպիսիք նա հաճախ լսել է յուր պարտականներից *(ՐԵԺ,* IV, *16)։*

Ծանոթություն.— 2 Այս կարգի որոշիչ նախադասությունները մասամբ բացահայտիչի նշանակություն ունեն։ Համեմատիր՝ Նույն լեռների բարձրավանդակների վրա դրած էին Տարոնի իշխանների անմատչելի բերդերը և նրանց առնելի ամրոցները, որպիսիք էին Եղնուտը, Մեծամոր ամրոցը, Աստղաբերդը, Այծից բերդը և Ողականը *(Ր.,* III, *22)։*

Ծանոթություն 3.— Որպիսի *հարաբերականի տեղը աստիճանաբար նվաճել է* որ-*ը և ընդարձակել իր կապակցական կիրառությունը. օրինակ՝* Այնպիսի մի խավար ծածկեց հույսիս բոլոր ճանապարհները, այնպիսի անպատմելի տխրություն իջավ վրաս, որ ընդունակ են զգալու միայն թարմ անվարժ սրտերը *(Իս.,* III, *45)։* Սրանք այնպիսի ազազիլ արարածներ են, որ կատաղած ժամանակ մարդ կուտեն *(Նար.,* IV, *119)։ Պարզ է, որ* այնպիսի *հարաբերյալ ձևական բառին պետք է հարաբերեր* որպիսի *հարաբերականը։*

Որպիսի *հարաբերականին հար և նման կիրառվում են նաև* ինչպես, ինչպիսի, որպես, որպես թե *հարաբերական բառերը։ Հարաբերյալ ձևական բառեր են լինում* նույնպիսի, այնպիսի. *օրինակ՝* Դա նույնպիսի գաղտնիք էր, ինչպես և Մոմճյանի գործերից շատերը *(Մուր.,* II, *400)։* Կարող է արդյոք այս էֆիոպը հասկանալ այնպիսի մի նուրբ նկար, ինչպիսին է այս աննման տեսարանը *(ԵՉ, 369)։* Կանգնած էին նյարդերի այն բացառիկ լարված վիճակում, ինչպիսի վիճակ ապրում է զինվորը թշնամու «դոտ»-ի վրա գրոհելուց վայրկյաններ առաջ *(ՎԱՍԱ, 484)։* Այդ հոյակապ տունը այսօր այնպիսի տխուր տպավորություն էր գործում, որպես թե սգավորի տուն լիներ *(«Ընտիր էջեր», 504)։*

ը) ՈՐՔԱՆ, ԻՆՉՔԱՆ, ԱՅՆ Է ԲԱՌԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՈՐՈՇԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է որքան, ինչքան *հարաբերականներով. գլխավոր նա-*

խադասության գոյական հարաբերյալը ունենում է այնքան *ձևական որոշիչը։ Այսպիսի երկրորդական նախադասությունը որոշում է գոյականի քանակական, տեղական հատկանիշը. օրինակ՝* Այնքան ժամանակ, որքան արևը կայծի Սինայի ավազները վես և անապատի դեղին շեղջերը նորձանքներ կտան ալիքների պես, ես չեմ կամենա ողջունել մարդկանց *(Իս., II, 61)։* Ինչքան ժողովուրդ մոտի են վանքը, նրան է բաշխում ենքանի կյանքը *(Թ., I, 335)։*

Որոշիչ երկրորդական նախադասությունները շատ սակավ կապակցվում են այն է *բացահայտող, մեկնաբանող արտահայտությամբ. գլխավոր նախադասության «հարաբերյալը» այս դեպքում* մի բան *ձևական կապակցություն է, որի որոշիչը պետք է դառնա երկրորդական նախադասությունը. բայց որովհետև* մի բան *կապակցությունը կորցրել է իր գոյականական նշանակությունը, ուստի այդպիսի որոշիչ նախադասությունը կարելի է անվանել նաև այն պաշտոնի անունով, ինչ պաշտոնի գլխավոր նախադասության մեջ ծառայում է* մի բան *կապակցությունը. այսինքն՝ եթե* մի բան *ենթակա է, ուրեմն ենթակա է նաև երկրորդական նախադասությունը և այլն. օրինակ՝* Ես կկամենայի, որ դու միայն մի բանում համոզվես, այն է՝ որ ոչ ոք չի կարող խանգարել մեր երջանկությունը *(Շիրվ., VI, 28)։* Ընդունում եին, որ այս անցավոր աշխարհում կա միայն մի բան... այն է... լավ ուտել *(Մուր., V. 167)։ Համեմատիր նաև.* Նույնը անել հորդորեցի և հարուստ գյուղացիներին, այն է՝ իրենց ավելորդից մի-մի բան հատկացնել չունևոր գյուղացուն *(Մուր. II, 113)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Երբ երկրորդական նախադասությամբ հաղորդվում է գլխավոր նախադասության գոյական անդամի հետ միջնորդական, հեռավոր կապ ունեցող այլ առարկաների գործողությունների մասին, որ ուղղակի կերպով չեն առնչվում որոշակի հարաբերյալի հետ, այդպիսի երկրորդական նախադասությունը չի համարվում ոչ որոշիչ, ոչ հատկացուցիչ և ոչ էլ բացահայտիչ երկրորդական նախադասություն, որովհետև իբրև որոշիչ, հատկացուցիչ կամ բացահայտիչ չի կապվում գլխավոր նախադասության որևէ գոյական անդամի հետ, այլ մնում է որպես կողմնակի հաղորդում։ Այսպիսի նախադասությունը կարելի է կոչել կողմնակի որոշիչ երկրորդական նախադասություն. օրինակ՝ Կամաց, պարուչիկ, մի

տաքանար զուր տեղը, ապա Տարաշչենկոն, որի գինու բաժակը Պաստուխովի շարժումից ընկավ ձեռքից (*Շիրվ.*, V, *146*)։ Ողջույն ձեզ, ողջույն, նորեկ աշխարհի ազատ զավակներ, որ դարեր, դարեր ձեր մեծ հայրերի հարատև ջանքեր այսօր պսակվեց վսեմ գործերի վեհ հաղթանակով (*ՀՀԵ, 230*)։

բ) ՈՐՈՇԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես նկատեցինք, ամենաստույգ օրինաչափականն այն է, որ գլխավոր նախադասության մեջ գտնվող որոշյալը անմիջապես պետք է նախորդի որ *հարաբերականին, այլապես առաջանում են թյուրիմացություններ, մանավանդ երբ հարաբերյալը և հարաբերականը թվով, հոլովով չեն համաձայնում. օրինակ՝* Եթե հեռվից չերևեին այն անտառապատ լեռները, որոնցից մենք նոր էինք իջել և որոնց վրա տեղ-տեղ թանձր ծուխի պես դեռ լըռտած էր մառախուղը, մենք փոքր առաջ կրած մեր նեղությունը երազ կկարծեինք (*Մուր.*, II, *21*)։ Նրանք ունեին երկու որդի, որոնցից մեծը Սարգիս անունով մեզ ծանոթ երիտասարդն էր (*Նույն տեղում, 25*)։

Այսպիսի մոտիկությունը պարտադիր չէ և չի կարող լինել, երբ որոշիչ երկրորդական նախադասությունը վերաբերում է ամբողջ գլխավոր նախադասությանը. սակայն այս պարագայում էլ անհրաժեշտ է զգույշ լինել, որպեսզի որ *հարաբերականից անմիջապես առաջ (գլխավոր նախադասության մեջ) գոյականներ, դերանուններ չլինեն, որովհետև կարող է մտածվել, թե հարաբերականը վերաբերում է հենց դրանց. օրինակ՝* Նա այդ օրը ջղային ուժեղ նոպա էր ունեցել, որի հետևանքն էր ուժեղ և չդադարող գլխացավը (*ԳՍԹ*, I, *139*)։ *Այստեղ որոշիչ նախադասությունը անշուշտ վերաբերում է ամբողջին, բայց և կարող է վերագրվել նաև* նոպա *բառին։ Համեմատիր՝* Ինչեր են լինում այս րոպեիս քո երկրիդ մեջ, որոնց մասին այդ մարդիկ ոչ մի տեղեկություն չեն տալիս (*«Ընտիր էջեր», 427*)։

Հաճախ որոշյալը իբրև հարաբերյալ շատ հեռու է գտնվում հարաբերականից. եթե հարաբերականի մոտ չկան այնպիսի բառեր, որոնք կարող են հարաբերյալ դառնալ, թյուրիմացություն չի կարող ստեղծվել։ Սակայն երբեմն լինում են այդպիսի բառեր, այս դեպքում, թեև, իմաստը օգնում է, որպեսզի կարողանանք հարաբերյալը տարբերել մյուս բառերից, բայց ոճաբանորեն ան-

հարթ է ստացվում. օրինակ՝ Մազվա գավառումն էր սուրբ Թադեոս առաքելո վանքը, որը մեր Աբգար թագավորի խնդրելով ուղարկվեցավ Հայաստան: Հաղբակումն էր սուրբ Բարդուղիմեոս առաքելո վանքը, որը Հայաստան եկավ *(Րաֆֆի)։ Անշուշտ հասկանալի է, որ հարաբերյալներ են հանդիսանում* Թադեոս *և* Բարդուղիմեոս *անունները։*

Անհետևողությամբ այնպես է պատահում, որ որոշիչ երկրորդական նախադասությունը ընկնում է իր որոշյալից առաջ, գլխավոր նախադասության մի մասից հետո, որին չի վերաբերում. (բայց ոչ իբրև առաջադաս նախադասություն) օրինակ՝ Սենյակի պատերի վրա, որ հատուկ է բոլոր ասիական տներին,— կան զուգահեռաբար բաժանված դարաններ, որ լի են տիրոջ ճաշակը ցույց տվող այնպիսի առարկաներով *(Ր.,* II, *158)։ Պետք է լիներ՝* Սենյակի պատերի վրա կան զուգահեռաբար բաժանված դարաններ, որ հատուկ է բոլոր ասիական տներին *(այս երկրորդականը վերաբերում է ամբողջ գլխավոր նախադասությանը)* և որ լի են *և այլն, բայց նախապես լավ չշարադասվելով՝ առաջացել է այսպիսի բռնազբոսություն։ Ամբողջ գլխավորին վերաբերող լրացուցիչ հաղորդման կամ հարակցական նախադասությունը միայն ետադաս է լինում։*

Գլխավոր նախադասության անդամները այնպես պետք է շարադասվեն, որ հարաբերյալ հանդիսացող բառը մղվի նախադասության վերջը, այսինքն՝ մոտենա որ *հարաբերականին։ Որոշիչ երկրորդական նախադասությունը սկսվում է* որ *հարաբերականով և նայած այս վերջինը ինչ հոլովով է դրվում, ըստ այնմ էլ շարադասվում են երկրորդական նախադասության անդամները։ Եթե* որ *հարաբերականը դրված է սեռական հոլովով, ապա սրան պետք է հաջորդի որևէ այնպիսի բառ, որ հատկացյալ է կամ կապ, իսկ եթե բացառական, գործիական, ներգոյական հոլովներով է դրված, ապա պետք է հաջորդի որևէ բայ, այսինքն՝ ստորոգյալը (խոսքը չի վերաբերում նախադաս լրացումներին, որոնք իրենց կարգին շարադասվում են)։*

Երբեմն հարաբերյալի ու հարաբերականի ճիշտ կապակցումը կատարվում է կրկնությամբ. երբ հարաբերյալի և հարաբերականի արանքում կան բառեր, որ կարող են մտածվել իբրև հարաբերյալներ և շփոթություն առաջացնել, ապա հարաբերյալը կրկնվում է հարաբերականից առաջ. օրինակ՝ Ես տեսա ազնիվ մարդու անխոնջ ջանքերի արդյունքը, մարդ, որի մասին խոսվում է ամբողջ

շրջանում: *Հաճախ այդպիսի կրկնությունը ուղեկցվում է այն, մի ձևական որոշիչներով. օրինակ՝* Ես տեսա ազնիվ մարդու անխոնջ ջանքերի արդյունքը, այն մարդու, *կամ* մի մարդու, որի մասին խոսվում է ամբողջ շրջանում: Երբեմն պատանին նրան երազ էր թվում, մեկը այն շողշողուն երազներից, որոնցով նա զարդարել էր իր աղքատ պատանեկությունը *(Բակունց)*:

Որոշիչ երկրորդական նախադասությունը ըստ իր ամբողջական շարադասության՝ գլխավորի նկատմամբ լինում է վերջադաս, միջադաս և նախադաս: Ամենասովորականը վերջադասն է: Որոշիչ երկրորդական նախադասությունները վերջադաս են դրվում այն դեպքում, երբ գլխավոր նախադասության մեջ կան մեկից ոչ ավելի որոշյալներ, կամ երբ որոշյալները մեկից ավելի են, սակայն որոշիչ երկրորդական նախադասությունը վերաբերում է միաժամանակ բոլորին, որ գտնվում են նախադասության վերջում. օրինակ՝ Կհալածվեն ազնվությունը և այն շահագործող պաշտոնյաները, որոնց շնորհիվ շատ ջերմ սրտեր են սառել *(Մուր., II, 147)*: Իրավ թողել ես քմայքները քո, որով այս կյանքում հպարտ են մարդիկ *(Լերմ., Դիմ., 100)*:

Որոշիչ երկրորդական նախադասությունը ետադաս է դրվում, երբ վերաբերում է գլխավոր նախադասության վերջի գոյականական անդամին. օրինակ՝ Հասնելով Վան՝ մենք իջևանեցինք Այգեստան կոչված արվարձանում, որ կից էր այդ քաղաքին *(ՐԿ, 247)*: Միակ ելքը այն կրճիցն է, որի առաջը բռնած է թշնամին *(Մուր., III, 185)*: Բայց բախտը կամ գուցե մեր անհեռատեսությունը փակել է մեզ այժմ մի գառագեղի մեջ, որից ազատվելու ոչ մի հնար չունենք *(Նույն տեղում, 192)*:

Որոշիչ երկրորդական նախադասությունը ետադաս է դրվում, երբ վերաբերում է ամբողջ գլխավոր նախադասությանը և ոչ թե նրա որևէ մի անդամին. օրինակ՝ Այդ երբ է իր եղբայրը փրկել խանի կյանքը, որ ինքը, իր ծնողները ոչինչ չգիտեն *(ԳԱԹ, I, 142)*: Հարազատների հանդիպումն այնքան սրտաշարժ էր և ուշագրավ, որ ստիպեց ոստիկանի պատգամավորներին սպասել մի առժամանակ բանակից դուրս *(Մուր., III, 399)*:

Որոշիչ երկրորդական նախադասությունը միջադաս է դրվում, երբ չի վերաբերում նախադասության վերջին գոյական անդամին, այլ վերաբերում է նախորդ գոյական անդամներից որևէ մեկին. օրինակ՝ Հարավային կողմից, որ միակ դյուրամատույցն էր, պատում էին նրան բարձր պարիսպ-

ներ և հզոր աշտարակներ *(Մուր., III, 354)։* Այդ՝ դեռևս երիտասարդ թշվառականը, որ ք ա ռ ա ս ո ւ ն տ ա ր ե կ ա ն չ կ ա ր, նմանում էր 50-ից անց ծերունու *(«Ընտիր էջեր», 439)։* Երբ ուշքի եկա և աչքերս բաց արի, առաջին դեմքը, որ տեսա, մի երիտասարդ բժշկուհի էր *(«Ընտիր էջեր», 1096)։* Իսկ պատանի Գոռը, որ մինչև այդ մի անբացատրելի հուզման, մի երանական հափշտակության մեջ էր գտնվում յուր հարսնացուի ցույց տված արհական վարմունքից, մոտեցավ հորը և համեստությունից շառագունելով ասաց *(Մուր., III, 294)։ Եթե որոշիչ երկրորդական նախադասությունը վերաբերում է նախադասության նույնիսկ նախավերջին գոյական անդամին, դարձյալ միջադաս դիրք է ունենում. օրինակ՝* Գոռը առաջ անցավ և լուծելով յուր մեջքից փոքրիկ ոսկեպատյան վաղակավորը, որ ն վ ե ր է ր ս տ ա ց ե լ հ ո ր ի ց, կապեց օրիորդի մեջքը *(Մուր., III, 294)։*

Որ *հարաբերականով որոշիչ երկրորդական նախադասությունը հազվադեպ է նախադաս լինում. այս տեսակ շարադասությունը հատուկ է խոսակցական լեզվին և այնքան էլ տարածված չէ։ Համեմատիր՝* Որ տեղին ուզենամ, այն տեղին էլ կզարկեմ *(Շիրվ., V, 145)։ Ծագումով այս երկրորդական նախադասությունը նույնպես միջադաս է. պետք է լիներ՝* Որ տեղին, որ ուզենամ, կզարկեմ։ *Այստեղ* որ *դերանունը իսկապես որոշիչ է և ոչ թե հարաբերական. սակայն բուն* որ *հարաբերականը (որ ուզենամ) ընկնելով, նախորդ* որ *որոշիչը մտածվում է նաև իբրև հարաբերական և հենց այդ պատճառով գլխավոր նախադասության երկրորդ եզրում (միջադաս երկրորդականից հետո) առաջանում է հարաբերյալ (այն տեղին)։ Այսպիսով՝ գլխավոր նախադասության առաջին մասի ու երկրորդականի ձուլում է կատարվում և երևում է իբրև նախադաս երկրորդական նախադասություն։ Համեմատիր նաև հետևյալը՝* Որ օրը որ քեզ ժառանգ է տվել, էն օր կմեռնեք քու կինն էլ, դու էլ *(Թ., II, 104)։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն. —Երբեմն երկրորդական միջադաս նախադասությունը այնպես է ձուլվում գլխավորի հետ, որ այլևս նրա երկրորդական լինելը չի գիտակցվում, իսկ գլխավոր նախադասության վերջին մասը, ընդհակառակն, անջատվում է իբրև անկախ նախադասություն։ Փաստորեն գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցությունը լուծվում է շաղկապների անկումով. օրի-

նակ՝ Իսկ մյուս տարին էն չոր հացն ինչ է, էն էլ չի ճարի *(ԲՎԻԳԵ, 177)։ Այս նախադասությունը ըստ ծագման այսպես է եղել.* Իսկ մյուս տարին էն չոր հացը, որ ինչ է *(այսինքն՝ որ բան չէ)*, չի ճարի:

2. ԲԱՑԱՀԱՅՏԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բացահայտիչ երկրորդական կոչվում է այն նախադասությունը, որով բացահայտվում է գլխավոր նախադասության որևէ գոյական անդամ, այսինքն՝ ցույց է տալիս, թե այս վերջինը ով է, ինչ է. օրինակ՝ Արևը, որ զորության օվկիանոս է, կյանք է պարգևում կենդանական ու բուսական աշխարհին:

Բացահայտիչ երկրորդական նախադասությունները ըստ իրենց ձևի ու կապակցման եղանակի գրեթե չեն տարբերվում որոշիչ երկրորդական նախադասություններից։ Բացահայտիչ նախադասությունը կապակցվում է միայն որ, ով *հարաբերական բառերով, մինչդեռ որոշիչ նախադասության հարաբերականները, ինչպես տեսանք, բազմազան են։ Երկրորդ տարբերակիչ հանգամանքը անվանական ստորոգյալի բնույթն է։ Եթե երկրորդական նախադասության անվանական ստորոգյալի վերադիրը մի այնպիսի գոյական է, որ իբրև որոշիչ չի գործածվում, կամ այն որոշիչ դարձնելը խիստ բռնազբոսիկ է, այդպիսի նախադասությունը նույնպես պետք է բացահայտիչ համարել. օրինակ՝* Մակբեթը հիմա քունն սպանում է... Քունը, որ մահն է առօրյա կյանքի, և բաղանիքը դառն աշխատանքի, որ բալասանն է հոգնած սրտերի. և մեծ բնության երկրորդ սպասը, կյանքի խնջույքի բուն սնուցիչը *(Շեքս., I, 232)։* Նա հրամայեց շոֆերի օգնականին, որը զինվորական լայնեզր գլխարկ կրող, մեծ, երկար անդրավարտիքով մի պատանի էր *(ՔԹՈՀ, 378)։*

Բացահայտիչ և որոշիչ երկրորդական նախադասությունների տարբերությունը պայմանավորված է նաև գլխավոր նախադասության անդամների բնույթով, հատկապես այն հարաբերյալի բնույթով, որին վերաբերում է երկրորդական նախադասությունը։ Եթե գլխավոր նախադասության մեջ գտնվող հարաբերյալը որևէ այնպիսի դերանուն է, որ որոշիչ չի առնում, եթե հատուկ անուն է, որ ամեն կարգի որոշիչ չի ընդունում, եթե չկան նաև ձևական որոշիչներ, որոնք արդեն ակնարկում են լրացուցիչ նախադասության որոշիչ լինելը և մատնանշում են տեղը, ապա երկրորդական նախադասությունը բացահայտիչ է. օրինակ՝ Ես ձեզ ասում եմ, ով

դու ցնծոտի, դու, որ թշվառ ես, անտուն, անօթի, դու, որ քո ձեռքին կոել ես շղթա, դու, որ քրտինքդ՝ դառն ու ծովացած, նզովք ես շինել և լուծ քո վրա *(Իս., I, 186)*։ Եվ ով եք դուք, որ տանջում եք անօրինակ ինձ էսպես *(Թ., II, 164)*։ Նա, ով կխախտի այդ պայմանները աննշան չափով, թող հուր հավիտյան տանջվի ամոթով *(Շեքս., II, 209)*։ Հիմա դուք ինձ ասացեք... դուք, որ քրքրում եք երկիր ու երկինք *(Իս., III, 202)*։ Նա, ով որ ցավ է տվել ու աղետ, ստեղծել է ամեն ցավի ճարն ու ճամփեն իրեն հետ *(Թ., II, 154)*։ Միթե հայտարարեցի հենց ձեր մասին, Էդվարդ Գուստավովիչ և օրիորդ Սուսաննա Պավլովնա, որ մեր խեղճ ածուի թումբերն եք տրորել և ծաղիկները ջարդելով սիրաբանել *(Փափ., 396)*։

Ծանոթություն 1.— Երբ հարաբերյալը այն *ցուցական դերանունն է և այնպիսի բառ, որ առարկայական, նյութական նշանակությունը կորցրել է և գրված է կապակցություն կազմելու համար, այդ դեպքում լրացուցիչ երկրորդական նախադասությունը դառնում է նախադասության այն անդամը, որի փոխարեն կիրառված է գլխավոր նախադասության հարաբերյալը. օրինակ՝ ենթակա՝* Այն, որ ինքը խնդագին ուրախությամբ, վարդափունջը ձեռքին գնաց Ցողիկին տեսնելու և այն, որ գրկին ու ծնկների վրա մեծացած աղջիկը իրեն նկատելով՝ աչքերը խոնարհեց իրեն չտեսնելու համար,— ոչ միայն զարմացրեց ու վշտացրեց, այլև կարծես հարվածի պես ցնցեց նրան *(ՍԶ, V, 165)*։ *Խնդիր՝* Իսկ նրանից, որ նրա հետ գերի էին վերցրել, հոշոտեցին դահիճները անգղների նման *(ՉԸ, 259)*։

Ծանոթություն 2.— Բացահայտիչ երկրորդական նախադասությունը նույնպես վերածվում է դարձվածային բացահայտիչի գրեթե նույն եղանակով, ինչպես որոշիչ նախադասությունը. հարաբերական բառերը ընկնում են, ստորոգյալը փոխվում է դերբայական ձևերի (ենթակայական, հարակատար, ապառնի), շարադասվում է վերջում և անպայման դիմորոշ հոդ է ստանում, որովհետև, ինչպես տեսանք, բացահայտիչ երկրորդական նախադասությունը գլխավորապես վերաբերում է անձնական դերանուն հարաբերյալների. բացի այդ՝ բացահայտիչը գոյական լրացում է. որպեսզի դերբայը գոյականանա, պետք է հոդ ընդունի. օրինակ՝ Դուք, որ ապրում եք սրբերի նման այդ դրախտի մեջ *(Լերմ., Դ., 56)*։ Դուք՝ սրբերի նման այդ դրախտի մեջ

ապրողներդ: Նա, որ սպանեց իմ թագավորին, նա, որ իմ մորս պոռնիկ դարձրեց, նա, որ ներս խոթվեց իմ ընտրության և հույսերիս մեջ *(Շեքս., I, 193)*։ Նա՝ իմ թագավորին սպանողը, նա՝ իմ մորը պոռնիկ դարձնողը, նա՝ իմ ընտրության և հույսերիս մեջ ներս խոթվողը: Բա ես մեղք չե՞մ, որ հայրիկ չունեմ *(ԱՇ, 9)*։ Բա ես՝ հայրիկ չունեցողս, մե՞ղք չեմ:

3. ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հատկացուցիչ երկրորդական նախադասություն կոչվում է բարդ ստորադասական նախադասության այնպիսի երկրորդական նախադասությունը, որը նյութական բովանդակություն է տալիս գլխավոր նախադասության որևէ անդամի ձևական հատկացուցչին, կամ հատկացուցչային հարաբերությամբ կապակցվում է հիշյալ անդամի հետ. օրինակ՝ Վերցրու նրա գիրքը, ով համաձայնում է զիջել. *այս նախադասության մեջ* նրա *սեռական հոլովով հատկացուցիչը դրված է իբրև կապակցական ձևական բառ, որպեսզի երկրորդական նախադասությամբ բացատրվի, ճշտվի այդ դերանվան ինչ լինելը։ Այսպիսի երկրորդական նախադասությունը կարող է դիտվել նաև իբրև բացահայտիչ երկրորդական նախադասություն, նայած ինչպիսին է հարաբերյալը. եթե մենք հարաբերյալը դիտում ենք իբրև նյութական նշանակություն ունեցող բառ և երկրորդական նախադասությամբ բացահայտում ենք այն, ապա դա մնում է գլխավոր նախադասության մեջ իբրև բացահայտյալ՝ իր հատկացուցչային պաշտոնով, իսկ եթե իբրև ձևական բառ հաշվի չենք առնում, այլ դրա փոխարեն տեղադրում ենք երկրորդական նախադասությունը, այս վերջինը վերցնում է նրա պաշտոնը և դառնում է հատկացուցիչ. օրինակ՝* Վերցրու զիջել համաձայնվողի գիրքը: Վերցրու նրա՝ զիջել համաձայնվողի, գիրքը:

Այս դեպքում, ինչպես տեսնում ենք, գլխավոր նախադասության մեջ կա մի ձևական հատկացուցիչ, որին հարաբերում է երկրորդական նախադասությունը և բռնում է դրա տեղը. սակայն բացի սրանից՝ գլխավոր նախադասության որևէ անդամ չունենալով հատկացուցիչ, վերջինիս վերաբերող երկրորդական նախադասությունը դառնում է հենց այդ վերջինի համար հատկացուցիչ. օրինակ՝ Ինչ էր քուն պատճառը, որ ես այս աստիճան հոգնել էի. *երկրորդական նախադասությունը հատկացուցիչ է գլխավոր նախադասության ենթակայի համար։ Ինչ էր իմ այս աստիճան հոգնելու (հոգնած լինելու) քուն պատճառը։*

Այժմ քննենք սրանք առանձին-առանձին։ Հատկացուցիչ նախադասություններ են այնպիսի երկրորդական նախադասությունները, որոնք հարաբերում են գլխավոր նախադասության մի ձևական հատկացուցչի, այսինքն՝ փաստորեն փոխարինում են այս վերջինին։ Ձևական հատկացուցիչներ են այն, նա, *որոնց համար հանդես են գալիս* նրա, նրանց *ձևերը. օրինակ՝* Ես երազում եմ նրա գալուստը, ում պետք է անս զգվի ազան *(Չե, 235)*։ Ոգի է տալիս ու թափ ներշնչում ինձ կրկին այն մեծ պայքարը նրանց, որոնց դժվարին, բայց հաղթական չուն երգել եմ իմ երգով նուրնուրան *(Չե, 211)*։

Այս պարագայում չի բացառված հարաբերյալ հատկացուցչի զեղչումը, երբ հատկացուցիչ երկրորդական նախադասությունը այլևս երկդիմություն չի ներկայացնում։ Ինչքան էլ նրա, նրանց *ձևական բառեր համարենք տվյալ դեպքում, այնուամենայնիվ դրանք անձնական դերանուններ են, որոնք կարող են բացահայտիչ ունենալ, իսկ երբ գլխավոր նախադասության մեջ չկան այդպիսի հատկացուցիչներ, երկրորդական նախադասությունը դառնում է իսկական հատկացուցիչ. օրինակ՝* Ջիգյարին գյուլլա դիպչի, Քեզ ով որ սիրի, աղջիկ *(Թ., II, 55)*։ Քեզ սիրողի ջիգյարին գյուլլա դիպչի, աղջիկ:

Երբ ոչ հատկացուցիչը կա, ոչ էլ հատկացյալը, այս դեպքում հատկացուցիչ երկրորդական նախադասությունը դառնում է փոխանուն, այսինքն՝ հատկացուցիչ, որ իր մեջ պարունակում է նաև հատկացյալը. օրինակ՝ Ով ունի-կկտրի *(Թ., III, 255)*։ *Այս նշանակում է՝ ով ձայն* ունի, *այս դեղը նրա ձայնը կկտրի։ Ձայն ունեցողի ձայնը այս դեղը կկտրի. իսկ իր կարճ ձևով՝* ունեցողինը *(ունեցողի ձայնը)* կկտրի *(դեղը)*։

Այս կարգի հատկացուցիչ նախադասությունները շատ սակավ են. դրանք կարող են և՛ ետադաս լինել, և՛ նախադաս. դրանց հարաբերական բառերն են ով, որ, ինչ: *Երբ գլխավոր նախադասության հարաբերյալ հատկացուցիչը իր է, հարաբերականը չի կարող* ով *լինել. օրինակ՝* Քաղիր նրա ծաղիկը, որն ավելի բուրավետ ծաղիկներ ունի: Քաղիր բուրավետ ծաղիկներ ունեցողի ծաղիկը:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.— Հատկացուցիչ երկրորդական նախադասությունները դերբայական դարձվածային հատկացուցչի վերածելիս հարաբերական և հարաբերյալ ձևական բառերը դուրս են ընկնում, երկրորդական նախադասության ստորոգյալը վերածվում է սեռական հոլովով դերբայի և անմիջապես նախորդում է հատկացյալին։

Գ. ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԿԱՄ ՈՐԵՎԷ ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս խմբի երկրորդական նախադասությունները գլխավոր նախադասության համար խնդրի և պարագայի պաշտոն են կատարում։ Խնդիր նախադասությունները բաժանվում են երկու ենթախմբի իրենց առանձնահատուկ դրսևորումներով. դրանք են ուղիղ և անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունները. իսկ պարագայական նախադասությունները ըստ իրենց պաշտոնի համընկնում են ճիշտ նույն պարագաներին, ինչպիսիք ունի պարզ նախադասության ստորոգյալը, և լինում են՝ ժամանակի, տեղի, պատճառի, նպատակի և այլն, որոնք քննվում են ստորև։

1. ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդիր երկրորդական նախադասությունները ստորոգված այնպիսի լրացումներ են, որոնք ընկնում են գլխավոր նախադասության ստորոգյալի գործողության ոլորտում ուղղակի կամ անուղղակի կերպով և պայմանավորվում են այդ ստորոգյալի քերականական սեռով։ Եթե երկրորդական նախադասությունը խնդիր է ներգործական սեռի բայ-ստորոգյալի համար, ուրեմն ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն է, իսկ եթե չեզոք կամ կրավորական բայի պահանջով է կիրառվում, դառնում է անուղղակի խնդիր։

Ա. ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ուղիղ խնդիրը ցույց է տալիս որևէ ներգործական սեռի բայ-ստորոգյալի գործողության այն առարկան, որի վրա գործողությունն անցնում է ուղղակի կերպով։ Այս պարագայում ներգործական բայ-ստորոգյալի առարկա կարող են դառնալ ոչ միայն թանձրացական գոյականներ, այլև գործողություններ, դրություններ, վիճակներ և այլն։

Եթե ինձնից քիչ հեռու կանգնած մարդուն տեսնում եմ, կարող եմ տեսնել նաև նրա գործողությունները, վիճակները, այն է՝ ես տեսնում եմ, որ նա աշխատում է, պառկած է, քայլում է, վազում է, ծիծաղում է և այլն։ Երբ ներգործական սեռի բայ-ստորոգյալի ուղիղ խնդիրը ոչ թե մի որևէ առարկա է, այլ որևէ առարկայի գործողությունը, որ արտահայտվում է ձևավորված նախադասությամբ, կոչվում է ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն։ Սովորական առարկայական խնդիրները իրենց ստորոգյալի հետ

կապակցվում են առանց որևէ միջնորդող բառերի. օրինակ՝ Ես ճանապարհի եզրին նկատեցի մի գեղեցիկ աղբյուր: Նկատեցի աղբյուր մի բառակապակցություն է, որտեղ կա խնդրառություն. այդ երկուսի կապը չի արտահայտված որևէ միջնորդող բառով։ Իսկ երբ ներգործական սեռի բայ-ստորոգյալի խնդիրը ստորոգված գործողություն է, անկարելի է այդպիսի անմիջնորդ կապակցությունը. այդ կապակցությունը իրականացվում է կամ հատուկ բառերով, այն է՝ շաղկապներով և կամ արտասանական դադարներով։ Երկու դեպքում էլ ներգործական սեռի բայ-ստորոգյալը իր ենթակայով ու այլևայլ լրացումներով առանձնանում է իբրև այլ կարգի նախադասություն, իսկ խնդիր հանդիսացողը, որ առարկայի ստորոգված գործողության ձևավորված արտահայտությունն է, առանձնանում է իբրև մի այլ կարգի նախադասություն։ Սրանց միջև կա այն աղերսակցությունը, որ երկրորդ նախադասությունը առաջինի ստորոգյալի խնդիրն է, նա սովորական խնդրից տարբերվում է իր ընդարձակությամբ և կապակցման եղանակով. օրինակ՝ Ես նկատեցի, որ Անիկը ճոզվածությամբ ու եռանդով սրբում է իրենց պատըշգամբը, աստիճանները ու բակը *(ՍՁ, V, 12)*։ Անիկը ճոզվածությամբ ու եռանդով սրբում է իրենց պատշգամբը, աստիճանները ու բակը,—*այս նախադասությունը նույն դերն է կատարում, ինչ դեր որ ուներ նախորդ նախադասության մեջ* աղբյուր *բառը, այսինքն՝ ուղիղ խնդիր է* նկատեցի *բայ-ստորոգյալի համար, միայն ստորոգյալի հետ կապակցված է* որ *շաղկապով։*

Այս կարգի խնդիրները, ինչպես տեսնում ենք, նախադասություն-խնդիրներ են, որոնք հենց կոչվում են ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններ, որովհետև ստորադասվում են այն նախադասությանը, որի ստորոգյալի համար խնդիր են։

Ուրեմն ուղիղ խնդիր երկրորդական կոչվում է այն նախադասությունը, որը կատարում է գլխավոր նախադասության ներգործական սեռի որևէ բայական անդամի ուղիղ խնդրի դերը, առանց որի գլխավոր նախադասության այդ բայական անդամը նշանակության կողմից թերի է լինում, և կամ բացահայտում, պարզաբանում է ձևական խնդրի նշանակությունը։

ա) ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԱԿՑՈՂ ԲԱՌԵՐԸ

Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են որ, թե, ինչ, ով, երբ, որը որ, ինչ որ, ով որ *շաղկապներով ու հարաբերական բառերով։*

Սովորաբար գլխավոր նախադասության ստորոգյալը իր մոտ որևէ ուղիղ խնդիր չի ունենում, սակայն չի բացառվում, որ այդ ստորոգյալը ունենա ձևական խնդիրներ, որոնց էությունը, բովանդակությունը, ինչ լինելը բացահայտվում է ուղիղ խնդիր երկրորդական նախադասությամբ։ Այդպիսի ձևական խնդիրներ են դառնում՝ այս, այդ, այն, մի բան, ամենը, բոլորը, նրան, նույնը, ամեն ինչ, այն ամենը, այն բոլորը։

Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները ոչ միայն կապի մեջ են մտնում գլխավոր նախադասության դիմավոր բայ-ստորոգյալների հետ, այլև դրանցից և միադիմի բայերից կախված, ինչպես նաև չկախված, անորոշ դերբայների հետ, երբ գլխավոր նախադասության փոխարեն հանդես է գալիս որևէ դերբայական դարձված։ Այս դեպքում երրկրորդական նախադասության բնույթը բոլորովին չի փոխվում։ Փոփոխությունը վերաբերում է ամբողջ բարդ կապակցությանը այնքանով, որքանով գլխավոր մասը դերբայական դարձված է։ Իսկ երբ երկրորդական նախադասությունը խնդիր է դիմավոր և միադիմի բայից կախված դերբայի, ապա ամբողջ կապակցությունը մի բարդ ստորադասական նախադասություն է. օրինակ՝ Կարելի էր կարծել, թե նրանք մի ինչ-որ բանի վրա վինարանում են *(Շիրվ., I, 240)*։ Դուք գիտենալով, որ սիրում եմ ձեզ, վճռել եք ինձ պատժել ձեր կեղծ հիվանդությամբ *(Շիրվ., V, 431)*։ Ես հայտնվեցա հայտնելու, թե դևերը նույնպես ունին բարի սիրտ *(Ր., II, 243)*։

բ) *ՈՐ*-ՈՎ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Որ *շաղկապով կապակցվում են ա) այն երկրորդական նախադասությունները, որոնք ուղիղ խնդիր են դառնում կամական՝* ցանկանալ, ուզել, պահանջել, կամենալ, խնդրել *բայերին. օրինակ՝* Նա չէր ցանկանում, որ օտարները կդզու ներսը տեսնեն *(«Ընտիր էջեր», 601)*։ Նա կուզեր, որ ողջը նրան միանգամ ընդմիշտ տրվի *(ՉԸ, 68)*։ Եկել էր քաղաք՝ ինձ խնդրել, որ օգնեմ *(Թ., III, 85)*։ Դու ուզում ես, որ ազատ լինես *(ՉԸ, 66)*։ Ուզում է նա, որ մենք շրջենք մեր անարգված հողում *(ՆՉԸՆ, 275)*։ Ես կկամենայի, որ դուք հանեիք ձեր այդ գլխարկն ու ձեռնոցները *(Նար., VII, 250)*։ Ինքս ուզում էի ձեզ խնդրել, որ մի փոքր հայրաբար զբաղեցնեք Լամիյէին *(Շիրվ., V, 431)*։ *բ) Այն երկրորդական նախադասությունները, որոնք ուղիղ խնդիր են դառնում իմացական, զգացական՝* գիտենալ, երևակայել, իմանալ, զգալ, հիշել, մտածել, հաս-

կանալ, գլխի ընկնել, ըմբռնել *ներգործական բայ-ստորոգյալների համար։ Եթե նախորդ կամական բայերը խնդիր են առնում ցանկալի կամ ցանկացած գործողությունները, ապա այս բայ-ստորոգյալները այնպիսի խնդիրներ են պահանջում, որոնք մտածվում, իմացվում են գլխավոր նախադասության ենթակայի կողմից՝ իբրև գլխավորապես մի այլ ենթակայի գործողություն, հատկանիշ, որ ձևավորվում է առանձին նախադասությամբ. օրինակ՝* Ես գիտեմ հիմա, որ հարսանիք չի Մեր կյանքը այսօր կամ թեթև ոստյուն, Որ փոշի է լոկ այն ոգուն նստում *(ՉՀ, 111)*։ Իսկ առաջինը չգիտեր, որ իրեն հետևում են *(Բ., III, 15)*։ Ծերուկ, շատ անգամ իմացել եմ ես, Որ դու իմ կյանքը մահից փրկել ես *(Թ., II, 183)*։ Լևոնն զգաց, որ իր ողջ էությունը ողողված է այդ ցանկությամբ *(ՆԶՀ, 145)*։ Երեվակայեցեք, որ մինչև այժմ մենք դեռ չգիտենք *(Մուր., V, 166)*։ Նա հիշեցնում էր, որ ժամանակն է ճանապարհ ընկնելու *(Թ., III, 13)*։ Բայց իմացեք, որ ես ժամերը կհաշվեմ *(Նար., VII, 272)*։ Ես զգացի, որ մի անկյունից ինձ վրա նայում են երկու մեծ աչքեր *(ԳՄԵ, 382)*։ Եվ այստեղ իմացավ նա առաջին անգամ, որ հայրիկն էլ հայրիկ չէ, ոչ Սուրիկը՝ Սուրիկ, ոչ էլ ինքը՝ Ջանո, այլ գաղթականներ են *(Թ., III, 89)*։ Գլխի ընկավ, որ հայրենիքի կարոտն էր տանջում, քաշում իրեն *(Թ., III, 217)*։ Ես զգացի, որ իմ առաջին փորձն անհաջող անցավ *(Շիրվ., V, 432)*։ *գ) Խնդիր երկրորդական նախադասությունը անպայման* որ *շաղկապով է կապակցվում, երբ գլխավորը սկսվում է* թե, եթե *շաղկապներով, կամ երկրորդականն ունի այդ շաղկապները. օրինակ՝* Թե իմանում է, որ շունչ է քաշում տակի օձիքը *(Թ., III, 54)*։ Եթե տեսնում է, որ վախենում է, վրա է տալիս: Ես լսել էի, որ դու իբր թե սպանվել ես *(ՍԽՀ, I, 168)*։ Ես իմացա, որ եթե գնաս, լավ կլինի: Ես կկամենայի, որ թե տան գործերին հասնես և թե դրսում աշխատես։

դ) Որ *շաղկապով կապակցվում են նաև այն երկրորդական նախադասությունները, որոնք ուղիղ խնդիր են դառնում ասացական բայերի։ Ասացական բայեր են՝* ասել, հայտնել, *(նաև* գրել), ճչալ (ասել), արձանագրել, հրամայել, հաղորդել, պատմել, հայտարարել *և այս նշանակություններով այլ բայեր. օրինակ՝* Գրել է, որ տանեմ Երևան *(ՍԶ, V, 218)*։ Թող ճչա կամքդ դժգոհ, որ դեռ դու չես երգել նրան *(ԳՄԵ, 234)*։ Ավելորդ է ասել, որ այդ բանաստեղծությունները ինձ վրա թողին ցնցող տպավորություն *(ԳՄԵ, 453)*։ Անառարկելի լինելու համար արձանագրենք, որ նրա վսեմ հեղինակությունը զգալի չափով նսեմացավ *(Նույն տեղում)*։ Հրամայեց, որ

չքաղիր խմբերը գան և վրանը պատեն (*«Ընտիր էջեր», 604*)։ Ասացեք, որ վաղ առավոտ անձամբ կգամ նրան ողջունելու (*«Ընտիր էջեր», 602*)։ Թագավորը դառնալով յուրայինների մոտ, հայտնեց, որ պատրաստվեն վաղն ևեթ թշնամու վրա հարձակվելու (*Նույն տեղում*)։ Ինչպես կհրամայեք, որ վարվեմ (*Շիրվ., VI, 21*)։

գ) ԹԵ-ՈՎ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները որ *շաղկապի փոխարեն* թե *շաղկապով են կապակցվում հետևյալ դեպքերում.*

ա) Երբ երկրորդական նախադասության մեջ կան ով, ինչ, որ, որտեղ, որպես, ինչու, ինչքան, որքան, երբ, ուր, միթե *հարցական և հարաբերական բառերը. օրինակ՝* Եվ գիտես, թե ով է խոհարարը (*ՋԸ, 67*)։ Ես էլ գլխի չեմ, թե դու ինչ ես ուզում ասել (*ԱՇ, 130*)։ Դու չգիտես, թե ով է քո թշնամին (*Նույն տեղում*)։ Բայց նա միայն գիտե, թե որն է մշտավառ երազը ցեղերի եղբայրության (*«Ընտիր էջեր», 1126*)։ Կարող ես իմանալ և այն, թե սուրհանդակը ինչ կխոսի տիրոջ հետ (*Ր., III, 36*)։ Չես կարող երևակայել, թե որքան հանգիստ եմ (*Նար., IV, 87*)։ Բայց նրանցից ոչ ոք չէր մտածում, թե ինչու ինքը՝ պարողը չի ուրախանում, ինչու մենակ նա է տխուր (*Թ., III 24*)։ Չգիտեն, թե ովքեր կարող էին աննկատելիորեն ներս բերել այդքան գիրք ու շարել նստարանների վրա (*ԳՄԹ, I, 10*)։ Նրանք գիտեին և այն, թե այլևս ինչեր պիտի աներ Մերուժանը (*«Ընտիր էջեր», 505*)։ Շատ լավ հասկանում էի, թե ինչ էր նըշանակում իմ այս համառ գողունի հետամտությունը (*Նար., VII, 72*)։

բ) Երբ առհասարակ խնդիր երկրորդական նախադասությունը հարցական կամ կիսահարցական նախադասություն է. օրինակ՝ Երիկունը տուն գալիս մտածեցի, թե հո ես մարդ չեմ սպանելու (*Թ., III, 182*)։

գ) Երբ գլխավոր նախադասության մեջ կան որ, որպես, որովհետև, ով, որքան *և առհասարակ* որ-*ով բաղադրված բառեր. օրինակ՝* Որ *իմանան, թե ողջ են դեռ (ԳՄԵ, 250)։ Բայց նախ հարկավոր է, որ ա մ ե ն ք ը զ գ ա ն, թե ցանցը նեղիչ է, և թե նրանցից* դուրս էլ կա կյանք (*Փափ., 196*)։ Ո վ մ ի տ ք կ ա ն ե ր, թե ես քառասուն տարիս անցկացրած նոր եմ ջահելանում (*ՊՊԵԺ, I, 294*)։ Ես Հունան մարգարեն հո չեմ, որ իմանամ, թե էս թղթի կտորի մեջ ինչ ա խզբզած (*ՊՊԵԺ, I, 304*)։

դ) Երբ պարզվում է, որ երկրորդական նախադասության բովանդակությունը չի համապատասխանում իրականության, այսինքն՝ ինչ որ մտածվել է երկրորդական նախադասության գործողության մասին, չի կատարվել կամ այնպես չի ստացվել. օրինակ՝ Ես գիտեմ, թե քո լեռնցիները սպասում են քեզ *(պարզվել է, որ չեն սպասում) (Ր., I, 304)։* Ես կարծում էի, թե դու կգաս: Ես ենթադրեցի, թե այդպես կլինի:

ե) Երբ երկրորդական նախադասությունը տրվում է անուղղակի խոսքի ձևով. օրինակ՝ Մարիամը վեր կացավ և փոխարեն տեսակետ հայտնելու, ուղղակի ասավ, թե ինքը չի հավատում այդ սուտ-սուտ լուրերին, թե այդ բոլորը տարածում է Յոթծովիմերանը, թե Յոթծովիմերանը կապված է Ավագյանի ընտանիքի հետ, թե Ավագյանը պետք է Յոթծովիմերանի սանձը քաշի և այլն *(ՆԶՀ, 140)*։ Սկսեց գաղտնի մի ձայն ինձ ասել, թե երբեմն այնտեղ ապրել եմ ես էլ *(Թ., II, 185)*։

զ) Երբ գլխավոր նախադասության ասացական բայ-ստորոգյալը զեղչված է. օրինակ՝ Գոռը՝ թե ինչիս են պետք քո զարդերը *(Թ., III, 308)*։ Ձոքանչը՝ թե այ որդի, քեզանից ինչ թաքցնեմ *(Թ., III, 178)*։ Բամբակ է առնում տալիս կնկանը, թե ես գնում եմ հեռու տեղեր առուտուրի *(Թ., III, 176)*։ Վասակը՝ թե չէ, խոռոմ խաչոն էդպիսի մարդ չի *(ՆԶՀ, 104)*։

է) Թե շաղկապով կապակցվում են այն ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները, որոնք արտահայտում են ենթադրություն, կասկած, հնարավորություն, թվացում և այլն. օրինակ՝ Ասում եմ, թե չեն Փարվանա ջահիլներն էն սիրավառ *(Թ., I, 296)*։ Քեռի Խեչանը գնացել էր գյուղում պատմել, թե իր տեղը նեղ է, եկել էր քաղաք ինձ խնդրել, որ օգնեմ *(Թ., III, 85)*։

Երբեմն որ *և* թե *շաղկապները կարող են փոխարինվել. օրինակ՝* Ամենքը պնդում էին, թե դա մի բացառիկ ձմեռ է Եգիպտոսի համար *(Շիրվ., V, 436)*։ Ասաց, թե ամաչում է *(Նար., IV, 87)*։ Բայց չեմ կարծում, որ այդ բացառությունը հատկապես ինձ համար էր պատրաստված *(Շիրվ., V, 436)*։ Եվ չի ուզում հավատալ երկար, թե կրկին բանտս եմ վերադարձել, թե այնքան օրեր զուր եմ մտածել: Կարծում էի, թե երազում էի: Եվ ես անորոշ այնժամ հասկացա, թե այսուհետև դեպի հայրենիք երբեք ինձ համար էլ ճամփա չկա *(Թ., II, 195)*։ Ես կարծում էի, որ դու քնած կլինես *(Ր., III, 309)*։ Երևի դրանով ուզում էր ասել, թե հեշտ չի տեղի տվել թշնամուն *(Թ., III, 24)*։ Ասում եք, որ ոչ ոք չէր սպասում ինձ

(Մուր., V, 165)։ Այս պարոնը թեպետ շատ լավ գիտեր, որ ինչքան էլ անաչառ քննիչ լիներ... *(ՊՊԵԺ, I, 569)։* Հայտնում եմ, որ որպես մինչև այսօր, այսուհետև նույնպես Խլվլիկը միշտ պատրաստ է օգնել ձեզ *(Ր., III, 243)։*

Ինչպես նկատվում է բերված օրինակներից, որ *և* թե *շաղկապները ուղիղ խնդիր երկրորդական նախադասությամբ բարդ ստորադասական նախադասության մեջ գրեթե հարաբերյալներ չեն պահանջում.* թե*-ի մասին արդեն խոսք չի կարող լինել, իսկ* որ *շաղկապը իբրև հարաբերական այս տիպի կառուցվածքների մեջ այնքան աննշան կիրառություն ունի, որ աչքի չի ընկնում։ Համեմատիր՝* Բայց տեսնում ես դու այն, որ գալիս է *(ՁԸ, 67)։* Քեզ տված է արդ այն ամենը, որ կարող է բղձալ ժողովուրդ մի վեհ *(ՁԸ, 196)։*

Ուրեմն՝ որ *հարաբերականը իբրև շաղկապ տվյալ դեպքում համասարվում է* թե*-ին՝ իր յուրահատուկ կիրառությամբ։*

Որ *և* թե *շաղկապներով կապակցվող ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները դարձվածային ուղիղ խնդիր են դառնում հետևյալ ձևով. շաղկապները ընկնում են, ենթական վերածվում է ենթակա սեռականի, իսկ ստորոգյալը՝ հոդով անորոշ դերբայի, եթե ստորոգյալը բայական է. օրինակ՝* Գիտությունն արդեն ապացուցել է, որ միջին դարերի ֆրանսիական արվեստը պարսկական ծագում ունի *(Լեո, ՀՊ, II, 297)։* Գիտությունն արդեն ապացուցել է ֆրանսիական արվեստի պարսկական ծագում ունենալը:

Իսկ եթե ուղիղ խնդիր երկրորդական նախադասության ստորոգյալը անվանական է, եմ *բայական հանգույցը վերածվում է* լինել *բայի անորոշ դերբայի (հոդով), ստորոգելիական վերադիրը դրվում է անորոշ ուղղականով, իսկ ենթական դարձյալ արտահայտվում է սեռականով. օրինակ՝* Ասում են, թե էն Փարվանա ջահիլներն են սիրավառ: Ասում են նրա *(նրանց)* Փարվանա սիրավառ ջահիլներ լինելը: Հիմա տեսար, թե ինչ մարդ է *(ՆՋՀ, 104)։* Հիմա տեսար ինչ մարդ լինելը:

Թե *և* որ *շաղկապներով կապակցվող ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները գերազանցապես եռադաս են։ Այս երևում է վերևում բերված բազմաթիվ և բազմազան օրինակներից. Նախադաս երկրորդական նախադասությունների օրինակներ շատ սակավ են. օրինակ՝* Այնուհետև թե ինչ պատահեց, չիմացա *(Նար., IV, 80)։* Թե ինչ ժամանակ վերադարձել էր Ասլանը կաթողիկոսի մոտից, կամ մինչև գիշերվա որ ժամը Ջալլադը զբաղված էր իր մագաղաթներով, ես տեսնել չկարողացա *(ՐԿ, 530)։* Թե ով է նա,

չգիտեմ *(Թ., II, 158)*: Թե որքան ենք զուրկ, որքան ենք մենք խեղճ, էդ հաստատ գիտե ինքը՝ միայն տերը *(Թ., II, 35)*: Թե քանի տարեկան ժամանակ է Թիֆլիսում եղել, չգիտեմ *(Մուր., V, 49)*:

Մի շարք ներգործական բայերի խնդիր երկրորդական նախադասություններն արտահայտում են նաև նպատակայնություն. մի կողմից երկրորդական նախադասությունը կազմում է ներգործական բայի ստորոգյալի խնդիրը, մյուս կողմից էլ արտահայտում է նպատակայնություն, որ կապված է գլխավոր նախադասության բայ-ստորոգյալի գործողության բնույթի հետ. օրինակ՝ Խազեինը թողեց, որ գնաք *(Նար., VII, 272)*: *Այս նախադասության մեջ խնդրային նշանակությունը շատ թույլ է. եթե ասենք՝* Խազեինը թույլատրեց, որ գնաք, *այս դեպքում արդեն նպատակայնության հետ կա նաև խնդիր լինելու ըմբռնումը*: Նա թողնում էր, որ շաղակրատեն ուրիշները *(Շիրվ., V, 345)*: Կարգադրեց, որ վերադառնան տուն:

դ) ԻՆՉ-ՈՎ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Խնդիր երկրորդական նախադասությունները կապակցվում են նաև ինչ *հարաբերական դերանունով. ի տարբերություն* որ, թե *շաղկապների,* ինչ *հարաբերականը գլխավոր նախադասության մեջ գերազանցապես ունենում է որևէ հարաբերյալ բառ, իսկ երկրորդական նախադասության մեջ կամ դառնում է ենթակա և կամ խնդիր, այսինքն՝ բացարձակապես շաղկապի կիրառությամբ հանդես չի գալիս. օրինակ՝* Ցույց տվեք մեզ ձեր կոլխոզում այն ամենը, ինչ որ դուք արժանի եք համարում *(ՆԶՀ, 262)*: Նրանք պատմեցին այն բոլորը, ինչ որ գիտեին *(Նույն տեղում, 270)*: Մարդիկ երբեք չեն առնում այն, ինչ իրենց համար հաճելի չէ *(Շիրվ., V, 80)*: Եվ ինչքան հիմի պիտի աշխատեմ, Որ գտնեմ ես այն, ինչ զուր կորցրի *(ԶԸ, 104)*: Եվ դեռ չենք տվել կյանքում մենք այն, ինչ կարող էինք զուցե մենք տալ *(Զե, 188)*: Նա տեսնում է լոկ այն, ինչ տեսնում էր *(ԶԸ, 65)*: Այն չի ասել, ինչ պետք է ասեր *(ՍԽՀ, I, 8)*: Հաղորդեց այն բոլորը, ինչ որ գիտեր ինքը և ինչ որ նախատեսում էր ինքը *(Ր., III, 297)*:

Ինչպես տեսնում ենք, ինչ *հարաբերականին համապատասխանում են* այն ամենը, այն բանը, այն բոլորը, բոլորը, այն, նույնը, ամենը, ամբողջը *հարաբերյալները. օրինակներից պարզ երևում է, որ միայն* ինչ *հարաբերականն առանց* որ-*ի հազվագյուտ է: Հավանորեն* ինչ *նախապես մտել է գլխավոր նախադասության կազմը*

և հանդես է եկել իբրև հարաբերյալ, երբ դեռևս ուներ բան, մի բան *նշանակությունը։ Համեմատիր՝* Ամենայն ինչ, որ դիւրաւ անկանի ի բուռն, ընդ արհամարհանս ունիմ: *Ամենահին այս նախադասությունը նույնպես կարելի է անդամահատել, ինչպես հիմա ենք անում.* Ամենայն. ինչ որ... *և այլն։*

Այդպիսի հարաբերյալներ ունեցող բարդ ստորադասական նախադասության երկրորդական նախադասությունները բոլորը չէ, որ որոշակի ուղիղ խնդիր են։ Դրանցից որոշակի ուղիղ խնդիր է այն երկրորդական նախադասությունը, որը հարաբերում է նույն, այն *հարաբերյալին. օրինակ՝* Մարդիկ երբեմն չեն անում այն, ինչ որ իրենց հաճելի *չէ (Շիրվ., V, 80)։* Մարդիկ երբեմն չեն անում իրենց հաճելի չեղածը: Անուշը Առաքել ամու կնոջը պատմել է նույնը, ինչ որ Առաքել ամին լսել է Ղուկաս Տոնոյանից: Պատմել է Ղուկաս Տոնոյանից լսածը: *Սրանք կարելի է դիտել նաև իբրև բացահայտիչ երկրորդական նախադասություններ։*

Մնացած դեպքերում, երբ հարաբերյալներ են՝ բոլորը, ամենը, մի բան, այն բոլորը, ամեն բան, այն ամենը *և այլն, երկրորդական նախադասությունը կամ հանդես է գալիս այդ հարաբերյալների հետ միասնաբար իբրև ուղիղ խնդիր, կամ դառնում է դրանց համար որոշիչ, և կամ դրանք են հանդիսանում վերածված երկրորդական նախադասության համար որոշիչ. օրինակ՝* Նրանք պատմեցին այն բոլորը, ինչ որ գիտեին *(ՆՉՀ, 270)։ Այս բարդ նախադասությունը կարելի է պարզել հետևյալ ձևով.* Նրանք պատմեցին *(իրենց)* բոլոր գիտցածները: Նրանք պատմեցին *(իրենց)* գիտցած բոլորը։ *Առաջին դեպքում երկրորդական նախադասությունը խնդիր է, իսկ երկրորդ դեպքում՝ որոշիչ։ Մի օրինակ էլ վերցնենք* ամենը *հարաբերյալով.* Ցույց տվեք մեզ ձեր կոլխոզում այն ամենը, ինչ որ դուք արժանի եք համարում *(ՆՉՀ, 262)։* Ցույց տվեք մեզ ձեր կոլխոզում ձեր արժանի համարած ամենը. *կամ՝* ամեն արժանի համարածները: *Իսկ եթե հարաբերյալն է* բան *բառը, ապա խնդիր նախադասությունը գերազանցապես որոշիչ է. օրինակ՝* Ես պահանջում եմ այն բանը, ինչ որ դու բերել ես: Ես պահանջում եմ քո բերած բանը: *Համեմատիր՝* Եվայի մեջ տեսնում էր մի բան, որ միանգամայն գրավել էր նրան *(Նար., VI, 58)։*

Ինչ *հարաբերականով կապակցվում են նաև այնպիսի ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններ, որոնց գլխավոր նախադասությունները ոչ մի հարաբերյալ չունեն։ Այս դեպքում արդեն երկրորդական նախադասությունը որոշակի կերպով խնդիր է։*

Այս պարագայում էլ սակայն ինչ, ինչ որ *հարաբերականները կամ երկրորդական նախադասության մեջ ենթակա են, կամ որևէ խնդիր. օրինակ՝* Կանենք, ինչ որ անհրաժեշտ է *(ՆՁՀ, 409)։* Միտդ պահիր, ինչ որ ասում եմ քեզ *(Թ., III, 217)։* Մտիր այստեղ և կգտնես, ինչ որ փնտրում ես *(Փափ., 243)։* Լավ, արա, ինչ որ ուզում ես *(Շիրվ., VI, 12)։* Կուզեիր շահել, ինչ որ սեպում ես կյանքիդ մեծ զարդը *(Շեքս., I, 227)։* Էգուց էլ կանես, ինչ որ արել ես *(Թ., III, 263)։* Էլ չես գտնիլ, ինչ կորցնես, ամբողջ կյանքդ թեկուզ տաս *(Թ., II, 164)։*

Ինչ *հարաբերականով կապակցվող ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններն ավելի դյուրավ են նախադաս լինում, քան* թե, որ *շաղկապներով. մանավանդ այս վերջինով նախադաս երկրորդական ուղիղ խնդիր նախադասությունները քիչ են պատահում։ Ահա* ինչ *(ինչ որ) հարաբերականով նախադաս ուղիղ խնդիր նախադասությունների մի քանի օրինակներ՝* Ինչ ուզում են, թող ասեն, ինչ աչքով ուզում են, թող նայեն *(Նար., VII, 247)։* Ինչ որ քո սիրտը ուզի, կկատարեմ ամենայն սիրով *(Թ., III, 343)։* Ինչ որ խոստացել ես, պետք է կատարես *(Նույն տեղում, 310)։* Ինչ ուզում ես արա *(Նույն տեղում, 329)։* Ինչ որ լսում, գրում էին իրենց թղթերում *(«Ընտիր էջեր», 1079)։*

Երբեմն կիրառվում է ինչ *հարաբերականով կապակցվող միջադաս ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն. օրինակ՝* Այն, ինչ գիտնականները մտածում են առանձնասենյակներում, հիմա բերում ստուգում են այստեղ *(ՍԽՀ, I, 179)։* Այն, ինչ որ իմ սիրտն է զգում, հազիվ այս տան մեջ կարող է մի ուրիշը զգալ *(Շիրվ., VI, 25)։*

ե) ՈՎ-ՈՎ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունը կապակցվում է նաև ով (ով որ) *հարաբերական դերանունով, որ գլխավորապես հարաբերում է* նրան, բոլորին, ամենին, մի քանիսին, մեկին, երկուսին, *այսինքն՝ այնպիսի հարաբերյալների, որոնք անձ են արտահայտում. օրինակ՝* Բայց նորից սիրել նրան, ով խաղում է ուրիշի նվիրական զգացումների հետ, որ տարբերություն է դնում վերևի ու ներքևի միջև. ավաղ, սինյորա, ես չեմ կարող *(Նար., VII, 128)։* Այժմ չպետք է արհամարհես նրան, ով որ փորձանքի ժամանակ թանկ էր քեզ համար *(Թ., III, 310)։*

Ով *(ով որ) հարաբերական դերանունով կապակցվում են նաև այնպիսի երկրորդական նախադասություններ, որոնց գլխավորը վերոհիշյալ հարաբերյալ բառերը չունի. այդ հարաբերյալները զեղչվում են, սակայն դրանց փոխարեն անձ է մտածվում, որովհետև ով-ը անձի հարաբերականն է. օրինակ՝* Ում որ հաղթել չէր կարենում, Շողոմելով կանչում էր նա *(Թ., II, 128)։* Ումը որ լավ եք համարում, ուղարկեցեք *(Ր., III, 526)։* Ով որ հայ ազգից մտել է իր մոտ, փոխել է իսկույն, դարձրել աղավնի *(ՀԹԵԺ, I, 336)։*

Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները մասամբ կապակցվում են իբր թե, երբ *շաղկապներով, որոնցից առաջինը դեռևս պահպանում է իր՝ եղանակավորիչի նշանակությունը, իսկ երկրորդը ժամանակի շաղկապ է։ Հիշյալ նշանակությունները այս կամ այն չափով արտահայտվում են ուղիղ խնդիր նախադասությամբ լրացվող բարդ ստորադասական նախադասության մեջ։ Համեմատիր՝* Ասում են, իբր թե Ներսես հայրապետն ինքը զայրացած է *(ՍԶՊԹ, 344)։* Ես սիրում եմ, երբ դու աշխատում ես:

Որոշիչ երկրորդական նախադասությունները քննելիս նկատեցինք, որ մի շարք իմացական և ասացական բայերի արմատներից կազմված գոյականներ իրենց համար որոշիչ երկրորդական նախադասություն են առնում հենց իրենց բովանդակությունը, այն հաղորդումը, ասվածը, որի անունով հանդես է գալիս ասացական, իմացական բայերից կազմված գոյականը. օրինակ՝ Նրան հաճելի է այն միտքը, թե շուտով եղբայրը տուն է գալու: Շուտով եղբայրը տուն է գալու *նախադասությունը գործողության անուն հանդիսացող գոյականի բովանդակությունն է, այսինքն՝ նշանակությամբ դա նույնն է, եթե ասվեր* նրան հաճելի է մտածել, որ եղբայրը գալու է: *Բայց, ինչպես ասվել է արդեն, այդպիսի գործողության անունների հետ կապված երկրորդական նախադասությունները երկակի բնույթ ունեն, այսինքն՝ խնդրային հարաբերության հետ դրանք հիմնականում արտահայտում են որոշիչային (որակական) հարաբերություն (տե՛ս «Որոշիչ երկրորդական նախադասություն»)։ Օրինակներ՝* Ճշմարիտ է այն խոսքը, թե մարդուս գլխավոր դատավորը իր խիղճն է *(ՊՊԵԺ, I, 566)։* Ես ու քեռակինն այն կարծիքին ենք, որ նա թե ցամաք ձորի աղվես է և թե ցոկ-ցոկ *(ԱՇ, 107)։ Այս վերջին նախադասությունը նույնն է, ինչ որ եթե ասվեր.* Ես ու քեռակինը կարծում ենք, որ նա թե ցամաք ձորի աղվես է և թե ցոկ-ցոկ: Հավանաբար ամեն մեկին զբաղեցնում էր այն միտքը, թե ինչպես սկսի զրույցը *(ԲՎԻԳԵ, 7)։* Նույն կարծիքին էր, որ այս

քննիչն իրանից առաջ եկածների կարգիցը պիտի լինի *(ՊՊԵԺ, I, 569)*։ Այնուամենայնիվ նա իրեն վատ էր զգում այն գիտակցությունից, որ ահա մի ամբողջ ամիս է, ինչ մի կարգին գործ չի ձեռնարկել *(ՍԽՀ, I, 143)*։ Առավոտը վաղ ամբողջ Բաղդադը թնդում է մունետիկների ձենից, թե Հարուն Ալ Ռաշիդ թագավորն էսպես է հրամայում *(Թ., III, 181)*։ Եվ շատերը կարծիք ունեին, թե այդ իմաստունները ալքիմիայի արհեստով շինում էին նրա համար ազնիվ մետաղներ *(Ր., 2, 301)*։

Գրեթե նույն բնույթն ունեն այն երկրորդական նախադասությունները, որոնք լրացում են դառնում հարադրական բարդությամբ կազմված ստորոգյալի այնպիսի գոյական հարադիրի համար, որը բայարմատից է կազմված և արտահայտում է գործողություն. օրինակ՝ Հանկարծ հրաման արավ, որ էլ փինաչություն չպիտի լինի *(Թ., III, 180)*։ Պարզ հասկացողություն չէր կարողացել կազմել, թե ինչ են կամենում անել չար մարդիկ *(Ր., III, 297)*։

Երբեմն այդպիսի գոյականների և որոշ բայ-ստորոգյալների երկրորդական լրացուցիչ նախադասությունը պայմանականորեն է պատկանում դրանց, որովհետև դրանցից հետո որևէ ձևով եղել է մի ասացական բայ-ստորոգյալ, որևէ դերբայական ձև, մի այնպիսի բայ-ստորոգյալով նախադասություն, որ հետագայում զեղչվել է, իսկ սրանց պատկանող բուն ուղիղ խնդիր նախադասությունը մնացել է հիշյալ գոյականների ու բայ-ստորոգյալների համար լրացում. օրինակ՝ Գրեց մի թունդ հրովարտակ, թե ով ունի բեղ ու մորուք, ձեռներին կոշտ, գլխին գտակ, թող գա գրվի երկու օրում *(ԳՄԵ, 247)*։ *Այս նախադասությունը մտածվում է այսպես.* գրեց մի թունդ հրովարտակ, որի մեջ ասված էր, թե... *և այլն*։ Նկատողություն արին, թե ինչու ինքն էլ մյուսների նման չի վարվել *(ՍՉ, 3, 357)*։ *Եղել է* նկատողություն արին, ասելով, թե...։ Գիժը մին էլ մտիկ արավ, որ էն արև աշխարհն արդեն պատած ողջ սև՝ լացով թացով սուգ է անում *(Թ., 1, 341)*։ Նայում էր թփերի արանքը, թփերի տակ, թե խաղող գողացող ոզնի չի երևում արդյոք *(ՍՉ, 5, 222)*։ *Այստեղ պակասում է* որ տեսնի, *որի համար էլ ուղիղ խնդիր է երկրորդական նախադասությունը։*

Երբեմն ուղիղ խնդիր նախադասությունը երկրորդ ուղիղ խնդրի կիրառությամբ է հանդես գալիս. այս լինում է այն պարագայում, երբ գլխավոր նախադասության ստորոգյալը ունենում է մի բառային ուղիղ խնդիր և հետո միաժամանակ առնում է նաև ուղիղ խնդիր նախադասություն. օրինակ՝ Իմ տատս համոզում էր բոլորին,

որ նա գնացքից մեռած կլինի *(ԳՄՆ, 348)։ Այս նախադասության մեջ ուղիղ խնդիր է* բոլորին, *ապա դրանից հետո իբրև* համոզել *բայց ներքին բովանդակություն, այսինքն՝ այն, ինչ որ ասվելու է, հանդես է գալիս երկրորդական նախադասության ձևով։* Մեզ ով կթողնի, որ էդպիսի բան անենք *(ԱՇ, 131)։*

Բ. ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունները կատարում են միևնույն պաշտոնները, ինչ որ պարզ նախադասության մեջ արտահայտում են սովորական անուղղակի խնդիր բառերը։ Անուղղակի խնդիր նախադասությունների զանազանությունը առնչվում է գլխավոր նախադասությունների մեջ կիրառվող այն ստորոգյալների հետ, որոնց համար խնդիր են հանդիսանում երկրորդական նախադասությունները։ Գլխավոր նախադասությունների ստորոգյալները կարող են լինել ներգործական, չեզոք և կրավորական սեռի բայեր։ Ներգործական բայերը մատուցման բայեր են, իսկ դրանցից կախված երկրորդական նախադասությունները՝ մատուցման անուղղակի խնդիրներ։

ա) ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Մատուցման անուղղակի խնդիր նախադասությունները առնչվում են գլխավոր նախադասության մատուցման բայ-ստորոգյալների հետ. այդպիսի բայ-ստորոգյալներ են՝ տալ, հանձնել, մատուցել, նվիրել, հղել, ուղարկել, պարգևել, հանձնարարել *և այլն. օրինակ՝* Ով որ քեզ ցույց տալու լինի, ձին նրան կհանձնես *(Բ., III, 20)։* Հնարավորություն տանք աշխատելու բոլոր նրանց, ովքեր ընդունակ են աշխատելու *(ՆՉՀ, 291)։* Աշխոր տալիս են նրան, ով աշխատում է *(նույն տեղում, 103)։* Օ՜, նոր աշխարհ պիտի տանք նրանց, ում կյանքը անիծել է, ով նորտ է, մերկ է ու անտուն *(ՉԸ, 388)։*

Ինչպես նկատում ենք, մատուցման բայերը գերազանցապես պահանջում են անձ արտահայտող հարաբերյալ (նրան, նրանց), որին համապատասխան անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունը կապակցվում է ով *հարաբերական դերանունով։*

Այս կարգի երկրորդական նախադասությունը լինում է թե՛ նախադաս և թե՛ ետադաս։ Միջադաս հազվադեպ կարող են պատահել։

բ) ՀԱՆԳՄԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հանգման անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունները առնչվում են գլխավոր նախադասության այնպիսի ստորոգյալների կամ անորոշ դերբայների հետ, որոնք ցույց են տալիս հանգում, փակչում, կպչելը, կցվելը, հպվելը, կառչելը. *օրինակ՝* Միանում է նրան, ում կամենում է: Կապված է եղել նրան, ով հաճելի է եղել: Հանգել է այն բանին, որ այլևս չի ցանկանում խոսել նրա հետ: Կպչում է նրան, ով խանգարում է առաջ գնալ:

գ) ՇԱՀԻ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Շահի անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունը կատարում է այն առարկայի պաշտոնը, որի օգտին կամ վնասին կատարվում, տեղի է ունենում մի որևէ գործողություն։ Եվ քանի որ այդպիսի առարկան հայերենում արտահայտվում է տրական հոլովով, ուստի շահի անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունը դերբայական լրացման է վերածվում տրական հոլովով. օրինակ՝ Ով մինն ուներ, տասն եմ բերել, Ով տասն ուներ, քսան արել *(Թ., II, 108)։* Մինն ունեցողին տասն եմ բերել, տասն ունեցողին քսան արել:

դ) ՆԵՐՔԻՆ ԶԳՏՈՒՄ, ՀՈԳԵԿԱՆ ՈՐՈՇ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄՈԶՄՈՒՆՔ, ՀՈՒՅՍ, ՀԱՎԱՏ ԵՎ ԱՅԼՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՅ-ՍՏՈՐՈԳՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հոգեկան ներքին կարողություն արտահայտող նախանձել, հուսալ, զարմանալ, համոզվել, հույս ունենալ, հավատալ, համաձայնել, զգալ, վերաբերվել *և մի քանի այս կարգի այլ բայեր դառնալով գլխավոր նախադասության ստորոգյալ՝ կապակցվում են այնպիսի երկրորդական նախադասությունների հետ, որոնք դառնում են հիշյալ բայ-ստորոգյալների համար անուղղակի խնդիր։ Այս բայ-ստորոգյալները լինելով չեզոք սեռի բայեր՝ արտահայտում են ներքին առնչակցություններ, որ վերաբերում են անուղղակի խնդրին. օրինակ՝* Համոզված եմ, որ մեր աշխարհում ես էլ կլինեի քաջերի շարքում *(«Մծիրի»)։* Հուսով եմ, որ ամենքդ առողջ եք *(Շիրվ., VI, 17)։* Ես դեռևս հույս ունեմ, որ իմ լացով և արտասուքով կարող կլինեմ դարձնել նրան յուր չար ճանապարհից *(Ր., III, 301)։* Ես համոզված եմ, որ վատ գործ չեմ կատարում *(Ր., III, 301)։* Համաձայնիր, որ ես տղամարդ եմ և գործնական մարդ *(Շիրվ., VI, 27)։* Համոզվիր, որ ես ունեմ մի ուժ *(նույն տե-*

դում, 28)։ Համաձայնվիր, ու դա շատ էլ ցանկալի հեռանկար չէ ֆեզ համար *(Շիրվ., V, 72)*։ ...Այդպիսին, հարկավ, կարոտելով կկարոտի այն ամենին, ինչ որ անարժեք է բնության զավակի համար *(Մուր., IV, 66)*։ Միաժամանակ համամիտ էր, որ Դրնգանի ձորը խանլար փաշայի հաշը չի *(ԱԲԾ, 360)*։ Սովոր էր, որ կենտրոն դառնար ամեն ուշադրության, ամեն հիացմունքի *(Փափ., 398)*։ Որովհետև համատացած էր, թե նա իրանից միայն պետք է յուր պարտության վրեժը առնի *(«Ընտիր էջեր», 595)*։ Բայց նա փաշայի վրա վստահություն չունի, թե նա իր ժամանակին կներկայացնի նշանակված տուրքը *(Րկ., 202)*։ Հույս ունիմ, թե նա կհարգե մեր խնդիրը *(Մուր., III, 374)*։ Նա համոզված էր, թե իր կինն ու Ջամալյանը իրար հետ կապված են *(ՔԹՈՀ, 596)*։ Ինչ ուզում ես արա, ես հոժար եմ *(նույն տեղում, 606)*։ Առանց այլևայլության համաձայնվեց, որ Նորիկ Լևոնիչն այցելի իրեն *(նույն տեղում, 671)*։ Հուսով եմ, որ գործերդ լավ են *(նույն տեղում, 679)*։ Ընկեր Սյոման ես համաձայն կլինի ինձ հետ, որ ես պարտավոր էի հայտնել այդ դեպքում Մաքսիմին *(ԴԴ, I, 236)*։

Կապակցման եղանակով ու միջոցներով այս կարգի նախադասությունները գրեթե չեն տարբերվում ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններից, ուստի պետք չկա այստեղ կրկնել այն, ինչ արդեն խոսվեց ուղիղ խնդիր երկրորդական նախադասության առնչությամբ. միայն պետք է նշել, որ մեր բերած օրինակների մեջ կան այնպիսի երկրորդական նախադասություններ, որոնց դերբայական դարձվածը ոչ միայն տրական հոլովով է կիրառվում, այլև կապերով։ Պետք է նշել նաև, որ այս կարգի բայերից շատերի անուղղակի խնդիրը ինչպես երկրորդական նախադասությամբ է արտահայտվում. այդ երկրորդական նախադասությունը որևէ հոլովական ձևի վերածելը մասամբ արհեստական է. օրինակ՝ Ու երբ համաստիացավ, որ հիրավի եկել է Արամյանը *(ՔԹՈՀ, 654)*։ Ու երբ համաստիացավ Արամյանի հիրավի գալուն:

Անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունները կապակցվում են սպասել, հետևել *բայ-ստորոգյալների հետ, որոնցից առաջինը երբեմն ունենում է նաև հայցական հոլովով խնդիր. օրինակ՝* Այնտեղ պառկեց՝ շղդարելով յուր հեզ աչքերով հետևել, թե ուրպես յուր սիրելի տերը դանդաղ, անհամաչափ քայլերով շարունակում էր անց ու դարձ անել սենյակի մեջ *(Ր., III, 30)*։ Նա ռուպե

առ ռոպե սպասում է, թե ահա, ահա նույն փառաբանող բազմությունը կզահավիժի իրեն մինչև անարգանաց սանդուղը (*ՊՊԵԺ, I, 567*)։ Սպասում էի, որ դու հաշտության առաջին խոսքն արտասանեիր (*Մուր., III, 390*)։

ե) ՍՏԱՑԱԿԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Երբ գլխավոր նախադասության մեջ հարաբերյալը ցույց է տալիս այն առարկան, որին մի բան պատկանում է, ապա երկրորդական նախադասությունը հենց այդ հարաբերյալի փոխարեն արտահայտում է հիշյալ պատկանելությունը, ստացականությունը։ Որովհետև այս դեպքում անպայման հարաբերյալը տրական հոլովով է դրսևորվում, ուստի երկրորդական նախադասությունը դերբայական լրացում է դառնում ստացական տրականով. օրինակ՝ Ո՛, ես նրանց եմ, ով անսեր է, Ում սիրտը բիրտ է ու հիվանդ (*Չե, 234*)։ Ա՛խ, կուզեի ես հարազատ և ընկեր լինել նրանց, որոնք մոռացված են բանտերում անել։ Եվ կուզեի եղբայր լինել նրանց, որ մթին Չարչարանքներում կորցրել են կրակը հետին (*Տ., I, 256*)։ Ու մահս նրան, ով աշխարհ բերում, կյանքը չի զոհում իր ծիլ բալիկին (*ՀՇ, ՀԸ, 118*)։ Կինը ավյալ մոմենտին նրանն է, ով ամենից շատ է սիրում նրան (*ԴԴ, I, 242*)։ Սերը ամենքինն է և ամենից շատը նրանը, ով շատ է սիրում (*Նույն տեղում*)։

Ստացական և շահի անուղղակի խնդիր երկրորդական նախադասություններին մոտ է ձայնարկության կամ ողջույնների հետ կապակցվող անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունը. օրինակ՝ Երանի՛ նրան, ով հայրենական խաղաղ հարկի տակ հանգչում է հիմա, Ում չեն սարսեցնում հուրերը դաժան, Ով զալիք օրվան ժպտում է անահ... Երանի նրան, ում հաստատ ուղին Բացված է ազատ և՛ հեռու, և՛ լայն, Ում չի կասեցնում կասկածը մթին, Ում քաղցր կոչ է թվում ամեն ձայն: Երանի նրան, ում մի մայր գորտ Օրորում է իր երգով հնամյա, Ում չի սարսեցնում մի ահ անծանոթ, Ով հայրենական տուն ունի հիմա... Ով պարզ նայում է մթին գիշերին, Ով պարզ ժպտում է արևոտ օրվան, Ով խաղաղ սրտով մտնում է շիրիմ (*Տ., I, 279*)։ Նրան, ում համար այս զովքն եմ անում, միշտ փառք ու պարիք (*Պուշկին, III, 99*)։ Բոլո՛ր նրանց (ողջույն), ում որ հոգին վառվում է վառ,—բոլոր նրանց հոգիներին արևավառ (*ԽՉԵ, 17*)։

Տրական հոլովով անուղղակի խնդիր նախադասությունների հետ են կապակցվում նաև իմացական բայանուններից և գոր-

ողության անուններից կազմված անվանական ստորոգյալները. օրինակ՝ Նա իրազեկ էր այն բոլորին, ինչ որ խոսում էին Հացավանում *(ՆԶՀ, 271)*։ Աշխարհը գիտակ է, որ նա սիրում է։ Ես տեղյակ եմ, որ նա վաղը ժամանելու է *և այլն*։

գ) ՄԻՋՈՑԻ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Երբ գլխավոր նախադասության հարաբերյալը դառնում է այնպիսի բայերի խնդիր, որի միջոցով կատարվում է տվյալ բայերի գործողությունը, ապա երկրորդական նախադասությունը ստանձնելով հարաբերյալի պաշտոնը՝ դառնում է գլխավոր նախադասության ստորոգյալի միջոցի անուղղակի խնդիրը։ Եվ որովհետև հարաբերյալը բայ-ստորոգյալի պահանջով կիրառվում է գործիական հոլովով, ուստի երկրորդական նախադասությունը դերբայական լրացում է դառնում միևնույն գործիականով. օրինակ՝ Տգեղությունը շեշտվում էր նաև նրանով, որ արևի մեջ շրջագայելով և ծովի ջրից առնված՝ ամեն դեմք շուտով սևանում էր, կորցնում փափկությունը *(Փափ., 398)*։ Նրանց մոտիկությունը ապացուցվում է նաև այն բանով, որ միշտ միասին են լինում:

Հաճախ գործիական հոլովով այս հարաբերյալները սովորական միջոցի անուղղակի խնդիրներ չեն, այլ հոգեկան ներքին զգացողություն արտահայտող բայ-ստորոգյալների անուղղակի խնդիրներ, որոնք արտահայտում են պատճառականություն, վերաբերություն և այլ հարաբերություններ. դրանց համապատասխան էլ երկրորդական նախադասությունները դրսևորում են նույնանման հարաբերություններ. օրինակ՝ Առայժմ խաքանը բավականացավ նրանով, որ վերցրեց պաշարումը *(Լեո, ՀՊ, II, 256)*։ Վարդը շքեղ է հենց նրանով, որ վարդ է *(ԼԹԿ, 216)*։ Մեղավոր է նրանով, որ նրա ձեռքերը ևս մաքուր չեն արյունից *(Ր., III, 314)*։

Այս կարգի երկրորդական նախադասությունները շատ հաճախ կապակցվում են այնպիսի գլխավոր նախադասության հետ, որը հարաբերյալ չունի, բայց այդպիսի նախադասության բայ-ստորոգյալը պահանջում է գործիական հոլովով անուղղակի խնդիր, որը տվյալ դեպքում հանդիսանում է երկրորդական նախադասությունը. օրինակ՝ Ես շատ եմ հետաքրքրվում, թե ինչպես է պարապում եղբայրս *(Նար., IV, 74)*։ Առայժմ գոհ եղեք, որ կա մեկը *(Շիրվ., VI, 25)*։ Մարզպետունին ուրախ էր, որ դարձնում էր նրան հաղթական փառքով *(Մուր., III, 387)*։ Արամյանը ուրախացավ, որ ապասարանում ոչ ոք չկա *(ՔԹՈՀ, 654)*։ Մանուկը հետա-

բրբռվեց, թե Արամյանն ինչպես է *(նույն տեղում, 680)*։ Մի պարծենա, որ քո երգում երգեց մի օր թախիծը սրբ: Մի պարծենա, որ եղել ես մի օր շռայլ *(ԳՄՇ, 8, 9)*։

է) ԱՆՋԱՏՄԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Անջատման անուղղակի խնդիրները կապակցվում են շարժում արտահայտող՝ հեռանալ, փախչել, անջատվել, մեկուսանալ, բաժանվել *և այս կարգի այլ բայերի հետ։ Երբ գլխավոր նախադասության ստորոգյալները այս կարգի բայեր են և սրանց հետ կապակցվում է մի երկրորդական նախադասություն, փոխարինում է հիշյալ բայ-ստորոգյալների անուղղակի խնդիրներին (սրանք գլխավոր նախադասության մեջ արտահայտվում են հարաբերյալ ձևական բառերով), ստացվում է անջատման անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն, որ դերբայական դարձվածային լրացում է դառնում բացառական հոլովով. օրինակ՝* Փախիր նրանից, ով քեզ խաբում է: Փախիր քեզ խաբողից: Հեռացիր այն ամենից, ինչ անախորժ է: Հեռացիր ամեն անախորժից: Ես խուսափում եմ այն ամենից, ինչ մարդուն չարիք է պատճառում:

Բացառական հոլովով անուղղակի խնդիր են առնում հոգեկան ներքին կարողություն արտահայտող և մի քանի այլ բայեր, որոնց խնդիրներն ունեն միջոցի, պատճառական, ներգործող, մասնական և այլ նշանակություններ։ Երբ հիշյալ բայերը գլխավոր նախադասության մեջ ստորոգյալ են, երկրորդական նախադասությունները դրանց հետ կապակցվում են իբրև միջոցի, մասնական, ներգործող, վերաբերության անուղղակի խնդիրներ՝ բացառական հոլովի հարաբերությամբ. օրինակ՝ Պայծառ Մարգարյանը օգտվելով այն բանից, որ Միքայելյանը ժամանակավորապես բացակայում է քաղաքից... *(ՍՀ, № 7, 55)*։

Երբեմն կարող է գլխավոր նախադասության ձևական խնդիրը (բանից) զեղչվել. այս երևույթը չի փոխում երկրորդական նախադասության բնույթը. օրինակ՝ Բայց վախենում եմ, թե նա ճամփի յուր որոշման մեջ *(Մուր., III, 374)*։ Վախենում էր, որ ճանկարծ ծանոթ մարդ տեսնի *(ՔԹՈՀ, 713)*։

Եթե գլխավոր նախադասության հարաբերյալը որևէ կապի հետ այն *ցուցական դերանուն է, այս դեպքում երկրորդական նախադասությունը ոչ թե կապով որևէ անուղղակի խնդիր է, այլ պարզապես կապի խնդիր, այսինքն՝* այն *հարաբերյալին փոխարինում է երկրորդական նախադասությունը, իսկ կապը մնում է, և այս*

վերջին երկուսը կազմում են անուղղակի խնդիր. օրինակ՝ Վերջում կար ինչ-որ հաստատ հավատքի պես մի բան առ այն, որ պետք էր վերջանար այդ ամենը և ծագեր ինչ-որ արև *(ԳՄԵ, 453)։* Թե ինչպես ազդեցին նրանք հայ կյանքի վրա, ինչ դրություններ ստեղծեցին երկրում, մենք այդ մասին գրեթե ոչինչ չգիտենք *(Լեո, ՀՊ, 260)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Այստեղ քննվեցին մի քանի հիմնական անուղղակի խնդիր երկրորդական նախադասությամբ բարդ ստորադասական նախադասություններ. կան նաև այլ կարգի անուղղակի խնդիր երկրորդական նախադասություններ, որոնք նույն եղանակներով ու ձևերով են կապակցվում գլխավոր նախադասությունների հետ, ինչպես այստեղ քննվածները։ Համեմատիր, օրինակ, հաղորդման անուղղակի խնդիր հետևյալ երկրորդական նախադասությունները մյուսների հետ. Եվ այդ օրն ով եկավ Աթա ապոր տունը՝ տեսնելու նրա հին ճանաչին, Օրուջը պատմեց *(ԱԲԵ, 380)։* Ում որ գտնես, հայտնիր իմ խնդիրքը։ Ասում եմ, ում պատահում եմ։

2. ՊԱՐԱԶԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարագա երկրորդական նախադասությունները լրացնում են գլխավոր նախադասության ստորոգյալը կամ նրա որևէ բայական անդամը և արտահայտում են ժամանակային, տարածական, նպատակային, պատճառական և այլ հարաբերություններ, որոնք առնչվում են գլխավոր նախադասության ստորոգյալի գործողության հետ։

Պարագա երկրորդական նախադասությունները լինում են ժամանակի, տեղի, պատճառի, նպատակի, հիմունքի, զիջական և այլն։

Ա. ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Եթե բարդ նախադասության մեջ երկրորդական նախադասությունը արտահայտում է գլխավոր նախադասության ստորոգյալի գործողության ժամանակը և կամ գլխավորի ու երկրորդականի կապակցման մեջ ստեղծվում են եղելությունների, գործողությունների փոխհարաբերություն ժամանակի մեջ, ուր երկրորդական

նախադասությունը գլխավորի նկատմամբ ստորադասական դերք ունի և ծառայում է պարզաբանելու այն, ապա այդպիսի նախադասությունը ժամանակի երկրորդական նախադասությամբ բարդ նախադասություն է. օրինակ՝ Երբ մարդը տանից դուրս է գնում, վեր է կենում, տան կան-կարասին, աման չամանը իրար գլխով է տալի *(Թ., III, 162)։*

ա) ԳԼԽԱՎՈՐ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Գլխավոր և երկրորդական նախադասությունների ժամանակների հարաբերությունը պայմանավորվում է նրանց շարադասությամբ։ Նախադաս կիրառված նախադասության ստորոգյալի ժամանակը կարգավորում է ետադաս նախադասության ստորոգյալի ժամանակը։ Ժամանակների լիակատար համապատասխանություն է լինում այն դեպքում, երբ ստորոգյալները կիրառված են միևնույն եղանակներով ու ժամանակներով. օրինակ՝ Մինչ մենք խոսում էինք, մարսելցին տասը քայլով հեռվում սպասում էր օրիորդին *(Շիրվ., VIII, 343)։ Երբեմն ժամանակները համապատասխանում են, իսկ եղանակները տարբեր են լինում. օրինակ՝* Երբ դու գաս, ես կգնամ: *Երկու ստորոգյալն էլ ապառնի ժամանակով են կիրառված, սակայն մեկը ըղձական, իսկ մյուսը պայմանական եղանակով է արտահայտված։ Կարող է նաև այնպես լինել, որ եղանակները համապատասխանեն, իսկ ժամանակները տարբերվեն. օրինակ՝* Երբ դու գալիս էիր, ես քեզ տեսա:

Ինչպիսի եղանակներով ու ժամանակներով հաջորդեն միմյանց գլխավոր և երկրորդական նախադասությունների ժամանակները, այս վերջինները կարող են միմյանց լրիվ կամ մասնակի կերպով համապատասխանել։ Այս նշանակում է, որ մի դեպքում երկու նախադասության ստորոգյալների գործողությունները սկըսվում են ճիշտ միևնույն պահին և վերջանում են միաժամանակ, իսկ մյուս դեպքում մի ստորոգյալի գործողության ամբողջ ժամանակը համապատասխանում է մյուսի գործողության ամբողջ ժամանակի միայն մի մասին։

բ) ՄԻԱԺԱՄԱՆԱԿՅԱ ՍՏՈՐՈԳՅԱԼՈՎ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ասվեց, այս կարգի բարդ նախադասության առանձին նախադասությունների ստորոգյալների միաժամանակությու-

նը լինում է լրիվ և մասնակի։ Միաժամանակությունը լրիվ է, երբ գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալների ժամանակները լրիվ իրար ծածկում են. օրինակ՝ Երբ դեռ շունչը արարչական ծավալվում էր օդի մեջ, Երբ դեռ նոր էր կույս աշխարհքում կյանքը խաղում պարզ ու պերճ, Երբ տիրում էր սերն ու հանգիստը անվրդով... Բարի Ալամ թագավորն էր իշխում ու տիրում (Թ., II, 153)։ Մինչ մենք խոսում էինք, մարսելցին տասը քայլով հեռվում սպասում էր օրիորդին (Շիրվ., VIII, 343)։ Մինչև ամրոցում անց էին կենում նախընթաց դեպքերը, նրանք ճաշակում էին սիրո քաղցրությունը (Ր., I, 111)։ Կրակն էր ցայտում նրանց աչք-ունքից. Շանթը՛ շրթունքից, Երբ խոսում էին ծով ամբոխի մեջ (Հակոբյան)։

Վերևում բերված օրինակների մեջ գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալների միաժամանակությունը լրիվ է, իսկ երբ մի նախադասության ժամանակը համընկնում է մյուսի միայն մի պահին և ոչ թե ամբողջ ժամանակին, առաջանում է մասնակի միաժամանակություն. օրինակ՝ Հոգու վրա է լինում Ուքանա թագավորը, որ արծիվը ծղրտում ու վեր է դնում Դիվանային իր հայրենի քաղաքի սահմանում (Թ., III, 231)։ Այստեղ գլխավոր նախադասության ստորոգյալը արտահայտում է տևական գործողություն, իսկ երկրորդականի ստորոգյալը միանգամյա գործողություն է ցույց տալիս, որ համընկնում է նախորդի մի որևէ պահին՝ չնայած երկուսն էլ միևնույն քերականական եղանակով ու ժամանակով են կիրառված։

Մասնակի միաժամանակությունը ցայտուն կերպով դրսևորվում է այն ժամանակ, երբ բարդ նախադասության առանձին մասերից մեկի ստորոգյալն ունի սովորույթի, տևականության, կրկնության նշանակություն, իսկ մյուսի ստորոգյալը միանգամյա գործողություն է արտահայտում. օրինակ՝ Երբ ձիավորները քաղաք հասան, հրապարակում ասեղ գցելու տեղ չկար (ԱԲԵ, 208)։ Կես գիշեր էր, երբ տուն հասան (Նույն տեղում, 215)։ Երբ Կատոն պատրաստվում էր դուրս գնալ, Մարիամը վազեց նրա մոտ (ԲԵԺ, IV, 41)։ Ու մինչ վայրի սլանում էր դեպի հեռուն աշխարհի, Հասավ, բռնեց հզոր ձեռքով Արեգն արագ ու արի (Թ., II, 170)։

Այս դեպքում սովորաբար տևական ժամանակը արտահայտվում է ներկա, անցյալի անկատար ժամանակներով, իսկ միանգամյա գործողությունը՝ անցյալ կատարյալով։

գ) ԳԼԽԱՎՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Այս պարագայում սովորաբար գլխավոր նախադասության ստորոգյալի քերականական ժամանակը արտահայտվում է ավելի առաջ կատարվող գործողությամբ, իսկ երկրորդականի ժամանակը ուշ կատարվող գործողությամբ, չնայած այն բանին, որ երկրորդականը կարող է արտահայտվել մի անցյալ ժամանակով, իսկ գլխավորը՝ ապառնիով. օրինակ՝ Գնանք, քանի անձրևը չի սկսվել *(ՎԱՍԱ, 347)*։ Երբ Օհանը հասավ տուն, տիկինը տնից հեռացել էր: Հեռացիր, քանի դեռ չեմ բարկացել *(Փափ., 298)*։

դ) ԳԼԽԱՎՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՆԱԽՈՐԴՈՂ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Երկրորդական նախադասության ստորոգյալի գործողության ժամանակը կարող է նաև նախորդել գլխավոր նախադասության ժամանակին. նայած կապակցող շաղկապներին, հարաբերական բառերին՝ գլխավոր նախադասության ժամանակի հաջորդումը կարող է լինել անմիջապես և անորոշ. օրինակ՝ Հենց որ առողջացավ, կրկին ծլկեց սարը *(ՆԶՀ, 149)*։ Երբ Արշոն զարթնեց, տեսավ գլուխն ու շորերը թրջված *(ՍԶ, III, 363)*։ Ու երբ հասանք մյուս կայարանը, Ջեկոն նորից եկավ պառավի գոգն ընկավ *(ՍԶ, V, 220)*։ Արևը դեռ չէր ծագել, երբ Նազարը խայթվածի պես զարթնեց *(ԱԻԵ, 334)*։

ե) ԵՐԲ ՇԱՂԿԱՊՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ժամանակի երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են երբ (երբ որ), մինչև (մինչև որ), մինչ, մինչդեռ, քանի դեռ, հենց (հենց որ), քանի (քանի որ), ինչ, որ *հարաբերական բառերով ու շաղկապներով։ Դրանցից յուրաքանչյուրը ուրույն նշանակություն է տալիս երկրորդական նախադասությանը և ունենում է կապակցման, շարադասության ու հարաբերյալ որոշ բառերի գործածության առանձին եղանակներ ու ձևեր։*

Ժամանակի երկրորդական նախադասությունները ամենից հաճախ և ավելի ցայտուն ժամանակային արտահայտությամբ գլխավորի հետ կապակցվում են երբ *բառով, որ աստիճանաբար ստանում է նաև շաղկապային նշանակություն։*

Ժամանակի երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են քերականական ժամանակի որոշ համապատասխանությամբ։ Այս համապատասխանությունը պայմանավորվում է բարդ նախադասության երկու մասերի շարադասությամբ։ Եթե երկրորդական նախադասությունը նախորդում է գլխավորին,

ապա վերջինս չի կարող ամեն եղանակով ու ժամանակով կիրառվել, և ընդհակառակը, եթե գլխավորն է նախադաս, նույն ձևով երկրորդականի եղանակի ու ժամանակի ազատ կիրառությունը սահմանափակվում է։

Ուրեմն բարդ նախադասության մեջ ժամանակների համապատասխանությունը որոշվում է ըստ առաջին նախադասության ստորոգյալի ժամանակի։ Ընդհանրապես քերականական ժամանակը ցույց է տալիս ներկայի, անցյալի, ապառնու անորոշ մի ժամանակ, որ վերցվում է խոսելու պահի նկատմամբ. դրանցից թերևս ներկա ժամանակն է, որ որոշակի համընկնում է խոսելու վայրկյանի հետ, եթե իր բուն նշանակությամբ է կիրառվում. անցյալը և ապառնին խոսելու պահից առաջ և հետո ընկած անորոշ ժամանակ են արտահայտում։ Երկրորդական նախադասությունը գլխավոր նախադասության այդ անորոշ ժամանակները սահմանների մեջ է դնում, որոշ ծանոթ երևույթների, գործողությունների միջոցով, այդ անորոշ ժամանակների առանձին պահեր առանձնացնում է իբրև գլխավոր նախադասության ստորոգյալի գործողության կատարման ժամանակ։ Երբ ասում ենք՝ Ես խոսում էի, պարզ չէ, թե խոսելու գործողությունը անցյալում երբ է կատարվել։ Այդ գործողությունը տեղի է ունեցել քանի տարի առաջ, թե խոսելուց մի ժամ առաջ. սակայն եթե ասում ենք՝ Երբ դու եկար, ես խոսում էի. այս՝ երբ դու եկար նախադասության գործողության կատարման ժամանակը խոսակցին հայտնի է, ուստի հենց դրանով էլ որոշվում է անցյալի այն պահը, երբ տեղի էր ունենում գլխավոր նախադասության գործողությունը։ Երկրորդական նախադասության ապառնի ժամանակը չի կարող որոշել գլխավոր նախադասության անցյալ կամ ներկա ժամանակները, եթե սրանք իրենց բուն նշանակությամբ են կիրառված։

Երկրորդական նախադասությունները կարող են ամեն քերականական եղանակով ու ժամանակով կիրառվել՝ համապատասխան գլխավոր նախադասության ստորոգյալի եղանակի ու ժամանակի, եթե այս վերջինը նախադաս է։

Եթե երկրորդական նախադասությունը նախադաս է և արտահայտվում է սահմանական եղանակի ներկա ժամանակով, գլխավոր նախադասության ստորոգյալը դրվում է սահմանական եղանակի ներկայով և երկրորդական բաղադրյալ ժամանակի ներկայով։ Նույնը կարելի է շուռ տալ և ասել գլխավոր նախադասության մասին. օրինակ՝ Երբ խստադեմ ինձ ես նայում դու հանկարծ, Ասես

սրտիս մաճկան դաժան բոթ ես, չան *(ՉԸ, 44)*։ Բայց երբ մտաբերում եմ անցյալը, կրկին զարթնում են վաղեմի հիշողությունները *(«Ընտիր էջեր», 488)*։ Այս րոպեիս էլ իմ մարմնի վրա դող է ընկնում, երբ մտաբերում եմ այն սարսափելի գիշերները *(նույն տեղում, 491)*։ Երբ դու կարդում ես, ես գնալիս եմ լինում։

Սահմանական եղանակի ներկա ժամանակով կիրառված գլխավոր և երկրորդական նախադասությունները գերազանցապես արտահայտում են միաժամանակություն. միայն գլխավոր նախադասության ստորոգյալի ժամանակի առաջին մի կարճ պահը կարող է հետևել երկրորդականի ժամանակի սկզբնական պահին՝ անկախ նրանց շարադասությունից. օրինակ՝ Երբ դու գալիս ես, նա գրում է։ Երբ Դավիթը կարդում է, Անուշիկը նվագում է։ *Միայն երկրորդական բաղադրյալ ժամանակը ավելի վաղ է սկսվում. օրինակ՝* Ես գրելիս եմ լինում, երբ դու գալիս ես։ Երբ դու գրելիս ես լինում, ես գալիս եմ։

Երբ նախադասություններից մեկի ստորոգյալը ներկայով է, մյուսը կարող է կիրառվել երկրորդական բաղադրյալ ժամանակի հարակատար և ապառնի ներկաներով. օրինակ՝ Երբ դու գնալու ես լինում, ես գալիս եմ։ Երբ ես խոսում եմ, նա գնացած է լինում։ Երբ դու կարդում ես. նա գրելու է լինում, գրած է լինում։

Երկրորդական նախադասության ստորոգյալը արտահայտվում է սահմանական եղանակի անցյալ անկատարով, եթե գլխավոր նախադասության ստորոգյալը դրված է նույն ժամանակով, կամ ընդհակառակը. օրինակ՝ Երբ Մարիամին սիրում էին, Մագդաղը խլում էր նրա գդակը, դնում էր իր գլխին *(«Ընտիր էջեր», 490)*։ Ամեն առավոտ, երբ ծագում էր ոսկեղենյան լուսաբաց, նրա առաջին ճառագայթները ողողում էին շինական աղջիկների աշխատանքը *(Ր., III, 473)*։ Ինձնից հեռու թափառում էիր, երբ ողջ էիր դու *(Իսահակյան)*։

Գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալների անցյալի անկատար ժամանակները միմյանց նկատմամբ կարող են ցույց տալ միաժամանակություն, նախաժամանակություն և ետժամանակություն. օրինակ՝ Կրակն էր ցայտում նրանց աչքունքից, Շանթը շրթունքից, երբ խոսում էին ծով ամբոխի մեջ *(միաժամանակություն)*։ Այդ պատճառով սաստիկ պատժվում էր աշակերտը. երբ նրան նկատում էին խաղալիս *(երկրորդական նախադասության ստորոգյալը նախաժամանակություն է արտահայտում)*։ *Համեմատիր՝* Երբ պատահում էր ճանապարհին ոտքը գետին

դնել, նա իսկույն զարկում էր ոտին *(«Ընտիր էջեր», 496)։* Մշտական, երբ որ կռիվ էր գնում, էնտեղ էր քո ներն իր աղոթքը անում *(Թ., II 113)։ Այս վերջին օրինակում գլխավոր նախադասության ստորոգյալի ժամանակը նախորդում է երկրորդական նախադասության ժամանակին։*

Երկրորդական նախադասության ստորոգյալը արտահայտվում է անցյալի անկատարով նաև այն ժամանակ, երբ գլխավոր նախադասության ստորոգյալը դրված է անցյալ կատարյալով. օրինակ՝ Երբ անցնում էին քաղաքային այգու մոտով, նրանցից ինչ-որ մեկն առաջարկեց մտնել այգի *(Զեխով, II, 153)։* Երբ մենք Բենժամենի հետ միասին իջնում էինք ներքևի հարկը, վազվռուն կրակոտ աչքերով մեզ առաջ վազեց Լազգին *(Զե, 374)։*

Քանի որ անցյալի անկատարը արտահայտում է տևական անկատար, իսկ անցյալ կատարյալը ցույց է տալիս միանգամայն ոչ- տևական գործողություն, ուստի այս վերջինը համապատասխանում է նախորդի միայն մի փոքր պահին։ Այս դեպքում անցյալի անկատարը սովորաբար արտահայտում է այնպիսի գործողություններ, որոնք տևական ժամանակ են պահանջում, իսկ անցյալ կատարյալը դրան հակադիր մի կտրուկ միապահ գործողություն է դրսևորում։

Երբ շուռ տանք այնպես, որ երկրորդական նախադասությունը արտահայտվի անցյալ կատարյալով, իսկ գլխավորը՝ անցյալի անկատարով, դարձյալ դրությունը չի փոխվի. այս անգամ էլ երկրորդական նախադասության ստորոգյալի ժամանակը կհամապատասխանի գլխավոր նախադասության ստորոգյալի տևական ժամանակի մի պահին. օրինակ՝ Երբ Վաչագանը հարցրեց Վաղինակին. մեր որսորդները գնում էին տուն: Երբ մտար տուն, նա դուրս էր գալիս:

Անցյալի անկատարին համապատասխանում են սահմանական եղանակի անցյալ, հարակատարի անցյալ ժամանակները և սրանց երկրորդական բաղադրյալ ժամանակները, որոնցից անցյալ կատարյալը, անցյալի հարակատարը արտահայտում են մասնակի միաժամանակություն. օրինակ՝ Ես կանգնած մուտքի մոտ նայում էի նրան, երբ պատահեց մի բան *(Զե, 376)։* Մի տխուր խաղաղություն գալիս էր բները փռելու ամրոցի գլխին, երբ հանկարծ ամրոցի դարպասի մոտ հեծյալներ խլրտացին *(ԴԴՎ, 378)։* Երբ Մերուժանը օրըստօրէ ամրացնում էր պաշարումը, միևնույն ժամանակ Վահան Մամիկոնյանը յուր հրամանի ներքո եղած պարսկական մյուս զորքերով փակել էր բոլոր ճանապարհները *(Ր., III, 426)։*

Անցյալի հարակատարը արտահայտում է լրիվ միաժամանակություն, այսինքն՝ անկատարը և անցյալի հարակատարը լինելով տևական ժամանակներ, ամբողջովին համընկնում են միմյանց. օրինակ՝ Երբ այստեղ զբաղված էին կրոնական ապարդյուն վիճաբանություններով, այնտեղ՝ Հայաստանում Մերուժան Արծրունին ավելի և ավելի սաստկացնում էր Արտագերսի պաշարումը *(Ր., III, 428)*։

Այս բոլոր հիշատակված ժամանակները իրար հետ հարաբերության մեջ են մտնում, որտեղ անցյալ կատարյալը սովորաբար միանգամյա գործողություն է ցույց տալիս, ուստի կամ համապատասխանում է տևականություն արտահայտող անցյալի անկատար, անցյալի հարակատար, մասամբ անցյալի վաղակատար ժամանակների մի որոշ պահի հետ. օրինակ՝ Նա դեռ քնած էր, երբ բախեցին դուռը *(ՔԹՈՀ, 790)*։ Առավոտյան դեռ արևը նոր էր ծագել, դեռ նոր հոտերը քշում էին դեպի մերձակա արոտները, մոտեցան ապառազինված երեք զինվորներ *(Ր., III, 361)*։ Նա տարված էր այս մտածումներով, երբ գնացքը սուլելով մոտեցավ մի նոր կայարանի *(ՍԶ, III, 348)*։ *Կամ պարզապես եռժամանակություն է ցույց տալիս անցյալի հարակատարի և անցյալի վաղակատարի նկատմամբ. օրինակ՝* Երբ վերջինները բլուր ելան, թշնամու հեծելազորները բռնել էին արդեն հանդիպակաց տափաստանները *(Մուր., III, 335)*։ Երբ նա վերադարձավ տուն, կինը նոր էր վեր կացել *(Նար., II, 149)*։ Անցյալ գիշեր նա իր տարակուսանքը չքացրեց, երբ բանակի հրամանատարի հետ կանչված էին ռազմական խորհուրդ *(Քոչար, 618)*։ *Անցյալի հարակատարը արտահայտում է նաև նախաժամանակություն, այսինքն՝ երկրորդական նախադասության ստորոգյալի ժամանակը նախորդում է մյուս նախադասության ստորոգյալի ժամանակին. օրինակ՝* Դասերից հետո, երբ ֆիշ խաղում էին, ընում էին ակումբ *(ՍԶ, III, 378)*։ Երբ տներից հետո աշակերտները հավաքվում էին դպրոց, մեր վարժապետը առանց խտրության աշակերտների ոտները դնում էր ֆալախկայի մեջ և բոլորին հավասարապես ծեծում էր *(«Ընտիր էջեր», 498)*։ *Բերված օրինակների մեջ երկրորդական նախադասությունների ժամանակը միշտ նախորդում է գլխավոր նախադասության ժամանակին։*

Ս ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Հաճախ գլխավոր նախադասության ստորոգյալի գործողության արագ հաջորդումը նշվում է հանկարծ, անմիջապես, իսկույն, արագ, արագորեն *մակբայներով. օրինակ՝* Միայն հաճախ, երբ գնացքն անց-

նում էր փորված տեղերով, հանկարծ երևում և արագորեն, կարծես պտտվելով, հակառակ կողմն էր վազում բարձր մնացած հողաթմբերի մուգ զանգվածը *(Նար., III, 213)։* Երբ մարդիկ որևէ ավարտված գործ էին տեսնում, անմիջապես ասում էին Տիգրանի գործն է *(ԱՍՈՎՄ, 155)։ Համեմատիր նաև՝* Երբ հարձակվի ինձ վրա, դու իսկույն կբռնես նըրան *(ՂԱՇԵ, 245)։*

Անցյալ կատարյալը գլխավոր և երկրորդական նախադասությունների մեջ միաժամանակություն չի արտահայտում. սովորաբար երկրորդական նախադասության մեջ անցյալ կատարյալը հանդես է գալիս նախաժամանակության դրսևորումով. այսինքն՝ նախորդում է գլխավոր նախադասության անցյալ կատարյալին. օրինակ՝ Երբ որ տեսավ ձին կանգնեց, Անդրին ճանապարհից դուրս եկավ *(Թ., III, 11)։* Երբ նա հեռացավ, թագավորն արագ շրջվեց դեպի խորհրդականը *(ԴԴՎ, 183)։* Բայց երբ արքայական զորքի ճաճանչը տեսան, կանգ առան լեռնալանջի վրա *(Մուր., III, 189)։* Բայց ուխտազանց օսմանցիք երբ իրանց առաջ բացված տեսան բերդի դռները, ներս մտան և վայրենի անգթությամբ սկսեցին կոտորել նրա մեջ եղողներին *(ՐԵԺ, IV, 568)։*

Եթե երկրորդական նախադասության ստորոգյալը կիրառվում է անցյալ կատարյալով, գլխավորը կարող է դրվել անցյալ կատարյալով, անցյալի անկատարով, վաղակատարի ու հարակատարի անցյալներով, հարկադրականի անցյալով. օրինակ՝ Երբ դու գնացիր քաղաք, ես այնտեղից վերադարձա: Երբ մենք մեր զրույցը վերջացրինք, նա մոտենում էր մեզ: Երբ ես կարոտով նայեցի նրան, նա կանգնած էր (կանգնել էր) այնտեղ: Երբ դու եկար, ես պետք է դուրս գայի:

Ծանոթություն.— Եթե երկրորդական նախադասությունը անցյալ կատարյալով է արտահայտված, իսկ գլխավորը հարկադրականի և պայմանականի ապառնիներով, ապա այդպիսի երկրորդական նախադասությունը դառնում է պայմանի կամ պատճառի երկրորդական նախադասություն՝ ժամանակի նուրբ երանգավորումով. օրինակ՝ Երբ դու գնացիր, նա պետք է տուն վերադառնա (կվերադառնա)։ Բայց այստեղ անցյալ կատարյալը ապառնու նշանակություն ունի։

Վաղակատարը արտահայտում է թե՛ միաժամանակություն և թե՛ նախաժամանակություն. օրինակ՝ Ձեզանից ով արդյոք չի զգացել բերկրանք, երբ առաջին անգամ նոր զգեստ է հագել *(ՉԸ, 458)*։ Ռուս ազատամիտները դիմել են լեգալ թերթերին ու ամսագրերին, երբ հնարավոր է եղել նրանց միջոցով խոսել ընթերցողների ավելի լայն շրջանների հետ *(ՄՇԸԾ, 12,)*։ Ամեն անգամ այդպես է եղել, երբ նա ֆուշանների հետ պատերազմ է ունեցել *(Ր., III, 417)*։

Ապառնի ժամանակներից միմյանց հետ հարաբերության մեջ են մտնում ըղձականը, պայմանականը, հարկադրականը, ըստ որում սրանց ապառնիները ապառնիներին են համապատասխանում, իսկ անցյալի ապառնիները՝ անցյալի ապառնիներին. օրինակ՝ Երբ իշխանը կբարկանար ինձ վրա, իսկույն կսկսեր խաչին հայհոյել *(Ր., I, 113)*։ Երբ էլ գնա, միևնույն է, մարդիկ կլինեն *(ՔԹՈՀ, 787)*։ Երբ մենք այլևս երբեք չենք տեսնի միմյանց, դուք կմոռանաք ինձ *(Նար., II, 146)*։ Երբ նա կմիանա այդ երկու կիսավայրենի թագավորների հետ, կարող է այնուհետև շատ վնասներ հասցնել մեր աշխարհին *(Ր., III, 416)*։ Իսկ երբ ցամաքես, կմոռանան քեզ *(Իսահակյան)*։

Եթե գլխավոր և երկրորդական նախադասությունները ժամանակով չեն համապատասխանում, և առավել ևս երբ գլխավոր նախադասությունը կիրառվում է սահմանական եղանակի ժամանակներով, իսկ երկրորդականը՝ հարկադրական, հրամայական, պայմանական, ըղձական եղանակների ապառնիներով, ապա երկրորդական նախադասությունը կորցնում է իր ժամանակային նշանակությունը և ստանում է ավելի պատճառի և պայմանի նշանակություն. օրինակ՝ Երբ որ այդպես է, էլի կխոսեմ *(Նար., VI, 54)*։ Ապրուստ էլ կբերեք իմ լի սեղանից, երբ որ դադարգյուն եղաք ձեր տանից *(Թ., I, 286)*։ Պետք է բժշկել, երբ մարդ բժիշկ է *(ԴԴ, I, 412)*։ Երբ մի բան վճռեց, պիտի անի *(ԴԴՎ, 384)*։ Երբ եկել ես մեր աշխարհը երջանիկ, Արի զմրուխտ էս դալարում էսպես հանգչենք մենք հիմիկ *(Թ., II, 163)*։ Երբ զրկում ես քո հարազատներին, արժանի կդառնաս պատժի:

Հաճախ երբ*-ով կապակցվող երկրորդական նախադասությունները որոշիչ երկրորդական նախադասություններից են առաջ եկել, այդ պատճառով դրանց և գլխավոր նախադասության միջև գոյություն չունի ժամանակների համապատասխանություն։*

Այդպիսի գլխավոր նախադասությունները ունեցել են ժամանակ ցույց տվող որևէ հարաբերյալ. ժամանակի ընթացքում դրանք

զեղչվում են, իսկ դրանց վերաբերող որոշիչ երկրորդական նախադասությունը, որ կապակցվում է երբ *հարաբերականով, դիտվում է իբրև ժամանակի երկրորդական նախադասություն* (երբ-*ը վերածվում է շաղկապի) պահպանելով իր նախկին անհամապատասխանությունը։ Այդպիսի երկրորդական նախադասությունները շատ թույլ են արտահայտում ժամանակը, մանավանդ երբ գլխավոր նախադասությունները ունենում են ժամանակային որոշակի բառեր և այլն. օրինակ՝* Անմիջապես այցելել նրան, երբ հայրը տանը չէ, կլիներ հանդգնություն *(Շիրվ., I, 468)։* Ինչու դուք մինչև այսօր այստեղ եք, երբ վաղուց արդեն հեռացած պետք է լինեիք այստեղից *(Նար., II, 397)։* Եվ երբ ծերունու ծունկերն հոգնատանջ Սուրբ հողում հիմա պիտի հանգչեին, Մահը անողոք և խստապահանջ Կանգնեց սրամերկ նրա առաջին *(ԱԻԵ, 150)։* Երբ իմացար, թե Լս ընչից էս ինչ բանն է դուրս գալի, Կարող ես դու առաջ բերես և հետևանք ցանկալի *(Թ., II, 155)։*

Երբեմն կապակցական այնպիսի փոփոխություններ ու զեղչումներ են կատարվում, որ երբ-*ով կապակցվող երկրորդական նախադասությունը հեռանում է իր բուն գլխավոր նախադասությունից, մնում առկախ, ուստի և չի կապակցվում իր հետ դրված նախադասությանը. օրինակ՝* Ես դեռ հիշում եմ անգութ վաշխառուի խոսքերը, երբ նա տոկոսները առնելու համար մեր տունն էր գալիս *(«Ընտիր էջեր», 492)։ Այստեղ գլխավոր նախադասությունը վերաբերում է ներկային, իսկ երկրորդական նախադասությունը՝ անցյալին, ուստի վերջինը չի կարող առաջինի լրացումը լինել. այդ նախադասությունը պետք է կառուցվեր այսպես.* Ես դեռ հիշում եմ անգութ վաշխառուի խոսքերը, որ ասում էր այն ժամանակ, երբ նա տոկոսներ առնելու համար մեր տունն էր գալիս: *Այսպիսով, ինչպես տեսնում ենք, բոլորովին մի այլ նախադասության համար որոշիչ հանդիսացող երկրորդական նախադասությունը մոտեցել է մի այնպիսի նախադասության, որի հետ բնավ առնչություն չունի։*

Երբեմն սխալ կերպով ժամանակի երկրորդական նախադասությունը սկսվում է մի այլ շաղկապով, իսկ վերջինիս հաջորդող գլխավոր նախադասությունը՝ երբ *հարաբերականով. ստեղծվում է մի տեսակ անկապակցություն, ավելի ճիշտ խճողում, որով գլխավոր և երկրորդական նախադասությունները խառնվում են իրար. օրինակ՝* Հենց ուզում էր քաշել Մարկոսյանների տան դռան զանգակը, երբ հանկարծ դուռը բացվեց *(Նար., II, 338)։* Մինչ Վարդանը խոսում էր, երբ հագած կապած հայտնվեց Համիկը պայծառ ժպիտը դեմքին *(ՔԹՈՀ, 809)։*

Երբեմն ժամանակի երկրորդական նախադասությունը դառնում է ժամանակ ցույց տվող որևէ կապի խնդիր. օրինակ՝ Ինքն էլ երբ ծնու է ածում, դրանից հետո մեռնում է նույն աշնանը *(Թ., III, 96)*։ Իր ծնու ածելուց հետո մեռնում է նույն աշնանը:

Երբեմն ժամանակի երկրորդական նախադասությունը բացահայտող նշանակություն է ունենում, եթե գլխավոր նախադասությունը ունի այնպիսի ժամանակի պարագա, որ որոշյալ չի կարող դառնալ. օրինակ՝ Եվ էսօր էլ, երբ խոսք կա հին ավանդությունների, սիրո ու լավ կապերի մասին, փորձիչը խոսք չունի *(Թ., IV, 270)*։ Եվ էսօր էլ՝ հին ավանդությունների, սիրո ու լավ կապերի մասին խոսք եղած ժամանակ, փորձիչը խոսք չունի:

Երբ *հարաբերականով կապակցվող երկրորդական նախադասությունները շարադասությամբ միանգամայն ազատ են. սակայն պետք է նշել, որ չափազանց տարածված է նախադաս դրությունը. դա պետք է բացատրել նրանով, որ երկրորդական նախադասության ստորոգյալը գլխավորապես նախաժամանակություն է արտահայտում, ուստի և բնականորեն հաճախ նախադաս է կիրառվում. Համեմատիր անցյալ կատարյալով կապակցվող հետևյալ նախադասությունները.* Երբ որ անցավ ֆառասուն օրը, եկան դարձյալ *(Թ., II, 156)*։ Երբ իրիկունն հացի նստան տանտերն ու հյուրն իր ստար, երգիչն էսպես խոսք բաց արավ, հարցմունք արավ սիրաքար *(Թ., II, 161)*։ Երբ ձմեռը մոտեցավ, Մարգարիտ մոքիրն սկսեց ձմեռվա բաներ պատրաստել Ավագի համար *(ԱԶ, V, 8)*։ Երբ հասան էնտեղ, թագավորը մի թփուտում ծածկված դուռը ցույց տվեց *(Թ., III, 352)*։ Մին էլ երբ ուշքի եկան, տեսան շատերն էին պակասել *(Թ., III, 206)*։

Երբ գլխավոր և երկրորդական նախադասության ստորոգյալները միաժամանակություն են արտահայտում, երկրորդական նախադասությունը չի միտում նախադաս դիրք ընդունել. օրինակ՝ Երգը այժմ է միայն ճերմողից իր և դարից իր անցնում, երբ առնչվում է կյանքին հուր միջուկով իր անանց *(ՉԸ, 181)*։ Լույսը լուսին ճո ժպիտն է իմ երեսին ճառագում, երբ, ախ, արդեն անբույժ զարկված դեպի մահն եմ ես հակվում *(Թումանյան)*։

Ժամանակի երկրորդական նախադասությունները միջադաս են լինում սովորաբար այն դեպքում, երբ դրանց հետ կապակցվող գլխավոր նախադասությունները սկզբի մասում ունեն ժամանակային այնպիսի մակբայներ, կապեր, գոյականներ, որոնք տվյալ դեպքում ծառայում են իբրև մի տեսակ հարաբերյալներ երբ*-ի հա-*

մար. այդպիսի հարաբերյալներ են ամեն անգամ, ամեն դեպքում, ամեն պարագայում, հետո, առաջ, յուրաքանչյուր անգամ, այն դեպքում *և այլն*։ Ամեն անգամ քո տվածից, երբ մի բան ես դու տանում, Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ինչքան է դեռ մնում, Զարմանում եմ... *(Թումանյան)*։ Պարսից զորքերը յուր ձեռքում ունենալուց հետո, երբ նա միանա այդ երկու կիսավայրենի թագավորների հետ, կարող է այնուհետև շատ վնասներ հասցնել մեր աշխարհին *(Ր., III, 416)*։ Ամեն անգամ, երբ նայում եմ երեխայիս խաղերին, թե ինչ սիրով փարվել է նա Քարին, ջրին ու հողին,—խոսք եմ խոսում իմ սրտի հետ *(Իս, I, 246)*։

Ժամանակի երկրորդական նախադասությունը կարող է նաև միջադաս դրվել, երբ գլխավոր նախադասությունը շատ է ընդարձակ. օրինակ՝ Հայտնի է, որ տառ ձուլելը, երբ այժմյան արագաշարժ և դյուրաշարժ մեքենաները չկային, մի տաժանելի աշխատություն էր պահանջում *(ՂԱ, III, 18)*։

Սովորաբար երբ-*ը դրվում է երկրորդական նախադասության սկզբում (շաղկապները նկատի չեն առնվում), բայց չի բացառված, որ այն դրվի նաև նախադասության միջում. օրինակ՝* Նրա կոպերը երեկ երբ քարացել են խաղաղ Կապույտ բոցով բռնկված վերջին ջերմում ուղեղի, Նա տեսել է երևի արևային մի քաղաք *(ՉԸ, 199)*։

գ) ՀԵՆՑ, ՀԵՆՑ ՈՐ, ԹԵ ՉԷ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ժամանակի երկրորդական նախադասությունները կապակցվում են նաև ուրիշ շաղկապներով, որոնք կապակցման ու նշանակությունների առանձին նրբերանգներ են հանդես բերում։

Այսպես՝ հենց, հենց որ *շաղկապային նշանակություն ստացած եղանակավորիչ բառերով սկսվող երկրորդական նախադասությունների ստորոգյալները արտահայտում են նախաժամանակություն, բայց մի այնպիսի նախաժամանակություն, որին անմիջապես հաջորդում է գլխավոր նախադասության ստորոգյալի գործողությունը։ Այս դեպքում արդեն ժամանակային ընդմիջման անորոշությունը չկա. հաջորդումը լինում է վայրկենական. որովհետև* հենց, հենց որ *բառերով սկսվող ժամանակի երկրորդական նախադասությունները նախաժամանակություն են արտահայտում, ուստի դրանք գերազանցապես նախադաս են լինում. օրինակ՝* Հենց որ առողջացավ, կրկին ծլկեց սարը *(ՆԶՀ, 149)*։ Հենց որ նա փոքր ինչ առողջացավ,

իսկույն ճանապարհ ընկավ դեպի յուր նպատակը *(Բ., III, 477)*։ Հենց որ ինձ տեսնում էր, գլուխը կրծքին թաշ էր ձգում *(Շիրվ., I, 455)*։

Ինչքան էլ երկրորդական նախադասությունների ստորոգյալնե-րը տևական գործողություն արտահայտեն ննց որ, ննց *բառերով, այդ տևականությունը սահմանափակվում է, որովհետև տևակա-նության համար ժամանակ չի մնում, այնքան որ շուտ է հաջորդում գլխավոր նախադասության ստորոգյալի գործողության ժամանա-կը։ Հաճախ գլխավոր նախադասությունը ուղեկցվում է* իսկույն, ան-միջապես, արագորեն *և այս կարգի այլ բառերով, որոնք հենց արագ հաջորդություն են արտահայտում։ Համեմատիր՝* Հենց որ միս ու-տենք, իսկույն կմեռնենք *(ՂԱՐԵ, 126)*։

Հենց, ննց որ *բառերով սկսվող երկրորդական նախադասու-թյունների ստորոգյալների ժամանակները նույնպես որոշ համա-պատասխանություն ունեն իրենց հետ կապակցվող գլխավոր նա-խադասությունների ստորոգյալների հետ։ Ինչպես նկատեցինք,* Երբ-*ով քննված երկրորդական նախադասությունների դեպքում, այնպես էլ այս պարագայում, անցյալ ժամանակների համապա-տասխանությունը լինում է այսպես. անցյալ ապառնին համապա-տասխանում է ապառնի, իսկ ներկային՝ ներկա. միայն պետք է նը-կատել հետևյալը. երբ երկրորդական նախադասության ստորոգ-յալը դրված է պայմանական եղանակով, գլխավորը կամ հրամայա-կան եղանակով է կիրառվում և կամ* թող *եղնակավորիչով ըղձական է դրվում. օրինակ՝* Հենց որ ծանր գործ կունենաս, ինձ իմաց տուր *(ՆՁՀ, 411)*։ Հենց որ կցանկանա, թող գա: *Համեմատիր նաև հետև-յալ համապատասխան ժամանակ ունեցող օրինակները.* Հենց որ կոլխոզի նախագահը վերադարձավ, Վասակն աշխով արավ զուռնա-չուն *(ՆՁՀ, 76)*։ Հենց որ կանայք մտան, Լազգին անհանգստացավ *(Զե, 277)*։ Հենց որ թագավորը բժշկվում է, նույն րոպեին ընկնում է կախարդանքը *(Թ., III, 257)*։

Եթե երկրորդական նախադասության ստորոգյալը դրված է ըղձական եղանակով, գլխավոր նախադասության ստորոգյալը կա-րող է կիրառվել պայմանական, հրամայական, հարկադրական եղա-նակներով. օրինակ՝ Հենց որ ամուսինը մի փոքր ազատ ժամանակ ունենա, անպայման կանցնեն Մրգաստան *(ՔԹՈՀ, 803)*։ Հենց որ դու պահանջես, նա պետք է կատարի. Հենց որ գա, խոսիր նետը:

Հարկադրականի անցյալ ապառնին համապատասխանում է անցյալ կատարյալ. օրինակ՝ Հենց պիտի գար, իսկույն տեսավ, որ ոչ

մի բան պատրաստ չէ: Հենց որ պետք է խոսեր, ներս մտան և ընդհատեցին:

Հենց, հենց որ *բառերով սկսվող երկրորդական նախադասության վերջում իբրև անմիջական հաջորդության նշող շաղկապ, հաճախ դրվում է* թե չէ: Թե չէ, հենց, հենց որ *միևնույն նշանակությունն ունեն։ Հետագայում,* երբ հենց, հենց որ *գեղչվում է, թե չէ-ն, երկրորդական նախադասության վերջում անկախանում է իբրև նոր կապակցման միջոց. օրինակ՝* Աղջիկը հենց անկողին է մտնում թե չէ, ցատկելով մտնում է գործը *(Թ., III, 310)։* Դնում է անկողնու վրա թե չէ, մին էլ էն է տեսնում, էս գործի կաշին տրաքեց *(Թ., III, 310)։*

Երբեմն հենց-*ի հետ կիրառվում է* այն է *բացահայտող շաղկապը, որ երկրորդական և գլխավոր նախադասության ստորոգյալների ժամանակների հաջորդությունը ավելի է արագացնում. օրինակ՝* Հենց այն է պիտի հայտներ, իսկույն զգաց, որ դա ամենից դժվար բանն էր աշխարհում *(ԴԴ, I, 222)։*

Ինչպես նկատեցինք վերևում, թե չէ *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները չեն տարբերվում* հենց, հենց որ *շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասություններից. դրանք նման են ոչ միայն իրենց նշանակությամբ, այլև գլխավոր նախադասության ստորոգյալի ժամանակի հետ ունեցած հարաբերությամբ։ Տարբերությունը շարադասության մեջ է.* հենց, հենց որ *սովորաբար դրվում են նախադասության սկզբում, սակավ դեպքերում կարող են կիրառվել ենթակայից հետո, բայց միշտ ստորոգյալից առաջ, իսկ* թե չէ *շաղկապը միշտ ամբողջ երկրորդական նախադասությունից հետո է շարադասվում. օրինակ՝* Պոկում է թե չէ, փայլակը փայլատակում է, կայծակը որոտում է, երկիրը դողում է ու ոնց որ գետնի տակից դուրս գա *(Թ., III, 341)։* Շարժվեցի թե չէ, նա շտապով ետ թեքեց իր կառապի վիզը *(Թ., III, 78)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն 1.— Թե չէ *շաղկապը առաջացել է նախադասության դրական ստորոգյալի ժխտական ձևով կրկնությամբ, որին նախորդում է* թե *շաղկապը իբրև թեականություն արտահայտող եղանակավորիչ. օրինակ՝* Եկավ թե չեկավ. մեր տանը կռիվ գցեց. Գալիս է թե չի *(սկզբնապես չէ)* գալիս… *Հետագայում կրկնվող ստորոգյալը ընկնում է, ժխտական մասը միանում է* թե *շաղկապի հետ և կազմում է յուրահատուկ մի շաղկապ* թե չէ *ձևով։*

Ծանոթություն 2.— Եթե երկրորդական նախադասության ստորոգյալի տվյալ ժամանակն իր բուն նշանակությամբ չի կիրառված, այն է՝ անցյալը դրված է ապառնիի փոխարեն, կամ ընդհակառակը, ապա ժամանակների համապատասխանությունը ոչ թե ըստ ձևի է, այլ ըստ նշանակության։ Այս վերաբերում է վերևում քննված երեք կարգի շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասություններին հավասարապես. օրինակ՝ Հենց որ սկսեցիր նրա մոտ պաշտպանել քո եղբորը, գործը խարաբ կանես *(ՆԶՀ, 120)։* Պատասխան գնաց թե չէ, Շահազիզն անպատճառ կկտրի այն ճպատր *(Թ., V, 247)։* Սկսեցիր այստեղ *նշանակում է* սկսես, գնաց *ունի* գնա *(ըղձականի) նշանակություն։*

Ծանոթություն 3.— Պետք է, անհրաժեշտ է, կարող *է և այս կարգի եղանակավորող կապակցությունները անորոշ դերբայի հետ բաղադրյալ ստորոգյալ կազմելով՝ կարող են համապատասխանել բոլոր ժամանակներին. օրինակ՝* Երբ այդպիսի մարդն ասում է, պետք է հավատալ *(ԴԴՎ, 222)։* Գործածում էր այն բոլոր դեպքերում, երբ չէր կարող որոշակի անուն տալ *(ՆԶՀ, 309)։*

է) ՄԻՆՉԵՎ, ՄԻՆՉԵՎ ՈՐ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Մինչև, մինչև որ *շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունները ցույց են տալիս ժամանակի այն պահը, երբ վերջանում է գլխավոր նախադասության գործողության կատարման տևական ժամանակը, այսինքն՝ ցույց է տալիս այն ժամանակակետը, մինչև որը շարունակվում է գլխավոր նախադասության գործողությունը. օրինակ՝* Նայում եմ, մինչև որ անզոր գլուխս ծնկիդ է թեքվում *(Տ., I, 296)։ Նայելու գործողությունը տևում է մինչև այն ժամանակը, երբ գլուխը թեքվում է ծնկին. այս վայրկյանին արդեն սկսվում է երկրորդական նախադասության գործողությունը, այլ խոսքով երկրորդական նախադասությունը արտահայտում է ոչ թե գլխավոր նախադասության ժամանակի պարագան, այսինքն՝ թե երբ է կատարվում գործողությունը, այլ նրա տևականության վերջնապահը, որով և որոշվում է գլխավոր նախադասության ժամանակի տևականության չափը՝ առանց սկզբնա-*

պահի։ Այս առումով մինչև, մինչև որ *շաղկապներով կապակցվող նախադասությունները, իսկապես, ժամանակի տևականության չափի պարագա նախադասություններ են և ոչ թե ժամանակի պարագա նախադասություններ։*

Մինչև, մինչև որ *շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունների հետ կապակցվող գլխավոր նախադասությունները հաճախ ունենում են* այնքան ժամանակ, այնքան, *որոնք ընդգծում են, որ գլխավոր նախադասության գործողությունը տևում է մինչև երկրորդական նախադասության սկզբնական պահը։ Համեմատիր՝* Նայում է այնքան ժամանակ, մինչև որ հոգնում է: *Եթե նույնիսկ գլխավոր նախադասությունը իսկական ժամանակի պարագա է ունենում, երկրորդական նախադասությունը դրա հետ չի առնչվում, այլ ցույց է տալիս այդ ժամանակամիջոցում ստորոգյալի գործողության տևականության չափը. օրինակ՝* Ձաղկել կտաս նրան ամեն օր, մինչև որ նա կտիպվի կամ ճշմարտությունը խոստովանել, կամ հավատն ուրանալ և կամ, վերջապես, հարվածների տակ կմեռնի *(Մուր., V, 305)։*

Որովհետև մինչև, մինչև որ *շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասության ստորոգյալը ցույց է տալիս այնպիսի մի ժամանակ, որ սկսվում է գլխավոր նախադասության ստորոգյալի գործողության վերջին պահից, ապա գլխավոր նախադասության ստորոգյալի անցյալ ժամանակին կարող է հարաբերել երկրորդականի ապառնին. օրինակ՝* Վասակը հեռվում կանգնած սպասում էր, մինչև Համիկը կվերջացնի իր այդ ճնճուշ խնամակալությունը *(ՆԶՀ, 105)։* Ուստի ջղագրգիռ լարվածությամբ սպասում էր, մինչև Արուսը կդադարի հոգոցներ հանելուց *(Նույն տեղում, 105)։ Այս ձևով էլ գլխավոր նախադասության անցյալ կատարյալ ժամանակին կարող է հարաբերել երկրորդականի ապառնին. օրինակ՝* Ես գիտությամբ ուշացրի, մինչև դուք մի փոքր հանգստանաք ու հովանաք *(«Ընտիր էջեր», 420)։* Սպասեց, մինչև շալակավորը մոտենա *(ՆԶՀ, 101)։* Քարտուղարը սիրալիր ժպիտով խնդրեց սպասել մինչև որ Սպանդարյանը վերջացնի *(Նույն տեղում, 301)։*

Տևական ներկա ժամանակին համապատասխանում է տևական ներկա, բայց դարձյալ գլխավոր նախադասության ստորոգյալի գործողության ժամանակը տևում է մինչև երկրորդական նախադասության ստորոգյալի ժամանակի սկիզբը. օրինակ՝ Չեն կարողանում լսել, մինչև ականջները բերնին չեն մոտեցնում *(Թ., III, 255)։*

Ս ա ն ո թ ու թ յ ու ն .— Ըղձականի ապառնիի դիմաց պայմանական կամ ըղձական անցյալ կիրառելը այժմ արդեն հնացած է. Համեմատիր՝ Գնանք կրակ վառենք, մինչև նա կգար *(Բ., III, 232)։*

Եթե գլխավոր նախադասության ստորոգյալը արտահայտվում է պայմանական եղանակով, երկրորդականի ստորոգյալը դրվում է ըղձականով, ըստ որում մեկի ապառնին համապատասխանում է մյուսի ապառնին, մեկի անցյալի ապառնին՝ մյուսի անցյալի ապառնին. օրինակ՝ Նա չի հանգստանալ, մինչև որ հայրենիքի ռազմական վարկը չվերականգնվի, մինչև որ մի սոսկալի վրեժ չառնվեր *(Շիրվ., V, 146)։* Կսպասեմ, մինչև որ ինձ այս աղջիկը մեղքանա *(Իսահակյան)։* Մինչև բլոկնոտները հաշվեն, արդեն կլուսանա *(ՔԹՈՀ, 792)։ Իսկ եթե գլխավոր նախադասությունը արտահայտվում է ըղձական եղանակով, երկրորդականը կարող է թե ըղձականով արտահայտվել և թե պայմանականով.* Գնանք խոսենք, մինչև նա գա: Մինչև գնաս մոտը և գաս, մեր պատասխանը պատրաստ կլինի *(ԴԴՎ, 182)։*

Երբ գլխավոր նախադասության ստորոգյալը արտահայտվում է հրամայական եղանակով, երկրորդականի ստորոգյալը դրվում է պայմանական և ըղձական եղանակների ապառնիներով. օրինակ՝ Քո շիրիմի մոտ, Իմ կողքին մի տեղ պահիր, մինչև գամ *(Իսահակյան)։* Առժամանակ այդպես արեք, մինչև որ ես կտեսնեմ նրան *(Նար., II, 394)։*

Եթե երկրորդական նախադասության ստորոգյալը դրված է պայմանական եղանակի անցյալի ապառնիով, գլխավոր նախադասության ստորոգյալը կարող է արտահայտվել սահմանական եղանակի անցյալի անկատարով, անցյալ կատարյալով և վաղակատարի անցյալով. օրինակ՝ Մինչև բեյը կեռար, նրանք մի բաժակ օղի խմեցին *(ՆԶՀ, 71)։* Մինչև դու կգայիր, նա գալիս էր արդեն: Մինչև դու կխոսեիր, նա վերջացրել էր: *Պայմանականի անցյալին համապատասխանում է նաև հարակատարի երկրորդական բաղադրյալ ժամանակի անցյալը. օրինակ՝* Մինչև դու կգնեիր, նա գնած վերջացրած կլիներ:

բ) ՄԻՆՉ, ՄԻՆՉԴԵՌ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Երբ ժամանակի երկրորդական նախադասությունը կապակցվում է մինչ *շաղկապով, ցույց է տալիս, որ երկրորդական նա-*

խադասության ստորոգյալի գործողությունը նախապատրաստու-թյան վրա է եղել, մինչդեռ գլխավոր նախադասության գործողու-թյունը արդեն սկսվել է շարունակվում է, կամ վերջացել է. օրի-նակ՝ Մինչ ներսինները կպայմանավորվեին ինչ անել նրան, նա ծանր մտավ սրանը *(ԴԴՎ, 379)։* Մինչ Արծվին կպատասխաներ, կամ Վարդանը շարժում կաներ, երկրորդը տխրաձայն նվաց կըր-կին *(նույն տեղում, 227)։* Մինչ կսկսվեր ներկայացումը, մենք մտանք գրադարան-ընթերցարանը *(ՉԵ, 376)։ Եթե անցյալում գլխավոր նախադասության գործողությունը տեղի չի ունեցել և խոսվում է այդ մասին, ապա կասվի այսպես՝* Մինչ կսկսվեր ներ-կայացումը, մենք կմտնեինք գրադարան-ընթերցարանը։ *Իսկ եթե գլխավոր նախադասության ստորոգյալը արտահայտի տևական գործողություն, ապա կարող է կիրառվել անցյալի անկատարով. օրինակ՝* Մինչև նրանք վրա կհասնեին, մենք դեռ շարունակում էինք մեր աշխատանքը. *այսինքն՝ վրա հասնելուց առաջ աշխա-տանքը սկսվել և շարունակվում էր։*

Մինչ *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասու-թյան ստորոգյալը պահանջում է տևական ժամանակ. եթե նույ-նիսկ քերականական ժամանակը այդպիսին չէ, ապա այս դեպքում էլ դրան նախորդում է մի նախապատրաստական գործողություն, կամ արդեն ենթադրվում է, որ սկսվել է. օրինակ՝* Մինչ նա զբաղված էր իր մտքերը կարգի բերելով, Համմիկը մի անգամ էլ դռնից գլուխ չափեց նրան *(ՆՁՀ, 62)։* Հարցրի ես զարմացած, մինչ իմ հետաքրքրության առարկան իդիոտային ժպիտով ինձ էր նա-յում *(ՉԵ, 375)։* Մինչ նա վազում էր, խուժանները դուրս եկան պատի ետևից և անձայն հարձակվեցին սայլի վրա *(ՍՁ, III, 326)։* Մութը իջավ համատարած, մինչ կայարանը վերցրին *(ԵՁԵ, 20)։*

Մինչ, մինչև *շաղկապների տարբերությունն այն է, որ առա-ջինը կապում է այնպիսի երկրորդական նախադասություն, որի ստորոգյալի գործողությունը սկսված է գլխավոր նախադասու-թյան ստորոգյալի գործողությունից առաջ։ Գլխավոր նախադասու-թյան ստորոգյալի գործողության ժամանակը կարող է համապա-տասխանել երկրորդական գործողության ժամանակի միայն մի պահին, և երկրորդական նախադասության գործողությունը կարող է շարունակվել, բայց գլխավոր ստորոգյալի գործողությունը նրանից առաջ սկսվել չի կարող. օրինակ՝* Ու մինչ վայրի սլանում էր դեպի հեռուն աշխարհի, Հասավ բռնեց հզոր ձեռքով Արեգն ա-րագ ու արի *(Թ., II, 170)։* Եվ օրերը նրան նոր առավոտներ չբա-

306—13

ցին, մինչ բացվեցին ամենուր գործարաններ մեծամեծ *(ԵՉԵ, 31)*։ Մինչ դու գնացիր, ամեն ինչ Քեզ հետ տարար...

Մինչև, մինչև որ *շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունների ստորոգյալի ժամանակին նախորդում է գլխավոր նախադասության ստորոգյալի ժամանակը. միայն երբ ստորոգյալները ժխտականով են արտահայտված, երկրորդական նախադասության ստորոգյալի գործողությունը նախորդում է գլխավորի գործողությանը. օրինակ՝* Չի վերադառնում տուն, մինչև չի գերակատարում իր օրվա պլանը *(ՆՉՀ, 97)*։ Չուզեցի մոտից հեռանալ, մինչև ազատվի *(Նույն տեղում, 100)*։

Մինչ *շաղկապով կապակցվող գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալները կարող են լրիվ միաժամանակություն արտահայտել, եթե ունեն միևնույն քերականական ժամանակը. օրինակ՝* Մինչ Մերուժանի երկնագույն վրանում այս տեսակ սրտաբեկ խոսակցության մեջ էին, այդ միջոցին բանակից հեռու քաղաքի կողմի բարձրավանդակներից մեկի վրա, երկար ձողի գլխին ծածանվում էր մի ինչ-որ գույնզգույն բան *(Ր., III, 36)*։ Շիրինը մեռել էր հուսահատ այնտեղ, մինչ ինքը ոռնել էր, տառապել այստեղ *(Փափ., 237)*։

Մինչև, մինչև որ *շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունները գերազանցապես կամ ապառնի ժամանակով են արտահայտվում և կամ այնպիսի անցյալով, որ ցույց է տալիս, թե ստորոգյալի գործողությունը դեռ չի սկսվել, կամ եթե սկսվել է, դրան նախորդել է գլխավոր նախադասության ստորոգյալի գործողությունը. օրինակ՝* Երգեցիր անմար, անհուն եռանդով, մինչև դիրքերում մարտը դադարեց *(ՉԸ, 129)*։ Մինչև նրանք կհարցնեին հիվանդի առողջությունը, նա ընդհատեց *(Ր., III, 559)*։ Երկար նրանք անցնում էին զանազան բակերի և զանազան շինվածքների միջով, մինչև դուրս եկան ամրոցի այդ ոլորապտույտ լաբիրինթոսից *(Ր., III, 126)*։ Էն օրը բավական անհամություն արի, մինչև որ վերջապես ինձ լռեցրին *(Թ., III, 122)*։

Մինչ *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասություններին համանիշ են* մինչդեռ *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները, այն տարբերությամբ, որ այս վերջինին համընկնում է գլխավոր նախադասության անպատեհ, անսպասելի գործողությունը, և նայած ստորոգյալի տևականության բնույթին, կարող է լրիվ կամ մասնակի միաժամանակություն արտահայտել. օրինակ՝* Եվ մինչդեռ այդ արշավանքի ծրա-

գրի մասին էր խորհում, հանկարծ թագուհին առաջարկում էր գնալ Բյուզանդիա *(Ր., III, 422)*։ Մինչդեռ տրակտորներն արդեն երկաթուղու կայարանի մոտակա հողամասում բաց էին անում առաջին ակոսները, ոչխարի ձայնը դեռ չէր կտրվել գյուղից *(ՆՋՀ, 79)*։

Մինչև *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները, ինչպես տեսանք, արտահայտում են ժամանակի տևողության չափը, ճիշտ այդպես ժամանակի տևողության չափը ցույց են տալիս* քանի *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները։ Դրանց տարբերությունն այն է, որ* քանի-*ն բացի ժամանակից դրսևորում է նաև այլ երևույթների չափի պարագան, իսկ* մինչև *միայն ժամանակն է արտահայտում։* Քանի *ցույց է տալիս ստորոգյալների զուգահեռ գործողություն և ըստ այդմ էլ ժամանակի լրիվ համապատասխանություն։ Եթե* մինչև *և* քանի *նշանակությամբ համանիշ են, այնուամենայնիվ ձևով տարբերվում են։* Մինչև *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունների դրական ստորոգյալների նշանակությունը՝ ըստ գլխավոր նախադասության ստորոգյալի հետ ունեցած հարաբերության, պահպանվում է, երբ կապակցում ենք* քանի *շաղկապով, միայն այն պայմանով, որ դրական ստորոգյալը փոխարինվում է ժխտականով, իսկ քերականական ժամանակը արտահայտվում է անցյալի վաղակատարով. օրինակ՝* Եվ երկար այնպես նստած է մնում, մինչև արևը ծագում է *(Ր., III, 231)*։ Եվ երկար այնպես նստած է մնում, քանի արևը չի ծագում: Զով էր սփռում նրա երեսին, մինչև որ նա կքներ *(Ր., I, 42)*։ Զով էր սփռում նրա երեսին, քանի նա չէր քնել *(Ր., I, 42)*։

Եթե մինչև *շաղկապով կապակցվող ստորոգյալը ժխտականով է արտահայտված,* քանի-*ով փոխարինելու դեպքում ժամանակը կարող է նաև փոխվել. օրինակ՝* էլ չերևես չեմքիս, ասավ, մինչև սիրտը չբերես *(Իս., II, 132)*։ էլ չերևես չեմքիս, ասավ, քանի սիրտը չես բերել: *Բայց* և՝ Քանի սիրտը չբերես, էլ չերևես աչքիս:

Ծանոթություն.— Այս վերջին ձևերի մեջ քանի *շաղկապի փոխարեն* մինչև *կիրառելը հնացած է արդեն. օրինակ՝* Պարտական ենք մտածել և հուսալ, աշխատել, քռնել և գործել, մինչև օրը երեկոյացել չէ *(ՄՆ, II, 280)*։ *Այժմ ճիշտ ձևն է.* Քանի օրը չի երեկոյացել:

բ) ՔԱՆԻ ՇԱՂԿԱՊՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Քանի *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասության ստորոգյալը գլխավոր նախադասության ստորոգյալի հարաբերությամբ արտահայտում է լրիվ միաժամանակություն, մանավանդ երբ երկու նախադասություններն էլ քերականական միևնույն ժամանակով են դրված. օրինակ՝* Քանի կա լյառն Արագած և քանի աշխարհում դու կաս, Դժվար թե ցամաքեն երբեք ակունքները քո ջինջ երգերի *(ՉԸ, 187)*։ Այս հիշատակները պահպանել էին հսկայական լեռները, որոնք ստեղծվել էին ժամանակի հետ և ապրում էին, քանի որ նա կար *(«Ընտիր էջեր», 501)*։ Եվ ես աշխարհում ապրում եմ քանի, Չեմ կարող սիրով, սրտով իմ անհագ, Զգացմունքներիս հորձանքով բեղուն, Չսիրել կյանքի լիությունն անհաս *(ՉԸ, 119)*։ Ավետ ապերը քանի դեռ ոտքը տեղն էր, քեզ նման ձիավոր էր *(ԱԾ, 305)*։

Սովորաբար ներկա ժամանակին համապատասխանում է պայմանականի ապառնին. օրինակ՝ Քանի կենդանի եմ, երեխեքս ձեզ չեմ տա: Կասեմ, քանի քունս չի տանում *(Ր., I, 114, 45)*։

Քանի *շաղկապը ցույց է տալիս մի գործողության զարգացման ժամանակաշրջանում նաև մյուս գործողության զարգացումը, որը պայմանավորված է նախորդով։ Բայց այս դեպքում ժամանակի տևողության չափը այնքան է ուժեղանում, որ գլխավոր նախադասության եզրում առաջանում է* այնքան, *որ ցույց է տալիս, թե երկրորդական նախադասությունը դադարում է ժամանակի պարագա արտահայտելուց և փոխարկվում է չափի պարագայի, այսինքն՝ երկրորդական նախադասության գործողության տևողության հետ, գլխավոր նախադասության մեջ արտահայտված գործողությունը համապատասխանաբար զարգանում է. օրինակ՝* Կոդակը քանի գնաց, դիրք ձեռք բերեց պարսիկ մեծամեծների առաջ *(ԴԴՎ, 209)*։ Քանի գնում, այնքան իրեն հավաքում էր *(ՍԳր., № 3, 55, 41)*։ Քանի արևմուտը մոտենում է, այնքան նա քայլերն է շտապեցնում *(ԱԲ, ՄԹնձ., 109)*։

Քանի *շաղկապի նշանակությամբ կիրառվում է նաև* քանի դեռ: *Համեմատիր՝* Քանի դեռ գլուխդ ուսերիդ վրա է, շուռ տուր դեպի ետ ու նայիր *(«Մարգարիտներ», 111)*։

Քանի *միանում է* որ *շաղկապի հետ, բայց այս դեպքում ստանում է* որովհետև *շաղկապի նշանակությունը. ժամանակի առումը թույլ է զգացվում։ Համեմատիր՝ Ծիծաղիր, ծիծաղիր,* քանի որ

կարող ես (Շիրվ., V, 12)։ Այստեղ քանի որ թե կարող է որովհետև նշանակել, թե ինչքան ժամանակ և թե պարզապես ինչքան։ Ես ո՞ր մեկի անունը տամ, քանի որ ամբողջ մասսան է խոսում (ՆՁՀ, 379)։ Այստեղ էլ քանի որ թե կարող է երբ նշանակել և թե որովհետև։

Քանի շաղկապը ունի նաև երբ-ի նշանակություն. օրինակ՝ Քանի մեր տուն գար, միշտ կոնֆետ կբերեր ինձ համար (Նար., II, 421)։ Նույն կերպ գործածվում է նաև ինչքան հարաբերական բառը. վերը բերված նախադասության մեջ քանի-ն կարելի է փոխարինել ինչքան-ով։

ժ) ՈՐ ՇԱՂԿԱՊՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Որ-ը, իբրև ժամանակի երկրորդական նախադասություն կապակցող շաղկապ, գրական լեզուն փոխ է առել խոսակցականից. որ-ը մինչև այժմ էլ այդ կիրառությամբ պահպանել է իր ժողովրդախոսակցական բնույթը։ Բայց որովհետև որ շաղկապը իր ժամանակային կիրառության հետ խոսակցական լեզվում ունի պայմանի առում, ուստի այդ առումը ևս անցել է գրական լեզվին։ Այդ պատճառով որ շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները ժամանակի հետ զուգահեռաբար դրսևորում են նաև պայմանականություն։

Եթե որ շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունների ստորոգյալները չեն դրված ըղձական և պայմանական եղանակներով, պայմանի առումը չի խառնվում ժամանակային նշանակության հետ. օրինակ՝ Դեռ չէինք ծռվել մյուս փողոցը, որ այնտեղից դուրս եկան երեք կին (Նար., IV, 121)։ Որ տուն էր գալիս, ականջներս սրում էի, որ լսեմ նրա ձայնը (Նար., IV, 72)։ Նա որ սկսում էր նվագել իր բյուրաղի քնարը, իսկույն լռում էին մյուսները։

Իսկ երբ որ շաղկապով կապակցվող երկրորդական նախադասության ստորոգյալը կիրառվում է ըղձական, պայմանական եղանակներով, ժամանակի հետ զուգահեռաբար արտահայտում է նաև պայմանի հարաբերություն. օրինակ՝ Որ պատրաստ լինի, տուր (Մուր., V, 247)։ Թասը որ ընկնի, կզրնգա (ԼԹԿ, 196)։ Որ կգա, եկ իմաց տուր։ Մարդիկ որ տեսնեն, չեն ասի (ՔԹՈՀ, 787)։

Եթե գլխավոր նախադասության ստորոգյալը կիրառված է

պայմանական ապառնիով, դարձյալ ժամանակի հասկացողության հետ խառն արտահայտում է նաև պայմանի հարաբերություն։

Եթե որ *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունը նախադաս է, մեծ մասամբ շարադասվում է ենթակայից հետո. այս օրինաչափությունը փոխվում է, եթե նախադասությունը սկսվում է այլ շաղկապներով։ Համեմատիր՝* Դու որ եկար, ես գնացել էի. Բայց որ դու եկար, ես գնացել էի։ Նա որ խոսում է, ամենքը լսում են։ *Չի բացառված նաև հետևյալ ձևով.* Որ տղան ներս մտավ, հայրը ուրախությունից շփոթվեց։ Որ դու խոսում ես, բոլորը հիանում են։

Ծանոթություն.— Որ *շաղկապի ժամանակային կիրառությամբ գործածությունը առաջացել է* երբ որ, հենց որ, քանի որ *բաղադրյալ շաղկապների առաջին բաղադրիչների անկումով։*

Որ *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները դերբայական դարձվածի են վերածվում այնպես, ինչպես* երբ*-ով կապակցվող նախադասությունները. օրինակ՝* Նա որ եկավ, սրդեն ամեն ինչ պատրաստ էր։ Նրա գալու ժամանակ ամեն ինչ պատրաստ էր։

ժա) ԻՆՉ, ՔԱՆ, ՔԱՆ ԹԵ, ՆԱԽՔԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ժամանակի երկրորդական նախադասություններ են կազմվում նաև ինչ *շաղկապով. այս երկրորդական նախադասությունը հաջորդում է մի ժխտական գլխավոր նախադասության, որի ստորոգյալի գործողության ժամանակը սկսվում է երկրորդական նախադասության ստորոգյալի գործողության վերջին պահից. օրինակ՝* Ինչ Անահիտից բաժանվել էր, ինչ Համիկին և Ջամալյանին տեսել էր ավտոյով սուրալիս, նա Մրգաստանում չէր եղել *(ՔԹՈՀ, 372)։*

Ժամանակի երկրորդական նախադասություններ են կազմվում քան, քան թե *շաղկապներով, երբ գլխավոր նախադասության ժամանակի պարագա հանդիսացող մակբայները արտահայտվում են բաղդատական աստիճանով. օրինակ՝* Ասլանը և բեկը վերադարձան խիստ ուշ, քան թե մենք մտածում էինք *(ՐԿ, 234)։* Դու ավելի շուտ եկար, քան մենք սպասում էինք։ Նա տեղից վեր թռավ ավելի արագ, քան մյուսը կմտածեր լինել։

Նախքան *շաղկապով ժամանակի պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս, որ երկրորդական նախադասության ստորոգյալի գործողությունը կատարվում է գլխավոր նախադասության ստորոգյալի արտահայտած գործողությունից հետո. օրինակ՝* Բայց թող այս սիրտը բյուր կտոր լինի, նախքան լաց լինեմ *(Շեքս., I, 336)*։ Նախքան բորբոքված նրա աչքերից իր ամենակեղծ արտասուքների աղը սրբվեր, արդեն պսակված էր *(Նույն տեղում, 14)*։

Ժամանակի երկրորդական նախադասություն է կազմվում բավական է *միադիմի բայով, որ ունի* հենց որ *շաղկապի նշանակությունը և ցույց է տալիս այն ժամանակը, որին անմիջապես հաջորդում է գլխավոր նախադասության գործողության ժամանակը. օրինակ՝* Բավական է երգես երկաթաթերթ վարդեր, և քննադատն արդեն մի ամեհի խանդով կհռչակե քեզ մեծ ու հանճարեղ *(ՉԸ, 455)*։

ժբ) ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾԻ ՎԵՐԱԾԵԼԸ

Ժամանակի երկրորդական նախադասությունը դերբայական դարձվածքի է դառնում մի քանի եղանակով։ Ամենից առաջ ստորոգյալը վերածվում է իս *ածանցով անկատար դերբայի. օրինակ՝* Սրան է ահա Մուշեղը հանձնում իր երկրի պաշտպանությունը, երբ խոսրովը ի կատար է ածում իր սպառնալիքը *(Լեո, ՀՊ, II, 262)*։ Խոսրովը իր սպառնալիքը ի կատար ածելիս՝ սրան է ահա Մուշեղը հանձնում իր երկրի պաշտպանությունը: Որ երբ անունս են տալիս, հազիվ միտքդ եմ գալիս *(Իս., I, 269)*։ Անունս տալիս հազիվ միտքդ եմ գալիս:

Ինչպես տեսնում ենք, այս դեպքում երկրորդական նախադասության շաղկապները և հարաբերական բառերը ընկնում են, ենթական պահպանում է իր հոլովը։

Վերածման մյուս ձևն այն է, երբ երկրորդական նախադասության ստորոգյալը փոխվում է անորոշ դերբայի սեռական հոլովի և ժամանակ *բառի կապակցության, ենթական դառնում է ենթակա-սեռական. օրինակ՝* Նա չէր կարող այլ բաների մասին մտածել, երբ տեսնում էր զորքը *(ԴԴՎ, 233)*։ Զորքը տեսնելու ժամանակ նա չէր կարող այլ բաների մասին մտածել: Արդեն լուսանում էր, երբ Լևոնը տուն հասավ *(ՆՁՀ, 105)*։ Լևոնի տուն հասնելու ժամանակ արդեն լուսանում էր:

ժամանակի երկրորդական նախադասությունը դերբայական լրացման է վերածվում նաև հարակատար դերբայի և ժամանակ *բառի կապակցությամբ. ստորոգյալը փոխարինվում է հարակատար դերբայով և* ժամանակ *բառով, ենթական դառնում է ենթակա-սեռական. օրինակ՝* Ես ֆեզ տեսա, երբ դու նոր մայրիկիդ հետ թև ելած կթռչեիր *(այսինքն՝ թռչում էիր)* սար ու ձոր *(Իս., I, 245)։* Ես ֆեզ տեսա նոր մայրիկիդ հետ ֆո թև եղած թռած ժամանակ: Դեռ թօթովախոս մի մանուկ էի, երբ ինձ ավանդեց հայրս իմ անուս մի սրբազան խոսֆ *(Հակոբյան)։* Իմ անուս հոր ինձ մի սրբազան խոսֆ ավանդած ժամանակ դեռ թօթովախոս մի մանուկ էի: *Պետք է նկատել սակայն, որ դերբայական լրացումը բոլոր դեպքերում սովորաբար նախադաս է լինում։*

Հենց որ *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները դերբայական լրացում են դառնում* պես *կապի միջոցով, որը նույնպես ցույց է տալիս գործողության անմիջական հաջորդումը. երկրորդական նախադասության ստորոգյալը վերածվում է անորոշ դերբայի տրական հոլովի, որը դառնում է* պես *կապի համար խնդիր. ենթական փոխվում է ենթակա-սեռականի, իսկ* հենց որ *ընկնում է. օրինակ՝* Հենց որ առողջացավ, կրկին ծլկեց սարը *(ՆԶՀ, 149)։* Առողջանալուն պես կրկին ծլկեց սարը:

Այսպիսի վերածումը հավասարապես պարտադիր է այս կարգի բոլոր երկրորդական նախադասությունների համար, ինչ ժամանակով էլ դրված լինեն դրանց ստորոգյալները։ Համեմատիր՝ Հենց որ կվերադառնա, ինձ իմաց արա: Վերադառնալուն պես ինձ իմաց արա: Հենց որ եկավ, անմիջապես սկսեց աշխատանքը: Գալուն պես սկսեց աշխատանքը:

Նույն ձևով են վերածվում նաև թե չէ *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները. օրինակ՝* Մոտենում է թե չէ, սկսում է խոսել. մոտենալուն պես սկսում է խոսել:

Եթե երկրորդական նախադասության գործողությունը տեղի չի ունեցել, այլ սոսկ մտադրություն է եղել, ապա այս դեպքում կարելի է օգտագործել վրա *կապը. օրինակ՝* Հենց այն է պիտի հայտներ, իսկույն զգաց, որ դա ամենից դժվար բանն էր աշխարհում *(ԴԴ, I, 222)։* Հայտնելու վրա (կամ հայտնելու պահին, վայրկյանին), իսկույն զգաց...

Մինչև, մինչև որ *շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունները դերբայական լրացման են վերածվում.*

մինչև *բառի շաղկապային կիրառությունը կապային կիրառության փոխվելու միջոցով. երկրորդական նախադասության ստորոգյալը վերածվում է անորոշ դերբայի հայցական հոլովի (հոդով) և դառնում է* մինչև *կապի համար խնդիր. եթե* որ *շաղկապը առկա է, զեղչվում է, իսկ ենթական դարձյալ դառնում է ենթակա-սեռական. օրինակ՝* Ես գիտությամբ ուշացրի, մինչև դուք մի փոքր հանգստանաք ու հովանաք *(«Ընտիր էջեր», 420)։* Ես գիտությամբ ուշացրի մինչև ձեր մի փոքր հանգստանալն ու հովանալը։ *Նույն ձևով է կատարվում նաև* մինչ *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասության վերածումը. օրինակ՝* Մինչ կսկսվեր ներկայացումը, մենք մտանք գրադարան-ընթերցարան *(Զարյան).* մինչ ներկայացման սկսվելը մենք մտանք գրադարան-ընթերցարան։

Բ. ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Տեղի պարագա երկրորդական նախադասություն կոչվում է այն նախադասությունը, որ նշում է իր հետ կապակցվող գլխավոր նախադասության գործողության տեղը և տարածության հետ կապված պարագաները, կամ պարզաբանում, բացահայտում է գլխավոր նախադասության ձևական տեղի պարագայի բովանդակությունը։ Օրինակ՝ Այնտեղ, որտեղ իշխում է Վենետիկը ոսկեվառ, իր գոնդոլն է վարում մի գիշերային թիավար։ *Գլխավոր նախադասությունն է՝* Այնտեղ իր գոնդոլն է վարում մի գիշերային թիավար, *իսկ երկրորդականն է՝* Որտեղ իշխում է Վենետիկը ոսկեվառ։ *Գլխավոր նախադասությունն ունի իր ձևական տեղի պարագան (այնտեղ), բայց հայտնի չէ ինչ բան է և որտեղ է* այնտեղը. *երկրորդական նախադասությամբ բացահայտվում է* այնտեղ *բառի ինչ լինելը, նրա բովանդակությունը, որը և փոխարինում է* այնտեղ *ձևական բառին ու դառնում է տեղի պարագա։ Եթե* այնտեղ *բառը լիներ իսկական տեղի պարագա և ոչ թե ձևական հարաբերյալ բառ, ապա երկրորդական նախադասությունը կդառնար որոշիչ։ Օրինակ՝ գլխավոր նախադասության համար իբրև տեղի պարագա վերցնենք ոչ թե* այնտեղ, *այլ* այն տեղում *և* մի տեղ. Ես եղա այն տեղում, որտեղ դու եղել էիր։ Ես եղել եմ մի տեղ, որտեղ դու չես եղել։ *Այս նախադասությունների մեջ* այն տեղում, մի տեղ *կապակցությունները գլխավոր նախադասությունների համար իսկական տեղի պարագաներ են, բայց ճշտիվ չեն որոշված, ավելի ճիշտ անորոշ են ո-*

դոշված, և ահա երկրորդական նախադասությունները փոխարինում են այն և մի որոշիչներին, որոնք ձևական որոշիչներ են, ժամանակավորապես կիրառված՝ երկրորդական նախադասությունների փոխարեն։ Այս դեպքում տեղում և տեղ ձևերը իսկական տեղի պարագաներ են, իսկ երկրորդական նախադասությունները դրանց համար որոշիչ են։ Ես եղել եմ քո չեղած տեղում։ Ես եղա քո եղած տեղում։

Չնայած այս հանգամանքին՝ այնուամենայնիվ այդ կարգի երկու տարբեր տիպի նախադասությունների միջև նմանության ու նույնության շատ եզրեր կան, ավելի ճիշտ տարբերությունը ձևական է։ Եթե գլխավոր նախադասության տեղի պարագան ի վիճակի է որոշիչ ընդունելու, ապա դրան առնչվող երկրորդական նախադասությունը որոշիչ երկրորդական նախադասություն է, իսկ եթե այդպիսին չէ, ուրեմն երկրորդական նախադասությունը բռնում է նրա տեղը և դառնում տեղի պարագա երկրորդական նախադասություն։

Գլխավոր նախադասության համար այդպիսի ձևական տեղի պարագաներ են այնտեղ, նույնտեղ, ոչ մի տեղ, ամեն տեղ, ամենուր, ամենուրեք, որոնք որոշիչ չեն ընդունում և որոնց հետ առնչվող երկրորդական նախադասությունները տեղի պարագա երկրորդական նախադասություններ են։

Ինչ էլ որ լինեն այդ տիպի գլխավոր նախադասությունները, այնուամենայնիվ դրանք ունեն տեղի պարագաներ (այնտեղ, նույնտեղ, ամենուր և այլն), որոնց ձևականության աստիճանը նույնիսկ իրար բաղդատությամբ տարբեր է, ուստի սրանց հետ առնչվող տեղի պարագա հանդիսացող երկրորդական նախադասությունները՝ նայած վերոհիշյալ ձևական բառերի՝ հարաբերյալների ձևականության աստիճանին, մասամբ որոշիչ են, կամ ավելի ճիշտ, սկզբնապես որոշիչ են եղել. իսկ դրանց հարաբերյալները եղել են ոչ թե ամենուրեք, նույնտեղ և այլն, այլ՝ ամեն, նույն, ոչ մի, որոնք միանալով իրենց որոշյալների հետ, դրանց էլ են դարձրել հարաբերյալ։

Բուն տեղի պարագա երկրորդական նախադասությունները նրանք են, որոնց հետ կապակցվող գլխավոր նախադասությունները տեղի պարագայական ոչ մի բառ չունեն, այսինքն՝ զուրկ են այնպիսի ձևական բառերից, որոնց համար երկրորդական նախադասությունն ունի որևէ հարաբերական բառ։ Այսպիսի երկրորդական նախադասությունները երբեմն այնքան են սերտանում գլխավորների հետ, որ մինչև իսկ չեն անջատվում, երբեմն ոչ միայն չեն անջատվում, այլև ձուլվում են միմյանց։ Օրինակ՝ Գնա քնի ուր կուզես

(Թ., III, 220)։ Ուզում եմ թողնես՝ գնան ուր կուզեն *(նույն տեղում, I, 335)։* Ուր անեղ կովով չի մտնիլ արֆան, ղոնաղ է աշուղն իրեն սազի հետ *(նույն տեղում, II, 144)։* Բայց չի կարող ոտքը հասնել, ուր որ սիրտն է թափառում *(Թումանյան, «Հազարան Բլբուլ»)։ Այստեղ բերված օրինակներից* ֆնի ուր կուզես, գնան ուր կուզեն *այդպիսի նախադասություններ են. համեմատիր՝* Ուր նստում է նստի, ուր գնում է գնա, իմ ինչ գործն է։

Այս կարգի կապակցությունները հատուկ են բանավոր խոսքին, ուստի չունեն ուժեղ տրամաբանական ընդգծվածություն և սահմանազատում։

Տեղի պարագա երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են ուր, որտեղ, որտեղից, որ կողմ *բառերով։*

Ինչպես ասվեց, սրանք գլխավոր նախադասության մեջ կարող են ունենալ համապատասխանորեն հարաբերյալ բառեր (այնտեղ, այնտեղից, նույնտեղ, ամենուր *և այլն) կամ չունենալ. օրինակ՝* Դե բարիբր գալիս է այնտեղից, որտեղից չենf սպասում *(ԴԴԵԺ, III, 452)։* Կառապան զինվորը երկար երկար սպասելուց հոգնած fնել էր ոչ թե իր տեղը, այլ այնտեղ, ուր պիտի նստեր Կրուչինսկին *(ԱԲԵ, 604)։*

Տեղի պարագա երկրորդական նախադասությունները տեղի պարագա բառերի պես երեք բնույթով են հանդես գալիս. նշում են այն տեղը, որտեղ կատարվում է գլխավոր նախադասության ստորոգյալի գործողությունը. այսպիսի երկրորդական նախադասությունները կոչվում են բուն տեղի պարագա երկրորդական նախադասություններ. ցույց են տալիս այն տեղը, որտեղից սկսվում է գլխավոր նախադասության ստորոգյալի գործողությունը. այսպիսի երկրորդական նախադասությունները կոչվում են ելման տեղի պարագա երկրորդական նախադասություններ, և վերջապես ցույց են տալիս այն տեղը, ուր տեղի է ունենում ժամանումը, որի համապատասխան այդպիսի երկրորդական նախադասությունները կոչվում են ժամանման տեղի պարագա երկրորդական նախադասություններ։

ա) ԲՈՒՆ ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բուն տեղի պարագա երկրորդական նախադասությունը այնպիսի տեղի պարագայի նշանակություն ունի, որ կիրառվում է ներգոյական հոլովով. և, իսկապես, երբ այսպիսի երկրորդական նախադասությունը դարձնում ենք դերբայական լրացում, արտահայտվում

է ներգոյական հոլովով։ Բուն տեղի պարագա երկրորդական նախադասությունը արտահայտում է այն տեղը, ուր կատարվում է գլխավոր նախադասության գործողությունը կամ բացահայտում է այդ գործողության ձևական տեղի պարագան։ Օրինակ՝ Այնտեղ կտեսնես զրկանքի որդուն, ուր ինքն աշխատում, ուրիշն է ուտում *(ՀՀԵ, 195)։* Իսկ ուր ուտելն կա, այնտեղ կա միայն ուտվող ճանճ *(Փափ., 195)։ Էնտեղ ես դու, ուր ճողեղեն ոտ չի կոխել դեռ,* ասավ, Ուր անճայտ են երկրավորի չնչին կիրքը, վիշտն ու ցավ *(Թ., II, 164)։* Օ՛, ամենուր, ուր կա աշխատանքի բանակ, Պայքարի է ելնում ամենուրեք անահ նրա բանակն անհա երկաթակուռ *(ՉԸ, 462)։* Ուր անապատ էր, դաշտ էր ամա, ուր լոկ երաշտ էր ու մահ բոցե, մենք ջրանցքներ ենք շինել հիմա *(ՉԸ, 289)։* Ուր չկա մտքի և բանականության ազատություն, այնտեղ կա ճոգու ստրկություն, իսկ ուր կա ստրկություն, այնտեղ չկա կյանք *(ՄՆԸԵ, 276)։* Այնտեղ, ուր ճովն էր քո կարկաչում, Ուր կուզեիր, որ Զարող ապրի, Հիմա դրել ենք երկաթ ֆաբրիկ *(ՉԸ, 389)։*

Բուն տեղի պարագա երկրորդական նախադասությունները ունենում են ուր, որտեղ *հարաբերական բառերը, որոնց գործածության մեջ գրեթե տարբերություն չկա։*

Այս երկրորդական նախադասությունները դերբայական դարձված են դառնում տեղ *բառի ներգոյականի օգտագործումով. ստորոգյալը վերածվում է հարակատար դերբայի, որ իբրև որոշիչ կապակցվում է* տեղ *բառի հետ։ Ենթական գրվում է սեռականով, հարաբերական և հարաբերյալ բառերը ընկնում են. օրինակ՝* Բայց չեմ կարող աշխատել այնտեղ, որտեղ իմ տակը փոռում են *(ՆԶՀ, 191)։* Բայց ես չեմ կարող աշխատել իմ տակը փոռած տեղում: *Ժամանակները ճիշտ պահպանելու համար կարելի է ներկա ժամանակի համար օգտագործել ենթակայական դերբայը, իսկ ապառնիի համար՝ ապառնի դերբայը, եթե այդ ստորոգյալները վերածվում են հիշյալ դերբայների.* Ուր կամենա, թող ապրի, կամենալիք տեղը թող ապրի: Որտեղ ցանկանում է, թող այնտեղ մնա: Ցանկացվող տեղը թող մնա: *Այս դեպքում առաջանում է որոշ բռնազբոսիկություն։*

Ծանոթություն.— Շարադասությամբ բուն տեղի պարագա հանդիսացող նախադասությունները ազատ են. դրանք լինում են նախադաս, միջադաս և ետադաս։ Վերևում բերված օրինակների մեջ երեք տիպի նախադասություններից էլ կան։

Ինչպես ասվեց, հաճախ գլխավոր նախադասությունները չեն ունենում հարաբերյալ բառեր. այս դեպքում նախադասությունը այնպիսի կառուցվածք չպետք է ունենա, որ երկրորդական նախադասության հարաբերականներին մոտիկ ընկնեն հարաբերյալ այնպիսի բառեր, որոնք տեղի հետ կապ չունեն, այլապես կառաջանա անկապակցություն ու ճապաղում. օրինակ՝ Տես այդ նրանք են, ուր ամեն մեկը մի քար է քաշում մրջյունի նման *(ՀՀԵ, 195)։* Չէ որ ամեն տեղ նմանները այրվում են մի տեղ նման կրակով, ուր ցարն ու սուլթանն իրենց գոռ թագով ժողովուրդների բերանն են փակում *(նույն տեղում, 236)։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.— Ուր, որտեղ *հարաբերական բառերը* էլ *շաղկապով կազմում են տեղի երկրորդական նախադասություններ զիջական բնույթով. օրինակ՝* Ուր էլ լինեմ, չեմ մոռանա երկաթագիր գրքերը մեր *(Չարենց)։* Ռադիո կայան է ամեն մի հոգի, ուր էլ նա լինի *(ՉԸ, 27)։* Ու տես, որդիս, ուր էլ լինես, քո մայր լեզուն չմոռանաս *(Կապուտիկյան)։* Որտեղ էլ լինեմ, կգամ կհասնեմ։

բ) ԺԱՄԱՆՄԱՆ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՄԱՆ ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ժամանման և ուղևորման (ուղղության) տեղի պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս այն տեղը, դեպի ուր ուղղվում, կամ հասնում է գլխավոր նախադասության ստորոգյալի գործողությունը։ Գլխավոր նախադասությունները իբրև ստորոգյալներ ունենում են մի տեղից դեպի մի այլ տեղ շարժում արտահայտող բայեր։ Սրանց հետ կապակցվող տեղի երկրորդական նախադասությունները երկու բնույթ ունեն. ուղղման-ուղևորման և ժամանման։ Առաջինը ցույց է տալիս այն տեղը, դեպի ուր ուղղվում է գլխավոր նախադասության ենթակայի շարժումը, իսկ երկրորդը այն տեղն է, ուր վերջանում է այդ շարժումը։ Սովորաբար շարժում արտահայտող բայ-ստորոգյալները ուղևորման, ժամանման հասկացողությունը միաժամանակ են արտահայտում. ավելի ճիշտ դա կախված է բայ-ստորոգյալի ժամանակից. օրինակ՝ Ես գնում եմ այնտեղ, ուր դու ես գնում: *Այս պարագայում ունենք ուղևորման երկրորդական նախադասություն, իսկ եթե գլխավոր նախադասության ստորոգյալը արտահայտենք անցյալ կատարյալով, միաժամանակ և՛ ուղևորում կլինի, և՛ ժամանում։ Կան այնպիսի բայեր,*

որոնք միայն ուղղություն են ցույց տալիս՝ առանց ուղևորման ու ժամանման. օրինակ՝ Ես նայում եմ այնտեղ, ուր դու ես նայում: Եւ նայացքս ուղղում եմ այնտեղ, ուր դու ես ուղղում քո նայացքը:

Այս կարգի երկրորդական նախադասությունների մեջ իբրև հարաբերական բառեր գլխավորապես հանդես է գալիս ուր, ուր որ, *մասամբ* որտեղ, *իսկ գլխավոր նախադասության հարաբերյալներն են՝* այնտեղ, ամեն տեղ *և կամ գլխավոր նախադասությունը մնում է առանց հարաբերյալի. օրինակ՝* Իսկ այնուհետև կդիմենք, ուր հարկավոր է *(Մուր., III, 322)։* Ուր որ ուղարկում են, գնա *(Թ., III, 260)։* Ժողովում արդյունքները ուղարկում են, ուր հարկն է *(ՊՊԵԺ, I, 494)։* Գնանք, ուր ճակատագիրը կոչում է մեզ *(Ր., II, 319)։* Ձենը մինչև որտեղ հասնում է, ամեն տեղ էլ շարաքներով անձրև է գալիս *(Թ., III, 254)։* Այդ ճանապարհը տանում էր ոչ այնտեղ, ուր նա ուզում էր հասնել *(ՆԶՀ, 110)։* Տար ինձ, ուր որ կամենաս *(Նույն տեղում, 228)։* Հիմա ուր ուզում ես, գնա *(«Մարգարիտներ»)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Ուղղության և ուղևորման երկրորդական նախադասությունների համար, ինչպես երևում է օրինակներից, հիմնական հարաբերականը ուր *բառն է. իսկ եթե նախադասության կառուցվածքը այնպիսին է, որ անհրաժեշտ է այդ հարաբերական բառը հոլովել, ապա այս դեպքում դա փոխարինվում է* որտեղ *հարաբերականով. օրինակ՝* Վերադարձավ Վասակն այնտեղ, որտեղից սկսել էր *(ՆԶՀ, 379)։*

գ) ԵԼՄԱՆ ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ելման տեղի պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս այն տեղը, որտեղից սկսվում է գլխավոր նախադասության ստորոգյալի գործողությունը, շարժումը. օրինակ՝ Եկ ուր որ կերթաս, այնտեղից նորեն գնա ու գնա *(Իսահակյան, «Աբու Լալա Մահարի»)։* Հեռացիր այնտեղից, որտեղ վտանգ կա:

դ) ԱՅԼ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացի վերևում քննված հարաբերական և հարաբերյալ բառերից, տեղի պարագա երկրորդական նախադասությունը մասամբ կապվում է որ *հարաբերականով և տարածություն ցույց տվող որևէ բառով. օրինակ՝* Որ տան մեջ խաչ կամ նարխս են եփել, *(այնտեղ),* ով կարող է առանց տանուտերի մի պատառ բերանը տանել

(Բ., II, 248)։ Եվ որ կողմից անցնում ես, այնտեղ մարդկանց ծփում է ծով *(ՀՀԵ, 280)*։

Երբեմն գլխավոր նախադասությունն ունենում է իր իսկական տեղի պարագաները, որոնցից հետո իբրև ամփոփում, իբրև ընդհանրացում հանդես է գալիս հարաբերյալը, որը կանխում է տեղի պարագաների թվարկումը և հնարավոր է դարձնում երկրորդական նախադասության կապակցումը։ Այս դեպքում հնարավոր է երկու դրություն. եթե հարաբերյալ բառը լրիվ վերաբերում է գլխավոր նախադասության տեղի պարագային և տվյալ դեպքում ծառայում է իբրև հավելադրություն՝ շեշտելու, ընդգծելու համար այդ տեղի պարագան, ապա երկրորդական նախադասությունը կարող է դիտվել իբրև որոշիչ։ Նշենք նաև, որ այդ տեսակ հարաբերյալ բառերը դրվում են մանավանդ այն առարկաների հետ, որոնց տարածական հասկացողությունը տվյալ նախադասության մեջ թույլ է դրսևորվում. օրինակ՝ Նա մատը պարզում է դեպի Սպիտակի լեռնանցքը, դեպի այնտեղ, ուր քեռի Ղուկասը իր ջոկատով ձերբակալեց դաշնակ մինիստրներին *(ՆՋՀ, 237)*։

Իսկ եթե հարաբերյալ բառը ինքնուրույն է, թվարկված տեղի պարագաները ընդհանրացնելու հետ միասին նաև համազոր տեղի պարագա է դրանց շարքում, ապա այս դեպքում այդպիսի հարաբերյալ բառը կապակցում է տեղի պարագա երկրորդական նախադասություն, որ չի վերաբերում գլխավոր նախադասության առարկայական տեղի պարագաներին. օրինակ՝ Որի «Մայր Արաքսին» երգվում էր, «Բողոք առ Եվրոպը» արտասանվում բեմերի վրա ու տներում, ամենուրեք, ուր կար միայն մի բուռն հայություն *(Շիրվ., VIII, 166)*։

Հնարավոր է վերևում բերված դրությանը բոլորովին հակադիր երևույթ. հարաբերյալը դրվում է, իսկ դրանից հետո գալիս է մի տեղի պարագա բացահայտիչ և ապա հաջորդում է երկրորդական նախադասությունը, որը ոչ թե վերաբերում է տեղի պարագա բացահայտիչին, այլ հարաբերյալ բառին, ուստի և երկրորդական նախադասությունը լինում է պարագա և ոչ թե որոշիչ. օրինակ՝ Ու հանկարծ այնտեղից, փոշուց, Ուր քրտինքը մնաց մի պահ, բյուրավոր բանակներ ելան՝ Վիթխարի, համարձակ, անահ *(ՉԸ, 284)*։

Սակավ դեպքերում տեղը և ժամանակը խաչաձևվում են, այսինքն՝ գլխավոր նախադասությունը պահանջում է տեղի պարագա. երկրորդական նախադասություն, որ պետք է սկսվեր որտեղ, ուր *հարաբերականներով. հակառակ դրան երկրորդական նախադա-*

սությունը կապակցվում է երբ *շաղկապային բառով։ Գլխավոր նախադասությունը հուշում է տեղի մասին, իսկ երկրորդականը պարզապես ժամանակ է արտահայտում. օրինակ՝* Բայց դու գիտես միթե, որ հանգերի լեզուն համր է հաճախ այնտեղ. երբ պետք է խոսի *(ԳՄԵ, 10)*։

Տարածություն ցույց տվող մի քանի բառեր ստորինանաբար վերածվում են հարաբերյալ բառերի. բայց քանի որ դրանք ունակ են որոշիչ առնելու, ուստի դրանց առնչվող երկրորդական նախադասությունները հակառակ իրենց տեղի պարագա արտահայտող բնույթին, համարում ենք որոշիչ նախադասություններ. օրինակ՝ Նայում է դեպի այն կողմը, ուր թողեց յուր կորցրած փառքը *(Ր., III, 231)*։ Նա նայում է հեռուն, ուր ծագում է մի նոր անեզրական արև *(ՉԸ, 461)*։ Կանչում է ինձ յուր անծանոթ հեռուն, ուր ինքն է յոթներանգ ծիածանված *(«Ընտիր էջեր», 1032)*։

Գ. ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պատճառի երկրորդական նախադասությունը կոչվում է բարդ ստորադասական նախադասության մաս կազմող այնպիսի նախադասությունը, որ բացահայտում, հիմնավորում ու պատճառաբանում է գլխավոր նախադասության ստորոգյալի գործողության շարժառիթներն ու պատճառները. օրինակ՝ Որովհետև ընթրիքն արդեն պատրաստ էր, ուստի շուտով սեղան նստանք *(Մուր., II, 30)*։

Այս բարդ նախադասության մեջ սեղան նստելու *գործողությունը որոշ ժամանակում կատարվելը պատճառաբանվում կամ հիմնավորվում է ընթրիքի պատրաստ լինելու փաստով, ուստի առաջին նախադասությունը պատճառի պարագա երկրորդական լրացուցիչ նախադասություն է երկրորդի համար, որը գլխավորն է։*

Պատճառի պարագա երկրորդական նախադասությունը ոչ միայն կարող է պատճառ հանդիսանալ որևէ գործողության, առարկայի գոյության, լինելիության, այլև դառնալ ապացույց, հիմունք, որով հաստատվում է, հիմնավորվում, փաստարկվում հիշյալ լինելիությունը. օրինակ՝ Եվ որովհետև ես կամ, ուրեմն կա և տիեզերքը *(Իսահակյան, III, 217)*։ Սակայն մահը կա, որովհետև ես տեսա նրան *(Նույն տեղում, 218)*։ Եվ որովհետև համոզված է *(որ իր վարմունքը պատերազմի պատճառ պետք է դառնա)*, սկսում է ամրացնել Տարոնը *(Րաֆֆի)*։

Պատճառի երկրորդական նախադասությունները կապակցվում են որովհետև, որ, քանի որ, մանավանդ որ, թե, չէ որ, որքանով

որ, զի, վասնզի, քանզի, ըստ որում և մի քանի այլ շաղկապներով, որոնց համապատասխան գլխավոր նախադասության մեջ երբեմն կարող են հանդես գալ՝ ուստի, ուրեմն, նրա համար, այդ պատճառով, շնորհիվ դրա, ապա ուրեմն շաղկապներն ու շաղկապային բառակապակցությունները։

ա) ՈՐՈՎՀԵՏԵՎ, ՔԱՆԻ ՈՐ, ՔԱՆԻ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՊԱՏՃԱՌԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Այս բոլոր շաղկապներն ու շաղկապային բառերը միևնույն չափով ու ծավալով չեն կիրառվում գրական լեզվում։ Դրանցից ամենից հաճախ գործածվում է որովհետև շաղկապը, որ բառացի նշանակում է որի հետքով, բայց շատ հնուց վերացականացել և ստացել է պատճառական շաղկապի նշանակություն։ Որովհետև շաղկապը իր պատճառական հասկացողության դրսևորման մեջ ամենաուժեղն է, մանավանդ երբ գլխավոր նախադասության մեջ լինում է համապատասխան ցուցում (ապա ուրեմն, այդ պատճառով և այլն). օրինակ՝ Եվ որովհետև այսօր երեկվա ժամանակից ուշ էինք ճաշում, այդ պատճառով էլ ավելի քաղցած էինք (Մուր., II, 17)։ Որովհետև չունեմ, դրա համար պետք է ձեզ տուգանք վճարեմ (ՂԱ, III, 103)։ Եվ որովհետև ես եմ ստեղծել ժամանակ-տարածությունը, իմ ոգու դրսևորումն է նա և իմ կամքի ու մտքի առարկայացումը,— ապա ուրեմն ես հզոր եմ, և անմահ է իմ եսը (Իս., III, 218)։

Պատճառի երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են քանի որ բաղադրյալ շաղկապով։ Իբրև պատճառի շաղկապ՝ նախորդի համեմատությամբ այս վերջինը ունի իմաստային և ոճաբանական տարբերություն. սրանով կապակցվող երկրորդական նախադասությունների պատճառական հարաբերությունը ավելի թույլ է արտահայտվում։ Որովհետև-ը միայն պատճառական շաղկապ է և որպես այդպիսին՝ հստակ ու մեկին է դրսևորում պատճառական հարաբերությունը. իսկ քանի որ-ը պատճառի հետ ունի պայմանի նշանակություն՝ ժամանակի երանգով։ Համեմատիր՝ Ինչը կարող էին նկատել, քանի որ բան չի եղել (ՆԶՀ, 145)։ Ավագյանը ինչու հարձակվեց չորրորդ բրիգադի վրա, քանի որ վերջինս ամենաօրինակելի բրիգադն է (Նույն տեղում, 60)։ Էլ ինչու եք մեղադրում գյուղացոց, քանի որ ինքներդ եք ձեզ անասնացնում, ծաղրելի դարձնում (Փափազյան, 194)։

Ունենալով ժողովրդական-խոսակցական ծագում, քանի որ *շաղկապը հաճախ չի պահանջում, որ գլխավոր նախադասության եզրում հանդես գան* ուստի, ուրեմն, ապա ուրեմն *շաղկապներն ու կապակցական այլ բառեր, որոնք ինչպես ավելց, ուժեղացնում են պատճառա-տրամաբանական շաղկապումը. Ահա մի երկու օրինակներ* քանի որ *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունների. Քո անձն էլ մինչև անգամ նրան է պատկանում,* քանի որ նրա ձեռքի տակ ես գտնվում *(Ր., II, 538)։* Շրջանային կենտրոնում դժվար էր պաշտպանել Լևոնին, քանի որ Սանդարյանը բըշնամաբար էր տրամադրված նրա հանդեպ *(Նույն տեղում, 383)։*

Պատճառի երկրորդական նախադասությունը հազվադեպ կապակցվում է նաև քանի *բառով։ Քանի բառի այս կիրառությունը անսովոր լինելով՝ պատճառի նշանակությունը շատ թույլ է և երկդիմի. այդ երկդիմությունը արդյունք է մասամբ ժամանակային երանգի. օրինակ՝* Քանի դու եկար, նա այլևս մերը չէ *(Փափ., 447)։* Ավաղ, Յոսիփ Կոզան արդեն հասավ իր օրհասին, Քանի առավ նրա ճամփեն Ապանասի ճամփին *(ՆՁ, III, 289)։*

բ) *ՈՐ* ՇԱՂԿԱՊՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՊԱՏՃԱՌԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Շնորհիվ իր բազմազան առումների՝ իբրև պատճառական շաղկապ, թույլ է դրսևորվում նաև որ-*ը։ Սա իր այս կիրառությամբ նույնպես ժողովրդական-խոսակցական ծագում ունի։ Ամենից ցայտուն դրսևորվում է այն դեպքում, երբ գլխավոր նախադասության պատճառի պարագան պատճառի բացառականով դրված* այն *ցուցականն է. օրինակ՝* Այդ նրանից է, որ նրանք քաղիմաց դայակներ չունեն *(Իս., III, 239)։* Այդ նրանից է, որ մեր այսօրվա ոգուն Այլևս չի կարող լինել պատյան Ոչ Տերյանի բարբառը նվագուն, Ոչ Նարեկի մրմունջը մազաղաթյա *(ՉԼ, 137)։* Այդ նրանից է, որ ձեզ ուրիշ ոչինչ չեն սովորեցրել *(ՐԿ, 538)։* Եվ եթե ես հաճախ վատ եմ պայքարում, այդ նրանից է, որ ես դեռ չեմ սովորել կարգին պայքարել *(ԳՄե, 362)։*

Ծանոթություն.— Այս կարգի պատճառի երկրորդական նախադասությունները ոմանք ընդունում են իբրև ստորոգելիական վերադիր նախադասություն. այդ պետք է սխալ համարել. Եվ *բայց այս պարագայում ոչ թե հանգույց է, այլ էական բայ՝* առաջանում է, ծագում է, առաջ է գալիս *նշանակությամբ։*

Որ *շաղկապով կապակցվում են նաև այն երկրորդական նախադասությունները, որոնց համար իբրև հարաբերյալ ծառայում է գլխավոր նախադասության եզրում հանդես եկող* նրա համար *ձևական պատճառի պարագան։ Այսպիսի կապակցությունների մեջ էլ ավելի թույլ է դրսևորվում պատճառական հարաբերությունը, քանի որ* նրա համար *ունի նաև շահի ու նպատակային նշանակություններ։ Համեմատիր հետևյալ օրինակները.* Նրա համար էր նա եկել մենակ, որ մխիթարի ինձ որբ ժամանակ *(Թ., II, 212)*։ Նրա համար են էդպես անում, որ իրար տեսնեն *(Թ., III, 105)*։ Քաղաքներում մարդիկ կոտորվում են նրա համար, որ շատ փափուկ են ապրում *(Մուր., V, 120)*։ *Եթե ստույգ որոշելու լինենք, այս կարգի նախադասությունները պատճառի պարագայի կապի խնդիրներ են, ճիշտ այնպես, ինչպես եթե* համար *կապի փոխարեն լիներ* պատճառով *բառը, միայն այն տարբերությամբ, որ* պատճառով *բառը դեռևս գոյականությունը չի կորցրել. Համեմատիր՝* Լևոնը չի թույլ տալիս Համիկին մարդու տալ այն պատճառով, որ իբր թե ինքն ուզում է նրա հետ ամուսնանալ *(ՆԶՀ, 153)*։ *Եվ քանի որ* պատճառով *բառը դեռևս պահպանում է իր գոյականությունը, ուստի այդ տիպի երկրորդական նախադասությունները մասամբ և որոշիչ նշանակություն ունեն։*

Հոգեկան ներքին վիճակ արտահայտող մի շարք բայական կամ անվանական ստորոգյալներ գլխավոր նախադասության մեջ կիրառվելով, իրենց հետ կապում են որ *շաղկապով այնպիսի երկրորդական նախադասություններ, որոնց արտահայտած գործողությունից են առաջացել գլխավոր նախադասության ցույց տված եղելությունները։ Այդպիսի երկրորդական նախադասությունները պատճառական հարաբերությունը թույլ են արտահայտում. որովհետև նաև անուղղակի խնդրի բնույթ ունեն. օրինակ՝* Ես ցավում եմ, որ մահացու չէ վերքս *(Մուր., III, 347)*։ Բայց վշտանում եմ սաստիկ, որ շահի գալուստը նոր թշվառություն պիտի բերե ձեր գլխին *(Մուր., V, 194)*։ Ես չեմ կարող չուրախանալ, որ դու այդպես անարատ ես մնացել *(Ր., III, 550)*։ Ուրախ եմ, որ կարողանում ես այդպես անկեղծորեն խոսել *(Մուր., III, 119)*։ Ես հպարտ էի, որ շատ աղջիկներից նա ինձ ընդունեց *(Քոչար, 127)*։ Նա իր հոգու խորքում գոհ էր, որ մահը հեռացավ իրենից *(Իս., III, 217)*։ Կարծես զղջում էր, որ շատ բան էր պատմել *(Նար., IV, 87)*։

գ) *ԶԻ, ՔԱՆԶԻ, ՎԱՍՆԶԻ* ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՊԱՏՃԱՌԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պատճառական հին շաղկապներ են **զի, քանզի, վասնզի** *(վասն զի), որոնք այժմ կորցրել են իրենց ընդհանրական արժեքը։ Դրանք գործածվում են միայն ոճաբանական նկատառումներով. նկատվում են խոհափիլիսոփայական, գեղարվեստական գրականության XIX դարի մի քանի հեղինակների ոճավորված գրական խոսքի մեջ, հրապարակախոսական երկերում. այժմ ավելի սահմանափակ են և գործածվում են առանձին դեպքերում որոշ հեղինակների կողմից։ Այս շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունները միայն պատճառական հարաբերություն են արտահայտում, ուստի պատճառա-տրամաբանական կողմով ավելի ուժեղ են, չնայած մեծ մասամբ գլխավոր նախադասությունների մեջ հանդես չեն գալիս հարաբերական բառեր ու շաղկապներ։ Ահա մի քանի օրինակներ.* **Մեզ բոլորիս դուրս շպրտիր այստեղից, զի արժանի չենք մենք այստեղ կախվելու** *(Մուր., IV, 160)*։ **Օ, հին բարեկամ, դու Հեգելի, Մարքսի վրայով հապճեպ անցած, ես ներում եմ քեզ, ներում էլի, Քանզի խեղճ ես դու և ոչ թե չար** *(ՉԼ, 211)*։ **Եվ մեծ եմ ես, քանզի ինձ մեծ երբ էր նշված պատմությունից** *(Նույն տեղում, 495)*։ **Ալբունովը շտապեց ուրախություն հայտնել, որ հանդիպեց «իր եղբայրակիցներին», վասն զի ինքն էլ կալվածատեր է** *(Շիրվ., V, 151)*։ **Եվ միշտ կթաղի, ով դժնի սողուն, քանզի նույն ծաղկից վայրի բնության դու թույն ես քամում ընդդեմ մարդկության** *(Շիրազ, Ընտ., 194)*։

Այս շաղկապներից այժմ առավել հնացած են **վասնզի**-*ն և* **զի**-*ն, իսկ* **քանզի**-*ն համեմատաբար ավելի է կիրառվում։*

դ) *ԸՍՏ ՈՐՈՒՄ, ԱՅՆՔԱՆ, ԱՅՆՔԱՆ ՈՐ* ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՊԱՏՃԱՌԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պատճառի պարագա երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է **ըստ որում** *շաղկապով, որը նույնպես հնացած է և այժմ իբրև այդպիսին սակավ է պատահում. օրինակ՝* **Մեր ետքից բարձրացող այս բլուրները նույնպես խափանում են ճանապարհը, ըստ որում հետզհետե բարձրանալով միանում են ուրիշ լեռների հետ** *(Մուր., III, 185)*։ **Երկրորդ և երրորդ անգամն էլ կարդաց, ըստ որում աչքերին չէր հավատում** *(ՂԱՀ, 47)*։

Պատճառի երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են **այնքան, այնքան որ** *շաղկապային բառերով. օրի-*

նակ՝ Վարդանը զայրացավ, այնքան որ ճիշտ էր գտնում այդ միտքը (ԴԴԵԺ, III, 42)։ Նա փոխվում էր, լցվում նոր մտքերով ու զգացմունքներով և չէր նկատում այդ, այնքան նրան կլանել էր Անահիտի մասին իր եսական շահերի կիրքը (ԴԴԵԺ, IV, 210)։ *Պատճառականության կապը շատ թույլ արտահայտում է նաև* այնպես *բառը. օրինակ՝* Սիրում եմ կյանքը, Անահիտ, տենչում եմ տենչալով, այնպես քաղցր է կյանքը (ԴԴԵԺ, IV, 453)։ *Պետք է նշել նաև, որ* այնքան *բառը իբրև երկրորդական նախադասություն կապակցելու միջոց նույնպես թույլ է. հաճախ այդ կապը համադասական բնույթ ունի. օրինակ՝* Նա քնած էր մանկան պես անվրդով, այնքան խաղաղ էր նրա դեմքը (ԱՍՈՎՄ, 46)։ Ձեռքը կամացուկ տարավ ազդրի վերքին, այնքան թեթև թվաց վերքը (ԱԲԾ, 425)։

ե) ԱՅՆՔԱՆ ՈՐՔԱՆ, ԱՅՆՔԱՆՈՎ ՈՐՔԱՆՈՎ, ԱՅՆՉԱՓՈՎ ՈՐՉԱՓՈՎ, ԱՅՆՔԱՆՈՎ ՈՐՔԱՆՈՎ ՈՐ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՊԱՏՃԱՌԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պատճառի երկրորդական նախադասությունը կապակցվում է այնքան որքան, այնչափով որչափով, այնքանով որքանով, այնքանով որքանով որ *բաղադրյալ շաղկապներով, որոնք պատճառական հարաբերության հետ արտահայտում են անհրաժեշտություն, հարկադրվածություն, հետևություն. օրինակ՝* Այնքանով որքանով որ եկել ես, պարտավոր ես մասնակցել մեր սեղանին: Այնքանով որքանով դու սիրում ես գրոսնել, ես կազմակերպեցի այս գրոսանքը: *Պետք է նշել, որ գեղարվեստական գրականության մեջ այս կարգի նախադասությունները շատ գործածական չեն։*

Պատճառի երկրորդական նախադասությունը գլխավորի հետ երբեմն կապակցվում է թե ինչ է *բաղադրյալ շաղկապով. օրինակ՝* Վարձու էլ չեմ առնում, թե ինչ է երբ էլ որ լինի, ամենն էլ իմն է (ՌՊԵ, 543)։ Որքան նույնիսկ նյութական միջոցներ են գտնում դրանց սարքած դավերի վրա, թե ինչ է այսինչը ուզում է վրեժ հանել այն ինչից (Թ., VI, 189)։

Պատճառի երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է մի բան որ *բաղադրյալ շաղկապով, որ խոսվածքներում դարձել է* բան որ. Մի բան որ միևնույն բանը պետք է անի, ավելի լավ է, որ իրան բարեկամը լինի (Թ., VI, 59)։ Մի բան՝ որ առանց էն էլ սովից մեռնելու ենք, կտանեմ (*Նույն տեղում*, III, 159)։ Մի բան որ ծառը կտրելուց ետը մին էլ նեղություն պետք է քաշեմ անազին գերանը գետնից բարձրացնեմ գցեմ սելի մեջ, ավելի

լավ է ճենց սելը լծած բերեմ ծառի տակը կանգնեցնեմ *(Նույն տեղում, 201)*։

գ) *ԵՐԲ, ԵՐԲ ՈՐ, ԵԹԵ* ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՊԱՏՃԱՌԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պատճառի երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են երբ, երբ որ *շաղկապային բառերով, որոնք իբրև այդպիսին համեմատաբար սակավ են գործածվում, և այս դեպքում բարդության մասերի միջև պատճառակցական կապը ավելի թույլ ու երկդիմի է արտահայտում. օրինակ՝* Ապրուստ էլ կերեք իմ լի սեղանից, երբ որ դադարգյուն եղաք ձեր տանից *(Թ., I, 286)*։ Եվ ինչպե՞ս կարող էր ընկ. Վառոդյանը այդ չիմանալ, երբ իր կաշվի վրա զգացել էր *(ԵՉե, 306)*։ Երբ *բառի այս երկդիմությունը հետևանք է ժամանակի և պայմանի հարաբերությունների համատեղության։ Համեմատիր հետևյալ օրինակը՝* Երբ պիտի լռեն ճողմերը այս չար, ինչո՞ւ են փռում այսքան ցավ ավեր: *Այստեղ* երբ-*ը նշանակում է՝* քանի որ *և պայմանի ու պատճառի հարաբերություն է ցույց տալիս։ Իսկ եթե* երբ-*ի վրա հարցական նշան դրվի* (Ե՞րբ պիտի լռեն ճողմերը այս չար), *ապա այստեղ* երբ-*ը ժամանակի մակբայ է*։

Պատճառի երկրորդական նախադասությունները հազվադեպ կապակցվում են եթե *պայմանական շաղկապով, որը համատեղում է նաև պայմանի հարաբերություն.* Եթե սիրում ես, էլ դարդ մի անիր *(Թ., II 65)*։

է) *ՄԱՆԱՎԱՆԴ, ՄԱՆԱՎԱՆԴ ԹԵ, ՄԱՆԱՎԱՆԴ ԵՐԲ, ՄԱՆԱՎԱՆԴ ՈՐ, ՆԱՄԱՆԱՎԱՆԴ, ՆԱՄԱՆԱՎԱՆԴ ՈՐ, ՉԷ ՈՐ* ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՊԱՏՃԱՌԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Մասամբ պատճառի նշանակությամբ են հանդես գալիս այն երկրորդական նախադասությունները, որոնք կապակցվում են մանավանդ, մանավանդ թե, մանավանդ որ, *սակավ՝* նամանավանդ, նամանավանդ որ *շաղկապներով. սրանք կարծես լրացուցիչ պատճառ են ցույց տալիս. թվում է, թե գլխավոր նախադասության գործողությունը մի ինչ-որ պատճառով արդեն տեղի է ունեցել, ունենում կամ ունենալու է, իսկ հիշյալ շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունները ընդգծում, շեշտում են նաև մի լրացուցիչ պատճառ, որով գլխավոր նախադասության գործողության այլ կերպ լինելը դառնում է անհնար. օրինակ՝* Մեր ծանոթը շարունակ ժպտում էր: Ես սկսեցի շփոթվել, մանավանդ գիտցածս

էլ հատնում էր *(Թ., III, 122)*։ Ոգևորվել էի, լավ էի խոսում, մանավանդ որ լսում էր մեծ ուշադրությամբ *(Նար., II, 451)*։ Իրավունք ունի կարծելու, թե նախկին Վահրամ սեպուհը դարձել է արդեն մի մատնիչ, մի տիրադրուժ, մանավանդ որ այժմ ծառայում է ապըստամբների դրոշակի տակ *(ՄԳՄ, 95)*։ Ամենքն էլ ուրախանում են, մանավանդ էլ խլանալու վտանգ չկար *(Թ., III, 257)*։ Չէր հավատում ոչ մի խոսքի, նամանավանդ որ շատ էր խաբվել։

Պատճառի երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է չէ որ *շաղկապով, որն իբրև այդպիսին շատ թույլ է. թվում է, թե դա ոչ թե երկրորդական նախադասությունն է կապում գլխավորի հետ, այլ դրանով սկսվող նախադասությունը բերվում է իբրև զուգադիր փաստարկում, իբրև անուղղակի լրացուցիչ հաղորդում. օրինակ՝* Ինչի՞ց էր վախենում, չէ որ եկել էր սրտակից բարեկամի մոտ *(ԲՎԻԳԵ, 32)*։ Եվ կդիտեինք այս հրաշալիքները և գործի մասին կխոսեինք, չէ որ ես հիմնականում ենթակայանի համար եմ եկել ձեզ մոտ *(Նույն տեղում, 373)*։ Բայց դու իզուր ես լալիս, չէ՞ որ խավարը երկար չպատեց մեր հայացքը, չէ՞ որ մենք շատ անգամներ վերստին հարություն առանք, վերստին գտանք իրար *(ԱԻԵ, 285)*։

բ) ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Պատճառի պարագա երկրորդական նախադասությունները գերազանցապես նախադաս են կիրառվում։ Միջադաս չեն լինում, որովհետև ուղղակի կերպով նախադասության մի որևէ անդամի չեն վերաբերում, որպեսզի ձգտեն այդ վերջինին մոտենալ և ըստ այդմ էլ շարադասվեն նախադասության մեջ։

Եթե գլխավոր նախադասությունը առաջադաս է և համապատասխան շաղկապներ ու շաղկապային բառեր չեն կիրառված, այս պարագայում կապակցության տրամաբանական ուժը ավելի է թուլանում։ Տրամաբանական հաջորդականությամբ պատճառը պետք է առաջ լինի, և հետևանքը հաջորդի նրան, իսկ պատճառական կապակցության մեջ փաստորեն գոյություն ունի պատճառի և հետևանքի հարաբերություն։ Եթե երկրորդական նախադասության շաղկապները վերացնենք, գլխավոր նախադասությունը կդառնա հետևանքի. համեմատիր՝ Նրա վարկը որոշ չափով նվազեցավ, որովհետև այդպիսի մի անտարբերություն հանցանքի չափ ծանր էր թվում իմ աչքում *(Մուր., II, 30)*։ Սեփոն դժվար թե կարողանար ճիշտ պատասխան տալ, որովհետև նա սովորություն չուներ զննող

հայացքով նայելու որևէ մեկի *(«Ընտիր էջեր», 1147)*։ Նա քեզ կպատկանի, որովհետև անմեղությունը քո կողմն է *(Շիրվ., VI, 41)*։ Իրավունք ունեք, որովհետև դուք դեռ չեք տվել նրա պատվին ձեր վերջին հարվածը *(Նույն տեղում, 43)*։

Պատճառի երկրորդական նախադասությունները դերբայական լրացում են դառնում պատճառ *բառի միջոցով, որը տվյալ դեպքում կապի արժեք է ստանում, քանի որ երկրորդական նախադասության ստորոգյալը դառնում է դրա համար սեռականով խնդիր. ենթական կարող է պահպանել իր հոլովը և կամ փոխվել ենթակա սեռականի. երկրորդական նախադասության շաղկապները և գլխավոր նախադասության մեջ նրան զուգադիր շաղկապները (ուստի, հետևապես և այլն) ընկնում են. օրինակ՝* Բայց չհաջողվեցավ, որովհետև փախչելու միջոցին քուշաններից մի խումբ շրջապատեցին նրան և գերի բռնեցին *(Ր., III, 262)*։ Բայց չհաջողվեցավ քուշաններից մի խմբի նրան շրջապատելու և գերի բռնելու (շրջապատված և գերի բռնված լինելու) պատճառով։ Բայց որովհետև քամի էր, նա մի ձեռքով բռնել էր գլխարկը *(ՍԶ, III, 345)*։ Քամի լինելու պատճառով նա մի ձեռքով բռնել էր գլխարկը։ Որովհետև հանցանք ես գործել, հետևապես պիտի տուժես։ Հանցանք գործած լինելու պատճառով պիտի տուժես։

Ծանոթություն.—Պատճառի դերբայական լրացումը կարելի կլինի արտահայտել նաև անորոշ դերբայի գործիական հոլովով, սակայն այս դեպքում պատճառականությունը թույլ է դրսևորվում. օրինակ՝ Որովհետև հրապարակով երդվել էր, չկարողացավ զանց առնել *(Ր., III, 263)*։ Հրապարակով երդված լինելով՝ չկարողացավ զանց առնել։

Դ. ՊԱՅՄԱՆԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պայմանի պարագա երկրորդական նախադասություն կոչվում է լրացուցիչ այնպիսի նախադասությունը, որն իր մեջ բովանդակում է գլխավոր նախադասության ստորոգյալի գործողության կատարման, կամ այն բանի պայմանը, ինչ որ ասվում է գլխավոր նախադասության մեջ. օրինակ՝ Եթե հաջողվի, գուցե վաղն ևեթ գա *(Թ., V, 282)*։ Եթե հաջողվի *արտահայտում է պայման, որից կախված է գլխավոր նախադասության գործողության (գալու) կատարումը։* Որ ինձ մոտ կենաս ու աշխատես, կրակ կտամ տանես նրանց համար *(Թ., III, 261)*։ Դեռ ինչ գանձեր՝ անհուն, անծիր պիտի հանես

դու աշխարհ, եթե անդուլ կյանքիդ վրա անդուռ գիշեր շշոփի (*ՉԼ., 177*)։

Պայմանի երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են եթե, որ, թե, թե չէ, երբ, միայն թե, թեկուզ, թե որ, եթե միայն, լոկ, լոկ որ *շաղկապներով, որոնք արտահայտում են բազմազան հարաբերություններ։ Բազմիմաստ այս շաղկապների կապակցման հետևանքով պայմանի երկրորդական նախադասությունները որոշակի, անխառն պայման հաճախ չեն արտահայտում։ Իսկական պայմանի երկրորդական նախադասությունը արտահայտում է այնպիսի պայման, որն անխուսափելիորեն պայմանավորում է գլխավոր նախադասության մեջ ասվածը. օրինակ՝* Ձի շղթայվի մարդու հոգին ոչ մի կապով արտաքին. եթե դարի, ժամանակի զրահ ունի իր հագին (*ԵՉԵ, 267*)։ Բայց տես, եթե ինձ համբուրես, կկորցնես էնքան բան (*Թ., II, 157*)։ Եթե իմ ամուսինն է, անպատճառ ինձ համար է գործում այդ բարբարոսությունը (*Ր., III, 311*)։ Եթե մեկ էլ կանչեր, թեկուզ մի ակնարկ աներ, ես պիտի հետևեի նրան (*ԱԲ, ՄԹՆՁ., 146*)։

Պայմանի երկրորդական նախադասությունները հաճախ համատեղում են ժամանակի, պատճառի, վիճական և այլ հարաբերություններ, որոնք առնչվում են պայմանի այս կամ այն շաղկապի հետ։ Այս կողմից ավելի աչքի է ընկնում ժամանակի նշանակությունը, որ նույնիսկ հանդես է գալիս եթե *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունների մեջ։ Համեմատիր՝* Եթե ճախրել է սերս յուր բնից անվերադարձ, ապա այն ժամ ամրապնդիր դու իմ հոգին (*«Ընտիր էջեր», 1031*)։ *Այս նախադասության մեջ ժամանակը այնքան է ցայտուն, որ գլխավոր նախադասության մեջ համապատասխան ժամանակային բառ է կիրառված։* Եթե լավությունդ կորչի ու չկարողանանք ետ վճարել, գոնե իմանանք, թե ում ենք օրհնելու (*Թ., III, 161*)։ *Այս պարագայում* եթե *շաղկապը համանիշ է դառնում* երբ *շաղկապին։ Համեմատիր՝* Երբ կգամ ձեր գյուղը, քեզ ընտանիքով չեմ տեսնի, նոր բոլոր ասածներիդ կհավատամ (*ՍԳ, № 2, 56, էջ 12*)։ Մեր գյուղում սովորություն կա, որ մեկին ավել անուն են դնում, երեսին չեն ասում (*ԱՇ, I, 132*)։ *Կամ՝* Եթե մենք ամբարտավան ենք և մեծամիտ, գոնե դուք տվեք հեզության օրինակ: Եթե մենք ագահ ենք, գոնե դուք դաս տվեք մեզ (*Շիրվ., IX, 399—400*)։ *Եթե բերված նախադասությունների շաղկապները փոխարինենք մեկը մյուսով, կուժեղացնենք այս կամ այն հարաբերության դրսևորումը։ Եթե* երբ *ենք կիրառում, ուժեղանում է*

ժամանակի հասկացողությունը, իսկ երբ **եթե** *կամ* **որ** *ենք գործածում, ուժեղանում է պայմանականությունը։*

Վերոհիշյալ պայմանական շաղկապներին համապատասխան գլխավոր նախադասության եզրում հանդես են գալիս **այն ժամանակ, ապա, ապա ուրեմն, հետևաբար, թող ուրեմն, հետևապես, ուրեմն, գոնե, հապա, նոր** *զուգադիր շաղկապները և ուժեղացնում են պայմանականությունը։*

Պայմանի երկրորդական նախադասությունները ըստ իրենց բնույթի բաժանվում են երկու տեսակի։ Դրանք կամ արտահայտում են հնարավոր իրական պայմանը և կամ հնարավոր ցանկալի, ենթադրելի պայմանը. օրինակ՝ **Եթե ուզեն, արևներին նոր տեմպ կըտան ու նոր ուղի** *(ՉԸ, 255)։* **Սակայն եթե ինձ համբուրես, էնքան հետո կզղջաս** *(Թ., II, 164)։ Այս նախադասությունների մեջ պայմանը և նրանով պայմանավորված մյուս գործողությունը հնարավոր և իրական է համարում խոսողը, իսկ հետևյալ նախադասության մեջ այդ պայմանը և նրանով պայմանավորվող գործողությունը ենթադրելի է. օրինակ՝* **Աշխարհը որ բաժանես, կարելի է էսքան էլ ինձ չհասնի** *(Իս., III, 70)։* **Եթե տեսնեի նրան, հետս կբերեի: Լավ կլինի արդյոք, եթե գա:**

ա) *ԵԹԵ* ՇԱՂԿԱՊՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՊԱՅՄԱՆԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պայմանի շաղկապներից, ինչպես ասվեց, ամենից հաճախ կիրառվում է **եթե**-*ն, որ ընդհանուր է գրական և բանավոր խոսքի համար։ Այս շաղկապը արտահայտում է պայմանի հարաբերության հետ համատեղվող ժամանակի, հետևանքի, պատճառի և այլ հասկացողություններ ու նրբերանգներ, որոնց մեջ երբեմն պայմանը ընկալվում է ձևականորեն. օրինակ՝* **Եթե մի օր արշալույսին նա խոսի քո այգում, փուշ ու տատասկ վարդ կծաղկեն նորից նոր** *(Թ., III, 400)։* **Եթե բանտ դնել չկա, պետք է փառք տալ աստծուն** *(Փափ., 452)։* **Բայց եթե կա երգում իմ գեթ շեշտ կամ մի բառ իմ օրերից, ես կմնամ հար ու հավետ, ես կարթնանամ մահից նորից** *(ՉԸ, 495)։* **Եթե դու՛ք նրանց եղբայրներ չեք համարի, դրանով ավելի պատճառ կտաք ձեզ հալածելու** *(ՐԿ, 534)։* **Այդքան խարակ կըմնար միայն այն դեպքում, եթե նպատակ դրած լինեին խարակով վարել** *(ՆԶՀ, 172)։*

Սովորաբար **եթե** *շաղկապը դրվում է երկրորդական նախադասությունների սկզբում (չհաշված դրանցից առաջ դրվող համա-*

դասական շաղկապները), բայց չի բացառված, որ կիրառվի նաև նախադասության միջում. օրինակ՝ Կողքիցս երբ քուր եմ կախ արել, իմն է, իմ փողով ես ինքս եմ առել *(Թ., II, 250)*։ Իմ օրերի երգը երբ իմ տողերից հիմա լսես, Ուրեմն ես մեծ եմ ու խոր, երգից էլ իմ՝ խոր ու վսեմ *(ՉԸ, 495)*։ Դրսից երբ ներս մտնեիր գինետունը, ուղղակի դիմացը շինված էր գինեվաճառի առևտրատեղին *(ՊՊԵԺ, I, 312)*։ Երբ *շաղկապը հազվադեպ կարող է դրվել նաև նախադասության վերջում. օրինակ՝* Դաշն է ոգիդ աշխարհին, այդ մարտին մասնակից ես երբ *(ՉԸ, 182)*։ Եվ պահեր ենք վսեմ մենք ունեցել երբ, դա չի՞ եղել արդյոք պատահական արդյունք *(ԵՉԵ, 184)*։

Երբ *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները լինում են նախադաս, ետադաս և մասամբ միջադաս։ Գլխավոր նախադասության մեջ զուգադիր բառեր ու շաղկապներ հանդես են գալիս, երբ երկրորդական նախադասությունները նախադաս են. օրինակ՝* Երբ մարդիկ հնարավոր են համարում զրպարտել առանց որևէ հիմքի, հապա ինչեր չեն անի, երբ նկատեն այս «փաստը» *(ՆԶՀ, 145)*։ *Նախադաս պայմանի երկրորդական նախադասությունը ընկնում է ուշադրության կենտրոնում և տրամաբանական շեշտը վերցնում է իր վրա. օրինակ՝* Երբ ուզեն, արևներին նոր տեմպ կտան ու նոր ուղի... Երբ ուզեն, արեգակներ կշպրտեն երկինքն ի վեր. Երբ ուզեն, վար կբերեն երկինքներից արեգակներ... Երբ ուզեն կամքով արի ու աշխարհի հրով վառված, Ինչեր միայն չեն կատարի ամբոխները խելագարված *(ԵՉԵ, 22)*։ *Սովորական է նաև երկրորդական նախադասության ետադաս դիրքը. այս դեպքում արդեն ուշադրության կենտրոնում է առնվում գլխավոր նախադասությունը. և որովհետև գլխավոր նախադասությունը ուշադրության կենտրոնում է, արտաբերական որոշ ինքնուրույնություն է ձեռք բերում, ուստի և կապը երկրորդական նախադասության հետ մասամբ թուլանում է, մանավանդ որ այս տիպի գլխավոր նախադասությունները զուգադիր բառեր ու շաղկապներ էլ չունեն. օրինակ՝* Համոզիր, երբ կարող ես *(Մուր., IV, 185)*։ Ես ուրախ կլինեմ, երբ նման կասկածներ հեռու լինեին ինձնից *(Նույն տեղում, 180)*։ Լռությունը կատարյալ կլիներ քաղաքում, երբ միայն շները չլինեին *(Փափ., 453)*։

Հազվադեպ է պայմանի երկրորդական նախադասության միջադաս դիրքը, որ ավելի է թուլացնում պայմանականությունը՝ մոտեցնելով միջանկյալ նախադասության. օրինակ՝ Սրա հետ միասին, երբ նվագելիս թևերը բարձրացնում է, ձենը ազատ ու լիահնչուն է տարածվում *(Թ., III, 93)*։ Բայց մարդը, երբ մարդ է, ամենանեղ դրության մեջ էլ հնար գտնում է *(Թ., III, 109)*։

բ) ԹԵ, ԹԵ ՉԷ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՊԱՅՄԱՆԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Եթե շաղկապի մի տարբերակն է թե, որ հնուց անտի համարվում է նախորդի ավելի ժողովրդախոսակցական ձևը։ Այժմ էլ հաճախ այս շաղկապը կիրառվում է ժողովրդախոսակցական բնույթի գրվածքներում և մանավանդ բանաստեղծության մեջ, երբ հարկ է մի վանկ պակաս ունենալ։ Իբրև պայմանի երկրորդական նախադասություն կապող շաղկապ թե-ն համեմատաբար թույլ է արտահայտում տրամա-պայմանական հարաբերությունը, մանավանդ որ այդ դեպքում գլխավոր նախադասությունները սովորաբար իրենց եզրում չեն ունենում հարաբերյալ բառեր ու շաղկապներ, որոնք արտաբերական հատուկ հնչերանգության ենթարկելով երկու նախադասությունները, ընդգծում են պայմանա-տրամաբանական հարաբերությունը։ Թե շաղկապը երկրորդական նախադասության եզրում ավելի շարժական է, քան եթե-ն. թե-ով կապվող երկրորդական նախադասությունը գերազանցապես նախադաս դիրք ունի. օրինակ՝ Թե աստված ինձ պիտ մահ տա, թող մոտ գամ, Վզովդ ընկնեմ, քեզ համբուրեմ մի անգամ (ՀՀԸ, 15)։ Թե կուզեք, պատմեմ (Թ., III, 167)։ Թե էս քոռուկը բերի վրես գցի, տակին շունչս կկտրի (Թ., III, 54)։ Թե ինձ մոր տեղ դնում ես, էս անգամ էլ փրկիր Վռամին (ՍԳ, 55 թ., 2, էջ 14)։ Թե ձորերում ձյուն լինի, մի քիչ բեր («Մարգարիտներ», 185)։

Երբ պայմանի երկրորդական նախադասությունը նախադաս է. թե շաղկապը չափածո խոսքի մեջ կարող է դրվել նաև երկրորդական նախադասության միջում և վերջում. օրինակ՝ Էս աշխարհում թե մի ճար կա, մի հնար կա քո ցավին, էն հազարան ազնիվ հավքն է, որ դու չունես տակավին (Թ., II, 157)։ Սիրտդ հանգիստ, հոգիդ խաղաղ նրանց միջից թե անցնես, ողջ կլնեն, և դու անփորձ ապարանքին կհասնես (Թ., III, 172)։

Հաճախ թե-ով կապակցվող պայմանի երկրորդական նախադասությամբ ամբողջ բարդ նախադասությանը հակադրվում է թե չէ շաղկապով մի այլ նախադասություն։ Թե չէ շաղկապն առաջացել է նախորդի դրական ձևին հակադրվող ժխտական լրիվ նախադասությունից. այսինքն՝ ամբողջ բարդ նախադասությանը հակադրվում է մի ժխտական նույնպիսի բարդ նախադասություն միևնույն շաղկապով, երկրորդական նախադասության միևնույն ստորոգյալի ժխտական ձևով, որ հետագայում արտահայտվում է չէ ժխտական մասնիկով, իսկ սա էլ միանում է թե շաղկապին և կազ-

մում մի բաղադրյալ պայմանի շաղկապ. օրինակ՝ Թե հարցիս պատասխանեցիք, իմ կովը ձեզ լինի, թե չէ՝ *(այն է՝ թե չպատասխանեցիք)* երկուսդ էլ իմն եք *(Թ., III, 159)*։ Թե սրա հետ կպսակվեմ, լավ, թե չէ հո՝ ինձ մի փոձանքի կտամ *(Նույն տեղում, 164)*։ *Համեմատիր՝* Թե կհասնեն, լավ, թե չեն հասնի, դարձյալ միշտ լավ է ու լավ *(Թ., III, 228)*։ *Այսպիսով մի պայմանի երկրորդական նախադասությունից առաջանում է* թե չէ *հակադրական-պայմանական նոր շաղկապը։ Համեմատիր՝* էս վերջինը ըլի, թե չէ կխռովենք *(ՊՊԵԺ, I, 315)*։ Խփիր, թե չէ քո գլուխը կկտրեն *(Փափ., 300)*։ Գնա էն կողմը, թե չէ որ մահակս վերցրի, ոտքերդ կջարդեմ *(«Մարգարիտներ», 35)*։

Թե-*ով կապակցվող պայմանի երկրորդական նախադասությունները կարող են նաև ետադաս դրվել. այս պարագայում* թե *շաղկապը պահպանվում է երկրորդական նախադասության սկզբում. օրինակ՝* Չէիր ձանձրանա դու գիտությունից, չէիր ձանձրանա սիրուց ու կյանքից, թե ունենայիր թշնամիներ մեծ, թե նրանց շարքում գեթ մեկը լիներ մտքիդ հավասար *(ՉԸ, 210)*։ Նրան կլսի Իլիան, թե լսի *(Թ., II, 231)*։ *Չափածոյի մեջ* թե-*ն կարող է նաև դիրքը փոխել. օրինակ՝* Մահ թշնամուն հիմի հարուստ, մեր տերության վրա թե գան։ Բայց հույս ունենք, կնիկ, որ կջարդենք նրանց, կշպրտենք անթիվ տանկերով էլ գան թե *(ԵՉԵ, 86, 98)*։

գ) *ԹԵ ՈՐ, ՄԻԱՅՆ, ՄԻԱՅՆ ԹԵ, ԵԹԵ ՄԻԱՅՆ, ԹԵ ՄԻԱՅՆ* ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՊԱՅՄԱՆԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Թե *շաղկապը խոսակցական լեզվում բարդանում է* որ *շաղկապով և կազմում մի բաղադրյալ շաղկապ՝* թե որ, *որով կապակցվում են պայմանի երկրորդական նախադասությունները. օրինակ՝* Թե որ քեզանից ավելի խեր տվող գտնեն, թող քո տեղը խցկեն *(ՊՊԵԺ, I, 318)*։ Թե որ սրանից հինգ ռուբլի դուրս կգա, վերցրու *(«Ընտիր էջեր», 729)*։

Թե որ *շաղկապին զուգադիր կիրառվում են* թե այն է, թե *(էն է) խոսակցական շաղկապները, որոնք նույնպես կապակցում են պայմանի երկրորդական նախադասությունը գլխավորի հետ. օրինակ՝* Ականջդ կանչի, թե որ ողջ ես. թե էն է պսռկել ես հողի տակ, տղերքդ ողջ լինեն *(ԱԻԵ, 220)*։

Պայմանի երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են միայն, միայն թե *շաղկապներով, որոնք պայմանի*

ընդհանուր նշանակությունը և նրա ծավալը սահմանափակում են մի որոշակի երևույթով, որն իբրև պայման գլխավոր նախադասության զուգահեռ էլ կարող է կատարվել։ Դա ընդունվում է իբրև լրացուցիչ պայման, որ եթե գլխավոր նախադասության գործողության հետ կատարվի, ավելի լավ կլինի. այդպիսի պայմանը յուրահատուկ ցանկություն է. իսկ եթե դա կտրուկ պայման է, այն ժամանակ կիրառվում է **եթե միայն** *շաղկապը։ Համեմատիր՝* **Թույլ կտամ, եթե միայն կատարվի իմ ասածը: Գժտությունից չեմ վախենում, նույնիսկ եթե բոլորը զինվեն իմ դեմ, միայն թե նա լինի ինձ հետ** *(Մուր., IV, 188)։* **Իմ բոլոր զարդերը կտամ, իմ անգին քարերը կտամ, իմ ոսկե թագը կտամ, միայն թե իմ սիրուն գնդակը հանես** *(Թ., III, 308)։* **Ինչ որ ցանկաս, Կուզե՞ս լինիմ, Լինիմ երկինք ու երկիր, Լինիմ ծով, ժայռ, արև լուսին, Միայն, միայն ինձ սիրիր** *(ԱԻԵ, 8)։ Այս նախադասությունները մասամբ նպատակային բնույթ են կրում. օրինակ՝* **Նա պատրաստ էր ամեն ինչ տալ, միայն թե առանց կռվի, առանց արյան կարողանար հաշտվել յուր խղճի և յուր զգացումների հետ** *(Ր., III, 569)։*

Կա նաև այդ նույն բաղադրյալ շաղկապի շրջված ձևը, օրինակ՝ **Սպարապետը խոստանում է ասի, թե միայն թագավորը չի բարկանա** *(Թ., II, 285)։*

Ծանոթություն.— Պայմանի երկրորդական նախադասությունը գլխավորի հետ հազվադեպ կապակցվում է նաև **վայ թե** *բաղադրյալ շաղկապով, որ բարբառային է. օրինակ՝* **Վայ թե ոտքդ դուրս պրծներ, մինչի անդունդը մերիկ կանչելով պիտի երթայիր** *(Իս., III, 314)։*

դ) *ՈՐ* ՇԱՂԿԱՊՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՊԱՅՄԱՆԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պայմանի երկրորդական նախադասությունը կապակցվում է նաև **որ** *բազմիմաստ շաղկապով։ Իբրև այդպիսին այս շաղկապը լայն կիրառություն է գտնում բանավոր խոսքի մեջ, որից անցել է գրական լեզվին և կիրառվում է առանձնապես բանավոր խոսքի միջոցներով ոճավորված գրվածքներում։ Իբրև պայմանի երկրորդական նախադասություն կապակցող շաղկապ, սա միաժամանակ հաճախ համատեղում է ժամանակի հարաբերություն. դա երևում է այն բանից, որ գլխավոր նախադասության մեջ երբեմն հանդես են գալիս ժամանակ ցույց տվող զուգադիր բառեր։ Համեմատիր՝* **Բայց Լուսիկի սիրտը որ կոտրենք, հետո ինչ անենք** *(Թ., III 162)։ Պայ-*

մանականությունը թուլանում է մանավանդ այն դեպքում, երբ նախադասությունները կիրառվում են սահմանական եղանակի ժամանակներով. օրինակ՝ էլ ինչ տղամարդ եմ ես, էլ ինչու եմ գդակ ծածկում, որ դու համարձակվում ես իմ առաջ խոսես (Թ., III, 188)։

Որ շաղկապը ավելի շարժական է, քան թե մյուս շաղկապները. սրանով կապակցվող երկրորդական նախադասությունները գերազանցապես նախադաս են, իսկ այս շարադասությամբ կիրառվող երկրորդական նախադասությունների մեջ որ շաղկապը ազատ դրվում է նախադասության սկզբում և միջում, ըստ որում ավելի սովորական է միջին դիրքը. օրինակ՝ Ես էլ որ լինեի, մեծ մասն ինձ կպահեի (ՊՊԵԺ, I, 320)։ Դու որ լավ մարդ լինեիր, քեզ չէին չարչարի («Մարգարիտներ», 37)։ Քրոջս տղային որ ասել ես աչքիդ վերևը ունք կա, ես քո տանը մնացող չեմ (ՍԳ, 56, 2, էջ 14)։ Քեզ որ չտանեմ, թագավորը գլուխս կկտրի («Մարգարիտներ», 281)։ Շատ որ ձգձգվեն, նոր փորձանքներ կհայտնվեն (ԴԴՎ, 183)։

Երկրորդական նախադասության սկզբում որ շաղկապը հենց սկզբից հուշում է պայմանականության հանգամանքը, ուստի այս դեպքում կապակցության ուժը ավելի է մեծանում, քան այն դեպքում, երբ որ-ը նախադասության միջում է. օրինակ՝ Որ գնում ես, մի քիչ բեր («Մարգարիտներ», 185)։ Որ ես չափոփեմ մայրիկին, էլ ով կա (ՍԳ, 56 թ., 2, էջ 14)։ Որ այդպես է, ուրեմն դու սիրում ես նրան (Շիրվ., VI, 41)։

Նախադասության սկզբում որ շաղկապը սկսում է բարդանալ բա, դե, մեկ եղանակավորիչներով, որոնք արտահայտում են դրդում, վճռականություն, մասամբ ուժեղացնում են պայմանականությունը. օրինակ՝ Դե որ էդպես է, լսիր (Թ., III, 403)։ Բա որ ծնեյիս հորթատեցին, պլանդ ուր կմնա (ՆՁՀ, 8)։ Մեկ որ իր ասածը պնդեր, այլևս հակառակը համոզելը անկարելի էր: Բա որ էդպես բլբուլ ես դառել, ո՞վ պիտի սեղան սարքի հյուրերի համար (ԲՎԻԳԵ, 182)։

Պայմանականությունը ավելի թուլանում է, երբ որ շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունը ետադաս է դրվում. դա պետք է բացատրել նրանով. որ այդ շաղկապը տվյալ դեպքում կապակցում է շատ այլ բնույթի նախադասություններ՝ կիրառվելով կամ իբրև հարաբերական դերանուն, կամ իբրև շաղկապ. Համեմատիր հետևյալ պայմանի նախադասությունը նախորդների հետ. Մարդս ինչ կաներ, որ շատ էլ ուզեր (Թ., II, 29)։

Ինչպես որ սակավ է այս շաղկապով կապակցվող պայմանական նախադասության ետադաս դիրքը, այնպես էլ սահմանափակ

է միջադաս շարադասությունը։ Երբեմն միջադաս նախադասությունը այնքան է սերտանում իրենից առաջ ընկած գլխավոր նախադասության մի մասի հետ, որ կարծես միասին կազմում են մի երկրորդական նախադասություն։ Համեմատիր՝ Մի բան որ ասում եմ, պետf է կատարվի *(Նար., VII, 243)։* Գլխին էլ որ լավ մոտիկ անեf, պառավ մարդի գլխի նման է *(Թ., III, 94)։ Փոխանակ՝* Գլուխն էլ, որ լավ մոտիկ անեf, պառավ մարդի գլխի նման է:

ե) *ԵՐԲ, ՄԻՆՉԵՎ, ԹԵԵՎ, ԹԵԿՈՒԶ, ՔԱՆԻ ՈՐ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ* ԿԱՊԱԿՑՎՈՂ ՊԱՅՄԱՆԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պայմանականությունը թույլ արտահայտվում է երբ, մինչև, թեև, թեկուզ, fանի որ *շաղկապներով։ Առաջին երկուսը ուժեղ դըրսևորումով, միջին երկուսը՝ զիջականությամբ, իսկ վերջինը պատճառի ընդգծումով. օրինակ՝* Քանի որ դու ասում ես, պետf է ճիշտ ճամարել, *այսինքն՝* եթե դու ասում *ես... և այլն։* Երբ շատ էլ ցանկանար, դարձյալ չէր կարող ոչինչ ճնշում գործ դնել Միfայելի վրա *(Ր., II, 545)։* էլ չես գտնի, ինչ կորցնես, ամբողջ կյանfդ թեկուզ տաս *(Թ., II, 164)։* Ես մինչև Շուշանին չտեսնեմ, սիրտս կճաfի *(ԲՎԻԳԵ, 176)։* Եվ ես պետf է ճասնեմ նրան, թեկուզ էդ fաշի մինչև աշխարճfի վերջը *(Թ., III, 269)։* Մինչև չգա ճետինը, չի ճիշվի առաջինը *(ՊՊԵԺ, 318)։ Իհարկե, այս շաղկապների պայմանական նշանակությունը արտահայտվում է այնքանով, որքանով ժամանակի զիջական, պատճառական հարաբերությունները սերտ առնչակցություն ունեն պայմանի հարաբերության հետ։*

Պայմանականության և պատճառակցության կապը ավելի սերտ է։ Երկրորդական նախադասության պայմանը միաժամանակ պատճառաբանություն է այն բանի, ինչ որ ասվում է գլխավոր նախադասության մեջ։ Երկրորդական նախադասությունը հիմնավորման հետ արտահայտում է պայման. օրինակ՝ Քանի որ այդ այդպես է, ապա ուրեմն պետf է գնանf:

Պայմանի երկրորդական նախադասությունները դերբայական լրացում են դառնում դեպfում, պարագայում, պարագային *ձևերի միջնորդությամբ, որոնց հատկացուցչի ձևով կամ կապի ու խնդրի հարաբերությամբ կապակցվում է երկրորդական նախադասության ստորոգյալը. օրինակ՝* Ինձ որ տեսնի, շատ կուրախանա *(Թ., III, 10)։* Եթե ժամանակին Վռամին ազատեինf, ճիմա այդ վիճակում չէր լինի *(ՍԳ, 56, № 2, 14)։* Ինձ տեսնելու դեպfում *(պարագայում)* շատ կուրախանա։ Քաղաf փախչելը իմանալու դեպfում ինչ-

քան կզարմանան։ Ժամանակին Վռամին ազատելու պարագային հիմա այդ վիճակում չէր լինի։ *Բնականաբար շաղկապները և կապակցող բառերը ընկնում են, իսկ երկրորդական նախադասության ենթական փոխվում է ենթակա սեռականի։*

գ) *ՄԵԿ ՈՐ (Հ)ԱՄԱ ՈՐ, ՊԱՅՄԱՆՈՎ ՈՐ* ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՊԱՅՄԱՆԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պայմանի երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են նաև մեկ որ, (հ)ամա որ, պայմանով որ *շաղկապներով ու շաղկապային կապակցություններով, որոնք տարբեր են իրենց բնույթով ու գործածության չափով։* Մեկ որ, (հ)ամա որ *խոսակցական են, իսկ* պայմանով որ-*ը գրքային է։ Համեմատիր՝* Ամա թե որ ձեն էք հանել, հոգիներդ կհանեմ *(Թումանյան)։* Մտահոգվելու շատ բան չկար, պայմանով որ կարողանար իր սիրահարին գրել *(Դրայզեր, «Հանճարը», II, 383)։* Մեկ որ ասի, այլևս իմ խոսքից ետ չեմ կանգնի։ Թագավորը հարգելով իշխանի առաջարկությունը, համաձայնեցավ նրա հետ, միայն պայմանով, որ հարձակումն անեն ոչ թե գիշերը, այլ լուսաբացին *(ՄԳՄ, 473)։* Նա սիրում է միայն գաղափարը, պայմանով որ... չլինի խրթին *(ԵՉԵ, 252)։*

Հաճախ ոչ ճիշտ կերպով պայմանով և որ *բառերը ստորակետով անջատում են միմյանցից, երբ արդեն դրանք մի բաղադրյալ շաղկապ են կազմում։ Համեմատիր՝* Իրենք կառավարական օրինագծի օգտին կքվեարկեն պայմանով, որ ալժիրյան Ալժիրը նշանակի բանակցություններ և խաղաղություն *(ՍՀ, № 299, 1960)։*

Այլ են մի պայմանով, մի այնպիսի պայմանով, այնպիսի պայմանով, *որոնք հարաբերյալի դեր են կատարում. օրինակ՝* Ես կհամաձայնվեմ մի այնպիսի պայմանով, որ ձեզ ձեռնտու չէ։

է) ՊԱՅՄԱՆԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Պայմանի երկրորդական նախադասության ստորոգյալը կիրառվում է (բացի հրամայականից) գրեթե բոլոր եղանակներով ու ժամանակներով. բայց ամենից հաճախ այն կիրառվում է ըղձական եղանակով, որ պայմանականությունը դարձնում է համեմատաբար անխառն, այսինքն՝ համեմատաբար զերծ զիջական, ժամանակի, պատճառի հարաբերություններից, որոնք հաճախ խաչաձևում են պայմանականությունը։

Պայմանի երկրորդական նախադասությունը կիրառվում է նաև պայմանական եղանակով, որը իմաստային ու ոճաբանական որոշնրբությամբ տարբերվում է նախորդից։ Մինչդեռ ըղձականը արտահայտում է խոսողի ցանկությունը, ըստ որի պայմանավորվում է գլխավոր նախադասության ստորոգյալի գործողության կատարման այս կամ այն ընթացքը, ապա պայմանական եղանակը ցույց է տալիս մի այնպիսի պայման, առանց որի գլխավոր նախադասության ստորոգյալի գործողությունը կարող է տեղի չունենալ։ Համեմատիր՝ Եթե գնաս, լավ կլինի: Եթե կգաս, կպատրաստվեմ: *Պետք է նշել նաև, որ հաճախ անցյալ կատարյալը, վաղակատարը պայմանի նախադասության մեջ կիրառվում են ապառնու նշանակությամբ. օրինակ՝* Բայց եթե դու խմեցիր, կանցնես *(Թ., III, 171)։* Բայց վայն եկել է քեզ տարել, եթե ծխնելույզի մեջ նայել ես *(նույն տեղում, 276)։* Թե հարցիս պատասխանեցիք, իմ կովը ձեզ լինի *(Թ., III, 159)։ Իսկ ներկա և անցյալի անկատար ժամանակները հաճախ կիրառվում են ընդհանուր սովորույթ դարձած կրկնվող երևույթներ արտահայտելու համար. օրինակ՝* Եթե ամենքի հետ էլ այդպես է խոսում, անկարելի է, որ չգերե նրանց *(Նար., VI, 225)։* Երբեք որսի միս չէր ուտում, եթե սպանում էին ուրիշներ *(Թ., III, 271)։ Ահա մի քանի այլ օրինակներ, ուր երկրորդական նախադասությունները կիրառված են տարբեր եղանակներով ու ժամանակներով։ Օրինակ՝* Եթե ամեն մի բերդակալ տեղի տա ստիպողական հանգամանքներին, այն ժամանակ բոլոր պետական ամրոցները թշնամու ձեռքը կանցնեն *(Մուր., III, 97)։* Մեծ բան հո չի լինելու, եթե աչքի պոչով ծխնելույզի մեջը նայեմ *(Թ., III, 276)։* Երկար կմնար էս դրության մեջ, եթե հանկարծ մոտակա ծառերից խշխշոց չլսվեր *(Թ., III, 300)։* Եթե այս մտածությունը մի հանցանք է եղել, ապա հրամայիր պատժել ինձ *(Մուր., III, 217)։* Գարուն կյանքիս եթե նույնպես վիճակված է վաղ շիրիմ... չմոռնաս իմ շրթունքին *(Թ., I, 385)։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.— Ընդհանուր, իբրև սովորույթ, անընդհատ կրկնվող ճշմարտություն արտահայտելու համար ներկայի փոխարեն երբեմն կիրառվում է նաև անցյալ կատարյալ. օրինակ՝ Իմացել էի, որ գելերի մինը եթե վիրավորվեց *(այսինքն՝ վիրավորվում է)*, մյուսները վրա են թափվում, նրան ուտում *(Թ., III, 103)։* Եթե բազմություն չեղավ,

մի կամ երկու մարդից ռճմակը չի վախենալ *(Նույն տեղում, 106)։*

Պայմանի երկրորդական նախադասությամբ բարդ ստորադասական նախադասության ստորոգյալները միմյանց նկատմամբ եղանակների ու ժամանակների կախվածություն են արտահայտում։ Նայած թե բարդության որ մասն է նախադաս կիրառվում, հետադաս կիրառվող մասի ստորոգյալի եղանակն ու ժամանակը համապատասխան նախորդի ստորոգյալի եղանակի ու ժամանակի կախվածություն են արտահայտում։ Որպեսզի կարելի լինի այդ կախվածությունը մոտավոր սահմաններով ճշտորոշել, մենք մեկնակետ ենք ընդունում երկրորդական նախադասությունը, լինի այն կիրառված նախադաս, թե ետադաս։ Առհասարակ երկրորդական նախադասությունը իբրև լրացնող կախվածության մեջ է գտնվում գլխավորի նկատմամբ, սակայն պայմանական կապակցության մեջ ստորոգյալների կախվածությունը մեծ մասամբ հենվում է երկրորդական նախադասության վրա, այսինքն՝ դրված պայմանի համապատասխան որոշվում է գլխավոր նախադասության ստորոգյալի եղանակն ու ժամանակը։ Այդ կախվածության պատկերը ընդհանուր սահմանների մեջ արտահայտում է հիշյալ պատկերը։

Երբ պայմանի երկրորդական նախադասության ստորոգյալը կիրառվում է ըղձական եղանակի ապառնիով, ապա գլխավոր նախադասության ստորոգյալը կարող է դրվել պայմանականի, հարկադրականի, ըղձականի ապառնիներով, հրամայական եղանակով, մասամբ և սահմանականի ներկայով ու ապառնիով. օրինակ՝ Ուսանողները որ մանտո չխմեն, գիշերը քունս չի տանի *(ՍԳ, 56 թ., 2, էջ 18)։* Որ իմանան՝ քաղաք է փախել, ինչքան կզարմանան *(ՍՋ, 3, 347)։* Ի՞նչ օգուտ ես տանելու, եթե սպանես ինձ *(Թ., III, 232)։ Եթե արաբը տա քեզ սպանի, խեղճ պառավ մերդ ի՞նչ պիտի անի (Թ., II, 259)։*

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն. — Ըղձական ապառնու հետ որևէ եղանակի ապառնի անցյալ կիրառելը այժմ հնացած է և անսովոր Համեմատիր՝ Հապա ինչ կասեիք, եթե իմ ընկեր բարոն Մյունխհաուզենին լսեք *(Թ., III, 207)։*

Եթե պայմանի երկրորդական նախադասության ստորոգյալը կիրառվում է ըղձականի անցյալ ապառնիով, գլխավոր նախադասության ստորոգյալը կարող է դրվել ըղձականի, պայմանականի,

հարկադրականի, սահմանականի ապառնի անցյալներով և անցյալի անկատարով. օրինակ՝ Արդեն շատ պիտի զարմանայի, եթե աշխարհում ճիշտ բան պատմվեր *(Իս., III, 84)*։ Եթե նրա սենյակի իրերն իրենց կյանքը պատմեին, մահճակալը պիտի ասեր... *(ԱԲԵ. 169)*։ Եթե նրան փողոցում հանդիպեր, նա հեռվից կանչում էր *(ԱԲԵ, 638)*։ Իսկ եթե մի բան պատահեր, ինչ ասեի մայոր Դեմենտեվին *(Քոչար, 274)*։ Յուր պարտքն էր պատվել ասածը հյուրին, եթե նույնիսկ ամիսներով նա ապրեր յուր տանը *(Մուր., V, 160)*։

Երբ պայմանի երկրորդական նախադասության ստորոգյալը կիրառվում է պայմանական եղանակի ապառնիով, գլխավորի ստորոգյալը կարող է դրվել ըղձականի, պայմանականի ապառնիներով և հրամայական եղանակով։ Օրինակ՝ Եթե կուզես, եկ ամուսնացիր ինձ հետ *(Թ., III, 235)*։ Նա ձեզ անվերջ կհիշի, եթե միայն գերեզմանում հիշողություն լինի *(Նույն տեղում, I, 466)*։ Ինձանից ևս կստանաս մի գեղեցիկ ընծա, եթե էգուց շնորհք ցույց տաս *(Րեժ, VII, 411)*։ Հետո դարձյալ կռիվ կանենք, եթե կռիվ կուզես կրկին *(Թ., II, 128)*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Պայմանի երկրորդական նախադասության կիրառությունը պայմանականի անցյալի ապառնիով հնացած է արդեն։ Համեմատիր՝ Եթե Սամվելը հավատարիմ կմնար սիրած աղջկան... նա պետք է հակառակեր յուր հորը *Ր., 7, 271)*։

Պայմանի երկրորդական նախադասությունը հարկադրական ապառնիով գործածելու դեպքում, գլխավոր նախադասությունը կարող է դրվել ըղձականի, պայմանականի ապառնիներով և հրամայականով. օրինակ՝ Եթե պետք է ելույթ ունենաս, ապա պատրաստվիր, ինչպես հարկն է: Եթե պետք է գա մեզ հետ, թող հագուստ վերցնի: Եթե պիտի գա, ամեն ինչ կպատրաստվի:

Իսկ երբ պայմանի երկրորդական նախադասությունը կիրառվում է հարկադրական ապառնու անցյալով, գլխավոր նախադասության ստորոգյալը դրվում է անցյալի անկատարով, վաղակատարի ներկայով և անցյալով, ըղձական ապառնու անցյալով, անցյալ կատարյալով. օրինակ՝ Եթե պետք է լռեին, ինչո՞ւ էին եկել (ինչու են եկել): Եթե պետք է չաշխատեի, ինչու այսքան գնացի եկա: Եթե չպետք է սովորեիր, ինչո՞ւ էիր դպրոց հաճախում: *Այս դեպքում*

կարող է նաև հարկադրական անցյալ կիրառվել, բայց նույնաբանությունից խուսափելու համար բացառվում է։

Եթե պայմանի երկրորդական նախադասությունը կիրառվում է ներկայով, ապա գլխավոր նախադասության ստորոգյալը կարող է դրվել ներկայով, հրամայականով, ըղձականի, հարկադրականի, պայմանականի ապառնիներով. օրինակ՝ Եթե դու քո նախահարց հարազատ որդին ես, հետևիր նրանց օրինակին *(ՐԵԺ. VII, 323)։* Եթե նվագելիս թևերը բարձրացնում է, ձենը ազատ ու լիահնչյուն է տարածվում, իսկ եթե թևերն իջեցնում է... ձենը խլանում է *(Թ., III, 93)։* Եթե դու ինձ աղի չափ ես սիրում, քո սիրո վարձատրությունը կլինի աղի չափ *(Թ., III 299)։* Եթե պատրաստվում ես ճանապարհորդելու, ապա պետք է գնաս (կգնաս) հարազատներիդ տեսության: Եթե գալիս է ինձ մոտ, թող նախապես զանգահարի:

Եթե պայմանի երկրորդական նախադասության ստորոգյալը դրվում է անցյալի անկատարով, գլխավոր նախադասության ստորոգյալը կարող է կիրառվել անցյալի անկատարով, պայմանականի, ըղձականի, հարկադրականի անցյալի ապառնիներով, անցյալ կատարյալով և վաղակատարով. օրինակ՝ Երբեք որսի միս չէր ուտում, եթե սպանում էին ուրիշները *(Թ., III, 271)։* Եթե այդպես մտածելը հանցանք էիր համարում, ապա ինչու չէիր հրամայում ինձ պատժել: Եթե չէիր հասկանում իմ բացատրությունները, պետք է հարցեր տայիր: Եթե ուզում էիր վաղ առավոտյան գնալ, ինձ կասեիր: Եթե ցրտերը ընկնում էին, ինչո՞ւ այգին չքաղեցիր: Եթե վախենում էր այգիների ցրտահարությունից, թող քաղեր:

Եթե պայմանի երկրորդական նախադասության ստորոգյալը կիրառվում է անցյալ կատարյալով և վաղակատարի ներկայով, ապա գլխավոր նախադասության ստորոգյալը կարող է դրվել անցյալ կատարյալով, հրամայականով և ըղձականի, հարկադրականի ու պայմանականի բոլոր ժամանակներով, վաղակատարի ներկայով. օրինակ՝ Եթե դու ցարին դրկել ես էդոնք... շատ լավ կանեիր, եթե դրանց հետ դրկած լինեիր և քո քաղաքի՝ մեծ Ստամբոլի ոսկի բանալին *(Թ., II, 246)։* Թե հարցիս պատասխանեցիք. իմ կովը ձեզ լինի *(Թ., III, 159)։* Եթե այս մտածությունը մի հանցանք է եղել, ապա հրամայիր պատժել ինձ *(Մուր., III, 217)։* Եթե հաստատ էդպես ես վճռել, թող քո ասածը լինի *(Թ., III, 269)։* Եթե ժամանակին հսկաներ են ապրել, իհարկե այդ ձորերը նրանց համար հասարակ առուներ են եղել *(ԱԹԵ, 83)։*

Եթե պայմանի երկրորդական նախադասության ստորոգյալը

կիրառվում է վաղակատարի անցյալով, ապա գլխավոր նախադասության ստորոգյալը դրվում է միայն պայմանականի, ըղձականի ու հարկադրականի ապառնի անցյալներով. օրինակ՝ Եթե այդպես էր խոսել, ապա պետք է լռեցներ: Եթե ուղարկել էր գիրքը բերելու, ապա թող բերեր: Եթե գնացել էր, ուրեմն և կգար:

Պայմանի երկրորդական նախադասությունը կիրառվում է նաև երկրորդական բաղադրյալ ժամանակներով. այս դեպքում ներկա ժամանակին համապատասխանում է ներկա և ապառնի, անցյալին՝ ապառնի, ապառնի անցյալ և անցյալ. ըստ որում գլխավորը կարող է նաև ոչ-երկրորդական ժամանակներով կիրառվել։ Օրինակ՝ Աղջիկը որ քեզ սիրում լինի և քո պատճառով էլ Բորժոմ լինի գալիս, ինչ կասես դրան (*Մուր., V, 20*)։ Եթե սխալված չլինեի, նույնիսկ չէի էլ ապրիլ (*Թ., V, 218*)։ Եթե զարեջուր չլիներ խմած, այստեղ չէր լինի այսքան պինդ քնած (*Շեքսպիր*)։ Պատրաստ էր զգում ընկնելու Բազենյանի ոտները և ներողություն խնդրելու նրանից, եթե միայն Բազենյանին մի անգամ էլ տեսնելու լիներ (*Նար., VI, 491*)։ Եթե քաղցած մեռնելիս լինեի ձեր հացը կուտեի միմիայն նրա համար... (*Նույն տեղում, 123*)։ Եթե ապարանքում մարդիկ մնացած լինեին, ուրեմն ինչո՞ւ էր թագուհին այնպես միայնակ շրջում (*Րեժ, VII, 406*)։ Շատ լավ կանեիր, եթե դրանց հետ դրկած լինեիր և քո քաղաքի... ոսկի բանալին (*Թ., II, 246*)։ Եթե... բժիշկը այնպես շուտ ուղարկած չլինեիր, գուցե ես կզրկվեի իմ միակ զավակից (*Րեժ, VII, 309*)։ Դու կատարելապես վիրավորած կլինես քո ատրճանավորներին, եթե այդ ծառայությունից զրկես նրանց (*Նույն տեղում, 531*)։ Եթե մայրը առաջարկելու ես չլիներ, նա դարձյալ կգնար նորը դիմավորելու (*Ր., VII, 123*)։ Եթե տիկինը հանկարծ դուրս գալու լինի, իրան գործով զբաղված տեսնի (*Նույն տեղում, 105*)։ Բայց դու պետք է սարսափեիր քո կատարած եղեռնագործությունների առջև, եթե քո սրտում մարդկային զգացմունքի մի ամենափոքր նշույլ մնացած լիներ (*Նույն տեղում, 354*)։

Ե. ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Նպատակի պարագա երկրորդական նախադասություն է կոչվում այնպիսի նախադասությունը, որ բացահայտում է իր հետ կապակցվող գլխավոր նախադասության ստորոգյալի գործողության նպատակը, այսինքն՝ այդ գործողությունը ինչ նպատակով, ինչի հասնելու համար է կատարվում. օրինակ՝ Աղան գնացել էր

նրա համար, որ էգուց աղջիկ պարոնի ծնունդին ներկա լինի (*Մուր., V, 162*)։ *Այս նախադասություններից առաջինի գործողությունը (գնացել է) կատարված է այն նպատակով, որ գործողություն կատարողը ծնունդին ներկա գտնվի։ Նպատակի պարագա երկրորդական նախադասությունը սովորաբար վերաբերում է գլխավոր նախադասության ստորոգյալին, սակայն չի բացառված, որ այն արտահայտի նախադասության այնպիսի երկրորդական անդամի նպատակային հանգամանքները, որը արտահայտված է ստորոգյալ չհանդիսացող բայով. օրինակ՝ Գնացել է քնելու, որպեսզի հանգստանա. այս օրինակի մեջ* որպեսզի հանգստանա–ն *վերաբերում է* քնելու *բային։*

Նպատակի երկրորդական նախադասությունը կարող է վերաբերել գլխավոր նախադասության թե պարզ, թե բարդ ստորոգյալներին, թե այս վերջինիս միայն մի անդամին և թե երկու գլխավոր նախադասությունների միաժամանակ. օրինակ՝ Միության մշտական խնդիրը պետք է լինի հոգ տանել, որ մեր գրողները միշտ ապրեն ժողովրդի կյանքով (*ՍԳ, 56 թ., № 1, էջ 7*)։ *Գլխավոր նախադասության ստորոգյալն է* պետք է լինի հոգ տանել, *նպատակի պարագա նախադասությունը միայն վերաբերում է* հոգ տանել *հարադրությանը։ Օրինակ՝* Ես մտա թփերի արանքը, տապ արի, որ ինձ չտեսնի (*ՍՁ, V, 222*)։ *Երկրորդական նախադասությունը վերաբերում է երկու նախադասություններին։* Նա եկավ մեզ մոտ ոչնչացնելու մեր զորքերի առաջնորդներին, որպեսզի հեշտ լիներ հաղթությունը (*Ր., III, 572*)։ *Այստեղ էլ նպատակի երկրորդական նախադասությունը վերաբերում է գլխավոր նախադասության նպատակի պարագային (ոչնչացնելու-ն)։*

Նպատակի երկրորդական նախադասության ստորոգյալը արտահայտվում է ըղձական եղանակով, այսինքն՝ պարզապես ապառնի է, որովհետև ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որի կատարման ժամանակը միշտ հաջորդում է գլխավոր նախադասության գործողության ժամանակին։ Ինչպիսի ժամանակով էլ կիրառվի գլխավոր նախադասության ստորոգյալը, նպատակի նախադասության ստորոգյալը դրա նկատմամբ ապառնի է. օրինակ՝ Որպեսզի հանգիստ մնամ, ինձ նստեցրին մի հարուստ աղջկա մոտ (*ՎԱՄԼ. 161*)։ Այս հեռագիրը տվել էր, երևի նրա համար, որ այլևս չձանձրացնեմ իրեն նոր նամակներով ու հեռագրերով (*Նար., I, 116*)։ Որպեսզի զար նա, կյանքում հորդեր, դեռ հարկավոր էր հինը սրբել (*ՉՐ, 387*)։ Ես եկել էի, որպեսզի խոսեի այդ մասին:

Իսկ եթե գլխավոր նախադասության ստորոգյալը ժխտական է և դրված է այնպիսի ժամանակով, որ համապատասխանում է երկրորդական նախադասության ըղձական ապառնուն, այս վերջինը կարող է նաև իր անցյալով կիրառվել. օրինակ՝ Զվիցարական գեղեցկության սիրահարները չեն ընկերանում ճեզ, ուպեսզի ճո ճայրենիքի բնական գեղեցկություններով պարծենային նրանց առաջ *(Մուր., II, 23)։ Գլխավոր նախադասության ստորոգյալը դրված է տևական, սովորության ներկայով, իսկ վերջինը, որ և անցյալին է վերաբերում, համապատասխան ըղձական ապառնու անցյալով է կիրառված։*

Նպատակի պարագա երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է ուպեսզի, թե որ, թե չլինի. չլինի թե, թե որ, թե, թե ինչ է *շաղկապներով։ Գլխավոր նախադասության մեջ իբրև զուգադիր հարաբերյալ կապակցություններ կիրառվում են* նրա ճամար, այն նպատակով, այն մտքով, *որոնցից այս վերջին երկուսը դեռևս պահպանում են իրենց գոյականական նշանակությունը, ուստի և դրանց հետ կապակցվող երկրորդական նախադասությունը մասամբ որոշիչ է հենց այդ նպատակային գոյականների համար. օրինակ՝* Տանում էի այն մտքով *(այսինքն՝ նպատակով)*, որ եթե եղբայրս դեռ վճարած չլինի, ինքս մեկը տամ *(ՊՊԵԺ, III, 452)։* Ես եկա այն նպատակով, ուպեսզի ճեզ տեսնեմ։

ա) *ՈՐՊԵՍԶԻ* ՇԱՂԿԱՊՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՆՊԱՏԱԿԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Գրական լեզվում իբրև նպատակի շաղկապ ամենից հաճախ կիրառվում է ուպեսզի-*ն, որ ցայտուն է արտահայտում նպատակային հարաբերությունը։ Նպատակային դրսևորման այդ բացահայտությունը պատճառաբանվում է հիշյալ շաղկապի բազմազան առումների բացակայությամբ։ Այդ շաղկապը հատուկ է միայն գրական լեզվին. համարյա ոչ մի բարբառում չի գտնվում, ուստի բացարձակ գրական ճանապարհով է հաստատուն դարձել։*

Ուպեսզի *շաղկապով կապակցվող նպատակի երկրորդական նախադասությունները սովորաբար ետադաս են լինում. չի բացառվում նաև առաջադաս դիրքը, իսկ միջադաս հազվագյուտ են պատահում։ Երբ անհրաժեշտ է ուշադրությունը բևեռել երկրորդական նախադասության վրա, այս վերջինը մղվում է առաջ, և ամբողջ նախադասության տրամաբանական շեշտը ընկնում է երկրորդական նախադասության վրա, որ և արտաբերվում է բարձրացող հնչերան-*

գությամբ. օրինակ՝ Որպեսզի նոթի տանից դուրս չգայի, մոտեցա նրանց և մի բաժակ կաթ խնդրեցի *(Մուր., II, 31)։ Երբ երկրորդական նախադասությունը ետադաս է, տրամաբանական շեշտը վերցնում է գլխավոր նախադասությունը, իսկ երկրորդական նախադասությունը արտաբերվում է թույլ իջնող հնչերանգությամբ։ Համեմատիր՝* Կարծես զուտ նրա համար է, որպեսզի ինքը հնարավորություն ունենա այդ աղջկանով հիանալու *(ԳՍԹ, I, 142)։* Խուլ աշխարհում մեր նախրական բերել ենք ուժ նոր ու թափ ու կամք, որպեսզի կյանքը աշխարհի այն վերաշինենք ու վերածնենք *(ՉԸ, 388)։*

Ինչպես ասվեց նպատակի երկրորդական նախադասությունը միջադաս դիրքով քիչ է կիրառվում։ Ահա օրինակներ. Թագավորը, որ կարծես խուսափել էր թագուհու աչքից, որպեսզի կարելվույն չափ փութով յուր խոստումը կատարե... ձիուց իջնելուն պես մոտեցավ Բերին *(Մուրացան, «Գևորգ Մարզպետունի», 488)։* Իսկ այժմ, որպեսզի ավելորդ ժամավաճառությամբ չզբաղվենք, պարոն Բազենյան, կարդանք այս նամակը *(Նար-Դոս, VI, 135)։* Նորից, անվրդով նստած, Որպեսզի ձանձրույթից չքնի, Համոն երկար, երկար երգում էր *(ԵՉԵ, 42)։*

բ) *ՈՐ* ՇԱՂԿԱՊՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՆՊԱՏԱԿԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Նպատակի պարագա երկրորդական նախադասությունը կապակցվում է որ *շաղկապով։ Իբրև նպատակի շաղկապ,* որ-*ը ամենից շատ կիրառվում է խոսակցական լեզվում և բարբառներում։ Գեղարվեստական խոսքի մեջ գործածվելով՝ թուլացնում է բարդ նախադասությունների առանձին անդամների տրամաբանական շաղկապումը։ Ինչպես տեսանք, նա մասնակցում է համարյա ամեն բնույթի երկրորդական նախադասությունների կապակցման, ուստի և այս դեպքում նպատակայնությունը թույլ է արտահայտվում։* Որ *շաղկապով կապակցվող նպատակի երկրորդական նախադասությունները հատկապես առնչվում են այնպիսի գլխավոր նախադասությունների հետ, որոնց ստորոգյալը շարժում, ուղևորություն ցույց տվող բայեր են։ Այսպիսի բայերը լինելով գլխավոր նախադասության ստորոգյալներ՝ ներունակությամբ իրենց մեջ ունեն նպատակային հասկացողություն։ Երբ այսպիսի հասկացողությունը առկա է գլխավոր նախադասության մեջ, այսինքն՝ շարժումը կատարվում է որոշ նպատակով, ապա դյուրությամբ այս վերջինը արտահայտվում է երկրորդական նախադասությամբ. օրինակ՝* Եկա, որ այստեղ ձեզ համար այսօր Հրեղեն երգեր կռեմ ու խնդում,

կեմ հաղթական մարտի ցնծություն, Տեսնեմ շարքերը ձեր հզորազոր (*Տերյան*)։ Ուր գնամ, որ քո աչքերի համար դեղ բերեմ (*«Մարգարիտներ», 278*)։ Լույսը բացվի, գնանք քաղաք, որ բոլորը տեսնեն (*Նույն տեղում, 188*)։ Հրամաններ ուղարկեց ամեն տեղ, որ ամենքն ապրեն ցնծությամբ և ուրախությամբ (*Լեո, ՀՊ, II, 266*)։ *Այսպիսի պարագաներում* որպեսզի *շաղկապի համեմատությամբ ավելի շատ* որ *է գործածվում*։

Որ *շաղկապը հաճախ կիրառվում է նպատակի այնպիսի նախադասությունների հետ, որոնք համատեղում են նաև հետևանքի հասկացողություն։ Գլխավոր նախադասության ստորոգյալի գործողությունը լրիվ չի դրսևորվում, ինչ-որ բան կիսատ է մնում, իսկ այս կիսատ մնացածը գալիս է լրացնելու երկրորդական նախադասությունը. օրինակ՝* Պոկում է ցորյանը, որ սրումն անի (*Շեքս., II, 207*)։ Առաջարկում էր գլխին մի խնձոր դնի, որ ինքը հրացան արձակի խնձորին (*Թ., III, 30*)։ Նա մի ձեռքով բռնել էր գլխարկը, մյուսով բուֆետը, որ վայր չընկնի (*ԱՁ, III, 345*)։ Բերել եմ զարկել ամուր երկաթի, Որ խնջույքներին, որքան էլ խմեն, որքան էլ հարբեն, չդիպչեն իրար (*Թ., II, 228*)։ Բաց արեց փեղկերից մեկը, որ փոքր ինչ թարմ օդ ներս թողնի (*Ր., III, 29*)։ Պետք է գնամ կախարդական աշխարհից Հազարան Բլբուլը բերեմ, որ փուշը նորից վարդ դառնա և գազանը՝ մարդ (*Թ., III, 402*)։ Ուժ տուր, մուսա, գրչիս, Որ կարենամ հիմա մանկությունս երգել (*ՉԸ, 455*)։

Որ *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները նպատակ են արտահայտում, երբ գլխավոր նախադասության ստորոգյալները չեզոք բայեր են։ Այս վերջինները չունենալով տարբեր կարգի խնդիրներ, նպատակայնությունը ավելի ցայտուն են դրսևորում. օրինակ՝* Հիմա հոգնում ենք, տնքում անքուն, Որ մեր զրնգուն այն հիմար Զանգուն Քիլովատներ ու Վոլտեր հաշվի (*ՉԸ, 389*)։ Եվ դու ճամփեքի քարերին ցից նստել ես, որ քիչ հանգստանաս (*Նույն տեղում, 100*)։ Աշտարակն է մնում կանգուն ու վկա, որ իմանան վառ աստղերը հեռավոր (*Իսահակյան*)։

Մի քանի ներգործական սեռի բայերի համար ուղիղ խնդիր հանդիսացող երկրորդական նախադասությունները երբեմն համատեղում են նպատակային հարաբերություն. օրինակ՝ Հրամայել է ինձ, որ այսօր կանուխ իր սպասին գամ (*Շեքս., I, 235*)։ Հրամայեց, որ շքադիր խմբեր գան և վրանը պատեն (*«Ընտիր էջեր», 604*)։ Բժշկացուն հորը, մորը, քրոջը պատվիրեց, որ դուրս գնան (*Նար.,*

IV, 82)։ Մեհրաբ յուզբաշին պատվիրեց, որ առավոտը փիշերով թռոչիները գնան ձորը *(Թ., III, 31)*։

Երբ գլխավոր նախադասության ստորոգյալը խնդիր է ունենում, նպատակի երկրորդական նախադասությունը դրսևորվում է ամբողջ պարզությամբ. օրինակ՝ Ուզում եմ աշակերտ լինել ձեզ և տիրել արվեստին ձեր անուն, Որ տողերս լինեն մեջտեղից ձեր ոսկյա օրենքով հատած *(ՉԼ, 174)*։ Դու երազել ես աստղը հեռավոր, Հրեշտակաթև շուշան սպիտակ, որ քո վերքերին բալասան լինի *(Իսահակյան)*։ *Նույնիսկ երբ գլխավոր նախադասության ստորոգյալը ունենում է մի հարադիր ուղիղ խնդիր, նպատակի երկրորդական նախադասությունը մասամբ առանձնանում է ուղիղ խնդրից. օրինակ՝* Խորհուրդ տվին, որ ձեռք քաշի կեղտոտ բանից *(Թ., III, 19)*։ Խորհուրդ են արել, որ այսուհետև իր թախտից զրկվի, ով կռիվ անի *(Թ., II, 37)*։

գ) *Թե, թե ինչ է, թե չլինի, ինչ է, չլինի թե, թե որ, ինչ է թե* ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՆՊԱՏԱԿԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Նպատակի երկրորդական նախադասությունը գլխավորի հետ մասամբ կապակցվում է թե ինչ է, թե չլինի, ինչ է, չլինի թե, ինչ է թե *շաղկապներով, որոնք հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին և գիտական ու բարձր ոճի գրվածքներում չեն գործածվում. օրինակ՝* Սկսել են նան խաղացող երեխաներին պասկել, թե ինչ է (ա) մի կտոր ավել ձեռք գցեն *(ԱՍԾ, 456)*։ Ծորերի ծալքերը հետախուզում էր, թե չլինի մի բան են թաքցրած տանում *(ԱՍԾ, 148)*։ Քիմիական տեսակ-տեսակ պարարտանյութեր են օգտագործում, թմբերը լարային սիստեմի են վերածում, ինչ է հեկտարին 200—250 ցենտներ խաղող ստանան *(ԱՍՈՎՄ, 323)*։ Մարդ աչքերը բաց չորս հազար երկու հարյուր մանեթ տա, ինչ է պայող եմ բաց անում *(ԱԲԽ, 480)*։ Գնա, գնա, թե որ գտնես *(Թումանյան, «Հսկան»)*։ Եկել է նստել տանը, ինչ է թե մի անգամ նրա տուն եմ գնացել:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.—Նպատակի պարագայական նախադասությունը հաճախ կապակցվում է թող *եղանակավորիչով, որ վերածվում է շաղկապի, օրինակ՝* Ամենից մեծ շանս տվեք էդ սիրտը, թող էսօր կուշտ նաշ ունենա *(Իս., III, 125)*։

Ժողովրդախոսակցական ոճին է հատուկ նպատակի երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցել թե *շաղկա-*

պով, որ խնդրային ծագման աղոտ վերապրուկ է նշում. նախապես կիրառված նպատակի նախադասությունը զեղչվում է, իսկ սրա տեղը բռնում է այդ նույն նպատակի նախադասության հետ կապված երկրորդական կարգի խնդիր նախադասությունը. օրինակ՝ Ետ է դառնում, որ ասի, թե գնա այստեղից. նպատակի նախադասությունն է **որ ասի,** *հետագայում այս նպատակային նախադասությունը ընկնում է և ամբողջը ստանում է հետևյալ ձևը. Ետ է դառնում, թե գնա այստեղից.* **թե գնա այստեղից** *նախադասությունը, որ նախորդի մեջ խնդիր էր, այստեղ արդեն դառնում է նպատակ։ Այս երևույթը ավելի ցայտուն երևում է հետևյալ օրինակով. Երկու անհագ վիշապների նման բերանները բաց արած մաքառում էին միմյանց հետ, թե որը ավելի շուտ կկլանե անտեր մնացած երկիրը (Ր., III, 30)։ Նպատակի այս վերջին նախադասությունը նախապես եղել է* **որ տեսնեն** *զեղչված նախադասության համար խնդիր, իսկ* **որ տեսնեն** *գլխավորի համար նպատակի պարագա է եղած։ Դրանից հետո, երբ արդեն* **թե** *ձևավորվում է իբրև նպատակային շաղկապ, կիրառվում է անկախ վերոհիշյալ հանգամանքից. օրինակ՝* **Եկան քաշեցին, թե զոռով տանեն** *(Թ., II, 107)։* **Հազար մանեթ չուներ, թե տար հոգին ազատ աներ** *(Նույն տեղում, III, 152)։* **Ձեռ չի ունենում, թե քշի** *(Նույն տեղում, 163)։*

Նպատակի պարագա երկրորդական նախադասությունները դերբայական լրացում են դառնում հետևյալ ձևով. օգտագործվում են **համար** *կապը և* **նպատակ** *բառի գործիական հոլովը, որը կապական նշանակություն է ստանում։ Երկրորդական նախադասության ստորոգյալը վերածվում է անորոշ դերբայի և սեռական հոլովով կապակցվում է* **նպատակով** *ձևի և* **համար** *կապի հետ՝ կազմելով նպատակի պարագայի նշանակությամբ մի կապական արտահայտություն։ Բացի սրանից երկրորդական նախադասության ստորոգյալը պարզապես վերածվում է ապառնի դերբայի. օրինակ՝* **Նա շարունակ այցելում էր նաև բանակը՝ տեսնվելու պարսիկ զորականների հետ, ծանոթանալու նրանց միջոցով բանակի զորավար Մուշկան Նյուսալավուրտի հետ** *(ԴԴՎ, 210)։* **Տեսնելու, ծանոթանալու** *համարազոր են՝* **որպեսզի** *(որ)* **տեսնվի, ծանոթանա: Գնում է աշխարհքե աշխարհք ման գա, որ կնկանն ու երեխին գտնի** *(Թ., III,* **166): Գնում է աշխարհքե աշխարհք ման գա՝ կնկանն ու երեխին գտնելու** *(գտնելու նպատակով, համար)։*

Զ. ԶԻՋԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Զիջական երկրորդական նախադասություն է կոչվում այնպիսի նախադասությունը, որ արտահայտում է գլխավոր նախադասության հակառակ հիմունքը։ Երկրորդական նախադասությունը ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որը պետք է պատճառ դառնար, որպեսզի գլխավոր նախադասության գործողությունը չկատարվեր, բայց հակառակ դրան այդ գործողությունը տեղի է ունենում. օրինակ՝ Որովհետև դու վիրավորել ես ինձ, ուստի ես քեզ հետ չեմ խոսում. *այստեղ կա պատճառի և դրանից բխող հետևանքի այնպիսի հարաբերություն, որոնք տրամաբանորեն ծածկում են միմյանց։ Իսկ երբ ասում ենք՝* Թեև դու ինձ վիրավորել ես, բայց ես քեզ հետ խոսում եմ. *այս դեպքում կա հակադարձ հարաբերություն, այսինքն՝ պատճառը և դրանից բխող հետևանքը միմյանց չեն ծածկում, գլխավոր նախադասության գործողությունը հակառակ նշանակությունը պետք է ունենար, որպեսզի զիջման՝ հակառակ հիմունքի նշանակությունը փոխվեր պատճառականության։ Սակայն երբ երկրորդական նախադասության գործողությունից չի բխում նրան համապատասխան գլխավոր նախադասության գործողությունը, ավելի ճիշտ, երբ այս վերջին գործողությունը հակադիր է լինում երկրորդական նախադասությունից սպասվելիք գործողությանը, առաջանում է զիջման՝ հակառակ հիմունքի հարաբերություն։ Զիջական երկրորդական նախադասության և գլխավորի միջև առկա է հակադրական հարաբերություն։ Այս բարդ ստորադասական նախադասությունը հակադրական հարաբերություն արտահայտող համադասական նախադասությունից տարբերվում է նրանով, որ այս վերջինի մեջ հակադրությունը ավելի մեղմ է ու ցայտուն, երկու նախադասությունները հավասարազոր են և պայմանական երանգը խիստ վերացված է. օրինակ՝* Չնայած անձրև էր գալիս, այնուամենայնիվ եղանակը տաք էր: Անձրև էր գալիս, բայց եղանակը տաք էր: *Ահա մի զիջական երկրորդական նախադասությամբ բարդ նախադասության մի երկու օրինակ.* Չնայելով որ առավոտյան դեռ տասնումեկ ժամն էր, սեղանն արդեն պատրաստ էր *(Շիրվ., I, 354)։* Կասկածը հետզհետե նրա մեջ զորեղանում էր անսպասելի կերպով, չնայելով, որ ընդամենը մի քանի ժամ էր, որ նրա մեջ ծագել էր այն *(Շիրվ., I, 348)։*

Զիջական երկրորդական նախադասությունները առնչակցվում են նաև պայմանի նախադասությունների հետ, այսինքն՝ արտահայ-

տում են յուրահատուկ մի պայման, որ պետք է արգելք դառնար գլխավոր նախադասության գործողության կատարմանը, բայց դիպչում է, արգելք չի դառնում։ Պայմանի երկրորդական նախադասության պայմանականությունը այս կամ այն ձևով համապատասխանում է գլխավոր նախադասության գործողության կատարմանը. Եթե հիվանդ լինի, չի գա: *Պայմանի և նրանից բխող գլխավոր նախադասության գործողության միջև կա տրամաբանական հիմունք։ Իսկ երբ ասում ենք՝* Չնայած հիվանդ է, այնուամենայնիվ կգա, *ապա պայմանը և նրանից բխող գործողությունը այդպիսի հիմնավորում չունեն, առկա է հակառակ հիմունքը, այսինքն՝ պայմանը պետք է խանգարեր գլխավոր նախադասության գործողության կատարման, բայց չի խանգարում։*

Զիջական երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է թեև, թեպետ, թեպետև, թեկուզ, չնայած, չնայելով, չնայելով այն բանին որ, շատ էլ, ով, ինչ, որքան․ որքան էլ, ուր է թե, մինչև անգամ, եթե, նույնիսկ, էլ որ, որ էլ, եթե էլ, որտեղ որ, ինչ էլ, ինչքանով, ով էլ որ, ոնց որ, մինչև իսկ, եթե *և այլ շաղկապներով ու շաղկապային բառակապակցություններով․ որոնք բազմազան իմաստային ու ոճական նրբություններ են արտահայտում։*

Գլխավոր նախադասության եզրում վերոհիշյալ ստորադասական շաղկապներին ու շաղկապային բառերին հաճախ իբրև զուգադիրներ համապատասխանում են բայց, իսկ, սակայն, այնուամենայնիվ, բայց և այնպես, այսուամենայնիվ, այնինչ, այնուհանդերձ, այսուհանդերձ *շաղկապները։ Սրանք առաջացնում են բաժանման դադար և ուժեղացնում են անհամապատասխանության տրամաբանական կապը։*

Զիջական երկրորդական նախադասությունները ըստ իրենց կապակցման միջոցների երկու տարբեր նշանակություն են արտահայտում. մեկ նշանակությունը այն է, որ երկրորդական նախադասությունը պարզապես հաստատում է, թե չնայելով արգելակող կամ բացառող պայմանին, այնուամենայնիվ գլխավոր նախադասության գործողությունը կատարվում է. օրինակ՝ Թեպետ կրծքումս ու թիկունքումս այլևս ցավեր չեմ զգում, բայց հազս սաստկացել է *(Մուր., II, 150)։*

Մյուս նշանակությունն այն է, որ երկրորդական նախադասությունը արտահայտում է վերջնական, ծայրահեղ ընդհանրացում,

*իսկ գլխավոր նախադասության գործողությունը կատարվում է, չնա-
յած այդ ծայրահեղ ու վերջնական ընդհանրացնող արգելման պայ-
մանի. օրինակ՝* Որքան էլ սուր սիրտս խոցեն արյունքամ վերքերը
մեր, էլի ես որբ ու արնավառ իմ Հայաստան յարն եմ սիրում *(Չա-
րենց)*։

ա) *ԹԵԵՎ, ԹԵՊԵՏ, ԹԵՊԵՏԵՎ, ԹԵԿՈՒԶ* ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԶԻՋԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Զիջական շաղկապներից հաճախ կիրառվում են թեև, թեպետ, թեպետև, *որոնց իմաստային և ոճական տարբերությունները այն-
քան աննշան են, որ դժվար է բացահայտել. օրինակ՝* Եվ թեպետ
յուր գինին արժանիքով ստոր էր տանուտեր Ակոբի գինուց, այնու-
ամենայնիվ մենք նրանով էլ մի քանի կենաց բաժակներ դատար-
կեցինք *(Մուր., II, 30)*։ Թեպետ մի փոքր սառը աչքով է նայում,
բայց նրա սիրտը շատ բարի է *(Ր., II, 135)*։ Թեև նա մտադրվել էր
ծնողներին այցելելուց և գյուղում որոշ ժամանակ ապրելուց հետո
գնալ Երևան, բայց սկսել էր տատանվել *(ՍխՀ, I, 143)*։ Թեպետ դուք
ուղիղ դառեցիք, բայց դրա հետևանքը շատ վատ կլինի *(ՂԱՀ, 81)*։
Թեև նոցա վաստակները մի մասով պատկանում էին բաժան-բա-
ժան սահմանների, այնուամենայնիվ նոցա առաջև դրած էր միև-
նույն նպատակը *(ՄՆ, II, 287)*։ Թեպետև նա մերժեց մոլեգնատարփ
Շամիրամին, բայց նրա հետ է յուր խառնաշփոթ երազներում
(«Ընտիր էջեր», 1030)։

*Ինչպես երևում է օրինակներից, վերոհիշյալ շաղկապներով
կապակցվող զիջական նախադասությունները գերազանցապես նա-
խադաս են. դրանք ունեն բարձրացող հնչերանգություն, և գլխա-
վոր նախադասության եզրում գրեթե անխախտ կերպով հանդես են
գալիս հակադրական շաղկապները, որոնցից հենց սկսվում է հնչե-
րանգային իջեցումը՝ հասնելով մինչև նախադասության վերջը։ Սո-
վորաբար նախադաս կիրառվող երկրորդական նախադասություն-
ները սկսվում են* թեպետ, թեև, թեպետև *շաղկապներով (չհաշված,
որ դրանցից առաջ պատահում են համադասական այլ շաղկապ-
ներ), բայց չի բացառված, որ դրանք գործածվեն երկրորդական նա-
խադասության մեջ կամ նույնիսկ վերջում, որը մասամբ մեղմում է
շարադասական միաձևությունը. օրինակ՝* Նա թեև չժխտեց յուր
ուխտը, բայց հետաձգեց նրան *(Ր., III, 283)*։ Վաղուց թեև իմ հա-
յացքը անհայտին է ու հեռվում, ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուն-
ներն է թափառում, բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ

դեպի քեզ, Մղկտում է սիրտս անվերջ քո թառանչից աղեկեզ *(Թ., I, 179)*։ Այս հրեշը թեպետ թևեր չուներ, բայց վազում էր առյուծի նման, ցատկում էր այծի նման և սողում էր օձի նման *(ՂԱՀ, 132)*։ Թագավորի որդին էլ թեպետ չէր տեսել, բայց սրտով իմացավ *(Նույն տեղում, 120)*։ Քունը տանում էր թեև, բայց նա մտածում էր էն փոքրիկ աղջկա վրա *(Թ., III 90)*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Գլխավոր նախադասության եզրում գըտնըվող համադասական շաղկապները կայուն կերպով շարադասվում են սկզբում, տեղաշարժվել կարող է միայն այնուամենայնիվ *շաղկապը։ Հնարավոր է նաև հակադրական շաղկապների բաղադրումը. օրինակ՝* Թեպետ ինքը թևեր ունի և մինչև այսօր անման է եղել, բայց այնուամենայնիվ ավելի հոժար կլինի ինքը մեռնել... *(ՂԱՀ, 145)*։

Զիջական երկրորդական նախադասությունները կիրառվում են նաև ետադաս, հազվագյուտ էլ միջադաս, սակայն տրամաբանական ուժեղ հակադրություն է ստեղծվում, երբ առաջադաս է և, մանավանդ, երբ գլխավոր նախադասությունը արտահայտվում է բայց և այնպես, բայց այնուամենայնիվ, այնուամենայնիվ, այնուհանդերձ *շաղկապներով։ Սրանց համեմատությամբ մասամբ թույլ են* բայց, սակայն *շաղկապները։*

Երբ զիջական երկրորդական նախադասությունը ետադաս է, գլխավոր նախադասության եզրում հակադրական շաղկապներ չեն դրվում. այդ պատճառով էլ այս պարագայում բարդ նախադասության երկու անդամների տրամաբանական կապը թուլանում է. սրան նպաստում են նաև տրամաբանական շեշտը և ձայնի բարձրացումը, որոնցից երկրորդական նախադասությունը զրկվում է։ Համեմատիր նախորդների հետ հետևյալ օրինակները. Ամալան մի տեսակ սեփականության պես բան է յուր տիրոջ համար, թեև ոչինչ քաղաքական կամ մասնավոր պայմաններով կապված չէ *(ՊՊ, II, 227)*։ Ես այդ չգիտեի,—ասացի ես,—թեև շատ լավ գիտեի *(Շիրվ., VIII, 71)*։ Բոլորը մի ամբողջ աշխարհ էր դիտողի համար, թեև Բաքուն հրապույր չուներ այլևս *(Նույն տեղում, 72)*։ Ցիցիկապես հասուն էր, թեև ինձ չափ առողջ չէր *(Նույն տեղում)*։ Նայում էր նրա վրա ոչ իբրև տնկեցի, այլ իսկական փեսայի վրա, թեպետև զգուշանում էր *(Մուր., IV, 286)*։ Հայերեն չէր խոսում մեզ հետ, թեև լավ գիտեր *(ԴԴՎ, 241)*։ Բայց ով գիտե, գուցե հենց այդպես էլ լիներ, թեև այսպես մտածելը սարսափ է բերում մեզ վրա *(ՂԱՀ, 144)*։

Երեսն ամբողջապես ծածկված էր չարղաթով, թեպետ տեղական սովորության համաձայն իբրև երեխա ունեցող կին, նա իրավունք ուներ արդեն երեսը կիսով չափ բանալու *(Մուր., II, 25)*։

Ինչպես ասացինք, գիջական երկրորդական նախադասությունը հազվադեպ շարադասվում է նաև միջադաս. այս դեպքում այդպիսի գիջական նախադասությունը վերաբերում է նախադասության միայն մի որոշակի անդամին. օրինակ՝ Այն անզարդ դագաղի մոտ, թեև դա շրջապատված էր անթիվ պատվանշաններով, պիտո է ամեն մարդու սիրտ վկայեր *(ՄՆեծ, II, 287)։ Այստեղ գիջական երկրորդական նախադասությունը վերաբերում է միայն* անզարդ *բառին։*

Վերոհիշյալ գիջական շաղկապների համեմատությամբ ավելի սակավ է կիրառվում թեկուզ *շաղկապը, որ առաջացել է խոսակցական հողի վրա։ Այդ շաղկապը իր իմաստային պայմանական երանգով տարբերվում է վերոհիշյալներից. պայմանականությունը արտահայտվում է* թե *շաղկապով. իսկ գիջականությունը* ուզել *բայի պայմանական եղանակի* կուզ *հիմքի մեջ է. օրինակ՝* Ինչ պետք է անի քեզ մի երեխա. թեկուզ իր տեղով հենց կրակ դառնա *(Թ., II, 107)։ Ավելի գիջական նշանակություն են արտահայտում հետևյալ օրինակները.* Ես պատմության թելը բավականին խճճեցի, թեկուզ ճախրյան այդ քառաքի այն նշանավոր օրերի պատմությունը գրողը պիտի զգա իրեն այն դժբախտ երեխայի դերում... *(ԶԿ, 291)*։ Սովխոզում աշխատող տարիքավոր գեղջկուհիներից մեկն ասաց, թեկուզ նրանք երդվում են Լենինի արևով *(Զարյան)*։ Եթե ուզում ես, մենք քեզ նստանք, թեկուզ թագավորը դրա համար մեզ խեղդել տա *(ԴԱՀ, 17)*։ Թեկուզ և մենակ լինի փարախում. Աժդահա Սաքոն ինչի՞ց է վախում *(Թումանյան)*։

Վերոհիշյալ թեև, թեպետ, թեպետև, թեկուզ *շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունները դերբայական լրացում են դառնում* չնայելով, չնայած *բառերի միջնորդությամբ։ Երկրորդական նախադասության ստորոգյալը վերածվում է անորոշ դերբայի, կամ բայանվան, իսկ այս վերջինս տրական հոլովով կապակցվում է* չնայելով, չնայած *բառերի հետ, որոնք տվյալ դեպքում ստանում են կապական նշանակություն՝ բռնելով* թեպետ, թեև, թեկուզ, թեպետև *շաղկապների տեղը. օրինակ՝* Թեև ոչինչ չունի, թեև չգիտե, թե էգուց ինչ պիտի ուտեն ինքը և ընտանիքը, սակայն ունի գոնե մի անկյուն *(Փափ., 25)*։ Չնայած ոչինչ չունենալուն, և չգիտենալուն թե էգուց ինչ պիտի ուտեն ինքը և ընտանիքը, ունի գոնե մի անկյուն: Նա թեև ուտելու ցանկություն չուներ, բայց և

306—16

այնպես պատկերացնում էր տան ընթրիքը *(ՍՁ, V, 100)*։ Թեև երկու առաջարկս էլ կատարեցիր, բայց դու չես կարող դառնալ իմ ամուսինը *(Թ., III, 337)*։ Չնայելով նրա ուտելու ցանկությունը չունենալուն՝ բայց և այնպես պատկերացնում էր տան ընթրիքը։ Չնայած երկու առաջարկներս կատարելուն *(կատարմանը)*, դու չես կարող դառնալ իմ ամուսինը։

Ծանոթություն.— Գլխավոր նախադասության եզրում եղած բայց, սակայն *շաղկապները կարող են և զեղչվել, իսկ* այնուամենայնիվ, բայց և այնպես *շաղկապները գերազանցապես մնում են։*

բ) *ՉՆԱՅԱԾ, ՉՆԱՅԵԼՈՎ* ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԶԻՋԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Զիջական երկրորդական նախադասությունները գլխավոր նախադասության հետ կապակցվում են նաև չնայած, չնայելով *շաղկապներով, որոնք հաճախ բարդանում են* որ*-ով։ Ինչպես վերևվում նկատեցինք, այս բառերով հաճախակի հանդես են գալիս զիջական դերբայական դարձվածները։ Զիջականության դրսևորումը* չնայած, չնայելով *բառերի միջոցով բացահայտ է, քանի որ դրանք դեռևս պահպանում են իրենց նյութական նշանակությունը։ Տրամաբանական տեսանկյունով միանգամայն հասկանալի է. եթե ասում ենք՝* Չնայելով որ արգելքներ կային, այնուամենայնիվ գնաց, *այս նշանակում է, որ չի նայում արգելքներին, գնում է, հակառակ նրա, որ չպետք է գնար։* Չնայելով, չնայած *բառերի հետ իբրև դրանց համար կապի խնդիր նախապես եղել է* այն բանին *կապակցությունը, որ ավելի առաջ, երբ* չնայելով, չնայած *դեռևս եղել են դիմավոր ստորոգյալներ, այդ վերջինի հանդիսացել է անուղղակի խնդիր։ Ամբողջ ընթացքը այսպիսին է.* Չի նայում այն բանին, որ արգելքներ կան, չնայելով. չնայած այն բանին, որ արգելքներ կան *և վերջապես* այն բանին *կապակցությունը զեղչվում է և մնում է՝* չնայելով *(չնայած) որ արգելքներ կան. այլ խոսքով, անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունը ձուլվում է իր գլխավոր նախադասության հետ՝ վերջինիս ստորոգյալի շաղկապացման շնորհիվ և կազմում մի դիմական երկրորդական նախադասություն, որ ժամանակակից հայերենում շատ հաճախ է կիրառվում. օրինակ՝* Ֆելդշերն ու գթության քույրը շտապ-շտապ անցնում էին վագոնից վագոն և տառապող հերոսների ամենաթեթև կարիքը հոգում ամե-

նամեծ եռանդով, չնայելով որ շատերը գրեթե ամբողջ գիշերը անց էին կացրել անքուն *(Շիրվ., V, 188)*։ Չնայած որ ամբողջ նախընթաց օրը ճանապարհորդել էի, այնուամենայնիվ երեկ շատ վաղ զարթեցա *(Մուր., II, 30)*։ Մռայլ ու տխուր էր այդ տան տպավորությունը, չնայելով որ ոչ խարխուլ էր և ոչ նույնիսկ այնքան հին *(Շիրվ., V, 346)*։ Չնայած անցել էին շաբաթներ, ամիսներ էին անցել, այնուհանդերձ Վահրամը ոչ մեկին չէր կարողանում մոռանալ *(ԱՍՌՎՄ, 280)*։ *Բերված օրինակները, ինչպես տեսնում ենք, ունեն թե նախադաս և թե ետադաս երկրորդական նախադասություններ, սակավ պատահում են նաև միջադաս շարադասությամբ. օրինակ՝* Կան նաև աղջիկներ, որոնք, չնայելով որ ստեղծված են նույնչափ քնքուշ ու բարի, սակայն հոգով ու սրտով հաշիվների գերի և հաջողության ու բախտի երկրպագուներ են *(Մուր., II, 284)*։

Չնայելով որ, չնայած որ *շաղկապներով կապակցվող զիջական երկրորդական նախադասությունները դերբայական դարձվածքի են վերածվում* որ *շաղկապը զեղչելով, որը ցույց է տալիս, թե դրանք դեռևս միմյանց հետ սերտ չեն զոդված։ Ստորոգյալը վերածվում է անորոշ դերբայի տրական ձևին կամ բայանվան և կապակցվում է* չնայած, չնայելով *բառերին, իբրև այս վերջինների համար կապի խնդիր։ Ենթական փոխվում է ենթակա սեռականի։ Համեմատիր՝* Չնայելով ձեր հավաստիացումներին, ես այնուամենայնիվ հույս չէի տածում *(Մուր., II, 134)*։ Չնայելով մեր անընդհատ հոգացության *(հոգալուն)* նա այնուամենայնիվ անկողնուց չելավ *(Մուր., II, 140)*։ *Եթե երկրորդական նախադասությունը անվանական ստորոգյալ է, օգտագործվում է* լինել *բայի տրական ձևը. օրինակ՝* Չնայելով որ դու ազնիվ ես. չնայելով քո ազնիվ լինելուն, որ կարելի է ասել նաև՝ չնայելով քո ազնվությանը: *Համեմատիր՝* Սակայն չնայած այդ անույս խավարին, Երևանը գիշերներն էլ ապրում էր լի կյանքով *(ՍԶ, V, 98)*։

գ) *ԻՆՉ, ՈՎ, ՈՆՑ, ՈՒՐ, ՈՐՏԵՂ, ՈՐՔԱՆ, ԻՆՉՔԱՆ, ԻՆՉՊԵՍ* ՇԱՂԿԱՊԱՅԻՆ ԲԱՌԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԶԻՋԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Զիջական երկրորդական նախադասությունները գլխավոր նախադասության հետ կապակցվում են ինչ, ով, ուր, ոնց, որտեղ, ինչքան, որքան, ինչպես *շաղկապային բառերով, որոնք գործածվում են միայն* որ, որ էլ, էլ *շաղկապներով։ Այս շաղկապային բառերը արտահայտում են ծայրահեղ ընդհանրացնող պայման։ Տվյալ շաղկապային բառերով կապակցվող զիջական նախադասությունները տարբեր ծագում ունեն, բայց որովհետև հենց սկզբնապես մաս-*

նակի զիջական որոշ հարաբերություն են արտահայտել, ուստի հետագայում իրենցով կապակցվող նախադասությունների ստորոգյալների բառական նշանակությունները որոշ մթագնման են ենթարկվել. այդ բայերը նույնպես ստացել են զիջական կապակցող բառերի նշանակություն՝ վերոհիշյալ շաղկապային բառերի հետ միասին։ Այս մթագնումը բոլոր բայ-ստորոգյալների հետ նույն չափով չի կատարվում, իսկ այդ մթագնման երևույթը կրում է մասնակի բնույթ, այն է՝ պարփակվում է միայն տվյալ կիրառության սահմաններում և ընդգրկում է բայերի խիստ սահմանափակ քանակ. տվյալ բայերից հիշատակելի են՝ **ուզել, լինել, մնալ, է:** Սակայն երբ արդեն այսպիսի բայ-ստորոգյալների հետ հիշատակված բառերը զիջականության հարաբերություն արտահայտելով շաղկապային կիրառություն են ձեռք բերում, սկսում են ընդարձակել իրենց գործածության սահմանները, այսինքն՝ դառնում են առանձին շաղկապային բառեր՝ նաև առանց այդ մթագնված բայ-ստորոգյալների։

Ինչ հարաբերական դերանունով և **ուզել** բայով կազմվել է ենթակա երկրորդական նախադասություն, որը կապակցվել է այնպիսի մի գլխավոր նախադասության հետ, որի ստորոգյալն է **լինել** բայը. օրինակ՝ նա ինչ ուզում է, թող լինի, կամ՝ նա ինչ ուզում է, լինի։ Հետագայում **ուզել** բայ-ստորոգյալի բառական նշանակությունը աստիճանաբար մթագնվում է, դառնալով միադիմի մի կապակցություն՝ **ինչ** հարաբերականի հետ միասնաբար. այդ ստորոգյալով արտահայտված ենթակա երկրորդական նախադասությունը դադարում է իբրև այդպիսին լինելուց և ձուլվելով իր գլխավոր նախադասությանը՝ կազմում է մի զիջական երկրորդական նախադասություն. օրինակ՝ **Ինչ ուզում է լինի, ընթրիքի համար մի քանիսը պետք է զարկեմ** (Թ., III,209)։ **Ինչ ուզում է լինի, պետք է տեսնեմ** (Նույն տեղում, 333)։

Այս նույն ճանապարհով **ուզել** բայը կապակցվում է **ով, ինչքան, որքան, ուր, ինչպես** հարաբերականների հետ, որոնք նախապես տարբեր բնույթի երկրորդական նախադասություններ են կազմել։ Ըստ հերթականության դրանք կազմել են ենթակա, քանակի, տեղի, ձևի պարագա երկրորդական նախադասություններ, բայց հետագայում բարդ ստորադասական ամբողջ նախադասությունը դարձել է մի զիջական երկրորդական նախադասություն. օրինակ՝ **Ինչքան ուզում է փոքրիկ լինի, միայն թե թագավորություն լինի** (Թ., III, 354)։ **Ինչքան ուզում է գնա, մեռն է** (Թ., III, 79)։ **Որ գնա,**

գնա, գնա, գտնի Ոսկի քաղաքը, ուր ուզում է լինի *(Թ., III, 226)*։ Ով էլ կուզի թող գա, ես չեմ գնա *(ՍԶ, V, 375)*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Ուզել *բայը մթագնվել է ոչ միայն երրորդ դեմքով, այլև առաջին և երկրորդ դեմքերով. համեմատաբար այդ մթագնումը թույլ է արտահայտվում. օրինակ՝* **Ինչ ուզում ես արա, մին է, քեզ ձեռներս չենք տանելու** *(Թ., III, 329)*։ **Որքան էլ ուզեմ ձգտել դեպի ձեզ, Վեհապանծ սարեր, Ու փարվել մաքուր ձեր ձյունե կրծքին, Որքան էլ ուզեմ ես սլանալ վեր, վեր, արծվի նման հպարտ սավառնել, էլի չեմ կարող, կուսական լեռներ, երկիրը թողնել** *(Հ. Հակոբյան)*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Ուզել *բայով կազմվող զիջական երկրորդական նախադասությունները կազմվել են ժողովրդախոսակցական լեզվի հողի վրա։*

Զիջական երկրորդական նախադասություն է կազմում նաև ուզեր–չուզեր *հարադրությունը, բայց առանց վերոհիշյալ հարաբերական բառերի. օրինակ՝* **Էս անգամ արդեն ուզեր–չուզեր մեր երգիչը. դուրս էր գալիս արևի տակ** *(Թ., III, 94)*։

Առանց ուզել *բայի էլ վերոհիշյալ հարաբերական բառերով կազմվում են զիջական երկրորդական նախադասություններ, որոնք գործողությունը ուժեղացնում են ըստ տեղի, որակի, քանակի և այլն. հենց դրանով առաջ են բերում հակառակ հիմունքը. օրինակ՝* **Ինչքան էլ որ լաս, իզուր ես լալու** *(Թ., II, 78)*։ **Որքան էլ ծանր լինի աղետը, հարկ է լսել** *(ՍԶ, V, 287)*։ **Ով էլ լինեմ, քո հոգեառն եմ ես** *(ՍԶ, V, 376)*։ **Հիմի որտեղ որ է, կզարթնի նա** *(ՍԶ, V, 382)*։ **Ինչ էլ լինի, պետք է գնամ** *(նույն տեղում, 385)*։ **Որտեղ որ է, ճարի** *(Թ., III, 155)*։ **Ուր էլ լինեմ այսօր, ինձ բախտն ուր էլ տանի, ձեզ եմ հիշում ահա և ձեզ մտաբերում** *(«Ընտիր էջեր», 1118)*։ **Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր: Ինչ էլ լինի, քույր իմ, քույր, հեռանալիս չանիծես** *(ՉԸ, 14)*։ **Ինչպես որ լինի, մենք կգտնենք ճանապարհը** *(Թ., III, 315)*։ **Որքան տարի է անցկացել, բայց այն աղբյուրը դեռ մինչև այսօր էլ կա և բխում է միևնույն տեղից** *(ՂԱՀ, 124)*։ **Անուշահամ Քասախ գետը որքան և Կարբու անունով է կոչվել, բայց Կարբեցուն միշտ անմատչելի է մնացել** *(ՊՊԵԺ, III, 222)*։ **Որտեղ և լինի, կգտնեմ** *(Ր., III, 282)*։ **Որքան էլ պարզ լիներ, թե պատմածը մի առասպել է, այնուամենայնիվ հավատացողներ շատ գտնվեցին** *(Լեո, ՀՊ, 122)*։ **Ինչքան էլ նրան արհամարհանքով**

պարոն Գրաստամատ անվաներ, ինչքան էլ նրա քթի ծայրը աչքի զարկեր, չնայած, կրկնում ենք, այս բոլոր տարօրինակություններին,— պարոն Մարուքեն էր և արժանի է ուշադրության *(Զե, 292)։* *Այս վերջին օրինակում, ինչպես տեսնում ենք,* ինչքան *հարաբերականի զիջական արտահայտությունը ուժեղացվում, շեշտվում է* չնայած *շաղկապի զուգահեռ հավելադրությամբ։ Այս օրինակին համեմատիր հետևյալը.* Ով էլ որ լինի, որ այդ պիղծ ձևով խլած է խելքը ձեր աղջկանից և նրան ձեզնից, պետք է ինքներդ կարդաք օրենքի արյունոտ գիրքը *(Շեքս., I, 127)։*

Ծանոթություն.— Վերոհիշյալ շաղկապային բառերով կապակցվող երկրորդական նախադասությունները երբեմն դերբայական դարձվածի չեն վերածվում։ Համեմատիր՝ Ինչպես էլ որ լինի, մենք կգտնենք ճանապարհը: *Այսպիսի փոքր նախադասությունը զրկում է իմաստից, օրինակ՝ Ուր էլ լինեմ,* չեմ մոռանա. չնայած ուր լինելուս չեմ մոռանա։ *Այս դեպքում պետք է վերածումը կատարվի* հակառակ *բառով, ստորոգյալը արտահայտվի անորոշի տրական հոլովով. իսկ* ինչպես*-ը փոխվի* այդպիսի. *օրինակ՝* Հակառակ այդպես լինելուն մենք կգտնենք ճանապարհը:

դ) *ՄԻՆՉԵՎ, ՄԻՆՉ, ՄԻՆՉԴԵՌ* ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԶԻՋԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Զիջական երկրորդական նախադասությունները կապակցվում են մինչև, մինչ, մինչդեռ *շաղկապներով։ Այս շաղկապները ժամանակային հարաբերություն են արտահայտում, սակայն դրանց մեջ կա նաև զիջականության հասկացողություն։ Այդ երկու հասկացողությունները զուգընթացաբար են հանդես գալիս. սակայն երբ ուշադրությունը առանձնապես բևեռվում է ոչ թե ժամանակի, այլ առանձին գործողությունների վրա, այս դեպքում ժամանակային հասկացողությունը մղվում է ետին գիծը, իսկ զիջականությունը բացահայտ է դառնում. օրինակ՝* Ես միջոց չունիմ գեթ հասարակ իշխանի ապրուստ անելու, մինչ Ներսեսը իմ կալվածների եկամուտով բանակներ է կազմում *(Մուր., IV, 183)։* Նա տեսնում էր, թե ինչպես նրանք Սարյանին առանձին պատիվներ էին տալիս, մինչդեռ յուր վրա ուշադրություն անգամ չեն դարձնում *(Մուր., II, 286)։* *Այս նախադասությունների կապակցությունը հիմնականում ցույց է տալիս գործողությունների հակադրությունը, մի եզրում կատարվող*

գործողությունը սպասել է տալիս համանման գործողություն, մինչդեռ կատարվում է անսպասելին, այն ինչ որ հակառակ հիմունքն է։ Այս դեպքում միաժամանակությունը դառնում է երկրորդական և նույնիսկ դա կարող է գոյություն չունենալ. օրինակ՝ Այս մարդը տեր Մուկուչին խորհուրդ է տալիս՝ անուսում թողնել իր չորս որդիներին, մինչդեռ ինքն իր որդուն բարձր կրթություն է տվել («Ընտիր էջեր», 589)։ Չնայած այս հանգամանքին, այնուամենայնիվ հիշյալ շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունները ավելի կամ պակաս չափով արտահայտում են նաև ժամանակային հարաբերություն։ Համեմատիր նաև հիշյալ օրինակները՝ Մինչդեռ աշխարհքը լողում էր արյան ծովում, այս ծեր արծիվը յուր ժայռերի գլխին նստած՝ թշնամու վրա ծիծաղում ու իրենց պապերից էր պատմում (Թ., III, 27)։ Մենք զանգատվում ենք թյուրք ենիչերիներից, մինչդեռ մեր ենիչերիները ավելի սոսկալի են (Փափ., 50)։

ե) ԵԹԵ, ՄԻՆՉԵՎ ԻՍԿ ԵԹԵ, ՇԱՏ ԷԼ, ԹՈՂ ԹԵ, ՄԻԱՅՆ ԵՎ ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ՇԱՂԿԱՊԱՅԻՆ ԲԱՌԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԶԻՋԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Զիջական երկրորդական նախադասությունները կապակցվում են եթե շաղկապով. այս դեպքում բարդ նախադասության մեկ անդամը արտահայտվում է դրական կամ ժխտական այնպիսի մի գործողությամբ, որին համապատասխան պետք է լիներ մյուս անդամի գործողությունը, այն է՝ դրականին պետք է համապատասխաներ դրական գործողություն, իսկ ժխտականին՝ ժխտական. սակայն երբ հակառակն է կատարվում, պայմանականությունը փոխարինում է հակառակ հիմունքը՝ զիջականությունը. օրինակ՝ Եթե հարյուրավոր աչքեր ունենար մարդը, դարձյալ անկարող կլիներ նկատել (Ր., III, 275)։ Այդ եթե չեմ տեսնում, գոնե զգում եմ (Փափ., 614)։ Եթե դու չհամաձայնես, ես առանց քեզ էլ կգնամ (Ր., III, 175)։ Եթե Սամվելը նրան յուր հետը տանելու չլիներ, նա այնպես էլ կգնար (Ր., III, 176)։ Եթե նրան չուղարկեին անգամ պատերազմ, նա ինքը ամեն ջանք պիտի գործ դներ, որ ուղարկեն (Շիրվ., V, 189)։

Եթե շաղկապով կարող են կապակցվել նաև համապատասխան դրական և ժխտական գլխավոր և երկրորդական նախադասություններ, երբ երկրորդական նախադասության եզրում լինի նույնիսկ շաղկապը։ Այս պարագայում գլխավոր նախադասության եզրում կարող է հանդես գալ այնուամենայնիվ և կազմել իսկական զիջա-

կան կապակցություն. օրինակ՝ Եթե նույնիսկ ձյուն լինի, եթե նույնիսկ մրրիկն ու բուքը լցնեն բոլոր ճանապարհները, այնուամենայնիվ պետք է հեռանում այստեղից:

Զիջական երկրորդական նախադասությունը կապակցվում է մինչև իսկ եթե *բարդ շաղկապի միջոցով, որը այդ հարաբերությունը շատ ցայտուն է դրսևորում. օրինակ՝* Օրերով պտույտ էր գործում պալատի շուրջը, մինչև իսկ եթե այնտեղ ուտելու խոտ չգտներ (*Փափ., 224*)։

Ժողովրդախոսակցական լեզվից գրականին է անցել շատ էլ *բաղադրյալ շաղկապը, որը նույնպես դրսևորում է զիջական հարաբերություն. օրինակ՝* Շատ էլ բերին, ինչ նշանակություն ունի ձեզ համար (*Մուր., II, 28*)։ Շատ էլ ես չեմ ցանկանում, դու երբ ես հաշվի առնում:

Ծանոթություն.— Զիջական երկրորդական նախադասությունը գլխավորի հետ հազվադեպ կապակցվում է նաև թող թե *բաղադրյալ շաղկապով, որ այժմ գործածությունից դուրս է եկել։ Համեմատիր՝* Նա այն տեսակ երկչոտ բնավորություններից չէր, որ վախենար իր հարաբերությունների՝ մի իշխանազն աղջկա հետ հայտնվելուց, թող թե դա մեծ պարոնի եղբոր աղջիկը լիներ (*Բեժ, VI, 180*)։

Զիջականություն են արտահայտում ճիշտ է, ճշմարիտ է, իրավ է *կապակցությունները, որոնք շաղկապի չեն վերածվել. շատ դեպքերում միջանկյալ նախադասության պաշտոնով են հանդես գալիս, սակայն հակառակ հիմունք են դրսևորում և աստիճանաբար վերածվում են զիջական շաղկապի, մանավանդ որ գլխավոր նախադասության եզրում դրան զուգադիր կիրառվում են* բայց, սակայն, բայց այնուամենայնիվ *և այլ շաղկապները։ Համեմատիր՝* Եղբորս աղջիկը, ճիշտ է, մեր ձեռքի տակ է մեծացել, բայց իրեն դաստիարակողն ինքն է եղել (*Նար., VI, 179*)։ Ճիշտ է, մի քանի անգամ Խոջա-Հիբանի որդիների սարանքը դարձյալ ֆուրգոնով էին բերել, բայց նրանք երկձի էին (*ԱԲԵ, 515*)։ Վարժապետ, ճշմարիտ է, գելը գազան է ու մարդուն էլ շատ է վնաս տալիս, միայն էդ որ պատմեցիր. ախպեր, ինչ թաքցնեմ, մեղքս եկավ (*Թ., III, 114*)։ Մազերս իրավ է շատ չեն ճերմակել, բայց սրտումս այլևս կյանք չէ մնացել (*Բ., III, 485*)։

Միայն, միայն թե, մենակ, մենակ թե *շաղկապներով կապակցվող նախադասությունները երկակի բնույթ ունեն. նրանք կարող են*

դիտվել թե որպես սահմանափակման հակադրական կապակցության մի մաս և թե որպես զիջական երկրորդական նախադասություն։ Օրինակ՝ Շատ սիրով էլ ապրում են իրար հետ, միայն կինը երբեմն անհետանում է (Թ., III, 241)։ Ամեն ինչ կտա, միայն ուզում է որ վերջին անգամ յուր հետ երկու խոսք խոսես (ՎՓԵԺ, I, 375)։ Շնորհակալ եմ, տիկին, մենակ ուզում եմ իմանալ, սպասեմ, թե գնամ (ԲՎԻԳԵ, 154)։ Լինիմ ծով, ժայռ, արև, լուսին, միայն միայն ինձ սիրիր (ԱԻԵ, 8)։

է. ՀԵՏԵՎԱՆՔԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հետևանքի երկրորդական նախադասություն է կոչվում բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ մտնող այն լրացուցիչ նախադասությունը, որը բխում է գլխավոր նախադասությունից իբրև այս վերջինի հետևանք, արդյունք, այսինքն՝ երկրորդական նախադասության մեջ հաղորդվածը տեղի է ունենում գլխավոր նախադասության գործողության հետևանքով. օրինակ՝ Դրսում սարսափելի աղմուկ էր, ուստի խոսակցության ձայնը չէր լսվում: Խոսակցության ձայնը չէր լսվում նախադասությունը իբրև իրողություն հետևանք է դրսում աղմուկ էր նախադասության։ Տրամաբանորեն կարծես գլխավոր նախադասությունը պատճառ կամ հիմունք է հետևանքի լրացուցիչ նախադասության համար. և իսկապես երբ այսպիսի կապակցությունների գլխավոր նախադասությունը սկսենք որովհետև, քանի որ և այլ պատճառական շաղկապներով, կդառնա պատճառի երկրորդական նախադասություն, իսկ հետևանքի նախադասությունը կվերածվի գլխավոր նախադասության։ Չնայած դրանց իմաստային հարաբերության անփոփոխության, քերականորեն արդեն տարբեր կապակցություններ են, որովհետև ստորադասական շաղկապները դրանք ձևավորում են իբրև պատճառի երկրորդական նախադասություններ, իսկ հետևանքի նախադասությունը դառնում է գլխավոր։ Որպեսզի ասվածը պարզ լինի, բերենք մի այսպիսի օրինակ՝ Որովհետև աղջիկը գեղեցիկ է լինում, ուստի խորթ քույրերը նախանձում են: Այս նախադասության մեջ արդեն գլխավորը երկրորդն է, իսկ երկրորդականը՝ առաջինը, մինչդեռ առանց որովհետև շաղկապի հակառակն է։

Հետևանքի նախադասությունները մասամբ առաջացել են պատճառի երկրորդական նախադասությունների մթագնման ճանապարհով։ Երբ պատճառի երկրորդական նախադասությունը կորցնում է իր ստորադասական շաղկապը, ապա դադարում է երկրոր-

դական նախադասություն լինելուց. իսկ այս՝ վերջինիս գլխավոր նախադասությունը իր հարաբերյալ բառերով ու շաղկապներով մընում է իբրև հետևանքի նախադասություն. օրինակ՝ Նրա այդ տըխրությունը նկատում էին նաև թիկնապահները, ուստի ջանում էին լինել սովորականից ավելի պատրաստակամ ու հարգալիր *(ՍԶ, V, 277)։ Այսպիսի կապակցությունը փոխանցման գործողության մեջ է գտնվում, այսինքն՝ պատճառական հարաբերությունից անցնում է հետևանքի՝ փոխելով իր անդամների կապակցման բնույթը, այն է, պատճառական հարաբերությունը վերածելով հետևանքի, այլ խոսքով երկրորդական նախադասությունը դառնում է գլխավոր, իսկ գլխավորը՝ երկրորդական։ Համեմատիր՝* Բայց նրա առաքելությունն ապարդյուն անցավ, ուստի և հուսահատ ու վշտահար նա վերադարձավ Թիֆլիս *(Մուր., II, 98)։* Իմ ուխտն, իհարկե, ես չէի մոռացել, ուստի և այս ճանապարհորդությունը շատ հարմար էի տեսնում իմ նպատակների իրագործման համար *(Նույն տեղում, 108)։* Ես ճանաչում եմ քեզ, դրա համար մոտեցա: Ես խոսք եմ տվել, այդ պատճառով էլ խոստումս կատարեցի:

Հետևանքի երկրորդական նախադասությունները վերաբերում են ամբողջ գլխավոր նախադասությանը կամ նրա մի մասին, երբ այդ մասը դերբայական դարձված է, և կապակցվում են որ, այնպես որ, ուստի, ուրեմն, հետևապես, հետևաբար, ապա ուրեմն, թող ուրեմն *և այլ շաղկապներով, որոնք կքննվեն առանձին-առանձին։*

ա) *ՈՐ* ՇԱՂԿԱՊՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՀԵՏԵՎԱՆՔԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հետևանքի երկրորդական նախադասությունները կապակցվում են որ *շաղկապով. այս պարագայում գլխավոր նախադասության եզրում հանդես են գալիս* այնպես, այնպիսի, այն աստիճանի, այն տեսակ, այնչափ, այնքան *մատնանշող բառերն ու բառակապակցությունները։ Երբ գլխավոր նախադասությունն ուղեկցվում է* այն տեսակ, այնպիսի, այնպես *բառերով ու բառակապակցություններով, նշանակում է գլխավոր նախադասությունը արտահայտվում է որակական այնպիսի ցուցանիշներով, որոնք հետևանք են թողնում. այդ որակական հատկանիշի (ուժեղ, թույլ, լավ, վատ և այլն) հետևանքը երկրորդական նախադասությունն է. օրինակ՝* Սկյուռի նման ճարպկորեն ծառն է բարձրանում ու ճյուղերի արանքում այնպես է կորչում, որ թագավորի տղեն չի էլ կարողանում նկատի *(Թ., III, 330)։ Թվում է, թե այդպիսի երկրորդական նախադասությունը*

պետք է ձևի պարագա լինի, բայց, ինչպես երևում է օրինակից, գլխավոր և երկրորդական նախադասությունները այնպիսի բառով ձևական նմանության հարաբերության մեջ չեն մտնում, այլ պարզապես այնպես կապակցական միջոց է, որ պատրաստում է հետեվանքի հաջորդումը։ Այստեղ անշուշտ կա նաև ձևի համակցողությունը. մինչև անգամ կարելի է այդ նշանակությամբ դերբայական դարձվածք վերածել. Ճյուղերի արանքում կորչում է թագավորի տղի նկատել չկարողանալու ձևով, սակայն ինչպես նկատվում է օրինակից, նկատվել չկարողանալ և կորչել համակցողությունները նման չեն, որպեսզի մեկը դառնա մյուսի համար ձևի լրացում։ Այդտեղ գոյություն ունի մի գործողություն և սրանից բխող մի այլ հետեվանքի գործողություն։ Այլ բան է, երբ լիներ այսպես. Նա այնպես է թաքնվում, ինչպես թաքնվում են մյուսները։

Այնպես, այն տեսակ, այնպիսի կապակցական բառերով և որ շաղկապով հետևանքային նախադասությունը կարելի է կոչել որակային հետևանքի երկրորդական նախադասություն. օրինակ՝ Այնպես շփոթվեց, որ պարզապես չիմացավ ինչ պատասխանի (Նար., VII, 254)։ Էնպես է ասում, որ էս աղջկա սիրտը շարժվում է (Թ., III, 310)։ Իսկ Շնորհիկը այնպես պինդ էր փակել իր աչքերը, որ թվում էր, թե այլևս չպիտի բացվեն նրանք (ԳՄե, 345)։ Մի այնպիսի ցրնցում անցավ մարմնովս, որ սրտիս բաբախումը բոլորովին կանգ առավ (Փափ., 416)։ Եվ այս ամենն այնպես արագ կատարվեց, որ անկարելի էր մի բան անել (Թ., III, 72)։ Ինչ կտաս էնպես անեմ, որ առավոտ էլ ծուխ չբարձրանա (Թ., III, 69)։

Այնպիսի ցուցականը տվյալ դեպքում որոշիչի դերով է հանդես գալիս, ուստի դրա հետ կապակցվող երկրորդական նախադասությունը մասամբ հիշեցնում է որոշիչ նախադասություն. սակայն որպեսզի տարբերենք հետևանքի երկրորդական նախադասությունները, պետք է նկատի ունենք, որ հետևանքի նախադասությունը այս պարագայում վերաբերում է ամբողջ գլխավոր նախադասությանը և ոչ թե սրա մի անդամին, որին իբրև որոշիչ հարում է այնպիսի ցուցականը։ Այս վերջինը պետք է գլխավորապես վերաբերի գործողություն արտահայտող գոյականի, այլապես երկրորդական նախադասությունը այնպիսի մի գործողություն կարտահայտի, որ կապ չի ունենա գոյականի որոշիչային հատկանիշի հետ։

Որ շաղկապով հետևանքի երկրորդական նախադասությունները կապակցվում են նաև այնպիսի գլխավոր նախադասությունների հետ, որոնց ստորոգյալը բնութագրվում է այնքան, այնչափ բառե-

թով։ Այս բառերը քանակական առումով այնպես են սրում գլխավոր նախադասության ստորոգյալի գործողությունը, որ վերջինից բխում է մի այլ գործողություն։ Գլխավոր նախադասության քանակական հատկանիշը կարող է ընդգծվել բազմազան կողմերով. դա կարող է լինել տարածական, որակական, ուժգնության, քանակական և այլ առնչություններով, որոնք էլ առաջ են բերում հետևանքային նախադասության համապատասխան գործողություն։ Այս դեպքում էլ երկրորդական նախադասությունը չի դիտվում իբրև գլխավոր նախադասության քանակային հարաբերության լրացում, այլ դիտվում է իբրև այնպիսի լրացում, որ բխում է գլխավոր նախադասության ստորոգյալի այս կամ այն հատկանիշի քանակային առանձնահատկությունից, իբրև դրանց հետևանք. օրինակ՝ **Բայց դու այնքան ես առաջ արշավել, որ վարձատրության նույնիսկ ամենեն սրարշիչ թևը դարձյալ դանդաղ է քեզ հասնելու** (Շեքս., I, 220)։ **Այս ամենը կատարվեց այնքան տարօրինակ կերպով, որ ոչ ոք մտածեց հարցնել տղի կամ աղջկա համաձայնությունը** (Մուր., V, 176)։ **Նա այնքան բարի էր դեպի բոլորը, այնքան բարի, որ նրա ձիու սմբակները չէին պղտորում աղբյուրների աղամանդը** (Իս., III, 269)։ **Դու այնքան զբաղմունք ունես, որ թե ես, թե Մեսրոպը չէինք ցանկանա խանգարել քեզ** (Ր., III, 126)։ **Այդ մահուդե շալվարն այնչափ կարճ էր, որ երևում էին նրա մերկ սրունքները** (Փափ., 29)։

Որ շաղկապով հետևանքի երկրորդական նախադասությունները նաև կապակցվում են այնպիսի գլխավոր նախադասությունների հետ, որոնք ունեն **այն աստիճան(ի), այնտեղ** հարաբերյալները։ Սրանք ցույց են տալիս գլխավոր նախադասության ստորոգյալի գործողության, կամ հատկանիշի ծավալային, որակական, քանակական, ուժգնության մի այնպիսի բարձր աստիճանը, որից անխուսափելիորեն բխում է հետևանքի նախադասության գործողությունը. օրինակ՝ **Խրճիթում այն աստիճան մութն էր, որ մինչև անգամ միմյանց չէին տեսնում** (Նար., I, 455)։ **Ես մինչև այնտեղ չեմ հասնի, որ նա ինձ բանտարկե** (Ր., III, 302)։ **Յուր պարտության փախուստը և զորքերի կոտորածը այն աստիճան էին նրան կատաղեցրել, որ մի Մարզպետունու հաղթելը կամ նրա «հրոսակները» ցրվելը գոհունակություն չէր պատճառի նրան** (Մուր., III, 332)։

Որ շաղկապով հետևանքի երկրորդական նախադասությունները կապակցվում են նաև այնպիսի գլխավոր նախադասությունների հետ, որոնք չեն ունենում **այնպես, այնքան** հարաբերյալ բառերը։ Այս դեպքում գլխավոր նախադասության ստորոգյալը առանց որևէ

ժխտականի ժխտում կամ արտահայտում է այնպիսի մի գործողություն, որից առաջանում է հետևանքի նախադասության մեջ արտահայտված գործողությունը։ Այսպիսի գլխավոր նախադասությունները գերազանցապես կիսահարցական և հարցական ձև ունեն. օրինակ՝ Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել, որ դու քաղաք ես եկել (Թ., III, 63)։ Ի՞նչ արի ես ձեզ, որ քարկոծում եք ինձ (Փափ., 396)։ Երբ խմեցիր, որ հարբես (Շիրվ., VI, 65)։ Երևի Սամվելի մայրը սաստիկ նեղ-փացրել է ձեզ, որ այդպես ուշ եք վերջացրել ճաշը (Ր., III, 127)։ Ի՞նչ է արել էնքան սիրուն, էնքան քնքուշ մի էակ, Որ փակել ես մութն ու անդուռն էդ ամրոցում մեն-մենակ (Թ., II, 167)։ Արդյոք գիշերի հաղթանա՞կն է այս, թե ամաչում է օրը երևալ, որ խավարն այսպես գերեզմանել է երկրի երեսը (Շեքս., I, 38)։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Երբեմն հետևանքի հետ համատեղվում է նպատակային հարաբերությունը. օրինակ՝ Մի արջ պատահեր, մի գազան, մի գել, որ չէի տեսել ձեր շուքը մեկ էլ *(Թ., I, 266)։* Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ, որ աղբյուրները հավետ կարկաչեն, որ ծաղկեն լեռներն իմ արևանիստ, որ ծով դաշտերը հավերժ կանաչեն, որ գարունները գան ու չգնան, որ բեկվի իմ դեմ օրենքը մահվան, որ մարդը ցնծա արևի բախտով *(«Ընտիր էջեր», 1116)։*

բ) *ԱՅՆՊԵՍ ՈՐ* ՇԱՂԿԱՊՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՀԵՏԵՎԱՆՔԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հետևանքի երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է այնպես որ *բաղադրյալ շաղկապով։ Այս շաղկապի առաջացումը շատ պարզ է։ Գլխավոր նախադասության եզրում եղած* այնպես *ձևական հարաբերյալը գտնվելով նախադասության վերջում, մոտենում է երկրորդական նախադասության* որ *շաղկապին, որ ետադաս երկրորդական նախադասության սկզբում է դրվում, ձուլվում է այդ վերջինի հետ և կազմելով մի շաղկապ՝ անջատվում է գլխավոր նախադասությունից։ Այս վերջինի և նախորդի տարբերությունը միայն արտաբերական նշանակություն ունի. մինչդեռ առաջին դեպքում, երբ* այնպես-*ը գլխավոր նախադասության մեջ է, ամբողջ բարդ նախադասության տրամաբանական շեշտը գլխավոր նախադասության եզրում է, որը ունի նաև բարձրացող արտաբերություն, իսկ երբ* այնպես-*ը անցնում է երկրորդական նախադասության եզրը, գլխավոր նախադասությունը չունենա-*

լով տրամաբանական շեշտ՝ արտաբերվում է հավասար, առանց փոփոխվող հնչերանգի. ելևէջը աննկատելի է. երկրորդական նախադասությունը կրելով իր վրա տրամաբանական շեշտը (այնպես-*ի վրա է*), *բարձրանում է և հետո իջնում. օրինակ՝* Սիրտը սաստիկ արագությամբ սկսեց բաբախել, այնպես որ նա մինչև անգամ ձեռքը սեղմեց կրծքին *(Նար., I, 348)*։ Մինչև էգուց առավոտ արևի ծագումը պետք է էս կորեկը հավաքես, էնպես որ ոչ մինը չկորչի *(Թ., III, 337)*։ Դռան փեղկը լավ չէր փակված, այնպես որ խոսակիցներին տեսնելու և մինչև անգամ դրանց դիմաշարժը դիտելու չափ բացվածք էր մնում *(Մուր., II, 360)*։ Նրանք գտնվում են երկաթուղագծի այն կողմը՝ գերեզմանատան մոտ, այնպես որ այդ երկու հիմնարկությունները թողնում ենք... անուշադիր *(ԵՉԵ, 308)*։

գ) *ՈՒՍՏԻ, ՈՒՐԵՄՆ* ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՀԵՏԵՎԱՆՔԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հետևանքի երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է ուստի *շաղկապով։ Այս դեպքում երկրորդական նախադասությունը ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որը տրամաբանական հետևանքն է գլխավոր նախադասության իբրև եզրակացություն, իբրև նրանից բխող գործողություն. օրինակ՝* Չգիտեմ ախորժ հովը, թե հոգնածությունը քիչ հետո մի տեսակ թմրություն բերին վրաս, ուստի գլուխս ժայռին դնելով, կամեցա մի փոքր նիրհել *(Մուր., II, 149)*։ Պետք էր գնալ իշխանների մոտ, ուստի Արտակը վեր կացավ *(ԴԴԵԺ, III 83)*։ Առանց այդ էլ իր հայրենիքում նրան արդեն համարում են հերետիկոս, ուստի ինքը պետք է անարատ պահի իրեն *(ԱԲԵ, 621)*։

Ուստի *շաղկապը հաճախ բաղադրվում է* և *շաղկապի հետ* ուստի և *ձևով, որով ավելի ուժեղ է շեշտվում հետևանքային գործողությունը իբրև գլխավոր նախադասությունից բխող տրամաբանական եզրակացություն. օրինակ՝* Նա շատ էր սիրում այս մտերիմ զույգին, ուստի և սիրով ժպտաց նրանց *(ԴԴԵԺ, III, 210)*։ Փառանձեմը... գիտեր հունարենը մայրենի լեզվի պես. ուստի և զրուցում էին ազատ և լիովին հասկանում միմյանց *(ՍԶՀԲ, 190)*։

Հետևանքի երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է ուրեմն *շաղկապով։ Եթե նախորդը ձևավորում է պատճառից բխող հետևանքային երկրորդական նախադասությունները, ապա այս վերջինը արտահայտում է պայմանից բխող հետևանք։ Այդ է պատճառը, որ այս վերջինի հետ կապակցվող գլխա-*

վոր նախադասությունները հաճախ եթե *շաղկապով սկսվելով՝ վերածվում են պայմանի երկրորդական նախադասությունների։ Իբրև հետևանքի շաղկապներ հաճախ* ուրեմն *և* ուստի *միմյանց փոխարինում են. օրինակ՝* Նրանց հոգին... հանգիստ չի մնա և կտանջվի... Ուրեմն չպետք է արտասվել շատ *(ՍՋՀԲ, 190)*։ Դուք իշխանություն եք գործադրում, ուրեմն դուք իշխանություն եք *(ԴԴԵԺ, III, 163)*։ Փորձանքը գալու է, իշխան, ուրեմն ասածդ էլ գալու է *(Նույն տեղում, 315)*։ Բոլոր այն ձմեռը գրեթե շարունակ չորս ամիս սաստիկ ցուրտը կայնել էր, ուրեմն և այն օրը... նմանապես ցուրտ էր *(ՌՊԵ, 316)*։ Ահա գալիս է տաք շեղջի բույրը, ուրեմն ցորեն են ծեծում *(ԱԲԵ, 225)*։ Ահա դուռն էլ բաց է, ինչո՞ւ եք ուրեմն կծկված մնացել *(Փափ., 27)*։

Ծանոթություն.— Ինչպես ուստի, *այնպես էլ* ուրեմն *շաղկապը երբեմն բարդանում է* և*-ով. օրինակ՝* Պարզ է և հոգեբանորեն ճիշտ, ուրեմն և գեղարվեստական *(Շիրվ., IX, 288)*։

Հաճախ ուրեմն *շաղկապով կապակցվող բարդության մաս կազմող գլխավոր նախադասությունը սկսվում է* եթե *պայմանի շաղկապով. այս դեպքում այդպիսի նախադասությունը վերածվում է պայմանի երկրորդական նախադասության, իսկ* ուրեմն *շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունը դառնում է գլխավոր՝ պահպանելով իր հետևանքային նշանակությունը. օրինակ՝* Եթե ճշմարիտ էր, ուրեմն հարկավոր էր վճիռներ ընդունել *(ԴԴԵԺ, III, 339)*։ Եթե խաղը կոներն է ընկնում, ուրեմն նա խաղլացավ ունի *(ԱԲԵ, 69)*։

Այդպիսի պայմանի նախադասությունները կապակցվում են որ, երբ *շաղկապներով. օրինակ՝* Որ տան կտրին դդում եք տեսնում, ուրեմն էնտեղ ալրում են *(ԱԲԵ, 253)*։ Էս հաստակին, որ սա վախ չունի մենակ գնալու, ուրեմն ստոտ տղա պիտի լինի *(ԱԲԵ, 417)*։

դ) *ՀԵՏԵՎԱԲԱՐ, ՀԵՏԵՎԱՊԵՍ* ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՀԵՏԵՎԱՆՔԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հետևանքի երկրորդական նախադասությունները կապակցվում են հետևապես, հետևաբար *շաղկապներով, որոնց կազմությունն իսկ արդեն մատնացույց է անում հետևանքը, իբրև նախորդից բխող եզրակացություն. օրինակ՝* Զգտումներ ունեցող մարդը ժամանակ չի ունենում ունայն բաների մասին մտածելու, հետևաբար նրա մեջ

ունայնության գիտակցության ճնշում էլ չի լինում *(Նար., IV, 72)*։ Իսկ սրանք հո համեմատաբար քաղաքակրթված երկրի բնակիչներ էին, հետևապես պետք է ազատ լինեին այդպիսի վայրենությունից *(Քրեստ., IX, 85)*։ Ցորենի հասունացման պրոցեսը զգալի չափով դանդաղեցրել ենք, հետևաբար կոմբայնները կարողանում են ժամանակին հավաքել բերքը *(ՍԽՀ, I, 179)*։

Այսպիսի բարդության մաս կազմող գլխավոր նախադասությունները սկսվելով որովհետև, եթե, երբ *ստորադասական շաղկապներով՝ նույնպես վերածվում են երկրորդական պատճառի և պայմանի նախադասությունների. օրինակ՝* Եվ որովհետև երեքը շատ է երկուսից, հետևաբար ես կարտասանեմ Ռուսլանի մենախոսությունը *(Նար., VI, 57—58)*։ Որովհետև հազիվ մի շաբաթ է, ինչ գտնվում եմ այստեղ, հետևապես ամեն տեղ տեսնելու և ամեն ինչ հետազոտելու ոչ ժամանակ և ոչ հնարավորություն ունեի *(Մուր., II, 264)*։ Եթե դու խոսում ես, հետևապես նա պետք է լռի: Երբ նա գալիս է, հետևաբար դիմավորելու ենք գնում:

ե) *ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ՈՒ ՇԱՂԿԱՊԱՅԻՆ ԲԱՌԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ* ՀԵՏԵՎԱՆՔԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հետևանքի երկրորդական նախադասությունները գլխավորի հետ սակավ կապակցվում են ապա ուրեմն, թող ուրեմն *բաղադրյալ շաղկապներով. օրինակ՝* Զինվորյալ գրվեցինք, ապա ուրեմն տառացանք ամեն ինչից *(ԴԴԵժ, IV, 98)*։ Այլևս ոչ ոք չի կարող կատարվածը չկատարված անել, թող ուրեմն ժողովուրդը մնա մաքուր *(Նույն տեղում, 148)*։

Հետևանքի նախադասությունները կապակցվում են ոնց որ լինի, ինչպես էլ լինի, ոնց ուզում է լինի, ինչ ուզում է լինի, որքան էլ լինի, ինչ էլ լինի *և այս կարգի զիջականություն արտահայտող անդեմ նախադասություններով. օրինակ՝* Քույրը մեծ էր, ոնց որ լիներ կհամբերեր արևին *(Թումանյան)*։ Դու արագավազ ես, ինչքան ուզում է լինի, կհասնես: Ձգտում եմ, ինչ էլ լինի կկատարեմ *և այլն*։

Հետևանքի երկրորդական նախադասությունները կապակցվում են դրա համար, այդ բանի համար, դրա հետևանքով, այդ պատճառով, դրա պատճառով, որի հետևանքով, որի շնորհիվ, որի պատճառով, որով *և այս կարգի այլ բառակապակցություններով. օրինակ՝* Հավատում եմ կյանքին, դրա համար էլ պատրաստ եմ մեռնելու *(ԴԴԵժ, VI, 453)*։ Բոլորը գիտեն այդ մասին, այդ պատճառով էլ սուր, խայթող հայացքներով նայում են իրեն *(ԲՎԻԳԵ, 11)*։ Ես ու-

զում էի ձեզ օգնել. դրա համար ձեզ մոտ եկա (*ՄԱՇ, 339*)։ Երևի գիտեր, որ իրան խոսքը չի ընդունվել, նրա համար էլ պոչն իրան է քաշել (*Թ., III, 117*)։

Հետևանքի նախադասությունները կապակցվում են մեկ էլ *շաղկապով, որ մեծ մասամբ բաղադրվում է* տեսնել *բայի անցյալ կատարյալով՝* մեկ էլ տեսա, մեկ էլ տեսար, մեկ էլ տեսավ *ձևերով.* տեսնել *բայի դեմքը կապված է գլխավոր նախադասության ստորոգյալի դեմքի հետ։ Այս շաղկապը ավելի հաճախ ցույց է տալիս գլխավոր նախադասության ստորոգյալի գործողությանն արագ հաջորդող հանկարծակի, անսպասելի մի գործողություն, որ հաճախ առաջանում է որպես նախորդի հետևանք. օրինակ՝* Տաքացրիր մի քիչ, մեկ էլ տեսար պայթեց (*ԲՎԻԳԵ, 280*)։ Գնում ես, գնում, մ կ էլ հասնում ես մի չոլչոլստան: Հասա մի գետի, մեկ էլ տեսա մյուս ափին մի մարդ է կանգնած:

Հետևանքի երկրորդական նախադասությունները երբեմն կապակցվում են թող, ապա *բառերով, որոնք իբրև շաղկապներ այս նշանակությամբ հաճախ բարդանում են* ուրեմն *շաղկապով՝* թող ուրեմն, ապա ուրեմն *ձևերով. առանց* ուրեմն *շաղկապի դրանց հետևանքային նշանակությունը թուլանում է՝ մեկի եղանակավորիչ և մյուսի մակբայ լինելով։ Համեմատիր հետևյալ օրինակները.* Խոստացել ես, ապա պետք է գաս: Հանցանք է գործել, թող պատժվի:

Հետևանքի հարաբերություն է արտահայտում նաև նոր միայն *բաղադրյալ շաղկապը, որը առանձնապես կիրառվում է ժամանակի երկրորդական նախադասության հետ կապակցվող գլխավոր նախադասության եզրում իբրև զուգադիր շաղկապ. սակայն երբ ժամանակի երկրորդական նախադասությունը կիրառվում է առանց շաղկապի, գլխավոր նախադասությունը վերածվում է հետևանքի երկրորդական նախադասության հենց այդ* նոր միայն *շաղկապով. օրինակ՝* Ոչ ոք չկար, նոր միայն հիշեց, որ ընդմիջում է (*ԲՎԻԳԵ, 112*)։ *Այս նախադասությունը իր ամբողջությամբ պետք է լիներ.* Երբ տեսավ՝ ոչ ոք չկար, նոր միայն հիշեց... *Համեմատիր.* Երբ հասավ գյուղ, նոր միայն հիշեց, որ կապոցը մոռացել է:

Հետևանքի երկրորդական նախադասությունը մասամբ կապակցվում է եթե *շաղկապով, որ այս դեպքում կարող է փոխարինվել* որ*-ով. օրինակ՝* Մի՞թե կարծում եք՝ ուժն էր պակասում, եթե համբերեց դատելուց առաջ (*Թ., I, 143*)։

Հետևանքի երկրորդական նախադասությունը կապակցվում է

գլխավորի հետ մինչև, մինչ, որպեսզի *շաղկապներով, որոնք իբրև այդպիսիք գործածությունից դուրս են եկել: Համեմատիր՝* Յուր ոտքով այնպես սաստիկ զարկեց մանկլավիկի փորին, մինչ նա գլորվեցավ և հինգ քայլ հեռու վայր ընկավ գետնի վրա *(Ր., III, 347):* Սիրո, մանավանդ իր սիրո մասին Եվան չափից դուրս վեհ և անպայման մաքուր գաղափար ուներ, որպեսզի կարողանար հաշտվել Բազենյանի աչքերի մեջ նկատված փոփոխության հետ *(Նար., VI, 488):*

Որպեսզի *շաղկապով կապակցվող հետևանքի երկրորդական նախադասության ստորոգյալը կիրառվում է ըղձական եղանակով և դրական լինելով ունի ժխտական նշանակություն: Համեմատիր՝ Ես շատ եմ փորձվել կյանքում, որպեսզի դյուրությամբ խաբվեմ նրանից: Ինչպես արդեն նշվեց, այժմ այսպիսի կապակցությունը միանգամայն հնացած է:*

Հետևանքի երկրորդական նախադասությունները միշտ ետադաս են շարադասվում, որովհետև առանց հետևանքը առաջ բերողի հետևանք չի լինի:

Ս ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Վերևում քննված շաղկապներից ուստի, հետևաբար, հետևապես, դրա համար, այդ պատճառով *և այլն համարվում են նաև համադասական, ուստի հաճախ ոմանք այդ շաղկապներով կապակցվող բարդությունները ուսումնասիրում են համադասության բաժնում: Դրանց յուրաքանչյուրի այս կամ այն խմբին պատկանելու խնդիրը պետք է որոշել տվյալ քերականական հարաբերությունը արտահայտելու որոշակիությամբ. իբրև հետևանքի շաղկապներ, հարկ է նշել, որ դրանք հետևանքի հարաբերությունը բացահայտ կերպով են դրսևորում, իսկ հնչերանգության ուժգնությամբ քիչ են զիջում այս կամ այն բարդ ստորադասական նախադասության հնչերանգությանը. ինչ վերաբերում է ելևէջների առանձնահատկությանը, հետևանքի նախադասությունները ավելի համապատասխանում են ստորադասական նախադասություններին. այս առթիվ համեմատիր հետևյալ երկու տիպի հետևանքային նախադասությունների հնչերանգային առանձնահատկությունները և դրսևորման որոշակիությունը: Օրինակ՝* Բայց նրա առաքելությունն ապարդյուն անցավ, ուստի և հուսահատ ու վշտահար վերադարձավ նա Թիֆլիս *(Մուր., II, 98):* Արևը մեր մտավ, և ես եկա *(Թ., III, 151):*

Վերջին նախադասության մեջ և շաղկապը նույնպես հետեվանք է արտահայտում, սակայն այդ նախադասության երկու մասերը կարծես անկախ հնչերանգ ունեն, ձայնի այն ուժգին տրամաբանական իջեցումն ու բարձրացումը չկա, ինչպես նախորդի մեջ։

Հետևանքի այս կարգի նախադասությունները համեմատելով պայմանի, պատճառի, որոշիչ և այլ երկրորդական նախադասությունների հետ, կարելի է նկատել դրանց որոշ առնչակցությունը համադասական կապակցության հետ. այդ արտահայտվում է նրանով, որ հետևանքի այս նախադասությունները որոշ չափով ինքնուրույն են. նախ գլխավոր նախադասության մեջ չկան մատնանշող բառեր, իսկ այդ նախադասության հնչերանգությունը իջնող է ու ցույց է տալիս միայն անվերջանելիություն։

Ը. ՁԵՎԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ձևի պարագա երկրորդական նախադասություն է կոչվում այնպիսի լրացուցիչ նախադասությունը, որը բացահայտում է գլխավոր նախադասության գործողության կատարման ձևը, բնույթը. օրինակ՝ **Թող էնպես լինի, ինչպես դու ես կամենում** *(Թ., III, 353)։* **Որպես դուք կհրամայեք, որպես մեր բարի դրացիք կամենան, այնպես կանեմ** *(Ր., II, 150)։* **Ամեն ինչ այնպես կկատարվի, որպես դու հրամայեցիր** *(Ր., II, 506)։* **Ես ինչպես ասում եմ, այնպես էլ պետք է լինի** *(Նար., VII, 263)։* **Երեխան իսկ գիտե և հասկանում է իրերը այնպես, ինչպես ինքն է զգում կամ երևակայում** *(Իս., III, 203)։*

Ձևի պարագա երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են **ինչպես, որպես, ինչպես որ, ոնց որ, ասես, ասես թե, կարծես, կարծես թե, ինչ, ինչ ձևով** *հարաբերական բառերով ու բառակապակցություններով, որոնք գրական լեզվում կիրառվում են տարբեր չափով ու ծավալով և ունեն իրենց իմաստային ու ոճաբանական առանձնահատկությունները։ Գլխավոր նախադասության մեջ դրանց համապատասխանում են* **այնպես** *(էնպես),* **այն ձևով** *հարաբերյալները։*

Ձևի պարագա երկրորդական նախադասությունները ամենից հաճախ կապակցվում են **ինչպես** *հարաբերական բառով, որը իրենով կապակցվող երկրորդական նախադասությամբ բացահայտում է գլխավոր նախադասության որակական հատկանիշը, այսինքն՝ թե որպիսի ձևով ու որակով է կատարվում գլխավոր նախադասության*

գործողությունը։ Գլխավոր նախադասության մեջ համապատասխան հարաբերյալն է այնպես, *որ երբեմն կարող է չլինել։ Առաջին դեպքում երկրորդական նախադասությունը պարզաբանում է, նյութական իրացի բովանդակություն է տալիս այդ հարաբերյալ վերացական ձևի պարագային, իսկ երկրորդ դեպքում դառնում է ձևի պարագա չունեցող գլխավոր նախադասության ձևի պարագան. օրինակ՝* Ինչպես դրած էր, այնպես էլ մնացել էր *(Րնժ, VII, 217)։* Պատահել է ճիշտ այնպես, ինչպես մանկական հեքիաթում է գրված *(ԱԲն, 54)։* Իսկ խորքում՝ կապույտ մշուշի մեջ երևում էր ճազիվ նշմարելի զույգ Արարատը, ինչպես նոյեմբերյան պարզ գիշերներին երևում է գյուղի կտուրներից *(Նույն տեղում, 244)։*

Ինչպես *հարաբերականը երբեմն բարդանում է* ոr *շաղկապով. օրինակ՝* Ու աղմկելով ամեն մինը ջոկ, Ինչպես որ եկել դեմ էին ընկել, էնպես էլ կույր-կույր ետ դարձան կրկին *(Թ., I, 419)։* Այժմ նրանք շատ չոր էին թվում և շատ տպտկալի, ինչպես որ էին իրոք էլ *(ՂԱ, III, 14)։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 1.— Ինչպես *հարաբերականի գործածության մանրամասնությունները տես «Բաղդատական երկրորդական նախադասություն» գլխում, որից ձևի պարագա երկրորդական նախադասությունը տարբերվում է միայն իմաստով, իսկ կապակցության առանձնահատկություններով դրանք բոլորովին նման են։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 2.— XIX դարի գրական լեզվում ինչպես-*ի փոխարեն երբեմն գործածվում է* ոrպես, *որն արդեն հնացած է. օրինակ՝* Ինքը կկազմե նրա ասպախումբը, ոrպես վայել էր մի Մամիկոնյան իշխանազնի *(Ր., III, 129)։* Ես կկարգադրեմ բոլորը, ոrպես պահանջում է կախարդը *(Նույն տեղում, I, 60)։*

Ձևի պարագա երկրորդական նախադասությունը կապակցող ինչպես (ոrպես) *հարաբերականը արտահայտում է նմանություն և համաչափություն երկու տարբեր գործողությունների, որն ավելի ցայտուն է դրսևորվում, երբ գլխավոր նախադասությունը ունենում է* այնպես *հարաբերյալը, բայց կան այնպիսի հարաբերական բառեր ու շաղկապներ, որոնք ցույց են տալիս երկու տարբեր գործողությունների [illegible], ենթադրական կամ կարծեցյալ նմանություն ու համաչափությունը։ Այդպիսի հարաբերական բառեր ու շաղկապներ են՝* կարծես թե, ասես թե, կարծես, ասես, որ կարծես

(որ) իբր թե, որպես թե, իբր, ոնց որ *(բարբառային)*, ոնց որ թե *(բարբառային)*, իբրև թե, *որոնք ավելի կամ պակաս չափով տարածված են գրական կամ խոսակցական լեզվում. ահա մի քանի օրինակներ.* Առաքելն այդ օրից ձևացնում էր այնպես, որ իբր թե Մանասին չի էլ տեսնում *(ԱԲԵ, 80)*։ Նա խոսում էր այնպես, կարծես պատմում էր միայն մեկին *(Նույն տեղում, 243)*։ Պատասխանեցի ու անցա վերև այնպես խաղաղ ու հաստատուն, ասես թե ձեր սանդուղքներն եմ բարձրանում *(Թ., V, 243)*։ Արտակը այնպես էր պահում իրեն, իբրև գործ ունի հավասարիմների հետ *(ԴԴԵԺ, IV, 306)*։ Հարցրեց Սանամը զարմացած, որպես թե նրան մի անկարելի բան էին առաջարկում *(Շիրվ., I, 400)*։ Դատարկ էր թվում չորս կողմը, ասես հեղեղը քշել տարել էր ամեն ինչ *(Բակունց, «Մթնաձոր», 136)*։ Այնպիսի տպավորություն էին գործում, կարծես գծերով եզրավորված լինեին *(Բ., III, 38)*։ Բայց կինն անմիջապես կտրեց նրա թափը, ասես սառը ջուր լցրեց նրա գլխին *(ՍԶ, V, 101)*։ Բացատն էնպես է լուսավորվում, ոնց որ թե ցերեկ լիներ *(Թ., III, 261)*։

Ծանոթություն.—Հիշյալ հարաբերական բառերին ու շաղկապներին մոտենում է հազվադեպ գործածվող գիտես թե *բառը. օրինակ՝* Ողջ առողջ ոտքի եմ կանգնել, գիտես թե իսկի բան պատահած չի եղել հետս *(Իս., III, 312)*։

Ձևի պարագա նախադասություններին շատ մոտ են բաղդատության երկրորդական նախադասությունները, որոնք արտահայտում են երկու երևույթների ու գործողությունների համեմատություն։ Իմաստային առումով ձևի պարագայական նախադասություններից տարբերվում են նրանով, որ երևույթների ու գործողությունների նմանությունը, հավասարությունը դրսևորում են համեմատության միջոցով, իսկ ձևի երկրորդական նախադասություններն այդ նմանության ու հավասարության հարաբերությունը առաջ են բերում առանց համեմատության։ Ըստ կառուցվածքի այդ երկու տիպի երկրորդական նախադասությունները ձևավորվում են միևնույն քերականական միջոցներով, բացի քան, քան թե *շաղկապներով կապակցվող յուրահատուկ բաղդատական նախադասությունները։ Նկատի առնելով հիշյալ հանգամանքը, ձևի պարագայական նախադասությունների կառուցվածքի մանրամասները քննվում են հաջորդ գլխում։*

Թ. ԲԱՂԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Այն երկրորդական նախադասությունը, որը բաղդատելու միջոցով բացահայտում է գլխավոր նախադասությունը ըստ նմանության, ըստ հավասարության և համապատասխանության, կոչվում է բաղդատության երկրորդական նախադասություն։

Բաղդատության երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են ինչպես, ինչպես որ, որպես, ոնց որ, որպես թե, իբր թե, ասես, ասես թե, կարծես, կարծես թե, որ կարծես, իբրև թե, ինչ, ինչ որ, ինչ ձևով։ Գլխավոր նախադասության եզրում հանդես են գալիս այնպես, այդպես, ճիշտ այնպես, այնպես էլ, ճիշտ այսպես, նույնպես, այն ձևով բառերն ու բառակապակցությունները։

Բաղդատության երկրորդական նախադասություններն իրենց կիրառման երկար ժամանակի ընթացքում համապատասխան այն շաղկապների, որոնցով հարաբերում են գլխավոր նախադասության հետ, ձեռք են բերել իմաստային ու կապակցման բազմազան նրբություններ։ Երբեմն այն, ինչ որ ասվում է գլխավոր նախադասության մեջ, համեմատվում է ճիշտ և ճիշտ նույնանման մի գործողության հետ, որ ասվում է երկրորդական նախադասության մեջ. օրինակ՝ Փայլեց ուրախության մի ժպիտ այնպես, ինչպես երբեմն ձմեռային մռայլ երկնքում արեգակն է ամպերի տակից փայլում (Շիր., I, 352)։ Որ դպրությունն անցնի ու հորդանա, ինչպես ջինջ առուն է անցնում ջրանցքներով բացած (ԵՉԵ, 248)։ Այսպիսի երկրորդական նախադասությունները մենք անվանում ենք նույնանման բաղդատություն։

Երբեմն այն, ինչ որ ասվում է գլխավոր նախադասության մեջ, համեմատվում է երկրորդական նախադասության մեջ ասվածի հետ ըստ կատարման բնույթի, ձևի և ոչ թե ըստ նույնանման գործողության. օրինակ՝ Դու երբ ես գրել այդքան հասարակ, Այդքան պարզ, այդքան ջինջ ու համոզիչ, Ինչպես երգեցիկ անիվն է արագ պտտվում ահա Վահանի ուժից (ԵՉԵ, 213)։ Կամ՝ Եվ ինչպես օրը օրացույցից անհնարին է նետել մի կողմ, Այդպես անունը քո աղմկող հար մնալու է օրերին կից (ՉԸ, 84)։ Այսպիսի համեմատությունը, ինչպես տեսնում ենք վերջին օրինակների մեջ, կարող է տեղի ունենալ նույնիսկ հակադիր գործողությունների մեջ։ Նման կարգի երկրորդական նախադասությունները կոչում ենք կատարման ձևի բաղդատություն։

Երբեմն այն, ինչ որ ասվում է գլխավոր նախադասության մեջ, համեմատվում է այնպիսի երկրորդական նախադասության հետ, որի գործողությունը անհամեմատելի է նախորդին. ավելի ճիշտ գլխավոր նախադասությունը պետք է համեմատվեր երկրորդականի գործողության հետևանքի հետ. օրինակ՝ էնպես է ոտին գալիս, ոնց որ հալած թափած լինի (Թ., III, 333)։ Այս նախադասության երկու եզրերի լրիվ համեմատությունը պետք է լիներ այսպես. Կոշիկը էնպես է ոտին գալիս, ոնց որ հալած-թափած կոշիկը կգա ոտին: Սա, ինչպես տեսնում ենք, նույնանման համեմատության կիսատ, ոչ լրիվ ձևն է, ուստի պայմանական ձևով բաղդատության այս կարգի նախադասությունները կոչում ենք թերի կամ անհամապատասխան բաղդատության երկրորդական նախադասություններ։ Այդպիսի թերի կամ անհամապատասխան բաղդատության նախադասություններ են նաև հետևյալ օրինակները. Ինչպես ցողն է լինում ծաղիկների վրա՝ թափանցիկ, վաղնջական ու գերող, Այդ թերթիկը կապույտ ալեկոծեց նրան հուշերով՝ չնաշակած մի քաղցրություն բերող (ԵՉԵ, 246)։ Իսկ մի հեռու սենյակից լսվում էր աղվեսահաչ... ինչպես հաչում է տնային շնիկը կատվի վրա (ԱԲԵ, 310)։ Փոխանակ՝ Ինչպես տնային շնիկի հաչն է կատվի վրա:

Նույնանման բաղդատության երկրորդական նախադասությունները վերոհիշյալ հարաբերական և շաղկապային բառերով կարող են կապակցվել նաև այնպիսի գլխավոր նախադասությունների հետ, որոնք չունեն համապատասխան զուգադիր բառեր ու կապակցություններ, բայց այս դեպքում, որպեսզի կապակցությունը տրամաբանական ուժ հաղորդվի և արտաբերության տոնը փոխվի, ետադաս գլխավոր նախադասության մեջ կիրառվում է էլ շաղկապը. օրինակ՝ Ինչպես որդիս իր մոր գրկին գնաց՝ կարոտ աչքն աշխարհքին, նրանք էլ թող իրենց կյանքից Կարոտ գնան յիքն աշխարհքից (Թ., II, 153)։ Ինչպես մեր հայրերն ու մայրերն են մինչև գերեզման հաշտ ապրել, մենք էլ ապրենք (Շիրվ., VI, 504)։ Իսկ եթե գլխավոր նախադասությունը նախադաս է, ապա էլ շաղկապը չի կիրառվում. օրինակ՝ Ուրախանաք, ինչպես նրա կինը ուրախացավ (ՍՉ, V, 387)։ Նրանց միոից ջոկում են ազնվականներին, ինչպես ոչխարները զատում են այծերից (ՐԵԺ, VII, 372)։

Բաղդատության երկրորդական նախադասությունների այս բոլոր տարբերակները մտնում են երկու հիմնական խմբի մեջ՝ նմանության և կարծեցյալ նմանության երկրորդական նախադասություններ։

ա) ԻՆՉՊԵՍ, ԻՆՉ, ԻՆՉ ՁԵՎՈՎ ԲԱՌԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԲԱՂԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Նմանության երկրորդական նախադասությունները ամենից հաճախ կապակցվում են ինչպես *հարաբերական դերանունով, որին գլխավորապես համապատասխանում է* այնպես *հարաբերյալ ցուցականը, որ գտնվում է գլխավոր նախադասության մեջ. այս վերջինը շարժական է, երբ գլխավոր նախադասությունը նախադաս է։ Իսկ եթե գլխավոր նախադասությունը ետադաս է,* այնպես-*ը դրվում է հենց այդ նախադասության սկզբում։ Սակավ չափով շարժական է նաև* ինչպես-*ը, երբ երկրորդական նախադասությունն է նախադաս. իսկ եթե ետադաս է, ապա* ինչպես-*ը նույնպես չի կարող շարժական լինել։ Կրկին նշենք, որ այս և հետագա լրացուցիչ բացատրությունները վերաբերում են նաև ձևի պարագա նախադասություններին. օրինակ՝* Ապրում եմ այնպես, ինչպես աշխարհում ապրել է մարդը բազմաթիվ դարեր *(ՉՐ, 118)։* Էնպես էլ դուք ուրախանաք, ինչպես թագավորը ուրախանում է *(Թ., III, 310)։* Չընդունես, ոներ, այս գիրքս այնպես, ինչպես աղջիկն է ծվեր ընդունում *(ՉՐ, 76)։*

Ինչպես *հարաբերականին համապատասխան գլխավոր նախադասության եզրում համեմատաբար ավելի սակավ հանդես են գալիս* նույնպես, այսպես, այդպես, *որոնք սակայն կապակցության բնույթը բնավ չեն փոխում. միայն անհրաժեշտ է նշել, որ* այնպես-*ը այդ դերի համար ստացել է յուրահատուկ կայուն օրինականություն, իսկ մյուսները կիրառվում են ոճաբանական նկատառումներով։ Օրինակ՝* Ինչպես կարելի չէ զրկել մեկին հոգեկան զգացմունքներից, նույնպես կարելի չէ ազատել և նախապաշարվելուց *(Աղայան)։* Ինչպես հնդկական հավատով մարդու հոգին անցնում է զանազան առարկաների և կենդանիների միջով, ճիշտ այսպես եմ գտնում այսօր ես իմ կյանքը *(ՂԱ, III, 17)։* Ինչպես ճամփորդ մի, որ խորդուբորդ ուղիներով է բարձրանում վեր,—Այդպես ելել ես մի առավոտ և ընկել ուղի մի ահավոր *(ԵՉԵ, 176)։*

Ծանոթություն 1.— Երբեմն բաղդատությանը ուժգնություն և հավաստիություն հաղորդելու նպատակով այնպես *հարաբերյալի հետ կիրառվում են* ճիշտ *և* էլ *բառերը հետևյալ ձևով.* ճիշտ այնպես, այնպես էլ. *օրինակ՝* Ինչպես դուրս ես արել, այնպես էլ գնա հրավիրիր *(ՂԱ, III, 20)։* Մի ապա–

բախտ որ ես ամուսնացա ճիշտ այնպես, ինչպես ամեն օրամուսնանում են ինձ նման շատերը *(Շիրվ., V, 413)*։

Ծանոթություն 2.—Հաճախ ինչպես *հարաբերականը բարդանում է* որ *շաղկապով* ինչպես որ *ձևով. այսպիսի բարդացումը հատուկ է ավելի խոսակցական լեզվին։* Այդպես հո ոչ մի բարեգործ ղաչին չի անիլ, ինչպես որ դու արիր *(ՂԱՀ, 62)*։

Հնացած պետք է համարել ինչպես *հարաբերականի փոխարեն* որպես *կիրառելը։ Այս վերջինի գործածությանը հաճախ պատահում ենք Րաֆֆու և նրա ժամանակակիցների երկերում. օրինակ՝* Նա այդ օտարականին որպես աննկատելի կերպով ներս էր բերել, նույնպես աննկատելի կերպով դուրս հանեց ամրոցից *(Ր., III, 131)*։

Խոսակցական լեզվից գրականին են անցել ոնց, ոնց որ *հարաբերականները, որոնք օգտագործվում են ժողովրդախոսակցական բնույթի գեղարվեստական երկերում. օրինակ՝* Ոնց որ մինը մի քար գցի, ճնճղուկն ընկավ մժեղների մեջ *(Թ., III, 206)*։ Ոնց որ էս կտավը գործել ես, էնպես էլ պետք է կարես *(նույն տեղում, 266)*։

Բաղդատության երկրորդական նախադասությունը կապակցվում է ինչ, ինչ ձևով *հարաբերականներով, որոնցից առաջինը անցել է բանավոր խոսքից և գլխավոր նախադասության եզրում հարաբերյալ չունի. սա երբեմն բարդանում է* որ-*ով։ Հավանորեն* ինչ *այս դեպքում առաջացել է* պես *բառադրիչի անկումով. օրինակ՝* Ուրախանամ, ինչ որ մենք ուրախացանք *(Թ., III, 107)*։ Քու տունը քանդվի, ինչ իմ տունը քանդեցիր *(Թ., III, 151)*։ Արտասանեց նա Գամառ-Քաթիպայի մի ոտանավորի խոսքերն այն ձևով, ինչ ձևով որ լսել էր հայ բեմի վրա *(Նար., VII, 261)*։

Ծանոթություն.—Նույնանման բաղդատության երկրորդական նախադասությունները, ինչպես արդեն օրինակներից տեսանք, լինում են ետադաս և նախադաս. չի բացառված նաև միջադաս դիրքավորումը. օրինակ՝ Եվ այնպես, ինչպես բոլոր դարերում կապված է եղել մարդը իր դարին, ես իմ մեջ այսօր տենչերն եմ կրում Մեր ժամանակի անդուլ պայքարի *(ՉԸ, 118)*։ Նրա գահույքի պատվանդանի ներքև հատակի վրա գետնատարած, ինչպես մրրկի առջև արտերն են լինում, անհույս ճակատները մարմարե սալաքարերին

սեղմած սասանել էին չինական աշխարհի բոլոր գիտունները և իմաստունները *(ԱԻԵ, 298)*։

Նույնանման բաղդատության երկրորդական նախադասությունները նույնպես վերածվում են դերբայական լրացման. այս պարագայում օգտագործվում է նման *կապը, որի համար կապի խնդիր է դառնում երկրորդական նախադասության ստորոգյալը՝ անորոշ կամ հարակատար դերբայների սեռական հոլովի ձևով. երկրորդական նախադասության ենթական փոխվում է ենթակա-սեռականի, իսկ հարաբերական և հարաբերյալ բառերը զեղչվում են։* Նման *կապի փոխարեն կարելի է վերցնել նաև* պես *կապը և* ձևով *բառաձևը. օրինակ՝* Գրողները աշխատում են չգրել այնպես, ինչպես գրում էին հները *(Նար., 7, 297)*։ Գրողները աշխատում են չգրել հների գրածի (գրելու) նման:

բ) *ԿԱՐԾԵՍ ԹԵ, ԱՍԵՍ ԹԵ, ԿԱՐԾԵՍ, ԱՍԵՍ (բարբառային ասենաս, կասենաս), ՈՐ ԿԱՐԾԵՍ, ԻԲՐ ԹԵ, ՈՐՊԵՍ ԹԵ, ԻԲՐ, ՈՆՑ ՈՐ ԹԵ, ԻԲՐԵՎ ԹԵ* ԲԱՌԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԲԱՂԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Կարծեցյալ նմանության երկրորդական նախադասությունները կապակցվում են կարծես թե, ասես թե, կարծես, ասես *(ասենաս, կասենաս)*, որ ասես, որ կարծես, իբր թե, որպես թե, իբր, ոնց որ թե, իբրև թե *շաղկապներով ու շաղկապացող բառերով, որոնք բաղդատության մեջ մտցնում են մոտավոր, կարծեցյալ նմանության տարրեր, այսինքն՝ համատեղելի եզրերը ըստ նմանության մասնակի կերպով են իրար նմանվում, կան միայն որոշ նմանություններ, որոնք բաղդատելիության աստիճանի են հասցնում դրանց, և բաղդատողը հիշեցնում է դրանք՝ առանց ամբողջովին նմանեցնելու, երբեմն նաև նման չլինելը ցույց տալու համար։ Այսպիսի երկրորդական նախադասությունների հետ կապակցվող գլխավոր նախադասությունները գերազանցապես ունենում են* այնպես, այնքան *հարաբերյալները, որոնք կապված են լինում մի որակական ածականի, մակբայի հետ. օրինակ՝* Շափաղ էր տալիս ձյունը, ասես սպիտակ մարմար լիներ *(ԱԲ, Մթնձ., 136)*։ Ինչքան էլ զույալ է, կասենաս կռունկի աչք լինի *(ԱՇ, 172)*։ Այդ երևույթը սկզբից այնպիսի տպավորություն էր գործում, կարծես ամբողջ Երկինքը բոցավառվում էր մի ընդարձակ հրդեհով *(Ր., 3, 305)*։

Ծանոթություն.—Կասենաս, ասենաս, ոնց որ, ոնց որ թե *բարբառից են անցել գրականին։ Առաջին երկուսը համարյա այլևս չեն կիրառվում, իսկ վերջինները հանդիպում են երկախոսությունների մեջ։*

գ) *ՔԱՆ, ՔԱՆ ԹԵ* ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԲԱՂԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Մեր քերականության մեջ բաղդատության երկրորդական նախադասություններ են համարվում **քան, քան թե** *շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունները։ Վերևում քննված բաղդատության երկրորդական նախադասությունները այս վերջիններից տարբերվում են. մինչդեռ նախորդները համեմատելով գլխավոր նախադասության հետ նմանեցվում են կամ նույնացվում, այս վերջին դեպքում կամ գլխավոր կամ երկրորդական նախադասության մեջ ասվածները բաղդատելով միմյանց՝ մեկին, կամ մյուսին առավելություն է տրվում։*

Գլխավոր նախադասությունը ուղեկցվում է բաղդատական **ավելի** *մակբայով, որ հաճախ կապակցվում է որակական ածականների, ձևի մակբայների հետ և կազմում է բաղդատության եզր գլխավոր նախադասության մեջ հետևյալ ձևով.* **ավելի շուտ, ավելի լավ, ավելի արագ, ավելի վատ, ավելի ազնիվ, ավելի շատ** *և այլն։ Հենց սրանց էլ համապատասխան երկրորդական նախադասության սկզբում կիրառվում են* **քան, քան թե** *շաղկապները։ Բաղդատության այս տիպի նախադասությունները միշտ ետադաս են. օրինակ՝* **Ես ավելի մեծ հոժարությամբ կընդունեի մահը և իմ պատիվը ինձ հետ գերեզման կտանեի, քան թե իմ ճակատի վրա կընդունեի դավաճանի սև կնիքը** *(Ր., III, 358)։* **Եվ նրա ոռնիկը բարձրացնելու ավելի հարմար օր չի կարող լինել, քան էսօրվա օրն է** *(Թ., V, 275)։* **Չկա ինձ համար ավելի զզվելի բան, քան այն, երբ հարուստի ռազայը շրջապատում են նրա մերձավորները** *(Շիրվ., V, 74)։* **Գուցե ես ավելի խիստ եմ վերաբերվում ձեր գրվածքին, քան այդ պետք է** *(Նար., VII, 312)։* **Օրիորդը ավելի մանրամասն տեղեկություններ տվեց թշնամու արշավանքի մասին, քան թե գիտեր Սամվելը** *(Ր., III, 300)։*

Ծանոթություն 1.— Երբեմն **ավելի** *մակբայը ուղղակի դրվում է ստորոգյալի վրա. օրինակ՝* **Չմտածեց ավելի, քան կմտածի մի գեղեցիկ կին** *(ԴԴ, I, 210)։ Իսկ եթե գլխավոր նախադասության ստորոգյալը անվանական է և դրա վերադիրը մի որակական ածական է, ապա* **ավելի**-*ն ուղղակի դրվում է հենց այդ վերադիրի վրա. օրինակ՝* **Ես հոգով հիմա պինդ եմ ավելի, Ավելի տոկուն, քան էի առաջ** *(ՉԸ, 103)։*

Այս տիպի բաղդատական երկրորդական նախադասու-

թյունները երբեմն հանդես են գալիս իբրև լրացում գլխավոր նախադասության մեջ հատկանիշ արտահայտող որևէ անդամի (ածականի կամ մակբայի), ցույց տալով այդ հատկանիշի աստիճանը. օրինակ՝ Հիմա հագնված եմ վայելուչ ձևով և մինչև անգամ ավելի ճոխ, քան թե պետք էր *(Թ., III, 349)*։

Ծանոթություն 2.—Ավելի *մակբայը կարող է ետադաս էլ կիրառվել. օրինակ՝* Եվ զգաց իրան անբախտ ավելի, քան երբևիցե զգացել էր *(Շիրվ., V, 81)։ (Տե՛ս և նախորդ ծանոթության վերջին օրինակը)։*

Երբեմն բաղդատության եզր են հանդիսանում գլխավոր նախադասության մեջ կիրառված ածականները, մակբայները՝ առանց ավելի *բաղդատական բառի։ Այս դեպքում բաղդատության տրամաբանական ուժը թուլանում է, որովհետև գլխավոր նախադասության եզրում այդ չի զգացվում. օրինակ՝* Բայց նրանք շատ բան իմացան, քան թե հարկավոր էր *(Ր., III, 126)*։ Լավ էր մի զավակ որդեգրեի, քան հայր լինեի *(Ջեքս., I. 139)*։ Նա շտապում էր մի քանի ժամ առաջ տեղ հասնել, քան կհասներ սև ձիավորը *(Ր., III, 18)*։

Այս կարգի բաղդատության երկրորդական նախադասությունները դերբայական լրացման են փոխարկվում հետևյալ եղանակով. երկրորդական նախադասության ստորոգյալը վերածվում է անորոշ կամ հարակատար դերբայի և կիրառվում է բաղդատության բացառականով. քան *շաղկապը ընկնում է, իսկ երկրորդական նախադասության ենթական վերածվում է ենթակա-սեռականի, և ամբողջ դարձվածը տարվում է գլխավոր նախադասության մեջ* ավելի *բառից առաջ (եթե կա այդպիսին), ըստ որում դերբայը դրվում է անմիջապես* ավելի *բառի մոտ. իսկ եթե գլխավոր նախադասությունը չունի* ավելի *բառը, ապա դերբայական դարձվածը նույն շարադասությամբ տեղադրվում է բաղդատության եզր հանդիսացող որակական ածականից կամ ձևի մակբայից առաջ. օրինակ՝* Այս ընտանիքում Հացավանի մասին գիտեին ավելի շատ, քան ինքը կարող էր ենթադրել *(ՆԶՀ, 405)*։ Այս ընտանիքում Հացավանի մասին գիտեին իր ենթադրել կարողանալուց ավելի շատ: Բայց նրանք շատ բան իմացան, քան թե հարկավոր էր *(Ր., III, 126)*։ Բայց նրանք հարկավոր եղածից շատ բան իմացան:

Ժ. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բաղդատության երկրորդական նախադասություններին մոտ է համապատասխանության երկրորդական նախադասությունը. երկրորդական նախադասության մեջ հաղորդվում է մի գործողություն կամ երևույթ, որին համապատասխան տեղի է ունենում կամ կատարվում է գլխավոր նախադասության գործողությունը։ Երկրորդական նախադասությունը կապակցվում է նայած, նայած թե, նայելով թե *շաղկապային բառերով, որին անմիջապես հաջորդում են* որ, ինչ, ով, ինչպիսի, ինչպես, ինչքան *հարաբերականները, որոնք սակայն դեռևս նախադասության անդամի պաշտոն են կատարում, բայց և սկսում են հարել իրենցից առաջ կիրառվող շաղկապային բառերին. օրինակ՝* Նայած թե որ երակին կամ թևի ինչ տեղին է ֆուում, նրա համեմատ էլ ձենը փոխում է *(Թ., III, 93)*։ Եվ նայած թե որ կողմից ու ինչպես է թևը սեղմում, նրա համեմատ էլ մին թույլ է գալիս ճռռոցի ձենը, մին ուժեղ, մին զվարթ, մին ճրճըված, մին էս կողմից, մին էն *(Նույն տեղում)*։ Նրանցից ոմանք բեռներ էին բարձում և ոմանք դատարկ վերադառնում, նայելով թե որքան ուժեղ կամ առողջ էին լինում բերած գրաստները *(Մուրացան, «Գևորգ Մարզպետունի», 400)*։ Շատ անգամ էլ պատահում էր հակառակը, նայելով թե որն է վերջին անգամ յուր ուժը փորձել նրա վրա *(Նույն տեղում, 192)*։ Նայում էր մերթ մեկին, մերթ մյուսին, նայելով թե ով էր խոսում *(Նար., VI, 144)*։

Ծանոթություն.—Եթե գլխավոր նախադասությունը եատադաս է, ապա հիշյալ հարաբերական բառերին համապատասխան գլխավորը ունենում է նրա *(սրա, դրա)* համեմատ, ըստ այդմ, դրան *(սրան, նրան)* համապատասխան, ըստ այնմ *և այլ համապատասխանություններ արտահայտող շաղկապային բառակապակցությունները. օրինակ՝* Նայած թե ով է գալիս, ըստ այնմ էլ ընդունում են: Նայած ինձ հետ ինչպես է վարվում, դրան համապատասխան էլ վերաբերմունքի է արժանանում: Նայած թե դու ինչպես ես վարվում, դրա համեմատ էլ նա է վերաբերվում:

ԺԱ. ՉԱՓ ՈՒ ՔԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս գլխավոր նախադասության ստորոգյալի արտահայտած գործողության չափ ու քանակը և աստիճանը։

Քանակի պարագա երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են որքան, որչափ, ինչքան, քանի համեմատական բառերով, իսկ գլխավոր նախադասությունը համապատասխանորեն իբրև հարաբերյալներ սովորաբար ունենում է այնքան, այնչափ, նույնքան, նույնչափ, ըստ այնմ, ըստ այդմ հարաբերյալ բառերը։ Որքան, որչափ, ինչքան հարաբերական բառերը կարող են բարդանալ որ հարաբերականով՝ որքան որ, որչափ որ, ինչքան որ:

Որքան, ինչքան հարաբերական բառերը այնքան, նույնքան հարաբերյալների հետ ամենից առաջ ցույց են տալիս քանակական համապատասխանություն. այն, ինչ որ ասվում է երկրորդական նախադասության մեջ, քանակով հավասար է լինում գլխավոր նախադասության մեջ ասվածին. օրինակ՝ Որքան քաջ էր, նույնքան ևս խելացի մարդ էր (Ր., III, 282)։ Պատմեցի այնքան, ինչքան կարացի (ՂԱՀ, 113)։ Ունեցած հողերն ուղիղ էնքան էր, ինչքան որ հարկավոր էր անկարոտ ապրելու համար (Թ., III, 349)։ Ես ասացի այնքան, որքան հարկավոր էր ասել (Շիրվ., VI, 25)։

Եթե անհրաժեշտ է գլխավոր նախադասության մեջ ասվածին քանակական գերակշռություն տալ, այս դեպքում այնքան հարաբերյալի հետ կիրառվում են քանակական թվականներ կամ ավելի մակբայը. օրինակ՝ Ինչքան գետնի երեսին ես, էնքան էլ գետնի տակին ես («Ընտիր էջեր», 411)։ Բայց որքան անհասկանալի էր նա, այնքան ավելի վրդովեցուցիչ էր (Ր., III, 273)։

Երբ գլխավոր և երկրորդական նախադասությունների մեջ ասվածները վերաբերում են երկու տարբեր առարկաների, ապա քանակական հարաբերությամբ արտահայտվում է զուգադրություն (կարող է լինել և հակադրություն). երկրորդական նախադասությամբ ընդգծվում է հենց այս վերջին հարաբերությունը. օրինակ՝ Որքան Նվարդը լավ աղջիկ է, այնքան դու լավ սպասավոր ես (Ր., III, 147)։ Որքան ամայի են Միջերկրականի թուրքական ափերը, նույնքան խտաբնակ են արաբական ափերը (Շիրվ., V 429)։ Որքան Լիզան քաշող, հմայող ու գրեթե խելքից հանող ժպիտ, քաղցրախոսություն և բավական վայելուչ ձևեր ուներ, նույնքան Ադդան վանող սառը շարժումներ ուներ (Փափ., 396)։

Որքան, ինչքան հարաբերականներով արտահայտված երկրորդական նախադասությունները չափի քանակի հետ արտահայտում են նաև աստիճանական ավելացումը կամ պակասեցումը.

Համապատասխանաբար երկրորդական նախադասության մեջ ասվածը քանակապես ավելանում կամ պակասում է. օրինակ՝ Եվ լինում է երգը այնքան բարձրաձայն ու բարձրախոհ, որքան լինի դաշինքն այդ խոր միաձույլ ու միասիրտ *(ՉԸ, 176)*։ Որքան նվազում էր մարմինս, այնքան դյուրագրգիռ և դյուրազգաց էի դառնում և այնքան քնքշանում *(ԴԱ, III, 114)*։

Քանակական, համապատասխանորեն աստիճանական ավելացման կամ պակասեցման վերոհիշյալ հարաբերությունը ամենից ցայտուն արտահայտում է քանի *հարաբերականը, որքան երկրորդական նախադասության մեջ ասվածը քանակապես ավելանում կամ պակասում է, համապատասխանորեն ավելանում կամ պակասում է գլխավոր նախադասության մեջ ասվածը, ըստ որում պարտադիր չէ, որ ավելանալուն համապատասխան ավելանա. կարող է և հակառակը լինել, որքան մեկը ավելանում է, նույնքան մյուսը կարող է պակասել։ Այսպիսի կապակցությունների մեջ հաճախ հարաբերյալ են* այնքան, այնքան ավելի, ավելի. *օրինակ՝* Քանի Մարուքն ու Սարուկը շատ էին վիճում, այնքան նրանցից յուրաքանչյուրը ավելի ու ավելի էր համառում *(Շիրվ., V, 185)*։ Քանի նախատում էի ինձ, այնքան ավելի անողոքությունս ավելանում էր *(Փափ., 381)*։ Քանի իջնում էինք, գետի կարկաչն ավելի հնչուն, ժայռերն ավելի լպրծուն, կանաչն ավելի առատ ու թարմ և արահետն ավելի դժվար անցանելի էր դառնում *(Փափ., 192)*։

Ժամանակ.—Գնալ *բայի անկատար դերբայի հետ* քանի *հարաբերականը կազմում է մի դարձվածային ամբողջություն՝ օժանդակ բայի անկումով. օրինակ՝* Ռուստամի շնչառությունը քանի գնում, այնքան սաստկանում էր *(Շիրվ., I, 404)*։ *Պետք է ենթադրել, որ սկզբնապես այսպիսի կազմությունները եղել են.* Քանի ժամանակը գնում էր, Ռուստամի շնչառությունն այնքան սաստկանում էր: *Հետագայում ստորոգյալի օժանդակ բայն ընկնում է և երկրորդական նախադասությունը իբրև այդպիսին քայքայվում է։ Համեմատիր՝* Աղմուկը քանի գնում, այնքան զորեղանում էր *(Շիրվ., I, 331)*։ *Այսպիսի կապակցությունների մեջ* գնում *դերբայը նույն նշանակությունն ունի, ինչ որ* գնալով *անորոշի գործիականը. օրինակ՝* Աղմուկը գնալով զորեղանում էր։ *Ահա դեռևս լրիվ պահպանված օրինակներ.* Ազատվելու միտքը քանի գնում էր, մոտենում էր իրականու-

թյան *(ՂԱ, III, 67)*։ Քանի գնում է (վանառականը), էնքան լուսանում է *(Թ., III, 340)*։

Սակավ է պատահում, որ գլխավոր նախադասության մեջ հարաբերյալ բառերը բացակայեն, մանավանդ երբ այն եռադաս է։ Համեմատիր՝ Որքան որ ելան արյունից ազան, Դու կամավոր զոհ բոլորը ավիր *(Տ., I, 295)*։ Ու ջուրը քանի ալիք է տալի, նա էլ ջրի հետ գնում է, գալի *(Թումանյան, «Գառնիկ ախպեր»)*։ Վաղորդյան մառախուղը հետզհետե նոսրանում էր, որքան արեգակը բարձրանում էր հորիզոնի վրա *(Ր., II, 21)*։ Ինչքան որ ավինք, ավել խընդրեցինք *(Թ., II, 40)*։ Որքան ջրի տեսնում էին, մտրակի առաջ արած պալատ էին տանում *(Փափ., 299)*։ *Այս պարագայում, ինչպես տեսնում ենք օրինակներից, թուլանում է զուգադրության տրամաբանական կապը, և մասամբ մթագնվում է քանակային հարաբերությունը։*

Չափի պարագան մասամբ արտահայտվում է ինչ *հարաբերական դերանունով, որ հատուկ է բանավոր խոսքին. օրինակ՝* Վազքերից էնքան օգուտ չի գալի, ինչ նրա համար ես փող եմ տալի *(Թ., II, 38)*։ *Երբ հարաբերականը քանակային հարաբերությունը թույլ է արտահայտում, ամբողջ կապակցությունը, այդ նշանակությամբ, թուլանում է։ Համեմատիր հետևյալ օրինակները, ուր հարաբերականները որոշակի քանակ չեն արտահայտում. օրինակ՝* Իմ հիացմունքը մեծանում էր այն չափով, որչափով *(բնագրում որքանով)* բնության գեղեցկությունները միախառնվում էին ամենահին անցյալի հիշատակների հետ *(Րկ, 448)*։ Եգիպտահայը առաջադիմում է այնչափ, որքան հանգամանքները թույլ են տալիս *(Շիրվ., V, 439)*։

Չափի պարագա երկրորդական նախադասությունները դերբայական լրացման են վերածվում. չափով *բառաձևի օգտագործմամբ։ Հարաբերական և հարաբերյալ բառերը ընկնում են, ստորոգյալը փոխվում է անորոշ, մասամբ հարակատար դերբայի սեռական հոլովի, որ կապակցվում է* չափով *բառի հետ՝ կազմելով մի կապական արտահայտություն. օրինակ՝* Դու տառապել, համբերել և սպասել ես այնքան, որքան պատշաճ է եղել, որքան հնարավոր է եղել *(Նար., VII 211)*։ Որքան մտածում էր գալոց աղետների մասին, այնքան չարիքն յուր բոլոր զարհուրանքով մեծանում էր նրա աչքերում *(Ր., III, 30)*։ Դու տառապել ես... պատշաճ, հնարավոր լինելու (եղածի) չափով։ Նա հավատում էր իր ֆալախկային իր թալիսմաններին հավատալու չափով։ Գալոց աղետների մասին մտածելու չափով չարիքն յուր բոլոր զարհուրանքով մեծանում էր նրա աչքերում։

ԺԲ. ԶՈՒԳԱԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Զուգադիր երկրորդական նախադասություն է կոչվում այնպիսի լրացուցիչ նախադասությունը, որը զուգադրվում է գլխավոր նախադասությանը ըստ բովանդակության և համապատասխանորեն այս կամ այն կողմով լրացնում է այն։ Զուգադրության մեջ ակնհայտ է նաև հակադրական, մասամբ զիջական հարաբերությունը։

Զուգադիր նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են մինչև, մինչդեռ, այնինչ շաղկապներով, որոնք ցույց են տալիս, թե միևնույն ժամանակամիջոցում ինչ որ ասված է գլխավոր նախադասության մեջ, դրան զուգադրվում է երկրորդական նախադասության մեջ ասվածը։ Այսպիսի երկրորդական նախադասությունները դիտվում են նաև համադասական հակադրական հարաբերությամբ. օրինակ՝ Խափշիկն այդ խոսքերն ասելու միջոցին այնպես հանդարտ էր, մինչ նա գրգռեց Ջեյնաբ խանումի սնահավատությունը (Ր., I, 51)։ Վասիլիսան օրն օրի վրա լցվում, լավանում էր, այնինչ խորթ մերն ու իր աղջիկները իրենց ներսի չարությունից հալվում էին, մաշվում, ու նիհարում (Թ., III, 258)։ Արև օրերին առաջինները նման էին հրդեհից խանձված գետնափոր տների, այնինչ ներկարարների թաղում ծփում էին լաջվարդ, ալաջա, «գյուլգյազ» և այլ գույնի կտավե զոլերը (ԱԲԽ, 663)։

Այսպիսի զուգադիր երկրորդական նախադասությունները սովորաբար եռադաս են և դերբայական լրացման չեն վերածվում։

ԺԳ. ՀԱՐԱԿՑԱԿԱՆ ԿԱՄ ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հարակցական կամ կողմնակի հաղորդման են կոչվում այնպիսի երկրորդական նախադասությունները, որոնք արտահայտում են լրացուցիչ պատճառ, պայման, հետևանք։ Երկրորդական նախադասության արտահայտած վերոհիշյալ հարաբերություններն իբրև այդպիսիք կողմնակի կերպով են կապվում գլխավոր նախադասության հետ ու իբրև նրանից բխող անմիջական պատճառ, պայման և հետևանք։ Եթե գլխավոր նախադասությունը ունենա նույնիսկ անմիջական պատճառ, պայման և հետևանք արտահայտող երկրորդական նախադասություններ, ապա լրացուցիչ հաղորդման նախադասությունները կարող են տեղ ունենալ այդպիսի բարդության մեջ. օրինակ՝ Նա չէր կարողանում անկողնուց վեր կենալ, որովհետև ոտքը կոտրվել էր, մանավանդ որ խիստ հյուծված էր։ Այս վերջին մասը, մանավանդ որ խիստ հյուծված էր լրացուցիչ պատ-

ճառ է արտահայտում։ Կարող է բուն պատճառը չհաղորդվել նախադասության մեջ, սակայն այդ դեպքում էլ մանավանդ որ, *մանավանդ շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունները լրացուցիչ պատճառ են արտահայտում. օրինակ՝* Սրանից հետո էլ թագավորի ձենը էնքան է նվազում, որ պալատականները չեն կարողանում լսել, մանավանդ որ խուլ են լինում *(Թ., III, 255)։* Ամենքն էլ ուրախանում են, մանավանդ էլ խլանալու վտանգ չկար *(Նույն տեղում, 257)։ Համեմատիր նաև հետևյալ նախադասությունը.* Կնոջ սիրտը միայնակ մնացած ժամանակ չի ջերմանում ինքն իրեն, ըստ որում նա ստեղծված է մի ուրիշ էակի շնչով ջերմանալու *(Մուր., II, 145)։*

Հարակցական կամ կողմնակի հետևանք են արտահայտում այնպիսի երկրորդական նախադասությունները, որոնց արտահայտած գործողությունները կատարման տեսակետից ավելի դժվար են, քան գլխավոր նախադասության արտահայտած գործողությունը. ըստ որում գլխավոր նախադասության մեջ առաջ են քաշվում այնպիսի երևույթներ, որոնց տեղի ունենալը դժվարություն է հարուցում կամ ուղղակի նշվում է իբրև անկարելի, սա հիմք է ծառայում, որպեսզի երկրորդական նախադասության մեջ առաջ քաշված հաղորդումը, որ կատարման տեսակետից ավելի անկարելի է, տեղի չունենա իբրև նախորդի կողմնակի հետևանք։ Այսպիսի նախադասությունները կարծես շուռ տված պայմանի, պատճառի, մասամբ ժամանակի նախադասություններ են, այսինքն գլխավորը դարձել է երկրորդական, իսկ այս վերջինը՝ գլխավոր. օրինակ՝ Ոչ ոք չէր լսել Ոսկի քաղաքի անունը, ուր մնաց թե տեղն ասեր *(Թ., III, 226)։* Ինչ են տարել նրանք կյանքից, թե ինչ տանես դու քեզ հետ *(Թումանյան)։* Բայց նա սիրտ չի անում իրար գալ, շարժվել տեղում, ուր մնաց թե ծպտուն հանի *(ԱՄԾ, 5)։* Ո՞վ իր թանին թթու կասի, որ մերն իր զավակին վատ ասի *(ՔԹՈՀ, 507)։* Էդպես քաղաք մենք չենք էլ լսել մեր օրում, ուր թե տեսել *(Թ., III, 225)։*

Այսպիսի նախադասություններ կապակցվում են թե, որ, ուր մնաց, ուր թե *շաղկապներով ու շաղկապային բառակապակցություններով։ Համեմատիր նաև. Ոչինչ չի լսել ու տեսել, որտեղից իմանա։*

ԺԴ. ԲԱԶՄԱԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բազմաբարդ կոչվում է այնպիսի բարդ ստորադասական նախադասությունը, որ կազմվում է մեկ գլխավոր նախադասությունից

և երկու կամ ավելի երկրորդական նախադասություններից։ Այսպիսի նախադասությունները բաժանվում են երկու տիպի. մի տիպը այն է, որտեղ երեք կամ ավելի պարզ նախադասություններից առաջինը գլխավոր է, երկրորդը ստորադասված է առաջինին, իսկ երրորդը երկրորդին և այսպես հաջորդաբար։ Երկրորդ նախադասությունից մինչև նախավերջինը ներառյալ միաժամանակ թե երկրորդական և թե գլխավոր նախադասություն է. երկրորդական է իր նախորդի, գլխավոր է իր հաջորդի նկատմամբ. ըստ որում առաջինը միայն գլխավոր է, իսկ վերջինը միայն երկրորդական։ Այսպիսի բազմաբարդ կապակցությունը կոչվում է հաջորդական ստորադասություն. իսկ նախադասությունը՝ հաջորդական ստորադասությամբ բազմաբարդ նախադասություն։ Հաջորդական ստորադասությամբ բազմաբարդ նախադասություններով է կազմված Թումանյանի «էս էն տունն է» փոխադրությունը. օրինակ՝ էս էլ էն վարպետ Օհանը, որ մորթել է էն աքլորին, որ զարթեցրել է էն տեր-տերին, որ պսակել է էն տղին, որ ուզել է էն աղջկանը, որ կթել է էն կովը, որ հարու է տվել էն շանը, որ գզել է էն կատվին, որ բռնել է էն մկանը, որ կերել է էն ցորենը, որ պահած է էն տանը, որ շինել է վարպետ Օհանը *(Թ., I, 407)*։

Ծանոթություն.— *Գլխավոր նախադասությունը լրացնող երկրորդական նախադասություններից հետո եկող մյուս ստորադաս նախադասությունները ըստ կարգի կոչվում են երկրորդական, երրորդական, չորրորդական կարգի երկրորդական նախադասություններ։*

Համեմատիր նաև՝ Հիշում էր, որ տղամարդկանց խելքը գնում էր, երբ նա կարմրած ու բոցափայլ աչքերով՝ իր վայելուչ, երկար ու ճկուն հասակը օլորտելով, սեթևեթ շարժումներով սահում էր գետնի վրա... Հիշում էր, թե ինչպես բոլորը նախանձում էին իր ամուսնուն, որ այդպես քաջ, գեղեցիկ և համեստ կին ուներ *(Փափ., 365)*։ Գիտեք, որ ես պիտի գլխավորեմ այն զորքը հայոց, որ պիտի գնա ճակատելու Բյուզանդիայի կայսեր թշնամիների դեմ *(ՍԶ, V, 286)*։ Այժմ սկսվեցան Արաքսի մերձակայքի կանաչազարդ տափարակները, որ վերջանում էին խիտ մացառուտներով ու վայրենի ծառաստաններով, երբ ավելի մոտենում էին գետի ափերին *(Ր., III, 528)*։ Նա այն աստիճան կորցրեց յուր վեհությունը, որ մի բառ անգամ չգտավ պատասխանելու, երբ պարսից զորապետը, որ յուր ստորագրյալն էր, բռնեց նրա ձեռքից և սրահ դուրս հանեց *(Ր.,*

III, 466)։ Պարտեզներ էլ կային, որոնք ծաղիկներ ունեին, որ ցերեկները բուրում էին անուշահոտ *(Թ., III, 352)*։ Մանեն նայեց եղբորն այնպիսի հայացքով, որից երևում էր, որ չհասկացավ, թե ինչ ասաց Վահանը *(Նար-Դոս)*։

Բազմաբարդ ստորադասական նախադասության մյուս տիպը այն է, որտեղ երկու կամ ավելի երկրորդական նախադասությունները վերաբերում են մի գլխավոր նախադասության այս կամ այն անդամին միևնույն բնույթով. այն է՝ կամ այդ գլխավոր նախադասության համար որոշիչ, կամ խնդիր և կամ այլ բնույթի լրացուցիչ նախադասություններ են։ Այսպիսի երկրորդական նախադասությունները իրար նկատմամբ համադաս են, իսկ գլխավոր նախադասությանը ստորադասվում են միևնույն լրացական բնույթով։

Այն երկրորդական նախադասությունները, որոնք հավասարապես վերաբերում են գլխավոր նախադասության այս կամ այն անդամին իբրև միևնույն բնույթի լրացական նախադասություններ, կոչվում են համաստորադաս երկրորդական նախադասություններ։ Համաստորադաս նախադասությունները շարադասվում են մեկը մյուսի հետևից և կապակցվում են միևնույն շաղկապով, կամ միևնույն բնույթը արտահայտող այլ շաղկապային բառով. բացի առաջին երկրորդական նախադասությունից, մյուսները կարող են կապակցվել նաև համադասական շաղկապներով, դրանով նրանց բնույթը չի փոխվում։ Ահա մի քանի օրինակներ՝ Այդ պատճառով սաստիկ պատժվում էր աշակերտը, երբ նրան նկատում էին խաղալիս, երբ նրա մոտ գտնում էին խաղալիքներ *(«Ընտիր էջեր», 496)*։ Եվ այդ ժամանակ մեկն ինձ նենգադավ մի խորհուրդ տվեց, որ ամուսնանամ, որ ես ունենամ մի սուրբ իրավունք էլ չսիրելու կյանքում ոչ մեկին: Մտածում էի, որ չի ճանաչել այդ մարդը նրան, որ գիշերային իր արկածները նա կմոռանա *(Լերմոնտով, «Դիմակահանդես», 46, 80)*։ Քո ռունգերում անմահ բույրեր դու կբերես, որ թերևս և ոչ մի մահկանացու դեռ չի շնչել կյանքում, որ թերևս կենսատու են կամ, գուցե, մահացու *(ՉԸ, 165)*։ Ես զգացի, որ այլևս իմ հոգին հավիտյան շաղկապված է այդ հիվանդ հոգու հետ, որ այլևս ոչ մի գերբնական զորություն չի կարող ինձ բաժանել նրանից *(Շիրվ., V, 367)*։ Նա մի շող է, որ չի մարում, բայց և չի որսվում ինչպես թռչուն *(Նույն տեղում, 375)*։

Համաստորադաս երկրորդական նախադասությունները լինում են նաև տարբեր բնույթի, այսինքն՝ գլխավոր նախադասությունը լրացնում են այլևայլ կողմերից. դրանցից մեկը կարող է որոշիչ,

մյուսը խնդիր, երրորդը պարագա լինել և այլն։ Այս դեպքում երկրորդական նախադասությունները չեն կարող շարադասվել միմյանց հետևից. դրանք մղվում են գլխավոր նախադասության այն անդամների մոտ, որոնց համար տարբեր բնույթի լրացուցիչ նախադասություններ են։ Ուստի այսպիսի համաստորադաս նախադասությունները դասավորվում են գլխավոր նախադասության և սկզբում, և վերջում, և միջում՝ հարմարվելով իրենց լրացյալների շարադասությանը։ Այսպիսի երկրորդական նախադասությունները կոչում ենք տարաբնույթ համաստորադաս նախադասություններ. օրինակ՝ Այն ժամանակ, երբ տղան առաջ եկավ մի երկու քայլ, աղջիկը մնաց դռան մեջ՝ գետնին հասնող հաստ վարագույրի մոտ, որ գրեթե գրկել ու կիսով չափ ծածկում էր նրա մերկ ոտները և անփույթ հագնված զգեստները *(ՍԶ, V, 108)*։ Ինքը, որ թեորիայով այնքան համարձակ մտքեր էր հայտնում ամուսնական կյանքի և ազատ սիրո մասին և այնքան ծաղրում էր Մանեի հայացքները, այժմ մնացել էր ապշած և շփոթված նույն այդ Մանեի առաջ, որովհետև այստեղ թեորիա չկար *(Նար-Դոս)*։ Ուր բնությունը թերի էր թողել յուր ամրությունը, այնտեղ արհեստը լրացրել էր առանձին պարիսպներով և մարդկոցներով, որոնք կարգ-կարգ բարձրանում էին մինչև քարաբլուրի գագաթը *(Րաֆֆի)*։

Միևնույն բազմաբարդ նախադասության մեջ երկրորդական նախադասությունները կարող են լինել թե՛ համաստորադաս և թե՛ հաջորդաբար ստորադաս. օրինակ՝ Մի անգամ, երբ հեռու հյուսիսում ուսանողական մենակյաց սենյակումս փակված դիսերտացիայիս վերջին գլուխներն էի գրում, մի նամակ ստացա, որի մեջ ապշեցուցիչ անողոք անկեղծությամբ գրում էր նա, որ իր սիրո նախկին հավաստիացումներն ընդունեմ իբրև ցավալի թյուրիմացություն և աշխատեմ մոռանալ իրեն, որովհետև ինքն ուրիշի կին է լինելու շուտով *(Նար-Դոս, I, 115)*։

Բազմաբարդ ստորադասական նախադասության մեջ երկրորդական նախադասությունները կարող են լրացնել գլխավոր նախադասության բազմակի անդամները. օրինակ՝ Դե ոնց չսիրես այն առարկաները, ուր խոսվում է աշխարհների մասին, գեղեցիկ մայր բնության մասին, որի ծոցում լի մեծացել ես, լեռների կենդանիների մասին, որոնց կյանքն ուսումնասիրելը, նրանց որսը իմ սիրած զբաղմունքն էր *(ՎԱՄԼ, 181)*։ Միթե սա այն Անտոնիոն չէ, որին ճանաչում էր ամեն մի վենեցիացի, այն պատանի ջութակահարը, որ միջնադարյան տրուբադուրի նման շրջում էր քաղաքից քաղաք,

փողոցից փողոց, պատուհանների տակ ճվազում էր սերենադները *(Նար-Դոս, I, 15)*։ Տեղը, ուր կանգ էր առել կառքը, շինամիջով անցնող խճուղին էր, որ դեղնագույն ժապավենի նման ակոսում էր գյուղամիջի սևահողը *(Մուրացան)*։

Երբ մի գլխավոր նախադասությանը վերաբերում են մի քանի միջադաս համաստորադաս նախադասություններ, այս վերջիններից առաջ ընկած գլխավոր նախադասության մասը կարող է կրկնվել ամեն մի համաստորադաս նախադասությունից առաջ. օրինակ՝ Ամեն անգամ, որ նայում էի նրա զարմանալի պայծառ աչքերին, ամեն անգամ, որ լսում էի նրա կենսաբերքի ծիծաղը, ամեն անգամ, որ առնում էի նրան գիրկս և ականջիս մոտ լսում նրա կուսական կրծքի ձենքը, այտերիս վրա զգում նրա թավիշ մազերի էլեկտրականացնող շփումը, ինձ տիրում էր այնպիսի խենթ զգացում, որի ազդեցության տակ պատրաստ էի գործել և ամենամեծ առաքինությունը և ամենամեծ ոճիրը *(Նար-Դոս, I, 114)*։ *Այդ կրկնվող մասը կարող է որոշ փոփոխություն կրել. օրինակ՝* Այնտեղ՝ հայրենական խաղաղ օջախի մոտ, ուր հույս ուներ նա մխիթարություն գտնել, այնտեղ, յուր ընտանիքի ջերմ գրկում, ուր փափագում էր նա վայելել մոր օրհնությունը, կնոջ գգվանքը... այնտեղից մերժվեցավ նա *(Րծծ, VII, 323)*։

Համաստորադաս նախադասությունները կարող են թվարկվել առանց շաղկապների, միայն անպայման դրանցից առաջինը պետք է գլխավորի հետ կապակցվի որևէ ստորադասական շաղկապով կամ հարաբերական բառով, ապա մյուսները կարող են հաջորդել առանց որևէ ստորադասական շաղկապի (համադասական շաղկապը նկատի չի առնվում). օրինակ՝ Դու վինաբանում էիր և այն ժամանակ, երբ դեռ փոքրիկ էիր, և մեր ամրոցի բակում միասին գնդակներ էինք խաղում *(Րծծ, 297)*։ Եվ թվում էր նրան, որ ոչ ոք սիրտ ու խիղճ չունի, ոչ ոք չի կարեկցում նրան *(«Ընտիր էջեր», 651)*։

Բազմաբարդ են կոչվում նաև այնպիսի բարդ նախադասությունները, որոնց մեջ մեկից ավելի գլխավոր նախադասություններ միաժամանակ լրացվում են երկրորդական նախադասությամբ կամ նախադասություններով. օրինակ՝ Շատ ջրեր էին հոսել նախրյան այդ քաղաքի և ընդհանրապես Նաիրիի ու աշխարհի վրայով այդ մի տարվա ընթացքում, երբ ես բացակայում էի քաղաքից ու Նաիրիից, և ամենանշանավորն ու կարևորը այն էր, որ այդ ջրերի հետ մեկտեղ հոսել էին նաև ռուսական բանակները Նաիրիից ու

այդ քաղաքից, և Նաիրին ու այդ քաղաքը մնացել էին Մազութի Համոյին ու նաիրցիներին *(ԵՉԵ, 380)*։ Քրիստոնեությունը պետք է ոչնչանա, արշակունյաց իշխանությունը պետք է ընկնի, որովհետև այդ է պահանջում մեր երկրի խաղաղությունը *(ՐԵԺ, VII, 297)*։ Զրույցն հին օրերից դառնում էր առօրյայի շուրջը և ամեն մարդ մի պատճառ էր բերում, թե ինչու Կարմրաքարում ապրելը դառն է *(ԱԲԵ, 447)*։

Բազմաբարդ նախադասության երկու կամ ավելի գլխավոր և երկրորդական նախադասությունները կարող են միմյանց հետ կապակցվել համադասական շաղկապներով, ըստ որում գլխավոր նախադասությունը կապակցվում է գլխավորի, իսկ երկրորդականները՝ միմյանց հետ. օրինակ՝ Սկզբում այդ հեռագիրն ինձ այնքան էլ չազդեց, որովհետև արդեն նախապատրաստված էի, բայց հետո նկատեցի, որ ինչ որ քաղցում, հոգեկան ապատիա է եկել վրաս *(Նար-Դոս, I, 116)*։ Ամեն ճաշի, երբ սեղանը վեր են քաղում, ծառան մի ծածկած աման է ներս բերում, ու թագավորը ամանը բաց չի անում, մինչև որ ծառան էլ չի գնում ու ինքը չի մնում մենակ *(Թ., III, 334)*։ Սկզբներում դեռ անմեղ կատակներ էին կարծում այդ ամենօրյա քաղցրախոսություններից հետևեցրած, որ Արտեմ Սերգեյիչն ու Մելիք-Բաղալը իրար հետ սեղանի վրա անում էին, բայց երբ տանուտերը հավատացրեց, որ սաստն օրենքի հիման վրա է, ոչ ոք Մելիքի ահու ձայն չտվեց, բայց սպասում էին տեսնել, թե տուտը որտեղ է կտրվելու *(ՊՊԵԺ, II, 20)*։

Բազմաբարդ նախադասությունների մեջ երբեմն պարզ նախադասությունները կապակցվում են առանց շաղկապների, միայն հնչերանգներով, շարադասությամբ, որոնք արտահայտում են պայմանա-հետևանքային, պատճառական, բաղդատության և այլ հարաբերություններ. օրինակ՝ Բայց որոնք էին այդ սաղմերը, որտեղից էին ընկել իմ մեջ, ինչ էր նրանց արմատը,— այս ուղղությամբ կատարած պրպտումները դեռ երկար ժամանակ մտատանջում էին ինձ առանց որևէ եզրակացության հանգելու *(«Ընտիր էջեր», 718)*։

Նախադասությունների համադասական և ստորադասական կապակցությունները երբեմն այնքան խաչաձև խմբավորումներ են կազմում և այնպիսի բազմաբարդություն են ստեղծում, որ այդ ամենը մի առ մի թվել այստեղ հնարավոր չէ։ Երբեմն մի գլխավոր նախադասություն լրացվում է երկու կամ ավելի երկրորդական նախադասություններով, որոնք կապակցվում են համադասական շաղկապներով, կամ թվարկվում են առանց շաղկապների, երբեմն

սրանք կազմում են հաջորդաբար ստորադասվող բազմաստիճան կարգ։ Հաճախ միևնույն գլխավոր նախադասությունը ունենում է մի քանի երկրորդական նախադասություններ, իսկ սրանցից յուրաքանչյուրն առանձին կապակցվում է մի երկրորդական կարգի երկրորդական նախադասության հետ, որոնք իրենց հերթին միմյանց նկատմամբ կազմում են երկրորդական կարգի համաստորադաս նախադասություններ։ Գլխավոր նախադասությունները օղակվելով մեջընդմեջ հանդես եկող երկրորդական նախադասություններով՝ իրենց հերթին միմյանց հետ կապակցվում են տարբեր բնույթի շաղկապներով և կազմում կապակցության մի բազմաբարդ ամբողջություն, մի ընդարձակ պարբերույթ. օրինակ՝ Բայց ով տարիներով ապրել է մեծ քաղաքում, միշտ միևնույն նեղ փողոցի վրա, նույն ապականված մթնոլորտի մեջ և գործել շարունակ լույսից և օդից զուրկ մի գրասենյակում, որի բոլոր հրապույրը կազմում են եղել չոր հաշվեմատյանները, երկաթե պահարանը և անմիտ համրիչը, իրեր, որոնք առնչություն ունին միայն փողի և հաշվի հետ, բայց որոնց անծանոթ է սիրտը և ավելի ևս զգայուն հոգին, իրեր, որոնք մարդու ուղեղը բթացնում, աշխույժը մարում և հոգին նվաստացնում են... այդպիսին, հարկավ, կարոտելով կկարոտի այն ամենին, ինչ որ անարժեք է բնության զավակի համար, կկարոտի նրա դաշտին ու մարգին, նրա հովտին ու առվակին, նրա անտառի անուշ հովերին *(Մուրացան, «Նոյի ագռավը»)*։ Այս հանգամանքը նկատի ունենալով, Եվային խիստ անախորժ թվաց Աշխենի ծածկամտությունը, որը նա պարզ կերպով տեսնում էր, թե գտնված նամակի փակ ծրարից և թե այն բանից, որ Աշխենը չէր հայտնել, թե ինքը նամակ է գրելու, կամ արդեն գրել է Արմենակին և ինչպես երևում է, ամենևին չպետք է էլ հայտներ, որովհետև պարզ է, որ նամակը գրել է ծածուկ և վերցրել է հետը, որ պոստ ձգի՝ հատկապես դրա համար դուրս գնալով տնից այն ժամանակ, երբ ամենքը քնած են եղել *(Նար., VI, 120)*։ Ով կհոժարեր այնքան բեռ կրել, հեծել ու քրտնել տաղտուկ կյանքի տակ, եթե երկյուղը մի ինչ-որ բանի մահվանից հետո, այն անհայտ երկրի, որի սահմանից ոչ մի ուղևոր չէ վերադառնում, չձգեր կամքը երկբայության մեջ, և մեզ չստիպեր տանել ավելի այն չարիքները, որ այստեղ ունինք, քան թե սավառնել դեպի նոր ցավեր, որոնց անգետ ենք *(Շեքս., I, 50)*։ Թնդում է և ամբողջ լուսավոր աշխարհքը, որովհետև, ինչպես ճըշմարիտ մեծ մարդ կրելով կատարյալ իր ժողովրդի հոգին ու պատ-

կերը, հանդիսանում էր իր ժամանակի գեղարվեստական գրականության այն հոյակապ ուժը, որ կարող էր մի հայացքով ու մի գրչի վածքով ամփոփել կյանքը անհագին տարածության վրա՝ վերևից մինչև ներքև, արտաքին կեղևից մինչև հոգու ամենածածուկ խորշերը, հանդիսանում էր իր ժամանակի հսկա փիլիսոփան, որ աշխատում էր լուծել կյանքի առեղծվածը, խորամուխ լինել, հասկանալ և պատասխան գտնել, թե ինչու է ապրում մարդը և փիլիսոփայական խաղաղությամբ նայելով մահվան պաղ ու խորունկ աչքերին՝ ուզում էր հաշտություն ստեղծի նրա ու նրա առջև սարսափող հոգիների մեջ *(Թ., IV, 154)*։

ԺԵ. ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՈՒ ԴԱՐՁՎԱԾՆԵՐՈՎ ԼՐԱՑՎՈՂ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Երբեմն գլխավոր նախադասության հետ կապակցվող ստորադասական մասը ներկայացնում է մի որևէ բառ, բառակապակցություն, մի բառախումբ, որոնք ստորադասական նախադասությունների նման շարահյուսվում են լրացվող նախադասությանը ստորադասական շաղկապներով ու հարաբերական բառերով։

Կապակցման առումով վերոհիշյալ բառերն ու բառախմբերը ոչնչով չեն տարբերվում երկրորդական նախադասություններից, միայն դրանք նախադասություններ չեն, այլ բառեր կամ բառախմբեր են, որոնք նախադասության մեջ են մտնում ստորադասական շաղկապների միջոցով. օրինակ՝ Քույրը էնքան սիրուն, էնքան շարմաղ է լինում, ինչպես լուսի կտոր *(Թ., III, 162)*։ Լուսի կտոր *բառակապակցությունը կարող էր մտնել լրացվող մասի մեջ այսպես.* Քույրը լուսի կտորի նման սիրուն է եղել, *սակայն անջատվել է և* ինչպես *համեմատական շաղկապի միջոցով է արտահայտել իր լրացական դերը։ Կապակցման ձևով նա չի տարբերվում ստորադասական նախադասությունից։*

Ստորադասական շաղկապներով ու շաղկապային բառերով կապակցվող այդպիսի շարահյուսական միավորները կոչում ենք լրացնող ստորադասական մաս։ Բայց քանի որ այս դեպքում ստացվում է ոչ թե բարդ նախադասություն, այլ ստորադասական մասով բարդված մի պարզ նախադասություն, ուստի լրացվող մասը կոչվում է գլխավոր մաս։

ա) ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՄԱՍՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բաղդատական ստորադասական մասը գլխավոր մասի հետ կապակցվում է այն միևնույն շաղկապներով ու հարաբերական բա-

ներով, որոնցով կապակցվում են բաղդատության երկրորդական նախադասությունները։ Այդպիսի շաղկապներ և հարաբերական բառեր են՝ **ինչպես, որպես, ինչ, ոնց որ, քան, որքան**: **Ինչպես, որպես, ոնց որ, ինչ** արտահայտում են գործողությունների, հատկանիշների, առարկաների բաղդատական նմանությունը, իսկ՝ **քան, որքան** ցույց են տալիս միևնույն բաղդատության քանակական աստիճանը կամ պարզապես աստիճանը։

Հիմնական մասը լրացնող բաղդատության ստորադասական մասը կոչվում է բաղդատական դարձված։ Ստորադասական մասի հարաբերական բառերին համապատասխան գլխավոր մասում կարող են հանդես գալ **այնպես, այնքան, ավելի** բառերը, որոնց նշանակությունը բացատրվում է ստորադասական մասով, բաղդատական դարձվածի միջոցով, որ կարող է կազմված լինել մի բառից կամ ամբողջ բառախմբից։

Երբ հիմնական մասը ունի հարաբերյալ բառեր, այդ նշանակում է, որ բաղդատական մասը վերաբերում է գլխավոր մասի ստորոգյալին, քանի որ ցուցական հարաբերյալը (այնպես) գլխավոր մասի մեջ ուղղակի ձևի պարագա է, որ շոշափելի նշանակություն չունի. Նրա նշանակությունը բաղդատական մասի մեջ է։ Հարաբերյալ ցուցականը այս դեպքում կապակցման և մատնանշման դեր է կատարում. օրինակ՝ **Նրանք իրար հետ այնպես հաշտ էին, ինչ հարս ու փեսա** (Շեքս., I, 149)։ **Եվ հոգին այնպես պիղծ ու սև դառնա, ինչպես այն դժոխքը** (Շեքսպիր)։ **Մարդկանց էնպես է ուտում, ոնց որ հավի ճուտեր** (Թ., III, 259)։

Եթե գլխավոր մասի մեջ կան ժամանակային բառեր, ապա բաղդատական մասը գերազանցապես այդպիսի բառերով է արտահայտվում։ Այս դեպքում գլխավոր մասի ձևի հարաբերյալը գրեթե անորոշ է մնում, որովհետև գլխավոր ուշադրությունը բևեռվում է ժամանակային հանգամանքի վրա. ձևի պարագան արտահայտվում է **այնպես, որպես** ձևական բառերով. օրինակ՝ **Ոչ մի ժամանակ նա յուր աղերսն ու պաղատանքն այնպես սրտագին չէր մատուցել, որպես այսօր** (Րաֆֆի)։ **Էնպես լուս է լինում, ոնց որ օրը ցերեկով** (Թ., III, 340)։ **Առաջին օրն էնպես է անց կենում, ոնց որ մի ժամ, երկրորդ օրը՝ որպես մի վայրկյան** (Նույն տեղում, 346)։ **Երբեք ես այնպես զբաղված չեմ եղել, ինչպես այժմ** (Շիրվ., III, 325)։

Ծանոթություն.— Բաղդատական մասը կարող է լրացվել մի երկրորդական նախադասությամբ, որ այս պարագայում

գլխավոր մասի հետ չի առնչվում. օրինակ՝ Ինչպես ճամփորդ մի, որ խորդուբորդ ուղիներով է բարձրանում վեր, այդպես եղել եմ մի առավոտ և ընկել ուղի մի անավոր *(ՁԸ, 99)։*

Բաղդատության դարձվածով լրացվող հիմնական մասը գերազանցապես հանդես է գալիս առանց հարաբերյալ բառի. երբ հիմնական մասը չունի հարաբերյալ բառ, ապա բաղդատական դարձվածը կարող է վերաբերել ամբողջ հիմնական մասին, կամ հիմնական մասի որևէ անդամին. ըստ այդմ ստորադասական այդ մասը ստանում է բազմազան ու տարբեր արտահայտություններ։ Բաղդատական մասը գերազանցապես հանդես է գալիս իբրև գոյական, որ կարող է լինել թե՛ լրացումներով և թե՛ առանց լրացումների։

Եթե բաղդատական մասը գոյական է և լրացնում է գլխավոր մասի բայական ստորոգյալը, լինի այդ գոյականը լրացումներով թե առանց լրացումների, կիրառվում է ուղղական հոլովով, քանի որ իբրև բաղդատելի մաս՝ այդպիսի գոյականը հանդես է գալիս նաև իր ստորոգյալի փոխարեն. օրինակ՝ Շնթռել է, ուպես մի շուն, ու խավարն է հսկում հիմի, Շնթռկել է թանձր մուժում, ուպես անտես մի թշնամի *(ՁԸ, 254)։* Ու վառվում է սիրտը նրանց, ուպես հրդեհ արեգնածին *(ՁԸ, 255)։* էլ չի հոնդում սիրտս վայրենի, ինչպես դաշտերում նժույգ սանձարձակ *(Նույն տեղում, 104)։* Նրա աչքերը վառվում էին ուպես եամենի սև շավա *(Ր., I, 44)։* Մի անգամ տեսնեմ հեռվում մի անազին տարածություն վառվում է արևի տակ, ինչպես մի հսկայական հրդեհ *(Թ., III, 225)։* Կարմիր վառվեց արևը բորբ, ուպես կովի ազդանշան *(ՁԸ, 256)։ Այս օրինակների մեջ բաղդատության ստորադասական մասը հիմնականում լրացնում է գլխավոր մասի ստորոգյալը, սակայն չի բացառվում, որ գլխավոր մասի ենթական ևս կողմնակիորեն լրացվի։*

Եթե հիմնական մասի ստորոգյալը ածականով անվանական է, ապա բաղդատության ստորադասական մասը դարձյալ հանդես է գալիս իբրև գոյական. օրինակ՝ Նրա դեմքը սև և փայլուն էր, ուպես թուխ էբենոս. նրա ատամները սպիտակ էին, ուպես Կարմիր ծովից նոր դուրս բերած սադաֆ *(Ր., I, 44)։* Մենակ ապրում էր իր գեղեցիկ տանը, ու շատ էլ ծույլ է, ինչպես առհասարակ երգիչները *(Թ., III, 95)։* Ես հախուռն էի, ինչպես պղտոր գետ *(ՁԸ, 103)։* Աննման ես, ինչպես հրեշտակ երկնային, վառ աչերդ, ինչպես արև գարնանային *(ՀՀՀ, 15)։* Մաքուր էր երկնի կամարը, ինչպես խնա-

մող ձեռքով հստակված հակնթագույն ապակի. նոր էր օդը թեթև, նեշտաշունչ, որպես եթերքը *(Շիրվ., V, 470)։*

Երբ բաղդատական դարձվածը վերաբերում է որևէ ածականի առհասարակ, ապա դարձյալ հանդես է գալիս իբրև գոյական. օրինակ՝ Սովորիր գրել դու պարզ ու պայծառ, ինչպես այն չքնաղ պոետը գանգուր *(ՁԸ, 93)։*

Երբ բաղդատության ստորադասական մասը վերաբերում է որևէ գոյականի, դարձյալ հանդես է գալիս իբրև գոյական. օրինակ՝ Եվ չեք նկարել շարունակ մեզ դուք այս ուղին, որպես մի թեթև ստյուն *(ՁԸ, 110)։*

Եթե բաղդատության մասը նույնիսկ ածական է, ապա դա դիտվում է իբրև գոյականացված ածական, որովհետև փաստորեն ինչպես, որպես, հենց որ *այս դեպքում կապի դերով են հանդես գալիս. օրինակ՝* Տխուր էր նա, որպես մի սգավոր *(Ր., III, 258)։* Գունատ էիր դու, ինչպես մահամերձ *(ՁԸ, 128)։*

Ինչ հոլովով որ դրվում է համեմատելի հիմնական մասի անդամը, նույն հոլովով էլ դրվում է բաղդատության ստորադասական մասը. օրինակ՝ Քեզ եմ նվիրում այրված սրտերի այս խորունկ վեպը՝ հանած անհատակ ծովից, որպես մարգարիտ, որպես մի հին գիրք *(Փափ., 234)։* Սիրում էր յուր վարժապետին, որպես իր հարազատ հորը *(Ր., I, 125)։* Պահվել է նա, որպես վախից խելագարված մի թշնամի *(ՁԸ, 254)։.*

Բաղդատության մասի բուն համեմատելին կարող է լինել դերբայ, որ վերաբերում է հիմնական մասի ստորոգյալին։ Այս պարագայում հիմնական մասի ստորոգյալի գործողությունը որևէ առնչությամբ բաղդատվում է ստորադասական մասի դերբայի գործողության հետ. օրինակ՝ Սև քարերի միջից ցցվել են ահագին գերաններ, կարծես պարծենալով իրենց ոհիրով *(Շիրվ., V, 457)։* Կարծես նետված մի հաղթ ձեռքով, աշխարհային կամքին հլու՝ գնում էին կռվով, երգով կայարանը գրավելու *(ՁԸ, 251)։* Ստեփանիկը, կարծես մոր գրկում բուսած, երջանիկ ազահությամբ ներս էր քաշում կաթը *(ՆԶՀ, 443)։*

Հաճախ բաղդատությունը խաչաձևվում և բարդանում է իր բովանդակությամբ. բաղդատության եզրերի համեմատության հետ համեմատության մեջ են դրվում նաև այլ անդամներ. օրինակ՝ Կարմիր, դեղին, կապույտ հագուստներով, որպես կարմիր, դեղին, կապույտ ծաղիկներ, սփռված էին լինում նրանք այգիներում, բանջարանոցներում և ագարակներում *(Ր., III, 473)։ Այս օրինակում*

Նրանք (աղջիկները, հարսները) նմանեցվում են կարմիր, դեղին, կապույտ ծաղիկներին, բայց և կողմնակիորեն հուշվում է, որ ափռված էին նաև ծաղիկների նման։ Այս է պատճառը, որ հաճախ դժվար է որոշել, թե բաղդատության դարձվածը հիմնական մասի որ անդամին է առնչվում. կամ եթե առնչվում է ամբողջ հիմնական մասին, երբեմն հակվում է այս, երբեմն այն առանձին անդամին։

Երբ ուշադրության կենտրոնում է գտնվում բաղդատության դարձվածը, երբ անհրաժեշտ է այն ընդգծել ամբողջ կապակցության մեջ, նախադաս է կիրառվում։ Բանաստեղծության մեջ դեր են խաղում նաև հանգավորման և այլ հանգամանքներ։ Նախադաս բաղդատության մասը ավելի բարձր տոնով է արտաբերվում, քան հիմնական մասը. օրինակ՝ **Որպես մի բաժակ նուրնրան գինի, Քո սրտից թող նա անբաժան լինի** *(ՉԸ, 87)*։ **Ինչպես փոքրիկ սաստիկ սրընթաց, Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ** *(«Անուշ»)*։

Ետադաս բաղդատական դարձվածը տրամաբանական շեշտ չի կրում իր վրա, արտաբերվում է իջեցված տոնով. օրինակ՝ **Նա նայում է հեռուն և թափանցում ապագա պատմության խորշերը, որպես աներևույթ զորությունից ներշնչված մարգարե** *(Շիրվ., V, 453)*։ **Լուսաբացին, երբ կարմրածուփ հորիզոնում հրաշուշան Կարմիր վառվեց արևը բորբ, որպես կռվի ազդանշան** *(ՉԸ, 256)*։ **Քո երգը մերթ հոսում էր որպես հորձանք: Բայց պիտի համառես, որպես եզ: Դու աճում էիր, ինչպես խոտը** *(ՉԸ, 81, 82)*։ **Ու վառվում է խավարակուռ հոգիներում նրանց անգայթ գետը այդ մուգ, որպես հրաքուռ մի ճառագայթ: Սուր մխվել է նրանց սրտում, որպես մի թեժ կարմիր բևեռ** *(ՉԸ, 254)*։ **Երկինքը հստակ էր, ինչպես մաքրասեր տանտիրուհու ձեռքով լվացված ու սրբված մի հայելի** *(ՆԶՀ, 406)*։

Երբ հիմնական մասը ընդարձակ տարազի մի նախադասություն է, իսկ բաղդատական մասը լրացնում է մեջտեղում գտնված առանձին որևէ անդամի, կամ առնչվում է հիմնական մասի նախորդ անդամներին, ապա բաղդատության մասը կարող է միջադաս դրվել։ Այս դեպքում բարձրացող տոնը ուժեղ շեշտով իջնում է, միջադաս մասը արտաբերվում է ցածր տոնով, ապա շարունակվում է հիմնական մասը սովորական ընթացքով. օրինակ՝ **Որ կյանքը հին, որպես փյունիկ, շքարձանա մոխիրներից** *(ՉԸ, 256)*։ **Այդ կղզու խաղաղ մենիկ առանձնության մեջ, որպես ծովակի դիցուհին, իշխում է Սամվելի նազելին** *(Բ., III, 132)*։

Բաղդատությունը կարող է լինել նաև նույնացում. այս դեպ-

քում բաղդատության մասը արտահայտվում է ինչպես, ինչ որ *հարաբերականներով, իսկ հիմնական մասում իբրև հարաբերյալ կիրառվում է* նույն *ցուցականը. օրինակ՝* Այժմ նրանք նույնն էին իր աչքում, ինչ որ ինքը *(Շիրվ., V, 468)։* Իրենց փխրուն նավակների վրա նրանք նույնն են, ինչպես ցամաքի արաբները իրենց կատաղի ձիույգների վրա *(նույն տեղում, 430)։*

բ) *ՔԱՆ ՇԱՂԿԱՊՈՎ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾ*

Քան *շաղկապով բաղդատական դարձվածը արտահայտում է քանակական, ժամանակային և որակական այնպիսի աստիճան, որ հիմնական մասի նկատմամբ իբրև բաղդատելի եզր իր աստիճանով ստորադասվում է. այսինքն հիմնական՝ ստորադասական մասում արտահայտված աստիճանի հատկանիշը նրա համեմատությամբ ավելի պակաս մակարդակի վրա է գտնվում։ Նախադասության գլխավոր մասը իբրև բաղդատական հարաբերյալ ունենում է* ավելի *բառը որևէ ածականի, մակբայի հետ, և կամ միայն ածականով ու մակբայով է արտահայտվում բաղդատության հիմնական մասը. օրինակ՝* Անտառի վազրը և բորենին ավելի բարեխիղճ էին, քան թե նրանք *(Բ., I, 47)։* Լամբարյանի սիրտը ավելի մեծ է, քան խելքը *(ՆՁՀ, 443)։* Շատերն էին կարծում, թե չկա և չի կարող լինել ավելի ուղղամիտ, ավելի ազնիվ, ավելի բարեսիրտ մարդ, քան այդ կեղծիքն ու խաբեբայությունը, քան այդ կարծեցյալ սիրտը, ապականյալ հոգին *(Շիրվ., V, 485)։* Տղրիդի տունը թե մաքրության, թե գեղեցկության և թե առողջության կողմից ավելի լավն է ու հարմար, քան մարդկանցից շատ շատերի տները *(Թ., III, 94)։* Վերջը ավելի շատ ֆեզ կծախի, քան Վասակին *(Դեմիրճյան)։*

Եթե հիմնական մասում բաղդատության աստիճանը նշող ավելի *բառը չկա, բաղդատությունը արտահայտվում է միայն* քան *շաղկապով և հիմնական մասի դրական ածականով. օրինակ՝* Լավ է լինել արդյունաբերող կամ գործարանատեր, քան խանութպան *(Շիրվ., V, 481)։* Միթե ես պակաս կգրեմ, քան թե Ռ. Պատկանյանը, քան թե Նալբանդյանը *(ԴԱ , III, 68)։* Մի կոտ կորեկ շարելը հեշտ է, քանց մի որդի մեծացնելը *(Առած., 31)։* Փորձված թանը լավ է, քանց անփորձ մածունը *(նույն տեղում, 46)։ Բայց* Ջումշուդը պակաս խորամանկ և պակաս դիտող չէր, քան Վարդանը *(Շիրվ., V, 482)։*

Բաղդատական դարձվածի համեմատելի բառը կարող է լինել գոյական, դերբայ, դերանուն, կապական արտահայտություն, մակբայ, ժամանակային բառ և այլն. օրինակ՝ Ավելի լավ էր այդպիսով վերջ տալ իր կասկածներին, քան թե երկար ժամանակ տանջվել *(ԳՄԹ, I, 425)։* Ավելի գեղեցիկ էր թվում, քան մինչ այդ *(նույն տեղում, 432)։* Քո համբույրը գարնանային իմաստուն է ավելի, քան գիտությունն այս խոժոռ, գրքերն այս մթին: Քո գգվանքը բյուր անգամ թովիչ է և սիրելի, քան և Վոլֆը, և Բոպպը, և Հումբոլդտը միասին *(Տ., I. 366)։* Դժվար կլինի իմ երթը հիմա, դժվար ու դժնի, քան երբևիցե *(ՉԸ, 105)։* Այժմ ավելի վտանգ կա, քան առաջ *(Թ., V, 476)։* Դու այստեղ քո ծննդավայրի հողի վրա կարող ես ավելի օգտակար լինել, քան թե այնտեղ *(Շիրվ., III, 322)։* Այնտեղից ես դուրս եմ ելնում պայծառ հոգով և ավելի ուրախ ու զվարթ, քան մտնելուց առաջ *(Շիրվ., VIII, 414)։*

Բաղդատության դարձված է կազմվում նաև այն դեպքում, երբ գլխավոր մասի ստորոգյալներն են գերադասել, հարմար համարել, լավ համարել, բարվոք համարել, ուզել, ցանկանալ, սիրել *և այլ բայեր մի անորոշ դերբայով, որոնց համապատասխան ստորադասական մասում կիրառվում է* քան, քան թե *շաղկապներով անորոշ դերբայ. օրինակ՝* Ավելի բարվոք էին համարում օտարի ծանր լուծը կրել, քան իրանց թագավորին հնազանդվել *(Ր., III, 223)։* Նրանք ավելի ցանկանում էին Հայաստանի այդ մասը հայ իշխանների ձեռքով կառավարել և նրանցից մի որոշյալ տուրք ստանալ, քան թե պարսից խաների ձեռքը տալ *(Ր., VI, 12)։* Ես գերադասում եմ թափառական կյանքը, քան տանը նստելը:

Ստորադասական մասը կարող է լինել նաև նպատակային, զիջական լրացում. օրինակ՝ Նա ասաց՝ ամբողջին տիրանալ, որպեսզի ամբողջը փոխել *(ՉԸ, 66)։* Անձրևը թեև փոքր ինչ մեղմացած, բայց տակավին մաղվում էր *(Ր., VI, 14)։* Առաջ թեև «գազան» ու «գեց», կդառնայի շուտով ես մեծ *(Թ., II, 90)։* Տեղը եկած ժամանակ նա գիտեր գոռալ, հայհոյել նորը պես, թեև ոչ նրա չափ տեղի ու անտեղի *(Շիրվ., V, 482):* Բայց ես, չնայելով մեր փոխադարձ սառնությանը, հակված էի նրա զգաստությունը վերագրել իր ընտանեկան կրթությանը *(Շիրվ., VIII, 380)։* Չնայելով այս բոլոր աշխատանքներին, իշխանը չկամեցավ իջնել իր սնդուկից *(Ր., VI, 17)։* Մարդկային հարաբերության մեջ լռությունն ավելի է հուզում մարդկանց, քան խոսքը, թեկուզ ծանր խոսքը *(ՍԶ, V, 167)։*

գ) ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՉԱՓԻ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Զուգադրության կամ չափի պարագայական ստորադասական մասը ցույց է տալիս հիմնական մասի մեջ արտահայտված գործողության, երևույթի, հատկանիշի չափը, քանակը զուգադրության միջոցով։ Այս դեպքում իսկական զուգադրում է կատարվում, երբ գլխավոր մասում կիրառվում են ոչ այնքան, *իսկ ստորադասական մասում* որքան *հարաբերյալ և հարաբերական բառերը. օրինակ՝* Մտնում էին պարոն Ռուստամի մոտ և նյութում նրա համար զանազան բժշկական հնարներ, գործ դնելով ոչ այնքան դարմաններ, որքան կախարդական գործողություններ *(Ր., II, 232)։* Արեսյանը դրա պատճառը համարում էր ոչ այնքան կնոջ զբաղված լինելը, որքան իր տակտը *(ՄՁ, V, 114)։* Նրան անհանգստացնողը ոչ այնքան սպասուհու վիճակն էր, որքան Լիդիայի անգիտությունը *(Շիրվ., V, 77)։*

Ստորադասական մասը գլխավոր մասի չափ ու քանակն է դրսևորում զուգադրության միջոցով, երբ կապակցվում է որքան, ինչքան, որչափ *հարաբերական բառերով, իսկ հիմնական մասում համապատասխանորեն լինում են* այնքան, նույնքան, այնչափ *հարաբերյալները, որոնց նշանակությունը բացահայտվում է զուգադիր չափի ու քանակի պարագայական դարձվածով, որ կարող է կազմված լինել երկու կամ ավելի բառերի կապակցությունից. օրինակ՝* Սա իրեն զգում էր այնքան տկար, այնքան աննշան, որքան աղվեսը վագրերի, առյուծների շրջանում *(Շիրվ., V, 498)։* Երբեք ինքս ինձ այնքան դժբախտ չէի համարած, որքան նույն րոպեին *(Նույն տեղում, 473)։* Դուք էլ եք, տեսնեմ, էնքան մեծ ու խոր, ինչքան իմ հոգու թախիծն անավոր *(Թ., II, 33)։* Որոնք նույնքան են նման ուրարտական այն հին խրճիթներին, որքան որ քո քիթը, ընթերցող, Էյֆելյան աշտարակին *(Զե, 254)։* Այս մարդկանց համար անասունների կյանքը նույնչափ թանկ է, որքան իրենց զավակների կյանքը *(Շիրվ., V, 454)։*

Զուգադրության ստորադասական մասը արտահայտվում է նաև ինչ որ *հարաբերականով. գլխավոր մասում համապատասխան կերպով լինում են* նույն, միևնույն *հարաբերյալները. ստորադասական մասը ցույց է տալիս իր և գլխավոր մասի մեջ արտահայտվածի նույնը լինելը, նույնությունը. այսպիսի ստորադասական զուգադիր մասը կարելի է կոչել նաև նույնացման դարձված կամ նույնացման ստորադասական մաս. օրինակ՝* Կեղծ սնանկությունը հի-

մարություն էր նրա համար, նույնը, ինչ որ մեկի գրպանից մի թաշկինակ դուրս բերելը լուրջ և համարձակ գողի համար *(Շիրվ., V, 496)*։ Սակայն պատկերը նույնն էր, ինչ որ բերդի ներսում: Դա միևնույնն է, ինչ որ դուրս գալ ավազակության *(Շիրվ., V, 496)*։

Զուգադրության վերոհիշյալ բոլոր դարձվածները սովորաբար ետադաս են, այսինքն՝ մինչև չդրվի հիմնական զուգադրելին, չի կարող զուգադրում լինել։ Եթե փորձենք դարձվածային մասը նախադասել, ապա հարկադրված այն ստորոգման պիտի ենթարկենք, այլապես զուգադրումը թույլ կլինի, կամ եթե լինի այդպիսի զուգադրում, ապա կքանդվի երկու մասերի տրամաբանական կապը, կառաջանա անկապակցություն։ Համեմատիր՝ Ինչ որ Հացավանը, Վասակը Համիկի համար նույնն էր. Որքան քո քիթը, ընթերցող, Էյֆելյան աշտարակին, նրանք *(բնագրում որոնք)* նույնքան են նման ուրարտական այն հին խրճիթներին: Որքան մյուս արևելցիները, ըստ երևույթին արաբները այնքան դանդաղաշարժ ու պղերգ չեն *(Շիրվ., V, 437)*։ Որքան այժմ, իմ ժամանակ այդ մրցումը այնքան կատաղի չէր *(Նույն տեղում, 440)*։ *Չնայած այս հանգամանքին, այնուամենայնիվ զուգադիր դարձվածը սակավ պատահում է նախադաս դիրքով. օրինակ՝* Որքան անակնկալ, նույնքան և թանկ էր ինձ համար նրա խոստովանությունը *(Շիրվ., VIII, 395)*։

Բաղդատության և զուգադրության հարաբերությունները այնքան մերձ են իրար, որ երբեմն գլխավոր մասը արտահայտվում է բաղդատությամբ, իսկ երկրորդական մասը զուգադրությամբ, կամ ընդհակառակը։ Այս պարագայում որակական և քանակական հատկանիշները խաչաձևվում, խառնվում են. օրինակ՝ Ամենավառվռուն բանաստեղծի երևակայությունը չէր կարող այնպես բորբոքվել բնության գեղեցկությունից, որքան նրա երևակայությունը այդ չոր ու ցամաք ավազուտ դաշտերից ու բլուրներից *(Շիրվ., V, 484)*։ Այնքան սիրում էր յուր վարժապետին, որպես յուր հարազատ հորը *(Ր., I, 125)*։ Համիկը նրա սիրած մարդու համար լաց էր լինում զգացմունքների նույն թափով, ինչպես որ ինքը *(ՆԶՀ, 400)*։

դ) *ԵԹԵ ՈՉ* ՇԱՂԿԱՊՈՎ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՄԱՍ

Գլխավոր մասի մեջ իբրև նախադասության որևէ անդամ (ենթակա, վերադիր, խնդիր և այլն) կիրառվում են այլ ոք, ուրիշ բան, ոչինչ, այլ բան, այլ ինչ *անորոշ դերանուններն ու դերանվանական կապակցությունները, որոնք գլխավոր մասում ժխտվում են կամ ստորոգյալի միջոցով և կամ ժխտական ոչ մասնիկով, որպեսզի*

306—19

եթե ոչ *շաղկապով կապակցվող ստորադասական մասով որոշվի այդ ժխտված անորոշ դերանունների ինչ լինելը, այլ խոսքով՝ ստորադասական մասը բացահայտում, բովանդակություն է տալիս այդ անորոշ դերանուններին, որոնք գլխավոր մասում ավելի կապակցական, քան թե նախադասության ինքնուրույն անդամի դեր են կատարում։ Երկրորդական մասը կարող է բացահայտել հիմնական մասի բազմազան անդամներ՝ նայած թե հիշյալ անորոշ դերանունները նախադասության որ անդամի փոխարեն են հանդես գալիս. օրինակ՝* Դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի ահագին գերան *(Մուր., III, 274)։* Մի քանի րոպե՝ էլ ոչինչ չմնաց, եթե ոչ մի սառն ու տխուր, անգույն թացություն *(ՎՓՀՀ, 231)։* Որը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի ավազականոց *(Մուր., III, 291)։* Մեր ամառանոցները ոչ այլ ինչ են, եթե ոչ մեր գավառի հովահար գյուղերը *(Մուր., III, 8)։* Կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ ձգտումն ու ճանապարհ *(Թ., III, 228)։* Դրանց վրա եղողները ոչ այլ ոք էին, եթե ոչ մնացորդ երեսուն զինվորները *(«Ընտիր էջեր», 606)։* Ու որքան էլ մտածում էր, որքան էլ ելք էր փնտրում, այնուամենայնիվ նրան թվում էր, թե էս գիշեր ուրիշ որևէ տեղ չէր կարող գնալ, եթե ոչ այդ Ռիմայի բնակարանը *(ՍԶ, V, 118)։*

XI

ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բարդ նախադասությունը կազմվում է երկու կամ ավելի պարզ նախադասություններից, որոնք իրար հետ կապակցվում են շաղկապներով, շաղկապային և հարաբերական բառերով։ Այսպիսի կապակցությունը իրենից ներկայացնում է իմաստային ու հնչերանգային միասնական մի ամբողջություն։ Բարդ նախադասությունները կազմվում են նաև առանց շաղկապների, բայց դրանք համեմատաբար ըստ իրենց կապակցական միասնության, արտաքերական ամբողջության և մասերի իմաստային փոխհարաբերությունների համեմատաբար քիչ են որոշակի։

Բարդ նախադասությունները բաժանվում են երկու ընդհանուր տեսակի. բարդ համադասական և բարդ ստորադասական։ Նախադասության այս երկու տեսակների հիմնական տարբերակումը պայմանավորվում է դրանց մասերի իմաստային փոխհարաբերությամբ։ Ճիշտ է յուրաքանչյուր տեսակը ունի իր առանձին շաղկապները, սակայն շաղկապների հենց այդ տարբերակումն էլ հիմնվում է բարդ նախադասության առանձին մասերի միմյանց նկատմամբ ունեցած իմաստային փոխհարաբերության վրա, որով որոշվում են նաև երկու տեսակ նախադասությունների արտաքերական տարբերությունները։ Նշենք նաև, որ միևնույն շաղկապները երբեմն արտահայտում են համադասական, երբեմն էլ ստորադասական հարաբերություն։

Բարդ համադասական նախադասության առանձին մասերը համեմատաբար միմյանց նկատմամբ ունեն իմաստային անկախություն. այդ նշանակում է, որ մի նախադասությունը մյուսի անմիջական լրացումը չի կազմում, ինչպիսին որ է բարդ ստորադասական նախադասության մեջ։ Երբ ասում ենք՝ **Ես գնացի գործարան,**

որպեսզի աշխատեմ, նկատում ենք, որ **որպեսզի աշխատեմ** նախադասությունը **գնացի** ստորոգյալի համար նպատակի պարագա է. դա նույնն է, եթե ասվեր՝ **գնացի գործարան աշխատելու**: Կամ՝ երբ ասում ենք՝ **Տեսավ, որ այնտեղ բանվորները աշխատում են**. **բանվորները աշխատում են**—խնդիր է առաջին նախադասության համար։ Ուրեմն՝ բարդ ստորադասական նախադասության մեջ մի նախադասությունը մյուսի այս կամ այն պարագան է, խնդիրն է, որոշիչն է, հատկացուցիչն է և այլն։

Բարդ ստորադասական նախադասության մեջ այսպիսի լրացում նախադասությունները կոչվում են երկրորդական, իսկ սրանց լրացյալները՝ գլխավոր նախադասություն։ Ըստ նշանակության լինելով լրացուցիչ, կախյալ, երկրորդական նախադասությունները չունեն նաև սեփական հնչերանգային սկզբնավորում։ Եթե դրանք նախադաս են, սկսվում են այնպիսի հնչերանգությամբ և վերջանում այնպես, որ սպասում ենք շարունակությանը։ Սկսվում է հատուկ ցածր եղանակավորումով և վերջանում բարձրացումով, որով և պայմանավորվում է անավարտունությունը։ Երկրորդական նախադասությունը իմաստային կախվածության մեջ գտնվելով նույնպես չի ունենում ինքնուրույն հնչերանգային ամբողջություն, սկսվում է ցածր տոնից և մնում բարձր տոնի վրա, մինչդեռ բնական արտաբերական վերջացածությունը պահանջում է իջեցում, մարում։ Իսկ երբ երկրորդական նախադասությունը ետադաս է, իրենից առաջ գտնված գլխավոր նախադասությունը արտաբերվում է բարձր, ապա աստիճանաբար իջնելով հասնում է երկրորդականին. այս վերջինն էլ բնական իջեցումով հասնում է ավարտին՝ կազմելով իմաստային և հնչերանգային միասնական մի ամբողջություն։

Երկրորդական նախադասության կախվածությունը արտահայտվում է նաև քերականական առանձնահատկություններով, մասամբ շարադասությամբ, իսկ ամենից ավելի՝ ստորոգյալների ժամանակների ու եղանակների դրսևորումով։ Հաճախ գլխավոր նախադասության ստորոգյալի ժամանակով է պայմանավորվում երկրորդական նախադասության ստորոգյալի ժամանակը։ Սակայն կան այնպիսի երկրորդական նախադասություններ, որոնք որոշակի եղանակ են պահանջում. օրինակ՝ նպատակի երկրորդական նախադասության ստորոգյալը կիրառվում է ըղձական եղանակով։ Այս առումով դեր է խաղում նաև շարադասությունը. առաջադաս

նախադասությամբ է պայմանավորվում վերջադաս նախադասության ստորոգյալի քերականական ձևավորումը։

Համադասական կապակցության մեջ բարդ նախադասության երկու մասերը միմյանց նկատմամբ այնպիսի խիստ կախվածության հարաբերության մեջ չեն, որպեսզի կարելի լիներ մեկը ստորադասել մյուսին. ճիշտ է, այս դեպքում էլ մասնակի կախվածություն գոյություն ունի այնքանով, որքանով բարդության առաջին մասը որոշ դեպքերում պահանջում է, որ երկրորդ մասը քերականական համապատասխան ձևավորություն ստանա. այն է՝ առկա է դառնում շարադասական որոշ կաշկանդում և ստորոգյալների կիրառության համապատասխանություն։

Երկրորդ մասի մեջ մասամբ որոշ բառերի կիրառությունը պայմանավորվում է առաջին մասով։ Այդպես է նաև արտաբերման եղանակը. բարդ համադասական նախադասության երկրորդ մասը չի արտաբերվում այնպես, ինչպես այն կարտաբերվեր առանձին լինելով։ Չնայած սրան, այնուամենայնիվ այդ տեսակ կախվածությունները մի նախադասությունը չեն դարձնում մյուսի համար լրացում։

Եթե բարդ նախադասության երկու մասերը հակադրությամբ են շաղկապված, ապա դրանցից յուրաքանչյուրը հանդես է գալիս իբրև հակադրության անկախ եզր, և ոչ թե մեկը դառնում է մյուսի համար լրացում։ Եթե նույնիսկ կապակցումը հարակցական է, երկրորդ մասի հարակցական նախադասությունը դարձյալ առաջին մասի համար լրացում չէ. հարակցական նախադասությունը ձևավորվում է իբրև իրականության մեջ տեղի ունեցող մի այլ երևույթի, գործողության արտահայտություն, որ տեղի է ունեցել առաջին մասի գործողությունից անկախ, բայց առնչվում է նրա հետ այնքանով, որքանով տեղով և ժամանակով միանանում են և կապակցվում։

Համադասական նախադասության մեջ կախվածությունը արտահայտվում է այնքանով, որքանով մի գործողությանը ավելացվում է, կամ հակադրվում մի այլ գործողություն, իբրև նախորդին կից կատարվող գործողություն, որոնք կից են իրար, միատեղ, միաժամանակ են կատարվում և կամ ըստ այս պարագաների առնչվում են միմյանց հետ, և ոչ թե մեկը դառնում է մյուսի այս կամ այն անդամը և կամ դրանց առանձին լրացումը։

Նշենք նաև, որ համադասական կապակցության մեջ մի նախադասության ընդհանուր լրացական այդ բնույթը հավասար չի

տարածվում բոլոր բարդ համադասական նախադասությունների վրա. համադրական կապակցության դեպքում երկու նախադասություններ հանդես են գալիս իբրև համասարազոր անդամներ միևնույն միասնական ամբողջի մեջ։ Որքան էլ միմյանց լրացնելու տեսակետից որոշ ընդհանրություն կա բարդ ստորադասական ու բարդ համադասական կապակցությունների առանձին նախադասությունների միջև, սակայն կան տարբերություններ ևս, որոնք արդարացնում են ավանդական քերականության այդպիսի բաժանումը։ Ամենից առաջ կախվածության աստիճանը ստորադասության մեջ միանգամայն բացահայտ է, երկրորդ՝ համադասության և ստորադասության հնչերանգությունը խիստ տարբերվում է. ստորադասության մեջ տրամաբանական հաջորդականությունը ցայտուն ու բացահայտ է, ուստի և շարադասությունն ունի յուրահատուկ դրսևորումներ, որոնք բացակայում են համադասության մեջ։

Բարդ համադասական նախադասություն է կոչվում երկու ավելի կամ պակաս համասարազոր պարզ նախադասությունից կազմըված այնպիսի բարդությունը, որը քերականորեն, իմաստային և հնչերանգային մի ամբողջություն է կազմում՝ արտահայտելով համադրական, հակադրական, տրոհական, հարակցական, զուգադրական, մասամբ և մեկնական հարաբերությունները։ Բարդ համադասական նախադասության առանձին մասերը գտնվելով շարահյուսական միևնույն մակարդակի վրա, կապակցվում են այնպիսի շաղկապներով, որոնք հանդես են գալիս պարզ նախադասության միավորյալ անդամների կապակցման մեջ, ուստի համադասության մասերը իրենց ներքին փոխհարաբերությամբ նմանվում են միավորյալ անդամներին և ունեն նման հնչերանգություն։ Համադասության առանձին մասերը հաճախ ունեն միևնույն կառուցվածքը, միևնույն շարադասությունը և միանման եղանակ ու ժամանակ, որոնք սակավ են պատահում ստորադասական կապակցության մեջ։

Բարդ համադասական նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ **շաղկապավոր** և **շարահարական**: Այս վերջինները հաճախ արտահայտում են շարահյուսական ոչ լրիվ տարբորոշված հարաբերություններ. շարահարությունը համատեղում է այլևայլ հարաբերություններ, իսկ դրանց տարբերակումը պայմանավորվում է հնչերանգությամբ ու այս կամ այն նշանակության առավել ցայտուն լինելով։

Բարդ համադասական նախադասությունների մեջ առանձին նախադասությունների միմյանց հետ ունեցած հարաբերությունները արտահայտվում են համադրությամբ, զուգադրա-հակադրությամբ, տրոհությամբ, հարակցությամբ *և* մեկնությամբ։ *Սրանք էլ իրենց հերթին կարող են արտահայտել առանձին մասնակի նուրբ հարաբերություններ, որոնք իրենց ներսում տարբերվում են միմյանցից և կազմում կապակցման հարաբերությունների բարդ շղթայավորումներ։*

1. ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Համադրական շաղկապներ են և, ու, *որոնք արտահայտում են բազմաթիվ նուրբ հարաբերություններ։ Դրանց հիմնական դերը երկու կամ ավելի պարզ նախադասությունների համադրումն է միմյանց հետ, որոնք հանդես են գալիս իբրև միատեսակ, իրար համապատասխան նախադասություններ՝ առանց միմյանց հակադրվելու, զուգադրվելու կամ միմյանցից տրոհվելու։* և, ու *շաղկապները այս կիրառությամբ գրեթե միմյանցից չեն տարբերվում. եթե կա այդպիսի տարբերություն, այդ ոճաբանական է և քանակական. իբրև համադրական շաղկապ* և*-ը գրական ծագում ունի,* ու*-ի համեմատությամբ շատ հաճախ է գործածվում։*

Այն բարդ համադասական նախադասությունները, որոնք կապակցվում են և, ու *շաղկապներով, ըստ ձևի բազմազան են և բազմաբարդ։ Դրանք կարող են կազմվել մի քանի նախադասություններից ու ներկայացնել մի բարդ կապակցական և արտաքերական ամբողջություն. օրինակ՝* Մենք փող զարկինք, և արձագանքն ահավոր երկրից-երկիր որոտաձայն շառաչեց, Եվ սրտերում միլիոնավոր, բյուրավոր Ըմբոստությունն ահագնացավ ու անեց... Երբ ձգվեց ներոսական, փառավոր, Եվ կայծակներ շռնդալով շողացին, Եվ դրոշներ հազարավոր, բյուրավոր Նրա վերև արնանման դողացին *(ԵՉԵ, 193)*։ Այդ միտքը լցնում էր առաջինի կնոջ հոգին անսահման երանությամբ և (նա) յուր ալեւանց սրտի ամենաջերմ բաբախմունքով սպասում էր կռվի վախճանին *(ՐԵԺ, VII, 535)*։ Շշնջում է լռությունը միայն, և վարպետը աչքերը փակ ունկնդրում էր գիշերին և տանջվում *(ԴԴ, I, 323)*։ Անդրեյը հրաժեշտ տվեց ծերունի թագավորին, խորհրդականին եւ վերցրեց ու վերադարձան

(*Մարգարիտներ, 158*)։ Գինու բյուրեղապակյա բաժակը զնգաց դանակի մեղմ հարվածից, և այդ ձայնը անսպասելի զորությամբ ճռնչեց, լռեցրեց մնացած բոլոր ձայները (*ԲՎԻԳԵ, 298*)։

Եվ, ու *շաղկապներով կապակցվում են ոչ միայն պարզ, այլև բարդ նախադասությունները, ընդ որում համադասության անդամներից մեկը կարող է լինել պարզ նախադասություն, իսկ մյուսը բարդ ստորադասական նախադասություն. օրինակ*՝ Ալեքսանյանը... կրկին լվացվեց սառը ջրով, և այդքանը բավական էր, որ նա լարված շարունակեր աշխատանքը (*ԲՎԻԳԵ, 310*)։ Կինը հասկացավ նրանց, և այն շարժումը, որ պատրաստվել էր անել, սառեց նրա մեջ (*ԴԴ, I, 270*)։ Ահա երկու ամիս է այստեղ ենք, և խեղճ աղջիկը նիհարել ու դժգունել է ավելի, քան էր ծովի վրա (*Շիրվ., V, 444*)։ Մինասյանը հավաքեց իր ունեցած-չունեցածը, որ ոչ այլ ինչ էր, եթե ոչ իր ջարդված ճամպրուկն ու յափնջին, և կես ժամից հետո Մարությանը նրան իրենց տուն էր տանում կառքով (*Նար., VI, 383*)։ Մաշինիստը սարքեց մեքենան, և այնպես դուրս եկավ, ինչպես ես ասել էի արդեն (*ՂԱ, III, 129*)։

Հակոբյանը մտածում էր՝ իսկ չէ՞ն ասի, թե ընտանեկան հարաբերությունները միայն անձնական հարցեր են, և նրանցով ոչ ոք իրավունք չունի զբաղվելու (*ԲՎԻԳԵ, 403*)։ Թագավորն էս որ լսեց, կատաղությունը բռնեց, ու գոռաց (*Թ., III, 399*)։ Ճանապարհին մի երկու անգամ էլ էդ տեսակ ձայներ են ընկնում թագավորի տղի ականջովը, ու ամեն անգամ էլ էնպես է թվում, թե կառքը կոտրեց (*Թ., III, 311*)։ Որ մտնում են անտառի խորքը, թիկնապահները ետ են ընկնում, ու երկու եղբայրը մնում են մենակ (*Նույն տեղում, 238*)։

Եվ, ու *շաղկապներով կարող են կապակցվել տարբեր կամ միևնույն բնույթի երկրորդական նախադասություններ ունեցող երկու բարդ ստորադասական նախադասություններ. օրինակ*՝ Պարզ երևում էր, որ նրան բոլորովին այլ միտք էր զբաղեցնում, և նա չէր լսում, թե ինչ է հարցնում ընկերուհին (*Քրեստ., IX, 148*)։ Ձեր կողքի կենողը, այն հրեա այրի կինը, որ դանակներ և կողպեքներ է ծախում բակի դռան մոտ, տասը տարի է, որ կենում է, և չեմ հիշում մի ամիս, որ ամենայն ճշտությամբ վճարած չլինի սենյակի վարձը, չնայելով որ մեն-մենակ այնքան էլ ահագին ընտանիք է պահում (*«Ընտիր էջեր», 724*)։ Այդ ազդեցության սաղմն ընկել էր նրա հոգու մեջ անշուշտ այն օրից, երբ Բազենյանն ազատեց նրա փոքրիկ եղբորը կառքի կատաղած ձիերի ոտների տակ

չարդվելուց, և այնուհետև անել, զարգացել էր այն օրից, երբ ծանոթացավ այդ անձնվեր երիտասարդի հետ *(Նար., VI, 253)*։ Արչը ականջ էլ չի դնում, թե ինչ է ասում թզուկը, ու որ մի զարկ է հասցրնում, թզուկս տեղնուտեղը հանգչում է *(Թ., III, 292)*։ Արևը երկիրը տաքացնում է թե չէ, էդ զող անպիտանները լուս աշխարհք են դուրս գալիս, ու ինչ որ աչքերը տեսնում է, էլ տիրոջն օգուտ չի անում, գողանում են տանում *(Թ., III, 289)*։

Եվ, ու *շաղկապներով համադասական կապակցությունը կարող է կազմված լինել երկու բարդ նախադասություններից, որոնցից մեկը բարդ համադասական է, իսկ մյուսը բարդ ստորադասական. օրինակ՝* Անկոչ կերպով հայտնվել էր փոքրիկը, որը «ըստ օրենքի» չպետք է ծնվեր, և ուսանողի ծնողները Թիֆլիսի կոնսիստորայի հետ միասին, շտապել էին անվավեր համարել այդ բնական երևույթը, և տղեկը «օրենքով» հայր չուներ *(ՎՓՀՀ, 346)*։ Նա գլխի շարժումով բարևեց բոլորին, որոնցից շատ շատերին գիտեր պարտիզական աշխատանքից, և նստեց հետևի նստարանից մեկի վրա, ու այդ ժամանակ նրան մոտեցավ ընկերներից մեկը *(Բ. Վերդյան)*։

Եվ, ու *շաղկապներով կապակցվում են նաև երկու բարդ համադասական նախադասություններ. օրինակ՝* Սպասիր այստեղ, քեզ կբերեմ կնոջ վերհազգեստներ և հետո ինձ հետ միասին կմըտնենք. ներքինի չկա *(Փափ., 523)*։ Իսկույն փաթաթեցի, կապեցի. ու մի քիչ անց հանգստացավ, ու իր աթոռի վրա կծիկ եկավ քնեց *(Թ., III, 127)*։ Երեկ երեկոյան հայրս տուն վերադարձավ, իսկ եղբայրս չկա, և անշուշտ սպասել են նրան, բայց հույսներս չենք կտրում: Սա ինձ շատ է տանջել, բայց ես համբերությամբ տարել եմ, և կգա՞ դրա վերջը արդյոք, ոչ ոք չի կարող ասել:

Այս բազմազան կապակցությունների առանձին մասերը իրար հետ արտահայտում են տարբեր հարաբերություններ. այսինքն՝ և, ու *շաղկապով կապակցվող համադասական նախադասությունները հանդես չեն գալիս միշտ միևնույն իմաստով. դրանք կարող են միմյանց նկատմամբ արտահայտել ժամանակի, պատճառի, հետևանքի և այլ նուրբ հարաբերություններ, որոնք երբեմն համատեղվում են միմյանց հետ և դժվարացնում դրանց ստույգ սահմանումը։*

Երբ համադասական կապակցության առանձին մասերը կազմըված են բարդ ստորադասական նախադասություններից, այդ

այդպիսի կապակցության բնույթը որոշվում է բարդ ստորադասական նախադասության մեջ մտնող գլխավոր նախադասություններով. այդ նշանակում է, որ երկու բարդ ստորադասական նախադասությունների գլխավոր նախադասությունները կապակցվում են իբրև առանձին պարզ նախադասություններ. օրինակ՝ Ջաֆարը չգիտեր, որ Սանթրոսյանը եկել է, և երբ Օսանը ավետեց նրան որդու գալուստը, նա ուրախությունից մոռացավ Հեղինեի հետ ունեցած վրդովեցուցիչ խոսակցությունը *(Նար., III, 175)։ Այս նախադասության մեջ և շաղկապը կապակցում է երկրորդ գլխավոր նախադասությունը, որ հաջորդում է՝* երբ Օսանը ավետեց... *երկրորդական նախադասությանը։*

Իսկ եթե իբրև համադասության մասեր միմյանց հետ կապակցվում են մի պարզ և մի բարդ ստորադասական նախադասություններ, ապա կապակցության բնույթը որոշվում է պարզ նախադասության և բարդ ստորադասական նախադասության գլխավոր նախադասության հարաբերությամբ։ Օրինակ՝ Քու շնորհիվ էս գիշեր՝ կես գիշերին մենք ազատվեցինք կախարդանքից, ու իմ պալատը, որ դարձել էր անտառի մի հին տնակ, նորից դարձավ առաջվան պալատը *(Թ., III, 223)։*

Ստացվում է այսպես՝ Քու շնորհիվ էս գիշեր՝ կես գիշերին մենք ազատվեցինք կախարդանքից, ու իմ պալատը նորից դարձավ առաջվան պալատը: *Համեմատիր նաև հետևյալ նախադասությունը.* Քեռի Հովակիմը հայացքը ուղղեց դեպի ավազ որդին, և բոլորը հասկացան, որ հիվանդը մեծ վիշտ է ապրում *(ԲՎԻԳԵ, 390)։* Մոմը լուսավորում էր նրա դեմքի կեսը, և, երբ կապույտ ծուխը բարձրանում էր այդ լուսավոր կողմով, թվում էր, թե շարժվում են նրա զանգուրները *(ԱԲԵ, 564)։*

ԵՎ, ՈՒ *ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ*

Բարդ համադասական նախադասության մեջ ժամանակային հարաբերությունը արտահայտվում է երկու մասերի ստորոգյալների առանձին գործողությունների միջոցով։ Մասերի գործողությունները կարող են արտահայտել միաժամանակություն, այսինքն՝ երկու տարբեր գործողություններ կատարվում են միաժամանակ։ Միաժամանակությունը լինում է լրիվ ու մասնակի։ Երբ երկու նախադասությունների առանձին գործողությունների կատարման ժամանակընթացը իր սկզբի և վերջի ժամանակապահերով

համընկնում է, այդ նշանակում է, որ միաժամանակությունը լրիվ է, իսկ եթե գործողություններից մեկը արտահայտվում է տևական ժամանակով, իսկ մյուսը համընկնում է նրա միայն մի պահին, ապա միաժամանակությունը մասնակի է։

Երկու մասերի գործողությունները միաժամանակությունից բացի արտահայտում են հաջորդություն, այն է՝ մի գործողության ժամանակին հաջորդում է մյուս գործողության ժամանակը՝ առանց միմյանց հետ համընկնելու։ Նայած համադասության մասերի գործողությունների, դրությունների միաժամանակության ու հաջորդության և ստորոգյալների ժամանակային անորոշության՝ հիշյալ երևույթները կարող են դրսևորել առանձին նրբություններ։

ա) *ԵՎ, ՈՒ* ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ՄԻԱԺԱՄԱՆԱԿՅԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բարդ համադասական նախադասության մեջ միաժամանակություն կարող են արտահայտել ոչ միայն երկու, այլև մի քանի այնպիսի նախադասություններ, որոնք մտնում են միևնույն համադասության կազմի մեջ։ Առանձին նախադասության ստորոգյալները կարող են լինել թե՛ բայական և թե՛ անվանական։ Միաժամանակություն արտահայտում են գերազանցապես համադասության առանձին մասերի ստորոգյալների միևնույն ժամանակները։ Ըստ այս ժամանակների էլ միաժամանակությունը լինում է լրիվ և մասնակի։ Պարզ է, որ տևական ժամանակ արտահայտող անցյալի անկատարի հետ, անցյալ կատարյալը չի կարող լրիվ միաժամանակություն արտահայտել։ Այժմ տեսնենք միաժամանակության դրսևորումներն առանձին ժամանակների քննությամբ։

Սահմանական եղանակի ներկա ժամանակով արտահայտված միաժամանակությունը կարող է լինել լրիվ և մասնակի։ Ահա լրիվ միաժամանակության օրինակներ. Դաշտից սուրում է զով մարմանդ քամին առավոտի, Ու վառվում է վերջին լույսով կրակը այն կարմիր կետի *(ՉԸ, 255)*։ Բայց Գարիբալդիի մեծ ոգին, որ միշտ գլխիս վերևն է, խրախուսում է ինձ, և արդեն նրա ոգով եմ ես մխիթարվում այս աշխարհում *(ԱԻԵ, 188)*։ Կա Մեծարենց, կա Տերյան, և բազում ուրիշ պոետներ կան *(ՉԸ, 180)*։ Հայերը միմյանց վրա գոռում են, միմյանց հրամայում, և ոչ մեկը մյուսին չի լսում *(Քրեստ., IX, 37)*։ Կոկորդս մի խեղդող զգացմունք է քերում, և պատրաստվում եմ ես երգել խանդով քաղցրությունը, որ կար այդ օրերում *(ՉԸ, 457)*։

Սահմանական եղանակի ներկա ժամանակով միաժամանակությունը լրիվ է, երբ համադասության երկու կամ ավելի մասերի ստորոգյալների գործողությունները սկսվում են միաժամանակ և ապա շարունակվում. օրինակ՝ Բորբ աչքերով նայում են մեծ, խավարակոռ զանգվածին, Ու փռռվում է սիրտը նրանց որպես նրդեն արեգնածին *(ՁԸ, 255)*։ Այստեղ ամենքը՝ իշխանն ու իր կինը, պալատականներն ու հյուրերը իրար են անցնում, և ամեն մեկն ուզում է իմանալ, թե ինչ պատահեց *(ԱՁ, V, 415)*։

Ներկա ժամանակում միաժամանակությունը մասնակի է լինում այն դեպքում, երբ համադասության մասերից մեկի ստորոգյալի գործողությունը արտահայտվում է տևական, մշտակատար ժամանակով, իսկ մյուսի ստորոգյալի գործողությունը կատարվում է վայրկենական և մտնում է այդ տևական, մշտակատար գործողության մի որևէ պահի մեջ. ըստ որում այս վերջինի գործողության ժամանակը կարող է ընկնել նախորդի գործողության ժամանակի մեջ, այն է՝ նախորդի գործողության ժամանակը շարունակվում է, իսկ վերջինը իբրև վայրկենական գործողություն, դադարում է. և կամ երկուսն էլ միաժամանակ վերջանում են, սակայն մյուսը սկսված է լինում շատ վաղ. օրինակ՝ ժամանակը անց է կենում, էս աղջիկները մեծանում են, ու մի օր էլ մեծ աղջիկն ասում է *(Թ., III, 275)*։ Ապրում է բոլոր տարին ցամաք հաց ուտելով, և այդ ցամաք հացն էլ հանկարծ կտրվում է *(Նույն տեղում, 13)*։ *Բերված օրինակների մեջ համադասության երկրորդ մասի ստորոգյալների գործողությունները վայրկենական են, մանավանդ վերջին օրինակում* կտրվում է *ստորոգյալի ոչ տևական գործողությունը և ընդգծվում է* հանկարծ *ձևի պարագայով։*

Ներկա ժամանակում միաժամանակությունը շատ ավելի պարզ է արտահայտվում, երբ համադասության մասերի ստորոգյալները արտահայտվում են մշտապես տևող կամ շարունակաբար կրկնվող սովորութային գործողություններով. օրինակ՝ Գելի ոհմակն էլ ձմեռը նամփա կտրելիս իրար ետևից է գնում՝ ծլլաշարուկ, ու միշտ ամենից ուժեղն ու փորձվածը առաջին է գնում *(Թ., III, 105)*։

Միաժամանակություն կարող է արտահայտել ներկա ժամանակով կիրառվող ամեն տեսակի ստորոգյալ, այսինքն՝ բայական, անվանական, պարզ, բաղադրյալ, գլխավոր և երկրորդական ժամանակներով արտահայտված. ըստ որում այս բոլորը փոխադարձա-

քար կարող են միմյանց հետ կիրառվել և միաժամանակություն արտահայտել. օրինակ՝ Օդը լիքն է թարմությունով ու բուրմունքով, թռչունների ծլվլոցով ու ջրի կարկաչով, և նրանց հետ միախառնըվելով հնչում են մարգերում ու այգիներում աշխատողների երգերը *(Թ., III, 227)*։ Վաղուց թեև իմ հայացքը անհայտին է ու հեռվում, ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում *(Թումանյան)*։ Տեսեք, ինչպես խավար է, ինչպես մութ, և դեռ ով գիտե ինչ տանջանքներ կան մեզ համար *(ՂԱՀ, 39)*։ Ներքևում խորը կանաչին է տալի, և խորի մեջ թաքնված մի կակաչ ժպտում է ու ժպտում *(Թ., III, 205)*։ Ահա սայլը խուլ աղմկում է գյուղի փափուկ դաշտում, հոգնած օրորվում են եզները, արդեն մի կաքավ կանաչ սաղմոս է կարդում քարերի մեջ, և լուսաբացի հովը բերում է իրենց դեզի բույրը *(ԱԲԵ, 623)*։

Համադասական կապակցության առանձին նախադասությունները կարող են միաժամանակություն արտահայտել նաև այն դեպքում, երբ դրանց ստորոգյալների գործողությունները արտահայտվում են անցյալի անկատար ժամանակով. այդ ստորոգյալները կարող են լինել տարբեր տեսակների (բայական, անվանական). օրինակ՝ Դրսում մութը թանձրանում էր շարունակ. մառախուղը պատում էր փողոցները, լապտերների լույսերն այլևս ուժ չունեին, և անձրևը մաղում էր անընդհատ *(Փափ., 436)*։ Այգում խաղաղություն էր, ծաղկաթափ էին ծառերը, և բողբոջների փոխարեն նշմարվում էին կանաչ ու մանրիկ պտուղները *(ԱԲԵ, 127)*։ Նրա աշխույժի առջև սառցակույտ էր հալվում, և սոխակները հաճախ նրան մի աննման վարդ կարծելով՝ պար էին բռնում նրա շուրջը, օդը լցնում իրենց բոցավառ սրտից բխած խանդոտ դայլայլներով *(Փափ., 229)*։ Ամեն առավոտ թռչունը կարդում էր յուր նախարշալույսյան մեղեդին, և նրա հետ լսելի էր լինում ժրաջան մշակի երգը *(Ր., III, 472)*։ Գնում էր Հրայրը, և նրա հոգին անվերջ տագնապում էր նոր հանդիպումներից, անծանոթ միջավայրի սառնությունից *(ԲՎԻԳԵ, 33)*։

Համադասության առանձին մասերի ստորոգյալների գործողությունները նույնպես կարող են արտահայտել լրիվ և մասնակի միաժամանակություն։ Լրիվ միաժամանակությունը դրսևորվում է այն պարագայում, երբ առանձին ստորոգյալների տարբեր գործողությունները հանդես են գալիս իբրև իրար հետ շղթայակցված հատկանիշներ, որոնք անհրաժեշտաբար կամ պատահաբար միմյանց հետ են կատարվում. օրինակ՝ Փչում էր մեղմ հովիկը, ծա-

դիկները ժպտում էին, դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին, և դաշտի խաղաղ տարածությունը օրորվում էր սքանչելի պերճությամբ *(Ր., III, 471—72)*։ Ծառից ընկնում են տերևները, անավոր կանչում է կույր մոշահավը, և բոլորովին մոտիկ, դեղնած սաղարթի մեջ փայտահարը կտուցով թմկահարում է կեղևը *(ԱԲԵ, 275)*։ Վարդագույն շրթունքները երբեմն հազիվ նշմարելի կերպով ցնցվում էին, և մի թեթև ժպիտ յուր բոլոր հրապուրանքով վազում էր սիրուն դեմքի վրա *(Ր., III, 308)*։ Եվան նայում էր Բաղենյանին, և նրա հայացքը անմիտ սարսափ էր արտահայտում *(Նար., VI, 258)*։ Արևի ճառագայթները չէին թափանցում, և մենք շարունակ գնում էինք բնական ծառուղիների միջով *(Մուր., II, 16)*։

Միաժամանակությունը լրիվ է լինում նաև այն դեպքում, երբ նկարագրվում են անցյալի միմյանց հետ կատարվող տևական, կրկնվող գործողություններ, որոնք այս կամ այն չափով կապված են միմյանց հետ. օրինակ՝ Թախիծ էր, բույն էր այն աշխարհում, այնտեղ մամուռ էր միայն անում. այնտեղ տերտերն ու վաչխառուն, ու խարազանն էր այնտեղ շաչում *(ՉՐ, 385)*։ Խշտոցով իրար էին կպչում մեր ատամները, և ինչքան սեղմում էինք ծնոտները, չէր հաջողվում ատամների կտկտոցին վերջ տալ *(ԱԲՍՅՍ, 66)*։ Ման գալիս, խոսելիս շրթունքներով ծլփացնում էր, ու անկարելի էր հասկանալ, թե ինչ է ասում *(Թ., III, 211)*։

Ավելի սակավ միաժամանակություն է արտահայտում անցյալ կատարյալը, որովհետև այս վերջինը ցույց է տալիս միանգամյա գործողություն՝ առանց ժամանակային երկար տևողության։ Այս դեպքում միաժամանակությունը կարող է արտահայտվել տարբեր երևույթների միաժամանակ կատարված և վերջացած գործողություններով. օրինակ՝ Եվան հանկարծ խիստ շարժում գործեց, և նրա աչքերը փայլեցին զայրագին *(Նար., VI, 107)*։ Աչքերը վառվեցան, աղեղները լարվեցան, և սրերը զգացվեցան իրանց պատյաններում *(Ր., III, 255)*։ Վարդագույնը պատեց նրա ամոթխած դեմքը, և ազնիվ ճակատը քրտինքի ցողով ծածկվեցավ *(Մուր., II, 480)*։ Փերեզակ կնոջ աչքերի մեջ փայլեց մի դիվական կատաղություն, և նրա մեղմ դեմքը սոսկալի դարձավ *(Ր., IV, 169)*։

Այս երևույթը ավելի ցայտուն է արտահայտվում այն պարագայում, երբ համադասության ստորոգյալները ունենում են միաժամանակությունը արտահայտող առանձնահատուկ ժամանակի պարագաներ. օրինակ՝ Ապա ո՞ւր են նրանք,—հարցրեց երիտասարդը, և միևնույն ժամանակ նրա վշտահար դեմքի վրա նըշ-

մարվեցան անհամբերության նշաններ *(Ր., III, 475)*։ Քու շնորհիվ էս գիշեր՝ կես գիշերին, մենք ազատվեցինք կախարդանքից, ու իմ պալատը, որ դարձել էր անտառի մի հին տնակ, նորից դարձավ առաջվան պալատը *(Թ., III, 223)*։

Միաժամանակություն արտահայտում են նաև վաղակատար ու հարակատար ժամանակները. սրանք միաժամանակություն արտահայտում են իրենց մեջ և միմյանց նկատմամբ։ Երբ վաղակատարը տևականություն է արտահայտում, այդ երկու ժամանակները իբրև համադասության առանձին մասեր, կարող են լրիվ միաժամանակություն արտահայտել, իսկ եթե վաղակատարի մեջ չկա այդ տևականությունը, ապա միաժամանակությունը կարող է մասնակի լինել։ Ահա մի քանի օրինակներ. Մինչդեռ Աշխենը նըստած էր լուռ, անշարժ, կենտրոնացած հայացքը հառած մի կետի, և նրա միտքը, հոգին թռել էր հեռու *(Նար., VI, 395)*։ Եվ շատ կանայք նախանձել են Ալինային, ու շատ տղամարդիկ նախանձել են Սրաֆիոնին *(Շիրվ., V, 362)*։ Հասունացած արտը մնացել էր կիսաքաղ, և անվաստակելի արորը անգործ ընկած էր դեռ չվերջացած ակոսների մոտ *(Ր., III, 472)*։ Նոր ջրեր էին վարարել մեր երկրի գետերում արդեն, և մի այլ արև էր վառել մեր երկրի հուրհուրան արտերը *(ՉԸ, 469)*։ Մարդուց առաջ ձորերում ապրել են գազաններ, ու քարայրները եղել են նրանց որջերը *(ԱԲՍՅՍ, 75)*։ Տխուր ժամանակը և տխրագույն դեպքերը վաղուց իմ գրիչը դատապարտել էին անգործության, և լռությունն ինձ համար դարձել էր հաճելի հիվանդություն *(Մուր., II, 133)*։

Հարակատարը քիչ գործածվող ժամանակ է, և համադասության մեջ միաժամանակ երկու հարակատար սակավ է պատահում։ Այս պարագայում, իբրև տևական շարունակվող գործողություն արտահայտող ժամանակ, հարակատարի անցյալին համապատասխանում է անցյալի անկատարը, որին և զուգակից է դառնում հարակատարը. դրանք երկուսը իբրև համադասության մեջ միաժամանակություն արտահայտող առանձին ստորոգյալներ մեկը ցույց է տալիս սկսված ու չվերջացած, իսկ մյուսը սկսված և մնայուն հետևանքով գործողություն. օրինակ՝ Հարդով ծածկված էր նրա խոնավ հատակը, և մի քանի հնամաշ կապերտներ ծառայում էին որպես անկողին և որպես սփռոց *(ՐԾԺ, IV, 170)*։ Մոռացության փոշին էր նրանց վրա նստած, և թվում էր հեռու մի երազում նա տեսնում էր իր օրերը *(ՉԸ, 485)*։ Ամենքը զբաղված էին, և ամենքի դեմքի վրա տոնական ցնծալի արտահայտություն կար

(Նար., VI, 382)։ Ոտները մերկ էին, և նրանց ծայրերից կախված էին փափուկ մաշիկներ *(նույն տեղում, 385)*։

Անցյալի անկատարը միաժամանակություն է արտահայտում նաև վաղակատարի անցյալի հետ. օրինակ՝ Արեը դեռ նորիզոնից նոր էր փռել աղջամուղջը վաղնջական, և վաղ առավոտի ծիրանեգույն փոնին ներվում երևում էր Մասիսը կապույտ շղարշ հագած *(ՉԸ, 484)*։ Եվ մի այլ արև էր վառել Մեր երկրի նուրնուրան ատերը. Եվ մանու կացնից ազատված մեր երկրի սրբազան բարդին նրանուր խնդությամբ լցված սպասում էր երգի ու վարդի *(ԵՉԵ, 239)*։ Միֆայելի աչքերը վառվել էին մի տարօրինակ չարախնդությամբ, և նա շարունակ կրծոտում էր բարակ, ճնճուշ բեղերը *(«Ընտիր էջեր», 645)*։

Տարբեր ժամանակների ստորոգյալների արտահայտած գործողությունների միաժամանակությունը համադասության մեջ իր բնույթով կապված է տևական կամ միանգամյա լինելու հետ։ Եթե համադասության առաջին մասի ստորոգյալը արտահայտում է տևական գործողություն, կամ կիրառված է այնպիսի ժամանակով, որը գերազանցապես տևական գործողություն է արտահայտում (ներկա, անցյալի անկատար), իսկ մյուս մասի ստորոգյալը դրված է ոչ տևական ժամանակով (անցյալ կատարյալ), միաժամանակությունը մասնակի է։ Ոչ-տևական ժամանակով արտահայտված գործողությունը համապատասխանում է մյուսի մի պահին. օրինակ՝ Այսօր ճաշից ետ օրիորդը երգում էր յուր սենյակում և ես նախասենյակից որոշակի լսեցի նրա երգի մեջ Վահանի անունը *(Մուր., II, 289)*։ Ժիր երեխաներ էին, բոց աչքերով, և այնքան արագ ընտելացանք իրար *(ԱԲԱՅՅ, 26)*։ *Ոչ-տևական ժամանակը կարող է լինել նաև համադասության սկզբի մասում. օրինակ՝* Ապա քամին ֆիշ-ֆիշ դադարեց, փայլակն սկսավ շողալ մերթ ընդ մերթ, և որոտը լսվում էր երկնքում ավելի խուլ *(Մուր., II, 19)*։

Տ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.—Այս դեպքում միաժամանակությունը կարող է լրիվ լինել, եթե անցյալ կատարյալը ևս տևական գործողություն է արտահայտում... օրինակ՝ Այնտեղ մնաց նա բոլորովին անգիտակցության մեջ, և նրա շրջապատողները ամենայն զգուշությամբ աշխատում էին թաքցնել նրանից, թե ինչ էր կատարվում այդ ժամանակ հայոց աշխարհում *(Ր., III, 476)*։

Միաժամանակությունը կարող է արտահայտվել ներկայով և անցյալի տևական ժամանակներով կիրառված ստորոգյալների

միջև, ըստ որում այդպիսի միաժամանակությունը կարող է լինել լրիվ և մասնակի, որ կախված է տարբեր ստորոգյալների արտահայտած գործողությունների տևականության չափից. օրինակ՝ Այդ դաժան ծերունին սուրբ անուն առած մի զարհուրելի դև է, և մենք կանգնած ենք այժմ նրա դժոխքի ճանապարհի վրա *(ՂԱՀ, 39)։* Սարսափ է կաթում արնոտ աչքերից և կերպարանքը փոխված է բոլոր *(Թումանյան, «Անուշ»)։* Ահա գալիս է տաք շեղջի բույրը, ուրեմն ցորեն են ծեծում և կարմրել է խնձորը *(ԱԲՍՅՍ, 169)։*

Միաժամանակությունը կարող է դրսևորվել նաև ըղձական և պայմանական եղանակների ստորոգյալներով, որոնք ցույց են տալիս իրար հետ միաժամանակ կատարվող առանձին գործողություններ։ Այսպիսի գործողությունները դիտվում են ընդարձակ ժամանակի մեջ և եթե իրար չեն հաջորդում, համարվում են միաժամանակյա. օրինակ՝ Սրա գինը կիմանա միայն Անահիտ թագուհին, և բացի նրանից ոչ ոք չի էլ համարձակվիլ հագնիլ մի այսպիսի թանկագին գործվածք *(ՂԱՀ, 126)։* Այդ ժամանակ զղջումը ինքն իրեն կգար, և անհաջողությանը կհաջորդեր դարձյալ հուսահատությունը *(Մուր., II, 469)։* Թող ամբողջ աշխարհում թագավորեր երկաթը, և միայն այստեղ իշխեր կավը, քարը, փայտը... դրսից չհասներ ոչ մի հնչյուն, ոչ մի օտար աղմուկ, և ոչինչ չվրդովեր նրա հանգիստը *(ԱԲՍՅՍ, 169)։*

բ) *ԵՎ, ՈՒ* ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ՝ ՍՏՈՐՈԳՅԱԼՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՄԲ

Համադասության առանձին մասերի ստորոգյալների գործողությունները ոչ միայն միաժամանակ են կատարվում, այլև հաջորդում են իրար, այսինքն՝ սկսվում է համադասության առաջին մասի ստորոգյալի գործողությունը, վերջանում է, ապա դրան հաջորդում են մյուս մասի կամ մասերի ստորոգյալների գործողությունները։ Եթե ստորոգյալները արտահայտվում են նույնիսկ այնպիսի ժամանակներով, որոնք վերջացածություն չեն ցույց տալիս, հաջորդության մեջ պատկերացվում են իբրև այդպիսիք, և նախադասություններն էլ համադասության մեջ դասավորվում են ըստ գործողությունների հաջորդության։ Նկատելի է, որ հաջորդությամբ կատարվող գործողությունների միջև առաջանում են նաև պատճառի, հետևանքի հարաբերություններ։

Բարդ համադասական նախադասության մեջ գործողությունների հաջորդություն կարող են արտահայտել բոլոր ժամանակները,

սակայն դրանք դրսևորվում են ոչ միանման. այսպես՝ ըստ էության ներկա ժամանակով գործողությունների հաջորդություն չպետք է լիներ. եթե մի որևէ գործողություն կատարվում է խոսելու վայրկյանին, ապա մյուսը ևս պետք է այդ վայրկյանին կատարվի, որպեսզի երկուսն էլ ներկա ժամանակով արտահայտվեն։ Բայց այս պարագայում կառաջանա միաժամանակություն. իսկ որպեսզի ստացվի հաջորդություն, համադասության երկրորդ մասի ստորոգյալի գործողությունը պետք է մի փոքր ուշ կատարվի, որ չհամընկնի խոսելու պահի հետ, ուստի և ներկա չլինի։ Բայց քանի որ ստորոգյալի ժամանակները որոշակի վայրկյաններով չեն չափվում, և բացի այդ ներկան կարող է և անցյալ արտահայտել և ապառնի, այն կարող է լինել պարզապես պատմական, նկարագրական ժամանակ, ապա այդ պատճառով գործողությունների հաջորդություն համադասության մեջ դրսևորվում է նաև ստորոգյալների ներկա ժամանակների միջոցով. օրինակ՝ Գնում է, գնում. մինչև արևը մեր է մտնում, Ու մութը վրա է հասնում անտառում *(Թ., III, 219)։* Վզին տալով դուրս են անում երիտասարդ Դիվանային, և պալատը նորից ընկղմվում է գիշերային խավարի մեջ *(Նույն տեղում, 226)։* Կռանում եմ թղթի վրա, ռունգերս լայնանում են սուսամբարի հոտից, ու դողալով թերթում եմ տետրերը *(ԱԲՍՅՍ, 7)։* Փակում եմ աչքերս, և տերևների խշշոցը հիշեցնում է ինձ լուռ ընթերցանության ժամը դասարանում *(Նույն տեղում, 68)։*

Միևնույն բարդ համադասական նախադասության մեջ կապակցությունների մի մասի ստորոգյալները կարող են միաժամանակություն արտահայտել, իսկ մյուս մասինը՝ հաջորդություն. օրինակ՝ Եվ գնում են տրակտորները, գութանները ճաշում են երկաթե փոցխերը, և շարքացանները զարնան խոնավ հողի մեջ թափում են սերմեր, ծլում է բամբակը, աղջիկները քաղհանում են, ծաղկում է բամբակը, աղջիկները իրենց գոգը լցնում են սպիտակ բամբակով, ու բամբակը գնում է դառնալու գույնզգույն չիթ, աղջիկները հագնում են նախշուն չիթը, և երբ խաղում են նրանք, թրթռում է մարմինը, ճամին փրփռացնում է դեյրան, և ծաղկավոր դեյրան ծփում է, ինչպես արտը *(ԱԲՍՅՍ, 90)։*

Առհասարակ տևական ժամանակներով արտահայտված ստորոգյալների գործողությունների հաջորդությունը այնքան էլ ցայտուն չէ. դա բացատրվում է նրանով, որ տևական ժամանակները թողնում են հետևանք, կամ ավելի ճիշտ դրսևորում են անավարտություն, ուստի շատ դեպքերում գործողությունների հաջորդու-

թյունը թվում է մասնակի միաժամանակություն։ Չնայած սրան, այնուամենայնիվ հաջորդությունը արտահայտվում է նույնիսկ անցյալի անկատարով։ Համեմատիր՝ Ամբողջ քաղաքն ընկղմվում էր խավարի մեջ, և ապա հանկարծ լույսերը բռնկվում էին *(ԱԲՍՅՍ, 81)։* Ալեքսանյանը մեկ-մեկ բացում էր դրանք, և գլուխները մոտենում, ծածկում էին թուղթը *(ԲՎԻԳԵ, 323)։*

Գործողությունների հաջորդությունը ամենից հաճախ արտահայտվում է անցյալ կատարյալ ժամանակով, որովհետև այս վերջինը ցույց է տալիս միանգամյա կատարված, վերջացած գործողություն, որին հաջորդում է անմիջապես նույնանման մի գործողություն։ Այն նախադասությունը, որի ստորոգյալի գործողությունը առաջ է կատարվում, սկզբում է դրվում. օրինակ՝ Գոքորն ու Անդրին մի կողմ փախան, և քարը թմբմփալով մինչև գետը մեկ գնաց *(Թ., III, 14)։* Մի թույլ ճիչ ակամա դուրս թռավ իմ կրծքից, և ես ուժասպառ նստեցի անկողնակալիս վրա ու գլուխս թեքեցի կրծքիս *(Շիրվ., V, 373)։* Մշակների բեռները ցած դնել տվին այդ խուցերի մոտ, և նրանց Վաչագանի հետ միասին քրմապետը տարավ մեհյանի մյուս կողմը *(ՂԱՀ, 39)։* Տաշտակի մեջ ջուրը ճողփաց ուժգին և անմիջապես խլացավ մոր գիրկ ձայնի մեջ *(ԲՎԻԳԵ, 23)։* Նրանք մոլորվածի պես լուռ ու մունջ ներս մտան, և քրմապետն այդ դուռն էլ փակեց նրանց քամակից *(ՂԱՀ, 39)։* Թաթը փախցրեց, ոռնալով կոնձկոնձալով ետ գնաց, ու կտերն իրարով անցան *(Թ., III, 103)։* Քայլերս իրենք իրենց շուռ եկան դեպի այն կողմը, և ես գրեթե դողալով ցանկությունից, արագ գնացի դեպի ծառերը *(Փափ., 407)։* Մի քանի անգամ մատներս դիպան նրա լարերին, և նրանց թույլ հնչյունները հիշեցրին ինձ այն նշանավոր առավոտը, երբ Լևոնն առաջին անգամ նվագեց «Մադրիդի ջրջմոլիկը» *(«Ընտիր էջեր», 638)։* Նա դեմքը թաղեց բարձի մեջ, և նրա մտքերը կենտրոնացան այն անձի վրա, որի ձեռքը պիտի հասներ նամակը *(Նար., VI, 118)։* Ես նորից փաթաթվեցի վերմակի մեջ, ոտքերս կախեցի տաք մոխրի վրա, և քնի ու երազի սահմանում օրորվեց գիշերվա անիրական աշխարհը *(ԱԲՍՅՍ, 25)։*

Ինչպես նկատելի է, անցյալ կատարյալը գործողությունների հաջորդությունը որոշ ու մեկին է դրսևորում, սակայն այդ երևույթը հաճախ ուղեկցվում է հաջորդությունը մատնացույց անող յուրահատուկ բառերով, որոնք ավելի որոշակի են դարձնում համադասության առանձին մասերի ստորոգյալների գործողությունների հաջորդությունը. այդպիսի բառեր են՝ այնուհետև, ապա, նորից,

հանկարծ *և այլն. օրինակ՝* Մի երևույթ առանձնապես ուշադրությունս գրավեց, և այնուհետև ստուգելով էլ իրավացի գտա *(Փափ., 398)*։ Հարցրեց Կարինեն և ինքն էլ անմիջապես պատասխանեց *(ԲՎԻԳԵ, 239)*։ Երկու տող գիրը վայրկենաբար ալեկոծեց նրա մեջ սառած որդիական զգացումները՝ որպես ուժեղ ձեռքով արձակված մի քար նիրհած լիճը, և նա նորեն իր հոգու խորքում զգաց ջերմություն դեպի անցյալը *(Քրեստ., 9, 15)*։ Այդ ճանապարհով բավականին առաջ գնացին և հանկարծ նրանց աչքին մի ճրագի աղոտ լույս երևաց *(ՂԱՀ, 39)*։ Մոմճյանը սրտագին շնորհակալություն արավ տիկնոջը, և ապա երկուսը միասին խորհրդակցելով Սարյանի՝ իրենց մոտ գալու օրը որոշեցին *(Մուր., II, 284)*։

Բարդ համադասական նախադասության առանձին մասերի այլ-այլ ժամանակներով ստորոգյալները նույնպես կարող են արտահայտել գործողությունների հաջորդություն, բայց այս դեպքում, ինչպես արդեն ասվել է, առաջ են գալիս պատճառի և հետևանքի հարաբերություններ. ըստ որում համադասության առաջին մասը ցույց է տալիս պատճառ, իսկ երկրորդը՝ լինում է առաջինի հետևանքը։ Այս պարագայում գործողությունների հաջորդությունը մղվում է ետ, և առաջ են քաշվում պատճառա-հետևանքային հարաբերությունները։

Պատճառա-հետևանքային հարաբերությունները պարզ ու մեկին դրսևորվում են այն պարագայում, երբ բարդ համադասական նախադասության առաջին մասի ստորոգյալները արտահայտված են գործողություն *ցույց տվող բայով, իսկ երկրորդ նախադասության մեջ հաղորդվում է այնպիսի մի երևույթ, որ պարզապես հետևանք, արդյունք է նախորդ նախադասության կամ նախորդ մասի ստորոգյալի գործողության. օրինակ՝* Ես մտրակի ծայրով զարկում էի ծառերի տերևներին, պոկում տերևները, կամ թափահարում ծառի կախ ընկած ճյուղերը, և գիշերվա ցողը անձրևի նման թափվում էր ձիու վրա, ինձ վրա *(ԱԲՍՅՍ, 23)*։ Իրար ետևից թեթև զարկում է երեխաներին, ու իրար ետևից երեխաները դառնում են հյուսնի գործիքներ *(Թ., III, 242)*։ Անահիտը Վաչագանի բացակայության ժամանակ լավ էր կառավարում երկիրը, և ամենքն էլ գոհ էին *(ՂԱՀ, 45)*։ Հենց որ միսը ուտենք, իսկույն կմեռնենք, և դուք կզրկվեք այն մեծ օգուտից, որ մեզնից կարող եք ստանալ *(ՂԱՀ, 44)*։ Գգվեց ինձ սիրով մի ձեռք հայրենի, և ես մի գիշեր իմաստուն դարձա *(ՉԸ, 104)*։ Բայց ծառերը, արտուտները, սարեկները ու դեղձանիկները շաղ տված կորեկն արդեն վեր քաղած են

լինում, ու աղջիկը չի կարողանում հոր հետքը գտնի *(Թ., III, 319)*։ Ասաց ու զարկեց գավազանը, և պառավը դարձավ մի դաժանատեսիլ քարե արձան *(ՂԱՀ, 93)*։ Ինձ մնում էր ավելացնել իմ հիշատակարանում դարձյալ մի քանի երես, և դրանով իմ «խորհրդավոր միանձնուհու» պատմությունը կվերջանար *(Մուր., II, 133)*։

Բարդ համադասական նախադասության մեջ պատճառի և հետևանքի հարաբերություններ առաջանում են նաև այն պարագայում, երբ համադասության առաջին մասի ստորոգյալները արտահայտված են տեսողական, լսողական և հոգեկան ներքին կարողություններ, զգացումներ, իմացություններ արտահայտող բայերով, իսկ համադասության երկրորդ մասում հաղորդվում են այնպիսի երևույթներ, որոնք արդյունք են հոգեկան ներքին զգացումների՝ տեսողական, լսողական և այլ տպավորությունների. օրինակ՝ Հանկարծ որոշեց չկորցնել մոմենտը և, քանի դեռ մարդկանց մտքերը նոր էին խմորվում, ձեռք պարզեց ձայն խնդրելու *(ԲՎԻԳԵ, 229)*։ Մի խոսքով ոչ ոք չի հասկանում սրա գաղտնիքը, ու անունը դնում են «Խորհրդավոր վարպետ» *(Թ., III, 243)*։ Ախ ես տեսա քո հրաձիգներից մեկի կնոջը ու մտքիցս դուրս չի գալիս *(«Մարգարիտներ», 155)*։ Ես նորից կարդացի այն, և անցյալի քաղցր հիշատակները հուզեցին հոգիս *(Մուր., II, 133)*։ Երգում է Սարոն, ու չի կարենում աղջիկը հանգիստ նստի վրանում *(«Անուշ»)*։ Նրա հոգվո աչքերը բացվեցան, և նա սկսեց խիստ քննական աչքով դիտել ու զննել այն ամենը... *(Մուր., II, 310)*։ Այդ ես գիտեմ, և դրանից է իմ հոգին խռով *(ՆԶ, V, 6)*։ Հասան բեկը երևակայության մեջ տեսնում էր իր որդուն աղքատ, մուրացիկ, և սիրտը մղկտում էր *(ԴԴ, I, 399)*։ Այս հանդիմանությունն ավելի է գրգռում Սրափիոնի կասկածները, ու նա ասում է *(Շիրվ., V, 363)*։ Մայրս չընդդիմացավ, և մենք մեր երկու ազգականների ընկերակցությամբ ճանապարհորդեցինք *(Մուր., II, 108)*։ Ահա ձեզ տեսա, ու միտս ընկան... սիրելի դեմքեր *(Թ., «Անուշ», II)*։

Պատճառի ու հետևանքի հարաբերությունները դրսևորվում են նաև այն դեպքում, երբ համադասության առաջին մասի ստորոգյալը արտահայտում է պատվեր, հրաման, պահանջ, ցուցմունք, խնդրանք և այլն, իսկ երկրորդ մասի մեջ հաղորդվում է այն գործողությունը, երևույթը, որ կատարվում է իբրև հետևանք պահանջի, հրամանի և այլն. օրինակ՝ Մեկը աղջիկներին պատվիրում է տուն գնալ, և նրանք փայտե սանդուղքներով իջնում են ցած

(ԱՐՍՑՍ, 16)։ Վազիր, վանգը առ, և օրապահը թռնում է տեղից *(Նույն տեղում, 68)*։ Հետևյալ օրը իմ առաջարկը չընդունվեց, և մենք ուղևորվեցինք Ալաշկերտ *(Շիրվ., V, 363)*։ Բայց ասում ես դու իմ քաղաք, և չեմ հավատում քեզ *(ՎՓՀՀ, I, 198)*։ Պահանջում եմ, և դուք պարտավոր եք այդ պահանջը կատարել *(Մուր., II, 442)*։

Պատճառ և հետևանք են լինում համադասության մեջ նաև այն դեպքում, երբ համադասության առաջին մասում ստորոգյալը արտահայտում է բնական որևէ երևույթի փոփոխություն, իսկ երկրորդ մասում հաղորդվում է այնպիսի գործողություն, դրություն, վիճակ, որոնք պայմանավորվում են վերոհիշյալ փոփոխությամբ կամ հետևանք են դրա. օրինակ՝ Արդեն մոտենում է առավոտը, և նա պիտի գնար *(ՉՀ, 487)*։ Լույսը բացվում էր հետզհետե, և ապշությամբ տեսնում էի ծիսումները *(Փափ., 406)*։ Գիշերն ընկավ, մութը վրա հասավ, ու բոլոր մժղուկները մտան եղեգնուտի տաք տեղերը, քաք կացան *(Թ., III, 206)*։ Անգութ մահը միաժամանակ խավարացրեց այդ երկու արեգակները, և մութը տիրեց հայոց երկրին *(ՐԵժ, IV, 186)*։

Երբ համադասության առաջին մասում հաղորդվում են իրավական դրություն, սոցիալական վիճակ, բարոյական, իմացական հատկանիշ և այլն, իսկ երկրորդ մասում՝ դրանցից բխող որևէ գործողություն, այս դեպքում պատճառի և հետևանքի հարաբերությունը էլ ավելի ցայտուն է։ Պետք է նշել, որ առաջին մասի ստորոգյալները այդպիսի դեպքում գերազանցապես անվանական են. օրինակ՝ Նրանք բոլորն էլ շատ աղքատ ծնողների զավակներ են, և ես նրանցից ոչ թե միայն ոչինչ չէի առնում... *(Նար., VI, 111)*։ Նրանք աշխարհի տեսած մարդիկ են, և անշուշտ նրանց մեջ կգտնվեն էնպիսիները *(Թ., III, 224)*։ Բայց չէ՞ որ ես հիմար եմ, և մի՞թե արժե նեղանալ ինձնից *(Նար., VI, 127)*։ Այդ մեր իրավունքն է, և խիղճը չի տանջում մեզ *(Նար., VI, 378)*։ Մի վայրկենական ուշաթափություն եկավ Արեգնազանի վրա, և նա զգաց մի անսովոր բան *(ՂԱՀ, 81)*։ Դու իմ ազգականն ես, և ես չեմ կամենում առաջին սխալմունքիդ համար պատժել քեզ *(Մուր., II, 443)*։ Հասել էր նրանց մարդու գնալու ժամանակն արդեն, եվ հայր սատանան երեց աղջկան անվանեց «Գոռոզ»՝ Տալով կնության իշխանավորի *(ԱԻԵ, 165)*։

Պատճառի և հետևանքի հարաբերությունները համադասության մեջ արտահայտվում են նաև այն դեպքում, երբ երկրորդ մասի գործողության այս կամ այն ելքը պայմանավորված է առա-

ջին մասի մեջ հաղորդված երևույթի որևէ վիճակով կամ դրությամբ, և որի այս կամ այն կերպ լինելը առաջացնում է տարբեր հետևանք. օրինակ՝ Սակայն ճահիճը քսան քայլից լայն դուրս եկավ, ու ափից մի քանի քայլ հեռու երկուսս էլ ընկանք ցեխի մեջ *(Թ., III, 208)*։ Այդ ուրիշ հարց է, և ես դրա մասին կարևոր չեմ համարում խոսել *(Մուր., II, 442)*։ Մեկ ժամ հետո կավարտվի աշխատանքային օրը, և դռների մեջ կերևա Ալեքսանյանը *(ԲՎԻԳԵ, 134)*։

Պատճառը և հետևանքը համադասության մեջ շատ ավելի բացահայտ են, երբ համադասության երկրորդ մասն ունի հետևապես, այդ պատճառով, ուստի դրա համար *շաղկապներն ու շաղկապային կապակցությունները. օրինակ՝* Նա հարստություն ունի, և հետևապես մեր թերթը նյութապես կապահովվի *(Մուր., II, 261)*։ Այս հանգամանքը վերագրում էին նրանց վայրենությանը, և այս պատճառով կաթողիկոսները ծիծաղում էին միայն նվիրակների վրա *(ՂԱԸԵ, 400)*։ Հովվի շունը հովիվն ինքն է որ կա, և դրա համար էլ հովիվը իր շանը սիրում է իր անձի նման *(Թ., III, 126)*։

Եվ, ու *շաղկապները արտահայտում են նաև զիջական հարաբերություն, ըստ որում առաջին նախադասությունը արտահայտում է այնպիսի գործողություն, որին պետք է հաջորդեր համապատասխան հետևանքային մի նախադասություն իբրև տրամաբանական հաջորդություն, որը* և *կամ* ու *շաղկապներով կապակցվում է առաջին նախադասությանը. սակայն հիշյալ շաղկապներով կապակցվում է արդեն հենց այդ սպասվող հետևանքային նախադասությանը հակադիր նախադասություն, որ իր նախորդի համար հակառակ հիմունքի է։ Ուրեմն՝ համադասական բարդ նախադասության մեջ զիջական կապակցությունը մի տեսակ հակադրություն է, բայց հակադրություն ոչ թե առկա երկու նախադասության միջև, այլ հակադրություն երկրորդի և առաջինից տրամաբանորեն սպասվող, բայց չկիրառված նախադասության. օրինակ՝* Տեսնում են երկու զուռնաչի ու մի դհոլչի ածելով գալիս են, ու հետները հարսանիքավոր չկա *(Թ., III, 110)*։ Ալեքսանյանը նրան խիստ նկատողություն էր հայտարարել և, խնդրեմ, ահա թե ինչ ներգործություն էր ունենում այդ խստությունը *(ԲՎԻԳԵ, 213)*։ Հայրս քեզ անհամար ոսկի առաջարկեց փրկանքի համար... և դու արհամարհանքով մերժեցիր հորս պատգամավորներին *(ԱԻԵ, 285)*: Դժվարին է հիմա իմ ուղին, Եվ գնում եմ ահա ես արթուն *(ԵՉԵ, 188)*։ Մի տրտմիր, Անուշ, մի լինիր համառ, Մեր ձեռքով հանած մի ան-

միտ վիճակ, Մի խելառ դարվիշ, մի անեծք հիմար, Ու լալիս ես դու էդպես սրտանց (*Թումանյան, «Անուշ», IX*)։

գ) *ԵՎ, ՈՒ* ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԿՑԱ-ՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ

Եվ, ու *շաղկապներով երբեմն կապակցվում են երկու այնպիսի նախադասություններ, որոնցից երկրորդը ճշտում և ավելացնում է առաջին նախադասության մեջ չասված նոր երևույթներ։ Երկրորդ նախադասությունը ուղեկցվում է* այդ, այդ բանը, այդ *(այս)* բոլորը, այդ ամենը *ցուցական բառերով ու կապակցություններով։*

Եվ, ու *շաղկապները այսպիսի կապակցության մեջ ցուցական բառերի հետ կարծես հարաբերական դերանվան պաշտոն են կատարում, ուստի և արտահայտում են հարակցա-որոշիչային հարաբերություններ. օրինակ՝* Ուներ ճարգելի պատճառ, և այդ պատճառը այն էր (*Մուր., II, 262*)։ Գրեթե մի ամիս էր, որ չէր տեսել Բազենյանին, և այդ բանը առանց այն էլ մեծ կարոտ էր ճարուցել նրա մեջ (*Նար., VI, 254*)։ Զորագետն էլ մյուս կողմից զանազան եղանակներով, ճարպած ալևորի նման ճազար ու մի տեսակ ձայները փոխելով երգում էր ի պատիվ բանկազին ճյուրերի... և այս բոլորը միախառնված իմացնում, ազդարարում էին, թե ճաշերը զվարճանում են (*Թ., III, 32*)։ Օրիորդ Սանակյանը նախորդ օրը պատմել էր նրան, թե ինչ կապ կար Աշխենի և Մարությանի սպանված որդու միջև, և այդ բանը բավական զորեղ տպավորություն էր թողել նրա վրա (*Նար., VI, 384*)։ Նա միշտ առողջ է, և այդ մեզ շատ է ուրախացնում (*Մուր., II, 49*)։ Ծանոթացրեք ինձ ձեր անցյալին, որքան այդ ճնարավոր է, և դա կլինի ամենամեծ շնորհը (*նույն տեղում, 51*)։ *Բերված օրինակների մեջ՝* և այդ, և այդ բոլորը, և այդ բանը *և այլն համարյա նույն դերն են կատարում, ինչ դեր որ կատարում է* որ *շաղկապը երկրորդական նախադասությունների կապակցման գործում։ Այդ պատճառով բստ իմաստի և-ով հարակցվող այս նախադասությունները մի տեսակ երկրորդական նախադասություններ են, սակայն համադասական կապակցությամբ։*

դ) *ԵՎ, ՈՒ* ԻԲՐԵՎ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Երբեմն՝ երկու տարբեր գործողությունների զուգադրություն արտահայտելու համար օգտագործվում են և, ու *շաղկապները։ Այս*

շաղկապները հերթությամբ կարող են փոխարինվել իսկ-ով։ Համեմատիր հետևյալ օրինակները. Կալերի վրա դանդաղ շրջան են անում եզները, և կամերի վրա կանգնած պատանիները երգում են *(ԱԻԵ, 255)*։ Ձեռները ծնոտին լուռ ու տխուր, նստել էին նրանք կամերի վրա, և եզները, անտրամադիր, խիստ համրորեն քաշում էին կամերը *(նույն տեղում)*։ Սառնամանիքը ճայթում ու զազազում է դուրսը, ու ծերության տխուր մի շշունչ խոսում է ականջիս *(Թ., III, 213)*։ Կա Մեծարենց, կա Տերյան և բազում ուրիշ պոետներ կան *(ԵՉԵ, 270)*։ Նրա գլուխը հանգչում էր սառն տապանաքարի վրա, և երկայն թավամազ ծամերը ծածկել էին նրա սև մակերևույթը *(ՐԵԺ, IV, 185)*։ Արշալույսը ամենից շուտ ողջունում էր նրան, և լեռների բուրալից զեփյուռը գուրգուրում էր նրա մազերի հյուսքը *(ԱԻԵ, 273)*։

Եվ, ու *շաղկապները արտահայտում են նաև հակադրություն. օրինակ՝* Երգդ թեթև էր,—ասում ես,—և կյանքդ միայն դժվարին էր *(ԵՉԵ, 269)*։ Նրանք գալիս են միշտ լուռ, պատահաբար ու անձուկ, Եվ ոչ մի խոռ չի գալիս, երբ տարաժամ ես կանչում *(նույն տեղում)*։

Հեռու... Անխոհեմ աղջիկ, ինձ չկարողացան արգելել իմ ծնողների արտասվալից աչքերը, և այժմ դո՞ւ պիտի արգելես *(Մուր., IV, 248)*։ Գնացին Հրայրը, Կարինեն, գործարանը մնաց հեռվում. և ինքը նորից նույն մենակյացն է *(ԲՎԻԳԵ, 342)*։ Նստել էին, ով ինչպես ուզում էր, և միայն նրանք էին սեղանի մոտ, որոնք գրում էին *(ԱԲԵ, 289)*։ Մարդկային բարբառն, այնպես էր թվում, մոռացել էի, և հենց իմ կրծքում Այն սարսափելի կոինչն էր ծնվել *(«Մծիրի», XVIII)*։ Խոտն այնքան խիտ է նրանց արանքում, ու անուշաբույր թարմ օդը այնպես, Այնպես թափանցիկ *(նույն տեղում)*։

Հակադրությունը ուժեղանում է և ընդհակառակը *շաղկապով. օրինակ՝* Ազատում էին մի մարդ, որի կյանքը ոչ մի բանի պետք չէր և ընդհակառակը թույն էր մերձավորների համար *(Շիրվ., IV, 385)*։

2. ՀԱԿԱԴՐԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ա. ԻՍԿ *ՇԱՂԿԱՊՈՎ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ*

Իսկ *շաղկապը ամենաշատ գործածական շաղկապներից է. կապակցում է երկու այնպիսի նախադասություն կամ նախադա-*

սությունների երկու խումբ, որոնք հակադրվում են իրար ըստ իրենց նշանակության։ Հակադրությունը պայմանավորվում է նախադասության մեջ կիրառված առանձին անդամների և կամ ամբողջ նախադասության հակադիր նշանակությամբ. օրինակ՝ Դու գնացիր տուն, իսկ ես գնացի դաշտ: *Այս օրինակում առանց իրար ժխտելու, բացառելու կամ փոփոխելու հակադրվում են տեղի պարագաները՝* տուն, դաշտ: Դու գնացիր, իսկ ես չգնացի: *Այս վերջին օրինակում հակադրվում են ստորոգյալները մեկը իբրև դրական, իսկ մյուսը՝ ժխտական, որով ամբողջ նախադասություն է հակադրվում։ Պետք է նշել նաև, որ ստորոգյալների հակադրությամբ հակադրվում են նաև նախադասության մյուս անդամները, որովհետև մասնակցում են տարբեր գործողությունների և առանձնացվում են իբրև տարբեր և հակադիր եզրեր։*

Իսկ *շաղկապը, ինչպես ասվեց, հակադրում է երկու տարբեր նախադասություններ կամ նախադասությունների երկու խումբ. մի երրորդ առանձին նախադասություն այդ երկու հակադիր մասերից անկախ չի կարող լինել. օրինակ՝* Չէ՞ որ կենդանի մարդիկ յուր. հետ տանելը՝ այդ բավական մեծ ծանրություն է, իսկ նրանց մորթիքը տանելը՝ այդ բավական հեշտ է և թեթև *(Ր., III, 401)* Հենց տան կողքից սկսվում էր կաղնի ու հաճարի ծառերի թավ ու պառավ անտառը, իսկ տան առաջին ընկած էր մի հին կոտրած ջաղացաքար *(Թ., III, 349)*։ Ժամ առաջ նա իրեն պատկերացնում էր շատ ավելի բարձր. ունակ ու գիտուն, քան այն մարդիկ, որոնց հետ պետք է աշխատի, իսկ այժմ սարսափով տեսնում էր, որ ինքը թույլ ու անկար է *(ԲՎԻԳԵ, 34)*։ Ըստ որում յուրյանց գյուղը շատ հեռու է մնացել, իսկ գալիք սեղն արդեն մոտ է *(ՊՊԵԺ, I, 435)*։

Իսկ *շաղկապով կապակցվող բարդ համադասական նախադասությունները ունեն տարբեր կառուցվածք. դրանով կարող են կապակցվել երկու պարզ նախադասություններ, որոնք իրենց այս կամ այն անդամով հակադրվում են միմյանց ու զուգադրվում. օրինակ՝* էլմիրայի* գեղեցկությունը լավ փայլ է, իսկ կյանք, իսկական կյանք չկա *(ԲՎԻԳԵ, 343)*։ Դրանից հետո արդեն մի տաս հոգի դրանց մեջ և զորականներն ու Ապահունյաց տերը գնացին քաղաքի իրենց բարեկամների մոտ, իսկ հինգ հոգի, ինչպես Սահակ Մամիկոնյանը, Ատատ Գնունին, սրա բարեկամ և համախոհ Կոտիտ Ամատունին և ծերունի Տայեցին մնացին Սմբատ պատրիկի տանը գիշերելու *(ՍԶ, V, 291)*։ Բայց երգ ու դոփյուն խառ-

* *Բնագրում՝ էլմիրայի մոտ։*

հրվելով իրար՝ հևալով անցան անտառից անտառ, իսկ թևից հանած գնդակը ծոցում այրում էր նրան ործես հնոցում *(ՎՄԼՈ, 31)*։ Երկնքում պլպլում էին անթիվ աստղեր, իսկ հեռու արևելքում արշալույսը նոր-նոր սկսել էր բացվել *(Նար., I, 369)*։ Գզիրն առաջ է ընկնում, իսկ ես՝ մորս ձեռքը բռնած, գնում եմ դողալով *(ՍՋՄԿՊ, 35)*։

Իսկ *շաղկապով կարող են կապակցվել մի պարզ, և մի բարդ ստորադասական նախադասություն. օրինակ՝* Այս ամենը նա մտածում էր միայն, բայց այդ պահին ոչինչ ասել չէր կարող հարկավ, ուստի և գլուխը կախ հևում էր աննկատելի, իսկ դեմքի մկանները խաղում էին տանջալից *(ՍՋՀԲ, 74)*։ Նամակի վերջում ավելացնում էր, թե ինքը ամեն հնար գործ կդնի՝ որքան կարելի է, երկարաձգել պատերազմը, որպեսզի Շապուհը այդ կռիվներում զբաղված լինի, իսկ Հայաստանում ժամանակ գտնեն իրանց գործերը կարգի դնելու *(Ր., III, 479)*։ Նա ապարդյուն կերպով կորցրեց թե՛ թանկագին ժամանակը և թե՛ այն փառքը, որ յուր դասակիցները ստացան զանազան կռիվներում, իսկ ինքը բոլորովին անմասն մնաց *(Ր., III, 476)*։

Իսկ *շաղկապով կապակցվում են երկու բարդ համադասական նախադասություններ. օրինակ՝* Վրաններից մեկը երկնագույն էր, և գլխին ծածանվում էր մի դրոշակ արծվաթև վիշապի նշանով, իսկ մյուսը շիկակարմիր էր, և գլխին ծածանվում էր մի դրոշակ արծվի նշանով *(Ր., III, 478)*։

Իսկ *շաղկապով կապակցվում են երկու բարդ ստորադասական նախադասություններ. օրինակ՝* Թագավորը հրաման տվավ զորականներին, որ երթան ճաշեն և ուրախություն անեն. իսկ ինքը գնաց Անահիտի մոտ, ուր արդեն օրիորդներն ու տիկինները ճոխ սեղան սարքել, թագավորի գալուն էին սպասում, որ հացի նստեն *(ՂԱՀ, 60)*։ Խառնաձայն աղմուկը կարող էր երկարել, եթե Սմբատ պատրիկը և ծերունի Սարգիս Տայեցին հանդարտություն չհրավիրեին, իսկ երբ համեմատական լռություն իջավ, խոսեց ծերունի Տայեցին *(ՍՋ, V, 290)*։ Մահճակալին նստած՝ նա ջղայնանում էր, որ ճաշն ուշացնում են, իսկ երբ այն վերջապես մատուցեցին, նա հազիվ մի քանի պատառ բերանը բան դնելով, մի կողմ հրեց և առաջինը, և երկրորդը *(Ճաթ., 520)*։ Քանի Վառոն խոսում է, բոլորը լուռ են, իսկ երբ նա վերջացնում է, նորից ձայներ ու ձեռներ են բարձրանում *(ՍՋՄԿՊ, 135)*։

Բարդ ստորադասական նախադասությունները կարող են

բազմաբարդվել միավորյալ նախադասություններով. օրինակ՝ Ամեն առավոտ, երբ կհայտնվեր նա յուր տիրոջ մոտ, միշտ նրա բերանում պատրաստ էր մի նոր ծիծաղելի համբավ, մի նոր ուրախություն, որով նա կվաներ յուր տիրոջ թախծությունը. իսկ այս առավոտ ներս մտավ նա տրտում դեմքով, և միայն յուր վառվռուն աչքերով նայեց Սամվելի երեսին՝ տեսնելու, թե ինչ տրամաբանության մեջ էր սիրելի տերը, և ապա լուռ կերպով սկսեց յուր գործը *(Ր., III, 489)*։

Իսկ *շաղկապով կարող են կապակցվել երկու խումբ միավորյալ նախադասություններ, որոնցից մի խումբը ունի երկրորդական նախադասություն. օրինակ՝* Դուք չեք սիրել նրան իսկական մտքով, խաբել եք ու հաշմանդամ դարձրել, իսկ այժմ հրաժարվում եք նրանից, սոսկում այն հենակներից, որոնց օգնությամբ նա այժմ շարժվում է *(ԲՎԻԳՆ, 338)**։ Ամեն անգամ, երբ շրջկենտրոնից բժիշկը գալիս էր Համիկի մոտ, Աշխենը նույնպես հայտնվում էր նրանց տանը, հետաքրքրվում էր հիվանդության ընթացքով, ուղարկում էր Նիկիտային դեղորայքի հետևից, իսկ ինքը նստում էր աղջկա անկողնու մոտ, պատմում էր ռազմաճակատում մեր զորքերի առաջխաղացման մասին, իր ամուսնու, որդու մասին, զանգատվում էր նրանից նամակներ չունենալու համար, հետո սկսում էր որևէ զվարճալի պատմություն անել և ստիպում էր նրան ժպտալ *(Ճաթ., 495—496)*։

Իսկ *շաղկապով կարող են կապակցվել մի բարդ համադասական և մի պարզ նախադասություն. ըստ որում համադասական նախադասությունը կարող է լինել շաղկապով, կամ շարահարությամբ. օրինակ՝* Երեխայի պես հավերժության ինքնազգացում ուներ, և ներկան միշտ ներկա էր, իսկ ինքը շռայլում էր թանկ ժամանակը և նրա հետ ավյուն, եռանդ, թափ ու կորով *(ԱԻՆ, 368)*։ Լոեց քամին, շողով, շաղով շողաց արև, փայլեց օր, իսկ դու երբ պիտի ժպտաս անամպ, իմ խղճուկ սիրտ վիրավոր *(ԱԻՆ, 8)*։ Տունը դրսից ճերմակ է, տանիքը ծածկված է թիթեղով, իսկ պատրշգամբն ամեն կողմից՝ վարից վեր պատած է սղոցանաշխ տախտակներով *(ՍԶՄԿՊ, 41)*։

Իսկ *շաղկապով կարող են կապակցվել մի բարդ համադասական (շաղկապով կամ առանց շաղկապի) և մի միավորյալ նախադասություն. օրինակ՝* Պապս դարձյալ ինչ-որ խոսքեր է ասում նորս, տատս աշխատում է մեղմել պապիս ասածները, իսկ նոր-

* *Օրինակը որոշ նկատառումով փոփոխված է։*

եղբայրս պապիս մոտ սեղանի կողքին նստած աչքի տակով խեթ նայում է նորս և անձայն ծիծաղում նրա վրա *(ՍՉՄԿՊ, 14)։*

Իսկ *շաղկապով կարող են կապակցվել երկու խումբ միավոր-յալ նախադասություններ. օրինակ՝* Հայրս շարունակ խոսում, բացժին է պահանջում, իսկ Պապս լսում է ու լռում *(ՍՉՄԿՊ, 161)։* Չին առանց զարդի, սանձի ու թամբի ցատկում էր արագ ժայռերի վարսեր, ինչպես մի սովեր սևակնած ամպի թռչում էր գետեր և դար ու փոսեր, իսկ դոփյունները պինդ սմբակներից արձագանք տալով խորին ձորերում կայծեր են տալիս և հանկարծ մարում *(ՎՄԼՈ, 23)։*

Իսկ *շաղկապով կապակցվող բարդ համադասական նախադասության երկրորդ եզրում գտնվող պարզ նախադասության ստորոգյալը կարող է զեղչվել, եթե երկու նախադասության համար էլ կիրառված է միևնույն ստորոգյալը. օրինակ՝* Ճանապարհին մեզ միանում են ուրիշ տղաներ էլ, իսկ կանանց՝ ուրիշ կանայք այս ու այն բակից, մենակ կամ խմբով, որը երեխան գրկին, որը գույպան ձեռին *(ՍՉՄԿՊ, 133)։* Ես ազնվության, անկեղծության և երշմարտության սիրահար եմ, իսկ դուք ստության, խարդախության, անիրավության *(Մուր., II, 377)։ Փոխանակ ամբողջ ստորոգյալի, կարող է միայն հանգույցը զեղչվել։ Համեմատիր՝* Մի մասը միայն խոնեմություն է, իսկ մյուս երեքը անարիություն *(Շեքս., I, 79)։*

Երբ բարդ համադասական նախադասության անվանական ստորոգյալները ունեն միևնույն բայական հանգույցը, համադասության երկրորդ եզրի բայական հանգույցը կարող է զեղչվել. օրինակ՝ Ես շռայլ էի, իսկ նա խնայող. ես անխոհեմ էի և հանդուգն, իսկ նա պաղարյուն *(ՂԱեԺ, III, 48)։* Ավարտողի ուրախությունը, երևի, ավելի մեծ կլինի այս հաստատության առաջ, իսկ մնացողի ամոթը՝ կրկնակի *(ՍՉՄԿՊ, 171)։* Նրա հայրը մենակ էր ու չքավոր, իսկ մոսիենք՝ շատվոր ու հարուստ *(ՆՉՀ, 169)։* Բոլորը դառնում են սիրելի, իսկ Նիկոլայ Պետրովիչը՝ առավել սիրելի *(ՍՉՄԿՊ, 172)։* Ինչի իր աղջիկն այնքան տգեղ ու գեշ էր, իսկ Արևհատն այնքան սիրուն, գեղեցիկ *(ՂԱՀ, 9)։*

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.— Երբ համադասության առաջին մասի ստորոգյալները թվով տարբեր են, երկրորդ մասի ստորոգյալի զեղչումը անսովոր է։ Համեմատիր՝ Աղջիկներն ինձնից մեծ են, իսկ տղան իմ հասակի *(ՍՉՄԿՊ, 32)։*

Համադասության առաջին եզրի մի խումբ ստորոգյալներից մեկը կարող է մնալ, իսկ մյուսները զեղչվել, և հենց այս զեղչումը

կարող է շարունակվել նաև երկրորդ եզրում. օրինակ՝ Աշխարհը թվում էր մի գյուղ հասարակ, արևը՝ անտառի մեջ քնող մի մանուկ, իսկ կյանքը՝ պարզ ու մթին հանելուկ *(ՍԶՄԿՊ, 6)։*

Երբ համադասական նախադասության երկու մասերի ստորոգյալները միևնույն բաղադրյալ ժամանակի բայեր են, երկրորդ եզրում ստորոգյալի օժանդակ բայը կարող է զեղչվել. օրինակ՝ Գետինը կրկին սառել էր, իսկ երկինքը՝ ծածկվել պղտոր, կաթնագույն ամպերով *(ՆԶՀ, 72)։ Այս համաբանությամբ հնարավոր է նաև համադասության առաջին մասի ստորոգյալը զեղչել. օրինակ՝* Թող իմ սիրտը՝ բուրմունքը վարդի, իսկ ուղեղս կրակը խանձի *(ԶԸ, 303)։*

ա) *ԻՍԿ* ՇԱՂԿԱՊՈՎ ԿԱՊԱԿՑՎՈՂ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բարդ համադասական նախադասության երկու առանձին մասերի զուգադրությունը իր բնույթով խիստ բազմապիսի է. այստեղ կարող են զուգադրվել թե նախադասությունների յուրաքանչյուր համապատասխան անդամ և թե բոլոր անդամները միաժամանակ։ Զուգադրության բացահայտումը և որոշակի լինելը դրսևորվում է ամենից առաջ երկու նախադասությունների ստորոգյալների գործողությունների կամ դրությունների զուգադրությամբ, մանավանդ երբ այդպիսի զուգադրությունը առաջ է տարվում միևնույն ժամանակի ընթացքում։ Ստորոգյալների զուգադրությունից հետո իրենց զուգադրության ուժեղությամբ աչքի են զարնում նաև ենթակաները, իսկ եթե նախադասությունների այս երկու գլխավոր անդամների զուգադրությանը ուղեկցում է նաև երկրորդական անդամների զուգադրությունը, ապա դրանով ուժեղացվում է ստորոգյալների գործողությունների և ենթակաների զուգադրությունը։ Սովորաբար զուգադրվում են համադասության առանձին մասերի համապատասխան անդամները, բայց չի բացառված, որ զուգադրվող անդամները երկու պարզ նախադասությունների մեջ տարբեր կիրառությամբ հանդես գան. այս դեպքում բացառվում են միայն ստորոգյալները. օրինակ՝ Ով գիտե կանայք ինչ են անելու, իսկ մեզ միայն հետաքրքրությունն է բերել այստեղ (ՍԶՄԿՊ, *138)։ Զուգադրված են* կանայք *և* մեզ *բառերը, որոնցից մեկը ենթակա է, իսկ մյուսը ուղիղ խնդիր։*

Երբ զուգադրությունը այնպիսի գծով է տարվում, որ նախադասության շատ անդամներ են զուգադրվում, բնականաբար, զու-

գադրության ուժը կենտրոնանում է ստորոգյալների և ենթակաների վրա. օրինակ՝ Հայր-արագիլը կանգնել էր բույնի եզրին, հսկում էր նորածին ձագերին, իսկ մայր արագիլը գնացել էր ճահիճը կերակրվելու կամ կեր բերելու *(ԱԻԵ, 280)։*

Երբ զուգադրությունը կենտրոնանում է ենթակաների վրա, համադասության երկրորդ մասում ենթական անմիջապես հաջորդում է շաղկապին, իսկ եթե զուգադրությունը տարվում է նախադասությունների այլ անդամների հաշվին, ապա համադասության երկրորդ մասում առաջ են քաշվում դրանք։ Սա ցույց է տալիս, որ զուգադրությունը առանձնապես նշվում է նաև շարադասությամբ. օրինակ՝ Աստված խնայեց՝ կոպիտ ախպերը Հեռու հանդերից դեռ տուն չէր դարձել, իսկ խոժոռադեմ ալևոր հերը սկսավ փրփրած թքել, անիծել *(«Անուշ»)։* Ես սիրալիր հարգանքով ողջունեցի երկուսին, իսկ հայրս բացատրեց նրանց յուր տարօրինակ հայտարարության պատճառը *(Մուր., II, 90)։* Եվ կոպերիդ ներքև շռայլությամբ վերջին արևը իր բույրը կվառե, իսկ ժամանակը որպես հավերժական երգիչ կշշնջա անմահական բառեր *(ՉԼ, 165)։*

Այս օրինակների մեջ զուգադրությունը կենտրոնացած է ենթակաների վրա. հետևյալ օրինակներում բարդ համադասության երկրորդ մասի մեջ առաջ են մղվում նախադասության երկրորդական անդամներ, որովհետև տվյալ դեպքում դրանք են կարևոր. օրինակ՝ Այծը կանգնել էր բարձր ապալեր ժայռի կատարին, իսկ ստորոտում գայլը անդադրում ճգնում էր, տնքում ժայռն ի վեր ելնել *(ԱԻԵ, 163)։* Նրա ներքին հարկի մութ ու խոնավ սենյակներում ապրում են ստորին դասակարգի մարդիկ, իսկ վերին հարկում զանազան ընտանիքներ և անհայտ կոչման մարդիկ *(Մուր., II, 220)։* Ուսերի վրա ձգած կար ընձու մորթի, իսկ ոտները բոբիկ հագցրած էին Համադանի սպիտակ հողաթափի մեջ *(Փափ., 470)։* Թևերը ցանցառամիտ, թեթևամիտ մարդկանց համար է. իսկ կուշտ փորով, առողջ, այլև հաստատ գետնի վրա ման եկողների համար ավելորդ բաներ են նրանք *(Փափ., 316)։*

Եթե համադասության մեջ զուգադրվող նախադասությունների ենթակաները տարբեր ձևով միևնույն առարկաներն են, ապա զուգադրվում են ստորոգյալները։ Այս դեպքում երկրորդ եզրում իբրև ենթակա հանդես է գալիս գերադասապես ինքը՝ անձնական դերանունը, կամ ենթակա չի լինում. օրինակ՝ Էնտեղ իր ճոխ զգեստները հանել է դրել մոր գերեզմանի վրա, իսկ ինքը վազել է խոհանոց նորից մոխրի վրա պառկելու *(Թ., III, 330)։* Անասունները

թողել են պառկած իրենց աղբի մեջ, իսկ իրենք քուն մտել *(ՆՉՀ, 69)*։ Իշխանը խնդրեց նրանց ճաշակել, իսկ ինքը շարունակեց վերջացնել նամակը *(Ր., III, 493)*։ Չէ՞ որ մեր եզներն այնտեղ են, իրենց մշտական տեղը կապված, իսկ հիմա նստած որոնում են հանդարտ *(ՍՉՄՆՊ, 58)*։

Բարդ համադասության երկու մասերը կարող են ունենալ մի ընդհանուր լրացում, որ դրվում է համադասության սկզբում. դրանով ավելի սերտ է դառնում կապակցությունը։ Սովորաբար այդպիսի ընդհանուր բառերը պարագաներ են և վերաբերում են զուգադրվող երկու նախադասություններին հավասարապես. օրինակ՝ Վերջը դուրս է գալիս մի բացատ, բացատում տեսնում է արծաթից, ոսկուց ու անգին քարերից շինած մի պալատ, որ կրակի նման էրվում է, արևի նման լույս տալիս, իսկ ներսից լսվում են երաժշտության ներդաշնակ, դրախտական ձայներ *(Թ., III, 340)*։ Երեսուն տարվա մեջ տասնումեկ աղջիկ բերի իմ ամրացը, իսկ դու եղար տասներկուերորդը *(նույն տեղում, 347)*։

Բարդ համադասության մեջ կարող են նախադասության երկրորդական անդամները ևս զուգադրվել, և այն էլ ոչ միայն միմյանց հետ, այլ տարբեր անդամների։ Այս առնչությամբ երբեմն ենթական զուգադրվում է խնդիրների հետ։ Երբ զուգադրությունը ծանրանում է համադաս նախադասությունների երկրորդական անդամների վրա, երկրորդ մասում զուգադրվող անդամը անմիջապես հաջորդում է իսկ *շաղկապին. օրինակ՝* Հարկ չկա ասել, որ կարևոր խորհուրդներն ու հրահանգները ես էի տալիս, իսկ ժողովրդի առաջ միայն ինքն էր երևում *(Մուր., II, 114)*։ Դեռ մարտ ամսին ամենուրեք սպիտակին էր տալիս ձյունը, իսկ ապրիլի սկզբին ձյունը մի անգամից հալվեց *(Ծաթ., 474)*։ Նրա հետևում լոկ անապատն էր փռված հոլանի՝ լույսերի ծոցում, իսկ գլխի վերև արևն էր նազում շափյուղյա վարսերն անծիր տարածուն *(ԱԻԵ, 116)*։ Սարսափով տեսավ՝ մթին խոռոչում մի դաժան վիշապ, ահավոր, տձև, ժանտ երախը բաց, սև բոց է փնչում, իսկ խոռշերի մեջ, ոտների ներքև, գալարվում էին կծիկն իժերի *(նույն տեղում, 156)*։ Ուրիշ մեկին դա չի ներվում, իսկ նա չէ որ մեծ մարդ է *(ԱԻԵ, 176)*։ *Վերջին երկու օրինակում զուգադրված են ենթակաները և խնդիրները։*

Զուգադրության հետ զուգընթաց է համադասության երկու անդամների հակադրությունը։ Զուգադրության և հակադրության տարբերությունը պայմանավորված չէ իսկ *շաղկապի կիրառության*

առանձնահատկություններով. դա պարզապես բխում է համադասության երկու մասերի հակադրվող անդամների սուր հակադրական նշանակությունից։ Երբ զուգադրվող անդամները ունեն խիստ հակադիր նշանակություն, զուգադրությունը դառնում է հակադրություն ըստ նշանակության, իսկ ըստ կապակցության հակադրվող անդամները դարձյալ զուգադիր վիճակում են գտնվում. օրինակ՝ Եվ թևաթափը՝ պարտված ու նկուն, Փախավ, պահվտեց մացառների մեջ, Իսկ հաղթանակող աքլորը փքուն Բարձրացավ բարձր մի պատի վրա Եվ թափահարեց թևերը ցնծուն *(ԱԻԵ, 163)*։ Ցերեկը արևը խորովում էր նրանց, իսկ գիշերը ցուրտը սառեցնում էր *(Ր., III, 492)*։ *Այս բարդ համադասական նախադասության մեջ համադասության առանձին մասերի բոլոր բառերը զուգադրըված են միմյանց, բայց ըստ այդ բառերի բուն նշանակության՝ դրանք հակադրություն են.* ցերեկ-*ին հակադրվում է* գիշերը, արև-*ին՝* ցուրտը, խորովում էր *ստորոգյալին՝* սառեցնում էր *ստորոգյալը։ Համադասությունը հակադիր է համարվում նաև, երբ երկրորդ նախադասությունը իր նշանակությամբ չի համապատասխանում առաջինից սպասվող արդյունքին. օրինակ՝* Քեզ համար չկա ասպարեզ, որտեղ դու անդորրության հասած չլինես. իսկ ե՞ս... ի՞նչ պահեմ իմ հանցանքը ես, բարդ է ինձ համար աշխարհը մի քիչ *(ՉԸ, 110)*։ Դու դասի ես գնում, դիպլոմային աշխատանք ես կատարում, իսկ ես թրև եմ գալիս փողոցներում *(ԲՎԻԳԵ, 18)*։ *Համեմատիր նաև հետևյալ օրինակը.* Ուրեմն հայրս պիտի պառկի, իսկ նա ազատ ման գա, ուրեմն մենք՝ մայրս ու երեխաները տխուր պիտի նստենք հորս անկողնու մոտ, իսկ նրա լավ հագնված երեխաները օղեր ու գնդակներ խաղան *(ՍՁՄԿՊ, 28)*։

Հակադրությունը խիստ ուժեղանում է, երբ հակադրվող անդամը երկրորդ մասում կրկնվում է, և կամ իսկ *շաղկապից անմիջապես հետո դրվում է* ընդհակառակը *շաղկապը, որը փաստորեն նշում է հակադրությունը և ձևավորում. օրինակ՝* էապես էլ բոլոր էն երկրներում, որտեղ ջուրը վաղ է մարդուն ընկերացել, ինչքան էլ թեկուզ աղքատ ու անբերրի երկրներ լինեն, էն բոլոր տեղերը մարդակերություն չկա. իսկ, ընդհակառակը, էն երկրներում, որտեղ ջուն չկա, ինչքան էլ թեկուզ լիքն ու բարեբեր երկրներ լինեն, էն երկրներում մինչև էսօր էլ շարունակվում է մարդակերությունը *(Թ., III, 124)*։ *Կրկնության համար տես նախորդ պարբերության նախավերջին օրինակը և համեմատիր.* Երբ աշխարհը թվում էր մի գյուղ հասարակ, արևը անտառի մեջ քնող մի մանուկ, իսկ կյանքը, կյանքը պարզ ու մաքուր հանելուկ *(ՍՁՄԿՊ, 6)*։

Սովորաբար իսկ շաղկապով հակադրվում (զուգադրվում) են երկու պարզ նախադասություններ. այսպիսի հակադրությունը լինի առանձին բառական, թե ամբողջ նախադասությունների, շատ պարզ է։ Համեմատիր՝ Ես դյուրագրգիռ էի, իսկ նա պաղարյուն, ես շռայլ էի, իսկ նա խնայող, ես անխոհեմ էի և հանդուգն, իսկ նա խոհեմ և համեստ, ես անհոգ էի, իսկ նա հոգացող *(ՂԱԵԺ, III, 48)։*

Համադասության առանձին մասերը կարող են ներկայացնել պարզ, համադասական, բարդ ստորադասական, միավորյալ նախադասություններ, և կամ մի մասը կարող է այդպիսին լինել, իսկ մյուս մասը, ընդհակառակը, ներկայացնել մի պարզ նախադասություն։ Օրինակ՝ Ես քեզ հրավիրած թանկ հյուրի նման իմ պալատն ընդունեցի, ուտեցրի, խմեցրի, քնեցրի, իսկ դու իմ լավության փոխարեն էդպես ես ետ վճարում *(Թ., III, 341)։* Դրա համար հարկավոր չէ հեռու երթալ. քո քաղաքի մոտ մի մեծ գետ կա, նրա ափին մի եղեգնուտ կա, որ մարդի ոտք ընկած չէ դեռևս, որովհետև այն տեղը սուրբ և անմատչելի է համարվում, իսկ շատերն էլ կարծում են, որ այնտեղ աներևույթ ոգիք կան *(ՂԱԵԺ, 322)։* Ամեն առավոտ թռչունը կարդում էր յուր նախարշալույսյան մեղեդին, և նրա հետ լսելի էր լինում ժրաջան մշակի երգը: Փայլում էր մանգաղը, եռում էր գործը, և ոսկեղեն հունձքը յուր լիառատ բեղմնավորությամբ պարգևատրում էր վաստակաբեկ շինականի աշխատանքը. իսկ այս առավոտ չկար հնձվորը, չկար և հերկավորը. հասունացած արտը մնացել էր կիսաքաղ, և անվաստակելի արորը անգործ ընկած էր դեռ չվերջացրած ակոսների մոտ *(Ր., III, 472)։*

Հակադրությունը ամենից հաճախ դրսևորվում է ստորոգյալի և ենթակայի միջոցով։ Այս վերջինները իբրև նախադասության գլխավոր անդամներ ավելի ցայտուն են արտահայտում այն. դրանց հաճախ կողմնակիորեն օժանդակում են երկրորդական անդամները, որով ամբողջ համադասական բարդ նախադասությունը կառուցվում է իր անդամների հակադրության ուղիով. օրինակ՝ Եկան իրենք կռվով, երգով զրավեցին կայանը մեծ, իսկ թշնամին փախուստ տվեց ու քաղաքում պատսպարվեց *(ՉԸ, 253)։* Ինչո՞ւ ծիտը կարողանում է թռչել, իսկ մարդը չի կարողանում *(ՆՋՀ, 168)։* Նրանք բոլորն էլ գիտեն ինչ պիտի անեն վաղը, իսկ ես ոչինչ, ոչինչ չգիտեմ *(ՍՋՄԿՊ, 175)։* Աղջիկն իսկույն հացի վրա ընկավ ագահությամբ, իսկ տղան իր հացը երկու կտոր արավ, մի կտորը ծածկաբար թաքցրեց մի անկյունում, իսկ մյուսն ուզում էր բաժանել իր-

մոր հետ *(Փափ., 326)*։ Մեկը յուր առաջնորդ ունենալով եկեղեցականներին, աշխատում է պահպանել հին դրությունը՝ Արշակունիների փայփայված գահը, իսկ մյուսը առաջնորդ ունենալով քո հորը և քո փեսուն, կամենում է ոչնչացնել հինը և ստեղծել մի նոր իշխանություն *(Ր., III, 551)*։ Առաջ մենք էինք որսում մացառների մեջ թաքնված անասուններին, իսկ այժմ մեզ են որսում մացառների մեջ թաքնված դարանագործները *(Ր., III, 554)*։

Հակադրությունը կարող է արտահայտվել նաև համադասության առանձին մասերի երկրորդական անդամների միջև, լինեն դրանք որոշիչ, հատկացուցիչ, խնդիրներ, պարագաներ. օրինակ՝ Նա սրի և բազկի հաղթություն էր, իսկ դա խելքի և ռազմագիտական հնարագիտության հաղթություն էր *(Ր., III, 420)*։ Լուսանկարը ներկայացնում է մի գեղեցիկ, մի կայտառ օրիորդ, որի աչքերը երջանկությամբ և չարաճճի կերպով ժպտում են, իսկ հայելու մեջ տեսնում էի սաստիկ նիհար, սաստիկ գունատ, կարծես ծերացած մի աղջիկ, որի անկենդան, մեքենայական հայացքը կարծես ասում է... *(Նար., IV, 55)*։ Այնտեղ՝ կից սենյակում, մարդը պատրաստվում էր ավանդելու իր հոգին, իսկ այստեղ ուրանում էին այդ ոգու գոյությունը *(Շիրվանզադե)*։

Բացի զուգադրությունից ու հակադրությունից, իսկ *շաղկապը համադասության երկու մասերի միջև երբեմն արտահայտում է, այնպիսի հարաբերություն, որ ինքնին անհամապատասխանություն է. այսինքն՝ կապակցվող նախադասությունների միջև բացակայում է նշանակության հավասարությունը. երկրորդ նախադասությունը արտահայտում է լրացում, հավելում և ոչ թե զուգադրում, հակադրում, ուր երկու մասերը նշանակությամբ հավասար են։ Այսպիսի կապակցությունը կոչվում է հարակցական. օրինակ՝* Ահա այս խառնիխուռն տպավորությունները նրանցից շատ հեռացան, իսկ այժմ ավելի չարչարում, քան թե հանգստություն էին տալիս *(ՂԱՀ, 59)*։ Գարնան անտառն այնպես է գրավում, ինչպես քաղցածին ճոխ սեղանը, իսկ բակերում այնքան խաղ կա *(ՍԶՄԿԳ, 166)*։ Եվ ունայնաշունչ հողմը կշաչե ձեր ոսկորների քարերի վրա, իսկ վայելելու դուք միշտ ապիկար՝ երազն այս չքնաղ, հեքիաթն այս ոսկյա *(ԻՍԵ, 108)*։

Իսկ *շաղկապով կապակցվում է նաև այնպիսի բարդ համադասական նախադասությունը, ուր երկրորդը դուրս է բերվում առաջին նախադասությունից իբրև եզրակացություն, իբրև պընդում. ըստ որում համադասության առաջին մասից երկրորդ մա-*

սում մեջ են բերվում որոշ բառեր, որոնց վերաբերում է երկրորդ մասի հաղորդումը, պնդումը. օրինակ՝ Նա տգետ, շահասեր ծնողների բռնության զոհ էր. իսկ այդպիսի զոհերի այն ժամանակներում քիչ չէինք հանդիպել *(Նար., I, 416)։* Քննադատել կարող է ամեն ոք, միայն դրա համար պետք է ունենալ պատրաստություն և ճաշակ. իսկ այդ պատրաստությունը և ճաշակը չունեն մեզանում մեծ մասամբ այն մարդիկ, որոնք ամեն անգամ խցկվում են մամուլի մեջ դատողություններ անելու բանաստեղծության, թատրոնի և դրամայի մասին *(Շիրվ., IX, 395)։* Այս զարհուրելի տարտարոսը կարճ ժամանակում գլուխ բերված բան չէ. սրա վրա շատ տարի և շատ մարդիկ պետք է լինեին աշխատած, իսկ այդ մարդիկ մի անգամ այստեղ ընկնելուց հետո էլ լույս աշխարհ չեն տեսել *(ՂԱՀ, 57)։* Սառած ճամփեքով գնում էինք մենք՝ աշխարհի բեռը ուսերիս առած. իսկ ձյունոտ ճամփան խաբող էր ու նենգ *(ՉԸ, 223)։* Եվ արդ՝ քանզի ամեն բան ունի իրեն մի պատճառ, իսկ էն, ինչ որ պատճառ ունի, ունի նաև իրեն ճար *(Թ., III, 385)։* Եվ ահա հայտնըվում է սովը. իսկ մենք լավ ենք իմանում ինչ բան է սովը *(Թ., III, 123)։*

Այս պարագայում երբեմն յուրահատուկ հակադրություն է ստացվում, երբ համադասության առաջին մասի մեջ հիշատակված ամբողջ երկրորդ նախադասությունից վերցվում է մի մասը, կամ միայն մի բառ և յուրահատուկ ընդգծումով հակադրվում է նախորդ ամբողջին, առանձնացվում նրանից՝ ոչ միայն իր բառական նշանակությամբ, այլև նրանով, ինչ որ ասվում է այս վերջինի մասին. օրինակ՝ Կարելի՞ էր միթե այդքան երեխաներին անփութությամբ թողնել տգիտության մեջ. իսկ ինչ աղջիկներին է վերաբերում, մինչև նրանցից մի քանիսը մեր ուսումնարանը մըտցրի, գրեթե տասը տարով պառավեցա *(Մուր., II, 122)։* Էս անգամ ներմակ թռչնակը մի էն տեսակ նոխ ու շքեղ զգեստ է գցում ներքև, որ աշխարհքում հողեղեն մարդը ո՛չ ունեցել է, ո՛չ կունենա, իսկ ոտնամանները զուտ ոսկուց *(Թ., III, 331)։* Նրանցից երեքն ընտանեկան կառավարության են հատկացրած, իսկ ամենամեծը բարձրաստիճան հյուրերի համար է *(ՊՊԵԺ, II, 15)։*

Ծանոթություն.—Իսկ *շաղկապի արտահայտած վերոհիշյալ հարաբերությունները երբեմն բարդանում են հետևանքային հարաբերությամբ, այսինքն՝* իսկ *շաղկապով կապակցվում է համադասական այնպիսի նախադասություն, որի գործողությունը հետևանք է նախորդ նախադասության արտահայտած ստորոգյալի գործողության. օրինակ՝* Երկար ժա-

> մանակ զբաղված էին ճաշով, իսկ երբ նստեցին սեղանի շուրջը, այլևս ախորժակ չէր մնացել *(ԲՎԻԳԵ, 143)*։

Բարդ համադասական նախադասության մեջ իսկ *շաղկապը արտահայտում է զիջական՝ հակառակ հիմունքի հարաբերություն։ Այն, ինչ որ ասվում է համադասության առաջին մասում, երկրորդ մասում տրամաբանորեն սպասվում է դրան համապատասխան պնդում, հետևանք, սակայն հակառակ այս սպասածին, երկրորդ մասում հաղորդվում է այնպիսի մի պնդում, որ տրամաբանորեն անսպասելի է, օրինակ՝* Անցել են դարեր, դարեր, իսկ իր կամքը դեռ խոսում է ու հուզում *(ՉԸ, 336)*։ Կինը գրել էր նրան. «զգույշ լինել Սամվելից»... իսկ նա չափից դուրս բացվեցավ որդու առջև, քան թե հարկավոր էր *(Ր., III, 496)*։ Նշանի համար մարդիկ ուրախանում են, նշանը շնորհավորում, իսկ սա տխրությունից չի կարողանում խոսել *(ՍԶՍԿՊ, 151)*։ Մոռացել էին արփա Աբիլին. և հեզնում էին երազը նրա... և կարծում էին, որ մեռել է նա... իսկ ես բարձրացել, անցնում եմ կրկին *(ՉԸ, 239)*։ Ամեն ինչ հիանալի է, իսկ դուք անհանգստանում էիք *(ԲՎԻԳԵ, 189)*։ Հասմիկը էն աղջիկը չի, որ սիրտ անի պատժել ինձ... իսկ ես՝ հիմարս վախենում էի, ուզում էի փախչել գյուղից *(Շաթիրյան, 494)*։ Տեղական ժամանակով ութն է, իսկ իրենք դեռ ընդամենը չորս սենյակ են ստուգել *(ԲՎԻԳԵ, 144)*։

Իսկ *շաղկապը երբեմն կապակցում է թվարկվող շարքի վերջին նախադասությունը ոչ իբրև զուգադրություն, կամ հակադրություն, այլ իբրև եզրափակում, իբրև թվարկվող նախադասությունների շարքը փակող, ավարտող շաղկապ. օրինակ՝* Տատս պիտի մնա միշտ տատ, պապս՝ պապ, հայրս, մայրս, հորեղբայրս ու Սանամզիզին էլ պիտի մնան միշտ այդպես իրենց տեղում, իրենց գործի վրա, իսկ ես, մյուս երեխաների՝ Վարդուշի, Արտաշի ու Վարդոյի հետ պիտի մնամ միշտ երեխա *(ՍԶՍԿՊ, 18)*։ Աշոտը գնում է Թիֆլիս քեռու մոտ՝ Ներսիսյան դպրոց ընդունվելու, Ապոստոլ Կարամանիդին մտադիր է գնալ Հունաստան, Մելիտեն օգնելու է հորը՝ նրա խանութում, Ֆիլիպ Զայցևի հայրը դիմում է տվել արդեն նրան երկաթուղային դպրոց ընդունելու համար, իսկ Եվան մտադիր է այս տարի պատրաստվել և եկող տարի մտնել Հովնանյան դպրոց *(Նույն տեղում, 175)*։

Այս կարգի թվարկման դեպքում, երբ թվարկվող անդամները ունեն ընդգծվող իմաստային հակադրություն, մանավանդ երբ վերջին եզրափակող անդամն է իր իմաստով հակադրվում, իսկ

շաղկապը իր այս կիրառության հետ արտահայտում է նաև հակադրություն. օրինակ՝ Մի մայր ուներ չորս հատ որդի: Մեկը ուսած հռչակավոր ուներ ամբիոն վարժապետի, և մյուսը կրոնավոր մի քահանա սրբակենցաղ. և երրորդը՝ վաճառական, լայն ձեռնարկներ, մեծ առուծախս, իսկ վերջինը թափառական, կարիքի մեջ աղքատ ու խեղճ *(ԱԻԵ, 146)։*

Իսկ *շաղկապով հաճախ կապակցվում են ոչ միայն առանձին նախադասություններ, կամ նախադասության ավելի բարդ խմբեր, այլև ամբողջական հատվածներ։ Այս դեպքում էլ* իսկ-*ը հանդես է գալիս զուգադրող, հակադրող, զիջական և այլ հարաբերություններ արտահայտողի իր դերով։ Այսպես՝* իսկ *շաղկապով երբեմն սկսվում է մի նոր միտք հաղորդվել, որը հեռավոր, կամ մոտավոր կապի մեջ է գտնվում նախորդ հատվածում կամ հատվածներում հաղորդված մտքերի հետ։ Այս պարագայում վերոհիշյալ հարաբերությունները արտահայտվում են ավելի մեծ շրջանակի մեջ, որը նախադասության սահմաններից դուրս է գալիս. այսպես՝ Քույր Աննան հիշում է իր նախկին ընկերուհիներին, իր մորը, հորը, իր ամբողջ անցյալ կյանքը, հարազատների վերաբերմունքը. այդ ամենից հետո դրանց հետ զուգադրում է Գարեգինին՝ սկսելով առանձին պարբերությամբ.* Իսկ ի՞նչ ասեմ ես նկատմամբ Գարեգինի, որ իմ կյանքի մեջ այս դժվարատար հեղափոխությունը մտցրեց: Մի՞թե կարող էի նրան մոռանալ. նրան, որ իմ բոլոր մտքերի, խորհուրդների և գործերի հեղինակն էր, որին այնքան ուժգին, այնքան ջերմությամբ սիրեցի, բայց որն այժմ հազարավոր մղոն հեռու էր ինձանից... *(Մուր., II, 125)։*

Մի այլ դեպքում մի հատվածում պատմվում են որոշ երևույթներ, որտեղ թռուցիկ հիշատակվում են որոշ անուններ. հետագա հատվածներում իբրև լրացում կարող է տեղեկություն տրվել այդ հիշատակված անունների մասին։ Ահա այս դեպքում էլ դրանք կարող են առանձնացվել իսկ *շաղկապով. օրինակ՝* Իսկ ինչ վերաբերում է նորածինին, նրան մեր մորաքույրները զամբյուղի մեջ պնդացրին և ձգեցին ջրանցքի մեջ *(ՂԱԸԵ, 167)։*

Այս նույն ձևով էլ կարող է տեղի ունենալ հակադրությունը. Չարենցը Հայնեին ուղղված իր մի բանաստեղծության մեջ խոսում է այն մասին, թե ինչպես իր և նրա անունը կհիշվի հավիտյան, և սրան հակադրում է հետևյալը. Իսկ խնդիրը այն, որ նստել է տրզրուկի նման մեր քթին,—նա կանգնի, ինչպես սովորը, երբ արևը հասնի զենիթին *(ՉԸ, 150)։ Ինչպես տեսնում ենք,* իսկ *շաղկապով*

ակվող այսպիսի ինքնուրույն և ամբողջական հատվածները հակադրվում են, սահմանափակում են նախորդ հատվածի մեջ հաղորդվածը, նոր միտք են առաջ քաշում և իրենց մեջ պարունակում են նոր դատողություններ ու տեղեկություններ։ Համեմատիր՝ Դու ո՞վ ես, սիրուն աղջիկ: Ես մարդկերի աղջիկն եմ, Բայց ինձնից մի վախենա... Իսկ դու ո՞վ ես *(Թ., III, 240)։* —Այո, իսկ դուք ինչ է, չլինի՞ ծանոթ եք այդ պատմությանը *(Շաթիր., 510)։* Իսկ ինչո՞ւ համար: Իսկ ինչո՞ւ ինձ հետ կալանում եք և իմ հյուրերին *(ՍԶ, V, 292)։* Սառն է ջուրը, բարձր սարից է գալիս, ուր միշտ մռայլ ամպ է նստում, ամպի տակ սառույցի հաստ շերտեր:

Իսկ երբ վարարում է... կոճղեր է բերանն առնում, գազազած բաշը մեկ այս ափին տալիս, մեկ այն, նոր հուն հեղքում՝ ավերելով բոստան ու մարգագետին *(ԱԲԵ, 145)։*—Նա երևի երբեք այլևս չտեսնի իր հայրենիքը, տխուր ասաց երիտասարդը:—Մի պահ լռեցին, կարծես երեքով էլ միտք էին անում, թե ինչքան ծանր է երբեք չտեսնել հայրենիքը:

Իսկ հետո ուր գնացիք,—լռությունը խախտեց տիկին Աուլենդերը *(Նույն տեղում, 596)։*

Բ. ԲԱՅՑ ՇԱՂԿԱՊՈՎ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բայց *և* իսկ *մասամբ հանդես են գալիս իբրև համանիշ հակադրական շաղկապներ, որոնց իմաստային տարբերությունը այնքան նուրբ է, որ հաճախ շատ դժվար է բացահայտել. այդպիսի տարբերությունը երբեմն հնչերանգային բնույթ է կրում. օրինակ՝* Թերեզա մորաքույրը կանչում է ցանկապատից, որ գնամ Սամսոնի հետ խաղամ, բայց ես ձայն չեմ հանում *(ՍԶՄԿՊ, 47)։ Այս բարդ համադասական նախադասության երկու մասերը կապակցված են* բայց *շաղկապով, որ կարելի է փոխարինել* իսկ*-ով՝ առանց քերականական նշանակության դեմ մեղանչելու. տարբերությունը այն է, որ* բայց*-ը ունի ուժեղ զիջականության երանգ, մինչդեռ* իսկ*-ը շեշտում է հակադրականությունը։*

Բայց *շաղկապը* իսկ*-ից տարբերվում է իրեն հատուկ սահմանափակող նշանակությամբ, որ ամենից ցայտուն և որոշակի կերպով է սահմանագծում այդ երկու շաղկապները միմյանցից։ Բարդ համադասական նախադասության առաջին մասում յուրահատուկ հնչերանգով հաղորդվում է այնպիսի մի երևույթ, գործողություն, հատկանիշ, որ ընդհանուր բնույթ է կրում. Համադասության երկրորդ մասում դրան միանգամայն հակադիր հաղորդ-*

վում է մի մասնավոր երևույթ, գործողություն, հատկանիշ, որ նախորդ ընդհանուր հատկանիշից, գործողությունից, երևույթից քիչ բան է մնում, այսինքն՝ փոքրանում, նեղանում է հաղորդվածի թե՛ ծավալը և թե՛ նշանակությունը՝ սահմանափակվելով որոշ շրջանակներում։ Բացի սահմանափակումից բայց *շաղկապը իր այս նշանակությամբ ճշտում է նաև համադասության առաջին մասում հաղորդվածը. օրինակ՝* Ամեն ոք, ամեն ոք կարող է պարապել գրականությամբ, քննել և քննադատել, բայց պայմանով, որ ունենա և գրական պատրաստություն, և ճաշակ *(Շիրվ., IX, 400)*։ Ես մեղավոր եմ, որ խիստ հսկողություն չեմ ունեցել, բայց մի այսպիսի բան իմանալու համար քո իմաստությունն ունենալու է *(ՂԱՀ, 57)*։ Նուրբ էր արվեստը, չքնաղ, բայց մեր դարում հարկավոր էր ոչ թե արտի քնքշություն, այլ ոգու կռով և պայքար *(ՉԸ, 180)*։ Մարդը խիղճ ունի, էնպես է ասում, սրանից ավել էլ ինչ եք ուզում, բայց տղամարդը, որ նամուս ունի, լավ է իմանում ինչ պատասխանի *(Թումանյան, «Հառաչանք»)*։ Ինձնից քեզ խրատ չի հասնի, բայց, դեհ, որքան չլինի փորձված հորդ հասակի մարդ եմ *(Փափ, 587)*։ Նա պատրաստ էր ետ առնել յուր խոսքը, բայց արդեն ուշ էր *(Ր., III, 162)*։ Քո պատճառով ոչ մի խռովություն չի ծագել, բայց ես իբրև տղամարդ պարտավոր եմ հաշիվ պահանջել Մոմճյանից իմ պատիվը վիրավորելու համար *(Մուր., II, 359)*։ Բայց *շաղկապի այս սահմանափակող նշանակությունը ցայտուն արտահայտում են* միայն, միայն *թե շաղկապները, որոնք բացի դրանից նաև զիջական ու զուգադրական հարաբերություններ են դրսևորում՝ հակադրության ընդհանուր գծի վրա. օրինակ՝* Գնա, ուր ուզում ես, միայն թե ես այլևս չեմ կարող քեզ հետ ապրել *(Նար., I, 137)*։ Գնա, ես քեզ ազատություն եմ տալիս, միայն թե ինձ էլ ազատ թող *(Նույն տեղում, 136)*։ Առաջին մասը փոքր ի շատե մաքուր էր... միայն թե այստեղից էլ փչում էր չափազանց սուր հոտ *(ՄԱԾ, 342)*։

Բայց *շաղկապը արտահայտում է նաև զիջական, հակառակ հիմունքի հարաբերություն. համադասության առաջին մասում հաղորդվում է որևէ գործողություն, դրություն, որ պետք է հանդիսանար երկրորդ մասի գործողության համար հիմունք, երկրորդ մասում կատարվելիք գործողությունը պետք է բխեր դրանից, հենվեր դրա վրա, բայց համադասության երկրորդ մասում կատարվում է մի այնպիսի գործողություն, արտահայտվում է այնպիսի հատկանիշ, որ հակադիր է սպասածին, որ ոչ միայն չի բխում նախորդից, այլև միանգամայն հակառակ է. օրինակ՝* Սիրանը հանաքով բար-

կանում է վրաս, բայց թույլ է տալիս *(ՍՋՄԿՊ, 46)*։ Ա՛խ, մեր սըրտերը վառել են ճրով, բայց դեռ ապրում ենf ճեռվից fռ բույրով *(ՎՄԼՈ, 21)*։ Գիշերը վրա է ճասնում, էնfան մութ գիշեր, որ մատդ մարդի աչf կոխեիր, չէր տեսնիլ, բայց մեր վանառականի ոտի տակը էնպես լուս է լինում, ոնց որ օրը ցերեկով *(Թ., III, 340)*։ Ուտում են աչfով ամենfն Ալվարդին, բայց սերն անճայտ է դեռ նրա սրտին *(ՎՄԼՈ, 22)*։

Բայց *շաղկապով կապակցվող համադասական պարզ նախադասությունների միջև ամեն դեպքում էլ որոշ չափով գոյություն ունի հակադրություն. վերևում սահմանափակման և զիջական հարաբերությունների մեջ էլ* բայց *շաղկապի հակադրական նշանակությունը այս կամ այն չափով առկա է, սակայն բուն հակադրական հարաբերությունը արտահայտվում է նախադասության անդամների հակադիր նշանակության գծով, այսինքն՝ այն դեպքում, երբ համադասության առաջին նախադասության որևէ անդամ իր իմաստով հակադրվում է երկրորդ նախադասության նույնանման կամ սակավ դեպքերում տարբեր մի անդամին։ Այսպիսի հակադրությունը ուժեղ և որոշակի է լինում, երբ հակադրվում են ստորոգյալներն ու ենթակաները, մանավանդ երբ ստորոգյալների բառիմաստային հակադրությունը ուղեկցվում է քերականական կարգերի հակադրությամբ։*

Բայց *շաղկապով արտահայտված համադաս նախադասությունների հակադրությունը առավել անխառն է ու պարզ, երբ համադասության առաջին մասում հիշատակված որևէ ընդհանրություն, հավաքականություն արտահայտող անդամներից մեկը (կամ մի քանիսը) երկրորդ մասում առանձնացվում է և հակադրվում ընդհանուրին, հավաքականին։ Այս դեպքում հակադրությունը մշակվում է ոչ միայն այն բանով, որ առանձինը, մասնավորը իր հատկանիշներով հակադրվում է ընդհանուրին, որ ունի հակադիր հատկանիշ, այլև հենց մասնակիի և հավաքականի հակադրություն է տեղի ունենում. օրինակ՝* Ունենում է երեf աղջիկ, մինը մյուսից գեղեցիկ, բայց ամենից գեղեցիկը լինում է փոfրը *(Թ., III, 339)*։ Ամառը առճասարակ մենf ճանույfներ շատ ունենf, բայց ամենալավ ճանույfը գետում լողանալն է *(ՍՋՄԿՊ, 128)*։ Թաղում ես շատ ընկերներ ունեմ, բայց ամենից մոտն ու մտերիմը Սամսոնն է *(Նույն տեղում, 41)*։ Շատ թափառեցի, շատ բան տեսա, բայց ճացից անճրաժեշտ ոչինչ չգտա *(ԱԻԵ, 345)*։

Բերված օրինակների մեջ հակադրությունը լրիվ չէ այնքանով, որքանով հակադրությունը կատարվում է համեմատական չափով.

այս տեսակ հակադրությունը կարելի է անվանել համեմատական հակադրություն, քանի որ համադասության առաջին մասում հաղորդված հատկանիշների, գործողությունների նման հատկանիշներ և գործողություններ են հաղորդվում երկրորդ մասում, միայն համեմատաբար ավելի ուժեղ կամ թույլ. իսկական հակադրությունը այն է, երբ մասնավորը առանձնացվում և իր հատկանիշներով է հակադրվում ընդհանուրին. օրինակ՝ Մյուս աշակերտները, գործակատարները՝ բոլորն էլ զբաղված էին իրենց գործերով՝ մեկը ապրանք էր դարսում, մյուսը՝ վայր բերում, երրորդը չափում էր, չորրորդը՝ կտրում, հինգերորդը հաշվում էր, վեցերորդը՝ գնողի հետ խոսում, բայց նա որպես արձան կանգնած էր մի կողմում *(Նար., I, 410)։*

Վերևում բերված օրինակների մեջ հակադրությունը կատարվում է մի ենթակայի և նրա գործողության միջոցով, որը հակադրվում է մի շարք զուգադիր ենթակաների և դրանց զուգադիր գործողություններին։ Այսպիսի հակադրություն տեղի է ունենում նաև այն դեպքում, երբ ընդհանրապես նախադասություններից մեկի ենթական որևէ հավաքական բառ է կամ հոգնակի, իսկ մյուսի ենթական եզակի է կամ ցույց է տալիս մի առարկա. օրինակ՝ Մարդիկ վազում են. շները հաչում, բայց ես փորսող գետին եմ կպչում *(ՎՄԼՈ, 29)։*

Հակադրությունը սովորական է ընդհանրապես ենթակաների միջև, բայց այս տեսակ հակադրությունը ամրապնդվում է տարբեր ենթակաների կատարած գործողությունների, այսինքն՝ ստորոգյալների միջոցով։ Սովորաբար առաջին նախադասության ստորոգյալը արտահայտում է ցանկություն, ջանք, ձգտում մի բան անելու, իսկ երկրորդ նախադասության ստորոգյալը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ հակադիր է այդ ցանկությանը, ջանքին կամ որևէ ձևով խանգարիչ հանգամանք է արտահայտում. օրինակ՝ Ասադի մայրն աշխատում էր մեղմել ամուսնու կոպտությունը, բայց Նիգյարը չէր լսում *(ԴԴ, I; 480)։* Դե գնա, ասաց Արշոն և ուզեց ետ դառնալ, բայց միլիցիոները բռնեց նրա ձեռը *(Ս. Զորյան, «Մեր ծանոթները», 129)։* Ուզեց իբր հանգստանալ, բայց երևակայությունն այնպես գրգռված էր, որ հանգստանալ չէր կարողանում *(ՂԱՀ, 59)։* Ես էլ եմ ուզում տեսնել Ալվարդին, բայց ինչ արած որ դեռևս նրա բախտից որս չդուրս եկավ որսատա հանդից *(ՎՄԼՈ, 41)։* Ես ուզում էի թիթեռներ բռնել, բայց չէի կարողանում *(Նար., I, 306)։* Նրանք շատ խնդրեցին թեյի վրա մնա-

յու, բայց նա չմնաց (*Նար., I, 317*)։ Նա փորձեց վեր կենալ, բայց գլուխը պտտվեցավ և նորից վայր ընկավ աթոռի վրա (*Նար., I, 330*)։ Այնպես ուզում էր մոտենալ երեխային, բայց և ուժ չէր գտնում իր մեջ (*ԲՎԻԳԵ, 297*)։

Հակադրությունը համադասական նախադասության երկու մասերի միջև արտահայտվում է նաև այն պարագայում, երբ առաջին նախադասության ստորոգյալը ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որից կախված պետք է լիներ երկրորդ նախադասության որևէ համապատասխան գործողություն, բայց այս գործողությունը պարզապես չի կատարվում և կամ կատարվում է իբրև հակադիր գործողություն։ Այսպիսի հակադրությունը զիջական կապակցությունից տարբերվում է նրանով, որ չի ենթադրում, թե առաջին նախադասության ստորոգյալի գործողությունը անպայման պետք է համապատասխաներ երկրորդ նախադասության գործողությանը. օրինակ՝ Դու խոսում ես, բայց ես չեմ լսում. *սրանից չի հետևում, թե քո խոսելու ժամանակ անպայման ես պետք է լսեմ, կամ այս վերջինը պայմանավորված է առաջինով, ինչպես որ պայմանավորված են* ուտում ես, բայց չես կշտանում *նախադասությունները. այսպես նաև հետևյալ նախադասությունների մեջ՝* Հայրը կրկին անգամ մարդ ուղարկեց կոչելու որդուն, բայց որդին դեռ շարունակում էր նայել հոր և յուր քեռու գործերի վրա (*Ր., III, 492*)։ Պարզել է ձեռքը դողդոջ դեպի ցնորքն այդ կապույտ, այնքան մոտ է, այնքան մոտ՝ կշոշափի նա հիմա. Բայց ծանրացել է հանկարծ ձեռքն հանճարեղ ու հմուտ, ընկել է վար չոր կրծքին (*ՋԸ, 199*)։ Ալեքսանյանը նստեց գրասեղանի առաջ, բայց այլևս աշխատել չէր լինում (*ԲՎԻԳԵ, 312*)։

Համադասության երկու մասերի գլխավոր անդամների հակադրությունը կարող է ձևավորվել ժամանակի և տարածության օժանդակությամբ. համադասության առաջին մասում նախապես մի տեղում ստորոգյալը արտահայտում է մի գործողություն, որին հակառակ երկրորդ մասում մի այլ ժամանակ կամ մի այլ տեղում ստորոգյալը ցույց է տալիս նախորդին հակադիր գործողություն. օրինակ՝ Ուրիշ անգամ գուցե չնկատեր էլ նրանց, բայց այս անգամ ուրիշ էր (*ԲՎԻԳԵ, 295*)։ Այդ պատկերի մկներն էլ սկզբում ինձ սարսափ էին բերում, բայց շուտով տեսնելով, որ դրանք մյուս մկների նման չեն շարժվում, այլ շարունակ մնում են միևնույն տեղն անշարժ, էլ չեմ վախենում (*ՍՋՄԿՊ, 16*)։ Սկզբում ոչ ոք չէր մոտենում նրան, բայց չորս օրից հետո նա բարեկամացավ բոլորի

նետ *(Փափ., 321)*։ Երեկ երեկոյան կիսամռայլի ժամանակ եկած լինելով, մենք ոչինչ տեսնել չկարողացանք, բայց ահա արեգակը ծագել է և նկարել մեր առջև հրաշալի տեսարաններ *(Ր., III, 489)*։ Դաշտային տեղերում, սարահարթերի վրա մենք, իրավ է, մեծ հաջողություն գտանք. բայց լեռներում մեր զինվորները բոլորովին անընդունակ հայտնվեցան *(Ր., III, 518)*։

Բերված օրինակները ցույց են տալիս և ենթակաների, և ստորոգյալների հակադրություն միաժամանակ, սակայն միայն ստորոգյալների հակադրություն բայց *շաղկապով լինում է այն դեպքում, երբ համադասությունը արտահայտում է միևնույն ենթակայի երկու հակադիր գործողությունները կամ վիճակները. օրինակ՝* Նա կարող էր լավ զորապետ լինել, բայց չէր կարող լավ զորավար լինել *(Ր., III, 423)*։ Հայրս կանգնում է մի փոքր, սպասում է, որ պապս մի բան ասի, բայց երկար պատասխան չտալով հեռանում է զայրացած *(Նույն տեղում, 21)*։ Այն ժամանակվա մարդիկն էլ հենց այդպիսի մի տեղ էին փնտրում, որ ոչ վարեն, ոչ ցանեն, ոչ մրսեն, բայց ամեն ինչ ունեն *(ՂԱԲԵ, 211)*։ Գնաց դեպի դուռը, բայց դեռ դռանը չմոտեցած նա նորից վերադարձավ *(Նար., I, 305)*։ Նա շտապով դուրս գնաց, բայց իսկույն էլ վերադարձավ *(Քրեստ., IX, 146)*։

Բարդ համադասական նախադասության մեջ հակադրություն կարող է ստեղծվել ոչ միայն երկու մասերի նույնանման անդամների, այլև տարբեր անդամների միջև։ Այսպես՝ հաճախ հակադրվում է համադասության մի մասի ենթական մյուս մասի խնդիրներին, կամ ընդհակառակը. կարող են հակադրվել խնդիրները և պարագաները, այլև ուրիշ երկրորդական անդամներ թե՛ միմյանց, թե՛ տարբեր անդամների հետ. օրինակ՝ Ինձ համար անակնկալ մի հրավերք էր այդ, բայց իրենք, երևի, նախընթաց օրվանից էին դրա մասին հոգացել *(Մուր., II, 90)*։ *Այս նախադասության մեջ հակադրությունը կատարվում է երկու գծով (ինձ-իրենք՝ խնդիր ենթակա. անակնկալ-նախընթաց՝ որոշիչներ)*։ Հիմա խաղացվում էին բացառաբար ֆրանսիական նորելույթ հեղինակներ, որոնք գուցե հասկանալի են փարիզաբնակ ֆրանսիացիների համար, բայց ոչ մի տեսանկյունից ընդունելի չէին հայ թատրոնի, հայ հանդիսատեսի, մանավանդ թատերապես անհրագործելի էին անփորձ, պատանեկան դերասանների համար *(ՎՓՀՀ, I, 439)*։ Մենք թշնամուն վանեցինք մեր բերդի չորեք կողմից, բայց ոչ մեր աշխարհից *(Ր., III, 384)*։ Ճշմարիտ է էսօր էլ կան աշխարհքի զանազան մասերում

վայրենի ցեղեր, բայց մի ժամանակ, շատ հազար տարի առաջ մարդը վայրենի է եղել ամեն տեղ *(Թ., III, 123)*։

Բարդ համադասական նախադասության մեջ բայց *շաղկապը արտահայտում է փոխհատուցման հարաբերություն. եթե համադասության առաջին մասում հաղորդվում է մի այնպիսի գործողություն, վիճակ, դրություն, որ ժխտվում, կասկածի տակ է առնըվում, չի ընդունվում և այլն, ապա երկրորդ նախադասությամբ հաղորդվում է այնպիսի գործողություն, հատկանիշ, դրություն, որ փոխհատուցում է նախորդին, բռնում նրա տեղը. օրինակ՝* Եղիսաբեթի ձայնը եթե ոչ հիանալի, բայց կարելի էր ասել քաղցր էր, բայց ոչ կանոնավորված *(Նար., I, 316)*։ Այժմ, իհարկե, այլևս չէր ցավում, որ Սարյանը թողնում է յուր աղջկան, որովհետև քանի որ նա աղքատ էր, էլ ինչ միտք ուներ նրան փեսայացնել. բայց նա ցավում էր, որ Մոմճյանը խաբելով իրեն՝ հեռացնել տվավ Մովսիսյանին, որ հարուստ փեսայացու էր իր աղջկա համար *(Մուր., II, 356)*։ Սամփսոնը գյուղի առաջավոր տների զավակ չէր. բայց վերջիններից էլ չէր *(ՊՊԵԺ, II, 11)*։ Ղզըլբաշ-թուրքերը ազգային գրականություն չունեին, բայց արաբական և պարսից դըպրությունը շատ ծաղկած էր նրանց մեջ *(ՐԵԺ, IV, 385)*։ Գրականությունը հայրենիք չունի, բայց յուրաքանչյուր հայրենիք իր գրականությունն ունի *(ԱԻԵ, 364)*։

Բայց *շաղկապով արտահայտվում է նաև հարակցական հարաբերություն. համադասության առաջին մասում հաղորդվում են այնպիսի գործողություններ ու հատկանիշներ, որոնցից չեն բխում համադասության երկրորդ մասում արտահայտված գործողություններն ու դրությունները. կամ՝ ավելի ճիշտ համադասության երկրորդ մասում դրանք բերվում են իբրև հավելյալ բացատրություն, իբրև հարակից հաղորդում. օրինակ՝* Միտք եմ անում միտս ու չեմ հասկանում՝ ով է մեղավոր, բայց իմ կարճ խելքով էնքան եմ տեսնում, ապրիլ չի լինի էսպես ամեն օր *(Թումանյան, «Հառաչանք»)*։ Ամեն տարի միայն մեր քաղաքից, եթե քիչ ասեմ, հարյուր մարդ է անհայտացել, բայց ես կարծել եմ, թե լեռնցիք են գերի տարել *(ՂԱՀ, 57)*։ Ամեն բան Մոխրոտը կատարում է, բայց սիրտը ուզում է, որ ինքն էլ պար գա, ինքն էլ ուրախանա *(Թ., III, 331)*։ Մարոյի կատաղության պատճառը հայտնի էր, բայց նրա վրդովմունքը ինձ ծիծաղելի էր թվում *(ՐԵԺ, IV, 472)*։ Գործ, այո, շատ կարևոր գործ ունիմ, բայց դու ժամանակ ունի՞ս ինձ լսելու *(Մուր., II, 386)*։ Ալեքսանյանը բացեց իր առանձնասենյակի դուռը, բայց Խոջաներյանը բռնեց նրա ձեռքը *(ԲՎԻԳԵ, 205)*։

Լինում է նաև այնպես, որ հարակցական կապակցության մեջ արտահայտվում է ներքին հակադրություն, այն է՝ համադասության առանձին մասերն իրենց բառական կազմով հակադրություն չեն դրսևորում, սակայն այլաբանորեն, կամ նշանակությամբ դրանք հակադիր են. օրինակ՝ Ես ու դու շատ բաներ ենք արել, բայց այս մեկը չենք մարսիլ, կմնա մեր կոկորդում(*Քրեստ., IX, 53). առաջին մասում պետք է լիներ՝* մարսել ենք, չի մնացել մեր կոկորդում, բայց *զեղչվել է։ Այսպես նաև՝* Սակայն փորձել բեմադրել այդպիսի մի գործ աններելի հանդգնություն կարող էր լինել և վտանգավոր, բայց գիտեի, որ լողալ սովորելու համար նախ պետք էր ջուրն ընկնել *(ՎՓՀՀ, I, 430)։*

Բայց *շաղկապը հաճախ կապակցվում է ուրիշ շաղկապների, մակբայների և այլ բառերի հետ, որոնք գտնվելով համադասության երկրորդ եզրում, ուժեղացնում են* բայց *շաղկապի արտահայտած այն բոլոր հարաբերությունները, որ մենք վերևում թվեցինք։ Այսպես՝ կազմվում է՝* բայց և, բայց և այնպես, բայց այնուամենայնիվ, բայց չէ որ, բայց դեռևս, բայց արդեն, բայց հենց, բայց էլի *և այլն։*

Բայց և այնպես, բայց այնուամենայնիվ, բայց դեռ *(դեռևս),* բայց էլի, բայց և *կապակցությունները բարդ համադասության մեջ բացահայտ են դարձնում գիշական՝ հակառակ հիմունքի հարաբերությունը և ըստ այդմ սրում նաև համատեղվող հակադրությունը. օրինակ՝* Ալեքսանյանը ջուր լցրեց էլեկտրական թեյամանը, միացրեց, բայց և անմիջապես ետ քաշեց էլեկտրալարը *(ԲՎԻԳԵ, 222)։* Ախ, մեր սրտերը վառել ես հրով, բայց դեռ ապրում ենք հեռվից քո բույրով *(ՎՄԼՈ, 21)։* Այդ ինձ տարօրինակ է թվում, բայց և այնպես առաջ եմ վազում *(ՍՋՄԿՊ, 25)։* Դուք շատ կարելի է անկարող կգտնվեիք օգնելու ինձ, բայց այնուամենայնիվ ես դարձյալ դիմում եմ ձեզ *(Նար., I, 418)։* Ինչ գրել ենք մինչև հիմա, եղել է լոկ առաջաբան մի վիթխարի երգի համար, որ գալու է, բայց դեռ չկա *(ՉԸ, 114)։* Գիտեր, որ երեխաներ ունես, բայց էլի չէր ուզում հավատալ *(Քրեստ., IX, 11)։* Այդ արդեն սկսում էր ջղայնացնել Կատկովին, բայց նա այնուամենայնիվ զսպեց իրեն *(Շաթիրյան, 549)։* Գնում ենք ավելի ժամանցի համար, բայց և աշխատում ենք *(ՍՋՄԿՊ, 124)։*

Բայց *շաղկապը բաղադրվելով չէ՞* որ *եղանակավորիչով՝ ցույց է տալիս, որ այն, ինչ հաղորդվում է առաջին մասում, երկրորդում առարկվում, չի ընդունվում կամ վերապահություն է արվում. ըստ*

որում այս պարագայում դարձյալ ուժեղանում է հակադրությունը. օրինակ՝ Քույրը առավ, ուզեց բերանը տանել, բայց իսկույն էլի գետին ձգեց ու ասաց.—բայց չէ՞ որ քո հացն է այս *(Փափ., 326)*։ Ուզեցի «աստված» մին աղաղակել, բայց չէ՞ որ նա էր էն մահն ուղարկել *(Թումանյան, «Դեպի անհունը»)*։

Բայց *շաղկապը* հենց *եղանակավորիչով բաղադրվելիս ցույց է տալիս հակադրություն միևնույն ժամանակի, տեղի, հատկանիշի, առարկայի և այլն։ Նշենք նաև, որ միևնույն առարկայի, հատկանիշի հակադրությունն իրեն շատ ուժեղ է արտահայտվում, և գերազանցապես համադասության երկրորդ մասը հարցականով է լինում. օրինակ՝* Երիտասարդը ուզում էր վերադառնալ, բայց հենց այդ միջոցին լսելով, որ Մոմճյանը սկսում է բացատրություններ տալ տիկնոջը, մնաց տեղը կանգնած *(Մուր., II, 360)*։ Նա ասում էր, որ հիվանդ չէ, եթե իսկապես հիվանդ էլ է, բայց այդտեղ ի՞նչ կա ծածկելու իրենից... կամ գո՞ւցե մի որևիցե գաղտնիք է կրծում սիրտը, բայց այն ի՞նչ գաղտնիք պիտի լինի *(Նար., I, 333)*։ Լոկ երազ էր այս, բայց երազն ի՞նչ է *(Թումանյան, «Դեպի անհունը»)*։ Գնում են գնում, մինչև նրանց առջև երկարումեկ ձգվում է մի մեծ, շատ մեծ դաշտ: Էլ ոչ մի սար, ոչ մի քար, այլ հարթ, հավասար դաշտ, բայց ի՞նչ դաշտ *(ՂԱԸԵ, 211)*։

Բայց *շաղկապով միևնույն պարզ նախադասության ներսում նախադասության առանձին անդամներին հակադրվում են այնպիսի բառակապակցություններ, որոնք սահմանափակում, ճըշտում, լրացնում են նախադասության այդ անդամները և կամ դարձյալ նույն նախադասության ներսում առաջ են բերում հակադրության, հակառակ հիմունքի (զիջական), անհամապատասխանության, փոխարինության, զուգադրության և այլ հարաբերություններ. օրինակ՝* Երկար խոսեցին, խնդրեցին, թախանձեցին, բայց անօգուտ *(Մուր., II, 107)*։ Նրանց պարզ և անկեղծիք բնավորությունը, մտերմական, բայց և համեստ զրույցները... ինձ և հիացնում, և զվարճացնում էին *(Նույն տեղում, 113)*։ Գնամ հայտնեմ, բայց ինչպես *(ՍՁՄԿՊ, 99)*։ Թող լինի օտար տեղ, բայց հեռու այս գերությունից *(Փափ., 322)*։ Լավ կանեք, որ ձեզ չմոռանաք, հակառակ դեպքում ինքս կհիշեցնեմ ձեզ ձեր գոյությունը, սառնասրտությամբ, բայց սպառնացող ձայնով պատասխանեց Սարյանը *(Մուր., II., 377)*։ Տղան իմ հասակի է, բայց գեր *(ՍՁՄԿՊ, 32)*։ Խոսեց նա իր համար անսպասելի վճռականությամբ, բայց կարծես մեկի դրդմամբ *(ԴԴ, I, 481)*։ Ընկերուհիներս, իհարկե,

աշխատում էին այդ նպատակով, բայց առանց մեծ հաջողության *(Մուր., II, 97)*։ Սիրում էր ուրիշին, մի աղքատ, բայց ազնիվ երիտասարդի *(Նար., I, 416)*։

Բայց *շաղկապով հակադրվում են խոսքի առանձին հատվածներ, ընդարձակ պարբերություններ, որտեղ վերոհիշյալ հարաբերություններն արտահայտվում են ոչ թե համադասական նախադասությունների առանձին մասերի, միևնույն նախադասության անդամների, այլ ամբողջական շարադրանքների, ընդարձակ մտքերի, պարբերությունների միջև. ահա մի օրինակ՝* Ահա ինչը նրա համար Դորպատում ստեղծեց համբավ զարմանալի արագությամբ, և հենց հաջորդ օրից նա դարձավ մեկը, որին շատ տներում գրկաբաց կընդունեին, որի անցնելուն սպասում էին փողոցի բնակիչները և որի մասին պատմում էին, թե մինչև Դորպատ գալը նա չգիտեր գարեջուրը և ինչպես փոքր տղա նա հրճվանքով դիտել էր գույնզգույն թղթերից սարքած այն օդապարիկները, որ ըստ այն ժամանակի սովորության տոն օրերին բաց էին թողնում օդի մեջ։

Բայց արդեն անցել էր այդ ժամանակը, և փոշի էր նստել սև կապայի վրա։ Նա հագնում էր մահուդե վերարկու և բարձրավիզ սյուրտուկ, որից ավելի էր երկարում հասակը։ Նա կապում էր ծաղկանկար կրծկալ և թավշյա փողկապ։ Հյուսիսի սառն օդը փոխել էր նրա դեմքի ցորնագույնը, բայց աչքերը մնացել էին նույնը... *(ԱԲԵ, 599)*։

Գ. ՍԱԿԱՅՆ *ՀԱԿԱԴՐԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՈՎ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ*

Սակայն *շաղկապը համանիշ է* բայց-*ին։ Սրանց տարբերությունը պայմանավորված է ոճաբանական առանձնահատկություններով և իմաստային յուրահատուկ նրբություններով։* Սակայն *շաղկապը համեմատաբար գրքային է, իսկ հակադրական նշանակությունը տրամաբանորեն կտրուկ է և ուղղակի։ Շարադասությամբ* սակայն-*ը ճկուն է ու շարժական.* բայց-*ը դրվում է միայն համադասության երկրորդ մասի սկզբում, իսկ* սակայն-*ը կարող է և սկզբում, և մեջտեղում, և նույնիսկ վերջում շարադասվել։ Այս ճկունությունը. շարժականությունը պայմաններ են ստեղծում ոճական առանձին նրբերանգների դրսևորման և դյուրությամբ կարող են ճշտել, սահմանագծել համադասության երկրորդ եզրի հակադրվող անդամները մյուսներից։*

Սակայն *շաղկապով նույնպես կապակցվում են առանձին ըն-*

դարձակ հատվածներ, մտքեր, պարբերություններ, ամբողջական շարադրանքներ և նույնիսկ դրանք կարող են հակադրվել, սահմանափակվել, ճշտվել միայն մի նախադասությամբ. օրինակ՝ Նար-Դոսը մի ամբողջ հատվածում խոսում է իր հերոսների մասին և այդ ամբողջ հատվածին հակադրում է միայն մի նախադասություն՝ սահմանափակելով մի ամբողջի ընդհանուր նշանակությունը կամ բացառելով այն. օրինակ՝ Սակայն այստեղ պիտի նկատենք, որ Ղազիմ-Սաքոն երբեք չէր վերցնի նրան յուր մոտ, եթե նա արմատապես չէր փոխիլ յուր բնավորությունը *(Նար., I, 412)։ Համեմատիր՝* Ո՜հ, ինչ ահավոր մրրկապարերի մեջ եղանք, կաղապարվող և քայքայվող արևների մեջ եղանք, բայց միշտ անբաժան ու միացած, անմեկին սիրով, իրարից անհագ...

— Սակայն տարերային ահեղ ուժերը մեզ կիսեցին, բաժանեցին առժամանակ, որ անթիվ դարերից հետո անպարտելի, կարոտով բռնկված նորից գտնեինք իրար *(ԱԻԵ, 282)*։

Բարդ համադասության մեջ սակայն *շաղկապը ամենից առաջ արտահայտում է սահմանափակման հարաբերություն, այսինքն՝ եթե համադասության առաջին մասի մեջ հաղորդվում է մի ընդհանուր երևույթ, հատկանիշ, գործողություն, ապա երկրորդ մասում* սակայն *շաղկապը սահմանափակում է հաղորդվածի ընդհանուր նշանակությունը, ճշտում է այս կամ մյուս կողմից. օրինակ՝* Հաճախ մասնակցում էր մեր խոսակցություններին, զրույցներին, ճառերին, սակայն սովորաբար սակավախոս էր *(ԻՍԵ, 369)։* Սանձարձակ ծաղրում էին, զրպարտում, հայհոյում քաղաքի առաջին միլիոնատիրոջը, սակայն միայն ետևից *(Քրեստ., IX, 4)։* Աղջիկը գլխավորապես երկու դեպքում միայն բախտ կարող է ունենալ ամուսնանալու. առաջինը՝ երբ գեղեցիկ է, և երկրորդ՝ երբ փող ունի, սակայն վերջին դեպքն ավելի հաղթող է հանդիսանում *(Նար., I, 434)։* Բայց սխալվում ես տիկին Ղուլամյանի մասին,— ասաց Միքայելը, սակայն այն եղանակով, որ ցույց էր տալիս, թե Մարութխանյանի ասածը շատ էլ խելքից հեռու բան չէ *(Քրեստ., IX, 28)։* Ինչ էր պաշտոնի անունը, չեմ հիշում, սակայն միշտ ընկերության գրասենյակումն էր *(ԻՍԵ, 361)։ Հասմիկը* ինքն էլ ցանկանում էր այդ, սակայն սրտի խորքում սուր կսկիծը չէր մարում *(ԲՎԻԳԵ, 304)։* Բոլորովին մեղմ հարցրեց երիտասարդը, սակայն այդ մեղմությունն ավելի զարհուրելի էր, քան առաջին ճիչը *(ԱԲԵ, 565)։*

Սակայն *շաղկապը բարդ համադասության մեջ արտահայ-*

տում է նաև զիջական՝ հակառակ հիմունքի հարաբերություն։ Համադասության առաջին մասում հաղորդվում է այնպիսի գործողություն, որին իբրև հետևանք երկրորդ մասում պետք է համապատասխաներ մի այլ գործողություն, սակայն այս վերջինը ոչ միայն չի համապատասխանում, այլ նախորդի նկատմամբ դրսևորվում է իբրև հակառակ արդյունք. օրինակ՝ գիտեմ, պատշաճ չէ և ոչ էլ հնարավոր, որ գնա ամենայն տեղ և ամենայն մարդու մոտ, սակայն ինքը պարտավոր էր ներկա լինել իր ավագ եղբոր որբ զավակի հարսանիքին *(ՍԶՀԲ, 132)*։ Եվ ուղիղ լինի թող հիմա ցուրտ, վերելքդ թող լինի դժվար, անկումդ լինի թող մահացու, թող գագաթը քեզ անհաս թվա,—քայլիր դու սակայն դեպի քարքարոտ բարձրություններ *(ՉԸ, 102)*։ Եվ ճանապարհս եղել է ճղի խոր անկումներով, սակայն ահա ես ոտքի եմ ելնում կրկին անվեհեր *(ՉԸ, 111)*։ Երգում ենք սեր, երգում ենք մահ, երգում պայքար ու աշխատանք, մեր երգերում սակայն, չկա այսօր ո՛չ սեր, ո՛չ խոհ, ո՛չ կյանք: Երգում է, տես, գիշեր ու զոր պոետների մի ողջ բանակ, սակայն երգեր քիչ կան այսօր *(ՉԸ, 114)*։

Բարդ համադասական նախադասության մեջ սակայն *շաղկապը արտահայտում է որոշակի հակադրություն, ըստ որում կարող են հակադրվել համադասության առանձին մասերի բոլոր անդամները թե՛ միմյանց հետ և թե՛ մեկը մյուսի հետ։ Հակադրությունը շատ ցայտուն է և ուժեղ, երբ հակադրվում են համադասության առանձին մասերի գլխավոր անդամները. երկրորդական անդամները հակադրվելիս՝ հակադրությունը մասնակի բնույթ է ստանում, մինչդեռ գլխավոր անդամների այդպիսի դրությունը տարածվում է ամբողջ նախադասության վրա. օրինակ՝* Ահա անձրև, քովիչ զեփյուռ, վարդը փթթեց ու բուրեց, սակայն վառված սիրտս տխուր երբեք ուրախ չըմխեց *(ԻՍՆ, 5)*։ Ծիվ-ծիվ, սիրուն սիրունիկ, ես քեզ տեսա, երբ դու նոր մայրիկիդ հետ թև ելած՝ կթռչեիր սար ու ձոր... —Ծիվ-ծիվ խոսեց մյուսը, սակայն ես քեզ չեմ ճանչնար *(Նույն տեղում, 68)*։ Գրքեր կան, որ դրսից նման են հոյաշեն դղյակների, սակայն ներս ես մտնում դու երբ, գաղջ շնչում է դեմքիդ ամայության փոշին *(ՉԸ, 162)*։ Գույնն ու ձևը կորցրած մի հնամաշ արխալուղ՝ տակիցն երևցրած կապույտ օձիքով՝ կտավի շապկի հետ միասին՝ խեղճ հողագործի տեսք էին ընծայում մարդին. նույնը չէին հաստատում սակայն երիտասարդի գորշ, հնացած յամանի կոշված կոշիկները և ուղտի բրդից կարած կոպիտ շալ շուխեն *(ՊՊԵԺ, II, 274)*։

Սակայն շաղկապը դրսևորում է նաև հարակցական հարաբերություն, այսինքն՝ առաջին նախադասության մեջ հաղորդվածին չի հակադրվում համապատասխանորեն երկրորդ նախադասությամբ հաղորդվածը, կամ չի սահմանափակում, այլ դիտվում է իբրև անհամապատասխանություն, իբրև կողմնակի հաղորդում, ճշտում, լրացում նախորդ մտքի, կամ փոխհատուցում. օրինակ՝ **Ինձ մորթեցեք, լափեցեք ավել, առավել, սակայն իմացեք, որ ժողովրդի քնարը երբեք չի կարող սատել** *(ԱԻԵ, 141)*։ **Արդարև իմ ուժն ու ցանկությունը փոքր են, աննշան, սակայն ծովն էլ կազմված է կաթիլներից** *(Մուրացան)*։ **Հազիվհազ կարողացավ նա արտասանել խեղդող արցունքի միջից, սակայն դեմքը դարձյալ ծածկած ունենալով** *(Նար., I, 326)*։ **Ես մեջքս պատին քսելով փորձում եմ հեռանալ, սակայն նրանք քայլ առ քայլ ծաղրելով գալիս են հետևիցս** *(ՍՋՄԿՊ, 83)*։

Հաճախ **սակայն** շաղկապը կիրառվում է միևնույն նախադասության ներսում իբրև թարմատար, այսինքն՝ առանց որևէ կապակցական պաշտոնի, միայն ձևավորում, հակադրական երանգ է առաջ բերում՝ ստանալով խոսքի մասնիկի նշանակություն։ Շատ անգամ իբրև այդպիսին այն երկու կողմից առնվում է ստորակետների մեջ. օրինակ՝ **Նրանք ահագին ներողություններով, հուզմունքներով, հոգեկան տանջանքներով փող են հավաքում, հարստություն դիզում՝ առանց սակայն դրանից որևէ բավականություն, ամենափոքր զվարճություն ստանալու** *(Նար., I, 411)*։ **Նրա հայացքը շարունակ հառած էր իր առաջ մի անորոշ կետի, ուր կարծես հոգի ու մարմին էր առել նրան զբաղեցնող միտքը և հիպնոսացրած գերեվարում էր նրան դեպի մի խորհրդավոր աշխարհ, որը, սակայն, իր խորհրդավորությամբ ամենևին չէր վախեցնում** *(Քրեստ., IX, 153)*։ **Այն ժամանակ, սակայն, ավելի կրակ կար, ավելի եռանդ և ամենամեծ օգնականը հենց այդ կրակն էր** *(ԲՎԻԳԵ, 50)*։

Դ. ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ԹԵ ՉԷ, ԹԵ ՈՉ, ԵԹԵ ՈՉ, ԱՊԱ ԹԵ ՈՉ, ԱՅԼԱՊԵՍ, ՀԱԿԱՌԱԿ ԴԵՊՔՈՒՄ, ԱՅԼ ԿԵՐՊ ՀԱԿԱԴՐԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ

Թե չէ, թե ոչ, եթե ոչ, ապա թե ոչ բաղադրյալ շաղկապներով հակադրվում են երկու այնպիսի համադասական նախադասություններ, որոնցից առաջինի մեջ հաղորդվում են որոշ երևույթներ ու գործողություններ, իսկ երկրորդի մեջ դրան հակադրվում են

այնպիսի հակառակ գործողություններ ու երևույթներ, որոնց առկայության դեպքում կբացառվեր առաջին նախադասությունը, կամ ընդհակառակը երկրորդի գործողությունը պայմանավորվում է առաջինով։ Այսպիսի հակադրական նախադասությունները ունեն պայմանական երանգ, իսկ պայմանական նախադասությունից տարբերվում են նրանով, որ ամբողջ պայմանական նախադասության փոխարեն հենց վերոհիշյալ շաղկապներն են դրվում. այն, ինչ որ բարդ ստորադասական նախադասության մեջ պետք է լիներ պայմանի երկրորդական նախադասության համար գլխավոր նախադասություն, վերոհիշյալ կապակցության մեջ հակադրվում է իբր բարդ համադասության մաս։ Այսպիսի բարդ համադասական նախադասությունները համանիշ են այնպիսի հակադրական նախադասությունների հետ, որոնք կապակցվում են այլապես, հակառակ դեպքում, այլ կերպ *շաղկապներով։ Սրանցով, ինչպես նաև նախորդ շաղկապներով հակադրվող նախադասությունների մեջ հաղորդված երևույթները միմյանց նկատմամբ և պայման են, և հետևանք. օրինակ՝* Երկար կլիներ պատմել, թե ինչ անարգական ոտանավորներ էին երգում դեպի տղայքը և ինչպես յուրյանց մեջ ուրախանում էին, որ ոչ մի ազափ տղա իրենց լսող չկա, ապա թե ոչ իրենց լեզուն բունը կմտներ ու տղեքանց ասածներին կամաչեին պատասխանել *(ՊՊԵժ, I, 392)*։ Սամվելը փոքր ինչ խժած էր, եթե ոչ նա երբեք սովորություն չուներ կատակներ անել յուր դայակի հետ, որին չափազանց հարգում էր *(Ր., III, 170)*։ Սաքոն իհարկե չտեսավ Մարգարին բազմության մեջ, ապա թե ոչ այնպես անխոհեմ գործ չէր բռնիլ *(ՊՊԵժ, I, 630)*։ Աղջիկն ասավ,—ինձ բնավ դու չես սիրում, թե չէ գնա, գնա մորդ սիրտը բեր *(ԱԻԵ, 142)*։ Դե չուտ, կորիր էս ռոպեին աչքիցս, թե չէ ոտներիս տակ կգցեմ *(Նար., I, 145)*։ Ավելի լավ է լռել, ապա թե ոչ կարող են մեզ քաղաքական հանցավոր ճանաչել *(Մուր., IV, 291)*։ Ձեր խոսքերը պետք է ընդունեմ իբրև խրախուսանք, ապա թե ոչ ես այդքան էլ գովության արժանի գործեր չունիմ *(Մուր., II, 36)*։ Մի խոսեցնի, թե ասված սիրես, թե չէ մի ղաշաղ կդառնամ ես էլ *(Թ., «Հառաչանք»)*։ Պետք է տագնապը հանդարտ անցկենա, թե ոչ բերանը կփրփրոտի *(Շեքսպիր, I, 178)*։

Ինչպես արդեն ասվեց, գրեթե նույն նշանակությունն ունեն այլապես, հակառակ դեպքում, այլ կերպ. *համեմատիր՝* Գիտակցում եմ, որ վատ բան է պատահել ինձ, այլապես մայրս այդպես չէր

անճանգստանա *(ՍՋՄԿՊ, 11)*։ Միմոսը դյուրագրգիռ թոփեր ունեցողներին լավ կծիծաղեցնի, և տիկինը իր սրտի ուզածն ազատորեն կասե, այլապես անճանգ ոտանավորի ոտքը կաղ կմնա *(Շեքս., I, 41)*։ Դուք ինարկե գիտեք ով է արել այդ բանը, ուստի պետք է ճենց հիմա ազնվորեն հայտնեք ինձ անողի անունը... այլապես բոլորդ կտուժեք *(ՍՋՄԿՊ, 114)*։ Խոսիր, ճակատակ դեպքում ամեն ինչ կասեմ: Այդպես էլ պետք է վարվեր, այլ կերպ ինչպես կարող էր լինել:

Ծանոթություն.—Սկզբնապես այս կարգի նախադասությունները եղել են հետևյալ կերպ. ամենից առաջ բարդության առաջին մասը դրական ձևով է արտահայտվել, իսկ երկրորդ մասի շաղկապային կապակցությունը եղել է մի ամբողջ նախադասություն. այսպես. դե շուտ, կորիր էս ռոպեին աչքիցս, թե չկորչես կամ՝ թե ոչ *(եթե ոչ)* կորնչիցիս ոտներիս տակ կզցեմ: *Հետագայում շաղկապի հետ կապված ստորոգյալը զեղչվել է (կորչել, կորնչել), շաղկապը անցել է հաջորդ նախադասության՝ դառնալով պայմանահետևանքային շաղկապ, միաժամանակ պահպանելով իր մթնած հակադրական նշանակությունը։* Թե չէ-ն եթե ոչ-*ի խոսակցական տարբերակն է։ Այդպես էլ հաջորդող* այլապես *շաղկապը, որը նախապես մակբայ է եղել։ Այդ երևում է նաև իր կազմությունից։* Վատ բան է պատահել, այլապես լիներ, մայրս այդպես չէր անհանգստանա. լիներ *ստորոգյալը զեղչվել է և* այլապես *մակբայը վերածվել է շաղկապի։*

Ե. ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՄԻՆՉԴԵՌ, ՄԻՆՉ, ԱՅՆԻՆՉ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ

Անխառն հակադրական հարաբերություն են արտահայտում մինչդեռ, մինչ, այնինչ *շաղկապները, որոնք մյուսներից տարբերվում են նրանով, որ ցույց են տալիս, թե համադասության երկու մասերի գործողությունները հակադրվում են անմիջապես միևնույն ժամանակամիջոցում. օրինակ՝* Զարմացած իրան-իրան խոսում էր կռոն, մինչդեռ Անդրին ճարց ու փորձ էր անում *Համբոյին* *(Թ., III, 15)*։ Ասավ արքան, ձեռքը ձգեց Նշան տվավ պայքարին, Այնինչ աղջիկն առաջ եկավ Կարմիր խնձորն իր ձեռին *(Թ., «Փարվանա»)*։ Պալատում շահն իր պարտեզն էր իջել, անճանգիստ քայլում էր ծառուղու մեջ, ձեռքի փայտով ծառերի ճյուղը ծեծում ան-

խոս ու մռայլ, մինչ սայրազամն ու մինիստրները միմյանցից հեռու սպասում էին և ոչ ոք չէր համարձակվում մի բառ արտասանել *(Փափ., 554)*։ Քո ասած Սիսիանի կողմից եկած ավազակները գյուղացիների հոգիները բերանները կտային, մի լուծ եզը չէին թողնիլ, որ գետինը չանգռոտեն, մի քանի հատիկ շաղ տան՝ իրանց անմեղ զավակներին սովից ազատելու համար. այնինչ Հունոն լույս ընկած օրից նրանց մի հատ ծղոտը ոչով չի տրորել *(ՊՊԵԺ, II, 436)*։

Զ. ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՉ ԹԵ... ԱՅԼ, ՈՉ ԹԵ... ԱՅԼ ԸՆԴՀԱԿԱՌԱԿ (Ը) ՀԱԿԱԴՐԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ

Այս շաղկապներով կապակցվող բարդ համադասական նախադասություններից առաջինն արտահայտվում է ոչ թե *ժխտական շաղկապով, որ ցույց է տալիս, թե ինչ որ հաղորդվում է առաջին նախադասության մեջ, տեղի չի ունենում. իսկ երկրորդ նախադասությունը սկսվում է* այլ, այլ ընդհակառակը *շաղկապներով և ցույց է տալիս, թե ինչ որ հաղորդվում է երկրորդ նախադասության մեջ, միանգամայն հակադիր է առաջինին կամ որևէ առնչությամբ խիստ է առաջինից. օրինակ՝* Ոչ թե ներս է մտնում, այլ ավելի շուտ դռներին դիպչելով՝ իրեն զցում է դասարանը *(ՍՋՄԿՊ, 114)*։ Ավագյանի նման մարդկանց ոչ թե պետք է ներել, այլ *(պետք է)* դուրս նետել կյանքից *(ՆՋՀ, 413)*։ Եվ այդ ոչ թե նրա համար *(էր)*, որ իմ նյութական ուժը չէր բավում ամբողջ շինարարությունն ավարտելու, այլ որպեսզի նրանք հասարակական գործի համար զոհաբերություն անելը սովորեին *(Մուր., II, 115)*։ Նրան ոչ թե պետք է թոշակ տալ, այլ ընդհակառակը նա դատի պետք է տրվի:

Երբեմն երկրորդ նախադասությունը հակադրվում է և ոչ թե, այլ ոչ թե, և ոչ *շաղկապներով. այս դեպքում համադասության առաջին մասում* հաղորդվում է որևէ պնդում, իսկ երկրորդ մասը *հակադրվում է այդ պնդմանը իբրև բացառվող, իբրև անհամատեղելի, հակադիր պնդում. օրինակ՝* Չէր կարողանում ներել, որ այս սիրուն սոսիները պատկանում լինեն մի խեղճ գյուղացու և ոչ թե մի գեղանի իշխանուհու *(Մուր., IV, 87)*։ Դու պիտի պարապես և ոչ թե խաղաս *(ՄԱՇ, 340)*։ Նախ որ կուշտ կլինես և ոչ քեզ պես անոթի, հետո կզիրանաս և ոչ այդպես կմախք կըմնաս. և երրորդ՝

երբեք շոգը քեզ չի նեղացնի (*Փափ., 314*)։ Պետք է պատերը քարով շարեիր, այլ ոչ թե ցեխով ու հողով։

Երբ համադասության առաջին նախադասությունը սովորական ժխտական ձևով է արտահայտված, երկրորդը կարող է դրան հակադրվել սոսկ այլ շաղկապով՝ իբրև դրական նախադասություն. օրինակ՝ Մի լինիր ուրագի պես միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ, այլ եղիր սղոցի պես, մին դեպի քեզ, մին դեպի մեզ (*Թումանյան*)։ Դրանք մյուս մկների նման չեն շարժվում, այլ շարունակ մնում են միևնույն տեղն անշարժ (*ՍՁՄԿՊ, 16*)։ Այդ երեկո բեյի չհրավիրեց նրան յուր մոտ, այլ մի բաժակ թեյ ածելով աղախնի ձեռքով ղրկեց նրան (*Մուր., II, 364*)։ Քշողը հայրս չի, այլ մեր հարևանի տղա Ալեքը (*ՍՁՄԿՊ, 25*)։ Որդեսեր և հասկացող մայրը, որքան էլ առողջ ոտքեր ունենա, այնուամենայնիվ նա յուր ետևից քարշ չի տալ մանուկին, այլ ընդհակառակը կհարմարեցնի յուր քայլերը տղայի դողդոջուն քայլիկներին (*Մուր., II, 42*)։

Է. ԷԼ, ՀԱՊԱ, ՀԱՄԱ, ԱՄԱ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱԿԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ

Էլ *շաղկապը հայերենի ամենաշատ կիրառվող շաղկապներից մեկն է. իբրև հակադրական շաղկապ միաժամանակ արտահայտում է զուգադրություն և հաճախ այս վերջին հարաբերությունը գերակշռում է հակադրական հարաբերությանը։ Իր այս երկու կիրառությամբ* էլ *շաղկապը համանիշ է* իսկ *շաղկապին, միայն այս վերջինի մեջ զուգադրական պահը համեմատաբար ավելի թույլ է։* Էլ *շաղկապը հատուկ է ժողովրդական խոսքին, այդ պատճառով էլ այն հաճախ կիրառվում է Թումանյանի, Աղայանի, Պռոշյանի, Զորյանի և ուրիշների գրվածքներում. իսկ Շիրվանզադեն, Նար-Դոսը, Մուրացանը* էլ *հակադրական շաղկապը սակավ դեպքերում են կիրառում։*

Զուգադրական հարաբերությունը էլ *շաղկապը արտահայտում է միաժամանակության մեջ, և այդ ավելի պարզ ու բացահայտ է, երբ զուգադրվում են նախադասության գլխավոր անդամները. օրինակ՝* Ժամանակով կատուն ճոն էր, Շունն էլ գլխին գդակ չուներ (*Թ., «Շունն ու կատուն»*)։ Մենք ճամփա ընկանք, սրանք էլ մեզ հետ: Մենք ածելով գալիս ենք, սրանք էլ չորս կողմերս կտրած հեռու մթնումը ցինգիր-ցինգիր անելով գալիս են (*Թ., III, 109*)։

Վառ արևի շողքը խաղաց լուսադեմին իմ ճակտին, Աղունիկն էլ թռավ, եկավ, նստավ բանտիս լուսանցքին *(ԱԻԵ, 17)*։ Իմ դարդը ճերիք չէ, դուն էլ մյուս կողմից ես կատաղած շան պես վրա պրծնում *(Նար., I, 142)*։ Քաղաքակիրթ և քաղաքական աշխարհում հազար ու մի խնդիրներ, դեպքեր, մտքեր են հուզում, տնտեսական, քաղաքական և սոցիալական նորանոր հարցեր են արծարծում, իմ ուղեղս էլ պահանջում է դրանց մասնակից լինել *(Նար., I, 136)*։ Էլի կհանդիպենք, էլի կխոսենք... ինքդ էլ մեկ աշխարհը կտեսնես *(Փափ., 571)*։

Նույն ձևով հակադրությունը արտահայտվում է միաժամանակության մեջ. օրինակ՝ Մեզանում իսկի մարդի հաշիվը գիտենո՞, նրանք գելն էլ են հաշվել *(Թ., III, 112)*։ Դե հիմա թողնենք միշապին, որ դեռ մի քանի օր քաղցած մնա, մենք էլ այն մարդկանց հետ գանք Մասիսի այս երեսը *(ՂԱՀ, 9)*։ Տանը շահրան էր մանում, ջուր գնալիս էլ իլիկը կամ սկսած գուլպան էր հետը տանում *(Նույն տեղում, 10)*։ Ես մենակ տղա, սրանք էլ երեք անհազին գազան *(ՎԱՄԼ, 80)*։

Համադասության երկրորդ մասում առաջին տեղը դրվում է նախադասության այն անդամը, որը զուգադրվում կամ հակադրվում է, իսկ սրան անմիջապես հետևում է էլ շաղկապը և հարում է վերջից այդ հակադրվող բառին, որն իր վրա է կրում երկրորդ նախադասության տրամաբանական շեշտը. օրինակ՝ Մայրս, եղբայրս կինը և սպասավորուհին լաց էին լինում, ես էլ տխրում էի դժբախտ Արզումանի ողբերգական մահի վրա *(ԱԻԵ, 356)*։ Ինչ որ ասեր, դու չպիտի համաձայնեիր. ուրիշն էլ իրանն ձեզ չէր տալ *(ՂԱՀ, 5)*։ Դու մի անհայտ բանաստեղծ ես՝ չտեսնված մինչ էսօր. Առանց խոսքի երգ ես թափում հայացքներով լուսավոր: Ես էլ, ասենք, զարմանալի ընթերցող եմ բախտավոր... *(Թ., «Քառյակներ»)*։ Քուն թե արթուն օրիս շատը երազ եղավ անցնազավ, Երազն էլ, նուրբ ու խուսափուկ, վառազ եղավ, անց կացավ *(Նույն տեղում)*։

Երբ համադասության երկրորդ նախադասությունը հարցական է, ապա էլ շաղկապը դրվում է հարցական նախադասության սկզբում և սկզբից է հարում հակադրվող կամ զուգադրվող բառին. օրինակ՝ Որ դու չավարտես, էլ ո՞վ պիտի ավարտի *(ՍՁՄԿՊ, 172)*։ Ես որ չլինեմ, էլ ո՞վ մեր տունը կպահի:

Հակադրական և զուգադրական հարաբերություն են արտահայտում նաև, ապա, *շաղկապները և սրանց բարբառային տարբերակը* բա *(բա որ), որոնք համանիշ են* իսկ *շաղկապին և հակա-*

դրությունը գերազանցապես դրսևորում են տարբեր ժամանակնե-րում. Երեխան երեխություն է արել, բա որ նրա հերը՝ էդ մեռած փողրադչին մարդու աչքերը կուրացրել է *(ՍՋՄԿՊ, 35)*։ Լավ եմ արել. բա ինչո՞ւ է նա իմ հոր աչքերը ցեմենտ լցրել *(նույն տեղում, 36)*։ Ո՞նց թե էս ջուրը չի: Հապա էլ ո՞րն է ջուրը *(Թ., III, 122)*։ Այդ երևացողը ծառ է, ապա ինչ է:

Հակադրական, զիջական, սահմանափակման և այլ հարաբերություններ է արտահայտում նաև համա (ամա), համա-համա *շաղկապը, որը բարբառային կիրառություն ունի և համանիշ է* իսկ *և* բայց *շաղկապներին. օրինակ՝* Կեռ-կեռ պոզավոր մալերը, որ կան, խելոք են, ամա էն անպոզ մալերը ցրվեցին փախան ողջ սարերն ի վեր *(Թ., II, 398)*։ Վարձիդ համար միամիտ մնա, Համա-համա շատ չուշանա *(Թ., «Շունն ու կատուն»)*։ Կարելի ա դու լսել կըլնես, որ ես քո նշանածին ուզել եմ, նախանձում ես. համա դու քո աստվածը, ասա, մենակ ե՞ս եմ էլել ուզողը *(ՊՊԵԺ, I, 588)*։ Պտի ճակատիս գրածին հնազանդիմ, համա էդ զոռով արջին կալ լծելու պես բան ա *(նույն տեղում, 512)*։ Էս տրեն օրս նշանած ա, համա էլի ուզողները դուռը կոտրատում են *(նույն տեղում, 388)*։

3. ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՏՐՈՀԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ

Տրոհական շաղկապներով բարդ համադասական նախադասությունը ցույց է տալիս համադասության մասերի միմյանցից անջատումը, որ արտահայտվում է երեք հիմնական հարաբերությամբ: Կամ բացառվում է համադասության մեկ կամ մյուս մասի գործողությունը, այսինքն՝ եթե մի նախադասության գործողությունը հնարավոր է, ապա մյուս մասի գործողությունը բացառվում է հենց այդ հնարավորությամբ. օրինակ՝ Երկուսից մեկը՝ կամ ես խաբված եմ այդ աղջկանից, կամ այս մարդը մի զարհուրելի չարագործ է *(Քրեստ., IX, 56)*։

Երկրորդ հիմնական հարաբերությունը, որ արտահայտում են տրոհական շաղկապները, թվարկումն է, որ կատարվում է միևնույն ժամանակի ընթացքում՝ առանց համադասության մասերի միմյանց բացառման, այսինքն՝ և՛ մի գործողությունը կարող է տեղի ունենալ, և՛ մյուսը. օրինակ՝ Իսկ կնդակավորներին հատկապես եղնիկներին ու եղջերուներին քշում են դեպի սառած գետերը, սառույցի

վրա ճղատում ու վրա թափում, կամ քշում են դեպի բարձր ժայռերը, ժայռերից թռցնում ու իջնում ներքև լափում *(Թ., III, 106)*։

Երկրորդ՝ տրոհական շաղկապները արտահայտում են նաև փոխանորդման կամ ընտրության հարաբերություն. այսինքն՝ համադասության մի մասի գործողությունը կարող է փոխարինել մյուս մասի գործողությանը կամ մեկի դիմաց կկատարվի մյուսը. օրինակ՝ Ապրի խելոք շատերի պես, որ ապրում են գոհ առատ, *ու* չեն հոգում, թե կորցրել է մարդն իր պատկերն անարատ. Կամ թե կուզես, ահա դարձյալ երկու ճամփա լայնարձակ. Տանում է մինն այն դղյակը, ուր որ լույսից մինչև լույս Քեֆ է անում սիրուն Թամարն հյուրերի հետ իր ջահել *(«Հազարան բլբուլ»)*։ Մի հոսոս ուտեր միա՞յն, թե հարյուրավոր աղքատներ օրական ուրախանային *(ՊՊԵԺ, III, 206)*։

Ա. ԿԱՄ ՇԱՂԿԱՊՈՎ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Կամ *շաղկապը արտահայտում է տրոհական հարաբերություն, այսինքն՝ համադասական կապակցության մեջ մտնող առանձին մասերը որոշ նշանակություններով իրարից անջատվում, առանձնացվում են։*

Տրոհական հարաբերությունն ամենից առաջ արտահայտվում է բացառումով, այսինքն՝ կամ *շաղկապով մեկ կամ մյուս նախադասության արտահայտած գործողությունը բացառվում է, հնարավորություն չի մնում նրա կատարման համար. օրինակ՝* Դեռ մի քանի րոպե նա այդպես գրում էր, հետո երևի հոգնելով, գրիչը վայր դրեց, կամ, ավելի լավ ասած, գրիչը վայր ընկավ նրա ձեռքից *(Նար., I, 374)*։ Ո՞վ գիտե գուցե նա կարծում էր, որ մարդուս մի անգամ վիճակված բախտը նրանից այլևս հեռանալ չի կարող, կամ շատ կարելի է նա երկյուղ էր կրում *(Նույն տեղում, 356)*։ Այժմ թող նա վարվի ինչպես մի անազնիվ մարդ, կամ ընդունե իր հոր անեծքը *(Քրեստ., IX, 11)*։ Երանի այս պինդ, խիստ պինդ մարմինը հալվեր ու լուծվեր և փոխվեր զոդի. կամ անվախճանը ուղղած չլիներ իր պատվիրանը անձնասպանի դեմ *(Շեքս., I, 13)*։

Կամ *շաղկապը բացառման այս հարաբերությունը խիստ ընդգծված արտահայտում է կրկնությամբ. կրկնությունը տվյալ դեպքում բացառման հետ ունի վերջնագրային բնույթ, այսինքն՝ կտրական է, բացառման մեջ թվարկման, սահմանափակման և զիջական որևէ նշանակություն չի մնում. օրինակ՝* Կամ ինձ պետք է

թողնեք, որ մնամ էստեղ, կամ սրան պետք է թողնեք, որ մեր աշխարհքը գա ինձ հետ *(Թ., III, 353)*։ Երկուսից մեկը՝ կամ ես խաբված եմ այդ աղջկանից, կամ այս մարդը մի զարհուրելի չարագործ է *(Քրեստ., IX, 56)*։ Հետո պայման դրեց՝ կամ տուն չգալ այլևս, կամ կրկին պատրաստվել քննության *(ԵՉԵ, 201)*։

Կամ *շաղկապը արտահայտում է նաև թվարկման հարաբերություն, այսինքն՝ համադասության մեկ կամ մյուս մասի առանձին նախադասությունների մեջ հաղորդված գործողությունները իրար չեն բացառում կամ ժխտում, այլ թե՛ մեկն է տեղի ունենում, թե՛ մյուսը. ըստ որում դա կարող է լինել և միաժամանակյա և հաջորդաբար. օրինակ՝* Ոմանք ստեպ-ստեպ թեքվում էին և փակ դռների բանալիի անցքով նայում դեպի մահամերձի սենյակը, կամ ականջ էին դնում՝ ձգնելով մի բան տեսնել կամ լսել *(Քրեստ., IX, 6)*։ Այդ ժամանակ նրան արդեն պատմել էին, թե ինչեր կատարվեցան յուր բացակայության միջոցին, կամ ինչ դրության մեջ էին ներկա գործերը *(Ր., III, 477)*։ Հակառակորդը հոգնում էր ու նրան բաց թողնում. կամ պատահում էին բարի մարդիկ և ազատում էին Ասոյին նրա փայտի հարվածներից *(ՆԶՀ, 169)*։

Կրկնվելուց բացի կամ *շաղկապը բարդանում է այլ շաղկապներով, որոնք այդ շաղկապի հիմնական նշանակությունները ընդգծում կամ նոր նրբերանգներով հարստացնում են։ Բարդացումը կազմվում է* և, թե, թե չէ, էլ *շաղկապների հետ և* կամ, կամ թե, կամ թե չէ, կամ էլ: *Վերոհիշյալ շաղկապներով բարդացված* կամ *շաղկապը արտահայտում է թվարկում, ընտրություն, հնարավորություն համադասության թե առաջին և թե երկրորդ մասի գործողության կատարման համար։ Այս դեպքում բացառման հարաբերությունը գրեթե վերանում է. օրինակ՝* Թե գրբացի չար ջանքով, Գիր ու կապով, բժժանքով Մանուկ սիրտը կտրեցին, կամ թե նրա հանդերձին էն անհոգի չար ջադուն Քսեց գիժի նրագուն, էդ չիմացավ ոչ ոք պարզ *(Թումանյան, «Մարո»)*։ Ի՞նչ թուղթ, ի՞նչ բան, ի՞նչ հրաման կհարցնի էս թշնամին, կամ թե խառնակ էս նեղ ժամին կարդացող կա, հասկացող կա *(Նույնը)*։ Բայց էն էլ ասած Ավագի ահից, Ո՞վ կարա անցնել Ալ-Վարդի մոտով, Կամ թե փախցնել նրան աղբյուրից, ո՞վ Կարա իսկի անցկացնել մտքով *(Միրաքյան, «Լալվարի որսը»)*։ Ինչքան աչք է նայել, մարել, Եվ կամ ինչքան դեռ պիտի գան, Որ անհայտից կյանք չեն առել *(Թ., «Սիրիուսի հրաժեշտը»)*։ Երբ Սուրենը մեքենան էր պայթեցնում, կամ էլ հետո անտառում, երբ ատրճանակը ձեռքին այս ու այն

կողմ էր վազվզում, պատզարակներ կրելու համար մարդիկ հավաքելով, և կամ երեկ վիրահատման սեղանին, երբ նա համառ համառակամությամբ չէր ուզում թմրեցուցիչ ընդունել *(Շաթիրյան, 527)*։ Կերել է, ինչ որ կարողացել է ճանկել՝ վայրենի պտուղներ ու բույսեր, սերմահատիկներ ու արմատիքներ, կամ թե չէ քարով կամ նիզակով որս է արել *(Թ., III, 123)*։

Ես այդ պարոնին լավ ճանաչում եմ. Հենց երեկ տեսա, կամ թե անցյալ օր, կամ թե այսինչ օր այնինչ մարդու հետ, կամ թե այսինչ տեղ, ինչպես ասում եք, նա թուղթ էր խաղում, կամ թե այսինչ տեղ արբած ընկած էր, կամ թե այնինչ տեղ թենիս խաղալիս կոիվ էր սարքել *(Շեքս., I, 30)*։

Կամ *շաղկապով համադասվում են միևնույն գլխավոր նախադասության երկու կամ ավելի երկրորդական նախադասություններ. օրինակ*՝ Կամ ինչպես քաջքերն այրերի մթնից խաբում են Կանչում ծանոթ ձայներով, երբ նայում է մարդ քարափի գլխից, կամ թե ուշացած անցնում է ձորով *(Թումանյան)*։ Բավական էր, որ մի աղջիկ սիրալիր ժպտար Լևոնին, կամ մոտենար մի բան փսփսալու նրա ականջին, Արուսն իսկույն գունատվում, դուրս էր գնում *(ՆԶՀ, 152)*։ Ամբոխին թվաց, թե դա պատահմունք էր, կամ աջի կողմից մի նարսիկ ձենար *(ՍՁ, V, 303)*։

Կամ *շաղկապը սովորաբար շարադասվում է համադասության առանձին մասերի սկզբում, սակայն երբ համադասության մեջ գտնվող որոշ անդամներ իրենց վրա տրամաբանական շեշտ են կրում, դրվում է դրանցից առաջ, այսինքն՝ շարադասվում է համադասության առանձին մասի մեջ. օրինակ*՝ Ու այդ բոլորն ասում է իրար հետևից և փոխեփոխ կամ ծնկներն է ծեծում, կամ ձեռքերն աղերսելով երկինք պարզում *(ՍՁՄԿՊ, 130)*։

Կամ *շաղկապով համադասվում են ամեն կարգի բաղմակի համադաս անդամներ. օրինակ*՝ Թող փքված արքան նորեն քաշե քեզ իր անկողինը եվ փայփայելով թուշդ կսմթե, քեզ «մուկիկ» կանչե, եվ իր զարշահոտ մի զույգ համբույրով կամ թե անիծյալ իր մատներովը վիզդ շոյելով՝ Բոլոր եղածը խոստովանել տա *(Շեքս., I, 71)*։ Ես չհարողացա փակել իմ աչքերը՝ ձեր գրավիչ գեղեցկությունն ու կախարդող հայացքը չտեսնելու համար, բացնել իմաստականությունս ձեր ներքին արժանիքները ու փայլուն բարեմասնությունները չճանաչելու համար, կամ խեղդել զգացմունքս *(Մուր., II, 101)*։ *Այստեղ* կամ *շաղկապով համադասված են կարևորական բայի (կարողանալ) երկու անորոշ դերբայները, թեև իրա-*

րից շատ են հեռացած։ Չէր կարողանում հասկանալ, թե ինչպես կարելի է, որ մարդ արարածը շխոսե իր նմանի հետ, կամ թե այդ խոսելը համարե ամոթ, պատիվ կամ անպատվություն *(Քրեստ., IX, 85)*։ Մենք Մարտիրոսին չէինք հալածում ոչ այն պատճառով, որ մենք իբր թե ուրիշ մանուկներից բարի էինք կամ խելոք *(Շիրվ., V, 307)*։ Մորիկը զայրանում է... երբ մարդ հանցագործը ընկնում կամ հաղթում է գազանին *(ՍԶ, V, 306)*։

Կամ *շաղկապով համադասվում են նաև այնպիսի նախադասություններ, որոնցից երկրորդը ճշտում, պարզում է առաջին նախադասությունը՝ դառնալով վերջինիս մեկնությունը. օրինակ՝* Եվ այսպես ես ծախված էի, կամ, ավելի ճիշտ ասած, ես թղթի մեջ կլուբում տանուլ էի տված *(Նար., I, 393)*։

Բ. Թե ՇԱՂԿԱՊՈՎ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Թե *շաղկապը հայերենի ամենագործածական տրոհական շաղկապներից է և համադասում է այնպիսի նախադասություններ, որոնց գործողությունները առավել կամ պակաս չափով բացառվում, թողնվում են ընտրության և թվարկվում են։* Թե *շաղկապը* կամ *շաղկապից տարբերվում է նրանով, որ համադասում է հարցական նախադասություններ, արտահայտում է ենթադրություն և չունի վերջնադրային այն բնույթը, որ տեսանք* կամ *շաղկապով համադասվող նախադասությունների տրոհման մեջ։* Թե *շաղկապով համադասվող նախադասությունները արտահայտում են միաժամանակյա գործողություններ. օրինակ՝* Քեզ վատ բա՞ն են ասել, թե դու ես վատ բան արել *(ՍՋՄԿՊ, 99)*։ Վշշոց է գալիս ներքևից, ջո՞ւր է վազում, թե սառը քարանձավներում շաչում է քամին *(ԱԲԵ, 142)*։

Թե *(կրկնվող) շաղկապով համադասվող նախադասությունների մեծ մասը արտահայտվում է հարցականով, բայց ուժեղ հարցական շեշտավորումը ընկնում է առաջին նախադասության վրա, իսկ* թե *շաղկապով սկսվող հաջորդ նախադասությունները թույլ հարցման շեշտավորում ունեն, ուստի երբեմն դրանք հարցական նշան չեն կրում, չնայած դրանք ևս հարցական են։ Գրողներից ոմանք հարցական նշանով են կիրառում, ոմանք առանց դրան. համեմատիր՝* Նրա արյունը կարմի՞ր է մերից, թե՞ ավել հունար դուրս կգա ձեռից *(Թումանյան, «Հառաչանք»)*։ Բնավ չի՞ եղած, թե՞ չեն ապրում *(ՂԱԸԵ, 408)*։

Թե *շաղկապով սկսվող համադասության երկրորդ մասը կա-*

րող է համադասել իրենից առաջ գտնվող ոչ միայն մի, այլև երկու կամ ավելի նախադասություններ. այս դեպքում համադասության առաջին մասում գտնվող հարցական նախադասությունները թվարկվում են առանց որևէ շաղկապի, իսկ հաջորդ թե շաղկապով նախադասությունը հավասար կերպով բացառում է երկուսն էլ և ավարտում թվարկումը. օրինակ՝ Գիշերվա հովից տերև՞ն է դողում, երկչոտ մուկի՞կը վազեց պուճախում, թե՞ ոչխարների թույլ մնչոցն է այն (Թումանյան)։ Այն երկրում էլ խավար գի՞շեր է, և ա՞յս անձրևն է գալիս, թե պարզկա գիշերն է՝ գարնան սպիտակ աստղերով (ԱԲԵ, 635)։

Հաճախ մի հարցական նախադասության համար իբրև պատասխան թե շաղկապով իրար բացառում և միաժամանակ հակադրվում են հարցական այնպիսի գլխավոր նախադասություններ, որոնք ձևավորվում և բովանդակություն են ստանում մի երկրորդական նախադասությամբ։ Այս դեպքում հակադրման հետևանքով հարցման ամբողջ տրամաբանական շեշտավորումը ընկնում է թե շաղկապի վրա. օրինակ՝ Ո՞վ է ավելի հարազատ մայրը նրա համար. նա՞ որ աշխարհ է բերել նրան, թե՞ նա, որ ընդունել է. Նա՞, որ բերելու օրը ձգել է ճակատագրի հաճույքին, թե՞ նա, որ շպրտվածը վերցրել է փողոցային ցեխի միջից, լվացել, մաքրել, զուգել-զարդարել ու տեղավորել յուր կարոտ սրտի լավագույն անկյունում՝ մայրության սրբազան վայրում: Նա՞ որ կամեցել է սպանել յուր արգանդում, թե՞ նա, որ միայն այդ մտքից սարսափել է (Շիրվ., V, 129)։

Այսպիսի ընդհանուր հարցական նախադասությանն իբրև պատասխան կարող են հետևել թե շաղկապով կապվող համադասական նախադասություններ, առանց երկրորդական նախադասության. օրինակ՝ Ո՞վ իմանա, երբ է մարդ դառնում այսպես իմաստուն. Հասակի՞ց է արդյոք այդ, թե՞ ճանապարհն է ազդում (ՁԸ, 117)։ Արդյոք քնե՞լ էին նրանք, թե գարնան զգվող երեկոն նրանց հոգին կախարդական աշխարհն էր տարել (ԻՍ, III, 17)։

Ինչպես շեշտեցինք, թե շաղկապը տրոհական հարաբերությունը արտահայտում է նաև ենթադրական երանգով. օրինակ՝ Գինի՞ պիտի խմեն այդ կժից, թե աղջիկը հարսանիքի ջուր պիտի տանի (ԱԲԵ, 144)։ Երևի ուզում էր հաշտվի, թե եկել էր որ հետո ծիծաղի (Նույն տեղում, 269)։

Թե շաղկապը արտահայտում է նաև զուգադրա-հետևանքային հարաբերություն. օրինակ՝ Ինչ են տարել նրանք կյանքից, թե ինչ

տանես դու քեզ հետ (*Թումանյան*)։ Ես ինչ արեցի, թե դու ինչ անես։

Թե *շաղկապը կրկնվելով արտահայտում է թվարկման հարաբերություն և միանգամայն վերացնում է բացառման հնարավորությունը. օրինակ՝* նա թե պատասխանում էր մոր խոսքերին, թե լուսնի ընթացքը դիտում (*Մուր., II, 170*)։ Ղազար աղան... թե հոգնել էր, թե արդեն բավական ուշ էր (*ԻՍ, III, 318*)։

Թե *շաղկապը ոչ միայն համադասում է թվարկման ենթակա նախադասությունները, այլև նախադասության առանձին անդամները. օրինակ՝* Մուշեղ Սամիկոնյանի հաղթական փառքով վերադարձը ընդհանուր ուրախություն պատճառեց թե հայոց տիկնոջը՝ Փառանձեմին և թե նրա շուրջ խմբված ավագներին (*Րեժ, VII, 383*)։ Ցույց էին տալիս եղբայր Մանգասարովների առևտրական հզորությունը թե Կարմրաքարում, թե հարևան գյուղերում և թե վրանաքենակ բազմության համար (*ԱՔե, 476*)։ *Ըստ որում այս առանձին անդամներից վերջինը թվարկումը ավարտելու համար հաճախ բարդվում է և շաղկապով, այլապես թվարկումը կմնա անավարտ, ինչպես. օրինակ՝* Ես սիրում եմ գրքերը թե՛ նոր, թե՛ հին, թե՛ արվեստով գրված, թե՛ անարվեստ (*ԵՉե, 258*)։ Կարողանա՞մ պիտի ես Արդյոք ինչպես նա, Այդքան հանգիստ ընդունել թե՛ անկում, թե՛ մահ (*նույն տեղում, 280*)։

Թե *շաղկապով համադասվող նախադասություններին իբրև եզրափակիչ մաս կարող է հաջորդել* բայց, այնուամենայնիվ, համենայն դեպս, միևնույն է *շաղկապներով մի նախադասություն, որ ցույց է տալիս նախորդ* թե *շաղկապով համադասվող հարցական, ենթադրական նախադասությունների գործողությունների կատարումը իբրև իրողություն. օրինակ՝* Պատահաբար եղավ դա, թե հետախույզ կոմանդի քմահաճ անփութությունից, բայց եղավ (*ԴԴ, I 81*)։ Լինեին նրանք սրիկաներ, թե ավազակներ, միևնույնն է նրանք հարկավոր էին նրան ամեն ժամանակ (*Մուր., I, 228*)։ Հայոց թագուհին... դառն տխրություն ուներ թե՛ դեպի Շապուհը և թե՛ դեպի պարսից արքայական ազգատոհմը,—այնուամենայնիվ վերջին օրերում... մայրական խնամք էր տանում Շապուհի որոշ՝ Որմիզդուխտի վրա (*Րեժ, VII, 408*)։

Եթե համադասության ստորոգյալը ընդհանուր է, երկրորդ մասում կարող է զեղչվել. օրինակ՝ Նրանք չեն կարողանում որոշել ջուրն է վշշում, թե քամին (*ԱՔե, 142*)։ Շատ գնացին, թե քիչ, սրանք հանդիպեցին մի քարվանի (*ՂԱԸե, 336*)։ Շատ էի քնել, թե քիչ,

մեկ էլ քնիս մեջ ձայներ եմ լսում *(ԱԲԵ, 361)։ Եթե երկրորդ նախադասության ստորոգյալը ժխտականով է արտահայտված և զեղչվում է, վերջինիս փոխարինում է չէ, որը օժանդակ բայն է՝ ժխտական չ մասնիկով և այժմ դարձել է չի. օրինակ՝* Լինում է թե չէ, ո՞վ գիտի հաստատ *(Թումանյան, «Էսպես չի մնա»)։ Բայց հեքիաթներում հաճախ իբրև ամբողջ միաձույլ արտահայտություններ ասվում է. լինում է թե չի լինում, եղել է թե չի եղել։*

Գ. ԵՎ, ՀԱՄ, ՄԵՐԹ... ՄԵՐԹ, ՄԵԿ... ՄԵԿ, ՄԻՆ... ՏՐՈՀԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Իբրև տրոհական շաղկապ հաճախ կրկնությամբ կիրառվում է և *շաղկապը, որ արտահայտում է թվարկման հարաբերություն. օրինակ՝* Եվ հիշում եմ միշտ քո անմոռաց զրույցները և քո համբերանքի չիբուխի խաղաղ ծուխը աչքիս առաջին է դեռ, և քո հանգիստ հնամենի ձայնը ականջումս է տակավին *(ԱԻԵ, 222)։* Եվ մրիկները մռնչում էին, արմավն ու նռնին շաչում շառաչում. և քարավանը կամուրջ քանդելով և քառատրոփ վազում էր, թռչում *(ԱԻԵ, 112)։* Եվ *շաղկապի այս տրոհական նշանակությունը ցայտուն ու պարզ բացահայտվում է, երբ* և*-ը կիրառվում է որևէ տրոհական շաղկապի հետ. օրինակ՝* Եվ անձրևն է մերթ քեզ թրջել հորդ, և երկինքն է մերթ գլխիդ ձյունել *(ԵՉԵ, 176)։*

Թվարկման հարաբերություն է արտահայտում հաճախ ժողովրդական համ *շաղկապը, որ կիրառվում է իբրև թվարկող* և, թե *շաղկապներին համանիշ շաղկապ, որ բացառում չի ցույց տալիս, այլ ընդհակառակը միմյանց հետևից թվարկում է գործողությունները և վերջին* համ*-ը կարող է* էլ *շաղկապով փակել՝ շարքը. օրինակ՝* Համ ասում ես, համ չես կարում, Համ խոսում ես, վրես գոռում *(Թումանյան)։* Համ հեռու էր ուսումնարանից, համ սարսափելի աղմկալի տեղ, համ էլ ոչ թեյ և ոչ էլ ճաշ խոստացան *(Նար., II, 547)։* Թե մարդ, թե հավք ընկեր ունի, Ես համ անտուն չոր գլուխ եմ, համ էլ սիրտս մեծ ցավ ունի *(Իսահակյան)։*

Տրոհական շաղկապներ են նաև մերթ... մերթ, մեկ... մեկ *(մին... մին) կրկնվող շաղկապները, որոնք նախորդներից տարբերվում են. մինչդեռ, օրինակ,* համ *շաղկապը ցույց է տալիս երկու տարբեր գործողությունների միաժամանակություն, այսինքն՝ առարկան թե մեկ, թե մյուս գործողությունը կատարում է միա-*

ժամանակ, կամ ժամանակի միևնույն հատվածում առանց տարբերակելու, մերթ... մերթ շաղկապը հստակ տարբերակում է այդ ժամանակահատվածը, այսինքն՝ բարդ նախադասության առանձին մասերի արտահայտած գործողությունները կամ հատկանիշները միևնույն ժամանակահատվածում տարբերակվում են, մերթ մեկն է կատարվում, մերթ մյուսը. օրինակ՝ Հարձակվում էին նրանք՝ բյուրավոր՝ Մերթ ետ նահանջում մեր խիստ գրոհից, մերթ առաջ անցնում ոհմակներով նոր, Ու փախչում էինք, ու գալիս նորից *(ԵՉԵ, 11)*։ Որդու անակնկալ հայտնվիլը այն աստիճան հափշտակեց նրան, որ մերթ երեխայի նման հեկեկում էր, մերթ համբուրում էր նրան *(ՐԵԺ, VII, 444)*։ Այդպես էլ մերթ Մանասյանի հակառն էր երևում հավաքվածներին, մերթ թիկունքը *(ԲՎԻԳԵ, 225)*։ Մերթ ծալեծալ փոք-փոք սարիս, Մառքիշորեն ցույց է տալիս Իր թաքցրած ձևերը պերճ ու խելքահան, Մերթ էլ կիտված ծալքերն ահա ետ են դարսվում *(ՊՍԱՉ, 124)*։

Մերթ *շաղկապին համանիշ է* մեկ, (մին) *շաղկապը, որը նույնպես թվարկում է միևնույն ժամանակի տարբեր հատվածներում կատարվող առանձին գործողություններ. օրինակ՝* Հողմը մեգով երկինք առնում, Դալարում է բուքը ձյան, մին մանկան պես լաց է լինում, Մին՝ ոռնում է, զերթ գազան. Մին՝ վայրենի սուլում պես-պես, Աղմկում է տանիքում, Մին՝ ուշացած ճամփորդ, ասես, Լուսամուտն է նա թակում *(«Ձմեռվա իրիկունը»)*։ Մին հագնում է սպիտակ, մին կանաչին է տալիս *(Թումանյան, «Մարո»)*։ Մեծ տղան մեկ բարկությունից շնչահեղձ էր լինում, մեկ փաղաքշված պապանձվում *(ԱՍԾ, 132)*։ Սեյրանյանը մեկ կամենում էր շուտով դուրս գնալ այդ տեղից, մեկ էլ մի բան նրան ներսից ստիպում էր մնալու *(Նար., I, 347)*։ *Այս դեպքում վերջին* մեկ էլ *շաղկապը ավարտում է թվարկումը։*

4. ՀԱՐԱԿՑԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հարակցական կապակցությամբ արտահայտված բարդ համադասական նախադասության մեջ երկրորդ նախադասությունը, որ սկսվում է որևէ համադասական շաղկապով, դառնում է առաջինի համար իբրև լրացուցիչ հավելում, իբրև կողմնակի հաղորդում նրա բովանդակության վերաբերյալ, որով առաջին նախադասության բովանդակությունը այս կամ այն առումով հարստանում է։ Այս դեպքում երկրորդ նախադասությունը չունի զուգադրության

կամ հակադրության այն ներդաշնակ կապակցությունը, որով համադասությունը ստանում է համաչափ հնչերանգային մի ամբողջականություն։ Առաջին նախադասությունը արտաբերվում է իբրև մի ամբողջական հաղորդում, երկրորդ նախադասությունը հաջորդում է անսպասելի, անհամաչափ և չի պայմանավորվում առաջինի ձևական կառուցման հանգամանքներով, իբրև վերջինիս համաչափ զուգորդություն, հակադրություն միևնույն կշռույթային ու շարադասական համապատասխանությամբ։ Համադասության երկու մասերը կշռույթային, շարադասական և անդամների քանակային բոլորովին անհամապատասխան մասեր են, որի պատճառով կապակցությունը կորցնում է իր կառուցվածքային ու հնչերանգային համաչափությունը. օրինակ՝ Երիտասարդը պատմում է, թե ես մարգարիտը ստացել եմ մի էս տեսակ պառավից, որ անշուշտ կախարդ պիտի լինէր, ու ինձ էլ շատ չարչարեց *(Թ., III, 299)*։ Ու շաղկապով կապակցվող վերջին նախադասությունը հարակցական կապակցության երկրորդ մասն է, որ իրենից առաջ գտնվող նախադասության հետ կապվում է անսպասելի, անհամաչափ և նրա հետ չի կազմում մի հնչերանգային ներդաշնակ ամբողջականություն. դրանք ավելի շուտ իրենց նշանակությամբ են մոտենում։

Ա. ՀԱՐԱԿՑԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ, ՈՒ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ

Համադասական բարդ նախադասության երկրորդ նախադասությունը, որ կապվում է առաջինի հետ և, ու շաղկապների միջոցով, կարող է լինել առաջինի համար հարակից ու լրացուցիչ հաղորդում, հավելում, բացահայտում և կամ ունենալ ընդհանրացնող նշանակություն. օրինակ՝ Նա ընկերների հետ ներս մտավ, և քիչ հետո լսվում էր նրա... ձայնը *(ԲՎԻԳԵ, 7)*։ Ու թփրտում ենք նրա ձեռքին, թփրտում իզուր, ինչպես հավը դանակի տակ, և ազատում չկա մեզ *(Նար., VI, 378)*։ Իմաստուն են երազները, ու մորդ հոգին քո երջանկության համար է խոսում *(Թ., III, 224)*։ Նրանք երկար խոսեցին այդ մասին, և Ալին հենց մի գլուխ բերում, կանգնեցնում էր այդ մտքի վրա *(ԴԴ, I, 396)*։ Ցուրտ էր շուրջը այնպես, լուռ էր շուրջը այնքան, Ու վար նայեց հանկարծ նա աչքերով տարտամ

(ԵՉԵ, 144)։ Հիվանդ սիրտը չի տրտնջում, չի ցավում, Որպես երազ մոռացումի անձավում, և թվում է, որ անեզր է ամեն ինչ։

Հարակցական կապակցությամբ արտահայտված համադասության երկրորդ մասը շաղկապներից հետո հաճախ ունենում է ընդհանրացնող, մատնացույց անող մակբայներ, շաղկապներ, խոսքի մասնիկներ, որպիսիք են՝ ահա, էլ, այն, ահա թե *և այլն. օրինակ*՝ Կարող եք ուրեմն երևակայել, թե ինչ կլիներ մի ժողովուրդ Անահիտի պես մի թագուհու օրով, որ երկրի համար դառավ հարազատ ու սնուցիչ մայր, և ահա ինչ է ասում ժողովուրդը Անահիտի մասին *(ՎԱՀ, 63)*։ Հիմի իմ ձեռքս առանց ուրիշի բերնից հաց փախցնելու՝ իմ բերնիս հացը կվաստակե, և էլ արդար հացս միշտ կիսել եմ ուրիշի հետ, ծանոթ-անծանոթի հետ *(ԱԻԵ, 221)*։ Ապա թե լսում է սարսափելի, վայրենի, խուլ ու խուլ ու խոպոտ ձենը, և էն իբրև թե շշնջում է *(Թ., III, 344)*։

Հարակցական շաղկապով կցորդվող երկրորդ նախադասությունը հազվադեպ կարող է շարադասվել առաջին նախադասության մեջ իբրև միջանկյալ նախադասություն. համեմատիր՝ Մի հանգամանք, որի մեջ խառն էր, և նա ինքն էլ չէր թաքցնում, Մազութի Համոյի մայրը *(ՉԵ, 295)*։ Ներկաները գիտեն, և դու էլ լսած կլինես, որ ես ծանր մտացնորությամբ պատուհասված եմ *(Շեքս., I, 107)*։

Հարակցական կապակցությամբ արտահայտված համադասության առանձին մասերը կարող են թե պարզ նախադասություններ լինել, թե բարդ, ընդ որում բարդ նախադասությունները ոչ միայն համադասական են, այլև ստորադասական. օրինակ՝ Ես համոզված եմ, որ շատերը եկել էին իբրև թամաշայի, բայց թամաշա անելու ոչինչ չկար, բացի գրական բանավեճից, և դիսպուտի նյութը այնքան հետաքրքրել նրանց *(Նար., VII, 301)*։ Նրա դուռը բաց է ամենքի առջև, իսկ ստարականներին միշտ նրա մոտ են տանում, և քեզ էլ կհրավիրեն անշուշտ *(Թ., III, 228)*։ Վերևը աստղազարդ երկինքն էր, շուրջը մերկ լեռները, դեմը հակառակորդը... և յուրաքանչյուր զինվոր մտածում էր, թե ինչ կլինի՞ արդյոք վաղը *(ՍԶՀԲ, 398)*։ Ալեքսանյանը չի մեռել, ապրում է, գործում է, և թեկուզ ոչ մի ինստիտուտի գիտաշխատող կամ դասախոս չէ, բայց կարող է խորանալ գիտական լուրջ հարցերի մեջ *(ԲՎԻԳԵ, 201—202)*։ Երբ բողոքները շատացան, և երբ Հովնաթանը տեսավ հորը խեղճացած այդ բողոքներից, անցավ պապի չարխի գլուխը, և նրա մատների տակ լպրծուն կավն ստացավ ճանաչելի ձևեր *(ՎԹԵ, 195)*։

Բ. ՀԱՐԱԿՑԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ԻՍԿ, ԲԱՅՑ, ՍԱԿԱՅՆ, ՄԱՆԱՎԱՆԴ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ

Իսկ *շաղկապը համադասության մեջ արտահայտում է հակադրության, զուգադրության հարաբերություն, սակայն շատ հաճախ հանդես է գալիս իբրև հարակցական շաղկապ և կցորդում է երկու այնպիսի նախադասություններ, որոնցից երկրորդը դառնում է առաջինի համար հարակից լրացում, հավելում, ճշտում, այսինքն՝ լրացնում է նրա բովանդակությունը մի շարք կողմերով. օրինակ՝* Իսկ եթե մեկն ու մեկին ասեղ էր հարկավոր, իսկ ասեղի տերը ոչ ոք չգիտեր, նա վեր էր կենում տեղից, մտնում սենյակներից մեկը և վերադառնում ասեղն ու թելը ձեռքին *(ԳՍԹ, I, 145)*։ *Այս բարդ նախադասությունից երկրորդ պարզ նախադասությունը հարակցական հարաբերությամբ կապված է առաջինի հետ իբրև նրա համար լրացուցիչ հաղորդում։ Համեմատիր նաև՝* Քույրը նրան կոչում էր Սաշա, մայրը՝ Ալեքսանդր, հայրը՝ Սանդրո, մի պառավ կին Ալեքսի էր անվանում. իսկ հաճախ նրան այցելող իր ուսանող ընկերներից մեկն էլ Ալյոշա էր կոչում *(Նար., IV, 72)*։ Նոր կյանքը միշտ նոր պահանջներ է դնում մարդու վրա, իսկ ես հետադեմներից և անշարժներից չեմ *(Նար., I, 137)*։ Եվ նա կարդում է հափրշտակված, կարդում է բարձրաձայն, իսկ դուրսը՝ առավոտ է արդեն *(ԵՉԵ, 248)*։ Կարինեն մի անգամ էլ աչքի անցկացրեց սենյակը, հուզմունքից դողացող ձեռքով բացեց ծոցատետրը, իսկ հենց նույն րոպեին դուռը ճռռաց *(ԲՎԻԳԵ, 136)*։

Հարակցական հարաբերությամբ են կապված նաև այնպիսի նախադասությունները, որոնց մեջ մասամբ գոյություն ունի պատճառական ու հետևանքային հարաբերություն. օրինակ՝ Ես հետևում էի Պետոյին քայլ առ քայլ և ամեն րոպե սպասում մի դժբախտության, որովհետև շարունակ իջնում էինք ներքև, իսկ ձիերի սմբակները գետինը չէին բռնում *(Մուր., II, 19)*։ Բայց առհասարակ նա շատ ամբարիշտ բնություն ունի, իսկ ինձ տեսնելով ատում է *(Թ., III, 351)*։ Այդ լիքը տան բոլոր իրերի և մարդկանց վրա կար ապահով կյանքի կնիքը, իսկ փայլուն սաղավարտը կարծես ավելի զարդ էր *(ԱԲԵ, 291)*։

Բայց *շաղկապը սովորաբար արտահայտում է հակադրական, սահմանափակման հարաբերություն, սակայն այն հաճախ հանդես է գալիս իբրև հարակցական կապակցության շաղկապ և նա-*

խորդ իսկ շաղկապից տարբերվում է նրանով, որ բայց*-ով շղթայվող հարակցական կապակցության մեջ բացահայտ զգացվում են սահմանափակման երանգները. այդպիսի կապակցությունը համադասության մասերի առանձին անդամների հակադրություն չէ, այլ երկու մասերը տրամաբանական այնպիսի ուժգնությամբ են կապվում, մանավանդ որ մեծ մասամբ առաջին մասի որևէ անդամ երկրորդ մասում կրկնվում կամ հիշեցվում է, որ ստացվում է հակադրության ուժգին երանգավորում. օրինակ՝* Լավ խոսքեր են, բայց ով էր էդ Միրզա Մեհդին *(ԱԻԵ, 220)*։ Թող այսուհետև ինչ որ ուզում է լինի, բայց ես զգում եմ, որ առանց նրան ինձ համար շատ դժվար է ապրել *(Նար., I, 323)*։ Գուցե տասներորդ անգամը լիներ իջնելիս այդտեղ, բայց, ինչպես միշտ, այս անգամ էլ փոփոխություն էի նկատում *(Փափ., 192)*։

Ինչպես արդեն ասվեց, հարակցական հարաբերությամբ կապակցվող նախադասություններից երկրորդը լրացնում, ճշտում, դառնում է հարակից հաղորդում առաջին նախադասության բովանդակության համար, ուստի հաճախ բայց *շաղկապով կապակցվող համադասության առաջին մասի որոշ անդամներ քերականական այլ ձևավորումներով կրկնվում կամ հիշեցվում են երկրորդ մասում, ուր ճշտվում են դրանք, կամ դրանց մասին ասվում է լրացուցիչ որևէ բան, կատարվում է հավելում. օրինակ՝* Ես արդեն հեռանում եմ այստեղից, բայց նախքան հեռանալս տիկնոջը փող պիտի վճարեմ *(Մուր., II, 374)*։ Ուրիշ ինչ տխուր նորություն պիտի բացվեր ինձ համար, գուշակել չէի կարողանում, բայց, կարծես, սպասում էի նրան *(Նույն տեղում)*։ Ոչինչ, Տիգրանիկս, Ոչինչ չկա, մի վախիր... բայց այսօր դու ուսումնարան չպիտի՛ գնաս *(Նար., I, 322)*։ Մարդը իր հարազատ աղջկանը շատ էր սիրում, բայց խորթ աղջկան էլ չէր ատում *(ՂԱՀ, 9)*։ Ախ, ինչո՞ւ ես այսպես գունատ եմ,—ասում էր նա տխուր նայելով յուր դեմքին, բայց նա չգիտեր, որ այդ գունատությունն ավելի էր սազում նրա դեմքին *(Նար., I, 322)*։ Արդյոք առաջինի՞ն, բայց ինչպե՞ս պիտի դիմանար նա այն անտանելի կրակին... Երկրորդի՞ն, բայց նա ամենապարզ կերպով զգում էր, որ առաջինը նրան մի վայրկյան հանգստություն չի տա *(Նույն տեղում, 323)*։

Հարակցական հարաբերությամբ սակավ կիրառվում է նաև սակայն*, որն այս դեպքում առանձնապես չի տարբերվում* բայց *շաղկապից, համեմատիր՝* Արևն անկաշառ է անշուշտ, սակայն ինչու նա էլ այնպես շռայլ կտրում է իր երկար ուղին *(ԱԻԵ, 348)*։

Վերջապես մտածեցեք դուք ձեր պատվի մասին, պատվի, որն ամեն ինչ է մարդու համար, առանց որի մարդս ոչինչ է, սակայն ոչ թե ոչինչ, այլ ամենաանպիտանը, ամենազզվելին է բոլոր արարածների մեջ *(Նար., I, 329)*։

Հարակցական հարաբերություն է արտահայտում նաև մանավանդ *շաղկապը. այն, ինչ որ հաղորդվում է առաջին նախադասության մեջ, դրան իբրև հարակից հավելում ավելի ուժեղ արտահայտվում է երկրորդ նախադասությամբ. օրինակ՝* Հիշում եմ նրա խաղերը մեր պարտեզում ու առվի ափին, նրա խոսքերն ու ծիծաղը, և մանավանդ ինձ տանջում է մի հիշողություն *(ՍԶՄԿՊ, 60)*։ Ուրիշ անգամ ես հազիվ թե կատարեի նրա պահանջը այդ ժամին, բայց այժմ նրա ձայնի մեջ զգում եմ անհուն տխրություն, որ թափանցում է մինչև հոգուս խորքը, մանավանդ նրա լացը. հորս՝ տերտերի հետևից գնալը, Արտաշի լռությունը և թափառուն հայացքը, որ նետում էր առաստաղին ու պատերին, տարօրինակ, զարմանալի են թվում *(Նույն տեղում, 58)*։ Մեզնից խորշելու ամենևին հարկ չկա, մանավանդ որ ձեր վարժուհին մեր աղջիկն է *(Նար-Դոս)*։

Հակառակ հետևանք են արտահայտում այնուամենայնիվ, այսուամենայնիվ, այնուհանդերձ, *(այսուհանդերձ)*, համենայն դեպս *շաղկապները, որոնցով կապակցվող ետադաս նախադասության գործողությունը չսպասված արդյունք է ցույց տալիս, այսինքն՝ համադասության առաջին մասում տեղի ունեցող գործողությունից պետք է երկրորդ մասում սպասվեր այս կամ այն չափով համապատասխան մի գործողություն իբրև հետևանք, սակայն կատարվում է այս վերջինին բոլորովին հակադիր մի գործողություն. օրինակ՝* Երկար ժամանակ աշխատում է այստեղ, համարյա իր ձեռքերով է հիմնադրել գործարանը, այնուամենայնիվ նրա համար կոպեկի գին չունի գործարանի պատիվը *(ԲՎԻԳԵ, 214)*։ Մի խոշոր գործարանի պարտկազմակերպության քարտուղար է, այնուամենայնիվ իրեն այստեղ. այս կարևոր ժողովն է բերել ոչ թե գործարանի ընդհանուր շահը... *(Նույն տեղում, 91)*։ Տիկնոջը հանելի չթվեցավ միայն Շապուհի կանանցը վերադարձնելը, այնուամենայնիվ, թաքցնելով յուր խորին դժկամությունը, հենց առաջին րոպեում... նա գրկեց և համբուրեց յուր քաջարի հերոսի արժանի ճակատը *(ՐԵԺ, VII, 383—384)*։ Ջանիկը համաձայն էր նրա հետ. թե ոչ, համենայն դեպս ոչինչ չնշեց իր մոտ *(ԲՎԻԳԵ, 145)*։

Ծանոթություն.—Հիշյալ շաղկապները ամենից հաճախ կիրառվում են գիջական երկրորդական նախադասությամբ բարդ ստորադասական նախադասության գլխավորի եզրում իբրև չնայելով որ, թեպետև, որքան որ *և այլ ստորադասական շաղկապներին զուգադիր շաղկապներ. իրենց պաշտոնով և մանավանդ իրենցով կապակցվող նախադասության հետ ունեցած հնչերանգային ու իմաստային սերտությամբ վերոհիշյալ կապակցությունների մեջ համաանդում են նաև ստորադասական հարաբերություն։ Մեր քերականության մեջ դրանք համարվում են համադասական շաղկապներ, ուստի հարկ համարեցինք այստեղ ուսումնասիրել։*

Այդպիսի շաղկապներ են նաև այսուհանդերձ, այնուհանդերձ, *որոնք գեղարվեստական գրականության մեջ հազվագյուտ են։*

5. ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԿՆԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՎ ՈՒ ՇԱՂԿԱՊԱՅԻՆ ԲԱՌԵՐՈՎ

Երբեմն խոսողը կամ գրողն իր մտքերն արտահայտում է ընդհանուր կերպով և ապա ձևակերպված միտքը նրան թվում է անորոշ կամ ընթերցողի համար անհասկանալի, ուստի և ցանկանում է այն այլ բառերով ու արտահայտություններով մեկնաբանել, բացահայտել։ Այս բոլոր դեպքերում նա օգտագործում է յուրահատուկ շաղկապներ, որոնցով մեկնաբանած, մասնավորած, բացատրված մտքերը կապակցում, կամ ավելի ճիշտ նույնացնում է նախորդ մտքերի հետ. այսպիսի կապակցման միջոցները կոչվում են մեկնական շաղկապներ, որոնք են. այսինքն, այն է, այդ է, այսինքն թե, կամ: *Սրանցով կազմվում են համադասական այնպիսի նախադասություններ, որոնց մեջ երկրորդ, կամ հիշյալ մեկնական բառերով կապակցվող նախադասությունները առաջին նախադասությանը տալիս են լրացուցիչ մեկնաբանություն կամ ավելի ճիշտ, ինչ որ առաջին նախադասության մեջ հաղորդվում է ընդհանուր, անորոշ կերպով, երկրորդ նախադասությամբ մեկնաբանվում, մասնավորվում և ասվում է որոշակի. օրինակ՝* Մինչ Բագրատունի իշխանը շնչում էր ծանր ու մտածում, թե ի՞նչ է լինելու, այսինքն՝ ինչ գազան են թողնելու իր վրա *(ՍԶ, V, 304)*։ Բայց երևի ձեր ասածներից միայն մեկը կլինի, այն է՝ ծնողացս հանգիստ ապ-

րելու մասին նոզամ (*բնագրում Հոգալ. Փափ., 569*)։ Լինել ազնիվ այսպիսի աշխարհում, այդ է՝ լինել ընտրյալ տասն հազարից (*Թ., IV, 70*)։ *Համեմատիր*՝ Երկուսն էլ միասին էին գնում Պարսկաստան, այս խոսքով՝ երկուսին էլ միասին էին տանում Պարսկաստան (*Րեժ, VII, 480*)։ *Այդպիսի մեկնական շաղկապի դեր են կատարում* նշանակում է, այս կերպ ասած *կապակցությունները*։ *Համեմատիր*՝ Այո, լինել ազնիվ մարդ, նշանակում է լինել ընտրյալ տասն հազարներից (*Թ., IV, 70*)։ Ես այլ եմ հիմա, այլևս այն չեմ, նշանակում է՝ նոր հուն եմ մտել (*ԻՋԻ, 177*)։ Մեզանից միշտ ավելին են մարդիկ ուզել, նշանակում է՝ դու էլ, ես էլ դեռ թերացել ենք երևի քիչ (*ԻՋԻ, 194*)։ Կամ *շաղկապի մեկնական նշանակության մասին (տե՛ս էջ 349)*։

Ծանոթություն.—Այսպիսի մեկնական բառերով կապվող նախադասությունները, ըստ էության, մեծ մասամբ լրացուցիչ նախադասություններ են, սակայն լրացուցիչ են ոչ ձևական առումով, այսինքն՝ դրանք նախորդ նախադասության որևէ բաց թողված անդամը, կամ այս ու այն անդամի լրացումը չեն, այլ նոր բառերով ու արտահայտություններով մեկնաբանում կամ ձևակերպում են նախորդ նախադասությունը։ Պետք է նշել, սակայն, որ այդ մեկնական բառերի հետ կիրառվող որ, թե *ստորադասական շաղկապները այդպիսի նախադասությունները կիսով չափ երկրորդական նախադասություն են դարձնում. Համեմատիր*՝ Ով է լինում արդար և ո՞վ մեղավոր, այդ շատ անգամ չի պարզվում. բայց ինձ համար գոնե մի բան մնում է պարզ. այն է, որ գյուղում ծառայող մեր երիտասարդները չեն համենում նույնիսկ ի սեր այդ գործի իրենց փառասիրության մի փոքրիկ մասը զոհել (*Մուր., II, 114*)։ Սակայն մնում էր իմանալ էլի մի բան. այսինքն այն թե՝ յուր թված բոլոր այս գեղեցիկ գործերը, որոնցից ավելին ինքս ամեն օր տեսնում էի իմ աչքով, արդյո՞ք նա առանց դժվարության ու արգելքների էր սկսել գլուխ հանել (*Նույն տեղում, 119*)։

Ծանոթություն.—Հետևյալ մեկնական շաղկապները առաջացել են ամբողջական այս ինքն է, այդ այն է, այսինքն այն է *նախադասություններից, որոնց հաջորդող նախադասությունները արդարև եղել են երկրորդական լրացուցիչ նախադասություններ՝ տվյալ կապակցման դեր կա-*

տարող նախադասությունների համար։ Սակայն հետագայում, երբ այդ միջնորդական նախադասությունները վերածվում են շաղկապների, այսինքն՝ նրանց կառուցվածքը իբրև ձևավորված նախադասություններ լուծարվում է, և դրանք դառնում են կապակցման միջոցներ, խախտվում է նաև ստորադասական կապակցությունը, մանավանդ երբ գործածությունից դուրս են գալիս ստորադասական շաղկապները։ Բայց քանի դեռ լեզվի մեջ կան այնպիսի օրինակներ, ուր հաջորդող նախադասությունը դրանց հետ կապակցվում է **որ, թե** ստորադասական շաղկապներով, դեռևս զգացվում է նախկին հարաբերությունը։ Մուրացանից բերված օրինակներից առաջինը եղել է ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասություն, իսկ երկրորդը խնդիր նախադասություն է, կամ ձևական խնդրի համար որոշիչ։

XI

ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Շարահարություն կոչվում է նախադասությունների այնպիսի կապակցումը, որը կատարվում է առանց շաղկապների ու շաղկապային բառերի։ Շարահարությամբ կապակցվող բարդ նախադասությունները իրենց ձևական առանձնահատկություններով և կապակցման բնույթով ավելի քան մոտենում են համադասական նախադասություններին, այդ պատճառով էլ ուսումնասիրվում են բարդ համադասական նախադասությունների հետ իբրև համադասական նախադասության մի ուրույն տեսակ. սակայն շարահարությամբ կապակցվող բարդ նախադասությունների շղթայավորումը մի ամբողջության մեջ հաճախ դրսևորում է առանձին մասերի որոշակի կախվածության և իշխման հարաբերություն ճիշտ այնպես, ինչպես բարդ ստորադասական կապակցության մեջ է արտահայտվում. այսինքն՝ անշաղկապ նախադասությունների շարահյուսական ամբողջության մեջ նույնպես արտահայտվում են պատճառի, պայմանի, հիմունքի, զիջման, հետևանքի և այլ այնպիսի հարաբերություններ, որոնցով դրանք իրենց ներքին պայմանավորվածությամբ չեն տարբերվում բարդ ստորադասական նախադասություններից։ Տարբերությունն այն է, որ այս վերջինները ձևավորվում, ամբողջանում են յուրահատուկ շաղկապներով ու շաղկապային բառերով, որոնք և դառնում են դրանց առանձնացման ցուցանիշներ, իսկ շարահարական կապակցությունը չունի այդպիսի ձևական ցուցանիշներ։ Շարահարությամբ կապակցվող բարդ նախադասությունների ամբողջականությունը ձևավորվում է դրանց առանձին մասերի նշանակությունների փոխադարձ կապվածությամբ, արտաբերման ու կշռույթի առանձնահատկությունների միասնությամբ։

Բայց քանի որ այս կարգի բարդ նախադասությունները չունեն շաղկապներ ու կապակցող բառեր, ուստի դրանց կապակցումը

համեմատաբար թույլ է, և մասերը դյուրությամբ կարող են անջատվել միմյանցից ու դիտվել իբրև առանձին-առանձին պարզ նախադասություններ, եթե դրանք երկար ժամանակի ընթացքում նշանակության և արտաբերման մի անքակտելի ամբողջություն չեն կազմել, ինչպիսիք առածական խոսքերն ու տարբեր բնույթի դարձվածային կապակցություններն են։

Շարահարությամբ կապակցվող նախադասություններ են կոչվում այնպիսի բարդ նախադասությունները, որոնց առանձին մասերը միմյանց հետ կապակցված չեն շաղկապներով կամ շաղկապային բառերով. դրանց կապակցման հիմունքներ են դառնում նշանակության ընդհանրությունը, կշռույթային ու արտաբերական շարժման ամբողջականությունը. օրինակ՝ Աբդուլ աղան հարուստ էր թագավորի պես. նրա պալատն աշխարհիս ամենագեղեցիկ շենքն էր, նրան էին գովասանում երգիչները, նրա պալատի գեղեցկություններից հաճախ իր «էրժենք» գրքի երեսներն էր լցնում Մանի նկարիչը *(Փափ., 239)։ Այս բարդ նախադասության առանձին մասերը իրար հետ միացած են շնորհիվ այն բանի, որ նախ և առաջ բոլորն էլ վերաբերում են միևնույն թեմային, ապա նկարագրական մի ամբողջություն են կազմում և ունեն միևնույն թվարկման արտաբերությունը, եթե չհաշվենք առաջին նախադասությունը, որին հաջորդող նախադասությունները նրա հետ կապվում են իբրև մի ընդհանուր հաղորդման առանձին պարզաբանող մասեր։*

Վերցնենք մի այլ նախադասություն. Քոչը սարից իջավ, ձմեռանոցները նորից կենդանացան կովերի բառաչից, ոչխարների մայունից *(ՎԱՄԼ, 18)։ Այս բարդ նախադասության առանձին մասերը իրար հետ կապված են փոխադարձ պայմանավորվածությամբ, այսինքն՝ երկրորդ նախադասության մեջ հաղորդված գործողությունը հետևանք է առաջին նախադասության մեջ հաղորդվածի։ Առանձին նախադասությունները միմյանց հետ զուգադրություն են կազմում հետևյալ շարահարության մեջ. օրինակ՝* Կովկասի ամպած երկինքը պարզեց, Հեռու հարավում շողակնի նման Հսկա Մասիսի գագաթը փայլեց վիթխարի Կազբեկ սարի հանդիման *(Թ., «Հաշտություն»)։*

Շարահարությամբ կապակցվող բարդ նախադասությունները ըստ իրենց մասերի ներքին իմաստային կապակցության երկու խմբի են բաժանվում. մի խումբը իր մասերի ներքին նշանակության հարաբերությամբ առավելապես մոտ է համադասական կապակցության, իսկ մյուս խումբը, ընդհակառակը, հարաբերությամբ

նմանվում է ստորադասական կապակցության։ Առաջին խմբին պատկանող բարդ նախադասությունների առանձին մասերը ավելի անկախ են և միմյանց հետ կապվում են գործողությունների հաջորդման միաժամանակությամբ կամ համատեղությամբ, ժամանակների հետևողական հաջորդությամբ, փոխադարձաբար միմյանց համապատասխան երևույթների նկարագրությամբ։ Այս ամենը արտահայտվում է թվարկության կամ զուգադրության արտաբերումով։ Ուրեմն այսպիսի բարդ նախադասությունների առանձին մասերի կապվածությունը պայմանավորվում է դրանց ստորոգյալների արտահայտած քերականական որոշ կարգերի համապատասխանությամբ, դրանց մեջ հաղորդված գործողությունների միանման նկարագրությամբ, թվարկումով ու զուգադրությամբ, որոնք գերազանցապես ձևական միջոցներ են։ Այստեղ բարդ ամբողջության առանձին նախադասությունները դրված են հավասար պայմաններում, և ներքին նշանակությունների փոխադարձ կախվածություն գոյություն չունի։ Անշաղկապ բարդ նախադասությունների այսպիսի կապակցությունը մենք կոչում ենք անկախ շարահարություն։

Անշաղկապ բարդ նախադասությունների երկրորդ խումբը կազմվում է այնպիսի նախադասություններից, որոնց առանձին մասերի մեջ գոյություն ունի փոխադարձ կախվածության հարաբերություն, այսինքն՝ բարդ ամբողջության մի նախադասությունը իր նշանակությամբ կախված է մյուս նախադասությունից, պայմանավորված է նրանով։ Այստեղ մի նախադասությունը մյուսի համար արտահայտում է պայմանի, ժամանակի, պատճառի, հետևանքի և այլ կարգի հարաբերություններ։ Անշաղկապ բարդ նախադասությունների այսպիսի շարահարումը մոտենում է ստորադասական կապակցության, իր կառուցվածքով համեմատաբար ավելի ձուլ է և ավելի բարդ նշանակություն ու արտաբերական միջոցներ ունի, քան նախորդ խումբը։ Անշաղկապ բարդ նախադասությունների այսպիսի կապակցումը կոչում ենք կախյալ շարահարություն։ Բացի այս երկու խմբից շարահարության մի երրորդ տեսակ արտահայտում է հարակցական հարաբերությունը (տե՛ս էջ 383)։

1. ԱՆԿԱԽ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Անկախ շարահարությամբ բարդ նախադասությունները ըստ իրենց արտաբերման ձևի ու միմյանց հետ ունեցած փոխադարձ

հարաբերության լինում են երկու տեսակ։ Մի տեսակը արտաբերվում է թվարկությամբ, իսկ մյուսը՝ զուգադրությամբ։ Թվարկությամբ արտաբերվող բարդ ամբողջության առանձին նախադասությունները ցույց են տալիս այնպիսի գործողություններ, որոնք միևնույն ժամանակում են կատարվում և կամ՝ այնպիսի գործողություններ, որոնք ըստ ժամանակի անմիջապես հաջորդում են միմյանց։ Այսպիսի բարդ նախադասությունները կարող են կազմված լինել երկու և ավելի թեթև դադարներով իրար հաջորդող նախադասություններից։

Զուգադրություն արտահայտող բարդ նախադասությունները կազմվում են երկու նախադասությունից, որոնց ցույց տված գործողությունները միմյանց հետ զուգադրվում են, և որոնք արտաբերվում են համեմատաբար երկար դադարներով ու փոխանակ թվարկման միանման կրկնվող արտաբերության, ունեն տարբեր բարձրություններ։

ա) ԹՎԱՐԿՎՈՂ ԵՎ ՄԻԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՄԱՍԵՐԻՑ ԿԱԶՄՎԱԾ ԱՆԿԱԽ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Միաժամանակություն արտահայտող բարդ ամբողջության առանձին նախադասությունները ցույց են տալիս այնպիսի գործողություններ, որոնք միաժամանակ կամ միատեղ են կատարվում։ Միաժամանակությունը արտահայտվում է ստորոգյալի բոլոր ժամանակներով, այսինքն՝ եթե բարդության առաջին նախադասության ստորոգյալը կիրառված է ներկա ժամանակով, նրան թվարկությամբ հաջորդող նախադասությունների ստորոգյալները միևնույն ներկայով կարող են միաժամանակություն արտահայտել. այսպես և անցյալ ու ապառնի ժամանակների դեպքում. օրինակ՝ Գիշերվան անհուն հովերն են տխուր Ծվում, ծվլթում խավարի միջում, «Որբն» է եղբոր կանչում ցավլուր, բուն է իր դաժան վայր կոնչում *(Թումանյան)*։ Բնությունը սքանչանում էր, փառավորվում էր յուր վաղորդյան հրճվանքով, թռչունները ուրախաձայն երգերով ողջունում էին տվնջյան լուսատուի հանդիսավոր ելքը, ամենուրեք շնչում էր անսպառ հաճություն, ամենուրեք տիրում էր անքառամ զվարթություն *(Ր., III, 557)*։ Մինչ այդ արեգակը հետզհետե ընկղմվում էր, ամպերը հետզհետե մեղմացնում էին իրենց բոցը, լույսի շառավիղն աղոտանում, ծովը թանաքի գույն էր ստանում, կոհակները մեծանում էին, ֆոսֆորային կայծեր արձակում *(Փափ., 343)*։ Այգեստանների վրա բացվում էր առավոտը, բոլոր երդիկ-

ներից ծուխ էր բարձրանում... հոսող առուների վրա իշխում էին ուռենիներն ու բարձրահասակ բարդիները... սկսվում էր ամենօրյա առօրյան, բացվում էին խանութները, սրճարանները, սափրիչանոցները *(ԳՄե, 343)*։ Կանցներ ջրվորը առույգ, Ջուրը կզնգար, Կերգեր ամեն մի առու, Ամեն ծիլ ու ֆար: Բարակ կերգեր մի ծղրիդ, Կխշշար ուռին, Մի թուփ սիրով կտխրեր, կքեֆվեր առվին *(Նույն տեղում, 35)*։ Տավարածն յուր նախիրը տանում է արոտ, խոտհարը գերանդին ուսին դուրս է գնում դաշտ, սայլորդը եզները լծած՝ վարում է անտառ, հարս ու աղջիկներ կուժերը ուսին գնում են ջրի... *(Մուր., II, 14)*։

Միաժամանակություն ու համատեղություն կարող են արտահայտել նաև այնպիսի ստորոգյալները, որոնք չնայած որ ունեն տարբեր քերականական ժամանակներ, սակայն այդ տարբեր ժամանակները ներկայացնում են մի ընդհանուր ժամանակի մասերը, կամ ավելի ճիշտ, միևնույն ժամանակային պահը արտահայտվում է քերականական տարբեր ժամանակներով. օրինակ՝ Արտագերս բերդը ամարճանում էր ընդհանուր ցնծության մեջ, փողոցները զարդարված էին, գույնզգույն դրոշակները ծածանվում էին աշտարակների բարձրության վրա, բնակիչների խուռն բազմությունը լցրել էր հրապարակները *(Ր., III, 381)*։

Միաժամանակություն կարող են արտահայտել նաև անվանական և սրանց հետ միասին բայական ստորոգյալները. օրինակ՝ Արդեն կեսօր էր, արևը կանգնած էր մեր գլխին *(Մուր., II, 10)*։ Ձմեռային ժամանակ էր, երկինքը մութ և ամպամած, ձյունը մեղմով տեղալով հալչում էր հետզհետե *(Մուր., II, 419)*։ Ճանապարհը խորդուբորդ է, ֆարֆարոտ, շուրջը՝ մութ, երկինքը՝ մռայլ *(ՍՁ, V, 316)*։

բ) ԹՎԱՐԿՎՈՂ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՄԱՍԵՐԻՑ ԿԱԶՄՎԱԾ ԱՆԿԱԽ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Բարդ նախադասության մեջ մտնող առանձին նախադասությունների ստորոգյալները ոչ միայն միաժամանակություն կարող են արտահայտել, այլև ցույց տալ այնպիսի գործողություններ, որոնք հաջորդում են իրար հերթականությամբ, այսինքն՝ մի նախադասության մեջ հաղորդված գործողությունը կատարվում է, ապա սրան հաջորդում է երկրորդ նախադասության ցույց տված գործողությունը և այսպես հաջորդաբար. օրինակ՝ Երեկոն փռեց իր թևերը մութ, Անուշ նիրհեցին երկինք ու երկիր... Լայն ստվերները

ընկան անաղմուկ, Անուշ նիրհեցին ծով, անտառ ու լեռ (*Տերյան*)։ Գինու և օղու բաժակները դատարկվեցին, դանակ-պատառաքաղները սկսեցին գործել, մետաղի ու ափսեների հնչյունները խափանեցին ընդհանուր լռությունը (*Քրիստ., IX, 16*)։

գ) ՀԱԿԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԱՆԿԱԽ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Հակադրական շարահարությունը կազմվում է երկու նախադասությունից. առաջին նախադասության մեջ հաղորդվում է մի որևէ երևույթ, իրողություն, երկրորդ նախադասության մեջ հաղորդված իրողությունը, երևույթը հակադրվում է նախորդին, այսինքն՝ երկրորդ նախադասությամբ հաղորդվում է մի այնպիսի բան, որ հակադիր է առաջին նախադասության մեջ հաղորդվածին։ Շարահարության երկու նախադասությունն էլ դրական են լինում. օրինակ՝ Խոռունկ սիրտս հուր-հնոց էր, Սերս ու երգս բոցի նման հիմի կյանքս մութ ու ձմեռ (*ԻՍ, I, 83*)։ Թրի կտրածը կլավանա, լեզվի կծածը չի լավանա (*Առած, 18*)։ Ողջը փոխվում է, դու նույնն ես դարձյալ (*ՀՀՀԸ, 11*)։ Ալիքը կայտառ գնում են գալիս, Սև ժայռը նախկին յուր վիշտն է լալիս (*Նույն տեղում, 12*)։ Դեռ երեկ քո միտքը խավար էր, իմաստուն ես արդեն հիմա դու (*ՉԸ, 67*)։ Սիրտս վառվեց մոխիր դարձավ, ինքը կրակ ու հուր մնաց (*ՉԸ, 47*)։ Օրերը ծուխ կըլին, տարին կմնա (*Նույն տեղում*)։ Սարը սարի չի հանդիպիլ, մարդը մարդին կհանդիպի (*ՊՊԵԺ, III, 176*)։

Երբ հակադրության երկու եզրերն էլ դրական նախադասությամբ են արտահայտված, ինչպես պարզ երևում է օրինակներից, շարահարությամբ կազմված բարդ նախադասությունները հեշտությամբ կարելի է իսկ, բայց *շաղկապներով բարդ համադասական նախադասության վերածել։*

Հակադրություն արտահայտող շարահարության առանձին նախադասություններից առաջինը կարող է ժխտական լինել, իսկ երկրորդը՝ դրական. այն ինչ ժխտվում է առաջին նախադասության մեջ հաղորդվածի նկատմամբ, երկրորդ նախադասության մեջ հաստատվում է, որով էլ ստեղծվում է հակադրություն. օրինակ՝ Այնտեղ այդպիսի ծեռնածություններ բանի տեղ չեն գալիս, Այնտեղ ամեն գործ դրվում է մեջտեղ հարազատ գույնով (*Շեքս., I, 65*)։ Բայց այժմ ու չկա ոչ մարդը, ոչ ձին էդ սարի վրեն, Լոկ քամին ազատ իջնում է էնտեղ ամպի մեջերեն (*ՌՊԵ, 80*)։ Նրանք չունին հաստատ բնակություն, վարում են թափառական կյանք (*ՊՊԵԺ, 278*)։

Ինչպես երևում է օրինակներից, երբ հակադրական շարահարության մեջ առաջին նախադասությունը ժխտական է, շարահարությունը կարելի է դարձնել այլ, այլ միայն *շաղկապներով հակադրական բարդություն։*

դ) ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԱՆԿԱԽ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Զուգադրությամբ շարահարության առանձին նախադասությունները ընկնում են թվարկությամբ ու հակադրությամբ արտահայտված շարահարությունների միջև իբրև մի միջին օղակ. մինչդեռ թվարկվող նախադասությունները արտաբերվում են միևնույն կրկնվող թվարկման հնչերանգով և հազիվ նկատելի դադարներով։ Հակադրական նախադասություններից առաջինը արտաբերվում է ավելի բարձր, երկրորդը ավելի ցածր, իսկ սրանց միջև եղած դադարը համեմատաբար երկար է։ Զուգադրությամբ շարահարության նախադասությունները արտաբերվում են միևնույն եղանակով, բայց դադարը ավելի տևական է։ Զուգադրությունը կարող է կատարվել թե առանձին նախադասությունների և թե զույգ-զույգ նախադասությունների միջև. ըստ որում զույգ նախադասությունները իրար նկատմամբ թվարկվող են, իսկ հաջորդ զույգի (կամ կենտ նախադասության) նկատմամբ զուգադրական. օրինակներ՝ Կաթիլ-կաթիլ ամպն է ցողում Սև ու պղտոր երկնքեն, Մաղիկ-մաղիկ վերքս է ծորում իմ անգյուման սև սրտեն *(ԱԻԵ, 14)*։ Գիշերն եկավ, զով հովն ընկավ, Աստղունք լուսին ձայն տվին, Լուսնյակն ելավ, մով-ծովն ընկավ, Հավքերն ինձի ձայն տվին *(նույն տեղում, 15)*։ Էն Թըմկա ձորում սև ա՛մպն է գոռում, էն շա՛նթն է ճայթում էնպես ահարկու։ Էն Թըմկա ձորում Թաթուլն է կռվում, էն թուրն է շաչում էնպես ահարկու *(Թումանյան, «Թմկաբերդի առումը»)*։ Էս տախտի վրա աղոթում մի վանք, էն ժայռի գլխին հսկում է մի բերդ, Մութ աշտարակից, ինչպես զարհուրանք, Բվի կռինչն է տարածվում մերթ-մերթ *(Թումանյան, «Լոռեցի Սաքոն»)*։ Թռչունները ուրախ-ուրախ ճախրում էին մի թփից մյուսը։ Գույնզգույն թիթեռները գույնզգույն ծաղիկների նման, ցանված էին օդի մեջ։ Սպիտակ արագիլը, կարմիր ոտները հորիզոնական դիրքով ուղիղ մեկնած, լայն թևերով թափահարում էր, շտապելով դեպի Արաքսի մորուտները։ Ձեռնասուն եղջերուները, վայրենի վիթն ու այծյամը դուրս էին եկել Խոսրովի արքայական անտառներից *(Ր., III, 472)*։

Ե) ԱՆԿԱԽ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ, ՈՒՐ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ Է ՆԱԽՈՐԴԻՑ ԲԽՈՂ ՀԱՋՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Այս կարգի շարահարությունը հակադրական շարահարության նման կազմվում է երկու նախադասությունից. առաջին նախադասությունը արտահայտում է որևէ գործողություն, իսկ երկրորդ նախադասությունը առաջ է գալիս իբրև տվյալ գործողության տրամաբանական հաջորդություն։

Երկու նախադասությունն էլ արտասանվում են ցածր արտաբերումով (երկրորդը համեմատաբար ավելի ցածր է). մի նախադասությունը մյուսից բաժանող դադարը միջին տևողությամբ է, այսինքն՝ ավելի երկար է, քան թվարկվող նախադասությունների միմյանց հաջորդող տևողությունը, բայց ավելի կարճ է, քան հակադրական նախադասությունների միջև ընկած տևողությունը. օրինակ՝ էլի գառուն կգա, կբացվի վարդը *(ՋԸԵ, 15)*։ Գոզալը լաց կլի, կընկնի առցունքը *(նույն տեղում)*։ Ջարկեցի ճակատիս... իսկույն աչքերիցս կայծեր դուրս թռան *(Թ., III, 209)*։ Հրացանը բացվեց, շամփուրը կայծակի արագությամբ սլացավ *(նույն տեղում)*։ Եվ թև առան, թռան օրեր ու տարիք, Վառ կտրիճը դառավ դողդոջ մի ծերուկ *(ԱԻԵ, 142)*։ Երեկոն փռեց իր թևերը մութ, Անուշ նիրհեցին երկինք ու երկիր *(Տ., I, 60)*։ Սարի ետևում շողերը մեռան, Անուշ դաշտերը պատեց կապույտ մեգ *(նույն տեղում, 55)*։ Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից, Սերտ բարեկամք անջատած են ինձանից *(ՌՊԵ, 57)*։ Ամպեց, կորավ լուսնկան *(Շիրազ)*։

2. ԿԱԽՅԱԼ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Կախյալ շարահարության մեջ, ինչպես արդեն ասվեց, գոյություն ունի առանձին նախադասությունների փոխադարձ կախվածություն, այսինքն՝ նախադասություններից մեկը արտահայտում է մյուսի հիմունքը, պայմանը, պատճառը և այլն. ըստ էության այդպիսի նախադասությունը մոտենում է բարդ ստորադասական կապակցության, միայն այն տարբերությամբ, որ այս դեպքում բացակայում են շաղկապներն ու կապակցող բառերը։ Կախյալ շարահարության մեջ առանձին նախադասություններն ավելի սերտ ամբողջություն են կազմում, քան անկախ շարահարության մեջ։ Այս վերջին դեպքում շարահարության առանձին նախադասությունները դյուրությամբ կարող են փոխել իրենց տեղը, որովհետև փաստորեն լրացուցիչ և լրացյալ նախադասություններ են և լրացուցիչը

շարադասվում է ըստ իր լրացյալի դիրքավորման։ Գուցե միայն հետևանք արտահայտող շարահարության մեջ դժվար է առաջին նախադասությունը տանել երկրորդի տեղը կամ ընդհակառակը։

ա) ՊԱՅՄԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԽՅԱԼ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանի հարաբերությամբ միմյանց հետ կապված շարահարության առանձին մասերից պայման արտահայտող նախադասությունը սովորաբար նախադաս է և հանդիսանում է երկրորդ նախադասության ստորոգյալի գործողության պայմանը։ Առաջին նախադասությունը իբրև կախյալ նախադասություն սկսվում է ցածր արտաբերումով և յուրահատուկ պայմանական ձգվածությամբ ու որոշ դադարով։ Այսպիսի նախադասությունները գերազանցապես կիրառվում են ըղձական եղանակի ապառնիով. եթե նույնիսկ այլ ժամանակներով կիրառվում են, այդպիսի դեպքում էլ պայման արտահայտող նախադասության ստորոգյալը ապառնիի նշանակություն է ստանում։ Երկրորդ նախադասության, որ տվյալ դեպքում շարահարության մեջ իշխող դիրք է գրավում, ստորոգյալը առավելապես կիրառվում է պայմանական ապառնիով։ Այսպիսի կապակցության մեջ պայմանի հարաբերությունը երբեմն ընդհանուր բնույթ ունի և ավելի ցույց է տալիս հնարավորություն, անհրաժեշտություն, հարկադրվածություն և այլն։ Առանձին նախադասությունների ստորոգյալների ժամանակային պայմանավորվածությունը մղվում է ետին գծի վրա և երկրորդ նախադասությունը արտահայտվում է հրամայականով կամ որևէ ապառնիով. օրինակներ՝ Փողով ուզեն, չտա, ապրանքով ուզեն, կտա («Մարգարիտներ», 19)։ Չգայիք դուք, ով գիտե, ձեր տեղը պիտի բռնեին ինչ-որ հայեր կամ թուրքեր (Շիրվ., V, 147)։ Ժամանակը քեզ չի հարմարի, դու ժամանակին հարմարի (Առած., 15)։ Օրը մեզ հետ չի գալի, մենք օրի հետ պիտի գնանք (Նույն տեղում)։ Անեմ, էնքան ես ուժ չունեմ. չանեմ, կուտի. ես ինչ անեմ (Թ., III, 262)։ Մեռնեմ էլ, պետք է բարձրանամ (Նույն տեղում, 275)։ Կռիվ կուզես, կռիվ անենք (ՍՁ, V, 383)։ Արև լինի, մարդու վրա չի ցաքի* (Առած., 82)։ Ձեռին օձ լինի, մարդու վրա չի գցի (Նույն տեղում)։

Շարահարության մեջ էլ երբեմն պայմանի հարաբերության հետ համատեղվում է ժամանակի և հակադրության հարաբերություն, այսինքն՝ շարահարության պայման արտահայտող նախա-

* Առածների բարբառային ձևերը մասամբ գրականի ենք վերածում։

դասությունը նաև դրսևորում է ժամանակային հարաբերություն. օրինակ՝ Կնիկս մեռնի, մինն էլ կճարեմ *(Առած., 31)։* Կամդ կով լծեցիր, իմացիր բանդ բուրդ է *(Առած., 41)։* Դանակ տայիր, արյուն չէր կաթիլ *(Թ., III, 109)։* Երեf մաներ ունենամ, կտանեմ ճացի կտամ, կբերեմ՝ կուտեf *(նույն տեղում, 118)։* Շատ տեսնում ես, fիչ խոսիր *(Առած., 56)։* Եկել եf այստեղ (ըստեղ) հասել, ետ դարձնել չի լինի *(ՊՊԵԺ, 1, 437)։ Պայմանա-հետևանքային հարաբերություն է արտահայտում նաև այնպիսի շարահարությունը, ուր առաջին նախադասության մեջ դրական կամ ժխտական ձևով արվում է այնպիսի պնդում, որի հակադիր գործողությունը իբրև պայման առաջ կբերեր հետևանքային մի գործողություն, սակայն այսպիսի շարահարության մեջ պայման հանդիսացող այդ հակադիր գործողությունը չի արտահայտվում, այլ մնում է միայն նախորդը, որ դառնում է պայման կամ հիմունք հետևանքի համար. օրինակ՝* Այդ բաների վրա չպետf է այդպես երկար մտմտալ, մարդ կխենթանա *(Շեքս., I, 132)։ Լրիվ կազմությամբ տվյալ նախադասությունը պետք է լիներ.* Այդ բաների վրա չպետf է այդպես երկար մտմտալ, եթե մտմտանf, մարդ կխենթանա: *Շաղկապավոր համադասության մեջ այդ միջանկյալ կրճատվող նախադասությունը փոխարինում է* այլապես *շաղկապը.* Պետf է լավ մտածել, այլապես ամեն ինչ կկորչի:

Պայմանի նախադասությունները հաճախ արտահայտում են բացահայտ ժամանակային հարաբերություն, և չի կարելի ասել, որ հարաբերությունն է գերակշռում, պայմանը, թե ժամանակը. օրինակ՝ Մեկին չես ճանաչում, մյուսի բանն են ներս բերում *(ՊՊԵԺ, II, 411)։* Մեկի հետ խոսում ես, նա է մեջ ընկնում: Տուն ես շինում, հիմքը խորը փորիր:

բ) ԶԻՋԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՊՅԱԼ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Զիջական հարաբերություն արտահայտող շարահարությունը ըստ իր արտաբերման և շարադասության չափազանց մերձավոր շփում ունի պայմանի հարաբերություն արտահայտող շարահարության հետ։ Զիջական հարաբերություն արտահայտող առանձին նախադասությունը նախադաս է և պայմանի փոխարեն ցույց է տալիս հակառակ հիմունքը, այսինքն՝ մի պայման, ըստ որի չի կատարվում հաջորդ նախադասության գործողությունը, ընդհակառակը, երբ տեղի պետք է ունենար այդ գործողությունը, չի կա-

տարվում, իսկ երբ չպետք է կատարվեր, տեղի է ունենում։ Կամ՝ առաջին նախադասությունը արտահայտում է մի այնպիսի պայման, ըստ որի երկրորդ նախադասությունը դրական ելք պետք է արտահայտեր, սակայն հակառակ դրան արդյունքը բացասական է (եթե առաջին նախադասությունը ժխտական չէ)։ Վերևում բերված օրինակների հետ համեմատիր հետևյալները. Հազար կնիկ ճավաfվեն, ցավը ծննդկանինն է (Առած., 13)։ Մի տարի էր այդ ամենը, դեռ չէր ընտելացել (Փափ., 419)։ Աշխար անցիր, Արարատի նման ներմակ գազաթ չկա (Չարենց)։ Լավ լինես, վատ լինես, մերն ես (ՔԹՈՀ, 644)։ Զիջական նախադասության սկզբում հեշտությամբ կարելի է դնել թեկուզ, չնայած, թեպետ շաղկապները, և առանց նշանակության որևէ փոփոխության շարահարությունը կփոխվի զիջական հարաբերությամբ բարդ ստորադասական նախադասության։

Զիջական հարաբերությամբ են շարահարվում նաև այնպիսի նախադասություններ, որոնցից առաջինը ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որից բնավ չի բխում երկրորդ նախադասության արտահայտած գործողությունը, այսինքն ստացվում է մի անսպասելի հետևանք. օրինակ՝ Հայրը խաղող կերավ, տղան գինովցավ (Առած., 11)։ Ձին ու ջորին կովեցին, էշը ոտնատակ գնաց (Նույն տեղում, 12)։ Կերավ կուզ, պատռավ թուզ, աչfն ելավ տատրկուն դուս (Առած., 11)։

Զիջական հարաբերություն է դրսևորվում մասամբ նաև այնպիսի շարահարության մեջ, ուր երկու նախադասություններն իրար հակադիր գործողություններ են արտահայտում, այսինքն՝ վերաբերում են անկախ շարահարությանը. համեմատիր՝ Խաղում են ալիf, ուրախ կարկաչում, նա կրկին անշարժ (է), նա կրկին տրտում (ՀՀՀ, 12)։

գ) ՊԱՏՃԱՌԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԽՅԱԼ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Կախյալ շարահարության մեջ նախադասություններից մեկը արտահայտում է այնպիսի մի գործողություն, որ պատճառ է դառնում մյուս նախադասության գործողության համար։ Պատճառական հարաբերությամբ շարահարված երկու նախադասությունները միմյանցից տրոհվում են առանձնապես չընդգծվող դադարով և ձայնի բարձրացման ու իջեցման ոչ սուր անցումներով։

Սովորաբար պատճառ հանդիսացող նախադասությունը նախադաս է կիրառվում, իսկ նրա հետևանքային գործողությունը ար-

տահայտող նախադասությունը՝ ետադաս։ Երբեմն պատճառի նախադասությունը այնքան թույլ է արտահայտում պատճառը, որ շարահարությունը մոտենում է հետևանքային կապակցության. օրինակ՝ Սիրտս ուժգին տրոփեց, վաղուց էր, շատ վաղուց աշուղ չէի տեսել, սազի նվագ չէի լսել *(ԱԻԵ, 294)։* Կատուները գնացին, մկների ճանապարհը բացվեց *(Առած., 17)։* Ծները կռվեցին, անցորդի բանը ճաշողվեց *(նույն տեղում)։* Տանը չկա տանտիկին, ճորթին ասում են լուստիկին *(նույն տեղում, 18)։* Բոլորը պատահեցին, բոլորը մորթոտեցի *(Թ., III, 152)։* Իմ դրած պայմանն է, ես էլ պետք է տուժեմ *(նույն տեղում, 154)։* Արին կուշտ էր, բան չկերավ *(ՍՁ, V, 383)։*

Երբ հետևանքային գործողություն արտահայտող նախադասության ստորոգյալը կիրառվում է հրամայական եղանակով, պատճառի նախադասությունը դառնում է ետադաս. օրինակ՝ Հանդիմանիր ինձ, անիծիր, ես արժանի եմ *(Շիրվ., VI, 40)։* Այ տղա, դե վեր կաց, է, օրը ճաշ դառավ *(Թ., III, 152)։* Աշխատիր, տոկա անդադար, ստեղծիր անդոլ, դա կամուրջ է *(ՁԸ, 68)։* Մանաս, տապ արա, թրի սուր ժամանակն է *(ԱԲԵ, 79)։* Ջարքուն կաց, Առաքելը ճանկարծ է ֆեզ նեղը գցելու *(նույն տեղում, 80)։* Մի ֆաշվեֆ, ես ինֆս գյուղացի եմ *(ՊՊԵԺ, III, 382)։*

Սակավ պատահում է՝ պատճառի նախադասությունը ետադաս է կիրառվում նաև այն ժամանակ, երբ հետևանքային նախադասության ստորոգյալը հրամայական եղանակով չի գործածված. օրինակ՝ Մոր անեծքը չի բռնի, ծծի կաթը դեմ կառնի *(Առած., 33)։* Խեշանի կասկածները ֆանի գնաց ավելացավ, յասավուլը շատ ուշացավ *(ՊՊԵԺ, I, 542)։*

Երբեմն պատճառի և պայմանի հարաբերությունները համատեղվում են. բավական է պատճառի հարաբերություն ցույց տվող նախադասության ստորոգյալն արտահայտենք ըղձական ապառնիով, պատճառի հարաբերությունը կդառնա պայմանի. համեմատիր՝ Հեռացար, մոռացար *(Առած., 17)*—Հեռանաս, կմոռանաս: Ծառ մի բարկանա, կկտրվես *(Առած., 102)*—Ծառ բարկանաս, կկտրվես: Ծառ մի անուշանար, ճանճերը վրադ կփակչեն—Ծառ. անուշանաս, ճանճերը վրադ կփակչեն *(Առած., 102)։*

դ) ԽՆԴՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԽՅԱԼ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Այսպիսի շարահարության մեջ առաջին նախադասության ստորոգյալը սովորաբար ներգործական սեռի բայ է առանց որևէ

խնդրի, իսկ երկրորդ նախադասությունը ամբողջովին այդ ներգործական սեռի բայ-ստորոգյալի խնդիրն է։ Յուրաքանչյուր ներգործական բայ-ստորոգյալ նախադասության մեջ որևէ խնդիր է պահանջում. եթե չկա այդ խնդիրը, ապա այն ենթադրվում է։ Երբ խնդիրը ներգործական սեռի բայ-ստորոգյալ ունեցող նախադասության սահմաններից դուրս է գալիս, այլևս չի կարող մի բառով արտահայտվել, որովհետև կապակցության մեջ չի մտնի. այս դեպքում որպեսզի խնդիրը կապվի իր ստորոգյալի հետ, պետք է ձևավորվի իբրև նախադասություն. այսպիսի խնդիր նախադասությունը ոչ միայն շաղկապով է կապվում նախորդ նախադասությանը, այլև առանց շաղկապի։

Սովորաբար առաջին նախադասությունը, որ տվյալ դեպքում գլխավոր նախադասությունն է, ունենում է ասացական, իմացական, տեսողական, գործողության մի որևէ բայ-ստորոգյալ, ինչպիսիք են օրինակ՝ ասել, խնդրել, պահանջել, ուզել, գիտենալ, տեսնել, թողնել, հիշել, վկայել, մոռանալ, իմանալ, նայել, հայտնել, կարծել *և մի քանի այլ բայեր. ահա օրինակներ.* Հետո էլ խնդրեցինք՝ բանը վերջացնի գեղական կարգով *(Թումանյան, «Հառաչանք»)*։ Դասամիջոցներին խաղի ժամանակ էլ չէր թողնում մեզ հետ խաղան, ասում էր՝ կողմնակի, օտար երեխաները իրավունք չունեն աշակերտների խաղերին խառնվելու *(Թ., III, 118)*։ Ու մի օր էլ մենք տեսնում էինք երեք-չորս փոքրիկ ձագեր բույնի մեջ գլուխները օրորում էին ու մանուկ ձայնով լակ-լակ անում *(ԻՍ., III, 169)*։ Ասում են վիթխարի հերոս, հանճարեղ է եղել Իսքյանդարը *(ՉԸ, 66)*։ Նա կարծում է՝ արդեն իմաստուն է *(Նույն տեղում, 65)*։ Հիշիր՝ քանի տեսակ զբաղմունք ունեմ *(Շիրվ., VI, 6, 27)*։ Մաղթենք ամեն բան լավ անցնի *(Շեքս., I, 239)*։ Ասում են՝ և գելից է առաջ եկել, և շնագելից, և մարդագելից, և աղվեսից *(Թ., III, 125)*։ Երանի մի իմանամ՝ մարդու սրտի էս նեղացած ժամանակը դու ինչ ես խոսում *(Նույն տեղում, 41)*։ Ես չգիտեմ՝ նա ուր է գնում *(Շիրվ., VI, 14)*։ Տեսնում եմ՝ էլ թագավոր, թագուհի, աղջիկ, պալատականներ առջևս չոքած աղոթում են *(ԴԴՎ, 587)*։ Հիշո՞ւմ ես, հիշո՞ւմ ես՝ խշշում էր աշունը, ձմեռն սպասում սարից անդին *(ԳՄԵ, 65)*։

Տարահարության մեջ հաճախ խնդիր դարձող նախադասությունները սկսվում են հարցական դերանուններով, որոնք մասամբ կապակցող նշանակություն են ստանում. օրինակ՝ Կիև գնամ մի, գնամ մի տեսնեմ, ինչ է կատարվում էնտեղ Կիևում *(Թ., II, 227)*։

Ու միտք է անում ջահել Դոքրինան, Ո՞ր կողմից արդյոք նրան մոտենա *(Նույն տեղում, 232)*։ Տեսնո՞ւմ ես, ինչպես գեղեցիկ լուսավորված է քաղաքը *(Ր., III, 310)*։ Գիտե որ ժամին որ րոպեին որտեղ ինչ է լինում, ուր է գնում *(Նար., IV, 72)*։ Չէր իմանում՝ ինչպես վերջ տա այդ իրեն համար անախորժ տեսարանին *(Նար., VII, 257)*։ Ասի, ինչ ուզում է լինի, ընթրիքի համար մի քանիսը պետք է զարկեմ *(Թ., III, 209)*։ Ով գիտի՝ ով ինչ է մտածում, ով ինչ է հիշում *(ԳՄԵ, 425)*։ Երբեք չեմ կարող մոռանալ, ինչպես իմ հանգուցյալ հայրը վսեմ և ազդու բառերով պատմեց ինձ Այղր գյուղի բոլոր պատմությունը *(ՊՊԵԺ, I, 308)*։ Կանչի էն սհաթս ձեր գեղի կոտորված խալխին, տեսնեմ՝ քանի՞ գլխանի եք *(Նույն տեղում, 450)*։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.—Կարծես, ասես, տեսնես *բառերից հետո եկող նախադասությունը չպետք է համարել խնդիր նախադասություն։ Այս բառերը արդեն ստացել են եղանակավորիչ բառերի նշանակություն. օրինակ՝* Կարծես սիրում եմ այս աղջկան *(ԻՄ., III, 38)*։ Տեսնես էն որ թագավորն է էն մյուսի հողը խլել *(ԳՄԵ, 246)*։ Ասես աչքն էր ուզում կոխի *(ԱԲՄԹՆՁ, 114)*։ Ասես առուներով աղբաջուր է հոսում *(Նույն տեղում, 118)*։ *Վերոհիշյալ բառերը կորցրել են իրենց բայական նշանակությունը. համեմատիր՝* Դու մի ասիլ՝ մերն է սովորեցրել *(Թ., III, 259)*։ Դու մի աս(իլ) *կապակցությունը նշանակում է* այնինչ *բանից պարզվում է, դուրս է գալիս որ*։

Շարահարության մեջ խնդիր-նախադասությունը վերջից անմիջականորեն հարում է նախորդ նախադասության ստորոգյալին, մանավանդ երբ այս վերջինը (ստորոգյալը) ուղղակի խնդիր նախադասությանն է նախորդում։ Սա շատ բնական է և տրամաբանական նաև հնչերանգային նկատառումներով։ Ներգործական սեռի բայ-ստորոգյալը առանց իր խնդրի անվերջացածություն է արտահայտում, այսինքն՝ առաջին նախադասությունը, որ տվյալ դեպքում իշխողն է, կիսատ մնացած. և քանի որ խնդիր հանդիսացող երկրորդ նախադասությունը չի ընդմիջվում որևէ շաղկապով կամ կապակցող բառերով, այդ պատճառով այս կարգի խնդիր նախադասությունները որևէ դադարով չեն անջատվում, այլ երկու նախադասությունները դիտվում են որպես մի արտաբերական ամբողջություն։ Հաճախ մեր գրողները այդպիսի նախադասությունը ոչ մի նշանով չեն տրոհում. տվյալ դեպքում տրոհումը արտաբերական հիմք չունի. համեմատիր հետևյալ օրինակները՝ Մին էլ տեսա շունը

կլանչելով գալիս է (*Թ., III, 53*)։ Ասի վեր կենամ, մեկի մոտ գնամ (*Թումանյան*)։ Գնացի տեսա մի գել է ընկել մեջը (*Թ., III, 105*)։ Տեսա մաճնակալիս մոտ ով-որ նստած է (*Նար., IV, 83*)։ Դե ասա տեսնենք ո՞րն է քո սովորած շունը (*Թ., III, 122*)։ Գիտես որքան եմ սիրում նրան (*Շիրվ., VI, 35*)։

Ծանոթություն 1.—Երբ ուզել, ցանկանալ, կամենալ, կարողանալ, աշխատել *և այս կարգի այլ եղանակավորիչ բայերի հետ անորոշ դերբայի փոխարեն, միևնույն դեմքով ըղձական եղանակի որևէ բայ դառնում է բաղադրյալ ստորոգյալի մաս, ապա այս վերջինը պետք է չդիտել իբրև շարահարության անդամ, այսինքն՝ իբրև խնդիր նախադասություն, այլ դրանք իրենց եղանակավորիչ բայերի հետ կազմում են մի ստորոգյալ. օրինակ՝* Մի չար պառավ ուզում է ճերմակեղեն օլայի (*Թ., III, 233*)։ Սրտով ուզում եմ մեր տունը գնամ (*Նույն տեղում*)։ Ուզում է աղջկա համար եդեմական ծաղիկ գտնի (*Նույն տեղում, 184*)։ Որքան աշխատում էի ինձ հանգիստ պահեմ (*Նար., IV, 106*)։ Չէր կարողանում գլուխը պահի (*Թ., III, 79*)։ Ուզում էի գլուխս բարձրացնեմ (*Նար., IV, 83*)։

Ծանոթություն 2.—Իսկ եթե ըղձական եղանակի բայը չի կիրառված այն դեմքով, ինչ դեմքով որ եղանակավորիչ բայն է, ապա այս դեպքում նման կապակցությունը կազմում է խնդիր նախադասությամբ մի շարահարություն. օրինակ՝ Ես ուզում եմ՝ դու գնաս: Մենք կամենում ենք՝ նրանք գնան *և այլն*։

Ծանոթություն 3.—Եթե առաջին նախադասության մեջ գործածված է ներգործական սեռի որևէ դերբայ, որն այդ նախադասության լրացում է, իսկ երկրորդ նախադասությունը իբրև խնդիր վերաբերում է այդ ներգործական սեռի դերբային և ոչ թե առաջին նախադասության բուն ստորոգյալին, ապա այս դեպքում էլ ամբողջությունը մի շարահարություն է կազմում, ուր երկրորդ նախադասությունը արտահայտում է խնդրի հարաբերություն. օրինակ՝ Վաղարշապատից Աշտարակ գնաց իմանալու, արդյոք այնտեղի հայերին կոտորած չի սպառնում Դաղստանի կողմերից (*Շիրվ., V, 296*)։

Շարահարության մեջ խնդիր-նախադասությունը կարող է

դառնալ խնդրառու նախադասության որևէ անդամ, ձևականորեն կիրառված խնդրի բովանդակության բացահայտումը. օրինակ՝ Մենք միայն ունեինք իրավունք ասելու միայն մի բան, ուրիշ ոչինչ. Հայ ժողովուրդ, ես խոնարհվում եմ քո տանջանքի առջև *(Չիրվ., V, 286)*։

Ինչպես նկատեցինք, շարահարության մեջ խնդիր-նախադասությունները խնդրառու նախադասություններից հետո են դրվում, որ միանգամայն օրինաչափական է, սակայն չի բացառված նաև հակառակ շարադասությունը, այսինքն՝ խնդիր նախադասության առաջադաս լինելը։ Այս պարագայում շարահարության երկու նախադասություններն ուժեղ դադարով միմյանցից տրոհվում են, և դրանց շարահարական միասնությունը թուլանում է։ Առաջադաս խնդիր-նախադասությունները գերազանցապես հարցական բնույթի նախադասություններ են, որոնք ունեն չափազանց բարձր հնչերանգություն, զգալի դադար. հաջորդող խնդրառու նախադասությունը արտաբերվում է ցածր ու հավասար. օրինակ՝ Ո՞վ էր, հաշիվ չտվի ինձ *(Նար., IV, 83)*։ Ի՞նչ պատիժ կտա, ով գիտի հիմի *(Թ., II, 230)*։ Ո՞վ էր, չիմացավ իշխանը հյուրին* *(Նույն տեղում, 228)*։ Ո՞ւր է գնացել, ո՞վ է տարել, ոչ ոք չգիտեր *(ՊՊԵԺ, III, 383)*։ Ի՞նչ կա քաղաքում, դե պատմիր տեսնեմ *(Թումանյան, «Հառաչանք»)*։ Ո՞վ է մեղավոր... միտք եմ անում, միտք ու չեմ հասկանում՝ ով է մեղավոր *(Նույն տեղում)*։

Ինչպես տեսնում ենք, շարահարության մեջ խնդիր նախադասությունները գերազանցապես կախված են խնդրառու նախադասության այնպիսի ստորոգյալից, որը ներգործական սեռի բայ է, այլ խոսքով կախյալ նախադասությունը ուղիղ խնդիր նախադասություն է։ Անուղղակի խնդիր նախադասություններ այս դեպքում սակավ են լինում։ Երբ իշխող նախադասության ստորոգյալը չեզոք սեռի բայ է, կախյալ նախադասությունը այլ տեսակի հարաբերություն է արտահայտում. համեմատիր հետևյալ նախադասությունը՝ Ախ, նայեք՝ ինչպես է սեղմել *նա փայլուն ապակու այդ կտորը (ՁԸ, 65)*։ *Թվում է, թե* ինչպես է սեղմել նա փայլուն ապակու այդ կտորը *կախյալ նախադասությունը* նայել *չեզոք բայի խնդիրն է, որ պետք է անուղղակի խնդիր համարվեր, սակայն փաստորեն տվյալ նախադասությունը վերաբերում է* տեսնել *բային։ Պետք է լիներ՝* Նայեք նրան և տեսեք՝ ինչպես է սեղմել նա ապակու այդ կտորը: *Համե-*

---

* Հյուրին *իբրև ուղիղ խնդիր անցել է առաջին նախադասությունից. պետք է լիներ.* հյուրն ո՞վ էր, չիմացավ իշխանը:

մատիր նաև հետևյալ օրինակները՝ Անմեկին ընկեր, հոգիս վկայեց՝ դու իմ հրեշտակն ես մխիթարության *(ՀՀՀ, 10)։* Ես հավատում եմ դու կգաս: Քիչ մնաց՝ ոտներս թուլանում էին, վեր էի ընկնում *(ՊՊԵԺ, III, 179)։* Ես վախենում եմ էն վաղի տարվա պես եղած-չեղածդ փոռացնես ու եկող տարի էլի մնաս սոված *(ԲՎԻԳԵ, 180)։*

ե) ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԽՅԱԼ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Շարահարության մեջ կախյալ ժամանակային նախադասությունը ցույց է տալիս այն ժամանակամիջոցը, որի ընթացքում կամ մինչև որը կատարվում է իշխող նախադասության գործողությունը։

Կախյալ նախադասության ստորոգյալները լինում են՝ ա) ժամանակի հետ կապված գործողություններ. օրինակ՝ Կլուսանա, կգաս երեխիդ կտանես *(Թ., III, 111)։ բ) Ստորոգյալն ունենում է այնպիսի լրացումներ, որոնք ժամանակի հարաբերությամբ են լրացնում. օրինակ՝* Հազիվ սկսել էր, բուք բարձրացավ տանարում *(ՍՋ, V, 371)։* Վերջապես հասանք գեղին, սրանք ետ դառան կորան *(Թ., III, 110)*: Մի քիչ անց է կենում, ոչխարն է խնդրում *(Նույն տեղում, 278)։* Հազիվ սկսել էր աղոթքը իրա, ճերմակ ծերունին երևաց դարձյալ *(ՍՋ, V, 371)։ գ) Ժամանակային երկրորդական նախադասությունը բնութագրվում է իր շարադասությամբ և դրանից բխող արտաբերման եղանակով։ Ժամանակային նախադասությունը գերազանցապես առաջադաս է, և այնպես է ձգվում արտաբերությունը, որ* երբ, հենց *ժամանակային բառերը կարծես թե հուշվում են կախյալ նախադասությունից առաջ. օրինակ՝* Ուզեցի թողնեմ հեռանամ, հպարտ է ու չար է ասին *(ՉԸ, 42)։* Ես եմ գնում, կարասը լիքն օձ է դառնում, սրանք են գնում, ոսկի *(Թ., III, 150)։* Արագ եմ գնում, գիժ են ասում *(Առած., 44)։*

զ) ՆՊԱՏԱԿԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԽՅԱԼ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Շարահարության մեջ նպատակային հարաբերություն արտահայտող կախյալ նախադասությունը ցույց է տալիս իշխող նախադասության նպատակի պարագան։ Իշխող նախադասության ստորոգյալները գերազանցապես շարժման և ուղևորման բայեր են, որոնք հանգման կետում ինչ-որ նպատակ են ենթադրում. օրինակ՝ Գնում ես՝ ուրիշի բախտը հափշտակես *(Թ., III, 150)։* Թողնում չի, մի քիչ հեռանամ՝ փետ բերեմ կրակին վրա տամ *(Նույն տեղում,*

107)։ Գար՝ մեկ նրան էլ աշխատանք անենք *(Փափ., 564)*։ Սրտով ուզում եմ մեր տունը գնամ, տեսնեմ ոնց են իմ անօգնական ծերացած հերն ու մերը *(Թ., III, 236)*։

Իշխող նախադասության ստորոգյալները գործողության այնպիսի բայեր են, որոնք որևէ նպատակ են հետապնդում, և որոնցից հետո եկող նախադասության արտահայտած գործողությունը դրանց նպատակի պարզաբանն է. օրինակ՝ Ախ, տվեք ինձ թաղըր մի թուն, կյանքից հեռու սլանամ *(ՀՀՀ, 13)*։ Իմ բաժինը տուր, գնամ չոկ ապրեմ *(Թ., III, 155)*։ Ծառը ծախիր, առնեմ *(ԱԲՄԹՆՁ, 104)*։ Բոլորը տամ ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմրսա, Ոու չմրսես ձըմռան ցրտում *(ՁԸ, 43)*։ Պատրաստվիր՝ գնանք *(ԱՁ, V, 387)*։

Իշխող նախադասության ստորոգյալները կարող են լինել նաև ասացական, իմացական բայեր, որոնք ցույց են տալիս այնպիսի գործողություն, որ կատարվում է որոշ նպատակով, իսկ հաջորդող կախյալ նախադասության ստորոգյալների արտահայտած գործողությունը ցույց է տալիս նպատակի պարզաբան. օրինակ՝ Ասա ինձ անկեղծ, միտքդ իմանամ *(Շեքս., I, 440)*։ Ու երկար միտք է անում՝ մի հնար գտնի այդ բանից ազատվելու *(ԱՁ, V, 366)*։

Շարահարության մեջ նպատակային կախյալ նախադասությունները բնութագրվում են նաև նրանով, որ միշտ ետադաս են, և դրանց ստորոգյալները արտահայտվում են ըղձական եղանակով։ Դե գնա մի քիչ պոպոքից-մոպոքից բեր, երեխեքանցն առաջն ածա, մի քիչ էլ վեզ խաղան ու գնան իրենց տները *(ՊՊԵԺ, I, 364)*։ Ինձ մոտ արի՝ ձվաձեղ անեմ... ինձ մոտ արի՝ բլիթ տամ *(Թումանյան, «Լոռեցի Սաքոն»)*։ Ջուրն ու ծաղիկ սատղունք դրել, Խնդիրք արել աստղերին, Փափագ սրտով խնդիրք արել՝ Բարի ժպտան իր սերին *(Թումանյան, «Անուշ»)*։

է) ՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԽՅԱԼ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Շարահարության մեջ նախադասություններից մեկը դառնում է մյուսի որևէ գոյականական անդամի լրացումը։ Կախյալ նախադասությունը միշտ դրվում է ետադաս, որ ուժեղ դադարով առանձնանում է անկախ նախադասությունից, և այդ պատճառով երկու նախադասությունների շարահարումը իբրև մի ամբողջություն շատ թույլ է։ Այսպիսի շարահարություն գրական լեզվում սակավ է. դա հատուկ է գեղարվեստական ժողովրդական խոսքին։ Համեմատիր հետևյալ օրինակները՝ Երկնքից թռչում է մի թռչուն, Քո ներկան է այն բարեկամս *(ՁԸԵ, 64)*։ Ինչ բուռդ է քո փինին, իմաստուն,

Նրանից իմ հոգին հարբում է *(Նույն տեղում, 65)*։ Էնման հեքիաթ գիտեր, էնման հեքիաթ, ոչ ծեր ուներ, ոչ տուտ *(Թ., III, 117)*։ Մի երեխա ուներ, շատ էր սիրում *(Նույն տեղում, 111)*։ Կնիկ մարդ կա, տուն կշինե. կնիկ մարդ կա, տուն կքանդե *(Առած., 37)*։ Մայր կա, մերուկ է. մայր կա, փտած ձմերուկ է *(Նույն տեղում, 33)*։

բ) ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ, ՈՒՐ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԹԱԿԱ Է

Այս կարգի շարահարության մեջ անկախ նախադասությունը մի անենթակա նախադասություն է, որին հաջորդող կախյալ նախադասությունը դառնում է առաջինի համար ենթակա։ Անենթակա անկախ նախադասության ստորոգյալը սովորաբար միադիմի կամ անդեմ բայ է և կամ այնպիսի բայ, որ տվյալ դեպքում կիրառվում է իբրև անդեմ։ Այս տեսակ ենթականերն առանձին առարկաներ չեն, այլ կատարվող գործողություններ, երևույթներ, որոնք առանձին նախադասությամբ ձևավորվում են և դառնում վերոհիշյալ անդեմ գործածվող ստորոգյալների համար ենթակա. օրինակ՝ Քիչ էր մնում՝ սիրտս պայթեր *(Թ., II, 94)*։ Ու թվում էր՝ նրանք այլևս չէին վախենում *(«Ընտիր էջեր», 976)*։ Լինում էր՝ շատ անգամ տանը հաց չունեինք ուտելու *(Նույն տեղում, 491)*։ Այն ժամանակ էլ պատահում էր՝ մարդիկ հիմարություններ էին անում *(Թ., III, 459)*։ Ու թվում էր՝ նրանք այլևս չէին վախենում ոչ արից, ոչ նիզակներից, ոչ տապարից *(«Ընտիր էջեր», 976)*։ Երևում է՝ ժամանակը շատ առողջ թևեր ունի *(Նար., VI, 11)*։ Երևում է՝ հնացել է, ժամանակին չի բժշկվել *(Նույն տեղում, 17)*։ Ինչքան լավ կլիներ՝ շգայի և շարունակեի ապրել իմ փաղցր երազներով *(Նար., IV, 102)*։ Ինչ լավ կլիներ՝ շուտով գործ գտներ *(ՍԶ, III, 350)*։

Անկախ նախադասության մեջ անենթակա ստորոգյալ են դառնում եմ, լինեմ բայերը մի շարք ստորոգելիական վերադիրների հետ։ Սրանք անորոշ գոյականներ, դերանուններ, կապեր և այլ խոսքի մասեր են, որոնք ցույց են տալիս, թե ինչ է ներկայացնում կամ ինչ է այս կամ այն գործողությունը, երևույթը։ Դրանք ձևավորվելով իբրև առանձին նախադասություն, դառնում են նախորդ անենթակա անվանական ստորոգյալների համար ենթակա. օրինակ՝ Եվ դարձյալ հեզ փորձելու համար էր՝ ես առա ուրիշ կերպարանք *(Թ., III, 230)*։ Ով էր՝ կանչեց *(ԱՐՄԹՆԶ, 112)*։ Արցունք էր՝ վարար ջրի պես հոսում էր *(Նույն տեղում, 20)*։ Կարելի է՝ սիրտս բացվի *(Շիրվ., VI, 15)*։ Լավ է՝ ծիծաղներդ գալիս չէր *(Թ., III, 109)*։ Ճըշմարիտ է՝ գելը գազան է, ու մարդուն էլ շատ վնաս է տալիս *(Նույն*

տեղում, 114)։ Ավելի լավ է՝ ճենց լծած բերեմ, ծառի տակին կանգնեցնեմ *(նույն տեղում, 201)*։ Ավելի լավ էր սրա տեղը մի ձուկ բռնեի *(նույն տեղում, 235)*։ Ավելի լավ է՝ պսակվենք *(ՍՋ, V, 377)*։ Հայտնի չէ՝ վախենում է *(ՊՊԵԺ, III, 383)*։

Հաճախ ժամանակ ցույց տվող տարի, ամիս, օր, ժամ, ռոպե *և այլ բառեր* եմ, լինեմ *բայական հանգույցների հետ կազմում են անենթակա անվանական ստորոգյալ և ցույց են տալիս մի ժամանակամիջոց, որի ընթացքում կատարվում է որևէ գործողություն։ Այս գործողությունը ձևավորվելով իբրև մի նախադասության ստորոգյալ, դառնում է նախորդ անենթակա նախադասության համար ենթակա. օրինակ՝* Քանի տարի կլինի՝ չենք տեսել իրար *(Նար., VI, 11)*։ Օխտը տարի է՝ ինձ քոռել չեն *(Թ., III, 278)*։ Մի քանի տարի էր՝ Մժեժյան վարժապետը դասատու էր *(ՊՊԵԺ, III, 384)*։

Հնարավոր է, որ անկախ նախադասությունն ունենա մի ձևական ենթակա, իսկ կախյալ նախադասությունը դառնա այդպիսի ենթակայի նշանակության բացահայտումը, բովանդակությունը. օրինակ՝ Անախորժ էր մի բան՝ ընկերը ճույն էր *(ՍԳ, 1956, № 9, էջ 8)*։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.—Շարահարության մեջ կախյալ ենթակա նախադասությունը հազվադեպ է և անկախ նախադասության հետ շարահարվում է թույլ դադարային անցումով։ Ստորոգյալը գտնվելով շարահարության առաջին մասում, իր վրա է կրում տրամաբանական շեշտը, և ըստ այդմ առաջին մասը համեմատաբար բարձր է արտաբերվում հաջորդ մասից, որից էլ առաջանում է երկու տարբեր մասերի տրոհումը, որ աննկատելի լինելով՝ մոտենում է այնպիսի տրոհման, ինչպիսին գոյություն ունի պարզ ընդարձակ նախադասության մեջ, երբ ստորոգյալը ենթակայից առաջ է ընկնում և տրամաբանական շեշտը իր վրա կրում։ Այդ պատճառով էլ վերևում բերված օրինակներն իրենց բնագրերում գրեթե առանց որևէ կետադրության են, այսինքն՝ անկախ և կախյալ ենթակա նախադասությունները որևէ կետադրական նշանով չեն տրոհված։ Մենք դրանք բութով բաժանեցինք միմիայն ուսուցողական նպատակով։

բ) ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ, ՈՒՐ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ Է

Այսպիսի շարահարության մեջ անկախ նախադասության ստորոգելիական վերադիրը մի վերացական բառ է, որի նշանակու-

թյունը բացահայտվում է կախյալ նախադասությամբ, որն էլ հենց ըստ էության բռնում է անկախ նախադասության ստորոգելիական վերադիրի տեղը. օրինակ՝ Ի՞նչ է պատիվը, հարգանքը մարդկանց՝ սոսկ ոսկուց, վախից հարգ են մատուցում *(ԻՍ., II, 71)*։

Երբեմն անկախ նախադասության ստորոգյալը մի այնպիսի բայ է, որը լրիվ ստորոգյալ դառնալու համար պահանջում է ստորոգելիական վերադիր. ահա այս պակասող վերադիրը արտահայտվում է կախյալ նախադասությամբ. օրինակ՝ Դա կնշանակի դու չես գալիս. Այդ նշանակում է նա չի ցանկանում։ *Այս օրինակների մեջ* նշանակում է *ստորոգյալը պետք ունի ստորոգելիական վերադիրի, որ արտահայտված է* դու չես գալիս, նա չի ցանկանում *նախադասություններով։ Բայց այս կարգի կապակցությունները աստիճանաբար դարձվածային արժեք են ձեռք բերում. քանի որ կա նաև սրանց շաղկապավոր կապակցությունը, այդքանով դրանք ունեն շարահյուսական նշանակություն։ Համեմատիր՝* Այդ նշանակում է, որ դու չես գալիս։ *Իսկ այսպիսի արտահայտության մի այլ ձևը առանց շաղկապի չի գործածվում, օրինակ՝* Այդ հավասար է (այն բանին, նրան), որ դու չես ցանկանում։

ժ) ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԽՅԱԼ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Այսպիսի շարահարության մեջ անկախ նախադասությամբ հաղորդվում է մի այնպիսի գործողություն, որից իբրև հետևանք բխում է կախյալ նախադասության մեջ հաղորդված գործողությունը։ Անկախ նախադասության ստորոգյալը իբրև պարագայական բառեր սովորաբար ունենում է էնքան, այնքան *կամ* այնպես *դերանունները, որոնք քանակապես և ձևապես ուժեղացնում են այդ ստորոգյալը, որի արդյունքը իբրև հետևանք դառնում է կախյալ նախադասության մեջ հաղորդվածը. օրինակ՝* Մեծավորս էնքան սիրեց, Հին գրչակոթն ինձ նվիրեց *(Թ., II, 94)*։ Էնքան ըլի՝ մե-մե անգամ տեսքդ տեսնեմ *(ԶԸ, 46)*։ Այնպես ես խոսում, ամեն ինչ ճշմարիտ է թվում։ Նա այնպես մեղմ էր նայում, թվում էր քնած է։

Սովորաբար հետևանքային կախյալ նախադասությունը ետադաս է լինում, սակայն չի բացառված հակառակ շարադասությունը. օրինակ՝ Չորս կողմի կանգնածները ձենը չեն լսում, էնքան կտրած է լինում *(Թ., III, 255)*։ Հավատում էի, որ աչքերս պիտի բանամ արշալույսի հետ, այնքան մարմինս հոգնած ու թուլացած էր *(Մուր., II, 13)*։ Մի ամսվա ճամփան չի իմանում ինչպես է գալիս, այնքան ուրախ է լինում *(ՍՁ, V, 366)*։ *Հետևանքի անշաղկապ նախա-*

դասությունը կարող է կապակցվել իր գլխավոր նախադասության հետ առանց որևէ ցուցիչի, զուտ իմաստային հողի վրա. օրինակ՝ Եզը չի ունենում թե վարի, հողը վարձով տալիս է հարևանին *(Թ., III, 149)։* Իմ հողում կարասով ոսկի է դուրս եկել, իմն է *(Նույն տեղում)։*

ժա) ԶԵՎԻ ՊԱՐԱԳԱ ԿԱՄ ՆՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԿԱԽՅԱԼ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս կարգի շարահարության մեջ անկախ նախադասությամբ հաղորդվում է որևէ գործողություն, երևույթ, իսկ կախյալ նախադասության մեջ հաղորդվածը այնպես, այդպես, նույնպես *դերանուններով նմանեցվում է նախորդին. օրինակ՝* Իմ հոգին այսօր էլ չի մանրանում, Չի մխում իրեն թովռուն խոսքով, Այդպես ցողունն է հանդում ծանրանում, Երբ լցվում է ձույլ, իմաստուն հասկով *(ՁԸ, 103)։* Քո անկումները եղել են միշտ եղանակի պես պատահական, Այդպես երկինքն է թափում հանկարծ թե՛ կարկուտը, թե՛ ձյուն, թե՛ փոքրիկ *(Նույն տեղում, 82)։* Վշտահար սրտով հեռացավ մեր ազնվոգի տեսուչը, նույնպիսի սրտով էլ հեռանում եմ ես *(Մուր., II, 100)։*

Այս պարագայում, երբ ստորոգյալը ընդհանուր է, երկրորդ եզրում կարող է կրճատվել. օրինակ՝ Սադրազամը զայրացած ոտքի ելավ, նույնպես և մինիստրները, հետո բոլոր ժողովականներն էլ *(Փափ., 547)։*

ժբ) ՀԱՐԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Անկախ և կախյալ շարահարությունների միջև յուրահատուկ տեղ է գրավում հարակցական հարաբերություն արտահայտող շարահարությունը, որտեղ բարդ նախադասության առաջին մասում հաղորդվում է որևէ գործողություն, տեսողական, լսողական ընկալում, վիճակ կամ հատկանիշ, իսկ երկրորդ մասը բացահայտում, պարզաբանում, ցույց է տալիս առաջին մասում հաղորդվածի էությունը, ներքին բովանդակությունը, այսինքն՝ այն, թե ինչ է այդ ընկալման առարկան, նյութը։ Հարակցական կապակցության արտաբերումը այսպես է. առաջին մասի ձայնը վերջում բոլորովին անսովոր իջնում է և հասնում է դադարի, երկրորդ մասը սկսվում է դադարից հետո և իջնում սովորական կարգով։

Հարակցական կապակցությամբ կարող են կապվել այնպիսի նախադասությունները, որոնց առաջին մասի ստորոգյալները չեզոք

ներով բայեր են և արտահայտում են տեսողական ու լսողական ընկալումներ. այդպիսի բայեր են օրինակ՝ նայել, ականջ դնել, ուշադրությունը լարել, ականջները սրել *և այս կարգի այլ բայեր ու հարադրություններ. օրինակ՝* Շուրջը նայեց՝ Ամայի էր ալեյը *(ԵՉԵ, 203)*։ Մին էլ ետ նայեց. գյուղը ծածկվել էր բլուրի ետևը *(Թ., III, 35)*։ Ետ է նայում՝ կարիճը գալիս է, ոնց է գալիս *(ԱԲԵ, 654)*։ Նայում են՝ տնակը դարձել է մի շքեղ պալատ *(Թ., III, 303)*։ Ես նայում եմ. իմ առջև անա տիրոջ աշխարհը *(Թ., I, 17)*։ Ականջ է դնում... գալիս են կրկին թեթև, կամացուկ, Դռան ետևից փսփսում ծածուկ *(Թումանյան, «Լոռեցի Սաքոն»)*։ Ետ եմ նայում, վերև... թեքված ուսիս մի մարդ՝ դեմքով հեռու, անիրական, Մտերմական ձայնով ասում է ինձ *(ԵՉԵ, 204)*։ Արսենը ականջ դրեց. մտնողը մթան մեջ խարխափելով մատներով շոշափեց օթևանի դուռը *(ԴԴԵԺ, IV, 281)*։

Այսպիսի շարահարությանը մոտ է այնպիսին, որի առաջին մասի ստորոգյալը շարժման չեզոք բայ է, որը սակայն կատարվում է նայելու, ականջ դնելու նպատակով. երկրորդ մասը այդ շարժման հետևանքն է իբրև տեսողական կամ լսողական ընկալման արդյունք. օրինակ՝ Մարին գլուխը ուղղեց (= *դարձավ, շուռ եկավ*) այն կողմը. մի փոքրիկ սոխակ էր երգողը *(ԻՍ., 281)*։ Սպանած կարմիր կարապները ուսով գցած վրանից դուրս վազեց դեպի խորհրդավոր շրջանը. էնտեղ էլ չկար *(Թ., III, 273)*։

Հարակցական կապակցությամբ են կապակցվում նաև շարահարության այն երկու մասերը, որոնցից առաջինն արտահայտում է որևէ գործողություն, իսկ երկրորդը բացահայտում է այդ գործողության բովանդակությունը, միտքը. օրինակ՝ Չրխկ-չրխկ,—կծեծեն մեր դուռն անա,—հոյ-հոյ հոյ-հոյ քեռիս է բաշլղով ծածկված *(ԳՄԵՍ, 326)*։ Ապա ոգևորված խոսեց իր ծրագրերի մասին. մեծ, ստեղծագործ ծրագրեր՝ մի նոր աշխարհ բանալ մեր արվեստի պատմության մեջ, պանծացնել մեր հոյակապ ճարտարապետությունը *(ԱԻԵ, 377)*։ Քյոխվից հրաման կա... տերության խարջը երեք օրում ուզում են *(ԱԲԵ, 133)*։

Հարակցական կապակցությամբ են կապվում շարահարության այնպիսի մասերը, որոնցից երկրորդը լրացուցիչ հաղորդում է կամ պարզաբանում առաջին մասի. օրինակ՝ Նախարարների ականջին հասնում էր նրանց աղմուկը. հաճախ մոգերը կռվում էին և գոռգոռում *(Դեմիրճյան)*։ Սրճարանի մեծ մասը բռնել են մի խումբ պատանիներ, տղա-աղջիկ. գբոսաշրջիկներ են Ավալոնից *(ԱԻԵ, 257)*։ Նա վարանումի մեջ նայում էր մեկ-մեկ ամենքին. անշուշտ դժվար

Է չհավանածին սեր տալ *(նույն տեղում, 281)*։ Սարսափած աչքերով կինը նայեց շուրջը. աչքերը սև էին, սև ու չինչ *(ԵՉԵ, 125)*։

Հարակցական կապակցությունը կարող է լինել նաև բազմաբարդ, այսինքն՝ երկու մասից կազմված հարակցության երկրորդ մասը նույնպես կարող է կազմված լինել միմյանց հետ կապակցված առանձին նախադասություններից, որոնք ներկայացնում են կապակցական մի ամբողջություն իրենց այս կամ այն բնույթով և ապա միասնաբար դառնում են կապակցության երկրորդ եզրը. օրինակ՝ Արդեն սուլեցին փորձարանները. մեկը գիլ և ուրախ, մյուսը խռպոտ, երրորդը երկարաձոր *(ԱԲԵ, 291)*։ Այ մարդ, ինչ քար սիրտ ունիս. տղերքդ լեռը՝ մահի բերան, ողջ գյուղը սգի մեջ, ընկերներդ հավաքվել գյուղի մասին են մտածում, դու ելել գութան ես շինում *(ԱԻԵ, 192)*։

Հարակցությամբ կապակցվում են նաև այնպիսի նախադասությունները, որոնցից երկրորդը մեկնություն է նախորդի համար, այսինքն՝ միևնույն նախադասությունն է՝ արտահայտված այլ կերպ, այլ բառերով. այսպիսի բարդությունը կոչում ենք մեկնական կապակցությամբ հարակցություն. օրինակ՝ Միայն այն կարի, որ միշտ է անմահ՝ (կարի) Սուրբ գեղեցկություն և սուրբ գաղափար *(Հովհաննիսյան)*։ Ասում են, թե այդ ներքին կռիվը՝ հրաժարվե՞լ դիրքից, թե բարձր կանգնել շրջապատից, պաշտպանե՞լ համոզումները, թե՞ զոհ բերել դրանք՝ այս հակասական ապրումները Ադամյանը ներկայացրել է ցնցող ուժով *(ՌՋԱ, 90)*։

XIII

ՕՏԱՐԻ ԽՈՍՔԸ

Խոսողը, պատմողը, գրողը հաճախ ընդհատում է իր խոսքի շարադրանքը և **ասել, գրել, պատմել, հայտարարել, հարել, ավելացնել, հարցնել՝ պատասխանել, նշել, գտնել, նկատել** և այլ ասացական կամ սրանց փոխարինող բայերի կցելով իր սեփական խոսքին՝ բերում է մի այլ անձնավորության, կակավ նաև երբևիցե ասված իր խոսքը և այս վերջինները առկա հեղինակային խոսքի հետ դարձնում է խոսքային մի ամբողջություն։ Այս երևույթը հատուկ է ամեն մի խոսքի, ուստի դա սովորական մի միջոց է, որով հեղինակը (խոսողը, գրողը) շարադրանքը հարստացնում է կողմնակի նյութերով, փոխում է խոսքի ձևը, վերացնում է պատմողական միալարությունը, որով խոսքը օժտվում է ոճաբանական նոր ձևերով, թարմություն է մտցվում խոսքի մեջ։

Եթե ձևական փոփոխությունն իսկ հաշվի չառնենք, ուրիշ անձերի ասված խոսքը մեջ բերելը հաճախ դառնում է պարտադիր անհրաժեշտություն։ Հեղինակը իր խոսքը հաստատելու, ապացուցելու համար հարկադրված դիմում է կողմնակի աղբյուրների։ Մեջբերում կատարողը կամ ցանկանում է տվյալ խոսքով հաստատել իր ասածի ճշմարտացիությունը և կամ ընթերցողներին ու լսողներին ցույց տալ, որ իրենից առաջ ուրիշները ևս խոսել են այդ մասին։

Մանավանդ գեղարվեստական խոսքը լոկ հեղինակային խոսք չէ․ այս դեպքում մենախոսում կամ երկխոսում են գրվածքի մեջ հանդես եկող անձերը։ Սա նույնպես անհրաժեշտություն է, քանի որ գրողը իր գործող անձերի խոսքի միջոցով բացահայտում է նրանց մտավոր կարողությունները, բնավորության գծերը, հոգեբանությունը, հասարակական ու քաղաքական աշխարհայացքը։ Այս է պատճառը, որ հեղինակը չի կարող միայն պատմել ու նկա-

թագրել, այլ պետք է նաև ուրիշներին խոսեցնի և այդ ուրիշների խոսքը կցի իր սեփական խոսքին։

Այն խոսքը, որ հեղինակը հատուկ ասացական կամ սրանց փոխարինող ուրիշ բայերի միջնորդությամբ մի այլ անձից առնում և կցում է իր հեղինակային խոսքին, կոչվում է ուրիշի խոսք. օրինակ՝ Մինչև այժմ էլ գյուղում, երբ պատմում են Օրանչիայի մասին, մի ականատես միշտ ավելացնում է. —Սարֆովի էր բոլորը, Առաֆելը սատանի հունար ուներ *(ԱԲԵ, 80)։* Կաթ ծախողը փող է ուզում,—հայտարարեց աղախինը *(ՊՊԵԺ, III, 329)։* —Ես էլ կերթամ ծիտիկի մոտ,—ասում է ու ճամփա ընկնում *(Թ., III, 234)։* Նեսոն պնդում էր, թե դանակն ինձ տվավ, գրպանս դրի *(նույն տեղում, 119)։* Երևեցավ իսկույն մի նորատի սպասուհի, որ շնորհաշուք կերպով ողջունելով օրիորդին, լսեց նրա զեկուցումը՝ թե կամենում է տեսնել տիկին Փիլարյանին *(Մուր., IV, 14)։*

Այս օրինակներում պարզորեն տարբերվում են հեղինակային և ուրիշի խոսքը. առաջին օրինակում ուրիշի խոսքն է Սարֆովի էր բոլորը... *իսկ վերջին օրինակում՝* թե կամենում է տեսնել տիկին Փիլարյանին:

Ուրիշի խոսքը հաղորդվում է տարբեր ձևերով։ Այսպես՝ ուրիշի խոսքը բերվում է այնպես, ինչպես որ ասվել է, այսինքն՝ չի փոփոխվում ոչ մի բառ, պահպանվում են քերականական բոլոր ձևերը, ոճը, նույնիսկ կետադրությունը, և պատումի մեջ այդ խոսքը մտնում է իբրև անկախ նախադասություն կամ նախադասությունների անկախ համադրություն։ Օրինակ՝ —Կգնամ,—կտրուկ պատասխանեց Ռուշանը *(ԱԲԵ, 440)։* Երբ գարնանամուտին Ունանը տոնոնֆալով մաշված, ցեցը կերած փայտե սանդուղքը տեղափոխում էր սրահից բակ և պատին դեմ անում, որ վեր բարձրանա ու իրենց տանը վարժված արագիլի բույնը սարքի, հարևաններն իրար ասում էին.—Գարունն եկավ... էլի Ունանը լագլագի բունը շֆեց, նրեն հա, օնորֆի գերանները դմբդըմբում են *(ԱԲԵ, 431)։* —Ի՞նչ արեցիր, Գուրգեն,—հարցրեց տիկինը: —Ամեն ինչ կարգադրված է, տիկին,—պատասխանեց ծերունին տխուր ձայնով *(Ր., III, 336)։* Մի ֆիչ հետո ասաց. «Աղա, մոտդ մանր փող չունե՞ս, հինգ տակառ ջուր եմ բերել, մի մանեթ կանի» *(ՌՊԵ, 546)։*

Ուրիշի խոսքը միշտ այսպիսի ճշտությամբ ու անփոփոխ չի բերվում. հաճախ հեղինակը շարադրում է նրա բովանդակությունը և ստորադասական շաղկապներով կապում է իր խոսքի հետ որպես այս վերջինիս համար երկրորդական լրացուցիչ նախադասություն.

օրինակ՝ ֆաղաֆային հայտնի մի փաշխառու, որի համար գրել էի, թե տզրուկի պես ծծում է գյուղացիների արյունը, այժմ ինձ պարտք է տալիս առանց տոկոսի *(Մուր., IV, 317)*։ Հասուկ թղթակիցներին նմանեցնելով յասաուլ-բաշիների՝ խավարամիտ բարեկամս այն բարբառոս միտքն էր հայտնում, իբր թե մենք էլ նրանց եղանակով հարստահարում ենք ժողովրդին, կաշառ ենք առնում նրանից կամ երեսպաշտություն անում *(Մուր., IV, 318)*։ Դեռ երկար կպատմի, թե ինչպես խոջա Բաղիրի թոռը նրան խաբեց և երկու բեռ ցորենի դիմաց ավեց մի ոչինչ բան՝ մի ֆանի արշին չիթ, պառավի համար հալավացու, երկու գրվանքա շաքար, մի ֆիչ բռնոթի, այն էլ կեսը հող *(ԱԲե, 229—230)*։

Ըստ այս տարբեր տիպի մեջբերումների ուրիշի խոսքը բաժանվում է երեք տեսակի՝ ուղղակի խոսք, անուղղակի խոսք, ազատ-ուղղակի կամ անխկական-ուղղակի խոսք:

1. ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ

Ուղղակի է կոչվում ուրիշի այնպիսի խոսքը, որը հեղինակը վերցնում է առանց որևէ փոփոխության, բառացի ճշտությամբ՝ պահպանելով տվյալ խոսքի բոլոր մանրամասները։ Ուրիշի ուղղակի խոսքը պետք է բերվի լրիվ, առնվի չակերտների մեջ, պահպանվեն պարբերությունները ու կետադրությունը, բացթողման դեպքում նշվի կախման կետերով, ցուցում արվի ընդգծումների մասին, մատնանշվի ուրիշի ուղղակի խոսքի ճիշտ աղբյուրը, էջը՝ հեղինակով, հրատարակության տեղով ու թվականով հանդերձ։ Այս ցուցումները վերաբերում են գիտական ուղղակի խոսքին, իսկ գեղարվեստական գրվածքներում ուղղակի խոսքի ընտրությունը կատարում է ինքը հեղինակը, այսինքն՝ իր գրվածքի գործող անձերին խոսեցնում է այնպես, ինչպես ինքն է ցանկանում, կամ ավելի ճիշտ այնպիսի ուղղակի խոսք է հատկացնում դրանց, որ համապատասխանում է յուրաքանչյուր անձի բնավորությանը, զարգացման մակարդակին, հասարակական դրությանը, դիրքին և այլն։ Հաճախ այդպիսի ուղղակի խոսքը հիմնովին տարբերվում է հեղինակային խոսքից բառապաշարով, արտահայտման ոճով, քերականական կառուցվածքի փոփոխություններով և այլն, կամ ուղղակի բերվում է այս կամ այն բարբառով։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.—Գեղարվեստական գրվածքներում ուրիշի ուղղակի խոսքը հեղինակային խոսքից անջատվում է սատ-

բակետով, ստորակետով ու գծով, կամ միջակետով ու գծով. սակավ նաև միջակետով ու չակերտով։

Ծանոթություն.—Երբ հեղինակային խոսքը նախադաս է, ուրիշի ուղղակի խոսքից բաժանվում է միջակետով. որոշ դեպքերում տրոհումը կատարվում է նաև բութով. օրինակ՝ Վարժապետ Սողոն հաստահատ հարցնում էր՝ «ինչո՞ւ ինչո՞ւ» *(ԵՉԵ, 41)*. Եվ նա ասում էր՝ նույնն է մարդը և միշտ էլ նույնը կմնա *(Նույն տեղում, 109)*։

Ուրիշի այն խոսքը, որ չի ուղեկցվում հեղինակային ասել, գրել, խոսել, պատմել, հարցնել, պատասխանել, ավելացնել, հարել, նկատել, խորհել *և այլ ասացական, իմացական կամ սրանց փոխարինող բայերով, ինչքան էլ լրիվ ու ամբողջական է բերվում, ուղղակի խոսք չի համարվում։ Ուրեմն ուղղակի խոսքի ձևավորման պայմաններից մեկն էլ այն է, որ հեղինակը հատուկ բառերով նշում է, թե խոսքը ումն է պատկանում և արտահայտում է ուրիշի խոսքի տարբեր հանգամանքները։ Այդպիսի բառեր են մեծ մասամբ ասացական, իմացական բայերը, որոնք մատնանշում են ուղղակի խոսքը. օրինակ՝* —Հը, մենակ չձանձրացա՞ր,—հարցրեց նա, նըստելով կնոջ կողքին *(Նար., II, 275)*։ Սամվելը մտածության մեջ ընկավ: Տիկինը ընդհատեց նրա լռությունը, ասելով. —Մի տրտմիր, Սամվել, իմ խիղճը հանգստացնելու համար ես հենց այս առավոտ կհրամայեմ պատրաստել իմ ճանապարհորդության քարավանը *(ՐԵԺ, VII, 131)*։ Եվ ինքնասույզ խորհում էր նա. «Կյանքը տառապանք է, որ մղում է տենչացող մարմինը ոճիրների...» *(ԱԻԵ, 321)*։

Հեղինակային խոսքը, որ ձևավորվում է գերազանցապես վերոհիշյալ ասացական և այլ բայերով ու ուղղակի խոսքը ձևավորելու պայման է հանդիսանում, չորս դիրքով է շարադասվում, այսինքն՝ ուղղակի խոսքի նկատմամբ լինում է առաջադաս, միջադաս, ետադաս և կամ երկու կողմից շրջապատում է ուղղակի խոսքը. օրինակներ, ուր հեղինակային խոսքը առաջադաս է. Մայրս, որ, ինչպես հետո իմացա, հետևելիս է եղել իմ քայլերին, մի օր կանչեց ինձ առանձին ու ասաց. —Սիրելի Աննա, հինգ ամսից ավելի է, ինչ ես մի տարօրինակ փոփոխություն եմ նշմարում քո մեջ *(Մուր., II, 86)*։ Նա ծանրացած գլուխը վեր բարձրացնելով հարցրեց. —Ինչո՞ւ այդքան ուշացար *(ՐԵԺ, VII, 160)*։ Ես մի կողմ հրեցի հորս և ձեռքս կրծքիս դնելով զայրույթից դողացող ձայնով ասացի. —Առաջին գնդակն այստեղ ուղղել տուր, իսկ երկ-

րորդը նրա վրա, հեռացիր, դու իմ հայրը չես... *(Մուր., II, 95)*։ *Օրինակներ, ուր հեղինակային խոսքը միջադաս է.* —Ոչ, ինչո՞ւ լռենք օրիորդ,—ընդհատեց նրան Բազենյանը,—լռությունը միշտ կասկած է հարուցանում *(Նար., III, 401)* —Այդ բոլորը շատ գեղեցիկ է,—ասաց նա,—բայց այստեղ ջուր չկա, այստեղ ծառեր չկան *(Ր., III, 245)*։ —Դե լավ,—ասում է քեռակինը,— դու էստեղ կաց, ես գնամ, լվացքս կզողանան *(ՍՋՄԿՊ, 243)*։ Ես ի՞նչ անեմ,—պատասխանում է կինը,—նաշը տվել եմ մեր մեծ աղջկանը՝ ուղարկել *(Թ., III, 220)*։ Ես դեռ չեմ վերջացրել,—սառնությամբ աստիճանաբար բարձրացրեց յուր ձայնը սղջիկը,—դու կոլոտ Բդդե, փափագիդ մի մասին հասար... *(ՊՊԵԺ, II, 421)*։ *Օրինակներ, ուր հեղինակային խոսքը ետադաս է.* Մաշիտա հանըմի հոգեորդին է Լևոնը,— ասում էին հարևանները *(ԱԲԵ, 172)*։ Կշտացա՞ր,—ծաղրի տոնով հարցրեց Լևոնը և տեղից վեր կացավ *(Նույն տեղում, 176)*։ Դե հիմի տարեք առանց լվանալու խաշ եփեցեք,—կատակեց Հարությունյանը *(ՎԱՌՊ, 59)*։ Դե, Մարիկա, դե աղջիկս,—նորից դիմեց նա հարսին, որ գնա հանգստանա *(ՍՋ, V, 110)*։ Դեյը, երբ որ կուշտ է, շատ վախկոտ կենդանի է, աղա,—պատասխանեց քեռի Անդրիասը *(Թ., III, 101)*։

Ծանոթություն.— Երբ հեղինակային խոսքը միջադաս է, ուրիշի ուղղակի խոսքից առջևում բաժանվում է ստորակետ-գծով, իսկ վերջում ստորակետ-գծով, միջակետ-գծով, վերջակետ-գծով կամ կախման կետ-գծով, նայած թե ինչ տեղում է տրոհվել ուրիշի ուղղակի խոսքը։ Օրինակ՝ Ես պոզերն էլ տեսա, պլուխն էլ տեսա, աչքերն էլ տեսա,—շարունակեց Սուսանը,—չիմ տեսա, չիմ *(Շիրվ., I, 224)*։ Ինչ է, երևի մի փոքր նման է քո Ռոմանին,—նկատեց Արզաս Պետրովիչը,— ծիծաղիր, ծիծաղիր, բայց տես, թե վերջն ինչ եղավ *(Շիրվ., նույնը)*։—Ասենք այդպես է, հետո ինչ,—հանկարծ շառագունելով հարցրեց Մանուշը։—Այս ուշ պահին ինչու ես եկել *(ՍԽՀ, III, 137)*։ *Օրինակներ, ուր հեղինակային խոսքը երկու կողմից շրջապատում է ուղղակի խոսքը.* Հեղինեի վերջին խոսքերն այն աստիճան ցինիկական թվացին նրան, որ քիչ մնաց ընկերուհու երեսովը շպրտեր՝ «Մեկը բավական չէ, որ երկրորդն էլ ես ուզում ունենալ», բայց զսպեց իրեն *(Նար., III, 22)*։ Ժամանակ առ ժամանակ սիրտս լցվում էր, ու նրանց ասում էի՝ «Ա՛յ աղամորդիք, ախր դուք էլ մարդ եք, այդպես միամիտ լինել կլինի՞, այդ ի՞նչ է արածներդ», և մի լավ բար-

կանում էի *(ՌՊԵ, 575)*։ Ամեն ձեռն ուտելու բան ընկնելիս՝ «էս էլ տանեմ Մանուշին»,—ասում է, իսկ դաշտից կամ անտառից դառնալիս՝ վայրի պտուղ կամ ծաղիկներ է բերում նրան *(ՍՋՄԿՊ, 152)*։ Պարզ ասա՝ «չեմ թողնում», պրծավ գնաց *(նույն տեղում, 160)*։

Ուղղակի խոսքի ու հեղինակային խոսքի շարադասական հաջորդականությամբ բնորոշվում է դրանց հնչերանգային առնչակցությունը։ Ամենամեծ հնչերանգային դադարն առաջանում է այն պարագայում, երբ հեղինակային խոսքի ուղղակի խոսք մատնանշող բառերից անմիջապես հետո շարադասվում է ուղղակի խոսքը։ Այս դեպքում ուղղակի խոսքը սկսվում է նոր տողից, որից առաջ գիծ է դրվում, իսկ հեղինակային խոսքը դադար է առնում միջակետով կամ երբեմն վերջակետով։ Այս դեպքում կարծես թե ուղղակի խոսքը սկսվում է ինչպես նոր նախադասություն՝ հնչերանգային ուժեղ դադարից հետո. օրինակ՝ Նրանց գլխավորը մոտեցավ իշխանին և շնչասպառ ձայնով ասաց.

— Տագնապը մեծ է, տեր իմ *(ՐԵԺ, VII, 305)*։ Երկար լռությունից հետո վերջապես Վահանը նկատեց.

— Ձեր հայտնությունը, օրիորդ, անսպաս նորություն էր ինձ համար *(Մուր., 2, 342)*։

Երբ ուղղակի խոսքը մտնում է հեղինակային խոսքի մեջ, հընչերանգային կապը ավելի է սերտանում, այսինքն՝ դադարը այնքան է աննշան դառնում, որ թվում է, թե ուղղակի խոսքը հեղինակային խոսքի համար ուղիղ խնդիր է։ Այս դեպքում ուղղակի խոսքը առնվում է չակերտների մեջ, որից առաջ հեղինակային խոսքի վրա բութ է դրվում, իսկ վերջում ուղղակի խոսքը փակվում է չակերտներով ու ստորակետով. օրինակ՝ Մտքիս մեջը՝ «չարը խափանի, բարին կատարի», ասի *(ՌՊԵ, 576)*։

Երբ հեղինակային խոսքը, որ սովորաբար մի պարզ նախադասություն է լինում, ընկնում է ուղղակի խոսքի մեջ, միջանկյալ նախադասության տպավորություն է գործում և ուղղակի խոսքից բաժանվում է գծերով ու ստորակետներով. օրինակ՝ —Գրիգոր,— ասաց նա,—պիտի փախինք *(ՎՓԵԺ, I, 186)*։ —Արի մոտս,—դարձավ Արշակին,—այստեղ մոտս, դու աղքատ դևս *(ԱԻԵ, 241)*։

— Հանցանքը իմս չէր, որ դուք քսան րոպե անօգուտ տեղը սպասեցիք,—աշխատությունը վերջացնելով ժպտադեմ դարձավ Մոմնյանը Սարյանին,—մեզ մոտ րոպեները ու ժամերը հաշված են *(Մուր., II, 256)*։

Երբ ուղղակի խոսքը նախորդում է հեղինակային խոսքին, հնչերանգային կապը երկուսի միջև սերտանում է. որպեսզի իմացվեն ուղղակի խոսքի հանգամանքները, այսինքն՝ թե ով է ասել, ինչպես է ասվել, ինչ բնույթ ունի, անցումը պետք է արագ կատարվի, այլապես ուղղակի խոսքը կտրվելով ընդհանուր շարադրանքից, կդառնա անհասկանալի։ Հնչերանգային կապը ուղղակի և հեղինակային խոսքի միջև այս դեպքում նույնն է, ինչպիսին որ է երկու անշաղկապ նախադասությունների միջև, իսկ այդ երկու տարբեր խոսքերը միմյանցից բաժանվում են ստորակետով ու գծով. օրինակ՝ Լավ, լավ կարճ կտրե,—ժանն ընդհատեց Անատոլին:—Թողեք խոսքս վերջացնեմ,—գոռաց Անատոլը:

— Թողեք մարդը խոսքը վերջացնի,—ձայնեցին ուրիշները (ԱԻԾ, 246)։

— Բանդելեյը նորեն սկսեց տխրել,—դիտեցի ես:

— Գուցե կնոջն է մտաբերում,—պատասխանեց Քրիստափորը և անցավ յուր սենյակը (ՎՓԾ, I, 166)։ Գոնե չգտնեի ձեր մեջ իմ գաղափարների ու համոզմանց համակիր մեկը, այն ժամանակ ավելի հեշտ կլիներ մոռանալ ձեզ,—ասում էր նա պարզությամբ (Մուր., II, 131)։

Ինչպես ասվեց, առանց ուղղակի խոսքը մատնանշող այդ բայերի, ուրիշի խոսքը չի կարող ուղղակի համարվել. դա պարզապես հեղինակի նկարագրությունն է տարբեր արտահայտություններով, որտեղ այդ ուրիշը չի մատնանշված. օրինակ՝ Մարդիկ մին էլ տեսնում են, Վահ, Քաջ Նազարը վագրին նստած քշում է: Հայ-հարայ, եկեք հա, եկեք, Քաջ Նազարը վագրին ձի է շինել, հեծել... տվեք հա տվեք (Թ., III, 193)։

Այսպես են նաև երկախոսությունները. եթե հեղինակային խոսքը չունի ասացական կամ սրանց փոխարինող այլ բայեր, որոնք մատնանշում են ուղղակի խոսքը, երկախոսությունները ուղղակի խոսք չեն. օրինակ՝ Վանա փիսոն խռոված դուրս գնաց և նորից ներս մտավ, խաղալով Մաշիտա մայրիկի կծիկի հետ:

— Եկե՞լ ես, աղա: Չայ բերե՞մ:

— Երբ տաք է:

— Տաք է: Հալիվորը նոր խմեց... գնա դողցուց իմ խեղն: Իմ նար ի՞նչպես կլինի Լևոն:

— Ես զանգահարել էի բժշկին, չեկա՞վ (ԱԲԾ, 170)։

Ուղղակի խոսքը մատնանշող այդ բայերը սովորաբար երբեք դեմքով էլ կիրառվում են և իբրև ստորոգյալ կազմում են երկան–

ղամանի նախադասություններ, որովհետև եթե ենթական չի էլ կիրառվում, այնուամենայնիվ ակնհայտ է, որ ենթակա կա։ Ուղղակի խոսքը այսպիսի ստորոգյալների նկատմամբ մի տեսակ ուղիղ խնդիր երկրորդական նախադասության դեր է կատարում, միայն հատուկ հնչերանգով բաժանվում է, որով վերացվում է հեղինակի և ուրիշի խոսքի՝ շաղկապներով ու հարաբերական բառերով կապակցվելու հնարավորությունը. օրինակ՝ —Այդ ի՞նչ է,—հարցրեց նա սոսկալով:

— Ոչտունյաց տիկնոջ մարմինն է,—պատասխանեցին նրան *(ՐԵԺ, VII, 308)*։

— Օդ չկա այստեղ, խեղդվում է հիվանդը, դուռը բռնել եք, խնդրում եմ հեռանաք, թողեք հանգիստ հիվանդին: Խոսք, ձայն, աղմուկ վնասակար են, հեռացեք,—գոչում եմ ես *(ԱԻԵ, 254)*։

Ինչպես երևում է օրինակներից, ուղղակի խոսքը մատնանշող այդ ասացական կամ դրանց փոխարինող բայերը ներգործական նշանակություն ունեն, իսկ ուղղակի խոսքը մի տեսակ ուղիղ խնդիր է դրանց համար։ Սակայն պետք է նշել, որ հիշյալ բայերը երբեմն խոսքի մեջ զեղչվում են և դրանց փոխարեն խոսքի մեջ մնում է մի այնպիսի բառ, որ ցույց է տալիս, թե այդ բայը եղել է ու տվյալ դեպքում սղված է։

Հայերենում այդպիսի մատնացույց անող բառ է թե *շաղկապը, որ հաճախ է կիրառվում վերոհիշյալ բայերի փոխարեն։ Այդպիսի* թե-*ն այս դեպքում երկրորդական նախադասություն կապակցող շաղկապ չէ արդեն, այլ պարզապես նշանակում է ասել. օրինակ՝* Էնքան չարչարում է, որ հիմարը հուսահատվում է, մի օր էլ կանգնում է, թե՝

— Ախպեր, ես չեմ ուզում քեզ հետ կենամ *(Թ., III, 155)*։ Այդ տեսնելով Սերոբը եկավ, թե՝

— Գնանք, ընկեր Դավթյան *(ՍՁ, V, 94)*։ Գորտը թե.—Ինչիս են պետք քո զարդերը *(Թ., III, 308)*։

Որ տվյալ թե *շաղկապը ստորադասական շաղկապի դեր չի կատարում, երևում է հետևյալ օրինակից, ուր* թե-*ին փոխարինում է համադասական* ու *շաղկապը. օրինակ՝* Սերոբը կանգ առավ մի պահ, ականջ դրեց ու՝

— Իրանք են, ընկեր Դավթյան *(ՍՁԵ, V, 93)*։

Ծանոթություն.— Պետք է նշել սակայն, որ այդ թե-*ն, որ մնացել է* ասել *բայի փոխարեն, անուղղակի խոսքի շաղկապն է. սակայն ասացական բայը սղվելուց հետո* թե-*ն կոր-*

ցընում է իր կապակցական նշանակությունը և պարզապես փոխարինում է ասացական բային։

Ուղղակի խոսք առաջ բերող այդ բայերը սովորաբար դիմավոր են լինում, սակայն դրանք կարող են արտահայտվել նաև դերբայներով. օրինակ՝ խիկ ձայնը շարունակում է կրկնել.

— Ընկեր հրամանատար, ընկեր Դավթյան *(ՍՁ, V, 89)*։ Դուք նայում եք ինձ սաստիկ զարմացած և ուզում եք հարցնել.

— Ինչպե՞ս *(Նար., I, 439)*։ Երբ Սամվելը յուր պատասխանը ուղարկեց, նա ավելացրեց՝ ասելով.

— Երե դու չհամաձայնվես, ես առանց քեզ էլ կգնամ *(Ր., III, 175)*։ Սամվելը առաջ անցավ, խնդրելով.

— Թույլ տվեցեք ինձ խոսել *(Նույն տեղում, 152)*։

Ուղղակի խոսք են առաջ բերում ոչ միայն բայերը, այլև այնպիսի գոյականներ, որոնք արտահայտում են խոսք, մտածում կամ դրանց համանիշ ու փոխարինող ուրիշ բառեր. օրինակ՝ էս դրության մեջ հանկարծ լսում է մի քնքուշ ձեն.

— Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես լաց լինում *(Թ., III, 242)*։ Բրուտ Ավագը ինձ հողե փարչ է տվել և հողե օրհնություն.

— Տարավես, կխմես: Կուտդ դալար մնա *(ԱԽԵ, 154)*։ Պարթևը խոսքերի մեջ չբռնվեց: Փորձիչը առաջարկեց մի այլ հարց.

— Դարձյալ զննություն ստեղ, որ կարողացել ես փոքր ի շատե կարգի դնել: Հիմա պետք է քեռիներիդ տանը հանգստանաս և նրանց ուրախություն պատճառես, սիրելի Սահակ *(Ր., III, 121)*։ Յուր պատմությունը վերջացրեց *հետևյալ խոսքերով*.

— Այժմ կասեմ քեզ, սիրելի Աշխեն, թե ինչու համար եկա կամ ո՞ւր եմ գնում *(Նույն տեղում, 298)*։ Մեր պատասխանը լինում է միշտ միևնույնը.

— Լավ, պարոն Վախթանգ, լավ ես սովորում *(ՍՁՄԿՊ, 256)*։

Ուղղակի խոսք առաջ բերող բայերը կարող են լինել միակազմ նախադասության բայեր, որոնք տվյալ դեպքում իբրև ստորոգյալ անենթակա են գործածվում. օրինակ՝ Գոռում են, գոչում երկու բանակից.

— Սրտապինդ կացեք, մի վախեք, տղերք: Ու ամեն կողմից ուրախ հնչում, թնդալի ծաղրով կանչում են, գոռում.

— Ձելավ, էդ չելավ... *(Թ., II, 59)*։

Ուղղակի խոսք առաջ բերող հեղինակային վերոհիշյալ բառերը կարող են լրացվել մեկը մյուսի միջոցով, որ մի տեսակ համեմատություն է, ուր սակայն մեկը մասնավորում է ընդհանուր ասվածը։

օրինակ՝ Եվ շանզաղան պատմեց. —Աղջիկը,—ասաց նա,—նշանած էր մի պատվական երիտասարդի վրա *(Փափ., 359)*։

Ուղղակի խոսք առաջ բերող բառերը սովորաբար ասացական, իմացական և կամ այնպիսի բայեր են, որոնք փոխարինում են դրանց։ Ասացական, իմացական բայեր են՝ ասել, խոսել, մտածել, կանչել, շշնջալ, կրկնել, հարցնել, պատասխանել, խորհել, սրախոսել, խնդրել, միտք անել, գոռալ, ձայն տալ, բացականչել, կմկմալ, ճչալ, պատմել, արտասանել, թոթովել *և այլն*։

Այս բայերը իբրև ուղղակի խոսք առաջ բերող բայեր հեղինակային խոսքի մեջ երեք նշանակությամբ են հանդես գալիս. կան այնպիսիները, որոնք առանց կողմնակի լրացման խոսք և միտք են արտահայտում. օրինակ՝

— Իմ քույր,—ասաց Վանոն,—օգնության հասիր, Կեկելս ձեռաց գնաց *(ՊՊԵԺ, III, 164)*։ «Ասում է մրսել եմ», մտածում էր նա. ի՞նչ մրսել. մրսածին ես եփած էլ կճանաչեմ *(Նար., II, 286)*։ Ես նույս ունեի տանել ձեզ, մեյիք, բոլորովին զղջացած, բոլորովին փոշմանած,—խոսեց արեղան ծանր կերպով *(ՐԵԺ, VI, 328)*։ Իսկ Կարմիրը մտածում է.

— Չէ, էս մինը բավական էր, էլ երբեք նամփից դուրս չեմ գալ ու մենակ անտառ ընկնիլ, երբ որ մայրիկը չի թողնում *(Թ., III, 342)*։ Չեմ կարծում,—դիտեցի ես *(ՎՓԵԺ, I, 312)*։

Կան նաև այնպիսի բայեր, որոնք խոսել, մտածել *նշանակություններով կիրառվելով բնութագրում են խոսքը, ցույց են տալիս նրա արտահայտման ձևը, հնարները։ Այդպիսի ասացական բայեր են՝* բացականչել, շշնջալ, ճչալ, գոռալ, թոթովել, հրամայել, գոչել, կանչել, խնդրել *և այլն*։

— Մարդը գնացական է,—ամփոփեց իր մտքերը Օհան ամին *(ԱԻԵ, 222)*։

— Սուտ ես ասում,—գոչեց Սաթինիկը *(ՎՓԵԺ, I, 216)*։

— Մանե, դու ինձ վախեցնում ես,—բացականչեց Սանթրոսյանը *(Նար., III, 194)*։ Ո՞վ է,—կանչեց Վահանը իր բամբ ձայնով *(Նույն տեղում, 196)*։ —Հա՛, գնել մի մի անգամ էլ գնանք, վերջին անգամ, ու էլ չենք գնա,—խնդրեց նա *(ՎԱՈՊ, 156)*։

— Ա՜ա՜... շատ ուրախ եմ... ես ձեր մասին վաղուց եմ լսել... հանեեի է ինձ ծանոթանալ ձեզ հետ... բացականչեց անծանոթը *(Նույն տեղում, 157)*։ Թող մնա մինչև վաղը, պարանը զրում է, խանզարել չի կարելի,—փսփսաց տիկինը *(ՊՊԵԺ, III, 329)*։

Կան նաև այնպիսի բայեր, որոնք արտահայտելով խոսք կամ

միտք, ցույց են տալիս նաև ուղղակի խոսքի այս կամ այն առնչակցությունը նախորդ խոսքի ու հեղինակային խոսքի նկատմամբ, այսինքն՝ այդպիսի բայերը մատնանշում են կրկնություն լինելը, շարունակությունը, հարց ու պատասխան և այլն։ Այդպիսի բայերի թվին են պատկանում՝ կրկնել, պատասխանել, ընդհատել, ավելացնել, վրա բերել, շարունակել, հարել, մեջ ընկնել, հարցնել, միջամտել *և այլն. օրինակ՝* —Բան չկա,—մեջ ընկավ Վահանը *(Նար., III, 194)։* —Այո՛,—շարունակեց պարսիկը,—ես նրան ճանաչում եմ և վախենում եմ *(Փափ., 359)։* — Ես ոչինչ չեմ հիշում,— պատասխանեց տիկինը տխուր ձայնով *(ՐԵԺ, VI, 414)։* —Ինչո՞ւ, Սիմոն ջան,—զարմացած հարցնում է տիկինը *(ԱԻԵ, 258)։* —Վնաս չունի, մենք էլ իրա վրեժը կառնենք իր ազգից,—վրա բերեց մի ուրիշը *(ՊՊԵԺ, III, 78)։* —Թագավորի պալատն էլ տանես ու ամեն օր հավ ու լոր տաս, էլի պիտի պրծնի, գա։ *Եվ ավելացրեց.*

— Էս շուն է. հալա մեկ սաս՝ շուն *(ԱԻԵ, 219)։*

Կան նաև այնպիսի բայեր, որոնք որևէ ձևով բնութագրում են ուղղակի խոսքի բովանդակությունը, ինչպիսի և ինչ լինելը։ Այդպիսի բայերի թվին են պատկանում՝ զգուշացնել, հանդիմանել, անարգել, պարսավել, վճռել, հիշեցնել, օգնության կանչել, առարկել, կարծիք հայտնել, հակառակվել, սրախոսել, կատակել, հուսադրել, սրտապնդել *և այլն. օրինակ՝* —Չի կարող պատահի, վարժապետին իսկույն կբռնեն,—առարկում եմ ես *(ԱԲԵ, 158)։* Չէ, էդ քիչ է,—հակառակում է տղեն *(Թ., III, 152)։*—Չեմ կարող նազելի տիրուհի,—հրաժարվում է Դիվանան *(Թ., III, 230)։* Գնում է Սերոբն ու հետն էլ կատակում.—Աղջիկ փախցնելու պես, ընկեր Դավթյան, չէ՞ *(ՍԶ, V, 92)։* Քո արտն էլ այդպես կլինի,—սրտապնդեցի նրան *(Փափ., 349)։* —Կա թե չկա, էս խորհրդավոր վարպետի սարքած խաղն է, որ խաղում է մեր գլխին,—կարծիք է հայտնում թագավորի խորհրդակիցներից մինը *(Թ., III, 246)։* —Ներիր, նազելիս, սա է ճանապարհը,—մեղմով առարկեց Աղամ *(ԱԻԵ, 313)։*

Հաճախ ուղղակի խոսքը բնութագրվում է ասացական բայերի հետ կիրառվող լրացուցիչ բառերով. օրինակ՝ —Լռիր, Շուրպիխին,— սպառնագին ասում էր նա *(Շաթիրյան, 627)։* —Դու չե՞ս հասկանում, կանգնիր,—բարկացած գոռաց նա Աղամի վրա *(Նար., 1, 283)։* —Նրա համար, որ դու այստեղ ես... ասաց Սալոմեն այժմ ավելի վճռական կերպով *(Ր., VI, 190)։* —Խելոք չես, Առաքել,—ասաց դժգոհությամբ Կարապետը,—մի՞թե չգիտես, որ խեղճ տղան չգիտե այս կղզյակի գոյությունը և կարող է մոլորվել *(ՎՓԵԺ I, 189)։*

Հաճախ ասացական բայերը հեղինակային խոսքի մեջ զեղչվում են, և դրանց փոխարեն բայացման ենթարկվելով կամ դիմավոր դառնալով, կիրառվում են ասացական բայերի հետ գործածվող վերոհիշյալ բնութագրական բառերը. փոխանակ ասելու «ժպտալով ասաց», ուղղակի ասվում է՝ ժպտաց. օրինակ՝ —Հըմ... ճետաfrfիr է,—ժպտաց Սուrենր,—դե ինչ կա nr՝ այնպես արա, nr վերfս չքուժվի *(Շաթիրյան, 592)*։ —Դո՞ւ,—զարմացավ Սուrենը *(նույն տեղում, 592)*։ —Շատ ուշ ես տեսել, Բարբարե ջան,—ճոզվոց fաշեց Կեկելը *(ՊՊԵժ, III, 165)*։ —Դու մի վախենա, ես ամեն բան կանեմ,—ճանգստացնում է աղվեսն ու ետ վազում... *(Թ., III, 145)*։

Ուղղակի խոսքը իր կառուցվածքով չափազանց բազմազան է ու տարատեսակ. սկսած սովորական մի բացականչությունից կամ ձայնարկությունից, ուղղակի խոսքը կարող է այնքան ընդարձակ ու բարդ կառուցվածք ունենալ, որ ընդգրկի ամբողջ պարբերություններ։ Ուրեմն՝ կառուցվածքի ծավալը և այս կամ այն կարգի ձևավորումը ուղղակի խոսքի էացման համար նշանակություն չունեն։ Եթե վերևում թվարկված պայմանները կան, ուրիշի մի ձայնարկությունը, կոչական բառը, բառային որևէ արտահայտությունը դառնում են ուղղակի խոսք. օրինակ՝ —Վա՜յ, խեղճ ոչխար,—ասում է աղջիկը, ճանում է մկրատն ու խուզում ոչխարին *(Թ., III, 278)*։—Վայ Կիկոս ջան, վայ,—գոռում է միջնեկ fույրը *(նույն տեղում, 198)*։ Իջևանի տերը, nr կաղլիկ ոտը fաrշ տալով ներս ու դուրս էր անում, վրա բերեց.

— Ինշալլա՜ճ, ինշալլա՜ճ... *(ԱԲԵ, 424)*։

— Բա էդ ալևոrը fո ի՞նչն է...

— Հե՛չ,—ասաց Տիտոսն այնպիսի շեշտով, nr նշանակում էր, թե թող fնեմ *(նույն տեղում, 425)*։ —Է՛ճ,—զսպված զայրացկոտությամբ արտասանեց Եվան., *(Նար., III, 356)*։

—Պաշտո՞ն,—ճարցրեց Թոrոսյանը *(Մուր., II, 406)*։—Մոռանա՞մ, ե՞ս, ե՞ս,— գոչեց Ռոստոմյանը,— մոռանա՞մ ամեն ինչ և թողնեմ, nr դու այդ դրությյան մեջ անջատվե՞ս ինձանից։ Լսիր, Վարվառե, ես այժմ պատրաստ եմ ամեն մի միջոցի դիմել իմ և fո երջանկության ճամար։ Ես fեզ առաջարկում եմ՝ թողնել ծերունուն և գնալ ինձ ճետ այնտեղ, nւr ես կգնամ։ Չե՞ս ուզում *(ՇԵժ, I, 463)*։

Վերջին օրինակում ուղղակի խոսքն սկսվում է մոռանամ *բառով և հետագայում այլևս չի զգացվում, որ դրանք եղել են ասացական բայի հետ և անընդհատ գործածվելով դառնում են օրինաչափական։ Համեմատիր ներքին զգացումներ և արտաքին շարժում-*

ներ արտահայտող բայերի հետ կապված ուղղակի խոսքի հետևյալ օրինակները՝

—Էմմա,— զարմացավ Ջազունյանը *(Նար., II, 374)*։

—Վայ,— ծիծաղեցի ես *(ՎՓեժ, I, 312)*։ Մի՞թե դու ճեռակաճություն ես սովորում,— ստուգիվ աչքերը չռեց աղան և ճարցասիրաբար ճայեց ուսուցչին *(ՊՊեժ, III, 380)*։ Տառան գլուխը թափ տվեց.— Էհ, ախպեր, դուք խղճմտանք չունեք *(Թ., III, 212)*։

— Ոսկի՞,—քմծիծաղ է տալի Գոճար թագուճին *(Թ., III, 228)*։

—Իսկ էս ինչ սենյակ է,— ցույց է տալիս թագավորի տղեն մի դռան վրա *(նույն տեղում, 240)*։

—Հետո՞, ճետո՞ ինչպես եղավ,— ճետաքրքրվեցի ես *(ՍՁ, V, 96)*։ Ի՞նչ է նշանակում «սիրտս չի ճամբերում»,— բարկանում եմ ես *(նույն տեղում, 88)*։ Վիրավորանքը... դարձյալ մատը դնում է ճակատին.

—Օ, վիշտը, դառը և ողբերգական վիշտ է այն մարդուն մղել դեպի արբեցողություն *(Մուր., IV, 28)*։ —Անշուշտ, սա ևս նրանցից մինն է, միայն տարբեր տարազով ու զատ երկնքի տակ,— եզրակացրի ես ի վերջո *(նույն տեղում, 363)*։

2. ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ

Ինչպես տեսանք, ուղղակի խոսքը հեղինակային խոսքի մեջ բերվում է բառացի և հատուկ դադարներով անջատվում է նրանից առանց որևէ կապակցող բառի կամ շաղկապի։ Անուղղակի խոսքը ուղղակի խոսքից տարբերվում է նրանով, որ չի բերվում բառացի. տրվում է բովանդակությունը, նրա այս կամ այն չափով փոփոխված շարադրանքը և որևէ շաղկապով կապակցվելով հեղինակային խոսքի հետ, դառնում է նրա համար երկրորդական նախադասություն։ Ըստ այդմ հեղինակային խոսքի մեջ դարձյալ կիրառվում են ասացական, իմացական նշանակությամբ ներգործական բայեր, որոնց համար անուղղակի խոսքը խնդրային նշանակություն է ստանում և կապակցվում է շաղկապներով։

Անուղղակի խոսքը ոչ միայն ուղղակի խոսքի շարադրանքն է, այլև կարող է լինել ճիշտ և ճիշտ բառացի ուղղակի խոսքը, միայն այն պայմանով, որ հեղինակային խոսքի հետ կապակցվի որևէ շաղկապով։ Օրինակ՝ Ասում էին, որ Ռշտունյաց իշխանի դուստրն է *(Ր., III, 149)*։

Այս նախադասության մեջ Ռշտունյաց իշխանի դուստրն է *մի անուղղակի խոսք է, որովհետև հեղինակային խոսքի հետ կապակց-*

ված է որ շաղկապով, չնայած բերված է ճիշտ այնպես, ինչպես որ ասված է։ Եթե որ շաղկապը հանենք և հիշյալ անուղղակի խոսքը հեղինակային խոսքից բաժանենք միջակետով ու գծով, կդառնա ուղղակի խոսք։

Սակայն միշտ հնարավոր չէ այս նույն ձևով ուղղակի խոսքը վերածել անուղղակի խոսքի կամ ընդհակառակը։ Հաճախ հեղինակը ուրիշի խոսքը լրացնում է իր սեփական բառերով ու արտահայտություններով, ուրիշի խոսքը վերարտադրվում է յուրովի։ Երբեմն այս կարգի փոփոխությունները ուրիշի խոսքի մեջ տեղի են ունենում հեղինակի կամքից անկախ։ Պարզապես ուղղակի խոսքը որևէ շաղկապով անուղղակի խոսքի վերածելը անհնարին է դառնում։ Քերականական կապակցությունը պահանջում է անուղղակի խոսքի մեջ կրճատել ուրիշի ուղղակի խոսքի շատ բառեր ու կապակցություններ։

Ծանոթություն 1.—Ուրիշի խոսքը պետք է արտահայտվի երկրորդական նախադասությամբ, որ դառնա անուղղակի խոսք։ Բայց եթե հեղինակը նշում է ուրիշի խոսքի թեմայի անունը, կամ խնդրի ձևով տալիս է խոսքի շարադրանքը, այդպիսի խոսքը անուղղակի չի համարվում. օրինակ՝ Նա բացատրում էր, թե ի՞նչ ուժ է դպրոցը և թե ի՞նչ կարող է անել նա: Այդ պատճառով խոսում էր հայոց հին անցյալից՝ Մեսրովպի և Սահակի դարերից. պատմում էր նրանց սկսած և կատարած գործերը *(Մուր., II, 59)*։

Ծանոթություն 2.—Եթե ուրիշի խոսքը արտահայտված է երկրորդական նախադասությամբ, բայց անմիջապես չի հարում հեղինակային խոսքի մեջ գտնվող ասացական կամ իմացական-ստորոգյալին, այլ հարում է որևէ հարաբերյալ բառի, դարձյալ չի կարող անուղղակի խոսք համարվել. օրինակ՝ Այս վերջինիս մասին մի շարք ամենաստույգ աղբյուրներ իրենց պարտքն են համարում հայտնել նաև այն, որ նա, այսինքն պ. Մարուքեն ավարտած է եղել ոչ թե Գևորգյան ճեմարանը... այլ տեղական յոթնամյա քաղաքային դպրոցը *(ԵՉԵ, 297)*։

Անուղղակի խոսքից դուրս են մնում ուրիշի ուղղակի խոսքի բացականչական բառերն ու արտահայտությունները, միջանկյալ կապակցությունների բառերն ու նախադասությունները, հռետորական հարցումները, բազմաթիվ հարցական, արհամարհական, փաղաք-

շական, իրենց նշանակություններով չկիրառվող, միայն իբրև կոչական գործածվող կոչականները, խոսքը բնութագրող յուրահատուկ արտահայտությունները և այլն։

Որպեսզի հիշյալ բացթողումները որևէ ձևով անուղղակի խոսքի մեջ արտահայտվեն, հեղինակը երբեմն դիմում է ուղղակի խոսքին, այսինքն դրանք անուղղակի խոսքի շարադրանքի մեջ բերվում են ուղղակի խոսքի ձևով։ Ահա այդպիսի անուղղակի խոսքի մի օրինակ. նրա խոսքը այսպիսին էր* թե ի՛նչպես ես, քըն-ձըռոտ «ուշիտեյս» համարձակվում էի աչք ունենալ իրենց աղջկա վրա, Մուշտաիդում սկանդալ սարքել նրա գլխին և այդ բանից հետո դեռ սիրահարական նամակ էլ գրել նրան: Եվ այս ամեն մի մեղադրականին անմիջապես կցում էր՝ «չե քեցիանո, չե կոռ մամաձաղլը» («դու քոսոտ, դու կոռ շանորդի») *(Նար., II, 595)։*

Հեղինակը դժվարացել է քաղքենի կնոջ ուղղակի խոսքն անուղղակի խոսքի վերածել՝ պահպանելով դրա արտահայտչական բոլոր հնարները. ուստի որպեսզի ընթերցողին գաղափար կազմել տա, թե դա ինչ ուժի արտահայտչական դարձվածներով, անվանումներով, ձայնարկություններով, դիմումներով հարուստ խոսք է եղել, հեղինակը շարունակության մեջ արդեն նկարագրում է այն։ Ուրեմն հաճախ շատ դժվար է ուղղակի խոսքը փոխարկել անուղղակի խոսքի. այս դժվարությունն առանձնապես մեծանում է, երբ ուղղակի խոսքը ոճավորված է և ավելի մեծ ծավալ ունի։

Ինչպես ասվեց, անուղղակի խոսքը հեղինակային խոսքի նըրկատմամբ մի երկրորդական նախադասություն է դառնում և նայած իր բնույթին, հեղինակային խոսքի հետ կապակցվում է տարբեր շաղկապներով։

Պատմողական անուղղակի խոսքը հեղինակային խոսքի հետ կապակցվում է որ *շաղկապով. օրինակ՝* Ուզում էր ասել նրան, որ գիշերվա իր վարմունքի գիտակցությունը սպանում է իրեն, որ այդ գիտակցության պատճառած անտանելի տանջանքից իրեն ազատել կարող է միայն նրա ներումն ու մոռացումը *(Նար., III, 157)։* Ծերունիները պատմում էին, որ նույնիսկ օսմանլուի մեծ կռվի տարին այդքան մարդ չէր հավաքվում այդ քարանձավի մեջ *(ԱԲԵ, 358)։* Ես ասի, որ քո հեքիաթը ինձ դուր չի գալիս, վարպետ *(Թ., III, 250)։* Պահակը նախ հանկարծակիի եկավ և պատասխանեց, որ գրքերում գրած է, թե Կաքավաբերդի գլխին կարասի մեջ թաղված են ոսկե գանձեր *(ԱԲԵ, 192)։*

---

* *Անուղղակի խոսքի ձև տալու համար հեղինակային խոսքը փոփոխում ենք։*

Պատմողական անուղղակի խոսքը հեղինակային խոսքի հետ կապակցվում է նաև թե շաղկապով. օրինակ՝ Խորթ մերն ու աղջիկները Վասիլիսային որ տեսնում են, սկզբում ուրախ հանդիպում են, պատմում են, թե էն օրվանից ինչ դու գնացել ես, մեր տանը կրակ չի վառվել *(Թ., III, 265)*։ Հայտնեց, թե դուրս չի թողնելու էն ամպից, մինչև չի խոստանա, որ էլ չի վերադառնալ երկիր *(Թ., III, 272)*։ Նա ասաց, թե տիկինը այն աստիճան ատում է Թամարին, որ գուցե շատ ուրախ կլինի... *(Րեժ, IV, 180)*։

Եթե խոսողը անուղղակի խոսքի ճշտության նկատմամբ կասկած է տածում, ապա այդպիսի անուղղակի խոսքը հեղինակային խոսքին կապակցում է որ իբր թե, իբր թե *շաղկապներով. օրինակ՝* Այդ աղբյուրը տարածում է լուրեր, որ իբր թե քաղաքում նոր հաստատված հեղափոխական իշխանությունը ազատ է արձակել գավառապետին *(ՁԸե, 375)*։ Հատուկ թղթակիցներին նմանեցնելով յասաուլ-բաշիների, խավարամիտ ազգականս այն բարբարոս միտքն էր հայտնում, իբր թե մենք էլ նրանց եղանակով հարստահարում ենք ժողովրդին, կաշառ ենք առնում նրանցից կամ երեսպաշտություն անում *(Մուր., IV, 318)*։

Հրամայական ուղղակի խոսքը անուղղակի է դառնում որ *շաղկապի միջոցով. այս դեպքում հաճախակի կիրառվում է նաև* որպեսզի *շաղկապը. օրինակ՝* Հայրը հրամայեց, որ յուր ամենալավ վրաններից մեկը հատկացնեն Սամվելի կացության համար և այնտեղ պատրաստեն նրա անկողինը *(Ր., III, 487)*։ Հայրը հատկացրեց Սամվելին առանձին ծառաներ, պատվիրելով, որ միշտ նրա սպասումն լինեն *(Նույն տեղում)*։ Բայց էլի գրում է, որ պահեն մինչև ինքը կգա *(Թ., III, 168)*։ Գնալիս տանը պատվիրում է, որ երբ կինը ծնի, իրեն տեղեկություն գրեն *(Նույն տեղում, 164)*։ Աշակերտներին պատվիրել էի, որ շատ մարդու կանչեն *(ԱԲե, 125)*։ Ես նրանց հրամայեցի, որպեսզի անմիջապես տուն գնան:

Ուղղակի խոսքը անուղղակի դառնալիս, տեղի են ունենում մի շարք փոփոխություններ։ Այդ փոփոխությունները պայմանավորվում են ուղղակի խոսքի բնույթով, անուղղակի խոսք դարձնողի վերաբերմունքով, ուղղակի խոսքի արտահայտման ձևերով և այլն։

Ուրիշի ուղղակի խոսքն անուղղակիի վերածվելով, ինչպես արդեն ասվել է, դառնում է ստորադասական նախադասություն, որի հետևանքով սովորաբար հարցական ու հրամայական նախադասությունները վերածվում են պատմողականի, հրամայական եղանակը փոխվում է ըղձականի. չնայած հարցական նախադասու-

թյունները երբեմն նույնությամբ մնում են, բայց նրանց բնույթը հիմնականում փոխվում է։ Անուղղակի խոսքը, իբրև ստորադասական նախադասություն, հեղինակային խոսքի հետ կապակցվում է շաղկապներով կամ շաղկապային բառերով, ըստ որում անուղղակի խոսքի և հեղինակային խոսքի շարադասական հարաբերությունը կարող է փոխվել։

Անուղղակի խոսքը շարադրվում է հեղինակի կողմից, ուստի ուղղակի խոսքի մեջ գործածված դերանուններն ու ստորոգյալի դեմքերը փոփոխվում են։ Այս փոփոխությունը կախված է ուղղակի խոսքի մեջ հանդես եկող անձերի դեպի հեղինակն ունեցած հարաբերությունից։

Եթե ուղղակի խոսքն արտահայտված է առաջին դեմքով, անուղղակի խոսքի մեջ սովորաբար վերածվում է երրորդ դեմքի. օրինակ՝ Մի խորհուրդ են հարցնում, թե ինչպես անեն *(ուղղակի խոսքի մեջ՝ ինչպես անենք)* իրենց որդուն, էդ կոնատ աղջկա հետ պսակեն, թե՞, չէ *(Թ., III, 164)։* Վարվառեն նրան հավատացրել էր, թե ինքը բոլորովին առողջ է և թե պատրաստ է ուղևորվել *(Շեժ, II, 465)։* Բեյզադեն շարունակում էր կչկչալ և պատմել տատիս, որ ամեն անգամ, երբ ինքը գնում է Դատաստանենց տուն հաց թխելու լսում է, թե ինչպես լոռոն անցնում է *(ԳՄե, 342)։* Նեսոն պնդում էր, թե դանակն ինձ տվավ *(Թ., III, 119)։* Իսկ ինձ ասաց, թե մի քանի օր դարձյալ մնալու է այստեղ *(Նար., III, 489)։* Հայրը նորից առաջարկեց, որ միասին գնան Բազենյանի մոտ *(Նույն տեղում, 491)։* Միշտ միևնույն պատասխանն էր ստանում, թե սաստիկ հոգնած է, շատ գիշերներ չի քնել, կցանկանար հանգստանալ *(Ր., III, 486)։* Իշխանուհին պատասխանեց, որ առժամանակ թողնում է այնպես, մինչև որ Պետերբուրգից մի որևիցե կարգադրություն կանե *(Նար., II, 53)։*

Եթե հեղինակային խոսքը պատկանում է ուղղակի խոսքի մեջ հանդես եկող անձին, այսինքն հեղինակն իր ուղղակի խոսքը կամ իրեն հետ առնչվող ուղղակի խոսքն է անուղղակի դարձնում, առաջին դեմքը պահպանվում է. օրինակ՝ Ես ձեզ ասացի, որ կգամ: Այժմ ձեզ պիտի կրկնեմ ասածս, թե այդ միամիտ, տգետ և անփորձ երեխաներին ես դիտմամբ եմ համախմբում այստեղ: Քեզ արդեն հայտնել եմ, որ ես թուղթ խաղալ համարյա չգիտեմ:

Եթե ուղղակի խոսքն արտահայտված է առաջին դեմքով ու մի ուրիշի կողմից այդ խոսքը անուղղակի է դարձվում և ուղղվում է ուղղակի խոսքի տիրոջը, առաջին դեմքը փոխվում է երկրորդի, ըստ

որում փոխվում են և դերանունները. օրինակ՝ Քանի որ ասում ես, թե սիրում ես եկային *(Նար., III, 450)։* Խոստանում եք, թե կգաք և չեք գալիս *(նույն տեղում, 494)։*

Երբ ուղղակի խոսքը արտահայտված է երկրորդ դեմքով, անուղղակի դառնալիս փոխվում է երրորդ դեմքի. օրինակ՝ Մարությանը խնդրում էր, որ Աշխենը որքան կարելի է հաճախ նամակ գրի իրենց *(Նար., III., 359)։* Տիկինը շարունակելով յուր անսպառ հարց ու փորձը, դարձավ դեպի Սահակը, հարցնելով՝ թե ինչպես գտավ նա յուր հայրենական կալվածքները *(Ր., III, 120)։* Անա թե ինչու իսկույն չէին համարձակվել հարցեր տալ, թե ի՞նչ գործ ունեն նա այդ կողմերում *(ՎՓԵԺ, II, 297)։* Նա հարցրել էր աղջկան, թե արդյոք ոչինչ տկարություն չի զգում, կարո՞ղ է դյուրությամբ ճանապարհորդել *(ՇԺԵ, I, 465)։* Տիկինը շարունակելով յուր հարց ու փորձը, դարձավ դեպի Սահակը, հարցնելով՝ թե ինչպես գտավ նա յուր հայրենական կալվածքները *(Ր., III, 120)։*

Երբ ուղղակի խոսքը արտահայտված է երկրորդ դեմքով և վերաբերում է այն անձին, որ անուղղակի է դարձնում այդպիսի խոսքը, երկրորդ դեմքը փոխվում է առաջինի. օրինակ՝ Մի օր առաջարկեց ինձ, եթե կհաճեի, ներկա լինել բասկ երիտասարդների հավաքույթին *(ԱԻԵ, 260)։* Նախասենյակում հարցրին ինձ, թե ինչո՞ւ էի այնպես հարձակվում նրա վրա *(Նար., III, 508)։* Երիտասարդ արճղան տարավ մեզ մի բավական մաքուր և հաշակով կահավորված սենյակ և իսկույն սկսեց մեզ հետ խիստ մտերմական խոսակցություն, թե ո՞րտեղից ենք գալիս, ո՞ւր պիտի գնանք *(ՐԵԺ, V, 185)։*

Անուղղակի խոսքի մեջ պահպանվում է երրորդ դեմքը, եթե ուղղակի խոսքը վերաբերում է այն անձին, որի հետ խոսում է հեղինակը. օրինակ՝ Դուք ասացիք,— ես սիրում եմ ճանապարհորդել: Դուք ասացիք, որ դուք սիրում եք ճանապարհորդել: Եղբայրդ երեկ քո մասին խոսելիս՝ ասաց. «Նա այս տարի ավարտելու է»: Եղբայրդ երեկ քո մասին խոսելիս՝ ասաց, որ դու այս տարի ավարտելու ես: Եղբայրդ երեկ քեզ ասաց. «Դու պետք է այս տարի ավարտես»: Եղբայրդ երեկ քեզ ասաց, որ դու պետք է այս տարի ավարտես: Տիկինն ասաց, որ դու ամեն մի անցած հակառակորդական բանից երկյուղ ես կրում *(Նար., II, 245)։* Միայն խիստ զանգատվում է, որ դու վերջերս կամ ոչինչ չես գրում իրեն, կամ միայն չոր ու ցամաք բարևներ ես գրում *(Նար., III, 501)։* Նրանք ասում են, որ դու անցել, ու հնացել ես, ու հեռացել *(ԵՉԵ, 191)։*

Եթե ուղղակի խոսքի մեջ բացի հեղինակից հիշատակվում են նաև այլ անձեր, անուղղակի խոսքը կառուցվում է առաջին դեմքով. Ընկերները մեր մասին խոսելիս ասացին. «Նրանք պարտավոր են կատարելու իրենց առաջարկված ամբողջ գործը». ընկերները մեր մասին խոսելիս ասացին, որ մենք պարտավոր ենք կատարելու մեզ առաջարկված ամբողջ գործը: *Եթե նույնիսկ ուղղակի խոսքի մեջ հիշատակվեն բոլոր դեմքերը, ապա դարձյալ ստորոգյալը կդրվի առաջին դեմքով.* Ընկերները ասացին, որ ես, դու և Դավիթը պարտավոր ենք կատարելու մեզ առաջարկված ամբողջ գործը: Սհան ապերն էլ նկատեց իմ ուրախությունը և ծիծաղելով ասաց, թե վիզը ծուռ Անտոնի հետ անտառում երևի մի օր ենք սարքել *(ԱԲԵ, 122)*։ Հատուկ թղթակիցներին նմանեցնելով յասաուլ-բաշիներին խավարամիտ բարեկամս այն բարբարոս միտքն էր արտահայտում, իբր թե մենք էլ *(խոսողը նույնպես թղթակից է)* նրանց եղանակով հարստահարում ենք ժողովրդին, կաշառ ենք առնում նրանից կամ երեսպաշտություն անում *(Մուր., IV, 318)*։

Ուղղակի խոսքի հրամայական եղանակը անուղղակի խոսքի մեջ փոխվում է ըղձականի. օրինակ՝ Ես նրան ասացի. «Ստուգիր աշխատանքային պլանների կատարումը». ես նրան ասացի, որ նա ստուգի աշխատանքային պլանների կատարումը: Եվ հրամայեց, որ բովանդակ Չինաստանը տասը տարի սնունդ մատակարարի բանվորներին *(ԱԻԵ, 326)*։ ժպիտն երեսին մոտեցավ *(պապը)*, պատվիրեց, որ ձիուն լավ նայեմ և չթողնեմ, որ մոտենա մյուս ձիերին *(ԱԲԵ, 138)*։ Աշակերտներին պատվիրել էի, որ շատ մարդու կանչեն *(Նույն տեղում, 125)*։ Մեկ-մեկ գալիս էին ու խնդրում, որ նայեմ, կա՞ արդյոք իրենց անունները, թե ոչ *(ԵՉԵ, 456)*։

Ուղղակի խոսքը երանգավորող որոշ հուզարտահայտչական բառեր անուղղակի խոսքի մեջ չեն գործածվում։ Այդպիսի բառեր են ձայնարկությունները, եղանակավորիչ բառերը և նախադասության մեջ չմտնող ուրիշ բառեր և այլն. օրինակ՝ —Հա, մենք կերանք, դուք մնացիք, վազեք,— ասաց Պողոսը *(ԴԴԵԺ, 4, 503)*։ Պողոսը ասաց, որ իրենք կերան, նրանք մնացին թող վազեն: —Ախ,— ասաց Հովհաննեսը խոսքը կտրելով,— ես չեմ երկբայում, որ քո ասածը ճշմարիտ է *(ՌՊԵ, 341)*։ Հովհաննեսը ասաց, թե ինքը չի երկբայում, որ նրա ասածը ճիշտ է: Հը, չլինի՞ դարձյալ ուզում ես ծիծաղել,— ասաց նա *(Նար., II, 322)*։ Նա ասաց, թե չլինի դարձյալ ուզում է ծիծաղել: Նա ասաց,— բայց, տեր աստված, դուք ար–

դեն այնպիսի բան եք արել *(ՍԶՄԿՊ, 344)*։ Նա ասաց, որ մենք այնպիսի բան ենք արել։

Ուղղակի խոսքի մեջ գործածված կոչական բառերը անուղղակի խոսքի մեջ կամ դառնում են ենթակա, կամ խնդիր և կամ բացահայտիչ. օրինակ՝ —Ինչո՞ւ ես լալիս, սիրուն տղա,—հարցրին ալիքները *(ԱԻԵ, 339)*։ Ալիքները հարցրին տղային, թե ինչու է լալիս: —Դժվար է գործդ, հ՛ը, շինական,—հարցրեց Վարդանը *(ԴԴԵԺ, IV, 45)*։ Վարդանը հարցրեց շինականին, թե արդյոք դժվար է նրա գործը: —Տեղդ ծանր կաց, Պողոս,—սաստեց Սենեքերիմ ավագը զուսպ ձայնով *(նույն տեղում, 58)*։ Սենեքերիմ ավագը զուսպ ձայնով ասաց, որ Պողոսը իր տեղը ծանր կենա: —Այ, Վահան ջան, եթե ուզում ես ամեն օր լավ ու աժան թեյ խմել , էստեղ կգաս,— խորհուրդ էր տալիս բարեկամին Մանասը *(Մուր., II, 206)*։ Մանասը բարեկամին խորհուրդ էր տալիս, թե եթե Վահանը ուզում է ամեն օր լավ թեյ խմել, թող գա էնտեղ: Երևի, դու շատ պիտի տխրես, Սառա, որ ես գնում եմ օտար աշխարհ,— հարցրի ես *(ՐԵԺ, II, 355)*։ Ես հարցրի, թե երևի նա՝ Սառան շատ պիտի տխրի... ...—Թևոս, սպասիր,— գոռաց Հովսեփը վերևից *(ՀԳԵ, 390)*։ Հովսեփը վերևից գոռաց, որ Թևոսը սպասի:

Ուղղակի խոսքի մեջ կիրառվող պատիվ, հարգանք արտահայտող կոչականներն անուղղակի խոսքից դուրս են ընկնում. օրինակ՝ —Ախ, ասում է,— ձերդ մեծություն, էնպես մի դժբախտություն պատահեց որ... *(Թ., III, 238)*։ Պիտի հեռանամ այստեղից, թե չէ, պարոն *(ԴԴԵԺ, I, 93)*։ Ժամանակին հասանք, տյարք, ամեն ինչ քայքայվել էր,— ասաց նա *(ԴԴԵԺ, IV, 153)*։ Նա ասաց, որ նրանք ժամանակին հասան...

Կոչական բառերն անուղղակի խոսքի մեջ չեն կիրառվում, երբ դրանք որակումներ են այս կամ այն առարկայի համար և կամ առարկայի փոխարեն վերցված նրա որևէ հատկանիշն են արտահայտում իբրև կոչական. օրինակ՝ Սարյանը ասաց,— այ մարդ. եթե ես նրան իմ ձեռքի ուժը ցույց տամ, նա այդ միևնույնը ուրիշ շատերին էլ կպատմի *(Մուր., II, 396)*։ Սարյանը ասաց, որ եթե ինքը նրան իր ձեռքի ուժը ցույց տա, նա այդ միևնույնը ուրիշ շատերին էլ կպատմի: Դու ո՞վ ես, բարեկամ,—հարցրեց Սենեքերիմ ավագը Առաքելին *(ԴԴԵԺ, IV, 58)*։ Սենեքերիմ ավագը Առաքելին հարցրեց, թե նա ով է:

Անուղղակի խոսքից դուրս են մնում նաև ուղղակի խոսքի մեջ կիրառվող սիրո, հարգանքի, փաղաքշանքի կոչականները. օրինակ՝

ետ գնանք, սիրելիդ իմ,— ասաց,— գնանք Պիրենիայի աղբյուրը *(ՂԱՀ, 148)*։ Ասաց, որ ետ գնան Պիրենիայի աղբյուրը: —Այո՛, մանկիկս, ես հաղթեցի Քիմեռ-Օշափին,— պատասխանեց Բելլերեֆոնը *(Նույն տեղում, 149)*։ Բելլերեֆոնը պատասխանեց, որ ինքը հաղթեց Քիմեռ-Օշափին: Նա բարբառեց: —Հիշում եմ, հիշում, նազելիս *(ԱԻԵ, 284)*։ Նա բարբառեց, որ հիշում է, հիշում: Սակայն դարեր հետո, իմ բյուր սիրելիս, մենք նորից բախտ ունեցանք իրար պատկանելու, լռությունը խզեցի ես *(Նույն տեղում, 285)*։ Ես լռությունը խզեցի *(ասելով)*, թե սակայն դարեր հետո մենք նորից բախտ ունեցանք իրար պատկանելու: Կսովորեցնեմ, իմ սիրեկան, երբ դու խելացի ու աշխատասեր կլինես,— պատասխանեց օրիորդը ժպտալով *(ՐԵԺ, II, 81)*։ Օրիորդը ժպտալով պատասխանեց, որ կսովորեցնի, երբ նա խելացի ու աշխատասեր կլինի: Տիկինը հարցնում էր,—ասա, հոգիս, ի՞նչ հետևանք, գործ նարեցի՞ր, հաց բերի՞ր *(ՊՊԵԺ, III, 357)*։ Տիկինը հարցնում էր, որ ասի, ինչ հետևանք, գործ նարեց, հաց բերեց: Հայրը ասաց.— Հենց էս ռոպեխս փոնչու ծառան հաց կբերի, քաղցրիկներս, ներս մտեք տուն *(Նույն տեղում)*։ Հայրը ասաց, որ էս ռոպեխս փոնչու ծառան հաց կբերի, թող մտնեն տուն:

Եթե կոչականները ուղղակի խոսքի մեջ ունեն ածական կամ այլ կարգի այնպիսի որոշիչներ, որոնք հեղինակն ինքն է վերագրում կոչական անվան և ոչ թե այդ անվան համար կայուն որոշիչ է, ապա այդպիսի որոշիչները ուղղակի խոսքից դուրս են ընկնում. օրինակ՝ —Ի՞նչ եղավ, Սոֆիա ջան, ասաց Կատյան *(ՌՊԵ, 489)*։ Կատյան ասաց Սոֆիային, թե ինչ եղավ նրան: —Կներես, սիրելի Աղայո,—ասաց մյուս օրը... Առաքելը *(ՊՊԵԺ, III, 228)*։ Մյուս օրը Առաքելը ասաց Աղայոյին, որ ների իրեն: —Դու ի՞նչ կասես սիրուն մանկիկ,— հարցրեց Բելլերեֆոնը ծիծաղելով *(ՂԱՀ, 129)*։ Բելլերեֆոնը հարցրեց մանկիկին, թե նա ինչ կասի: Արա, ոսկի հարևան ջան, բեր էդ լույս բոխախիդ ձեռ քսեմ,— ասաց հաստ մարդը *(ՊՊԵԺ, III, 175)*։ Հաստ մարդը ասաց հարևանին, թե թող բերի, որ ինքը նրա լույս բոխախին ձեռ քսի:

Ուղղակի խոսքի այնպիսի կոչականներ, ինչպիսիք են՝ տնաշեն, հեր օրհնած, տնածակ, սևերես *և զանազան նախադասություններից ու որակումներից կազմված այս կարգի այլ բառեր, անուղղակի խոսքից կարող են դուրս ընկնել։ Օրինակ՝* —Դե հեր օրհնած, ամուսնությունն էլ արքայության նման բան ա,— ասաց քահանան *(Մուր., IV, 73)*։ Քահանան ասաց, թե ամուսնությունն էլ արքայու-

թյան նման բան ա: —Դե, ախպար, ինձ մի խոսեցնիլ, այ սևերես,— հանդիմանեց ինձ *(ՊՊԵԺ, III, 591)*։ —Տո արի, խելոք, վախիլ մի, մենք կբարեկամանանք,—նորից շարունակեց Մելիք-Բաղալը *(Նույն տեղում, II, 83)*։ —Հեր օրհնած, ես որ ուզենամ դուրս գալ, դու ուրախ չպիտի լինես *(Նույն տեղում, 477)*։

Ուղղակի խոսքի մեջ գործածվող մարդ, ախպեր, աղա, աղջի. պապի, քույրիկ, եղբայր *և այս կարգի այլ բառեր, որոնք ոչ թե կիրառվում են իրենց բուն նշանակությամբ, այլ պարզապես կոչական բառերի դեր են կատարում, անուղղակի խոսքի մեջ սովորաբար դուրս են ընկնում. օրինակ՝* —Աղջի, ծեծած աղ չունե՞ս, մի բուռ տաս,— վերջացնում էր Անա գիսին *(ԱԲԵ, 148)*։ —Աղա, էդ ի՞նչ է, ընչի՞ եք շալակով տանում դրան,— հարցնում էին փողոցով անցուդարձ անողները *(ՊՊԵԺ, III, 14)*։ Դու ի՞նչ կասես, պապի, հարցրեց երիտասարդը *(ՂԱՀ, 128)*։ Ներս վազեցին մանուկները, ու կանչում են հորն շտապ,— Ապի, ապի, եկ մեր թոռը, մեռել հանեց գետի ափ *(«Ջրահեղձը»)*։ *Այսպիսի կոչականները անուղղակի խոսքի մեջ կարող են մտնել միմիայն փոփոխված ձևով, այսինքն՝* պապի, ապի, քույրիկ, տատի *և այլն կդառնան* քրոջը, քույրը. պապին, պապը, տատը *կամ կստանան այս վերջինների մի այլ ձևը և այդպես կմտնեն անուղղակի խոսքի մեջ, և ոչ թե այնպես, որպիսին իրենց կոչական ձևն է։*

Հեղինակային խոսքը իր շարադասությամբ ուղղակի խոսքի նկատմամբ ազատ է. այն կարող է լինել թե՛ նախադաս, թե՛ միջադաս և թե՛ ետադաս, իսկ ուղղակի խոսքը անուղղակի դառնալով, հեղինակային խոսքը բոլոր դեպքերում շարադասվում է նախադաս. օրինակ՝ Եվ պատմում էր, թե ինչպես է մի տուն ընկել, ուր երեք քույր են եղել, մի պառավ մայր *(ԱԲԵ, 495)*։ Մի անգամ ամուսինս հայտնեց, թե հրավիրված է իր քեռու տունը *(Մուր., IV, 136)*։ Հայտնեցեք գեղեցիկ Քանաքարային, որ ես երիտասարդ Դիվանան գալիս եմ Ոսկի քաղաքից *(Թ., III, 231)*։ Ոչ ոք չփորձեց հարցնել, թե ինչպես մի ցեղապետի որդի առանց ձիու, ոտքով և առանց ընկերակցի գտնվում էր գիշերով այդ կողմերում *(ՎՓԵԺ, II, 297)*։ Պատմում են, թե էսօր որը որտեղ է որոնել առավոտը ու ինչ համով կեր է գտել իր համար *(Թ., III, 335)*։

Անուղղակի խոսքի մեջ չփոխվում են իր և նրա *դերանունները, այսինքն՝ հեղինակին վերաբերող* իր *դերանունը կարող է վերագրվել նաև անուղղակի խոսքի մեջ հանդես եկող անձին. օրինակ՝* Ուսուցիչը ընկերոջը ասաց, որ անցնի իր տուն. *այս անուղղակի խոսքի*

մեջ պարզ չէ՝ իր վերաբերում է ուսուցչի՞ն, թե՞ ընկերոջը։ Եթե ասենք նրա տուն, այս դեպքում էլ հանդես կ գալիս մի երրորդ անձ. որպեսզի այսպիսի շփոթություն չառաջանա, պետք է հիշյալ դերանունը բացահայտիչով արտահայտենք. օրինակ՝ Ուսուցիչը ասաց, որ ընկերը անցնի իր՝ ուսուցչի տունը: Ուսուցիչը ասաց, որ ընկերը անցնի իր՝ այսինքն՝ ընկերոջ տունը:

Նույն է նաև նրա ձևի գործածության դեպքում։

Անուղղակի խոսքը լինում է երկու տեսակ՝ գործարարական և գեղարվեստական։ Այս երկու տեսակները զանազանվում են մի քանի առանձնահատկություններով։

Գործարարական անուղղակի խոսքը ճիշտ կերպով է արտահայտում ուրիշի խոսքի բովանդակությունը. այս նշանակում է, որ ուշադրությունը կենտրոնացվում է բովանդակության մանրամասների վրա, իսկ ինչ վերաբերում է խոսքի ձևական հատկանիշներին, գործարարական խոսքի մեջ դրանք չեն պահպանվում։ Հեղինակը ուրիշի խոսքը, ինչպես էլ այն գրված լինի, վերածում է գրական խոսքի՝ գործարարական ոճի սահմաններում։

Վերևում Նար-Դոսից բերված ընդարձակ անուղղակի խոսքի մեջ ցույց տվինք ձևական ու արտահայտչական այնպիսի երևույթներ, որոնք նույնությամբ հանդես են գալիս անուղղակի խոսքի մեջ։ Այդպիսի անուղղակի խոսքը գործարարական չէ. գործարարական անուղղակի խոսքի մեջ հեղինակի նպատակն է՝ արտահայտել ուրիշի խոսքի մտքերը և ոչ թե ոճաբանական առանձնահատկությունները։ Ուղղակի խոսքի մեջ երևան են գալիս խոսողի խոսքային անհատական մոտեցումները, գավառական կամ տվյալ անհատին հատուկ այլ կարգի դարձվածներ, բառեր ու արտահայտություններ, խոսքի կամ խոսակցի նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքի առանձին դրսևորումներ, բացականչություններ, արտահայտչական բառեր, դիմումի, հարցման, հրամանի խոսքեր կամ նման երանգներ արտահայտող բառեր և այլն։ Գործարարական անուղղակի խոսքի մեջ այս ամենը վերանում են, մնում է միայն անզարդ բովանդակությունը՝ արտահայտված մաքուր գրական լեզվով. օրինակ՝—Որսո բախտի տես բան է,—ասում էր Օսեփը,—մին էլ տեսար Երևութք էյավ ու քամի դառավ կորավ: Անսովոր մարդը նրան ճեշտ չի ճկատիլ. կ°փորթվի, կդողդողա, կփախցնի: Աչքդ առնեւու պես պետք է թվանքդ բացվի, թե չէ, որ ուշեցիր նշան դնես մինչև աչքդ ճպես, նա սարն անցկացավ (Թ., III, 74)։ Այս ուղղակի խոսքը աչքի է ընկնում գյուղացու խոսքի առանձնահատկություն-

ներով, այսինքն՝ ունի դանդաղ ընթացք, յուրահատուկ շեշտավորում, պատմողական պարզունակ երանգներ, շարահարական կըտրտվածություն, գավառական բառեր ու ձևեր, դարձվածների առատություն և այլն. ամեն բառի ու տողի արմնքում երևում է խոսողի ով և ինչ միջավայրի անհատ լինելը։ Անուղղակի խոսքի մեջ վերոհիշյալ բոլոր հատկությունները չքանում են. օրինակ՝ Օսեփը ասում էր, որ որս գտնելը դժվար է, այն հանկարծ կհայտնվի ու կաներևութանա, որ անվարժ մարդը որսը հեշտությամբ չի նկատի, որ կդողդողա, կշփոթվի ու կփախցնի. նրա ասելով որսը երևալուն պես, պետք է հրացանը բացվի, այլապես կփախչի, կաներևութանա:

Իսահակյանը մի ամբողջ զրույց վերածել է անուղղակի խոսքի և տվել է միայն այդ զրույցի բովանդակությունը. օրինակ՝ Ապա պատմեց, թե Մարտին աղբերը նախ ուզեցել է միայն ընկերիս մոտ կարդալ, սակայն ընկերս հայտնել է, թե ինքը բանաստեղծությունից բան չի հասկանում, ավելի նպատակահարմար կլինի, որ իմ մոտ կարդա, քանի որ վերջապես յավ-գեշ գրող եմ: Սկզբում չի համաձայնել, թե՝ արհեստակիցներն իրար լավը չեն խոստովանում նախանձից, բայց ընկերս համոզել է նրան, թե ես նախանձոտ չեմ, և արդար կասեմ, ու իբրև բանաստեղծներ իրար կհասկանանք ու ավելի կմտերմանանք *(Իս., III, 62)։*

Գործարարական անուղղակի խոսքը լինում է ազատ և սեղմ։ Ազատ խոսքը ավելի ընդարձակ է. հեղինակը շարադրում է ուրիշի ուղղակի խոսքի բոլոր նախադասությունները մանրամասն ու հանգամանորեն։ Իսկ սեղմ, անուղղակի խոսքը շարադրվում է միայն ընդհանուր գծերով, հաղորդվում են միայն կարևոր և բովանդակություն արտահայտող նախադասությունները։ Ըստ որում բաց են թողնվում երկրորդական մասերը, այսինքն՝ ոչ միայն խոսքի ձևական, բնութագրական առանձնահատկությունները, այլև պարզապես խոսքի նյութական երկրորդական մասերը, որոնք կողմնակի կերպով առնչվում են բուն բովանդակության հետ։

Գեղարվեստական անուղղակի խոսքը գործարարական անուղղակի խոսքից տարբերվում է նրանով, որ առաջինում անուղղակի խոսքի մեջ կարևոր նշանակություն ունեցող բացականչություններ, անվանումներ, խոսքի ոճաբանական առանձնահատկությունները բնութագրող արտահայտություններ պահպանվում են։ Հեղինակը ձգտում է որքան հնարավոր է անուղղակի խոսքի մեջ ցուցադրել ուղղակի խոսքի ոճաբանական հնարները և ձևերը։ Այսպիսի անուղղակի խոսքը մի տեսակ միասնություն է կազմում ուղղակի և ան-

ուղղակի խոսքի։ Հեղինակը հաճախ չակերտների մեջ բերում է ուղղակի խոսքի դիպուկ, բնութագրական, ուղղակի խոսքի աղն ու համը հանդիսացող արտահայտություններ, բառեր, որոնք նշում են ուղղակի խոսքի ոճի էությունը, անձերի բնավորությունը, հասարակական միջավայրը, զբաղմունքը և այլն։

Գեղարվեստական անուղղակի խոսքի միջոցով հեղինակը արտահայտում է իր վերաբերմունքը դեպի այդ խոսքը, խոսքը արտահայտողի անձը իր և իր միջավայրի ստացած տպավորությունը և այլն։ Ըստ վերոհիշյալ մեջբերումների անուղղակի խոսքը օժտվում է հումորով, լրջությամբ, ստանում է հնչերանգային բազմազանություն, կրճատվում են շաղկապները, հարստանում է շարահյուսական բազմազանությամբ և այլն. օրինակ՝ խոսելով այս ուղղությամբ, Մարզպետունին կամացուկ շոշափեց խնդրի նուրբ կողմը: Հայտնըվեց, որ մի գիրք է շարադրել և փող չունի հրատարակելու, եթե մի լուսամիտ մեկենաս դուրս գար, չի ասում նվեր,—ոչ, ոչ, Մարզպետունին նվեր վերցնողներից չէ, այլ պարտք տար, յուր «համեստ երկը» կձգեր մայրենի աղքատիկ գրականության գանձարանը: «Պատահաբար» ձեռագիրն էլ մոտն էր, հանեց սեղանի վրա դրեց: Վերնագիրն էր «Մահացյալ անմահներ»: Խոսքը հինգերորդ դարի «փայլուն աստղերի» մասին է: Եթե հեղինակն աջողություն գտնի, պիտի անցնի մեր ժամանակներին, որովհետև «այժմ էլ կան անմահներ» (Շիրվ., IV, 104—105)։

3. ԱՆԻՍԿԱԿԱՆ ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ

Ուղղակի և անուղղակի խոսքերից բացի գոյություն ունի նաև այսպես կոչված անիսկական ուղղակի խոսք, որ իր քերականական հատկանիշներով մի կողմից՝ ընդհանուր գծեր ունի ուղղակի խոսքի հետ, մյուս կողմից էլ որոշ հատկանիշներով նմանվում է անուղղակի խոսքի։ Ուղղակի խոսքի հետ առնչվում է այնքանով, որքանով անիսկական ուղղակի խոսքը լրիվ պահպանում է խոսողի խոսքի բառապաշարը, դարձվածները, նրա խոսքի շարադրանքը, այսինքն՝ այս դեպքում ոչնչով չի տարբերվում ուղղակի խոսքից։ Սակայն ուղղակի խոսքը հեղինակային խոսքից առանձնանում է որոշակի դադարով, հեղինակային խոսքը ունենում է հատուկ ասացական կամ իմացական բայեր, որոնք ցուցում են տալիս, թե ումն է պատկանում ուղղակի խոսքը, իսկ անիսկական ուղղակի խոսքը ձուլվում է հեղինակային խոսքի հետ և հաճախ բացակայում են

հիշյալ ասացական ու իմացական բայերը և ըստ այդմ ցույց չի լինում, թե հեղինակի խոսքի հետ ձուլված ուրիշի խոսքը ումն է պատկանում։

Անխնկական ուղղակի խոսքը անուղղակի խոսքից տարբերվում է նրանով, որ այդպիսի խոսքը հեղինակային խոսքի հետ չի կապվում հատուկ շաղկապներով և սովորաբար չի դառնում հեղինակային խոսքի համար երկրորդական նախադասություն։ Հեղինակը ուրիշի խոսքը առանց միջնորդական օղակների ձուլում է իր խոսքի մեջ և դարձնում իր խոսքի մաս։ Եվ քանի որ այսպես է, ուստի անխնկական ուղղակի խոսքը չի կարող բառացի լինել. հեղինակը ըստ հայեցողության փոփոխում է այն, և ըստ փոփոխության անխնկական ուղղակի խոսքը մոտենում է անուղղակի խոսքին. օրինակ՝ Այդպե՞ս հանդգնեց պատասխանել այն շունը... Յուր դստեր փոխարեն նա յուր սուրն է առաջարկում ինձ *(Մուր., IV, 253)*։ Արքայադուստրը մեկուսացել էր պարտեզի մի ծառախիտ անկյուն և երազում էր... վաղը, այս պահին կլուսավորվեն ամրոցի բուրգերը գույնզգույն երազներով, կհնչե երաժշտությունը, արքան նստած դահլիճում իշխանների մեջ կողջունի իր միակ, բախտավոր դստեր, որն իր հաղթական փեսայի ձեռքը բռնած՝ կներկայանա հորը՝ նրա օրհնությունն առնելու... Վաղը, օ՜, դեռ որքան ժամանակ կա մինչև վաղը. ինչպես պետք է անցկացնել այս գիշեր, այս երկար գիշերը *(ԱԻԵ, 273)*։ Ու ինչ որ, մեր մտադրությունները գիտենալուց առաջ, վատ էին ասել օդի, հողի մասին, վարպետորեն սկսեցին ետ առնել, այժմ գովում էին սև բարեբեր հողը, սքանչելի օդը, երկրի բեղմնավորությունը *(Փափ., 115)*։ Ու գնում էր ինքն իրեն խոսելով: Ի՞նչ կլիներ եթե ինքը գտներ գանձը, քանի անգամ է նա նստել այն քարի վրա, որ տեղահան արեց ակնոցավորը: Եթե իմանար ապա գանձերը կլինեին նրա արխալուղի գրպանում: Քանի՞ կով կառներ *(ԱԲԵ, 192)*։

Անխնկական ուղղակի խոսքը հեղինակը չի արտահայտում իբրև հերոսի խոսք, այլ ինքն է խոսում իր հերոսի փոխարեն, նրա խոսքը ձուլվում է իր հեղինակային խոսքի մեջ և հենց այդ միասնությամբ հաղորդվում են հերոսի խոսքի հուզարտահայտչական գույներն ու երանգները։ Ընթերցողը ամբողջ երկին ծանոթ լինելով միայն կարող է որոշել, թե ումն է պատկանում այդպիսի խոսքը և ինչ ոճաբանական նշանակություն ունի։ Անխնկական ուղղակի խոսքի ընդհանուր շարադրանքը օժտվում է նուրբ քնարականությամբ, հերոսի ապրումների դրսևորումով, նրա խոսքի յուրահատուկ կա-

պակցություններով, արտաքին ձևական առանձնահատկություններով և ներքին հույզերով։ Ընթերցողը հեղինակի միջոցով հաղորդակից է դառնում հերոսի ներքնաշխարհին, տարբեր բնույթի խոսքերի բաղադրությամբ ստանում է տարբեր տպավորություններ, որոնցից նրա մեջ զարթնում են զանազան հարուստ զգացումներ։ Ընթերցողին թվում է, թե հեղինակը խոսում է հերոսի բերանով, գործածում է հերոսի արտահայտությունները, առածները, բացականչությունները, հարցումները և այլն։ Խոսքը դադարում է դատողություն, ճառ դառնալուց, և հուզարտահայտչական լիցքավորում ստանալով, հարստանում է նշանակությամբ։ Ինչքան պատմողը վարպետ է հյուսում խոսքը և որքան իր հերոսի խոսքի անսպասելի ու կարևոր տարրերն է վերցնում, այնքան այդպիսի խոսքը զորեղանում է, և տպավորությունը խորն ու տևական է դառնում։ Օրինակ՝ Վերքեր, վերքեր, հին ու նոր վերքեր... Հորը թուրքերն սպանեցին, մայրը տեղահանվեց դեպի Միջագետք և... կորսվեց. Քրոջը, լույսի պես Քրոջը թուրքերը տարան. ինքը պատերազմի հայտարարումից քիչ առաջ արդեն թուրք բանակի մեջ զինվոր էր, ականատես չեղավ իր հարազատների կորստին, սակայն պատերազմից հետո փոքր եղբորը գտավ որբանոցում, թոքախտի վերջին շրջանում և քիչ ժամանակ անց, խեղճը մեռավ իր գրկի մեջ: Բայց ի՞նչ եղան ընկերները՝ ախ Պետրոսը, Արտաշեսը, էյ գիտի Տիգրանը: Ի՞նչ եղան, ի՞նչպես էին դպրոց գնում, ի՞նչ ճիչով, աղմուկով, չանթաները գրքերով, ուտելիքներով լեցուն. չանթաներն իրար կռնակի զարկելով՝ դպրոց էին գնում... «Մեղրագետը» ծայրեծայր կարդաց, «Գյուղիս ճամփան», ախ, գյուղիս ճամփան, ի՞նչ գեղեցիկ քերթված է, գոց գիտեր, ընդհանուր ազգաց պատմություն, հանույքով էր սովորում... *(ԱԻՆ, 228)։ Ամբողջ պատմվածքը մեծ մասամբ գրված է այս ոճով. պատմողը խոսում է իր հերոսի բերանով, դառնում է դեպքերին մասնակից, հաղորդակցվում է հերոսի ապրումներին, կարծես լսում է նրա ձայնը, բերում է նրա բառերը, հիշատակում է անցյալի հուզիչ երևույթներ, որոնք պատմվածքը դարձնում են համակ ապրումների շարադրանք։*

Անիսկական ուղղակի խոսքը մոտենում է անուղղակի խոսքին այն դեպքում, երբ հեղինակային խոսքի մեջ առկա են ասացական ու իմացական բայեր, որոնք մատնանշում են անիսկական ուղղակի խոսքը։ Այս դեպքում անիսկական ուղղակի խոսքը անուղղակի խոսքից տարբերվում է նրանով, որ շաղկապներ չունի. օրինակ՝ Նա բարձրացավ սանդուղքով: Ու միտն ընկավ մի մոռացված դեպք, որ

երբեք չէր հիշել: Ինչպես էր ընկել մտքից... Գնացել էին ձորի կողմը: Ամառ գիշեր էր: Այնքան թափառեցին... Լույսը բացվում էր, երբ իջան քաղաք... *(ԱԲԵ, 182)*։ Իզուր Մովսիսյանը խնդրում էր տիկին Մարթային թույլ տալ իրեն տեսնվել Շուշանի հետ *(Մուր., II, 285)*։ Առաջին անգամ Արտակը խորհեց այդ աստծու մասին: Դա կյանքից հայնկույսն էր: Այնտեղ չկար ոչ սեր, ոչ ժպիտ, ոչ արև, ոչ ջերմություն: Այնտեղ չէր խոխոջում վտակը, չէր բուրում վարդենին, չէր տրոփում այնպիսի մի էակի լուսաշող կուրծքը... *(ԴԴԵժ, IV, 190)*։

Անիսկական ուղղակի խոսքը ձուլվում է հեղինակային խոսքի հետ առանց ասացական կամ իմացական ներգործական բայերի. Հեղինակային խոսքի մեջ լինում են յուրահատուկ բառեր, որոնք մատնանշում են անիսկական ուղղակի խոսքը. օրինակ՝ նրանց խոսակցության առարկան մի անցք էր, որ այնօր կատարվել էր... մի գյուղացի կին չէր կամենում իր ամուսնու հետ ապրել և շատ անգամ փախչում էր ծնողների տունը: Գյուղացին գնում բերում էր, բայց ամեն անգամ նույնն էր պատահում, կինը նրա մոտ մնալ չէր ուզում (պատճառները չպատմեցին ինձ) *(ՐԵժ, V, 223)*։ Մահվան չափ ծանր էին ամեն մի րոպեները, մինչև հասավ նա հոր վրանը: Ինչպե՞ս հանդիպել նրան, ինչպե՞ս նայել նրա երեսին *(ՐԵժ, VII, 444)*։ Արտակը նոր նկատեց, որ Աստղիկը չերևաց այդքան ժամանակ: Բայց և զարմացավ: Այստեղ վիրավոր քրոջը թողել գնացել է Մամիկոնեից տիկնոջ հետ վիրավորներ հավաքելու և մյուս կողմից էլ Մամիկոնյան տիկինն է լքել զառամյալ Մեծ Տիկնոջը և գնացել: Այդ ինչպե՞ս հայրենիքի պաշտպանության գործը փոխել է ամենքին: Միայն ինքն է, որ մնացել է առաջվանը և եկել է հիմա ինչ-որ հին պահանջներ է անում, սպասում է հին վերաբերմունքի *(ԴԴԵժ, IV, 194)*։ Նրա մեջ մտածությունները ավելի խոր, վերլուծող բնավորություն ստացան և նա հարցից հարց մոլորվում էր եզրակացությունների մեջ: Ինչո՞ւ ուրեմն իրենք գործում էին նրանց փոխարեն, մի՞թե այդպես պետք է լիներ, չէ՞ որ ինքն էլ կուզենար նրանց պես սպիտակ լինել *(Փափ., 260)*։

Երբեմն անիսկական ուղղակի խոսքը ձուլվում է հեղինակային խոսքի հետ առանց որևէ մատնանշող բառի. այս պարագայում անիսկական ուղղակի խոսքը ավելի է հեռանում ուղղակի խոսքից։ Միայն անիսկական ուղղակի խոսքի բովանդակությունից կարելի է հասկանալ, որ դա հեղինակի խոսքը չէ. օրինակ՝ Բնական այդ մեծ քարայրում, որից սև ջուր է դուրս հոսում, իբրև ապրում է օձերի թագավորը՝ գոհարապատ թագը գլխին *(ԱԲԵ, 146)*։ Ներս նայեց:

Սրանք լիքն էր: Նստել էին մի մեծ սեղանի շուրջը, ուտում էին և խմում, իսկ լույսն ու երաժշտությունը լցրել էին սրանը բրբռումներով: Այո, մարդիկ այնտեղ էին և ոչ թե ցածում: Սխալվել էր. պետք էր իր նմանների մոտ գնալ *(Փափ., 260)*։ Մասխարյանցը շատ լավ գիտեր, որ այդ հոգեբանական մի ճշմարտություն էր, որ անթիվ անգամ ապացուցված էր մարդկային առաջադիմության պատմության ամբողջ ընթացքում: Ուրեմն թող անշարժ փտած, նեխած հասարակությունն ինչ հալածանքի ուզում է ենթարկե իրեն, թող ճշմարտության և լույսի համար նահատակվածների թվում մեկն էլ ինքը լինի *(Նար., I, 132)*։

Երբեմն անխնկական ուղղակի խոսքը ձուլվում է հեղինակայինի հետ, ընդմիջվում է նրանով և դժվար է լինում այն զատել հեղինակային խոսքից. օրինակ՝ Նա բոլորովին զարմացել էր կնոջ այդ փոփոխության վրա և որքան էլ գլուխը կոտրում էր, նա չէր կարողանում մի իրավացի պատճառ գտնելու, որին կարելի լիներ վերագրել այդ փոփոխությունը: Նա ասում էր, որ հիվանդ չէ. եթե իսկապես հիվանդ էլ է, բայց այդտեղ ի՞նչ կա ծածկելու իրենից... կամ գո՞ւցե մի որևիցե գաղտնիք է կրծում սիրտը, բայց այն ի՞նչ գաղտնիք պիտի լինի, որ չհամարձակվի նա իրեն հայտնելու և ինչո՞ւ... Նա հուսահատվել էր *(Հեղինակն է միջամտում)*։ Սակայն, այսքանն միայն. երբեմն նրա մտքովն անցնում էր, որ այդ փոփոխությունը պատահել էր նրան հենց այն օրից, երբ Սուրեն Արևելյանն առաջին անգամ իրենց տունն ոտք դրեց. բայց որ յուր կինը կարելի է, սիրում է այդ մարդուն. դրա մասին նրա մտքովը մի վայրկյան անգամ չի անցել: Մի՞թե այն կինը, որ այնքան ժամանակ ամենաջերմ սիրով ապրել է նրա հետ, կարող է երբևիցե դավաճանել նրան.—երբեք, այդ անկարելի է... միամիտ մարդ *(Նար., I, 333)*։

Հաճախ հեղինակը ամբողջական ուղղակի խոսքից որոշ արտահայտություններ, բառեր վերցնում է և ձուլում իր խոսքի հետ՝ դարձնելով այն անխնկական ուղղակի խոսք. օրինակ՝ Ես չմոռացա ձեզ, այո, բայց ինչպես երևում է, դուք մոռացել եք այն ԱՆԴՈՒՆԴԸ, որ մեզ բաժանում էր իրարից: Դուք ՎԵՐԵՎՆ իք, ես ՆԵՐՔԵՎԸ, և այդ ձեզ իրավունք էր տալիս արհամարհանքով նայելու դեպի ՆԵՐՔԵՎ *(Նար., I, 127)*։ *Ընդգծված բառերը վերցված են ուրիշի խոսքից և ընդգծումը հեղինակինն է*։

Ուղղակի խոսքի և անխնկական ուղղակի խոսքի հետ շփման եզրեր ունի այնպիսի խոսքը, որը հեղինակը պատմում է մտքում եղած հերոսների բերանով. որքանով որ բայերի, դերանունների ու

մի փոփոխություն տեղի չի ունենում, այդքանով այդպիսի խոսքը ուղղակի է, բայց քանի որ ցուցում չկա, թե ով է ասում, այսինքն՝ փաստորեն հեղինակային խոսք չկա, ուստի ուղղակի խոսք լինել չի կարող. և որովհետև հեղինակային խոսք չկա, չկան և կապակցող շաղկապներ, ուստի խոսքի մեջ փոփոխություն չի կատարվում. նշանակում է, որ դա անուղղակի խոսք էլ չէ։ Այսպիսի խոսքը առավելապես անխսկական ուղղակի խոսք է. հեղինակը խոսքը զարդարում է ձևական այնպիսի առանձնահատկություններով, որ ընթերցողն անմիջապես ճանաչում է հերոսին կամ այն անձին, որի ներքին ապրումները, զգացումները այդպիսի անձին հատուկ ոճաբանական հնարներով առարկայորեն շարադրում է հեղինակը։ Այսպիսի խոսքը դժվար է, որովհետև հեղինակը ոչ միայն խոսքով, այլև ապրումներով, հոգեբանությամբ, իր ողջ էությամբ ձուլվում է խոսող անձի հետ. օրինակ՝

Բալես ունի հնդու-մաթա,
Ոսկի օրոցք, ատլաս ծածկոցք,
Պուշպո՛ւշ դարդար, նըխշո՜ւն բալա,
Պաճիկ կենես... օր-օր, լա, լա,
Նանիկ կենես, նանի՛, դա՛ր-դա՛ր.
Աչքդ ու ունքըդ՝ աստղ ու կամար։
Յորեկ եղավ, ոչխարն եկավ
Ազիզ բալես քընած մընաց.
Վեր ել, բալա, անուշ ճըդա՛,
Տիտիկ արա, ծիծիկ մամա,
Պիծիկ-միծիկ տոտիկ արա՛
Հո՛պպա բալիկ քունդ անուշ,
Շաքար ու նո՛ւշ թուշդ անուշ։

Դե հայտնի է սաղ աշխարհին, Որ խեղճին են տանում կռիվ։ Էսպես էկան հավաքեցին գեղի ֆյասիք–ֆյուսուք խալխին. Ռեսի տղին ձեռ չտվին՝ Միկուն վերի ծաղիկ էր խի... Բա զզիրանց թազի Համբո՞ն, Բա Մելիքանց Սե՞թը մեկ էլ... դե ով ուներ ծանոթ ու փող։ Սպիտակ բլեթ էր նրան եկել *(ԵՉԵ, 82)*։

XIV

ԿՈՉԱԿԱՆ

Կոչականը այն բառը կամ բառակապակցությունն է, որին, իբրև առարկայի անվան, դիմում է խոսողը, այսինքն՝ որևէ ձևով անվանում, կոչում է առարկան, որպեսզի այս վերջինս ուշադրությունը դարձնի խոսողի կողմը՝ լսելու, հասկանալու խոսքը։ Կոչականը նախադասության որևէ անդամի հետ քերականորեն չի կապվում։ Բացի զուտ գործնական նշանակությունից կոչականը խոսքը օժտում է որոշ հուզարտահայտչական երանգներով, մանավանդ երբ խոսողը դիմում է անշունչ առարկաների, երևակայական էակների, երևույթների և այլն։

Կոչական բառերն ամենից առաջ կիրառվում են երկախոսությունների, ճառերի, զեկուցումների, կոչերի, լոզունգների, նամակագրության, որոշ գրագրությունների և այլ կարգի խոսքերի մեջ, որոնք շատ անգամ հենց կոչական բառով են սկսվում։

Կոչականը շատ է կիրառվում երկախոսության մեջ. օրինակ՝

—Ես կերթամ, հայրի՛կ,— ասաց մեծ աղջիկը:

—Ե՛ս էլ, հայրի՛կ, ե՛ս էլ,— մեջ ընկավ միջնակը:

—Իսկ դու, Նազանի՛կ, դու չե՞ս կամենալ,—հարցրեց հայրը Արեգնազանին *(ՂԱՀ, 66)*։ —Գիտե՞ս, մայրի՛կ, ինչ եղավ: Մի քիչ առաջ մինը եկավ, դուռը զարկեց ու կանչում էր.

—Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:
Ասում էր՝ դուռը բաց արա...

— Պա՛, պա՛, պա՛, պա՛, Սևո՛ւկ ջան, ի՜նչ լավ է եղել, որ բաց չես արել *(Թ., III, 138)*։

Կոչական բառերը կիրառվում են նաև նամակագրության մեջ իրենց յուրահատուկ որոշիչներով ու բնութագրական մակդիրներով.

օրինակ՝ Իմ սիրելի՛ Հռիփսիմե, իմ անգի՛ն քույրիկ, անսպասելի նամակդ ինձ շատ տխրեցրեց... «Դու ինձ մոռացար, Աննա՛, դու ինձ մոռացար», դառնությամբ բացականչում ես նամակիդ մեջ... *(Նար., II, 159)*։ Սիրելի՛ Ղազար, վաղուց է ոչ քեզանից նամակ ունիմ, ոչ ինքս եմ գրում... Հիմա դու ինձ խորհուրդ տուր, Ղազա՛ր, ի՞նչ անեմ *(ՊՊԵԺ, III, 613—614)*։ Սիրակա՛ն Գևորգ, Ահա, սիրակա՛ն Գևորգ, մեր դյուցազնի վարքի շարունակությունը *(ՌՊԵ, 744)*։

Կոչականը կիրառվում է նաև ճառերի, լոզունգների, կոչերի մեջ։

Ընկեր բամբակագործնե՛ր, էլ ավելի արագացրե՛ք բերքահավաքի տեմպը *(«Սովետական Հայաստան», № 266, 59 թ.)*։ Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք։ Ընկեր զինվորնե՛ր, սերժանտնե՛ր և ավագնե՛ր։

Ընկեր սպանե՛ր, գեներալնե՛ր և ծովակալնե՛ր։

Սովետական Միության աշխատավորնե՛ր։

Մեր հարգելի արտասահմանյան հյուրե՛ր։

Սովետական Միության կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի և կառավարության անունից ու հանձնարարությամբ ողջունում և շնորհավորում եմ ձեզ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի քառասուներկուերորդ տարեդարձի առթիվ *(«Ավանգարդ», № 135, 59 թ.)*։

Գեղարվեստական խոսքի մեջ կոչականի գործածությունը նույնպես սովորական է։ Այս դեպքում կոչականը ոչ միայն գործնական նշանակություն ունի, այլև խոսքը հարստացնում է բազմերանգ արտահայտությամբ, մանավանդ երբ իբրև կոչական կիրառվում են կենդանիներ, մեռածներ, անշունչ առարկաներ, երևույթներ, ոգիներ և այլն. օրինակ՝ Բարձր սարե՛ր, ա՜յ սարե՛ր Ձեն եմ տալի «Վա՛յ», սարեր, Դուք էլ ինձ հետ ձեն տվեք, իմ դարդերին քաշ սարե՛ր *(Թումանյան)*։ Բայց, ճակատագի՛ր, Դու ինձ չե՞ս խաբում *(ՀՀՀ, 6)*։ Եկե՛ք, քույրե՛ր, սեգ սարերի Ջքնաղագեղ ոգինե՛ր, Եկե՛ք ջահել սիրահարի Սերը ողբանք վաղամեռ *(Թումանյան)*։ Բազի՛կ, ես հիմա տղա եմ։ Բազի՛կ, ինչքան ուրախ եմ հիմա *(ՂԱՀ, 82)*։ Լսո՞ւմ ես, Մամիկոնյան տե՛ր, ինչպես ամեն րոպե խոցոտում են քո թագավորին *(Ր., III, 250)*։ Հե՜յ բացվեցե՛ք, ամուր փակե՛ր, ետ գնացե՛ք, լեն դարբասնե՛ր *(Թ., III, 261)*։ Տիկնի՛կ ջան, առ անո՛ւշ արա, իմ սև դարդին ակա՛նջ արա *(Նույն տեղում, 259)*։

Կոչական են դառնում հատուկ և հասարակ անունները, ծաղրական ու հարգական անվանումներ, հանդիմանական, վիրավո-

306—27

յական մակդիրներ ու կոչումներ, սեռը, տարիքը, ազգակցական, բարեկամական ու զգացմունքային կապերը, մասնագիտությունը, զբաղմունքը, այս կամ այն արարքը բնութագրող, ընդհանրացող բառեր ու անվանումներ և այլն։ Այդպիսի բառեր են՝ մանուկ, տղա, աղջիկ (աղջի), կնիկ, մայրիկ, հայր, հայրիկ, քույրիկ, եղբայր, ծերունի, ծերուկ, տեր, ընկեր, բարեկամ, տնաշեն, հեր օրհնած, անպետք, տգետ, սիրելի, գարշելի, վարպետ, պրոֆեսոր, հիմար, տիկին, Դավիթ, Անահիտ, Փառիկ *և այլն։*

Անո՜ւշ, ա՛յ աղջի՜, Անո՜ւշ, տո՛ւն արի (*Թումանյան*)։ Ողջո՜ւյն քեզ, ո՛վ մեծ վարպե՛տ,—ասաց նրան (*Ր., III, 244*)։ Ա՛յ տղա, Սիրո՛ւն տղա, թևերս տո՛ւր, թևերս (*ՂԱՀ, 79*)։ Վառ աչերդ ինչպես արև գարնանային, Ա՜խ, սիրեկան, բորբոքում են իմ հոգին (*ՀՀՀ, 15*)։ Սիրո՛ւն մանուկ, քո աչեր վառ են ինչպես այդ ծաղիկ, Մանո՛ւկ քաղցրիկ, ինձ սիրե՛ (*Նույն տեղում, 5*)։ Մի այդպիսի բարձր պաշտոն ինձ համար դեռ շատ վաղ է, սիրելի՛ հայր,— պատասխանեց նա բռնի ժպիտով (*Ր., III, 479*)։ Դու ասացիր, որ երկու օր է, ոչ ոք չէ՞ անցել կամուրջից: —Ոչ ոք, տե՛ր իմ (*Նույն տեղում, 392*)։ Ա՛յ տղա, ի՞նչ ես ծախում.—կանչում է մի ծանոթ ձայն (*ԱԲԵ, 152*)։ Գեղը խռովություն կա, մա՛րդ,—կանչում է պառավը (*Նույն տեղում, 99*)։ Ահա՛ այդ պատմությունը, սիրելի ընթերցող (*ԵՉԵ, 306*)։ Վարդուշ ջան, անուշ ջան, ներող եղիր, լավ չէի տեսել (*ԱԻԵ, 270*)։ Օ՜, ծերուկ, դեռ ինչեր պիտի լսես դու (*ԼԳԵ, 558*)։

Նույնիսկ գործնական նշանակություն ունեցող կոչական բառերը հաճախ իրենց մեջ կրում են հուզարտահայտչական մի շարք դրսևորումներ. կոչական բառի մեջ խոսողը իր վերաբերմունքն է արտահայտում թե խոսքի և թե կոչվող առարկայի նկատմամբ։ Կոչականի մեջ խոսողը կարող է դնել ծաղր, հեգնանք, հանդիմանություն, ափսոսանք, սեր ու գորովանք, արհամարհանք, ցասում, աղաչանք, հրաման և այլն։ Եվ այս պայմանավորվում է հնչերանգային փոփոխություններով։

Կոչականի հուզարտահայտչական այս նրբերանգները ցայտուն կերպով դրսևորվում են այն ժամանակ, երբ կոչականի հետ միասին գործածվում են զանազան ձայնարկություններ, որոնք որոշակիորեն ձևավորվում ու առանձնացնում են վերոհիշյալ հուզարտահայտչական տարրերը. օրինակ՝ Քեզ սպասող չմնաց, ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն, Գովքդ ասող չմնաց, Ջուր ես գալի, ա՛յ գարուն (*ՀՀՀ, 91*)։ —Շամիր հե՜յ... գիլի բոլուկ է. չորս կողմս կտրել են (*Թ., III, 107*)։ —Քո շնորհած վարդերը, ո՛վ դրախտի աղջիկ, աշխարհի

ամենաչքնաղ վարդերն են եղել միշտ և երբեք չեն թառամել *(ԱԻԵ, 288)*։ —Ա՛յ խեղճ տղա,— ասաց ծովը,— ես տեսել եմ նրան հեռու աշխարհներում *(Նույն տեղում, 339)*։ —Տո՛, կոպիտ արջ, տո՛ վայրենի, էս տեսակ էլ բա՞ն կլինի *(Թումանյան, «Մի կաթիլ մեղրը»)*։ —Հա՜յ անզգամ, չարալեզու, Ո՞նց թե կկվին ասել ես դու, թե ես կացին չունեմ սրա՞ծ *(Թումանյան, «Անբուն կկուն»)*։ Է՛յ կանաչ ախպեր, դու բարով եկար *(ԱԻԵ, 35)*։

Կոչականը լինում է թե՛ նախադասության մեջ և թե՛ նախադասությունից դուրս։ Վերևում բերված օրինակների մեջ կոչականը նախադասությունների մեջ է, այսինքն՝ առնչվում է նախադասությանը, իսկ նախադասությունից դուրս է գտնվում հետևյալ օրինակների մեջ. Վախեցնում է... հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛...

—Գևո՜... Ձեն-ձուն չկա *(Թումանյան, «Լոռեցի Սաքոն»)*։ Ձեն տվի. —Ա՛յ չոքան, հե՜յ *(Թ., III, 106)*։ Ականջս ձենի է: Գիշերվա մի ժամին ոնց որ երազում մի բարակ ձեն եմ լսում.

—Ավո հե՜յ...

Ինձ են կանչում *(Նույն տեղում, 104)*։

Կոչականի հուզարտահայտչական նշանակությունը շատ ավելի ցայտուն է դրսևորվում, երբ կոչականը կրկնվում է. օրինակ՝ —Ի՞նչպես չցավել, հա՛յր, ի՞նչպես չվշտանալ, հայր *(Ր., III, 446)*։ Բարձր սարեր, ա՜յ սարեր, Ձեն եմ տալի «Վա՛յ», սարե՛ր, Դուք էլ ինձ հետ ձեն տվեք, Իմ դարդերի թայ սարե՛ր *(Թումանյան, «Անուշ»)*։ Մնաս բարո՜վ, քաղա՛ք դու մեծ, Քաղաք զգաստ ու մաքառող *(ԵՉԵ, 216)*։ Լուսնա՛կ գիշեր, անքո՛ւն գիշեր, Դարդիս հետ եմ ես մենակ *(ՀՀՀ, 108)*։ —Լիլի՛թ, Լիլի՛թ, Լիլի՛թ, այդ դո՞ւ ես *(ԱԻԵ, 319)*։

Կրկնվող կոչականը լինում է համառոտ ու ընդարձակ։ Կրկնվելիս երբեմն համառոտ կոչականը ընդարձակվում, իսկ ընդարձակը կրում է մի շարք ձևափոխություններ՝ ի հաշիվ իր այս կամ այն լրացման, որոնք տարբեր իմաստային ու հուզարտահայտչական երանգներ են հաղորդում կոչականին. օրինակ՝ Ա՜յ վա՛րդ-աղջիկ, մո՛տ արի, Քեզ եմ կանչում, մո՛տ արի, Նազլո՛ւ աղջիկ, չե՛կ աղջիկ, Քեզ եմ կանչում, մո՛տ արի *(ՀՀՀ, 112)*։ Ընկե՛ր, ի՛մ եղբայր, դու վաստակաբե՛կ եղբայր իմ տանջված, Ով որ էլ լինես դու, մի՛ վհատիր *(Նույն տեղում, 158)*։ Է՜յ ջան, սարե՛ր, Սասման սարե՜ր, Ի՞նչ անուշ է ձեր լանջն ի վեր *(Թումանյան, «Սասունցի Դավիթ»)*։ —Դու Ո՞ր սարեն կուգաս, ջրիկ, Իմ պաղ ջրիկ ու անուշիկ *(Նույնը, «Մանուկն ու ջուրը»)*։ —Լիլի՛թ, հոգեթո՛վ Լիլիթ,— ահա եկա և

քերի *(ԱԻԵ, 314)*։ Լիլի՛թ. հազար-հազար սիրելի Լիլիթ, ես քեզ սիրում եմ *(Նույն տեղում, 315)*։

Երբեմն էլ կարող է հակառակը լինել, ընդարձակ կոչականը կրկնության եզրում կարող է համառոտվել. օրինակ՝ Դավիթը էս էլ երբ որ իմացավ,— Անո՛ւշ հորեղբայր, հորեղբայր, ասավ։ Նանի՛ ջան, նանի՛. ես ի՞նչպես անեմ... Նանի ջան, նանի՛, կուժը թող առնեմ, Աղբյուրը գնամ աղջիկների հետ *(Թումանյան, «Անուշ», V)*։

Շատ հաճախ նույն կոչականը արտահայտվում է տարբեր անուններով, որոնք այլևայլ առումներով բնութագրում են կոչվող առարկան՝ հարստացնելով նոր նշանակություններով ու ոճական բազմապիսի արտահայտչությամբ. օրինակ՝ Ահա կրկին ինձ հետ ես, ահա կրկին, իմ բարեկա՛մ, ընկե՛ր, իմ զինակի՛ց *(Չարենց)*։ Տո՛ կոպիտ արջ, տո՛ վայրենի, էս տեսակ էլ բա՞ն կլինի *(Թումանյան, «Մի կաթիլ մեղրը»)*։ Ա՛յ անուշներ, ա՛յ քնքուշներ, բաժակներդ բացեք իմ դեմ։ Աղջի՛, աղջի՛, ծիլ-ծաղիկներ, քանի՞ քնեք, վե՛ր կացեք, վեր *(Թումանյան, «Ծաղիկների երգը»)*։ Այդպես լուռ, անշարժ մինչև ե՞րբ մնաս գարնան զարդերին համր, անտարբեր, դո՛ւ կյանք, դո՛ւ երազ, իմ անուշ ընկեր *(ԱԻԵ, 39)*։ Մաքուր իմ սեր, միակ իմ զենք, միակ իմ հուր, իմ սեր, իմ զարդ, հույս իմ լույս, քույր իմ հպարտ... Ամեն վայրկյան ու ակնթարթ դու ես միայն ինձ հետ կիսել թե վիշտ, թե վերք, թե երգ, թե վարդ,— մաքո՛ւր իմ սեր *(ԵՉԵ, 293)*։ Սուտ ես ասում, դու խաբեբա, անխիղճ գազան, անկուշտ, ագահ, ո՞վ է տվել էստեղ քեզ սար *(Թումանյան)*։ —Ո՛վ անտառի տեր, ո՛վ անհայտ հզոր ինձ մի սպանիր իմ անգիտուն մեղքի համար *(Թ., III, 341)*։ Դու անպիտան և ավազակ... Դու ուզում ես ինձ խաբել *(Նար., I, 288)*։

Երբեմն կրկնվող կոչականը մնում է նույնը, իսկ կոչականի հետ կիրառվող ստորոգյալը կամ լրացուցիչը փոխվում է. օրինակ՝ Արի՛, գութա՛ն, Վարի՛, գութան, օրն եկել է ճաշ դառել։ Նանի՛, նանի՛, հաց ենք ուզում, վե՛ր կաց, նանի՛, հաց տուր մեզ *(Թումանյան)*։ Արծի՛վ սևաթույր, արծի՛վ լեռների, հանգիստ ու հպարտ ճախրում ես բարձրում *(ԱԻԵ, 55)*։ Ա՜յ վարդ աղջիկ, մո՛տ արի, Քեզ եմ կանչում, մո՛տ արի։ Նազլո՛ւ աղջիկ, չե՛կ աղջիկ, Քեզ եմ կանչում, մո՛տ արի *(ՀՀՀ, 112)*։ Ընկե՛ր, իմ եղբա՛յր դու վաստակաբեկ, եղբայր իմ տանջված, ով որ էլ լինիս դու, մի՛ վհատիր *(Նույն տեղում, 158)*։ Արի՛, սիրո՛ւն, Գնա՛, սիրո՛ւն, Հազար էրանեկ քո տիրուն *(Ժող. երգ)*։

1. ԿՈՉԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Կոչական կարող են դառնալ գոյականները, ածականները, թվականները, դերբայները, դերանունները։ Բայց ինչ խոսքի մաս էլ կոչական դառնա, կիրառվում է ուղղական հոլովի ձևով և ունենում է գոյականի առում։ Համեմատիր՝ Ա՛յ անուշներ, Ա՛յ քնքուշներ, Թաժակներդ բացեք իմ դեմ *(Թումանյան)։*

Սկզբում կոչականն ունեցել է յուրահատուկ հոլովաձև, բայց հետո կորցնելով իր ձևական հատկանիշը, նույնացել է ուղղական հոլովի հետ։ Նույնիսկ այն հատուկ անունները, որոնք յուրահատուկ կոչականի ձև ունեն, այս վերջին ձևով իսկ գործածվում են իբրև ուղղական։ Կարապետ, Մարգարիտ, Մարիամ, Հակոբ, Ավետիք, Հայրապետ *և մի շարք այլ հատուկ անունների* ո-*ով վերջացող ձևերը առաջացել են իբրև յուրահատուկ կոչականներ (Կարո, Մարգո, Մարո, Հակո, Ավո, Հայրո և այլն). օրինակ՝* Հակո՛, էս դրուստ մեր տունն է *(ԴԴԵԺ, I, 72)։* Մարո՛, անբախտ փաղամեռ, իմ մանկության դու ընկեր *(Թումանյան)։* Հե՜յ, Ավո՛ ջան, հիշո՞ւմ ես Ալագյազը վեհ ու վես *(Դեմիրճյան)։* Ետո մի՞տք եք արել որ, Գաբո՛ բիձա *(Թ., III, 56)։* Տո Մարտո՛, քու տուն չքանդվի *(Նույն տեղում, 90)։*

Կոչականի ո-*ով ձևերը հատուկ են նաև հասարակ անուններին, այսինքն հիշյալ ձևը ինչպիսի ծագում էլ ունենա, առաջացել է կոչականի դերի համար։ Համեմատիր նաև հետևյալ գործածությունները.* Զօր ու գիշեր քաշում եմ քո կարոտդ, Զմեռնեի, քիչ մնայի քո մոտդ. Ծամերդ, ծամերդ, շէկո՛ ջան, մազերդ *(ժող. երգ)։* Վարդ եմ քաղել շաղերով, Ջա՛ն, յարո ջան, վեր եմ դրել մաղերով, Ջա՛ն, յարո ջան *(ժող. երգ)։* Հո՛լ արա, եզո՛ ջան *(ժող. երգ)։*

Հատկապես կոչականի գործածություն ձեռք են բերել իկ, յակ-*ով վերջացող մի քանի բառեր, ինչպես՝* հայրիկ, մայրիկ, դստրիկ, աղավնյակ, հոգյակ, որդյակ, մանկիկ, մերիկ *(խոսակցական),* քույրիկ *(քուրիկ) և այլ բառեր. օրինակ՝*—Մայրի՛կ, նայի՛ր, արևն ինչպես Դեղնել է, ցուրտ է ինչպե՜ս *(ԱԻԵ, 24)։* —Պատմեցե՛ք, քույրի՛կ, ինձ ընդունեցե՛ք ձեր եղբոր տեղը *(ՎՓԵԺ, II, 287)։* Գնա՛, ի՛մ որդյակ, աշխարհքս անցի՛ր, Պանծալի անուն մեծի դու ստացիր *(ՌՊԵ, 176)։* —Ո՛չ, իմ դստրիկ, կգան անշուշտ Ու կբերեն էս տարի: —Հայրի՛կ, հայրի՛կ, մի՞թե չկա էս աշխարհում անշեջ հուր *(Թումանյան, «Փարվանա»)։* Եվ ի՜նչ զարմանք, ի՛մ աղավնյակ *(Թումանյան)։* —Որդյա՛կ, դա էլ քեզ նման Մի օր տղա էր փոքրիկ *(ՌՊԵ, 291)։* —Լա՛ց, մերի՛կ ջան, որ էլ չեմ գա *(ԱԻԵ, 14)։*

Իբրև խոսակցական կոչական է գործածվում նաև աղջի ձևը, որ անցել է նաև գրականության մեջ և հաճախ ոչ թե նշանակում է աղջիկ, այլ կոչական է իգական սեռի համար. —Աղջի՛, քու յարն էկավ, անցավ.... Դե ճանի՛ր, ա՛ղջի, վիճակն ի բարին... *(Թումանյան, «Անուշ»)։* Աղջի՛, դու նուռ ես, մուռ ես, ես ծարավ եմ, դու ջուր ես *(ժող. երգ)։ Այդպես է նաև* պապի, *որ իբրև կոչական առաջացել է* պապիկ *ձևից.* Բաց թող, պապի, ինչ կլինի, բաց թող *(ՎԱՍԱ, 510)։*

Բանաստեղծական խոսքի մեջ երբեմն քույր *բառը գործածվում է իբրև կոչական, որ ուղղվում է սիրած աղջկան. օրինակ՝* Տուր վերքերին նրա մառ, վերքերին անդեղ, Կարմիր ժպիտը քո սուրբ, քույր իմ, Սոմա կին *(ՉԸ, 19)։* Մոտենում է, քո՛ւյր իմ, ա՜խ, իրիկունն միգամած: Ինչ էլ լինի, քո՛ւյր իմ, քո՛ւյր, հեռանալիս չանիծես *(Նույն տեղում, 14)։* Ի՛մ քույր, ի՛մ դահիճ, ի՛մ սուրբ սիրեկան, Ես քեզ սիրում եմ, դու դեռ չես մեռել *(Տ., I, 57)։ Համեմատիր՝* Դու քո ճամփեն գնա՛, քո՛ւյրիկ, Եվ թող լինի նա պայծառ *(Թումանյան)։*

Ոչ իրենց բուն նշանակությամբ իբրև կոչական բառեր են կիրառվում եղբայր *(ախպեր),* բարեկամ, քույրիկ, մայրիկ, հորեղբայր *և այս կարգի այլ բառեր, որոնցով կոչում ենք անծանոթ մարդկանց՝ ցույց տալով մեր հարգալից, մտերմական վերաբերմունքը այդ մարդկանց հանդեպ. օրինակ՝* —Աղքատ ախպեր... մի պագիկ առ ու գնա *(ԱԻԵ, 132)։* —Պատմի՛ր, լսենք, ո՛վ բարեկամ, շատ աշխարհք ես ման եկել: Հաց կե՛ր, պանդուխտ իմ բարեկամ *(Թումանյան)։* —Քույրեր, խաղալու ձորն ի վար երթանք *(ՌՊԵ, 172)։* —Սպասի՛ր, բարեկա՛մ, սպասիր. այդ ձկներն էլ դուրս կգան *(Մուր., II, 201)։* —Եղբա՛յր, կռվելու ի՞նչ ունիք *(Նույն տեղում, 230)։* Իմ սիրելի՛ Հռիփսիմե, իմ անգի՛ն քույրիկ *(Նար., II, 159)։* Ա՛խպեր, Ա՛խպեր, հալա մի կանգնի... Ա՛խպեր, բարեկենդանը դու հո չե՞ս... —Հա, ես եմ բարեկենդանը, քույրիկ ջան, ի՞նչ ես ասում *(Թումանյան, «Բարեկենդանը»)։* Հասկացի՛ր ինձ, եղբա՛յր անգին, նրա ուժը իմ ուժից շատ, նրա խելքը իմ խելքից քիչ *(ԱԻԵ, 162)։*

Իբրև կոչական ընդարձակ գործածություն ունի ընկեր *բառը, որ առանձին գործածվում է, երբ անծանոթ մեկը դիմում է տարիքով մոտավորապես իրեն հասակակից մի այլ անծանոթի. օրինակ՝* Քնեցե՛ք, ընկերներ, լուսաբացը մոտ է,— ասում է անծանոթը *(Քոչար)։ Այսպես դիմում է ճառախոսը հանդիսականներին և կամ երբ մեկը իր խոսքը ուղղում է մի շարք մարդկանց. օրինակ՝* ընկերնե՛ր, դուք գործ ունեք հայտնի պարտիզանական խմբի ղեկավար ընկեր

Ճշ-ի հետ *(Քոչար)*։ *Հաճախ ասվում է՝* երիտասարդ ընկեր, անծանոթ ընկեր, հարգելի ընկեր, սիրելի ընկեր *և այլն, իսկ եթե հայտնի է կոչվողի անունը, մասնագիտությունը, զբաղմունքը, ապա ասվում է՝* ընկեր Դավթյան, ընկեր գյուղատնտես, ընկեր բրիգադիր *և այլն։*

Այժմ անծանոթին դիմելու համար հաճախ գործածվում է քաղաքացի *բառը, որ սկսում է տարածվել մանավանդ պաշտոնական դիմումի ժամանակ. օրինակ* —Քաղաքացի, ցույց տվեք ձեր փաստաթղթերը *(Քոչար)*։ Քաղաքացի, կարգը մի՛ խանգարեք: Քաղաքացիներ, խնամքով վարվեցեք հասարակության սեփականության հետ: *Համեմատիր՝* —Քաղաքացի ուղևորներ, տասնհինգ րոպեից հետո մեկնում է Մոսկվա—Բեռլին ինքնաթիռը *(ԲՎԻԳԵ, 275)*։

Իբրև կոչականներ այժմ կամ մի քիչ այլ կերպ և կամ սակավ են գործածվում հոգյակս, հոգիս, սիրելիս, թանկագինս, հոգի ջան, *որոնք արտահայտում են սեր, գուրգուրանք դիմացինի նկատմամբ. օրինակ՝* Զարթե՛, հոգիս, անուշ քունեդ, թող աչքերդ լուս տեսնին *(ՌՊԵ, 145)*։ —Սիրտդ մի՛ պակասեցնիլ, հոգի՛ ջան,— հուսադրեց Աննան *(ՊՊԵԺ, III, 192)*։ Չէ, սիրելիս, ազգությունը չէ արտաքին արարմունք *(ՌՊԵ, 64)*։ Ա՜յ, բերանդ սիրեմ, հոգյա՛կս,— գոչեց կարմրաթուշը *(Դեմիրճյան)*։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.— Բոլորովին գործածությունից դուրս է եկել սիրական *(սիրելի) բառի կոչական գործածությունը։ Համեմատիր՝* Տո՛ւր, սիրակա՛ն, քակեմ ձեռքիդ պալուլները, արձակեմ *(ՌՊԵ, 145)*։

Այժմ իբրև կոչական բառեր գրեթե գործածությունից դուրս են եկել տեր, տիրուհի, պարոն *(հատկապես սրա հոգնակի հին պարոնայք ձևը գերազանցապես որպես կոչական էր կիրառվում) բառերը, որոնցից առաջինը միայն պատմական բնույթի գեղարվեստական երկերում է երևան գալիս, իսկ երրորդով այժմ դիմում ենք արտասահմանյան քաղաքացիներին։ Համեմատիր հետևյալ օրինակները՝* Բավ է, տե՛ր իմ,— բազմանշանակ հեգնանքով դիմեց նա *(ԴԴԵԺ, IV, 75)*։ Պիտի հեռանաք այստեղից, թե չէ, պարոն *(Նույն տեղում, I, 93)* Տիրուհի՛, որտեղ կնրամայեք թեյ չնորհել *(Նար., I, 91)*։ —Ուրեմն, պարո՛ն,... եթե դուք իսկապես այնպես եք մտածում ու հասկանում *(Նույն տեղում, 48)*։ Ձեր ազգանո՞ւնը, պարոն,— և գրպանից հանեց բլոկնոտը *(ԱԲԵ, 283)*։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.— Տեր, պարոն, տիկին *բառերի հոգնակի* տյարք, պարոնայք, տիկնայք *ձևերը մի քառասնամյակ*

առաջ կիրառվում էին հատկապես իբրև կոչականներ հասարակության դիմելու համար։

Հնացած ու բարբառային գործածություն ունեն այտա *(այ տղա)*, արա, ապի *(հայր)*, ադա *(այ տղա)*, ապեր *(հայր, եղբայր)*, մերիկ *(մայր)*, նանի *(մայր)*, բիձա *(հորեղբայր)*, բալա *և այլն։*

—Ադա՛, էդ ինչ է, ընչի՞ եf շալակով տանում դրան *(ՊՊԵԺ, III, 14)*։ Աթա՛ ապեր, բա դու նա՞յ չես *(ԱԲԵ, 299)*։ —Ապի՛, սրանf բուխարի չունե՞ն *(Թումանյան, «Գիքորը»)*։ Լա՛ց, մերիկ ջան, որ էլ չեմ գա *(ԱԻԵ, 14)*։ Ի՞նչ ես նանի, էլ բարկանում *(Թումանյան)*։ Եսո մի՞տf եf արել որ, Գաքո՛ բիձա *(Թ., III, 56)*։ Ադա՛, էս կուլտուրայի տան դիրեկտորը սա՞ է, թե դու ես *(ՆԶԵ, V, 258)*։ Արա՛, դու ի՞նչ բան ունեիր մեր բարեկամների մեջ *(ԴԴԵԺ, I, 305)*։ Հա՛, բալա ջան, մերն էս է *(ԲՎԻԳԵ, 60)*։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.— Տղա *բառի տղայք ձևը իբրև կոչական է հանդես գալիս, բայց քիչ է գործածական։ Համեմատիր՝* Տղա՛յf, լավ կովենf, կյանf չխնայենf *(ԴԴԵԺ, IV, 575)*։

Բարբառային են և ստանիճանաբար գործածությունից դուրս են գալիս կամ ձայնարկության նշանակություն են ստանում տնաշեն, ներ օրնած, տնածակ *բառերը։ Համեմատիր հետևյալ օրինակները՝* Տո՛ տնածա՛կ, ըսենց նանաf կըլի՞ *(Մուր., IV, 72)*։ Ցուրտը տարա՞վ... վա՛ն, տնաշեն *(Թումանյան)*։ Հեր օրնած, խոզն ի՞նչ ա, որ ինչ փչացնի *(Մուր., IV, 82)*։ Դեն, նե՛ր օրնած, էտե՛նց ասա *(Թումանյան)*։

Շատ հաճախ կոչական է դառնում երկրորդ դեմքի անձնական դու *դերանունը, որին սկզբից ուղեկցում են* էյ, ով, օ, վայ, այ, նեյ *ձայնարկությունները, որոնք արտահայտում են սպառնալիք, հանդիմանություն, ուշադրության հրավիրում և այլն։ Բացի հիշյալ ձայնարկություններից* դու *դերանուն-կոչականը մեծ մասամբ վերջից ստանում է մի բացահայտիչ բառ, որ կարող է թե՛ հատուկ և թե՛ հասարակ անուն լինել. օրինակ՝* է՜յ, դուf, Ռոկֆելլեր, Ստիննես, Մորգան *(ՉԸ, 61)*։ է՜յ, դու, իմաստուն վարպետ, որ տաշում ես, տաշում այդ fարերը *(նույն տեղում, 63)*։ Վա՛յ-վայ դու-դու, իմ լավ կուկու *(Թումանյան)*։ Օ՜, դու, նաիրյան մարfսիզմի շատեր նագած ֆիլիստեր, Օ՜, դու, պատահմամբ սերտած մտfերի Մի խղճուկ գերի *(ՉԸ, 109)*։ է՜յ դու ջահել, նպարտ նասակ, թռար ոսկի աստղի պես *(ԱԻԵ, 49)*։

Խոսակցական ու բարբառային լեզվում հաճախ իբրև կոչական գործածվում են էյ, տո ձայնարկությունները, որոնք նախապես եղել են բուն կոչականների հետ, իսկ հետո կոչականը զեղչվել է, և սրանց պաշտոնը վերցրել են հիշյալ ձայնարկությունները. օրինակ՝ Սվինը վե՛ր բռնի, է՛յ,—մրթմրթաց մի զինվոր իրենից առաջ կանգնածին *(ԴԴ, I, 68)։* Էս ի՞նչ է, տո՛, ճիվանդ ճո չե՞ս *(ՊՊԵԺ, II, 13)։* Չե՞ս իմանում, տո՛, ո՞րտեղ էիր *(Թումանյան, «Գիքորը»)։* Է՜յ, լավ կենաf, ակա՛նջ արեf, Մի բան պատմեմ ճիմի ձեզ *(նույնը, «Թըմկաբերդի առումը»)։* Է՜յ, դու կեցիր, մարդը ասաց *(ԱԻԵ, 162)։*

Հաճախ կոչականներից հետո գործածվում է ջան *բառը, որ արտահայտում է մտերմություն, հարազատություն. այդ բառը շատ սովորական է մանավանդ նամակագրության մեջ. օրինակ՝* —Գի՛fոր ջան, բա եկել եմ է՛, Գի՛fոր ջան... Ես fու ապին եմ է՛ *(Թ., III, 48)։* Ա՜խ, fո տեսfին, անուշ լեզվին կարոտցել եմ, մայրիկ ջան. Երնե՜կ, երն՜եկ, երազ լինիմ, թռնիմ մոտդ, մայրի՛կ ջան *(ԱԻԵ, 12)։* Վա՜յ, էս ինչ լավ բան ես արել, Նշանչիկ ջա՜ն *(ՆՋԵ, V, 219)։* Դավի՛թ ջան, ասավ, չեմ թողնի էսպես *(Թումանյան)։*

Ջան *բառը անունների հետ գործածվելով հաճախ անջատվում է իբրև առանձին կոչական, մանավանդ հատուկ ոճավորված ժողովրդական խոսքի մեջ. օրինակ՝* Ամռան անուշ, ճուռճռատող տոթ ես. ջան, Նախշուն՝ նռան ու նարնջի ճո՛տ ես, ջան... Երբ խստադեմ ինձ ես նայում դու ճանկարծ՝ Ասես սրտիս մաճվան դաժան բոթ ես, ջան *(ՁԸ, 44)։*

Ջան *բառը կոչականներից առաջ որոշիչ է դառնում. օրինակ՝* Է՜յ, ջան սարեր, Սասման սարե՜ր, Ի՞նչ անուշ է Ձեր լանջն ի վեր *(Թումանյան)։* Է՜յ, ջան-ճայրենիf, ինչfա՞ն սիրուն ես *(ԱԻԵ, 32)։*

Ջան *բառը հաճախ գործածվում է իբրև սիրո ու սրտակցության պատասխան, որ հաճախ գործնական նշանակություն չունի. այս դեպքում* ջան *բառը մի տեսակ պատասխան-կոչական է, որով պատասխանողը կամ խոսակցին հասկացնում է, թե լսում է նրան և կամ ուղղակի եկած ձայնի նկատմամբ արտահայտում է իր կարոտն ու քնքշանքը. օրինակ՝* Կռունկները շարա՜ն-շարան, կրռռ, կրռռ, կանչին ու եկան. «Գարունն եկավ, գարունն եկավ», Անուշ կանչին ու եկան... Ջա՛ն, ջա՛ն, մեռնիմ ձեր ձենիկին, Ա՛յ կռունկներ, նխշուններ *(ԱԻԵ, 20)։*

Հեռվից կոչելիս՝ հաճախ կոչական բառերը վերջից կամ սկզբից ստանում են ճեյ, էճեյ, ճե-ճեյ *ձայնարկությունները, որ ծառայում են ձայնը բարձրացնելու և երկարաձգելու համար. օրինակ՝*

Ա՛յ չոքան նե՜յ: Ծամի՛ր նե՜յ... գիլի-բոլուկ է. չոռս կողմս կտրել են *(Թ., III, 106, 107)*։ Հե՜-նե-նե՜յ, եզոր նե՜յ,—դմդմբալով, պատեպատ զնում է նրա կանչի արձագանքը *(ԱԲԵ, 144)*։ Ձեն տվի՝ «Ա՛լաբաշ նե՜յ... Ալաբաշ նե՜յ» *(Թ., III, 53)*։

Կոչական բառերի հետ գործածվում են հետևյալ ձայնարկությունները կամ իբրև ձայնարկություն գործածվող բառերը. այ, էյ, նեյ, ով, ա, քա, տո, ծո, *որոնք դրսևորում են ուշադրության հրավիրում, նպատակում են ձայնի երկարաձգման, արտահայտում են աղաչանք, սպառնալիք, ցասում, երգիծանք, հանդիմանություն և այլն։ Սրանցից* ա, տո, ծո, քա *բարբառային են։ Համեմատիր հետևյալ օրինակները՝* է՜յ ազատ Մասիս,—երկնասույզ գահեր, է՜յ երկաթակուռ խրոխտ գագաթներ *(ԱԻԵ, 86)*։ Ո՛վ անտառի տեր, ո՛վ անձայտ հզոր, ինձ մի՛ սպանիր իմ անգիտուն մեղքի համար *(Թ., III, 341)*։ Տո՛ Ձենով Օհան, տո՛ մահի տարած *(Թումանյան)*։ Սարգիս՛, ա՛ Սարգիս... Կանչեց իր թախտի վրայից կույր Մարտիրոսը *(Փափ., 136)*։ Տո՛ շան տղա, դու զզիր չե՞ս *(Նույն տեղում, 131)*։ Ա՜յ որդիք, նենց իմանում եք, թե բազավորը ունի-չունի էդ նոզսն ունի՞ *(ԱԲԵ, 136)*։ Տո Մարտո, քու տունը չքանդվի, տո մասխարա *(Թ., III, 90)*։

Կոչականները լինում են համառոտ և ընդարձակ։ Ընդարձակ կոչականը կարող է լինել գոյականի և ածականի կապակցություն իբրև որոշյալ ու որոշիչ. օրինակ՝ Միայն մի բան չհասկացա, սիրո՛ւն աղջիկ *(ՂԱՀ, 80)*։ Աղջի՛կ բախտավոր, երնեկ քու սերին *(Թումանյան)*։

Կոչականը կարող է լինել հատկացուցիչի և հատկացյալի կապակցություն առանձին կամ որոշիչներով հանդերձ. օրինակ՝ Իմ աննման Անահիտ, ես ընկել եմ մի սոսկալի դժոխքի մեջ *(ՂԱՀ, 46)*։ Դաշտս լացեք, բաղի բլբո՜ւլ, ամպշող երկնուց զով նովեր *(ԱԻԵ, 12)*։ Օ՜, դուք ասպետներ շնչին դավերի, Ինչ եք քչփչում նանկերդ առած *(ՉԸ, 103)*։ Ծառ լավ, ջնուդ Աղաչանի աղջիկ, դու ինձ վայ տաս, սպասի՛ր, նորդ նոդի նավասարեցնեմ *(ՊՊԵԺ, II, 212)*։

Կոչականը կարող է լինել կայուն կապակցություն. օրինակ՝ Բայց, մեր տղա՛, վայ թե քո սասմներին համար թթու լինի *(Նույն տեղում, 14)*։ Հը՛, Թարո՛ս պապի, այսօր քեֆդ տեղն է *(Նույն տեղում, 56)*։ Ի՞նչ ես ուզում, ա՛յ գետինը մտնելու *(Նույն տեղում, 56)*։ Կորի՛ր, նեռացի՛ր, դժոխքի որդի, ներիք չէ՞ր *(Փափ., 299)*։ Դե, ներ օրննած, էտենց սաս *(Թումանյան)*։

Կոչական են դառնում համառոտ կամ ընդարձակ դերբայական

դարձվածները առանձին կամ գոյականների հետ. օրինակ՝ Օ՛, դու նաիրյան մարքսիզմի չտեր նազած ֆիլիստեր, Օ՛, դու պատահմամբ սերտած մտքերի մի խղճուկ գերի *(ՁԸ, 109)։* Էյ, արտ հնձող, արևը մայր է մտնում:

2. ԿՈՉԱԿԱՆԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Կոչականը ըստ իր շարադասության ազատ է. այն կարող է դրվել թե նախադասության սկզբում, թե միջում և թե վերջում. մանավանդ բանաստեղծության մեջ նրա տեղը պայմանավորված է կշռույթով, հանգավորմամբ և այլ գործոններով, ըստ որոնց բանաստեղծը շարադասում է կոչականը։ Արձակի մեջ կոչականի տեղը մասամբ որոշվում է նրա ձևով, նախադասության մեջ ունեցած դերով, նախադասության տեսակով՝ կապված տվյալ նախադասության սկսման այս կամ այն հանգամանքի հետ։

Երբ սովորական հաղորդման համար ուշադրություն է հրավիրվում, ապա կոչականը դրվում է նախադասության սկզբում. օրինակ՝ Սարհո՛ն եղբայր և դու, տիկի՛ն, մի անգամ ընդմիշտ պետք է գիտենալ... *(Փափ., 252)։* Իմ սիրեցյալ, իմ աննման Պոլ, ես արդեն հետևեցի քո խելոք խորհրդին *(Մուր., IV, 138)։* Պարասիմ, ես որ հասակս առնեմ, անպատճառ պիտի ճանապարհորդեմ *(Նար., I, 309)։* Լիզա՛... ներկայացնում եմ քեզ իմ վաղեմի ամենալավ և ամենասիրելի ընկերոջս *(Նույն տեղում)։* Տե՛ր, ես մի խեղճ պայտար եմ. մի տոպրակ, մի աքոռ ունիմ և տանս կողքին էլ մի ընկուզենի *(Փափ., 277)։* Հոգի ջան, բանաստեղծության կարգն էդպես է *(ԱԻԵ, 216)։*

Կոչականը նախադասության սկզբում է դրվում նաև նամակների, ճառերի, լոզունգների մեջ. օրինակ՝ Իմ քաղցր որդյակ, նախ և առաջ կհարցնեմ քո անգին որպիսությունը *(ԳՄԵ, 457)։* Սիրելի հայր իմ, այս նամակը կարդացեք և անհապաղ ինձ վերադարձուցեք *(ՌՊԵ, 748)։* Ընկերնե՛ր, Մեր ընկեր Սոսին, պիոներական մեր կոլեկտիվի ակտիվ Սոսին, այսօր հեռանում է մեզանից *(ԴԴԵԺ, I,)։*

Ծանոթություն.— Բանաստեղծական խոսքի մեջ այս կանոնը չի պահպանվում. օրինակ՝ Ուղարկում եմ գիրքս, ով դու ընթերցող: Ահա կրկին գրում եմ քեզ, իմ լավ ընկեր, իմ բարեկամ *(ՁԸ, 92, 112)։ Այդպես էլ սովորական նամակների մեջ երբեմն բուռն զգացմունքներ, սեր ու քնքշություն արտահայտելու համար կոչականը կարող է դրվել նա-*

խաղասության վերջում. օրինակ՝ Ա՜խ, ո՛րքան ծանր է, ո՛րքան ծանր է, սիրելի՛ քույրիկ *(Նար., II, 176)*։

Կոչականը նախադասության սկզբում է դրվում նաև այն դեպքում, երբ գործնականորեն անհրաժեշտ է լսողի ուշադրությունը հրավիրել, և կամ լսողը գտնվում է առանձին վայրում, կամ ուշադրությունը խոսողի կողմը չէ. այս դեպքում առանց կոչականի ասված նախադասությունը իր նպատակին չի ծառայի, ուստի մինչև նախադասության սկսելը, պետք է դիմում արվի լսողին. օրինակ՝ Դաշա՛, Մաշա՛, ծաղիկնե՜րը, թռչունները, Պոպային հանեք վանդակից *(ՍՋՄԿՊ, 286)*։ Արսե՛ն... հանդից չի եկել, ոչինչ կսպասեմ, թող գա *(ՆՋԵ, V, 147)*։ Ընկե՛ր, պլատֆորմի վրա չի կարելի աղտոտել *(ԴԴԵԺ, I, 241)*։

Կոչականը նախադասության սկզբում է դրվում, երբ արտահայտում է հանդիմանություն, զայրույթ, մտերմություն, արհամարհանք, ծաղր, դատապարտություն, սպառնալիք, խնդրանք, գորով և այլն։ Սովորաբար այսպիսի կոչականները սկսվում են մի որևէ ձայնարկությամբ, որն ավելի է սրում. համապատասխան հուզարտահայտչական երանգը. օրինակ՝ Ա՛յ դուք չար երեխեք, էսքան ժամանակ ի՞նչ եք անտառում քնել ու մնացել *(Թ., III, 314)*։ Իմ սիրելի, իմ տեր արջուկ, առ, ահա քեզ լինեն իմ բոլոր գանձերը, միայն թե խնայիր ինձ *(Նույն տեղում, 291)*։ Վանիչկա, տե՛ս, դու սուս ես անում... էդ գող աչքերիցդ տեսնում եմ, որ դու ես վերցրել *(Նար., I, 150)*։ Պարո՛ն, դուք արհամարհական խոսքերով կամենում եք կրկնապատիկ վիրավորել ինձ, զգուշացեք *(Մուր., II, 370)*։ Այ, հիմա՛ր, հիմա՛ր, ինչպես մոռացել էի *(Նույն տեղում, 39)*։ Քյոխվա՛, քյոխվա՛, հորդորում լին մի քանի գյուղացիք,—հերիք է *(Փափ., 142)*։ —Ո՛վ մահ, ամենազոր, ահավոր, տիեզերակալ տեր, ներիր ինձ *(ԱԻԵ, 307)*։ Վա՜յ, վա՜յ, Մոսի՛ ջան, ինձ մի սպանիր *(Թումանյան)*։ Տղի՛կ, մի ռոպե... Տղիկը կանգ չի առնում *(ՆՋԵ, V, 155)*։

Կոչականը նախադասության միջում է շարադասվում, երբ խոսողները դեմդիմաց կանգնած են և պատասխանողը որևէ համառոտ արտահայտությամբ կամ մի պատասխան բառով դիմում է խոսողին կամ հարցնողին. կոչականը դնելուց հետո կարող է մինչև անգամ շարունակել խոսքը. օրինակ՝ Չէ՛, աղա փուշ, թե վաղ, թե ուշ, փողն իր կարգին, շանն իր կարգին *(Թումանյան, «Անբախտ վաճառականներ»)*։ Ոչինչ, աղջիկս,—պատասխանում է պառավը *(Թ., III,*

296)։ Ո՛չ, հայրիկ, դև չի *(նույն տեղում, 309)*։ Քո կինը Անտոնյանի կնոջից ինչով է պակաս *(խոսում է Մարգոն)*։ Ոչնչով: Հագի՛ր, Մարգո ջան, շողշողա *(ՆԶԵ, V, 219)*։

Կոչականը նախադասության մեջ կամ վերջում է դրվում, երբ գործնական նշանակությունը կորցնում է և կիրառվում է իբրև թարմատար, այսինքն՝ խոսողը տալիս է խոսակցի անունը, տիտղոսը կամ որևէ փաղաքշական կոչականով դիմազարդում է իր խոսքը. օրինակ՝ Չեք կծող երևակայել, պարոննե՛ր, թե ինչպես էի տառապում *(Շիրվ., V, 412)*։ Փա՜ն, փա՜ն, էդ ինչ մեծ սիրտ ես ունեցել, մեր տղա, որ գնացել ես շահի դուռը իմ վրա զանգատ *(ԱԻԵ, 252)*։ Այո՛, այո՛, ճիշտ ես ասում, սիրելիս *(Թ., III, 122)*։ Ա՜յ ինչ կասեմ ձեզ, երիտասարդ, որդու դաստիարակեցեք ուրպես բաղաքացի *(ՍԶՄԿՊ, 286)*։ Գուցե ես լավ բախտից համար, իմ անգին *(Տ., I, 32)*։ Տասա մի՛ տխրիր, շատ մի՛ խնդար, սիրելի՛ս *(ԱԻԵ, 47)*։

Կոչականը նախադասության միջում կամ վերջում է դրվում ողջույնի, ողջերթի, հրաժեշտի և նման արտահայտությունների դեպքում. օրինակ՝ Բարի ճանապարհ, աղա՛ *(ՊՊԵԺ, II, 437)*։ Մնաս բարով, փառավոնների աշխարհ, ծո սմաննչելի երկնքով, ծո հավիտենական գարունով: Մնաք բարև, բուրգեր, ձեր գոռոզ գագաթներով *(Շիրվ., V, 447)*։ Ողջույն քեզ, արև՛, ողջույն քեզ, գարո՛ւն *(Տ., I, 84)*։ Բարի իրիկուն, դրացի՛: Բարի տեսանք, Մըկր-աղա, էս ո՞ւր ես գնում *(ԲՊԵ, 595)*։ Ողջույն, ազնիվ հազարապետ: Արքան հրամայեց, որ ճանաչես դեպի բլուրն աջակողմյան *(ՆԶԵ, V, 98)*։

Կոչականը նախադասության միջում կամ վերջում է դրվում, երբ նախադասությունը սկսվում է որևէ շաղկապով. օրինակ՝ Բայց լսի՛ր, ջանիկս, ինչ եմ ասում, ինձ այլևս պարոն չանվանես *(Նար., I, 218)*։ Եվ լավ իմացիր, Արա՛մ, այս ճորությունը ես այնուամենայնիվ չէի հայտնի քեզ *(Նար., I, 211)*։ Իսկ դու, իմ ամենասիրելի աղջիկս, դու ինչքան ես սիրում ինձ *(Թ., III, 298)*։ Եվ չեմ իսկ պահանջել, Նվա՛րդ, որ դու բացակայես *(ՆԶԵ, V, 84)*։ Բայց ների՛ր, ընթերցող, որ ես պատմությանս թելը բավականին խճճեցի *(ԵՉԵ, 336)*։

Կոչականը նախադասության միջում կամ վերջում է դրվում, երբ նախադասության որևէ անդամը կրկնվում է. օրինակ՝ Գնա՛, խոսքը՛, գնա՛, Բալասան աղեն եկավ *(ՊՊԵԺ, II, 54)*։ Դու կա՛ց, հորեղբայր, դու դարդ մի՛ անիր *(Թումանյան)*։ Ների՛ր ինձ, հոգյակս, նեմի՛ր, խոստովանում եմ, որ սխալվել եմ *(Մուր., IV, 134)*։ Նոր հիշեցի, Պատրի՛կ ջան, նոր *(Նար., I, 185)*։ Արի՜, ջա՛ն, արի՜,

քու գալուն մեռնեմ, Թուխ չոբան, արի՛ (Թումանյան)։ Հանգստացիր, սիրելիս, հանգստացիր, ես արդեն հարցրել եմ (Նար., I, 208)։ Հանգստացի՛ր, Մարգո՛, հանգստացի՛ր (ՆԶԵ, V, 341)։

Կոչականը սովորաբար դրվում է հարցական ու պատասխանական բառերից հետո. *օրինակ*՝ Չէ՞, սիրելի փեսիկս,— դարձավ նա Գարեգինին, մտերմորեն գրկելով նրա ուսը (Նար., II, 443)։ Չէ՛, ի՛մ անուշիկ, թիթեռներ չեն էղ, թիթեռներն անցան ծաղիկների հետ (Թումանյան)։ Ինչո՞ւ, սիրելիս,—վախեցած հարցրեց փաստաբանը (Մուր., IV, 54)։ Չէ՛, սիրելի՛ս, դու գեղեցիկ չես (նույն տեղում, 61)։ Այո՛, հայր,—գոչեց Եղոն (ՎՓԵԺ, II, 247)։ Գիտե՞ս ինչ, Պետրոս,—ասաց Նազիկը թույլ ձայնով (նույն տեղում, 335)։ Իսկապե՛ս, Մահմեդ,—կուզե՞ս մի հատ առնենք (նույն տեղում, 436)։ Այսպես չէ՞, Ֆարհատ (ՐԵԺ, IV, 275)։ Հա՛, սիրելիս, նրա հետ պետք է այսպես լինել (նույն տեղում, 356)։

Կոչականը շարադասվում է բացականչական բառերից հետո. *օրինակ*՝ Հեյ վա՜խ, իմ սիրուն ների։ Վա՜խ, վա՜խ, իմ անմեղ ոչխար,—մղկտաց Հասոն (ՎՓԵԺ, II, 342)։ Ա՜յ, Վահան ջան, երբ ուզում ես ամեն օր լավ ու աժան բեյ խմել, կգաս այստեղ (Մուր., IV, 206)։ Օ՜, Շամիրամ, ես պապիրադրդրով մերժել եմ քեզ (ՆԶԵ, V, 76)։ Վո՜ւշ-վո՜ւշ, Անո՜ւշ, վո՜ւշ-վո՜ւշ, քուրիկ, Վո՜ւշ քու սերին, քու յարին... Վուշ-վո՜ւշ, Սարո՜, վուշ-վո՜ւշ, իգի՜թ, վո՜ւշ քու սիրած սարերին (Թումանյան)։ —Ա՜խ, պարոն կամ տիկին,— ասում էր նա, այս ինչ աշխատանք է որ իմ արածը (ՌՊԵ, 488)։

Կոչականը մեծ մասամբ շարադասվում է խրախուսական, հանդիմանական ու աղաչական արտահայտություններից հետո. *օրինակ*՝ Ա՛յ ամոթ ձեզ, հարևաններ։ Ամոթ քեզ Մոսի, թուք ու նախատինք (Թումանյան)։ Դեպի սուր, քաջե՛ր (Մուր., IV, 217)։ Դեն, գնա՛, Մուսա (Թումանյան)։ Ի սեր աստուծո, մայր իմ, մի՛ դնիր քո հոգուդ վրա հանգստացուցիչ այն սպեղանին (Շեքս., I, 70)։ Հայդե՛, բրիչ. աշխարհքի ամենից հին արհեստավորները այգեպաններն են (նույն տեղում, 94)։ Դե՛հ, Բարբարե՛, քեզ տեսնեմ (ՊՊԵԺ, III, 175)։ Ա՛յ ամոթ ձեզ, Զղջիկ ու Ճայ, ինչ եմ լսում.— վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ. Անունները վահանական ու էս տեսակ խայտառակ բա՞ն... Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ Զղջիկ ու Ճայ... (Թումանյան, «Անբախտ վաճառականներ»)։

3. ԿՈՉԱԿԱՆԻ ՀՆՉԵՐԱՆԳՆԵՐԸ

Կոչական բառերն իրենց գործածության ու արտահայտչական բազմազանության համապատասխան ունեն հնչերանգային հարուստ նրբություններ, որոնք միմյանցից տարբերվում են ձայնային հարուստ ելևէջներով, այն է՝ ձայնի բարձրացումով, կտրուկությամբ, ձգվածությամբ և արտաբերական այլ ատիճաններով։ Արտաբերական այս հարուստ բազմազանությունը պայմանավորված է կոչականի ձևական առանձնահատկություններով, բնույթով, կատարած պաշտոնով, շարադասությամբ, խոսակիցների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությամբ, նրանց ատիճանով, դիրքով, տարածությամբ, զբաղմունքով, կրթությամբ, միջավայրով և այլն։

Ձայնի յուրահատուկ բարձրացում և ձգվածություն է պահանջում օրինակ այն կոչականը, որ կիրառվում է գյուղերում հեռու տարածությունից միմյանց կանչելիս. այս կոչականը նախադասության մեջ չի մտնում, և ձայնի երկարացման հնարավորության համար հաճախ սկզբից ու վերջից, ավելացվում են այ, հեյ, հեյ-հեյ, հեհեյ, էյ ձայնարկությունները (այ միայն սկզբից). օրինակ՝ Հեյ-հե՜յ Դավիթ, որտե՞ղ ես դու (Թումանյան)։ Ա՛յ չոբան, հե՜յ (Թ., III, 106)։ Շամիր հե՜յ (Նույն տեղում, 107)։ Ըստ որում հեյ սկսվում է բարձրից, աստիճանաբար ցածրանալով երկարանում է և մարում։

Սրան հակադիր է խոսակցության միջոցին իբրև թարմատար գործածվող կոչականը, երբ իրար հետ խոսող մարդիկ միջանկյալ տալիս են մեկի անունը, տիտղոսը կամ կոչում են որևէ փաղաքշական բառով։ Այսպիսի կոչականը նախադասության մյուս անդամներից տարբերվում է թույլ կոչական շեշտով՝ առանց ձայնային երանգների գործադրման. օրինակ՝ Հիմա գիտես ի՞նչ կա, Մարգարյան, ես շատ պես քաղցած եմ (Նար., II, 464)։ Սխալվում եք, երիտասարդ բարեկամներս,— ասում է ուսուցիչը (ԱԻԵ, 257)։ Դու գնա՛, պա՛պի, միամիտ քնի՛ր, ես աչքի լույսը կհանեմ գողի (Թումանյան, «Հառաչանք»)։ Գիտե՞ս, Լևոն,—ասում էր նա մայրական անզուսպ և կույր զգացման, բուռն գրգռման պահերին,—եթե սրանց մի բան պատահի (Շիրվ., V, 313)։ Այո՛, սիրե՛լիս: Եվ շատ հավանական է, որ մեր գունդն էլ ուղարկեն (Նույն տեղում)։ էդպես է, բի՛ձա, էդպես է (ԳԴԵժ, I, 290)։ Այս դեպքում կոչականը արտաբերվում է կարճ և շեշտվում է ոչ ուժգնությամբ։

Բոլորովին տարբեր բնույթ ունի այն կոչականը, որը շնչավոր-

վում, անձնավորվում է գրողի կողմից, այսինքն՝ երբ կոչականը անշունչ առարկա է. այսպիսի կոչական են դառնում լեռները, գետերը, հայրենի երկիրը և այլն. այս դեպքում կոչական բառը մյուս բառերից անջատվում է իր բարձր տոնով, ներշնչական պաթոսով և որոշակի դադարով. այս վերջինը ավելի տևական է, երբ կոչականը շարադասվում է նախադասության սկզբում. օրինակ՝ Լեռնե՛ր, ներշնչված դարձյալ ձեզանով, Թնդում է հոգիս աշխույժով լցված (Թումանյան, «Անուշ»)։ Հե՜յ ջան, հայրենիք, ինչքա՜ն սիրուն ես, Սարերդ կորած երկնի մովի մեջ (ԱԻԵ, 32)։ Է՜յ հին ծանոթներ, է՜յ կանաչ սարեր, Ահա ձեզ տեսա ու միտս ընկան, Առաջս եկան երջանիկ օրեր, Սիրելի դեմքեր, որ հիմի չկան (Թումանյան, «Անուշ»)։ Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ Պար չես բռնում մանկական (ՌՊԵ, 68)։ Շաչեցեք գլխիս, ամեհի հողմե՛ր, Դուք մրրիկնե՛ր, պայթեցեք գլխիս (ԱԻԵ, 110)։

Իրար հաջորդող երկու կոչականների արտաբերությունը միմյանցից տարբերվում է։ Կոչականի ամենաուժեղ հնչերանգությունը իր վրա է վերցնում երկրորդը, որ արտաբերվում է ամենաբարձր տոնով. օրինակ՝ Սիրո՛ւն կանայք, ջահե՛լ տղերք, Լա՛վ ուշ դրեք իմ խաղին (Թումանյան, «Թմկաբերդի առումը»)։ Լսո՞ւմ ես դու, սիրուն տիկին, Ա՛յ Նազանի աննման (նույն տեղում)։ Ա՜խ, մնաք բարև չեմ ասում ես ձեզ, իմ հոր գերեզման, օրոցք մայրական (ԱԻԵ, 105)։ Իմ աղավնյա՜կ, իմ սիրունի՛կ թևասլաց, Ես քեզ տոսպա ոսկեցօրեն կուտով եմ կերակրել (ՆՁԵ, V, 44)։ Օ՜, հեռու ընկեր իմ, Օ՜ Վահան Տերյան (ՉԸ, 34)։

Իսկ եթե վերջին կոչականին նախորդում են երկու կամ ավելի կոչականներ, ապա այդ նախորդները թույլ են արտաբերվում, կարծեք թե թվարկվող բառեր են և արտաբերվում են համարյա թվարկման հնչերանգությամբ. օրինակ՝ Իմ բարեկամ, իմ սեր, հերոսական ընկեր, Դու ապրեցիր, անցար և էլ չկաս հիմա (ՉԸ, 77)։ Ախպեր ջան, ախպեր, Անհեր ու անմեր, Անքուն ու անտեր, իմ Գառնիկ ախպեր (Թումանյան)։ Սուտ ես ասում, դու խաբեբա, անխիղճ գազան, անկուշտ, ագահ (նույնը)։ Տունդ քանդվի, ա՛յ խանութպան, Անխիղճ, լիրբ, չար, փլան, փտան (Թումանյան, «Մի կաթիլ մեղրը»)։

Հարցական բառից կամ նախադասությունից հետո շարադասվող կոչականը իր հնչման բարձրությամբ որոշ չափով տարբերվում է մյուս կոչականներից. կոչականի և նախորդող մասի միջև ընկած դադարը մասամբ ավելանում է. օրինակ՝ Հե՜յ, ո՞ւր ես, Դավի՛թ,

հայոց պահապան (*Թումանյան*)։ Նաղոն ուտե՞ղ է, Հասո՛ եղբայր (*ՊՊԵ, 555*)։ Բայց դու ինքդ ի՞նչ ես, ո՛վ մարդ (*ԱԻԵ, 290*)։ Տեսա՞ր, հանդո՛ւգն արարած,— կանչեց մեծ կաղնին (*Փափ., 289*)։ Մի՞թե կարծում ես, ո՛վ Արքակ, որ իմ հոգին այնքան օտար է աշխարհին... (*ՆԶԵ, V, 62*)։ Ինչո՞ւ ես եկել, ախպե՛ր ջան, ո՞ւր պիտի երթաս (*ԱԻԵ, 214*)։

Միջադաս կոչականը հնչվում է այնպես, ինչպես հնչվում է միջանկյալ բառը, որ ընդհատում է նախադասության բնական հնչերանգությունը. կոչականը միջանկյալ բառից տարբերվում է միայն կոչական շեշտով, բայց հնչերանգությունը ցած է և ավելի արագ է արտաբերվում քան մյուս բառերը։ Ընդարձակ կոչականները ավելի ցած հնչերանգություն ունեն քան համառոտները. օրինակ՝ Մարդը, սիրելի՛ս, կատարելագործվում է ոչ թե ատելությամբ, այլ սիրով (*ՍԶՄԿՊ, 385*)։ Ներեցե՛ք, տիկի՛ն, կարծեմ շատ անհարմար ժամանակ եմ եկել (*Նար., II, 504*)։ Զգուշացի՛ր, Ասուր-Գաբրո՛ւ, կրկին մեղանչելուց (*ՆԶԵ, V, 46*)։ Եվ հեռավոր տեղերից, իմ սիրելի ընկեր, գալիս էին մարդիկ մեր կրակից տանելու (*ԱԻԵ, 283*)։

Ամենից երկար դադարը լինում է նախադաս կոչականից հետո, ամենից կարճը՝ ետադաս կոչականից առաջ։ Միջադաս և առանձնապես ետադաս կոչականները թույլ են հնչվում և գործնական նշանակություն չունենալով՝ արագ հաջորդում են նախադասությանը կամ նրա մի մասին. օրինակ՝ Պահպանի՛ր դու ինձ, Հուսալքման պահին հասիր, ամենամա՛յր (*ՆԶԵ, V, 69*)։ Քո դեմ, ասաց, գանգատ ունեմ, ով բնություն (*ԱԻԵ, 160*)։ Դու ո՞ւր սարեն կուգաս, ջրի՛կ (*Թումանյան, «Մանուկն ու ջուրը»*)։ Ինձ մի՛ տանջիր, մի՛ չարչարիր, սիրական (*ՈՊԵ, 125*)։ Մայր ունե՞ս, տղա (*ԱԲԵ, 425*)։ Մանի՛, մանի՛, ճախարակ, Նստենք բանի, ճախարակ, Անտերին տեր, ճախարակ, Որբերին հեր, ճախարակ (*Թումանյան, «Ճախարակ»*)։ Ձեր բախտի համար, վայելեք, որդիք, Միայն թե միշտ մարդ մնաք, ով մարդիկ (*ՀՇՔՀ, 93*)։ Հորս խոսքերը ոսկի են, որդիս, Ծիլ-ծիլ ոսկի են, մտքից չհանես,— երբեք վատություն մի՛ անի, որդիս, լավություն արա, որ չփոշմանես (*Նույն տեղում, 45*)։ Ես այնպես հոգնել եմ գրելուց, Վարդա՛ն (*ԲՎԻԳԵ, 352*)։ Տեխնիկան ու քաղաքականությունը կտրված չեն իրարից, հարգելի՛ ինժեներ (*Նույն տեղում, 229*)։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.— Կոչական բառը սովորաբար շեշտով է գրվում, բայց մեր հեղինակներին տվյալ դեպքում հետևողականությունը պակասում է. մենք օրինակները բերելիս անփոփոխ ենք պահել բնագրերի շեշտադրությունը։

XV

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԵՎ ՆԵՐԴՐՅԱԼ ԲԱՌԵՐ, ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես տեսանք, հաճախ նախադասության մեջ լինում են այնպիսի բառեր, որոնք տվյալ նախադասության կամ նրա որևէ անդամի հետ քերականական կապի մեջ չեն գտնվում։ Քերականական կամ շարահյուսական որևէ առնչություն չունենալով նախադասության հետ, այնուամենայնիվ այդպիսի բառերը անհրաժեշտ են դառնում. դրանք տվյալ նախադասության կամ նրա որևէ անդամի համար իմաստային ու ոճաբանական յուրահատուկ նշանակություն ունեն։ Այս առումով միջանկյալ բառերը արտահայտում են խոսողի վերաբերմունքը իր խոսքի նկատմամբ. Նրանք կարող են վերաբերել ոչ միայն այն նախադասությանը, որի մեջ գտնվում են, այլև նախորդող կամ հաջորդող մասերին։

Միջանկյալ բառերի միջանկյալության աստիճանը տարբեր է. երբեմն միջանկյալ բառը շարահյուսորեն ամբողջովին կտրված է տվյալ նախադասությունից կամ նրա որևէ անդամից, իսկ երբեմն էլ որոշ առնչությամբ հարում է դրանց, որ կարելի է այս կամ այն կերպով կապել դրանց հետ իբրև որոշ աստիճանի լրացում։

Արդի հայերենի միջանկյալ բառերն են՝ իհարկե, կարծես, վերջիվերջո, իրավ, արդյոք, երևի, վերջապես, գուցե, սակայն, իսկապես, հետևապես, նաև, ահա, արդ, ընդհակառակը, օրինակ, համարյա, ասես, ուրեմն, արդարև, անշուշտ, հարկավ, իրոք, անտարակույս, ահավասիկ, անպատճառ, անկասկած, անպայման, այո, ոչ *և այլն, որոնք իբրև միջանկյալ բառեր գործածվելով պատկանում են այս կամ այն խոսքի մասին և հաճախ խոսքի մեջ հանդես են գալիս այլևայլ դերով ու նշանակությամբ։ Ահա դրանց միջանկյալ գործածության մի քանի օրինակներ.* Իմ ուղեկիցներն, ուրեմն,

ուսանողական ընկերներ էին, և այդ էր, անշուշտ, պատճառը, որ մի ռուս ու լեհացի բարեկամաբար էին վերաբերվում իրար *(Մուր., IV, 326)*։ Այդ կետում, ուրեմն, չես վիճում ինձ հետ *(Նույն տեղում, 327)*։ Բայց որպեսզի դու համոզվես, թե, արդարև, իմ կարծիքները հիմնված են սեփական փորձի վրա... *(Նույն տեղում)*։ Չգիտեմ, հասել է, արդյոք, հայի ոտքը մինչև Կիպրոս *(Շիրվ., V, 426)*։ Միջանցքում, վերջապես, առնում է մեր փաթեթները *(ՍԶՄԿՊ, 298)*։ Եվ մի քանի օր հետո, իսկապես, նա վեճի է բռնվում *(Նույն տեղում, 301)*։ Արեգակի բարակ շողքը, որ երկչոտ կերպով ներս է ցոլացել այդ ծակից, կարծես, վախենում էր ներսի խավարից *(ՐԵԺ, VII, 232)*։

Երբեմն միջանկյալ բառերը դառնում են նախադասության անդամ. նայած ինչպես են կիրառվում, հարում են այս կամ այն բառին և վերջինիս հետ քերականական կապի մեջ են մտնում. օրինակ՝ Մի օր էլ, մատնությամբ, մի գյուղում բռնվեց նա *(ԱԻԵ, 218)*։ *Այս նախադասության մեջ* մատնությամբ *կիրառված է իբրև միջանկյալ բառ. միևնույն նախադասության մեջ դա կարող է դառնալ նախադասության անդամ. օրինակ՝* Մի օր էլ գյուղում մատնությամբ բռնվեց, *ուր* մատնությամբ *հիմունքի պարագա է։*

Միջանկյալ բառերը խիստ բազմազան են. հաճախ դրանք նախադասության կամ նրա որևէ անդամի համար մեկնաբանական արժեք են ներկայացնում կամ արտահայտում են խոսողի, գրողի վերաբերմունքը, գնահատականը, երկբայությունը, խոսքի նկատմամբ ունեցած հավաստիությունն ու անհավաստիությունը, ուշադրություն են հրավիրում, դրսևորում են հուզարտահայտչական երանգներ. օրինակ՝ Այո՛... դա, իրոք, ինչ որ զարմանալի պատմություն է *(Շաթիրյան, 884)*։ Քաղաքում, դժբախտաբար, ոչ բոլոր գնդերն են այդպես կազմակերպված հանձնվում *(Նույն տեղում)*։ Պետք էր, վերջապես, ազատվել նրանից *(Մուր., IV, 341)*։ Եվ որովհետև կանայք այդ դեպքում, համարյա, կատակ չէին սիրում *(Նույն տեղում)*։ Բայց դու, երևի, չգիտես, որ... Մեռուժանը դեռ շատ գործեր պետք է կատարե *(ՐԵԺ, VII, 97)*։ Երվանդ, կարծես, սիրում եմ այս աղջկան *(ԱԻԵ, 200)*։

Միջանկյալ բառերի շարքում կան այնպիսի բառեր, որոնք այս կամ այն նախադասության մեջ իրացի նշանակություն ունեն, այսինքն՝ բառեր են իրենց նյութական նշանակություններով, իսկ երբ դառնում են միջանկյալ, կորցնում են այդ նշանակությունը և վերածվում են ձևական բառերի. օրինակ՝ Ասում են՝ ուռին աղջիկ էր

ինձ պես *նախադասության մեջ* ասում են *բայն ունի իր նյութական նշանակությունը, ասելու բայիմաստը. իսկ հետևյալ նախադասության մեջ* ասել *բայը բոլորովին կորցրել է իր այդ նշանակությունը և դարձել է միայն ձևական՝ վերաբերմունքի բառ. օրինակ՝* Հաճախ հառում էր աչքերը վրաս այնպիսի մի հայացքով, որն, ասես, լցված էր լույսով ու կրակով *(Մուր., IV, 342)*։ Ասես *բայաձևը այստեղ արդեն ասելու բայիմաստը կորցրել է և նշանակում է* ոնց որ, կարծես, թվում է, *այսինքն՝ այդ բառով խոսողը իր համեմատության եզրերը լրիվ չի մոտեցնում միմյանց, այլ որոշ նմանություն է գտնում, իսկ այս վերապահությունն է արտահայտում տվյալ դեպքում* ասես *բայաձևը*։

Այսպիսով, հաճախ նյութական նշանակություն ունեցող իրացի բառերը միջանկյալ գործածությամբ դառնում են եղանակավորող բառեր։

Միջանկյալ բառերը երբեմն իրենց հետ ունենում են ձայնարկություններ, այլ կարգի եղանակավորող բառեր և կամ երկու կամ ավելի բառեր միասին են գործածվում, որոնք տարբեր կողմից են պարզում խոսողի վերաբերմունքը իր խոսքի նկատմամբ, օրինակ՝ Բայց բարեկամներ, ծանոթներ, գիտես էլի, այնքան հավաքվել էին *(Նար., II, 288)*։ Թեյ ու շաքար չունեցած ժամանակներիս, գիտես խո, նորա բերած կաթովն էինք օրերս անցկացնում *(ԹՊԵ, 346)*։ Մեր ապրուստն ի՞նչ է.— մի կտոր չոր հաց, էն էլ, հրեն հա՛, երկնքից կախված *(Թումանյան)*։

Միջանկյալ բառերը շարադասվում են ոչ միայն նախադասության մեջ, այլև նախադասության սկզբում ու վերջում։ Նախադասության մեջ շարադասված միջանկյալ բառերը սովորաբար վերաբերում են իրենց մոտիկ գտնվող որևէ բառի, իսկ նախադասությունից դուրս գտնվողները, այսինքն՝ սկզբում և վերջում շարադասված միջանկյալ բառերը առավելապես ամբողջ նախադասությանն են վերաբերում։ Համեմատիր հետևյալ օրինակները միմյանց հետ. Տիկին, թեև չգիտեմ, ճշմարիտ, թե ինչով եմ արժանացել այդ քաղցր պատվին *(Նար., II, 250)*։ Իհարկե, նրա նման ես չեմ կարող պատմել *(Թ., III, 208)*։ Վերջապես, ես մի բան հասկանո՞ւմ եմ թե ոչ *(Քրեստ., IX, 149)*։ Կին է եղել ձեր դասատուն, իհարկե *(Շիրվ., V, 418)*։ Շամիրամի կեցվածք է դա: Նա ինքն է, անկասկած *(ՆԶԵ, V, 94)*։ Անտարակույս, նրանք վեր էին առել քաղաքից *(ՐԵԺ, VII, 305)*։

Միջանկյալ բառեր են համարվում այնպիսի բառակապակցությունները, որոնց առանձին միավորները քերականորեն այնքան

են սերտացել, որ արդեն մի բառի արժեք ունեն։ Այդպիսի միջանկյալ բառերն են՝ մի խոսքով, ըստ էության, ի զարմանս, ցավոք սրտի, ի միջի այլոց, կարճ ասած, ի լրացումն, ճիշտն ասած, ըստ իս *և այլն, որոնք կուսումնասիրվեն «Միջանկյալ բառակապակցություններ» ենթաբաժնում։*

1. ՄԻՋԱՆԿՅԱԼ ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՆՐԱՆՑ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Միջանկյալ բառեր են համարվում այնպիսի բառերը, որոնք շարահյուսորեն չեն կապակցվում տվյալ նախադասության հետ։ Այդպիսի բառերը կարող են լինել գոյականներ, ածականներ, բայեր ու մակբայներ, շաղկապներ ու եղանակավորող բառեր. դրանք կարող են նյութական նշանակությունից զուրկ չլինել, բայց երբ նախադասության որևէ անդամի լրացում չեն և հնչերանգով էլ անջատվում են նախադասության արտաբերական ամբողջ շղթայից, համարվում են միջանկյալ։ Այդ բառերը ըստ իրենց ձևաբանական առանձնահատկության բաժանվում են հետևյալ խմբերի։

Գոյականներ այլևայլ հոլովներով, որոնք իբրև այդպիսիք դեռևս կենդանի են և իբրև միջանկյալ բառեր քիչ են գործածական ու պահպանել են իրենց նյութական նշանակությունը արդի հայերենի համար. այդպիսի բառերից են՝ ներողություն, սիրով, ճաճույքով, ուրախությամբ *և այլն։* Այսպես, օրինակ, մինչ յուր այցելուին ճամբերությամբ լսելուց ճետո գլուխը շարժում և ասում էր *(Մուր., II, 160),* Կարո՞ղ ես, օրինակ, ճարց դնել պարտիայից վտարելու Բաղդյանին *(ԲՎԻԳԵ, 404)։* Ես լավ չլսեցի, ներողություն, եթե կարելի է՝ նորից կրկնեցեք: Ներողություն, այդ ի՞նչ ասացիք: Կլսեմ, ինչո՞ւ չէ, սիրով ու ճաճույքով:

Զանազան հոլովներով հին գոյականներ, որոնք այժմ դարձել են մակբայներ և եղանակավորող բառեր՝ կորցրել են իրենց հոլովական արժեքը. այդպիսի բառերից են՝ ճարկավ, իրոք, իրավ, արդարև, արդյոք *և այլն։* Դուք, իրա՞վ, չեք էլ լսել Դուզանի Հաքեթ աղայի մասին *(Փափ., 99)։* Ընկերական կյանքը, ճարկավ, դատարկ չէր անցնում նորավարտների ճամար *(Մուր., II, 158)։* Դա, իրոք, ինչ-որ զարմանալի պատմություն է *(Շաթիրյան)։* Եվ, իրավ, ոչինչ չպիտի շաճեին *(ՐԵԺ, VII, 304)։* Արդարև, թվում է թե՝ սարը շարժվում է, գնում է դեպի առաջ *(Մուր., II, 9)։* Այդ մարդն, իրավ, ճրապարակախոս էր... *(նույնը, IV, 163)։*

Հոլովված գոյականները սերտ ձուլված լինելով նախդիրների հետ, կորցրել են իրենց հոլովական արժեքը. հաճախ չեն գիտակցվում նաև դրանց հետ սերտ ամբողջություն կազմած նախդիրները. դրանցից շատերը անգամ գրաբարում մակբայական արժեք ունեն, կամ կիրառվում են իբրև եղանակավորող միջանկյալ բառեր։ Այդպիսի բառերից են՝ հիարկե, հիրավի, ընդհակառակն *(նաև ընդհակառակը),* առերևույթ *և այլն։* Ով հասկանում էր որոշման պատճառը, իհարկե, գովում էր *(ԲվԻԳԵ, 202)։* Փոխանակ լավանալու, փոխանակ բարձով ու վարձով ազնվանալու, ընդհակառակն, ավելի խստասիրտ, ավելի եղեռնագործ դարձան *(ՐԵԺ, VIII, 181)։* Հիրավի, զառիվայրից դեպի մի հեղեղատ էին սլանում արագությամբ *(Փափ., 101)։* —Վահ, իհարկե, ես եմ, —կանչեց Զաքարը ծիծաղելով *(Նար., II, 225)։* Իսկ ես, ընդհակառակը, ոչ միայն ինձ, այլև ուրիշներին պատահած այդպիսի դժբախտության անկարող եմ նայել *(Մուր., IV, 327)։*

Կան նաև այնպիսի գոյականներ կամ այլ խոսքի մասեր, որոնք դեռևս կապերի հետ չեն ամբողջացել, սակայն տարբեր հոլովներով հիշյալ կապերի հետ մի բառի արժեք ունեն։ Այդպիսի բառերից են՝ ըստ երևույթին, ըստ ամենայնի, ի դեպ, ի վերջո, ըստ էության *և այլն։* Գյուղը, ըստ ամենայնի նման էր մյուս բոլոր հայաբնակ գյուղերին *(Մուր., II, 32)։* Նա նայում էր շուրջը, ըստ երևույթին, հանգիստ *(Նույն, IV, 349)։* Ասաց նա, ըստ երևույթին, փոքր ինչ շփոթված *(Նար, II, 225)։* Ի դեպ, ինչպե՞ս է այդ կապիտանի ազգանունը *(Շաթիրյան, 884)։* Սակայն, վերջ ի վերջո, նրա մեջ հաղթանակեց խոհեմությունը *(Նույնը, 719)։* Ըստ որում, նա ստեղծված է մի ուրիշ էակի շնչով ջերմանալու, նրա ազդեցությամբ բաբախելու, նրա զգվանքով զորանալու և, ի վերջո, նրա էության մեջ լուծվելու *(Մուր., II, 145)։* Թեև սաստիկ մտազբաղ էր, բայց, ըստ երևույթին, մեծ զոհունակությամբ էր նայում շենքին *(ԴԴԵԺ, VII, 470)։*

Միջանկյալ բառեր են դառնում գրաբարի մի շարք բայեր, որոնք կիրառվում են տարբեր դեմքերով, եղանակներով, ժամանակներով։ Այսպիսի միջանկյալ բառերը վաղուց կորցրել են իրենց բայական առանձնահատկությունները և այժմ գերազանցապես մակբայ են կամ եղանակավորող բառեր։ Այսպիսի բառերից են՝ համարյա (համարիմ *բայի եղակի հրամայականը),* գոնյա, գոնե *(մի անհայտ բայի եզակի հրամայական),* երևի (երևիմ *բայի ներկայի եզակի երրորդ դեմքը),* զուցե *(զոմ բայի I ապառնու եզակի երրորդ*

դեմքը)։ Իսկ անտառը փոքրիկի պատճառով, համարյա, մթնել էր *(Մուր., II, 19)*։ Չէ՞ր կարելի միթե նորից զարթեցնել նրա մեջ նոր ձգտումներ, ոգևորող նոր նպատակներ, և կամ, գոնե, կյանքի հաճույքները լիաբուռն վայելելու մարմաջը *(Փափ., 409)*։ Համենայն դեպս՝ Աղդան, երևի, վճռել էր խոսել, սիրտը բանալ մեկին *(Նույնը, 410)*։ Կամ, գուցե, այդ պատահեց շատ արյուն կորցնելուց *(Մուր., IV, 327)*։

Միջանկյալ բառեր են դառնում մի շարք մակբայներ, մակբայական հին ու նոր բառեր, եղանակավորիչներ, ածականներ և այլն. այդպիսի բառերից են՝ իսկապես, գլխավորապես, ճշմարիտ, անշուշտ, վերջապես, անկասկած, լավ, գեղեցիկ, հետո, անտարակույս, նույնիսկ *և այլն*։ Այդ միտքն էր, իսկապես, իմ ցավերի դեմ ինձ արթնացնողը *(Մուր., IV, 331)*։ Այս զգացումը, նույնիսկ, անուն չուներ յուր համար *(Մուր., II, 147)*։ Չգիտեմ, ճշմարիտ,.., գուցե.... ստուգեցեք մի անգամ ևս *(Փափ., 414)*։ Ես էլ, անգիտակից, մի վայրկյան կանգ առա, հետո, յուրաքանչյուր անհատի վրա ես նայում եմ իբրև մի ինդիվիդիումի վրա *(Նար., II, 359)*։ Տիկին, թեև չգիտեմ, ճշմարիտ, թե ինչով եմ արժանացել այդ քաղցր պատվին *(Նույն տեղում, 250)*։ Լավ, իմ քաջ թառլան, կպատմեմ քո հոր մասին *(Թ., III, 216)*։ Անտարակույս, նրանք վեր էին առել քաղաքից *(Բեժ, VII, 305)*։ Թշվառ կնոջ վերջին վայրկյաններն էին, անշուշտ, բայց և այնպես գրում եմ *(ԱԻԵ, 254)*։

Միջանկյալ բառեր են դառնում շաղկապներն ու շաղկապային բառերը. այդպիսի բառերից են՝ մանավանդ, թեկուզ, սակայն, ուրեմն, նաև, այսուհանդերձ, այնուհանդերձ, հետևապես *և այլն. օրինակ՝* Հազս, մանավանդ, հանգիստ չէր տալիս ինձ *(Նույն տեղում, 150)*։ Այս էլ իմ հայացքս է, ուրեմն, և իմ համոզմունքը *(Նար., II, 354)*։ Վերջերում, սակայն, գտա փառոսի մոտերքը կառուցված մի կես գետնափոր հյուղ *(Փափ., 415)*։ Նա հաճախ գտնում էր, նաև, ազատ ժամեր *(Մուր., IV, 334)*։ Այժմ արդեն պտրում եմ նախկին մարդն ու նրա անխարդախ և, թեկուզ, կիսով չափ վայրենի ընկերակցությունը *(Նույնը, II, 8)*։ Այնուամենայնիվ, դժվար էր ընտրություն կատարել *(ԲՎԻԳԵ, 295)*։ Ատեստատ չունե՞ս, ուրեմն *(բնագրում ուրեմն) (Նույն տեղում, 82)*։ Դյուրացնում էր տոկալը և, հետևապես, թեթևացնում ցավը *(Մուր., IV, 331)*։ Ինքն, այնուհանդերձ, չպետք է զիջեր *(Սեկոյան)*։

Իբրև միջանկյալ բառեր են կիրառվում նաև ցուցական, հարցական, պատասխանական բառեր, որպիսիք են՝ ահա, ահավասիկ.

այո, ոչ, չէ *և այլն*։ Ես էլ, անա, աշխատում եմ մոռանալ իմ վիշտը այս զբաղմունքով *(Մուր., IV, 337)*։ Արամիկին էլ տանենք, չէ՞ *(Նար., II, 224)*։ Բայց, անա, թող գան և ազատեն ինձ *(Քրետ., IX, 149)*։ Ո՛չ, պետք էր ցույց տալ։ Ո՛չ, տանել չէր կարելի այլևս *(Փափ., 102)*։ Այո՛, պետք էր, որ բշնամու առջև այս տղաները... պառկած մնան *(Շաթիրյան)*։ Օ, ո՛չ, շնորհակալ եմ քեզանից, արքա *(ՆՁԵ, 16)*։ Ո՛հ, չէ, սիրուն, էլ ոչ մի սեր նար չի անի իմ սրտին *(Թումանյան)*։ Ո՛չ, քեզ համար այսպիսի երգ երգելու չեմ ես երբեք *(Նույնը)*։ Այո, գիտեմ,— ընդմիջեց Բրեյը,— երիտասարդ ժամանակս կարդացել եմ *(ԱԻԵ, 246)*։ Այո՛, մնում է... էլեկտրավարի ամենակարևոր տեխնիկական հարցերից մեկը *(ԲՎԻԳԵ, 201)*։ Ո՛չ, առավել ևս այժմ ոչ մի բան չպետք է խանգարի իրեն *(Նույն տեղում)*։

Միջանկյալ բառեր են դառնում արդի հայերենի մի քանի դիմավոր բայերի մեկ կամ երկու դեմքերով գործածությունները տարբեր եղանակներով ու ժամանակներով։ Այս բայերի մի մասը միջանկյալ գործածությամբ մասամբ կորցնում են նյութական նշանակությունը և հանդես են գալիս իբրև եղանակավորիչ։ Այդպիսի բայերից են՝ ասենք, կարծես, երևում է, տեսնես, գիտես, երևակայիր, հավատա, ասես *և այլն*։ Որվակն այդ սիրուն ձեռքում, կարծես, հետզհետե ավելի էր ուժ ստանում *(Մուր., IV, 328)*։ Իսկ այդ օրից հետո, կհավատաս, առաջվա այդ անբարոյական տղան ուղղվեց *(Նար., II, 232)*։ Խոսքս, կրկնում եմ, բացառապես վերաբերում է կնոջը *(Նույն տեղում, 359)*։ Պարտքն էլ, գիտես, խո ձնագնդի նման գլորվել էր *(Փափ., 101)*։ Վույ, քոռանամ, մի՛ խոսեցնեք *(Թումանյան)*, Միայն մայրը... գիտես էլի, մայր է *(Թումանյան, «Գիքոր»)*։ Գուցե այս էլ նյարդային հիվանդության քմահաճույք է, ինչպես բժիշկս է նկատում, չգիտեմ, միայն ինձ թվում է... *(Մուր., II, 8)*։ Կարծես, միտքս գյուտ արավ այս նեղ վիճակից ելնելու համար *(ԱԻԵ, 254)*։ Նա կարող է հեռվից, շատ հեռվից տեսնել, թե, ասենք, Գորկու փողոցում... ով ինչ նորաձև հագուստով է *(ԲՎԻԳԵ, 203)*։ Եկ գնանք, խնդրեմ *(Շեքս., I, 86)*։

2. ՄԻՋԱՆԿՅԱԼ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես որ բազմազան են միջանկյալ բառերը, այդպես են և միջանկյալ բառակապակցությունները։ Դրանք իրար հետ կապակցվում են իբրև տարբեր խոսքի մասեր այլևայլ քերականական հարաբերություններով, կապակցություն յուրաքանչյուր անդամը ար-

տահայտում է այնպիսի պաշտոններ, ինչպիսիք դրսևորվում են ամբողջական նախադասության մեջ. օրինակ՝ Ինչո՞ւ դուք չեք ուզում լսել այն, ինչ որ, իմ կարծիքով, չեք գտնի այդ նամակում *(Նար., II, 360)*։ Եվ, սոսկալի բան, կայծակի նման կիզիչ ու արագ մի ցնցում անցավ մարմնով *(Փափ., 416)*։ Ինձ ընկերակցում է Պետո անունով մի գյուղացի, որ, միևնույն ժամանակ, իմ առաջնորդն է *(Մուր., II, 9)*։ Դե լավ, դու կաց, ներս գնամ ես *(Թումանյան)*։ Ռովճետն նա, ինչպես միշտ, նստած էր հանդարտ *(Նար., II, 254)*։ Աստծու սիրուն, մեկ ճար արեք *(ԱԻԵ, 254)*։ Հա, ես իմ հոգին, խելոք բան ասիր *(Շեքս., I, 95)*։ Միայն, ճիշտն ասած, իր ողբ ու կոծի այն հոխորտանքը ինձ խիստ բորբոքեց *(Նույն տեղում, 103)*։ Սակայն հարցիս վրա ծիծաղում եմ, քո արևը *(ԱԻԵ, 177)*։ *Այսպիսով, ինչպես երևում է օրինակներից, միջանկյալ բառակապակցություններ են կազմում մակբայներն ու բայերը, տարբեր հոլովներով գոյականները միմյանց հետ, կապերն ու այլ խոսքի մասեր, մինչև իսկ ձայնարկություններ, շաղկապներ։*

Ա. ՄԻՋԱՆԿՅԱԼ ԲԱՌԵՐԻ ՈՒ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ

Միջանկյալ բառերն ու բառակապակցությունները, արտահայտելով խոսողի վերաբերմունքը խոսքի նկատմամբ, ըստ իրենց առումների բազմազան են՝ թե իմաստով և թե ոճաբանական արժեքով։ Միջանկյալ բառերն ու բառակապակցություններն ամենից առաջ շատ ցայտուն կերպով դրսևորում են խոսողի հավաստի լինելը և երկբայությունը իր խոսքի նկատմամբ, այսինքն՝ թե խոսողը իր խոսքը համարում է իրողությո՞ւն, թե ենթադրություն, հավատո՞ւմ է ասվածին, թե ոչ։ Խոսքի նկատմամբ խոսողի հավաստիությունն ու երկբայությունը արտահայտում են հետևյալ միջանկյալ բառերն ու բառակապակցությունները՝ հավանորեն, անկասկած, ըստ երևույթին, ամենայն հավանականությամբ, ինքնըստինքյան, իսկապես, ճիշտն ասած, իրավ, ասես թե, երևի, իբր թե, իրոք, կարծես, ասես, արդարև, հարկավ, անպատճառ, անշուշտ, անտարակույս, կարծես թե, թերևս *և այլն. օրինակ՝* Այդ միջոցին, իսկապես, մենք գտնվում էինք ամենաբարձր լեռներից մեկի լանջին *(Մուր., II, 17)*։ Ահա այս բոլորի պատճառով է, որ այսօր հայ մամուլը կամ, ավելի ճիշտն ասած, հայ ռեցենզիստները, նույնիսկ մի քանիսները նրանցից, որ գրում են ռուս լրագրերում *(Շիրվ., IX, 436)*։ Այդ ժամանակ, կար–

ծեմ, հազիվ չորս-հինգ տարեկան կլինեի *(ՊՊԵԺ, III, 7)*։ Խոսքը ետ կառներ, անշուշտ, վերոգրյալ տողերի հորինող չարախնդաց քանասատեղծը *(Նույն տեղում, 21)*։ Տվի, իհարկե, տվի *(Նար., II, 446)*։ Արշավանքն ավելի սաստկացել է այժմ, երբ ես սկսել եմ աշխատակցել «Մշակ»-ում և, անկասկած, նա քանի գնա, այնքան ավելի պիտի կատաղի *(Շիրվ., IX, 430)*։ Նայում են գայլի նման և, ըստ երևույթին, բոլորովին չեմ հասկանում *(Գորկի, V, 578)*։ Մի քանի, կարծեմ հենց երկու հարյուր ռուբլի, տոկոսով առել էին *(Փափ., 101)*։ Իհարկե, մարդիկ բաժանվում են աշխատավորների և ուրիշների աշխատանքով ապրողների *(Գորկի, X, 197)*։

Միջանկյալ բառերն ու բառակապակցությունները արտահայտում են գործողության սովորական լինելը, այսինքն՝ որ կատարվող գործողությունը տեղի է ունենում ըստ սովորության, հաճախ է պատահում, կրկնվում է կամ մշտական է. այս կարգի միջանկյալ բառեր ու բառակապակցություններ են՝ ըստ սովորության, ինչպես միշտ *և այլն։* Ես էլ, որ, ըստ սովորության, հետս փոխնորդ ունեի, հազա այն հենց այնտեղ *(Մուր., IV, 430)*։ Իմ հայրենակից Ռուդմետովը փոքրիկ դիակի կանաչած փորը բացելով, ինչպես միշտ և ավելի քան միշտ, անփութորեն փնթփնթալով ասում է *(Գորկի, X, 122)*։ Ինչպես միշտ, այս անգամ էլ նա իրեն լավ չէր պահում սեղանի շուրջը: Ըստ հին սովորության, նա այս անգամ էլ շարունակ միևնույն բանն էր կրկնում:

Միջանկյալ բառերն ու բառակապակցությունները արտահայտում են նաև խոսողի միջամտություն իր խոսքի նկատմամբ, այսինքն՝ խոսողը գնահատում, արժեքավորում, իր կարծիքն է հայտնում, հանդես է բերում ներքին ապրումներն ու տպավորությունները խոսքի նկատմամբ։ Այս կարգի բառերն արտահայտում են ուրախություն, զարմանք, բավականություն, գոհունակություն, սրտնեղություն, ցավակցություն, անբավականություն և այլն։ Նման միջանկյալ բառերից ու բառակապակցություններից հիշատակելի են՝ ի զարմանս, դժբախտաբար, հուրախություն, ցավոք սրտի, ի գոհունակություն, համոթ, զարմանալի բան, տարօրինակ բան *և այլն։* Բայց, ի մեծ զարմանս իմ, նա ամենևին չէր վիրավորվում *(Գորկի, X, 94)*։ Նա, շատ քիչ բացառությամբ, եղել է միշտ, և մանավանդ այժմ, ոչ այնքան արդարադատ *(Շիրվ., IX, 435)*։ Ոչ մի դիտողություն չարեց, այնտեղ, ճիշտն ասած, ասելու բան էլ չկար *(ԲՎԻԳԵ, 321)*։ Վույ, քոռանամ, մի խոսեցնեք. Մուկիկի պես

մարդը մեռավ *(Թումանյան, «Մուկիկի մահը»)*։ Վույ իմ աչքին, անխելք կկու, ինչպես իզուր խաբվել ես դու *(Նույնը, «Ձարի վերջը»)*։ Ես հոգնել, ձանձրացել եմ սովորական կյանքից, սովորական մարդկանցից, և, մանավանդ թե, սովորական բարեկամությունից *(Մուր., II, 8)*։ Աստծու սիրուն, մի խնայեք, էս մի ձմեռ չահեք պահեք *(Թումանյան, «Մոծակն ու մրջյունը»)*։ Гвардеец-ին դուր չես գալի, ի՞նչ ափսոսանք, ինչ վնաս *(ՌՊԵ, 87)*։ Այդ ի՛նչ զարմանք, որ հիմարը ուզե պատիվ իր անձին... *(Նույն տեղում, 86)*։

Միջանկյալ բառերն ու բառակապակցություններն արտահայտում են խոսողի վերաբերմունքը նաև խոսքի արտաքին ձևի նկատմամբ. այսինքն՝ ինչ ձևով է ասվում, էլ ինչպես կարելի է ասել, ամփոփվում է ասվածը, թե ընդարձակվում, պարզ է, թե խճողված և այլն։ Այս կարգի միջանկյալ բառեր ու բառակապակցություններ են՝ ըստ ձևի, ավելի պարզ, մի խոսքով, պարզ ասած, պարզապես, ավելի ճիշտ, պարզորեն, ուղղակի ասած, այլ կերպ, կարճ, բառացի, տառացի *և այլն*։ Ես ոչ մի քաղաքացիական և բարոյական օրենք չեմ ընդունում, բացի, այսպես ասած, բնական օրենքից *(Նար., II, 359)*։ Առաջ ես ապրում էի, այսպես ասած. պայքարի համար սպառազինվելով *(Գորկի, X, 199)*։ Եթե ես հանդիպեի ոչ այդ մարդուն, այլ մունդիրավոր մի այլ գազանի, որոշակի համոզմունքներով անձի, մի խոսքով, ոչ թե չինովնիկի, այլ թշնամու *(Նույն տեղում, 195)*։ Այդ խաղը շատ եմ սիրում, չնայելով որ, այս էլ պետք է ասած, դուռաչկի խաղալիս հիմարը միշտ ես եմ մնում *(Նար., II, 255)*։ Ավելի ճիշտ, այն չկա էլ, մարդն ամեն րոպե կարող է դժբախտ պատահարների ենթակա լինել *(ԲՎԻԳԵ, 229)*։

Միջանկյալ բառերը և բառակապակցությունները նշում են, ճշտում, սահմանափակում, բացահայտում են ասվածի միտքը և նրա մասերի մեջ գոյություն ունեցող փոխհարաբերությունը։ Այդպիսի միջանկյալ բառերի ու բառակապակցությունների կարգին են պատկանում՝ վերջապես, ի լրացում, մասամբ, օրինակ, գլխավորապես, ի միջի այլոց, ըստ որում, բացի դրանից, առաջին, երկրորդ, հետևապես, ընդհակառակը, այսպիսով, մի կողմից, այսպես ուրեմն, վերջին հաշվով, վերջիվերջո *և այլն*։ Սակայն, այսպես թե այնպես, նա մեզնից լավ գիտի *(Շաթիրյան, 515)*։ Իսկ մյուսները, որոնց մեջ և Վահան Սարյանը, բարկությունից ու զայրույթից կատաղում էին *(Մուր., II, 161)*։ Որով վարդապետը, թեև ակամայից, հանձն առավ Սարգսին էլ ինձ հետ վերցնելու *(ՊՊԵԺ, III, 394)*։ Փողը, մանավանդ այսպիսի տեղերում, տեր և իշխան է ամեն բանի

(Փափ., 99)։ Ի դեպ, ալրաղացի տեր մի հարուստ մարդ հինգ հարյուրից ավելի կողպեք էր հավաքել *(Գորկի, X, 198)*։ Վերջապես, ես ընդհանրապես գոհ եմ *(Նույն տեղում, 82)*։ Փոխանակ ինձանից հեռու մնալու, իբրև իր ուխտին հավատարիմ մեկը, ընդհակառակը, հետզհետե ավելի էր մոտենում *(Մուր., IV, 337)*։ Մի անգամ, օրինակ, նա ասաց ինձ *(Նույն տեղում, 337)*։ Նախ որ խառնուրդը եվրոպական խառնուրդ է իր բոլոր հարմարություններով, երկրորդ՝ ինքը, որպես իսկական եվրոպացի, ճաշում է ժամը չորսին *(ՉԸԵ, 321)*։ Եղել է հերոսական պայքար, անպարտ ընդվզում, մի կողմից, իսկ մյուս կողմից, դառնություն, մղձավանջ, դեղին սարկություն *(Նույն տեղում, 307)*։ Վերջապես, ահա և հրապարակը, մի քանի քայլի վրա Մինիստրների Սովետի շենքն էր *(ԲՎԻԳԵ, 317)*։ Նա ստեղծված է մի ուրիշ էակի շնչով ջերմանալու, նրա ազդեցությամբ բաբախելու, նրա զգվանքով զորանալու և, ի վերջո, նրա էության մեջ լուծվելու *(Մուր., II, 145)*։

Միջանկյալ բառեր ու բառակապակցություններ են դառնում երկրորդ դեմքով եզակի կամ հոգնակի բայերը, որոնք արտահայտում են դիմում խոսակցին, ընթերցողին՝ ուշադրություն հրավիրելու, հրահրելու հետաքրքրություն խոսքի նկատմամբ։ Այսպիսի բայերն արդարև միջանկյալ նախադասություններ են, մանավանդ երբ հանդես են գալիս ընդարձակ բառակապակցությամբ։ Սակայն պետք է նշել նաև, որ հենց այդ բայերը գերազանցապես կորցրել են իրենց սովորական հատկանիշները և դարձել ձևական միջանկյալ բառեր։ Համեմատիր՝ Եվ, հավատացեք, դա նուրբ կրթված եվրոպացու սովորական համեստություն չէր *(Շիրվ., IX, 460)*։ Շատ անգամ, հավատացիր ինձ, հիվանդիս հետ զանազան բաների մասին քաղցր մասլահաթ անելով ավելի շուտ եմ հասկանում նրա հիվանդությունը *(Նար., II, 236)*։ Ես խոսում եմ, տես, հետն իմ սիրածի *(ՉԸ, 559)*։ Իմացեք. ձեր ոչ մի ածականը չի մոռանա գոյականին կպցնելու *(Փափ., 100)*։ Իսկ ինձ թվում է, որ ռևոլյուցիոներ լինելու համար դուք բավականաչափ չար չեք և, ներեցեք ինձ, չափից ավելի խելացի եք *(Գորկի, X, 196)*։

3. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջանկյալ կոչվում են այնպիսի նախադասությունները, որոնք շարահյուսորեն չեն կապվում տվյալ խոսքի հիմնական նախադասության հետ, այլ առանձնանալով նրանից՝ կատարում են

ճիշտ միևնույն պաշտոնները, ինչ որ միջանկյալ բառերն ու բառակապակցությունները։ Ինչպես տեսանք, այս վերջինները դրսևորում են խոսքի հավաստի կամ երկբայական լինելը, նախադասության ձևի ու իմաստի գնահատականը, նախադասությունների փոխհարաբերությունները, դիմում, զանազան հուզարտահայտչական երանգներ և այլն։ Միջանկյալ նախադասություններն այդ ամենն արտահայտում են շատ ավելի որոշակի. ստորոգումը հնարավորություն է ընձեռում այդ ամենը հստակ ու ձևավորված ասելու։ Համեմատիր հետևյալ մի քանի օրինակները՝ Ահա ինչու, եթե չասեմ գրեթե միշտ, գոնե մեծ մասամբ տեսնում ես, մի լրագրում գովված խաղը այս կամ այն դերասանի, մյուսում պարսավվում է (Շիրվ., IX, 435)։ Այստեղ միջանկյալ երկու նախադասությամբ հեղինակը ճշտում է կատարվող գործողության ժամանակի չափն ու սահմանը՝ միաժամանակ խոսելով ընթերցողի հետ։ Կամ հետևյալ օրինակը. Դարձյալ, վերջումը կիմանանք պատճառը, այստեղ միայն այսքանն ասենք, որ մեր Անթառամի կյանքի մեջ մեծ փոփոխություն եղավ (ՊՊԵԺ, III, 306)։ Այս վերջին օրինակում միջանկյալ վերջումը կիմանանք պատճառը նախադասությամբ հեղինակը նախապատրաստում է ընթերցողին պատումի հետագա ընթացքին և հայտնում է, որ պատճառաբանությունը տրվելու է վերջում։

Հայերենում մի շարք դիմավոր բայեր, լինեն դրանք հին կամ նոր, կամ արդեն կորցրել են իրենց բայական նշանակությունը և կամ կիսով չափ են պահպանվել իբրև այդպիսիք. դրանք իբրև միջանկյալներ այլևս նախադասություն չեն դառնում, այսինքն՝ ստորոգում չեն արտահայտում, այլ դիտվում են իբրև միջանկյալ բառեր, մանավանդ երբ առանձին են հանդես գալիս և ոչ թե կապակցված ամբողջությամբ։ Այդպիսի բայերից հիշենք՝ դիցուք, համարյա, երևի, տեսնես, նայես, կարծես, ասես և այլն։ Սրանցից առաջին երեքը բոլորովին կորցրել են իրենց բայական նշանակությունը և այժմ մակբայ են կամ եղանակավորիչ բառեր, իսկ վերջինները մեր լեզվի ներկայիս խոնարհման համակարգում կենդանի են, սակայն միջանկյալ կիրառությամբ այլևս ստորոգում չեն արտահայտում, ուստի այդպիսի բայերն այս դեպքում դասվում են միջանկյալ բառերի շարքին։

Մենք այս դեպքում միջանկյալ նախադասություններ ենք համարում ստորոգում ունեցող ավելի ընդարձակ ծավալի կապակցությունները։

Ըստ այդմ միջանկյալ նախադասություններ են համարվում՝

միջանկյալ գործածությամբ այնպիսի պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասությունները, որոնք ունեն ենթակա. օրինակ՝ Հաբեթ աղան, ո՞վ գիտե ինչու, երևի Սողոմոնը շատ խոնարհ ողջույններով չէր հանդիպել նրան, թշնամացել էր *(Փափ., 101)*։ Գալդ բարի, աղախպորս տղա, այսպես էր նա միշտ կոչում ինձ *(ԱԻՆ, 128)*։ Այլևս համբերություն կմնա՞ր, ինքդ ասա, այլևս կարո՞ղ էի համբերել *(Նար., II, 371)*։ Ի՞նչ անեմ, սիրելիս, որքան էլ այդ կոպիտ խաղ լինի, մանավանդ երբ կինն էլ է մասնակցում խաղին, այնուամենայնիվ ուրիշ խաղ չեմ կարող խաղալ *(Նույն տեղում, 255)*։ Ասում են, և այդ բոլորը գիտեն, որ գետում խեղդվածները հավաքվում են կամուրջի տակ գտնվող ահռելի վիհերում *(ՉԸՆ, 301)*։ Ձեր այն լրջմիտ իմաստությունը, որով, գիտեմ ես, դուք օժտված եք *(Շեք., I, 308)*։ Գուցե այս էլ նյարդային հիվանդության քմահաճույք է, ինչպես բժիշկս է նկատում, չգիտեմ, միայն ինձ թվում է... *(Մուր., II, 8)*։ Բայց ես դեռ ունեմ ուրիշ դուստր էլ, որ վստահ եմ ես, բարի է և գթած *(Շեքս., I, 311)*։

Միջանկյալ նախադասություններ են համարվում նաև այնպիսիները, որոնց ենթական սովորաբար զեղչվում է, որովհետև կամ ստորոգյալն առաջին դեմքով է արտահայտվում և կամ երկրորդ դեմքով, ուստի անհրաժեշտ չի լինում ենթական կրկնել. օրինակ՝ Սակայն պատմական այդ հանգամանքը, կարծում ենք, այնքան էլ կարևոր չէ *(ՉԸՆ, 299)*։ Տները, ինչպես ասացի, Նաիրյան այդ քաղաքում ցածլիկ են *(Նույն տեղում, 300)*։ Ինչ պիտի աներ, ասացեք խնդրեմ, Նաիրյան այդ քաղաքում *(Նույն տեղում, 327)*։ Նա կընդլայնե, մտածում էի, լուսավորության ասպարեզը *(Մուր., II, 14)*։ Եվ դա, հույս ունիմ, քեզ կթելադրե երևակայել *(Շեքս., I, 88)*։ Մայրը, ինչպես շուտով իմացանք, այրի էր *(Շիրվ., V, 417)*։ Ինչպես տեսնում եք, նեղության մեջ գիտեր իրեն ազատելու ճարը գտնել *(Թ., III, 209)*։ Մարդիկ, հո գիտես, խելքով են գործում, ոչ թե դյութելով *(Շեքս., II, 154)*։ Մնամ, ինչպես գիտես, միշտ քո անձնվեր Համլետ *(Նույն տեղում, 87)*։

Միջանկյալ են դառնում իրենց բնույթով ու տիպով տարբեր միակազմ նախադասությունները, որոնք ամենից հաճախ են միջանկյալ գործածությամբ հանդես գալիս. օրինակ՝ Տեղի-անտեղի պատասխանում է դահլիճին, ինչպես երևում է, բոլորովին տարբեր տրամադրություններով տարված *(ՉԸՆ, 316)*։ Լավ կին է, պետք է ասել, զանազան գրքույկներ է տալիս *(Գորկի, V, 342)*։ Նա, ինչպես թվում էր ինձ, միշտ գալիս էր անձրևոտ, մառախլապատ կամ բուք

օրերին (*Նույնը, X, 138*)։ Նա, ինչպես երևում էր նրա քնած դեմքից, դեռ նոր էր դուրս եկել յուր քնարանից (*Ր., III, 23*)։ Որոնք ուրիշի նույն տեսակ իրավունքներից, եթե կարելի է այսպես ասել, մի տեսակ անջատ տարր են կազմում (*Նար., II, 353*)։ Ջանացի տալ նրա բնակիչների կենցաղը, կամ, ավելի լավ է ասել, կենցաղային կոլորիտը (*ՉԸԵ, 322*)։ Բայց արևը մայր մտնելուց հետո, ինչպես մարտին լինում է միշտ, եղանակը զգալի կերպով ցրտել էր (*Նար., II, 248*)։ Եվ սակայն, զարմանալի է, այդ ցավերը չէին թափանցում սիրտս (*Մուր., IV, 331*)։ Մարդիկ գործուղման են գնում, թե սանատորիա, միևնույն է, վերջում թևեր առած թռչում են տուն (*ԲՎԻԴԵ, 275*)։

Երբեմն միջանկյալ նախադասությունը իր ենթակայի կամ խնդրի հետ մի շարահյուսական կամ բառական ամբողջություն է կազմում. օրինակ՝ Դու մի ասա, դա իշխանի աղջիկն է լինում (*ՍՁ, V, 412*)։ Էստեղ թագավորն ու թագուհին վճռում են, ինչ ուզում է լինի, գտնեն պառավին (*Թ., III, 299*)։ Այս ամենը, ինչ ասել կուզե որ*, ժամանակավոր թեթև տպավորություն կարող էին ունենալ (*ՌՊԵ, 347*)։ Վայ, չկտրես, Աստված սիրես։ Եվ դու ասա, հոգիդ սիրես, եթե բարի չըլնենք էսպես (*Թումանյան*)։ Էն, ի՞նչ լինի, ի՞նչ չլինի, Զորավորից ինչքան հեռու, այնքան բարի (*ԱԻԵ, 162*)։

4. ՆԵՐԴՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խոսքի մեջ հաճախ որոշ նախադասություններ անջատվում են հիմնական շղթայից և առնվում են փակագծերի մեջ։ Այդպիսի նախադասությունները կողմնակի հաղորդում են պարունակում խոսքի մեջ շղթայակցված որևէ նախադասության կամ նրա անդամի մասին։ Փակագծերում առնվող հիշյալ նախադասությունները իրենց իմաստային փոխհարաբերությամբ կապակցվում են խոսքի հետ շղթայված որևէ նախադասության, սակայն հնչերանգային կողմով ավելի կամ պակաս չափով անջատվում են դրանից և եթե այդ կարգի նախադասությունները դուրս թողնենք, հիմնական նախադասության ներքին միասնությունը կամ երկու նախադասությունների կապակցական հարաբերությունը երբեք չի խախտվի. օրինակ՝ Եվ այդ երկաթե շղթան (նա ձեռքը տարավ դեպի հաստ շղթան, որից քարշ էր ընկած ահագին երկաթյա խաչը

* *Բնագրում կետադրությունը սխալ է՝* ինչ ասել կուզե, որ...

կրծքի վրա) միշտ իմ պարանոցին կրած պիտի ունենամ *(Րաֆֆի)*։ Ինքներդ հասկացեք,—ասում էր նա ինձ (ի միջի այլոց՝ նա մինչև վերջն էլ ինձ հետ «դու»-ով էր խոսում, չնայած որ մեր առաջին-երկրորդ հանդիպումից ես արդեն անցել էի «դու»-ի) ինքներդ պատկերացրեք *(ԵԶԵ, 443)*։ Համփիկ Լալայանի շոֆերը որոշել էր աշխատանքից անմիջապես հետո տուն գալ (այդպես էր խոստացել կնոջը) *(ԲՎԻԳԵ, 294)*։

Այն նախադասությունները, որոնք խոսքի հիմնական շղթայից անջատվում են հնչերանգային կապերով, բայց խոսքի մեջ մտնող որևէ նախադասության համար պարունակում են կողմնակի հաղորդում կամ որևէ առնչությամբ բացահայտում են նրան վերաբերող այլևայլ հանգամանքներ, կոչվում են ներդրյալ նախադասություններ։

Ներդրյալ նախադասությունները հայերենում անջատվում են փակագծերով, բայց սակավ դեպքերում դրանք զատվում են նաև գծերով. օրինակ՝ Մի անգամ—պատահեց այս հոգեհանգստից ամիս ու կես անցած—Մազդալինան ննջարանում կրտսեր երեխայի համար շապիկ էր կարում *(Շիրվ., V, 303)*։ Համեմատիր նաև՝ Մի գիշեր,—մի քամի գիշեր էր,—սարերից անսանձ փչում էր քամին, դուռն ու պատուհանները ծեծում ու ծեծկում *(ԱԻԵ, 276)*։ Բաղամյանին չսիրել չես կարող, քանի որ մի անգամ արդեն սիրել ես,—այդպես է երևում,—իսկ ամուսնուդ դավաճանել առավել ևս չես կարող *(Նար., III, 152)*։

Ներդրյալ նախադասությունները կարող են լինել խոսքի շղթայի մեջ մտնող հիմնական նախադասության այս կամ այն անդամի վերաբերյալ որևէ լրացուցիչ բացատրություն կամ ավելացում. օրինակ՝ Իսկույն հեռագրեցի հավատարմատարիս, որ ծախի վերջին կալվածքս (այդ կալվածքը պահում էի սև օրվա համար) և փողն ուղարկի այնտեղ *(Նար., III, 556)*։ Բեյզադեն (Չէ՞ որ նա այսպես էր կոչվում...) կառներ բացված լավաշը *(ԳՄԵ, 340)*։ Մեկ էլ տեսար Շառատը մեկնվեց գետնին (ես այդպես էի վարժեցրել նրան), և ահա քեզ համար դիրքը պատրաստ է *(ՎԱՐՊ, 90)*։ Ապա... գնալիս պատահել է ավելի մեծ, ավելի համեղ պատառի (սա ճարպ քսած հաց էր), չի դիմացել և բերանն է առել *(Նույն տեղում, 220)*։ Մի կռանս պես հաստ (այն ժամանակվա կռանս պես եմ ասում) մի գազաչափ խնձորենի փայտի երկու ծայրը ծակել մեջն անց են կացրել մի հաստ ղազիլ... սամոտեն *(ՊՊԵԺ, III, 10)*։ Ռուսական

ծայրամասում (այդպես էր կոչվում ռուսների արվարձանը) նա հանդիպեց մի մարդու *(ԱԲԵ, 646)*։

Ներդրյալ նախադասությունները ճշտում են բուն նախադասության հետ առնչվող որոշ հանգամանքներ ու պարագաներ. օրինակ՝ Նա մատը վերին շուրթին դրած (այս նրա հատուկ սովորույթն է) նայում է դեպի բակը *(ՍՋՄԿՊ, 254)*։ Եվ որովհետև այդ օրը Պանինը անտառ չպիտի գար (նա լսել էր, որ անտառապահը հիվանդ է), Ավին գերադաս համարեց մի շալակ ցախ տանել տուն *(ԱԲԵ, 5)*։ Բայց այնպիսի բնակարան, ինչպիսին որ մերն էր (ես կենում էի Գեղարվեստից ճեմարանի աշակերտի հետ, անունը Հովհաննես, ազգով հայ), կասկածելի է *(ՌՊԵ, 316)*։ Մարքան Մոմճյանի սենյակում նստած բացատրություն էր պահանջում նրանից յուր գործած աններելի հանցանքի համար (տիկինը, առհասարակ, իրեն խաբելը աններելի հանցանք էր համարում) *(Մուր., II, 359)*։

Ներդրյալ նախադասությունները դառնում են որոշ երևույթների հիմնավորում ու պատճառաբանություն. օրինակ՝ Եվ Աննան նայեց Ջազունյանին, կարծելով, թե նա կպատասխանի իրեն (նա այդ խոսակցությունը բաց արեց իսկապես նրա համար, որ Ջազունյանին խոսեցնել տա...) *(Նար, II, 315)*։ Միայն թե դու շիրմիս ճամփան հիշիր (Ինձ թվում է, որ շիրիմում էլ ես կզգամ) *(Տ., I, 424)*։ Եկավ, չգիտես ինչու, եղբոր գլխին թաթով բամփեց (երևի նախատում էր, թե դա ինչ է, որ մենակ չես կարողանում տանել) *(ՎԱՈՊ, 66)*։ Գլուխս դուրս հանեցի ջրից, խուճապահար ղլղլացրի, բլդբլդացրի (բերանս ջուր էր լցվում) և նորից պոկ եկա *(Նույն տեղում, 77)*։ Օդում մի տեսակ ձայն է հանում՝ «ճո՜ւռռ... ճո՜ւռռ... ճո՜ւռռ...», երևի այդ է պատճառը, որ Արարատյան դաշտում այդ թռչունին ճոլոն են անվանում *(Նույն տեղում, 180)*։

Ներդրյալ նախադասությունները երբեմն պարզապես թարգմանություններ են մի որևէ օտար լեզվից և կամ դժվար հասկանալի նախադասության կամ բառի մեկնություն. օրինակ՝ Ուզում էի, որ անունը, կրակոտ աչքերի համար, Հրաչյա լիներ, բայց բանից դուրս եկավ, որ Քալի էր (վրացերեն քալի նշանակում է աղջիկ) *(Նար., II, 552)*։ Կարծես մեր «դութին» (սայլն էր ակնարկում) ուզում է էլի պար գա *(Փափ., 101)*։ Նա, վազմի, պեյ (առ, խմիր)... քո կենացը Մարտիրոս ամի *(Փափ., 127)*։

Ներդրյալ նախադասություններն արտահայտում են գրողի գնահատականը, ցուցմունքն իր խոսքի արտաքին ձևական և ներքին իմաստային առանձնահատկությունների վերաբերյալ. օրինակ՝

306—29

Նա ինքը իր խելքով, իր աշխատանքով (արդար, թե անարդար ճանապարհով, այդ ջոկ բան է) կարողացել է միլիոնի տեր լինելու *(ՌՊԵ, 445)։* Ո՛չ, ես (թեև ամոթ է խոստովանելը) շատ սովորական կերպով սիրել էի նրա գեղեցկակազմ, շնորհալի արտաքինը *(Նույն տեղում, 436)։* Դուք (Սառան առանձնապես շեշտեց այս «դուքը») այս րոպեիս հարցրիք՝ կարդացել եմ այս գիրքը *(Նար., II, 438)։* Այ էս գորտի անունը (ցույց տվավ առջևս փռվածին) Արտաշես ա դրել *(Փափ., 204)։*

Ներդրյալ նախադասություններն արտահայտում են հակադրություն, համեմատություն. օրինակ՝ Օղերը տեսնելուն պես նրա աչքերը փայլեցին, չգիտեմ հիացմունքի՞ց թե նախանձից: (Սպիտակահեր ամուսնու մոտ այդ կինը ավելի ևս ջահել երևաց իմ աչքին) *(Նար., II, 442)։* Ամառային արևը կկանգներ ուղիղ զենիթում (երբ ես դեռ փոքր էի, արևը մեծ, շատ մեծ էր) *(ԳՄԵ, 318)։*

Ներդրյալ նախադասությունները շարադասվում են կամ հիմնական նախադասության վերջում և կամ միջում. սկզբում են լինում դրամատիկ գործերի մեջ։ Հիմնականում նախադասության հետ ավելի սերտ առնչվում են միջադաս ներդրյալները, իսկ վերջադասները հաճախ վերջակետով բաժանվում են և դառնում հեռավոր ակնարկներ, լրացուցիչ բացատրություններ հիմնական նախադասության կամ նրա որևէ անդամի մասին, և դրանց միջև ձևական կապը բոլորովին խզվում է. օրինակ՝ Նա մի օր տասը տեղից կարկատած մաշիկները ոտքը գցեց, մրգերով լիքը խուրջինը ուսեց և ոտքով ճանապարհ ընկավ դեպի էջմիածին՝ այն ժամանակվա ամբողջ գիտության տաճարը:

(Հայրս իբրև արհեստավոր յուր կյանքումը տրեխ չէր հագնում) *(ՊՊԵԺ, III, 29)։ Պռոշյանից վերցրած այս ներդրյալ նախադասությունը մինչև անգամ սկսվում է նոր պարբերությունով և ակնարկություն է մաշիկ հագնելուն, որ ընկած է նախադասության սկըզբում։*

Ներդրյալները շատ ավելի սերտ են առնչվում պարզ նախադասության հետ, երբ շարադասվում են այս վերջինիս մեջ։ Համեմատիր հետևյալ օրինակները. Մի օր էլ (դա թուխս նստելու երեսուներորդ օրն էր) թռչնային բերկրանքով նա իր տակ թույլ զարկեր լսեց *(ՎԱՈՊ, 100)։* Ռաբբի Շիմոնի (այսպես էր կոչում իրեն քավոր Պետրոսը) ցավալի պատմությունները ոչ միայն գրավեցին հարուստ սեղանավորի սիրտը... (Րաֆֆի): Սերգեյ Եգորիչը յուր քրքրված մուշտակի մեջ կոլոլված և կանաչագույն (մի ժամանակ սև գույն

ունէր) շարդված ցիլինդրը ականջների վրա ծալած, սկսեց դիմել դեպի զալավինսկի պրոսպեկտը *(Րաֆֆի)*։ Ինչպես պետական պաշտոնյայի (պետական դպրոցի ուսուցիչ էր ախր) ձյոխվեն իր վրա ձեռք բարձրացնել չէր կարող *(Փափ., 141)*։

Ներդրյալ նախադասությունները շարադասվում են նաև պարզ նախադասության վերջում. օրինակ՝ Առաջին բախելուն նրա դուռն իսկույն բացվեց: (Պետք է ասենք, որ Կիրակոս Պետրովիչի դուռը բախվում էր ոչ զանգակով, այլ ուղղակի դրան վրա կախված երկաթյա ճաստ մուրճով) *(ՊՊԵժ, III, 344)*։ Նրանց պատուհանները նայում էին ուղիղ մայրիկանց տան դրսի բակի վրա (կար նաև ներսի բակ) *(ԳՄԵ, 354)*։ Եվան դեպի ինձ է ճակված (այդ ես էլ եմ նկատում. պարզ խոսելը լավ է) *(Նար., III, 450)*։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.— Նախադասության վերջում շարադասվող ներդրյալները երբեմն վերջակետով անջատվում, մեկուսանում և մինչև անգամ առանձին պարբերությամբ են սկսվում, երբ կողմնակի հաղորդում են և բնագրի որևէ բառի չեն վերաբերում. օրինակ՝ Ուրեմն ոչ միայն Վահան Տերյանը մարդ է, այլև զանվում է Երևանում, ոչ միայն զանվում է Երևանում, այլև դասախոսելու է... (Երբ ես փոքր էի, իմ կարծիքը շատ մեծ էր գրողների մասին) *(ԳՄԵ, 486)*։

Ներդրյալները շարադասվում են նաև որևէ բարդ նախադասության երկու մասերի միջև, երբ վերաբերում են տվյալ բարդ նախադասության առաջին մասին. օրինակ՝ Դու կամենում ես նոր երգեր լսել (Անկատար մնաց իմ խոստումը ինձ), Տխուր խոսքերից ճոզնել եմ ես էլ *(Տ., I, 429)*։ Շահյանը դարձյալ դուրս էր եկել այն մտադրությամբ (ասենք նա ուրիշ մտադրություն չուներ), որ հանդիպեր Մարությաններին *(Նար., III, 268)*։ Դես դեն նայեց (հո ոչ ոք չտեսա՞վ) ու նորից գնաց դեպի դեզերը *(ՎԱՈՊ, 117)*։ Նա շտապեց դեպի Թիֆլիս ոչ թե որդիական սիրուց և պարտաճանաչությունից դրդված (նրա մեջ վաղուց էին մեռած որդիական զգացմունքները), այլ նրա համար, որ ստանա հոր ահագին ժառանգությունը *(Նար., II, 16)*։

Ինչպես ասվեց, ներդրյալ նախադասությունները նախադասության սկզբում են լինում դրամատիկ գործերի մեջ։ Մինչև գործող անձի խոսելը հաճախ հեղինակը որոշ ցուցում է տալիս նրա կեցվածքի, շարժումների, ձայնի և այլ պարագաների մասին. օրինակ՝ Մարգարիտ (Վշտացած, բաց է թողնում նրա ձեռը) Շատ գեղեցիկ,

չեմ հարցնիլ *(ՇԵԺ, VI, 246)*։ Կարինյան. (Սեղանի վրայից վերցրել է հաշվետետրը) Ես ուզում էի ձեզ հիշեցնել... *(Նույն տեղում, 291)*։

Ներդրյալ նախադասությունները բուն նախադասության հետ ունեցած իրենց շարահյուսական կապով, կամ, ավելի ճիշտ, մեկուսացման աստիճանով տարբեր են լինում։ Այս աստիճանավորումը կախված է ներդրյալ նախադասության ձևերից։ Ըստ այսմ դրանք բաժանվում են երկու խմբի, մի մասը սկսվում է առանց որևէ շաղկապի ու հարաբերական բառերի, իսկ մյուս մասը՝ շաղկապներով ու հարաբերական բառերով։ Առաջին խմբի առկայության դեպքում շարահյուսական կապը խիստ բացակայում է։ Համեմատիր Եկա բռնեցի այնպիսի մի սենյակ, որ համ հեռու էր ուսումնարանից, համ սարսափելի աղմկալի տեղ (բակը լիքն էր երեխաներով), համ էլ ոչ թեյ և ոչ ճաշ խոստացան *(Նար., 547)*։ Նրան կոչում էին Դաբաղյան: (Հայրը դաբաղխանայում դաբաղի, այսինքն՝ կաշեգործի բանվոր էր) *(Րաֆֆի)*։

Երբ ներդրյալները սկսվում են որևէ շաղկապով կամ հարաբերական բառով, թվում է, թե շարահյուսական կապը առկա է բուն նախադասության և ներդրյալի միջև. սակայն այստեղ էլ որոշ աստիճաններ կան. ամենից առաջ մեծ մասամբ հիմնական նախադասության մեջ հարաբերյալ բառերը բացակայում են, իսկ այս բառերը որոշ անկախություն են ստեղծում. բացի այդ՝ ինչ էլ լինի, ներդրյալը փակագծերի մեջ առնվելով ձեռք է բերում հնչերանգային և շարահյուսական ինքնուրույնություն, այսինքն՝ փաստորեն մեկուսանում է. օրինակ՝ Արդեն որոշել են մեր քաղաքում բանալ հայոց օրիորդական դպրոց (որ առաջին փորձն էր) *(Մուր., II, 57)*։ Մի հաց էլ տալիս է, թե այս էլ կտանես հետդ ման կածես, երեկոյան էլի հետդ կբերես, որ ես ուտեմ: (Որովհետև հանդումը ման ածած հացը խիստ համով է լինում, ուզում է, որ այն համով հացն ինքն ուտի) *(ՂԱՀ, 12)*։ Արտաքին և մանր-մունր բաներում մեջ մեծահոգի ձևանալը (որով շատ խաբվում են հասարակ մահկանացուները) մեր, այսինքն՝ Ռուսաստանի մեծատուներու տարիներով սերտած աշխարհածանոթությունն է *(Նույն տեղում, 394)*։ Ես գիտեմ, որ շըրջապատի եղեգների մեջ ինձանից բացի ուրիշ որսորդներ ևս կան թաքնված. աղվեսը, շնագայլը, վայրի կատուն (որին իր մեծության պատճառով եղեգնուտի լուսան են կոչում) *(ՎԱՈՊ, 237)*։

Առանց շաղկապների կամ հարաբերական բառերի սկսվող ներդրյալ նախադասությունները կարող են պատկանել նախադասության բոլոր տեսակներին, այսինքն լինել՝ պարզ համառոտ,

պարզ ընդարձակ, բարդ համադասական, բարդ ստորադասական, միակազմ և նույնիսկ ամբողջական պարբերույթ։ Համեմատիր հետևյալ օրինակները. «Կույ տուր, կույ տուր, հայոց ազգի խմբագիր (այդպես էր անվանել նրա մոլեռանդ երկրպագու և նրա թերթի մշտական բաժանորդներից մեկը՝ կիսով չափ խելքից ցնդած գավառացի մի ազգասեր, և այդպես էլ նա անվանում էր իրեն իր բարեկամների շրջանում արտաքուստ հեգնորեն, բայց ներքուստ խորին համոզմունքով). կույ տուր և ուզես-չուզես՝ մարսիր *(Նար., I, 198)*։ Իր գրասեղանի առաջ նստած էր մյուս եղբայրս՝ Գրիգորը և կարդում էր «Դոն Կարլոսը» (այդ հիշում եմ նրանից, որ նա ներս մտավ և, խնդրելով, որ լսեմ, կարդաց ինձ մոտ մի գեղեցիկ կտոր Մարկիզ Պոզայի մի մենախոսությունից, որից հիացել էր. նա առհասարակ չափից դուրս սիրում էր Շիլլերը. խո գիտես, որ նա թունդ ռոմանտիկ է) *(Նար., II, 165)*։ Տատս այնքան էր սատանաների մասին բաներ պատմել (հին ժամանակ ինչ հիմարություն ասես չէին լցնում երեխաների գլուխը), որ ինձ ու ինձ ասացի *(ՎԱՈՊ, 211)*։

Նույն ձևով թեպետ, որովհետև, որ, քա‌ն‌ի‌ որում, եթե, երբ, թեև, որպեսզի *և այլ ստորադասական շաղկապներով սկսվող ներդրյալ նախադասությունները բուն նախադասության համար մի կողմնակի դիտողություն ու հաղորդում են հանդիսանում և հնչերանգային ու շարահյուսական առնչություններով չեն կապվում նրա հետ։ Շատ հաճախ եթե փորձենք փակագծերից դուրս բերել և կապել բուն նախադասության հետ իբրև այս վերջինիս համար լրացուցիչ երկրորդական նախադասություն, շարահյուսորեն և իմաստով չի կապվի, որովհետև գրողի կողմից ներդրյալ և բուն նախադասությունների քերականական հարաբերությունները նկատի չեն առնված. օրինակ՝* Ջազունյանի վրա սիրահարվելով (թեև նա այդ բանին ոչ մի կերպ չէր ուզում հավատալ) նա իրեն կատարելապես մենակ էր զգում *(Նար., II, 302)*։ Ես մինչև անգամ հավատացած էի, թե Գարեգինը սիրում է ինձ նույն չափով, որ չափով որ ես իրեն (թեպետ տանջող մտածմունքների ժամանակ հակառակն էի կարծում) *(Մուր., II, 89)*։ Ամառային արևը կկանգներ ուղիղ գենիթում (երբ ես փոքր էի, արևը մեծ, շատ մեծ էր) *(ԳՄՆ, 318)*։ Օշափը (որովհետև նրա միայն երկու գլուխներն էին մրափած) իր ճանկերից բաց չէր թողնում որսած զոհի արյունոտ մնացորդները *(ՂԱՀ, 144)*։ Բայց իբրև հեռատես հայ մտածելով, որ այդ հայտնությունը նյութականի կողմից ծանր կացության մեջ պիտի դնե իրեն (ըստ

ծրում օտար քաղաքում գտնվելով և ունեցածն արդեն սպառած լինելով, ապրում էր խմբագրության հաշվով), որոշեց մի առ ժամանակ լռել *(Մուր., II, 337)*։

Ներդրյալ նախադասությունները կարող են հանդես գալ համադասական և, *իսկ*, *բայց*, *կամ*, *սակայն*, *ու և այլ շաղկապներով. այսպիսի ներդրյալները սովորաբար ընկնում են բարդստորադասական նախադասության միջև և կողմնակի կերպով արտահայտում են հարակցական հարաբերություն՝ առանց ուժեղ շարահյուսական և հնչերանգային կապերի. օրինակ՝* Ծնում է բնությունը իրեն միայն հասկանալի նպատակով (կամ, գուցե, նա էլ ոչ մի նպատակ չունի), որի հետ մարդուն իրավունք չի տալիս գործ ունենալ *(Նար., III, 665)*։ Չե՞ն տնվի արդյոք պարոն Վարդանի նման մարդիկ (իսկ Վարդանն իմ աչքում անհելի հեղինակություն է), որ ինձ մեղադրեն կամ հանդիմանեն ավելացրած մասերի համար *(ՍՉՄԿՊ, 348)*։ Եվ երբ պապի պատմածին լսում է և գյուղի կոմսոմոլը (իսկ Մրոցում դեռ կոմսոմոլ չկա), գիրկապ անելով սերտում իր գիրքը՝ Ազատ եմ մենք, ազատ ենք,—նրա մի ականջը դարձյալ պապի պատմածին է *(ԱԲԵ, 83)*։ Այստեղ մի դուռ ծալեցին և կպցրին պատին, այնտեղ աղմուկով ետ քաշեցին երկաթե կապը (և բոլորը գիտեն, որ խանութն աղմուկով բացողը մեկնշնի Բախչին է), մի այլ տեղ զնգաց ցուցանակի թիթեղը *(Նույն տեղում, 325)*։ Երբ ժպտում էր (բայց ե՞րբ չէր ժպտում) նրա չքնաղ այտերի վրա մառնեհարներ էին գոյանում *(Նար., I, 120)*։

Ներդրյալ նախադասությունները սկսվում են նաև ինչ, ինչ որ, ինչպես *հարաբերական կամ հարցական բառերով ու* այս, այդ, այն, այդպես, այստեղ, սա, նա *և այլ ցուցականներով, որոնք այս ու այն չափով կապ են ստեղծում ներդրյալների և նախորդող բուն նախադասությունների միջև. օրինակ՝* Չգիտես ո՞ւմ շնորհիվ և ինչ միջոցով (այդ կառքն Ամերիկյանցը հնձանից ծածկեց և ամեն հարցնելուս աշխատում էր ծածկել) նա վերադարձավ Պոլսից *(ՊՊեժ, III, 557)*։ Արամյանն ու Քաշբերունին առավոտից պատրաստվել էին գնալ օրիորդ Սեպուհյանցի մոտ (Այդպես էր օրիորդ Աննայի ազգանունը) *(Րաֆֆի)*։ Ինչո՞ւ հանկարծ նրանից անցագիր էին ուզում. (ինչ որ չէին ուզել 20 տարուց ի վեր) դա զարմացրեց *(Փափ., 153)*։ Բրդոտ երեսով և կարմիր, ուռած քթով մի տղամարդ մի կնոջ (ինչպես հետո իմացա իր կնոջ) մազերից բռնած խելագարի նման քարշ էր տալիս *(Նար., II, 560)*։ Մատյանի առաջին մասում ունենք տրն-

տեսություններն էին և շատ «պաշտոնի» (ինչպես ասում էր Եփ-րեմը) մարդիկ *(ԱԲԵ, 473)*։

5. ՆԵՐԴՐՅԱԼ ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներդրյալ նախադասություններից զատ կան նաև ներդրյալ բառեր ու բառակապակցություններ։ Այս վերջինները ամբողջ նախադասության կամ նախադասության որևէ անդամի համար այլևայլ հավելյալ լրացումների դեր են կատարում և շարադասվում են անմիջապես այն բառից հետո, որի լրացումն են հանդիսանում։ Դրանք նույնպես շարահյուսորեն և հնչերանգային կապերով մի տեսակ մեկուսանում են հիմնական շղթայից և կողմնակի կերպով բացահայտում, մեկնաբանում կամ դառնում են պարագաներ, հատկացուցիչ, որևէ պականող անդամ և այլն։ Իբրև ամբողջ նախադասության լրացում շարադասվում են թե՛ առաջ և թե՛ հետո։

Ներդրյալ բառերն ու բառակապակցությունները դառնում են պարագաներ. օրինակ՝ Շատ անգամ էլ մի բերև խորոված էր անում կամ մի ձվածեղ էր պատրաստում (հնարկե ընկերաբար) *(Մուր., II, 204)*։ Երևում է, որ շորերը հանել է, գետն անցել (ճավանաբար սպանված բաղերը հավաքելու համար) ու մինչ հագնելը սառել. կպել է սառույցից *(ՎԱՈՊ, 237)*։

Ներդրյալ բառերն ու բառակապակցությունները լինում են բացահայտիչ. օրինակ՝ Քավոր Պետրոսը (այսինքն՝ խորասանցի ականավոր Մաշադի-Մուհամեդ-Ղուլի-աղան) բարի գիշեր ասելով հեռացավ *(Րաֆֆի)*։ Ձեր գալուց հետո Սաշան (բժիշկ եղբայրը) գնաց նրանց էլ նայեց *(Նար., II 585)*։

Ներդրյալ բառերն ու բառակապակցությունները շատ հաճախ որևէ անծանոթ, անհասկանալի թվացող բառի կամ արտահայտության բացատրություն, մեկնաբանություն կամ ուղղակի թարգմանություն են. օրինակ՝ Մի փնջակ կրնոն (ձիու կերածից ավելորդ թափված անպետք խոտ), մի բուռ դարման էիր տալիս *(ՊՊԵ, III, 288)*։ Պրոտոկոլ (արձանագրություն) պիտի գրեմ *(Փափ., 110)*։ Այդ օհը ոսկե պուպուշ (կատար) է ունեցել *(ԳՄԵ, 322)*։ Ահա վերջապես և Ուզուն դարան (երկայն ձոր) *(Մուր., II, 21)*։ Որին գյուղում ուզուն ախմախ (երկարահասակ տխմար) էին կոչում *(Փափ., 168)*։

Ներդրյալ բառերն ու բառակապակցությունները երբեմն հեղինակի թուցիկ դիտողությունն ու վերաբերմունքն են արտահայտում ասվածի հանդեպ, որ հաճախ պարունակում են հեգնանք, ծաղր,

վիշտ, ուրախություն և այլ արտահայտչական դրսևորումներ. օրինակ՝ Այժմ նա այլևս Մարկոսի որդի Սարգիս Հախվերդյան չէր, այլ Սերգեյ Մարկիչ Ակվերդով (իսկ և իսկ Ակվերդով և ոչ Ախվերդով) *(Շիրվ., V, 477)*։ Լուսաբացին նա բարձրացավ. կախաղան (Արևածագ, օ, արշալույս արյունոտ) *(Տ., I, 89)*։ Երեք եղբայրներ էին և ապրում էին միևնույն (մեր քաղաքի համեմատությամբ) ապարանքում *(ԳՄԵ, 333)*։ Երկու օրից հետո Վահան Սարյանը տիկին Մարթայի տնկեցն էր և (մոր ու աղջկա կարծիքով) Շուշանի փեսացուն *(Մուր., II, 285)*։

Ներդրյալ բառերն ու բառակապակցությունները կարող են լինել նախադասության մեջ չհիշատակված որևէ անդամ. օրինակ՝ Սկսում են էլ ավելի մեծ թափով, ճիչ ու ծղրտոցով (կանայք իհարկե) վայ տալ իրենց թանկագին կորուստը *(Նար., I, 223)*։ Հետո նստավ (դաշնամուրի առջև) գերմանացին ու սկսավ Ստրաուսի վալսերը ածելու *(ՌՊԵ, 388)*։

Ինչպես իրենց արտահայտած պաշտոններով ու դերով, այդպես էլ ձևական կառուցվածքով բազմազան են ներդրյալ բառակապակցությունները. սկսած սովորական որոշիչ ու որոշյալի, հատկացուցիչ և հատկացյալի կապակցությունից հասնում են բարդ դերբայական դարձվածի և շաղկապային ընդարձակ համադրության, որոնք լրացում են ոչ միայն նախադասության մի անդամի, այլ ամբողջ նախադասության. օրինակ՝ Յոթ օր (մոտիս պառկած մեկ հիվանդի ասելովն) բժիշկները ամենևին հույս ունեցած չեն, որ կենդանի կմնամ *(ՌՊԵ, 478)*։ Որովհետև առջևս պարապ ժամանակ կա (մինչև Սոֆիայի գալը) և ես մեկ ուրիշ օգտավետ գործ չունիմ կատարելու *(Նույն տեղում, 432)*։ Ես շատ անգամ տեսնում էի (մինչև անգամ ամենաասարսափելի չարագործություններից հետո) *(Րաֆֆի)*։ Սակայն այս խրճիթը մյուս տնակներից տարբերվում էր միայն նրանով, որ սրա պատերի կեսն ալիզից էր (կավի և հարդի խառնուրդից) *(Նար., I, 3)*։ Տղան տեսնելով իր փրկարարին (թե՛ հասկանալով նրա մտադրությունը), թափով նետվեց դեպի նա *(ՎԱՍԱ, 318)*։ Համենայն դեպս չի հիշում, որ իր ժամանակ (պատերազմից առաջ) երբևէ հանդիպած լինի այսպիսի կոմերիտականի *(ԲՎԻԳԵ, 131)*։

Ներդրյալ բառեր, բառակապակցություններ ու նախադասություններ ամենից շատ գործածվում են դրամատիկական երկերում, ուր հեղինակը ցուցմունք է տալիս գործող անձանց շարժումների, կեցվածքի, բեմական հարդարանքի, խոսքի արտաբերության զանա-

գան եղանակի ու այլ մանր-մունր պարագաների մասին։ Եվ ահա այդ ամենն առնվում են փակագծում իբրև ներդրյալներ, որոնք արդարև բուն գործող անձանց խոսվածքից դուրս են մնում իբրև կողմնակի դիտողություններ, ցուցմունքներ, նկատողություններ, ուղղումներ և այլն. օրինակ՝ Մարգարիտ.— (Վազում է դեպի Թերեզան, համբուրվում են)։ Բարև... ախ ի՞նչ լավ արիր, որ եկար... Գրիգոր.—բարև ձեզ... այ դու բարի ես եկել... (թոթվում է ձեռքը) *(Փափ., 566)։* Ասպրամ.— (զգուշությամբ այս ու այն կողմ նայելով) Իշխանը պատվիրել է ինձ՝ աշխատել, ինչ միջոցով ուզում է լինի գրավել օրիորդ Ռուզանի սիրտը դեպի Համոուն իշխանը *(Մուր., IV, 176)։* Ռոզալիա. (Տաղրաքար, առելությամբ ու նախանձով) Ինչ քաջն ես, իսկ և իսկ ներոսունի *(Շեժ, VI, 255)։* Անդրեաս. (Ծիծաղում է նյարդային, արվեստական ծիծաղով) հի՛, հի՛, հի՛, լսեցի՞ր Սաղաթել։ Ասում է Օթարյանից չե՞ս վախենում։ (Որդուն) Ո՞վ է Օթարյանը, ե՞րբ եմ ես նրանից վախեցել... (դարձյալ նայելով ձախ դռների կողմը)։ Սաղաթել, տես ո՞վ կա այն սենյակում։ (Բագրատին) Հիմար բաներ ես խոսում (նույն տեղում, *294)։*

Կոչականները, միջանկյալ ու ներդրյալ բառերը, բառակապակցություններն ու նախադասություններն ինչքան էլ որ նախադասության հետ քերականական կապերով կապված չեն, սակայն իմաստային ու ոճաբանական խոշոր նշանակություն ունեն, ուստի այդ առումով անհրաժեշտ է նրանց ուսումնասիրությունը։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲԵ—Ա. Բակունց, *Ընտիր երկեր*, Երևան, 1955։
ԱԲՄԹՆՁ — Ա. Բակունց, *Մթնաձոր*։ Երևան, 1927։
ԱԲՍՑՍ — Ա. Բակունց, *Սև ցելերի սերմնացանը*, 1933։
ԱԻԵ — Ա. Իսահակյան, *Ընտիր երկեր*, Երևան, 1955։
ԱՇ — Աղավնի, *Շիրակ*, Երևան, հ. 1, 1954։
Առած—Ա. Ղանալանյան, *Առածանի*, Երևան, 1950։
ԱՍԾ — Ա. Սահինյան, *Ծարավ*, Երևան, 1955։
ԱՍՈՎՄ — Ա. Սեկոյան, *Ոսկե վազերի մեջ*, Երևան, 1958։
ԲՎԻԳԵ — Բ. Վերդյան, *Ինչպես է գալիս երջանկությունը*, Երևան, 1957։
ԳԵՐՑԵՆ — Ա. Ի. Գերցեն, *Եղելություններ և խոհեր (երեք հատորով)*, Երևան, 1952։
ԳՄԵ — Գ. Մահարի, *Երկեր*, Երևան, 1954։
ԳՄԵՍ — Գ. Մահարի, *Երիտասարդության սեմին*, Երևան, 1956։
ԳՈԳՈԼ — Ն. Վ. Գոգոլ, *Երկերի ժողովածու (վեց հատորով)*, Երևան, 1953։
ԳՍԵԺ — Գ. Սունդուկյան, *Երկերի լիակատար ժողովածու*, Երևան, 1951։
ԳՍԹ — Գ. Սևունց, *Թեհրան*, Երևան, 1951։
ԴԴ — Դ. Դեմիրճյան, *Երկեր*, Երևան, 1946։
ԴԴԵԺ — Դ. Դեմիրճյան, *Երկերի ժողովածու (յոթ հատորով)*, Երևան, 1955—1960։
ԴԴՎ — Դ. Դեմիրճյան, *Վարդանանք*, Երևան, 1951։
ԵՉԵ — Ե. Չարենց, *Ընտիր երկեր*, Երևան, 1955։
Ընտ. էջեր — *Ընտիր էջեր*, Երևան, 1946։
Թ. — Հ. Թումանյան, *Երկերի ժողովածու (վեց հատորով)*, Երևան, 1940—1960։
ԻՍ. — Ա. Իսահակյան, *Երկերի ժողովածու*, Երևան, 1950։
ԼԳԵ — Լեո, *Գեղարվեստական երկեր*, Երևան, 1959։
ԼԵՈ, ՀՊ.— Լեո, *Հայոց պատմություն*, Երևան, 1946։
ԼԹԿ — Լ. Թարգյուլ, *Կոմիտաս*, Երևան, 1956։
ԽԱԵԺ — Խ. Աբովյան, *Երկերի լիակատար ժողովածու*, Երևան, 1948։
ԽԱՎՀ — Խ. Աբովյան, *Վերք Հայաստանի, Ողբ հայրենասիրի*, Երևան, 1959։
ՀՀԵ — Հ. Հակոբյան, *Երկեր*, Երևան, 1951։
ՀՀՀ — Հ. Հովհաննիսյան, *Հատընտիր*, Երևան, 1953։
ՀՇՀ—Հովհաննես Շիրազ, *Հատընտիր*, Երևան, 1958։
ՀՇՔՀ — Հ. Շիրազ, *Քնար Հայաստանի*, 1958։
ՀՊԸԵ — Հ. Պարոնյան, *Ընտիր երկեր*, Երևան, 1954։

ԴԱ — Դ. Աղայան, *Երկեր*, Երևան, 1947։
ԴԱԸԵ—Դ. Աղայան, *Ընտիր երկեր*, Երևան, 1956։
ԴԱՀ — Դ. Աղայան, *Հեքիաթներ*, Երևան, 1952։
ՄԱՇ — Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի շարահյուսություն*, Վաղարշապատ, 1912։
ՄՆԵԺ — Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, Երևան, 1940։
ՄՆԸԵ — Մ. Նալբանդյան, *Ընտիր երկեր*, Երևան, 1955։
ՄՈՒՐ. — Մուրացան, *Երկերի ժողովածու*, Երևան, 1951։
ՆԱՐ. — Նար-Դոս, *Երկերի ժողովածու (երեք հատորով)*, Երևան, 1955։
ՆԱՐ.— Նար-Դոս, *Երկերի լիակատար ժողովածու*, Երևան, 1938 (1, 2, 3 հատորները վերաբերում են նախորդին)։
ՆԶԵ — Ն. Զարյան, *Երկեր*, Երևան, 1945։
ՆԶՀ — Ն. Զարյան, *Հացավան*, Երևան, 1947։
ՆԶՀԸ — Ն. Զարյան, *Հատընտիր*, Երևան, 1951։
ՇԱԹ. (ՇԱԹԻՐՅԱՆ) — Մ. Շաթիրյան, *Զինվորներ*, Երևան, 1955։
ՇԵՔՍ — Շեքսպիր, *Ընտիր երկեր (երեք հատորով)*, Երևան, 1951։
ՇԵԺ — Շիրվանզադե, *Երկերի ժողովածու (տասը հատորով)*, Երևան, 1958։
ՇԻՐՎ.— Շիրվանզադե, *Երկերի լիակատար ժողովածու*, Երևան, 1950։
ՇՔՀ — տես ՀՇՔՀ։
ՉԵ — Ե. Չարենց, *Երկեր*, Երևան, 1932։
ՉԵԽ.—Ա. Պ. Չեխով, *Ընտիր երկեր (երե՛ք հատորով)*, Երևան, 1954։
ՉԸ — Ե. Չարենց, *Ընտիր երկեր*, Երևան, 1954։
ՊՊ *տե՛ս* ՊՊԵԺ
ՊՊԵԺ — Պ. Պռոշյան, *Երկերի ժողովածու*, Երևան, 1953։
ՊՍԱԶ — Պ. Սևակ, *Անլռելի զանգակատուն*, Երևան, 1959։
ՊՈՒՇԿԻՆ — Ա. Ս. Պուշկին, *Երկեր (հինգ հատորով)*, Երևան, 1954։
ՋԻՎԱՆԻ — *Ջիվանու քնարը*, Երևան, 1959։
ՌԶԱ — Ռ. Զարյան, *Ադամյան*, Երևան, 1960։
ՌՊԵ — Ռ. Պատկանյան, *Երկեր*, Երևան, 1955։
ՍԳ — «*Սովետական գրականություն*» (*ամսագիր*)։
ՍԶ — Ս. Զորյան, *Երկերի ժողովածու*, 1940։
ՍԶԵԺ — Ս. Զորյան, *Երկերի ժողովածու (տասը հատորով)*, Երևան, 1960։
ՍԶՀԲ — Ս. Զորյան, *Հայոց բերդ*, Երևան, 1959։
ՍԶՄԿՊ — Ս. Զորյան, *Մի կյանքի պատմություն*, Երևան, 1955։
ՍԶՊԹ — Ս. Զորյան, *Պապ թագավոր*, Երևան, 1957։
ՍԽՀ — Ս. Խանզադյան, *Հողը*, հ. 1, Երևան, 1954։
ՍՀ — «*Սովետական Հայաստան*» (*օրաթե՛րթ*)։
ՍՇԸԵ — Ս. Շահումյան, *Ընտիր երկեր*, Երևան, 1948։
ՎԱՄԼ — Վ. Անանյան, *Մանկությունը լեռներում*
ՎԱՈՊ — Վ. Անանյան, *Որսորդական պատմված*,
ՎԱՍԱ — Վ. Անանյան, *Սևանի ափին*, Երևան, 1
ՎԹԵ — Վ. Թոթովենց, *Երկեր*, Երևան, 1957։
ՎՄԼՈ — Վ. Միրաքյան. *Լալվարի որսը*, Երևան,
ՎՓՀՀ — Վահրամ Փափազյան, *Հետադարձ հայա*
ՎՓԵԺ — Վ. Փափազյան, *Երկերի ժողովածու (հի*
ՏԵ — Վ. Տերյան, *Երկեր*, Երևան, 1950։

ՏԵԺ — Վ. Տերյան, *Երկերի ժողովածու, Երևան, 1960։*
Ր.— Րաֆֆի, *Երկերի ժողովածու (երեք հատորով), Երևան, 1949։*
ՐԵԺ—*Րաֆֆի, Երկերի ժողովածու (տասը հատորով), Երևան, 1955—1959։*
ՐԿ — Րաֆֆի, *Կայծեր, Երևան, 1947։*
ՓԱՓ.—Վ. Փափազյան, *Ընտիր երկեր, Երևան, 1951։*
ՔԹՈՀ — Ք. Թափալցյան, *Ոսկե հովիտ, Երևան, 1955։*
ՔՐԵՍՏ.— *Քրեստոմատիա (9-րդ դասարանի համար), 1951։*

Ծանոթություն.— Այստեղ չեն հիշատակվում այն երկերը, որոնք չեն համառոտված. օրինակ՝ Թումանյան, «Անուշ», Աղայան, «Անահիտ» և այլն։ Չեն բերված նաև այնպիսի հապավումները, որոնց հապավված լինելը չի խանգարում հեղինակի երկերը իմանալուն։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912։*
Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, Երևան, 1952։*
Ա. Այտընյան, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866։*
Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953։*
Ս. Աբրահամյան, *Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956։*
Գ. Գարեգինյան, *Ժամանակակից հայոց լեզվի շաղկապները, Երևան, 1963։*
Ս. Մարգարյան, *Արդի հայերենի կապերը, Երևան, 1955։*
Ն. Պառնասյան, *Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Երևան, 1961։*
А. Булаховский, Русский лит. язык, М., 1941.
В. Виноградов, Русский язык, М.—Л., 1947. «Вопросы синтаксиса совр. русского языка», М., 1950.
А. Гвоздев, Современный русский лит. язык, ч. II, М., 1958.
«Грамматика русского языка», т. II, ч. II, М., 1954.
Л. Р. Зиндер, Т. В. Сокольская, Научная грамматика немецкого языка, Л., 1938.
А. Пешковский, Русский синтаксис в научном освещении, М., 1935.
А. Потебня, Мысль и язык, Одесса, 1922.
А. Шахматов, Синтаксис русского языка, Л., 1941.
Э. Шендельс, Грамматика немецкого языка, М., 1952.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

VIII. ՄԻԱԿԱԶՄ ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ 11

1. Բայական նախադասություններ 12

Ա. Անորոշ-դիմավոր նախադասություն 12

Բ. Ընդհանրացնող-դիմավոր նախադասություն 16

Գ. Անդեմ նախադասություն 19

ա) Բնության երևույթներ և ժամանակի փոփոխություններ արտահայտող բայերով անդեմ նախադասություն 20

բ) Կրավորակերպ բայերով անդեմ նախադասություն . . . 24

գ) Չեզոք բայերով անդեմ նախադասություն 28

դ) Ի-ով վերջավորվող հին ապառնի դերբայով անդեմ նախադասություն 32

ե) Անորոշ դերբայով անդեմ նախադասություն 38

2. Անվանական նախադասություն 42

Անվանական նախադասություն չկազմող ուղղական հոլովով դրված բառերի մասին 46

3. Բառ-նախադասություն 52

Ա. Հաստատական բառ-նախադասություն 52

Բ. Ժխտական բառ-նախադասություն 54

Գ. Հարցական բառ-նախադասություն 56

Դ. Հորդորական բառ-նախադասություն 57

Ե. Արտահայտչական բառ-նախադասություն 57

IX. ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ 58

1. Թերի նախադասությունը երկխոսության մեջ 61

Ա. Նախորդ ասվածի մաս կազմող թերի նախադասություն . . . 61

Բ. Պատասխան թերի նախադասություն 63

Գ. Ենթակա-թերի պատասխան նախադասություն 65

Դ. Ստորոգյալ-թերի պատասխան նախադասություն 65

Ե. Խնդիր-թերի պատասխան նախադասություն 66

Զ. Պարագա-թերի պատասխան նախադասություն 66

Է. Հատկացուցիչ-թերի պատասխան նախադասություն 67

Ը. Որոշիչ-թերի պատասխան նախադասություն 67

2. Ինքնուրույն թերի նախադասություն 68
3. Բարդ նախադասության կազմը մտնող թերի նախադասություն . . 73
Ա. Դադարով բաժանված թերի նախադասություն 74
Բ. Անշաղկապ բարդ նախադասության կազմը մտնող թերի նախադասություն 75
Գ. Բարդ համադասական նախադասության կազմը մտնող թերի նախադասություն 76
Դ. Բարդ ստորադասական նախադասության կազմը մտնող թերի նախադասություն 77
Ե. Կրկնվող թերի նախադասություն 79
Զ. Զեղչված բառերով ու բառակապակցություններով թերի նախադասություն 80

X. ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 82
1. Բարդ ստորադասական նախադասություն 90
Ա. Որ բառի համաձայնությունը և հոդառությունը 91
ա) Որ բառի թվական համաձայնությունը 92
բ) Որ բառի հոլովական համաձայնությունը 98
գ) Որ բառի հոդառությունը 98

2. Երկրորդական նախադասություն 102
Ա. Ենթակա և վերադիր երկրորդական նախադասություններ . . 103
ա) Ենթակա երկրորդական նախադասություն 104
բ) Ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասություն . 115
Բ. Ենթակայի կամ որևէ գոյական անդամի լրացում երկրորդական նախադասություններ 120
1. Որոշիչ երկրորդական նախադասություն 121
ա) Որ-ով կապակցվող որոշիչ երկրորդական նախադասություն . 122
բ) Ինչ-ով կապակցվող որոշիչ երկրորդական նախադասություն 134
գ) Ով-ով կապակցվող որոշիչ երկրորդական նախադասություն . 136
դ) Ուր և որտեղ բառերով կապակցվող որոշիչ երկրորդական նախադասություն 137
ե) Երբ-ով կապակցվող որոշիչ երկրորդական նախադասություն . 141
զ) Որպես թե, իբր(և) թե, իբր բառերով կապակցվող որոշիչ երկրորդական նախադասություն 144
է) Որպիսի բառով կապակցվող որոշիչ երկրորդական նախադասություն 146
ը) Որքան, ինչքան, այն է բառերով կապակցվող որոշիչ երկրորդական նախադասություն 147
թ) Որոշիչ երկրորդական նախադասության շարադասությունը . . 149
2. Բացահայտիչ երկրորդական նախադասություն 153
3. Հատկացուցիչ երկրորդական նախադասություն 155
Գ. Ստորոգյալի կամ որևէ բայական անդամի լրացում երկրորդական նախադասություններ 157
1. Խնդիր երկրորդական նախադասություններ 157
Ա. Ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն 157
ա) Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունը կապակցող բառերը 158

բ) Որ-ով ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն . . 159
գ) Թե-ով ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն . . 161
դ) Ինչ-ով ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն . . 164
ե) Ով-ով ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն . . 166
Բ. Անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն 169
ա) Մատուցման անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն 169
բ) Հանգման անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն 170
գ) Շահի անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն . 170
դ) Ներքին ձգտում, հոգեկան որոշ տրամադրություն, համոզմունք, հույս, հավատ և այլն արտահայտող բայ-ստորոգյալների հետ կապված անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն . 170
ե) Ստացական անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն 172
զ) Միջոցի անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն . 173
է) Անջատման անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն 174

2. Պարագա երկրորդական նախադասություններ 175
Ա. Ժամանակի պարագա երկրորդական նախադասություն . . . 175
ա) Գլխավոր և երկրորդական նախադասությունների ժամանակների հարաբերությունը 176
բ) Միաժամանակյա ստորոգյալով ժամանակի երկրորդական նախադասություն 176
գ) Գլխավորի ժամանակին հաջորդող ժամանակի երկրորդական նախադասություն 178
դ) Գլխավորի ժամանակին նախորդող ժամանակի երկրորդական նախադասություն 178
ե) Երբ շաղկապով կապակցվող ժամանակի երկրորդական նախադասություն 178
զ) Հենց, հենց որ, թե չէ շաղկապներով կապակցվող ժամանակի երկրորդական նախադասություն 187
է) Մինչև, մինչև որ շաղկապներով կապակցվող ժամանակի երկրորդական նախադասություն 190
ը) Մինչ, մինչդեռ շաղկապներով կապակցվող ժամանակի երկրորդական նախադասություն 192
թ) Քանի շաղկապով կապակցվող ժամանակի երկրորդական նախադասություն 196
ժ) Որ շաղկապով կապակցվող ժամանակի երկրորդական նախադասություն 197
ժա) Ինչ, բան, բան թե, նախքան շաղկապներով կապակցվող ժամանակի երկրորդական նախադասություն 198
ժբ) Ժամանակի պարագա երկրորդական նախադասությունները դերբայական դարձվածի վերածելը 199

Բ. Տեղի պարագա երկրորդական նախադասություն 201
ա) Բուն տեղի պարագա երկրորդական նախադասություն . . 203
բ) Ժամանման և ուղևորման տեղի պարագա երկրորդական նախադասություն 205
գ) Ելման տեղի պարագա երկրորդական նախադասություն . . 206

դ) Այլ կապակցություններ . . . 206
Գ. Պատճառի պարագա երկրորդական նախադասություն . . . 208
ա) Որովհետև, քանի որ, քանի շաղկապներով կապակցվող պատճառի երկրորդական նախադասություն . . . 209
բ) Որ շաղկապով կապակցվող պատճառի երկրորդական նախադասություն . . . 210
գ) Զի, քանզի, վասնզի շաղկապներով կապակցվող պատճառի երկրորդական նախադասություն . . . 212
դ) Ըստ որում, այնքան, այնքան որ շաղկապներով կապակցվող պատճառի երկրորդական նախադասություն . . . 212
ե) Այնքան, որքան, այնքանով որքանով, այնչափով որչափով, այնքանով որքանով որ շաղկապներով կապակցվող պատճառի երկրորդական նախադասություն . . . 213
զ) Երբ, երբ որ, եթե շաղկապներով կապակցվող պատճառի երկրորդական նախադասություն . . . 214
է) Մանավանդ. մանավանդ թե, մանավանդ երբ, մանավանդ որ, նամանավանդ, նամանավանդ որ, չէ որ շաղկապներով կապակցվող պատճառի երկրորդական նախադասություն . . . 214
ը) Պատճառի պարագա երկրորդական նախադասության շարադասությունը . . . 215
Դ. Պայմանի պարագա երկրորդական նախադասություն . . . 216
ա) Եթե շաղկապով կապակցվող պայմանի երկրորդական նախադասություն . . . 218
բ) Թե, թե չէ շաղկապներով կապակցվող պայմանի երկրորդական նախադասություն . . . 220
գ) Թե որ, միայն, միայն թե, եթե միայն, թե միայն շաղկապներով կապակցվող պայմանի երկրորդական նախադասություն . 221
դ) Որ շաղկապով կապակցվող պայմանի երկրորդական նախադասություն . . . 222
ե) Երբ, մինչև, թեև, թեկուզ, քանի որ շաղկապներով կապակցվող պայմանի երկրորդական նախադասություն . . . 224
զ) Մեկ որ, (ճ)ամա որ, պայմանով որ շաղկապներով կապակցվող պայմանի երկրորդական նախադասություն . . . 225
է) Պայմանի երկրորդական և նրա հետ կապակցվող գլխավոր նախադասության ժամանակների հարաբերակցությունը . . . 225
Ե. Նպատակի պարագա երկրորդական նախադասություն . . . 230
ա) Որպեսզի շաղկապով կապակցվող նպատակի երկրորդական նախադասություն . . . 232
բ) Որ շաղկապով կապակցվող նպատակի երկրորդական նախադասություն . . . 233
գ) Թե, թե ինչ է, թե չինի, ինչ է, չինի թե, թե որ, ինչ է թե շաղկապներով կապակցվող նպատակի երկրորդական նախադասություն . . . 235
Զ. Զիջական երկրորդական նախադասություն . . . 237
ա) Թեև, թեպետ, թեպետև, թեկուզ շաղկապներով կապակցվող զիջական երկրորդական նախադասություն . . . 239

բ) Չնայած, չնայելով շաղկապներով կապակցվող զիջական երկրորդական նախադասություն 242
գ) Ինչ, ով, ոնց, ուր, որտեղ, որքան, ինչքան, ինչպես շաղկապային բառերով կապակցվող զիջական երկրորդական նախադասություն 243
դ) Մինչև, մինչ, մինչդեռ շաղկապներով կապակցվող զիջական երկրորդական նախադասություն 246
ե) Եթե, մինչև իսկ եթե, շատ էլ, թող թե, միայն և մի քանի այլ շաղկապային բառերով կապակցվող զիջական երկրորդական նախադասություն 247
Է. Հետևանքի երկրորդական նախադասություն 249
ա) Որ շաղկապով կապակցվող հետևանքի երկրորդական նախադասություն 250
բ) Այնպես որ շաղկապով կապակցվող հետևանքի երկրորդական նախադասություն 253
գ) Ուստի, ուրեմն շաղկապներով կապակցվող հետևանքի երկրորդական նախադասություն 254
դ) Հետևաբար, հետևապես շաղկապներով կապակցվող հետևանքի երկրորդական նախադասություն 255
ե) Մի քանի այլ շաղկապներով ու շաղկապային բառերով կապակցվող հետևանքի երկրորդական նախադասություն . . 256
Ը. Ձևի պարագա երկրորդական նախադասություն 259
Թ. Բաղդատության երկրորդական նախադասություն 262
ա) Ինչպես, ինչ, ինչ ձևով բառերով կապակցվող բաղդատության երկրորդական նախադասություն 264
բ) Կարծես թե, ասես թե, կարծես, ասես, որ կարծես, իբր թե, որպես թե... բառերով կապակցվող բաղդատության երկրորդական նախադասություն 266
գ) Քան, քան թե շաղկապներով կապակցվող բաղդատության երկրորդական նախադասություն 267
Ժ. Համապատասխանության երկրորդական նախադասություն . . . 269
ԺԱ. Չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասություն . . 269
ԺԲ. Զուգադիր երկրորդական նախադասություն 273
ԺԳ. Հարակցական կամ կողմնակի հաղորդման երկրորդական նախադասություն 273
ԺԴ. Բազմաբարդ ստորադասական նախադասություն 274
ԺԵ. Ստորադասական բառակապակցություններով ու դարձվածներով լրացվող նախադասություն 281
ա) Բաղդատական ստորադասական մասով նախադասություն . 281
բ) Քան շաղկապով բաղդատական դարձված 286
գ) Զուգադրական ու չափի պարագայական դարձվածով նախադասություն 288
դ) Եթե ոչ շաղկապով ստորադասական մաս 289

XI. ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ 291

1. Համադրական շաղկապներով բարդ համադասական նախադասություն 295
և, ու շաղկապներով բարդ համադասական նախադասություն ժա-

306—30

մանակային հարաբերությամբ 298
ա) Եվ, ու շաղկապներով միաժամանակյա հարաբերությամբ բարդ համադասական նախադասություն 299
բ) Եվ, ու շաղկապներով բարդ համադասական նախադասություն ստորոգյալների գործողությունների հաջորդությամբ . . 305
գ) Եվ, ու շաղկապներով բարդ համադասական նախադասություն՝ հարակցա-որոշիչային հարաբերությամբ 312
դ) Եվ, ու իբրև զուգադրական հարաբերություններ արտահայտող շաղկապներ 312
2. Հակադրական շաղկապներով բարդ համադասական նախադասություն . 313
Ա. Իսկ շաղկապով բարդ համադասական նախադասություն . . . 313
ա) Իսկ շաղկապով կապակցվող բարդ համադասական նախադասությունների նշանակությունները 318
Բ. Բայց շաղկապով բարդ համադասական նախադասություն . . . 327
Գ. Սակայն հակադրական շաղկապով բարդ համադասական նախադասություն 336
Դ. Բարդ համադասական նախադասություն թե չէ, թե ոչ, եթե ոչ, ապա թե ոչ, այլապես, հակառակ դեպքում, այլ կերպ հակադրական շաղկապներով 339
Ե. Բարդ համադասական նախադասություն մինչդեռ, մինչ, այնինչ շաղկապներով 341
Զ. Բարդ համադասական նախադասություն ոչ թե... այլ, ոչ թե... այլ ընդհակառակն(ը) հակադրական շաղկապներով 342
Է. Էլ, հապա, համա, ամա շաղկապներով բարդ համադասական նախադասություն՝ հակադրական և զուգադրական հարաբերությամբ . 343
3. Բարդ համադասական նախադասություն տրոհական շաղկապներով . 345
Ա. Կամ շաղկապով բարդ համադասական նախադասություն . . . 346
Բ. Թե շաղկապով բարդ համադասական նախադասություն . . . 349
Գ. Եվ, համ, մերթ... մերթ, մեկ...մեկ, մին... տրոհական շաղկապներով բարդ համադասական նախադասություն 352
4. Հարակցական կապակցություն 353
Ա. Հարակցական կապակցությամբ բարդ համադասական նախադասություն և, ու շաղկապներով 354
Բ. Հարակցական կապակցությամբ բարդ համադասական նախադասություն իսկ, բայց, սակայն, մանավանդ շաղկապներով 356
5. Բարդ համադասական նախադասություններ մեկնական շաղկապներով ու շաղկապային բառերով 359

XII. ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ 362

1. Անկախ շարահարությամբ բարդ նախադասություն 364
ա) Թվարկվող և միաժամանակություն արտահայտող մասերից կազմված անկախ շարահարություն 365
բ) Թվարկվող և ժամանակային հաջորդականություն արտահայտող մասերից կազմված անկախ շարահարություն 366
գ) Հակադրական հարաբերություն արտահայտող անկախ շարահարություն 367

դ) Զուգադրական հարաբերություն արտահայտող անկախ շարահարություն 368
ե) Անկախ շարահարություն, ուր երկրորդ նախադասությունը արտահայտում է նախորդից բխող հաջորդական գործողություն . 369
2. Կախյալ շարահարությամբ բարդ նախադասություն 369
ա) Պայմանի հարաբերությամբ կախյալ շարահարություն . . 370
բ) Զիջական հարաբերությամբ կախյալ շարահարություն . . 371
գ) Պատճառի հարաբերությամբ կախյալ շարահարություն . . 372
դ) Խնդրային հարաբերությամբ կախյալ շարահարություն . . 373
ե) Ժամանակի հարաբերությամբ կախյալ շարահարություն . . 378
զ) Նպատակի հարաբերությամբ կախյալ շարահարություն . . 378
է) Որոշիչային հարաբերությամբ կախյալ շարահարություն . . 379
ը) Շարահարություն, ուր կախյալ նախադասությունը ենթակա է 380
թ) Շարահարություն, ուր կախյալ նախադասությունը ստորոգելիական վերադիր է 381
ժ) Հետևանքային հարաբերությամբ կախյալ շարահարություն . 382
ժա) Ձևի պարագա կամ նմանության հարաբերություն արտահայտող կախյալ շարահարություն 383
ժբ) Համակցական հարաբերություն, արտահայտող շարահարություն 383

XIII. ՈՒՐԻՇԻ ԽՈՍՔԸ 386
1. Ուղղակի խոսք 388
2. Անուղղակի խոսք 398
3. Անիսկական ուղղակի խոսք 410
XIV. ԿՈՉԱԿԱՆ 416
1. Կոչականի արտահայտման ձևերը 421
2, Կոչականի շարադասությունը 427
3. Կոչականի հնչերանգները 431
XV. ՄԻՋԱՆԿՅԱԼ ԵՎ ՆԵՐԴՐՅԱԼ ԲԱՌԵՐ, ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 434
1. Միջանկյալ բառերի տեսակներն ըստ նրանց ձևաբանական առանձնահատկությունների 437
2. Միջանկյալ բառակապակցություններ 440
Ա. Միջանկյալ բառերի ու բառակապակցությունների իմաստային առումները 441
3. Միջանկյալ նախադասություններ 444
4. Ներդրյալ նախադասություններ 447
5. Ներդրյալ բառեր ու բառակապակցություններ 455
Համառոտագրություններ 458
Գրականություն 461

ՎԱՐԱԳ ԴԱՎԹԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ВАРАГ ДАВИДОВИЧ АРАКЕЛЯН

ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի հանձնարարությամբ

Գիտ. խմբագիր՝ Թ. Հ. Վերդյան
Հրատ. խմբագիր՝ Ա. Հ. Շաղգամյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Ռ. Կափլանյան
Սրբագրիչ՝ Ս. Կ. Զաքարյան

ՎՖ 09643, Հրատ. № 2231, ԽՀՆ № 807, պատվեր 306, տպաքանակ 2000

Հանձնված է արտադրության 28 IV 1963 թ. Ստորագրված է տպագրության 16 VI 1964 թ.: Տպագրական 29,25 մամուլ, հրատ. 24,6 մամուլ, թուղթ 60×92 1/16. Գինը կազմ. 1 ռ. 66 կոպ.

ՀՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության, 24: